Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

G. H. GUARCH

EL TESTAMENTO ARMENIO

ALMUZARA
2008

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Հ. ԳՈՒԱՐՉ

ՀԱՅՈՑ ԿՏԱԿ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 860-3 Գուարչ
ԳՄԴ 84.4 Իսպ.
Գ 940

Իսպաներենից թարգմանեց Մերի Ա. Սուքիասյանը
Խմբագիր՝ Լաուրա Գ. Մանուկյան

Գ. Հ. Գուարչ
Գ 940 Հայոց կտակ (պատմավեպ-հուշագրություն) Գ. Հ. Գուարչ։ – Եր.։ ԵՊՀ հրատ., 2011, 484 էջ։

«Հայոց կտակ»-ը Հայոց ցեղասպանությանը նվիրված եռագրության երկրորդ վեպն է։ Առաջին գրքում՝ «Հայկական տոհմածառ»-ում պատմվում էր Պատմական Հայաստանում 1915–1916 թթ. կատարվող ողբերգությունը։

Այս գրքում դեպքերը հիմնականում ծավալվում են 1885–1920 թթ. Կոստանդնուպոլսում։ Դեպքեր, որ կանխորոշում են ֆրանսիացի ազնվականի՝ լրագրող ու դիվանագետ Անրի դը Լատուրի հոգեցունց կյանքի ուղին՝ ընդամին ներկայացնելով արևմտահայ ազգային մթնոլորտը, Պոլսո հայ հասարակությունը, կուսակցական ու մշակութային գործիչներին, դիվանագիտական աշխարհը, օսմանյան սուլթանների ու երիտթուրքերի կերպարներն ու քաղաքականությունը, հայ ժողովրդի պատմության եղերական շրջանը։

ՀՏԴ 860-3 Գուարչ
ԳՄԴ 84.4 Իսպ.

ISBN 978-5-8084-1362-7
© Գ. Հ. Գուարչ, 2011 թ.
© Ալմուսարա հրատարակչություն, 2011 թ.
© Թարգմանչի համար, 2011 թ.
© ԵՊՀ հրատարակչություն, 2011 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս թարգմանությունը նվիրում եմ Մեծ Եղեռնի բոլոր, այդ թվում՝ և մեր գերդաստանի զոհերի, նաև բռնագաղթի բազմատանջ ճամփաներով անցած տատիս՝ Անուշ Հոխեյան-Մխիթարյանի հիշատակին։

Անուշ տատս Մանազկերտից էր՝ անսահման բարի, իմաստուն ու տառապած հայ կնոջ տիպար։ Հայրը Կոստանդնուպոլսում վաճառատուն ուներ, ընտանիքի անդամներից առաջինը նրան էին սպանել թուրք ջարդարարները։ Եղբայրներից երկուսը կռվել էին Զորավար Անդրանիկի Կամավորական բանակում։ Տատս ծեր էր, երբ գտնվեց իր բազմանդամ ընտանիքից միակ ողջ մնացած բաքվաբնակ եղբայրը։ Ավաղ, վերջինիս թոռնուհուն էլ վիճակվեց մի կերպ փախչել 1988 թ. Սումգայիթում ադրբեջանցիների իրագործած՝ հայերի արյունոտ սպանդից։

Այս վեպը թարգմանելիս աչքերիս առաջ շարունակ հառնում էին Էրզրումի Յաղան գյուղի հարազատներս, վանեցի, պոլսեցի ու իգդիրցի հարևաններս՝ իրենց սոսկումնալի, հոգեցունց պատմություններով։

Գոնսալո Հ. Գուարչի վեպը ոչ միայն արդարամիտ մտավորականի ցասումի և մեր հայրենակորույս ազգակիցների ցավի ու վրդովմունքի ճիչն է։ Նաև ինքնաճանաչողության ու սթափության կոչ է՝ ուղղված նախճիրը գործած մարդասպանների հետնորդներին, միջազգային ատյանների այն դիվանագետներին, որոնց խղճի վրա է ծանրացած եղեռնագործությունը։

Հույս ունեմ, որ այս աշխատանքով կկարողանամ իմ համեստ ավանդը ներդնել Հայ Դատի արդար գործին։

Մերի Սուքիասյան

Պասկուալ Օհանյանին
Վահագն Դադրյանին
Վարուժան Ադդարյանին
Բոլոր հայերին, ովքեր չեն ուզում մոռանալ

Մրրիկի մեջ, խավարում,
երբ ծովն ալեբախվում էր մոլեգին,
և թվում էր, թե մեր շուրջ
ողջ աշխարհն էր կործանվում,
գիշերվա մեջ լույսի ցոլքերը հեռավոր
մեր հավատն էին պահպանում:

ՆԱԽԱԲԱՆ

XX դարն անցել է երկու մեծ պատերազմների բովով, որոնք կոչվեցին համաշխարհային՝ իրենց մեծածավալ բնույթի, տուժած մարդկանց վիթխարի քանակության և այն առումով, թե ինչ նշանակություն ունեցան այդ պատերազմները պատմության համար: Այն եղավ անվերջանալի ճգնաժամի, ինչպես նաև բարեփոխումների և առաջընթացի դար:

Այնուամենայնիվ XX դարը կհիշվի հատկապես մարդկային երկու մեծագույն ողբերգություններով, որոնց ընթացքում մի քանի խումբ մարդիկ փորձեցին ոչնչացնել այլ էթնոսի պատկանող ուրիշ խմբերի: Խոսքը վերաբերում է Հայոց ցեղասպանությանը և հրեաների Հոլոքոստին:

Լեհական մի հրեա՝ Ռաֆայել Լեմկինը գտավ «գենոցիդ» հասկացությունը, որն անմիջապես ընդունվեց համաշխարհային հասարակայնության կողմից՝ բնութագրելու համար այն քաղաքականությունը, որն ուղղված է բնաջնջելու մարդկանց խմբերի՝ ռասայական, ազգային կամ կրոնական առանձնահատկությունների պատճառով:

«Հայոց կտակը» մի պատմավեպ է, որում ի մի են բերվել հանգամանքներ, գործող անձինք, վայրեր, նաև այն քաղաքական շարժառիթները, որոնք տեղիք տվեցին 1915–1916 թթ. ցեղասպանությանը:

Գրքի գլխավոր հերոսը, ում անունից պատմվում է եղելությունը, հորինված կերպար է, ինչպես և շատերը, որոնք երևան են գալիս գրքի էջերում: Սակայն գլխավոր իրադարձությունները և նրանք, ովքեր հրահրել էին այդ իրադարձությունները, որ հանգեցրեցին զանգվածային կոտորածների և տեղահանությունների, իրական են. հենց նրանց նենգ գործելակերպը պատճառ դարձավ, որ թույլ տրվեր ամենասարսափելի ոճիրներից մեկը Մարդկության դեմ:

Մինչդեռ նույնիսկ հիմա՝ 2007 թ. վերջերին, Թուրքիան չարունակում է չճանաչել Ցեղասպանության փաստը՝ առանց ըմբռնելու, որ այդ քայլը կնշանակեր կատարսիս՝ ամբողջ ազգի մաքրագործում և կնպաստեր նրան դառնալու եվրոպական ժամանակակից ազգ։

Այնժամ և միմիայն այնժամ հայերը կկարողանան հողին հանձնել Ցեղասպանության իրենց զոհերի աճյունը և նայել ապագային վճռականությամբ։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
(1885 – 1906)

ԱՊՐԻԼ 1885

1. ԹՂԹԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Պետք է սկզբից սկսեմ: Սա այն պատմությունն է, թե ինչպես ես ներքաշվեցի մի գործում, որից անտեղյակ էի, անմասն և շատ հեռու. Հայկական խնդրում կամ, ինչպես այն անվանեցին քաղաքագետները և պատմաբանները, «Հայկական հարց»-ում: Նաև այն մասին է, թե ինչպես մի քանիսը վճռեցին կատարել մի հանցանք, որը տարիներ անց հայտնի էր դառնալու որպես արդի ժամանակաշրջանի առաջին ցեղասպանություն:

Այս էջերում արծարծվում են այդ ամենի դրդապատճառները, գործող անձինք, հանգամանքները, դեպքերի ողջ ընթացքը և ողբերգական վախճանը: Կփորձեմ ի մի բերել մտքերս, ինչը պետք է որ հաջողվի, քանզի իրականում այն ոչ այլ ինչ է, եթե ոչ կյանքիս կամ թերևս նրա էական հատվածի պատմությունը:

Ծնվել եմ Փարիզում: Լինելով Էդուար դը Լատուրի և Կարոլին դը Վինյիի զավակը՝ ազնվատոհմ մի ընտանիքի միակ որդին, ժառանգել էի վիթխարի հարստություն: Մինչև իր կյանքի վերջին օրերը մայրս կրկնում էր, որ ամեն բան պետք է այլ կերպ եղած լիներ, մինչդեռ գոյություն ունի ճակատագիր, որ ինքներս մեզ համար կերտում ենք յուրաքանչյուր ակնթարթ՝ յուրաքանչյուր անգամ որոշում ընդունելիս:

Մանկութ ըմբոստ էի և ծնողներիս համար մեծ գլխացավանք, ովքեր երազում էին, որ դառնայի աշխարհընկալման իրենց չարունակողը: Ինձ վրա դրված պարտադրանքներից միակը, որն ինձ չէր ձանձրացնում, լեզուներ սովորելն էր: Դա էլ ինձ ստիպեց երեք տարի՝ տասներկուսից տասնհինգում ապրել Լոնդոնում, նաև երեք տարի Բեռլինում՝ տասնվեցից տասնինը տարեկանում: Իհարկե, պետք է ուսումս ստանայի Սորբոնում, միմիայն զուտ համալսարանական կրթություն ունենալու համար, ձեռք բերելու մի մասնագիտություն, որով, անշուշտ, երբեք չէի զբաղվելու: Հարկ չէր լինելու, քանզի ինձ նախասահմանված էր բարեկեցիկ, չքեղ և հարմարավետ կյանք:

Հայրս մահացավ, երբ ես տասնինը տարեկան էի: Ձիուց նրա վայր ընկնելը ճակատագրական եղավ, անսպասելի ընտանեկան ողբերգություն: Սոսկ մի հեռագիր, որ հանրակացարանի տնօրենն ինձ հանձնեց նման պարագաներում դեմքի հատուկ արտահայտությամբ: Հանկարծահաս հուղարկավորություն և արմատական փոփոխություն իմ կյանքում: Զվերադարձա Բեռլին, քանի որ մայրս պետք է ստանձներ մի հսկա, բազմաբնույթ և ցիրուցան ժառանգության վերահսկողությունը ոչ միայն Ֆրանսիայում, այլև Բելգիայում, Անգլիայում և Գերմանիայում: Անկախ այն բանից, որ ուներ խորհրդատուներ, պետք է անձամբ վերահսկեր մի ողջ կայսրություն՝ շենքեր Փարիզում, Լիոնում, Նիցցայում, Գենտում, Բրյուսելում, Լոնդոնում, հողատարածքներ, խաղողի այգիներ, գինեգործության և գործվածքեղենի ֆաբրիկաներ, ֆինանսական ընկերություններ: Բացի այդ Կարոլին Լորանը պետք է շարունակեր իր կարևոր դերը հասարակական կյանքում: Հորս վախճանվելուց հետո մի քանի ամիս նա թվում էր հոգեպես ընկճված, բայց ուժեղ բնավորության շնորհիվ շուտով վերականգնվեց: Այդ իսկ բնավորությունն էլ խանգարում էր մեր հաշտ ապրելուն:

Մորս կրթել էին ավանդական կանոնների համաձայն, մինչդեռ այն աշխարհը փոփոխուն, շարժուն և բաց, որ սկսվել էր ուրվագծվել XIX դարի վերջին քառորդում, ասես գերազանցում էր հարմարվելու նրա կարողությանը: Այդ աշխարհին նա նայում էր ոչ թե որպես ապագայի առհավատչյայի, այլ ընդհակառակը, որպես իր աշխարհընկալման սպառնալիքի:

Մայրս պնդում էր, որ իր կյանքի երկրորդ աղետը եղել է այնպիսի անհեթեթ և անպատվաբեր մասնագիտության իմ ընտրությունը, որպիսին լրագրողինն է: Սակայն ինձ այն թվում էր գրավիչ, ու ես որոշեցի ներկայանալ և իմ ծառայություններն առաջարկել «Լ'Օրոր»-ին՝ Փարիզի ամենակարևոր թերթին, և ի զարմանս ինձ՝ ընդունվեցի: Խմբագրությունում անցկացրած առաջին ամիսներին ինձ, մեղմ ասած, առանձնապես բանի տեղ չէին դնում: Ի վերջո, ես պարտավոր էի ժամանակ հատկացնել նաև համալսարանին լիցենցիանտի աստիճան ստանալու համար. դժվարին մի բան, քանի որ իմ կարծիքով երբեք չէի գտնվում այնտեղ, որտեղ ինձ անհրաժեշտ էր լինել, ստիպված վազում էի մի տեղից մյուսը՝ ոչ մի տեղ օգուտ չքաղելով ժամանակից: Եվ չնայած դրան՝ ես երջանիկ էի ինքս ինձ հետ: Ինձ համակել էր այն զգացողությունը, որ հաղթել էի մի շատ կարևոր՝ իմ ապագայի մարտում: Չնայած այն սիրուն, որ մայրս տածում էր իմ նկատմամբ, որոշումս ընդունելուց հետո դարձավ մի տեսակ քինախնդիր: Պնդում էր, որ փոխարինեի հորս: Չէր ուզում հասկանալ ինձ, ոչ էլ ընդունում էր իմ տված բացատրությունները և կամաց-կամաց սկսեցինք իրարից հեռանալ: Գուցե և այդ իրավիճակն էլ նպաստեց այն բանին, որ տեղի ունեցավ հետագայում:

1885 թ. ապրիլին ուսումնառությունս ավարտելուց մի քանի ամիս անց, երբ մի երեկո եկա խմբագրություն, թղթակիցներից մեկը, որն զբաղվում էր տեղական լուրերով, Հյուբեր Պուանկարե անունով մի վետերան, որն աշխատում էր թերթի հիմնադրման օրից ի վեր, զբաղեցնում էր ինձ հեգնական ժպիտով և ասաց ատամների արանքից, որ տնօրենն անմիջապես ուզում է տեսնել ինձ: Համոզված, որ ինձ ուզում է փողոց նետել, բավականին ժամանակ մտորում էի, չէի համարձակվում տեսնել նրան, մինչև որ կրկին ինձ կանչեց: Մտա նրա առանձնասենյակը, կռահելով, որ գուցե ինչ-որ բան կապված է մորս հետ, որը ոչ մի օր բաց չէր թողնում առանց քննադատելու իմ անկանոն կյանքը:

Այդուհանդերձ, Շարլ Լաքյորը, դուրս ընկած փորով մի գեր մարդ, խորաթափանց աչքերով և ինչպես միշտ հավաննական հանգած սիգարը չուրթերի արանքում, բառիս լայն իմաստով լրագրողի իսկական նախատիպ, ինձ ընդունեց երկիմաստ ժպիտով, հաստ հոնքերի շարժումով հասկացնելով, որ նստեմ իր դիմաց:

– Երիտասարդ իմ բարեկամ,– ասաց ինձ: – Այն ժամանակից ի վեր ինչ ավարտեցիք ձեր ուսումնառությունը և ձեզ նվիրեցիք մեր թերթին, ինձ հաջողվեց նկատել ձեր հետաքրքրասիրությունը, ձեր մասնագիտական հմտությունը և ձեր մտավոր լայն կարողությունները, թեև դեռ շատ երիտասարդ եք: Ինձ համար այդ ամենը զարմանալի է, մանավանդ, ինչպես որ հասկացել եմ, դուք ձեր ապրուստը վաստակելու կարիք չունեք: Ի վերջո, ամեն մեկն ընտրում է իր ուղին, ու ես ողջունում եմ ձերը, թեև կան բաներ, որ պետք է քննարկենք: Եթե իրոք ցանկանում եք լրջորեն զբաղվել լրագրությամբ, մի բանում կասկածում եմ գիտենալով ձեր մորը, ում անչուշտ հարգում եմ, ձեզ թույլ չի տա դրանով զբաղվել: Բայց ի վերջո, տեսեք, անցնեմ հիմնական նյութին ձեզ երկար չզբաղեցնելու համար: Լսած կա՞ք Ժիլ Օզեի մասին: Մի ամբողջ հաստատություն մեր աշխատավայրում, մի անձնավորություն՝ արժանի լուրջ ուսումնասիրության: Այսպես ուրեմն, Ժիլը վերջին քսան տարիներին եղել է այս թերթի թղթակիցը Արևելքում... և ի՞նչ թղթակից, նստավայրը Կոստանդնուպոլսում: Ինչպես որ մեզ հայտնել են, նա շատ հիվանդ է և արդեն յոթանա-

սունին մոտ: Անկեղծ ասած, դուտ մեր միջև, կարծում եմ, որ հազիվ մի երեք ամիս դիմանա: Իսկապես ցավալի է: Զգիտեմ, թե ինչպես ենք չարունակելու աշխատել առանց նրա: Նրա հոդվածները Միջին Արևելքի մասին միշտ եղել են էրուդիցիայի հրաշք և անչափ հետաքրքրական տեղեկատվություն այդ հեռավոր և եղակի աշխարհի մասին: Ի վերջո մտածեցի, որ դուք կկարողանայիք փոխարինել նրան: Խորհեցի ձեր վիթխարի ներուժի մասին և թեև գիտեմ, որ դուք աշխատանքի կարիք չունեք ձեր ապրուստը հոգալու համար և գուցե շատ երիտասարդ եք նման պաշտոնի համար, ինչ որ է՝ Ձեզ եմ առաջարկում այդ պաշտոնը, թեև զգուշացնում եմ, որ փոխարինել այնպիսի մեկին, ինչպիսին Ժիլն է, ռիսկի գործ է, եթե չասենք անհնարին առաքելություն: Բայց նախքան ինձ պատասխան տալը ձեզ պետք է որոշ բաներ զգուշացնեմ. առաջինն այն է, որ Օսմանյան կայսրությունը դժվարին վայր է, որում գոյություն ունեն որոշակի ռիսկեր: Զգիտեմ, ինձ հասկանո՞ւմ եք... Ջեմ ուզում ասել, թե վտանգավոր է: Ոչ, մանավանդ որևէ եվրոպացու համար: Այնտեղ չեն համարձակվում անգամ մեր մազին դիպչել, բայց ի վերջո այստեղ՝ անգամ Փարիզում, կյանքը նույնպես դժվարին է: Ի վերջո հարցը հետևյալն է. «Դուք կուզենայի՞ք գնալ այնտեղ»:

Հիշում եմ, որ այդ պահին, մինչ լսում էի այդ անհավատալի առաջարկը, կոկորդս չորացավ: Բոլորովին անսպասելի բան էր, այն աստիճան, որ եթե չիմանայի տնօրենի բնավորությունը, հաստատ կկարծեի, թե կատակում է ինձ հետ: Այդ մարդն օժտված էր շատ առաքինություններով, բայց ոչ կատակելու: Գլխով համաձայնության նշան արեցի, այդ ընթացքում հազում էի: Իհարկե, ուզում էի գնալ: Հանկարծ հասկացա, որ ավելի դուրեկան բան, քան այն, որ ինձ առաջարկում էր պարոն Լաքյորը, չէր կարող լինել: Անշուշտ, համաձայնվեցի, թեև մի քիչ վախեցած, հիշելով Հյուբեր Պուանկարեի չարակամ հայացքը: Դա չէր վերաբերում երկու ծեր լրագրողների միջև տեղի ունեցած վեճին, թե մինչև ուր կարող էր հասնել մի փառասեր երիտասարդ: Մենք միմյանց ձեռք սեղմեցինք, և ես նշանակվեցի «Լ'Օրոր»-ի թղթակից Մերձավոր Արևելքում՝ Կոստանդնուպոլսում նստավայրով:

Մի քանի րոպե անց, երբ դուրս եկա գրասենյակից, Պուանկարեն, որ դեռ նստած էր իր սեղանին ծխելով իր անբաժան ծխամորճը, նշան արեց, որ մոտենամ.

– Դե ինչ, երիտասարդ,– բացականչեց: – Այսպիսով գնում ես Կոստանդնուպոլիս: Ես այնտեղ եղել եմ երեսուն տարի առաջ և երեք տարի մնացել այդ երկրում: Շատ հետաքրքրական մարդկանց եմ ծանոթ եղել, ինչպես, օրինակ, Հակոբ Կոճիկյանին՝ Հայկական խորհրդի քարտուղարին: Ահ, որքան ժամանակ է անցել: Այդ երկիրը մի յուրատեսակ աշխարհ է, բայց չկարծես, թե այնտեղ գնալդ անցնելու է անհետևանք՝ լինելով սոսկ մի սխալմունք քո առաջխաղացման մեջ՝ չհանգցնելով ոչնչի: Ոչ մի դեպքում: Ամբողջ կյանքում կրելու ես դրա թողած հետքը: Ամեն դեպքում քեզ ցանկանում եմ հաջողություն, դրա կարիքն այնտեղ զգալու ես ամեն քայլափոխի:

Քիչ անց, մինչ ոգեշնչված քայլում էի փողոցով, մտածեցի, թե որքան տարօրինակ էր ճակատագիրը և թե նման մի որոշում ինչպես կարող էր ազդել կյանքիս մնացած մասին: Այն ժամանակ չէի պատկերացնում, թե անգամ ինչ աստիճանի:

Երբ հասա տուն և մորս բացատրեցի տեղի ունեցածը, զայրացավ այնպես, որ նախկինում հազվադեպ էր նման ապրումներ ունեցել:

– Քեզ արգելում եմ, որ ընդունես այդ պաշտոնը,– ասաց: – Երբեք համաձայն չեմ եղել, որ աշխատես որպես լրագրող: Մի՞թե դա աշխատանք է, որ գտել ես, որդի՛ս: Հիմա էլ սա: Կոստանդնուպոլիս գնալու մասին ոչ մի խոսք: Սա այն դեպքն է, որ ո՛չ... Ես ընդունակ եմ քեզ զրկել ժառանգությունից: Բացի այդ, երբ այստեղ այնքան անհրաժեշտ է քո ներկայությունը, որ մնաս կողքիս, որպեսզի գնալով խորամուխ լինես գործի մեջ: Սակայն ո՛չ: Այս առարկող երիտասարդը միայն իր քմահաճույքի տերն է: Ախ, եթե հայրդ ողջ լիներ: Այնպես որ մտքիցդ հանիր այդ անհեթեթ աշխատանքը: Այդ թերթի տնօրենը պետք է որ խելքից պակաս լինի նման առաջարկ անելու համար: Այլևս չխոսենք այդ հարցի շուրջ, եթե չես ուզում ինձ զայրացնել:

Այդ տոնով նա դեռ երկար չարունակեց, փորձելով համոզել ինձ, որ նորից խոսեմ տնօրենի հետ՝ ասելով, որ երկար խորհրդածելուց հետո ոչ մի կերպ չեմ կարող ստանձնել այդ պաշտոնը: Տարբեր պատճառներ իսկապես կային, թերևս միակ հիմնավորվածը Աննա Բալենի հետ նշանված լինելս էր. մի չքնաղ աղջիկ, բացի այդ՝ ժառանգորդուհին մեկ այլ չլսված հարստության: Ըստ որում, բոլորն էլ մեր մոտակա միությունը համարում էին եղած-պրծած: Այդ որոշումը ոչ միայն հասցրեց նրան, որ մայրս հետս վիճեց: Աննան շատ սառնությամբ ինձ վստահեցրեց, որ եթե ես մեկնեմ, նշանադրությունը վերջնականապես չեղյալ կդառնա, քանի որ մտադիր չի երկու տարի սպասել ինձ: Մինչդեռ այդ ժամանակահատվածը նվազագույնն էր, որ ինձ առաջարկված պայմանագրի համաձայն՝ պետք է մնայի Կոստանդնուպոլսում:

Զնայած այն ցնծությանը, որ ինձ համակել էր առաջին պահերին, իմ նշանածի դիրքորոշումը, ուղևորվելու համար ինձ ոչ մի ֆրանկ չտալու մորս որոշումը՝ այդ ամենն ինձ ստիպեց խորհել, և մի քանի օրվա ընթացքում փորձեցի հավաքել բոլոր ուժերս դեմ առ դեմ հանդիպելու տնօրենին և նրան բացատրելու, որ ես ինձ ընդունակ չեմ համարում ստանձնելու այդ պաշտոնը: Նույնիսկ մի պահ մտա նրա աշխատասենյակն այն մտադրությամբ, որ նրան ասեմ, որ թողնում եմ թերթը և որ ներկայացնելու եմ իմ վճռական հրաժարականը, եթե չհամաձայնվի, որ մնամ Փարիզում: Ասենք, որ չունեցա քաջություն, անընդունակ եղա առարկել, երբ մյուս Լաքյորն իր ծանր մարմնով վեր կացավ սեղանից՝ աջ ձեռքում մի քանի փաստաթղթեր.

– Դուք բախտավոր տղա եք: Իրոք որ: Անձամբ նախարարն է հետաքրքրվել այս հարցով և հենց նոր ուղարկել է ձեզ դիվանագիտական անձնագիր: Այնպես որ, «Լ'Օրոր»-ը չէ, որ ուղարկում է ձեզ, այլ պետությունը: Ինչպես գիտեք, Ֆրանսիան կարևոր շահեր ունի Թուրքիայում և աշխատում է ուժեղացնել դիվանագիտական կապերը: Նախարարի հետ խոսել եմ ձեր մասին, և պարզվում է, որ քաջ ծանոթ է ձեր ընտանիքին: Հանգամանքներն այնպիսին են, որ ողջամիտ կլինի, որ գնաք պաշտպանված, իսկ դիվանագիտական անձնագիրը քաշով մեկ ոսկի է:

Դրանում համոզված եմ: Դուք կհասկանաք, հենց որ ոտք դնեք Թուրքիա: Այնպես որ, ամեն ինչ լուծված է, և երկու շաբաթ անց Մարսելից ծով դուրս կգա «Բրետանիա» նավը՝ տանելով իր հետ ֆրանսիական դիվանագիտական անձնակազմին: Դուք էլ կլինեք այնտեղ... Բնականաբար նա խնդրել է ցուցաբերել որոշ նրբանկատություն... Ուզում եմ ասել, որ Թուրքիայի հետ հարաբերությունները ընթանում են նուրբ անցումներով և այդ ամենը պահանջում է ճիշտ վարվեցողություն ու դիվանագիտություն, բայց նաև ընդգծել է, որ վստահում է ձեզ: Զուր չէ, որ Լատուր գերդաստանը մեծ վստահություն է վայելում բառիս բոլոր իմաստներով: Աչքներս լույս: Շնորհավորում եմ ձեզ և ինձ էլ եմ շնորհավորում, քանզի հիմա համոզված եմ, որ ձեր առաքելությունը մեծ հաջողություն է բերելու: Դե ինչ, պատրաստեք այն, ինչ անհրաժեշտ է և եթե հարմար եք գտնում, խոսեք պարոն Պուանկարեի հետ: Նա մի քանի տարի ապրել է այնտեղ և քաջ ծանոթ է այդ երկրին: Ահ, նաև անցեք դրամարկղ, որպեսզի պատրաստեն ձեր ուղևորության տոմսերը: Դուք կանոնավոր ձևով ձեր հաշվի վրա կստանաք աշխատավարձ, նաև սննդի համար նախատեսված գումար այդ երկրում մնալու ընթացքում և բացի այդ,

ձեր տրամադրության տակ կունենաք վարկ՝ այն ծախսերի համար, որ կհամարեք անհրաժեշտ... և, բնականաբար, կհիմնավորեք... Դե ինչ, ոչինչ ավելի, եղեք ողջամիտ և Աստծո օրհնությունը ձեզ: Ահ, հիշեք նաև, որ «Լ'Օրոր»-ը հավակնում է շարունակել լինել Եվրոպայի լավագույն լրագիրը:

Տնօրենն ինձ ուղեկցեց մինչև դուռը՝ թույլ չտալով ինձ խոսել: Ինքնին սա մի տարօրինակ մեծարում էր, և խմբագիրներից ոմանք, որ տեղյակ էին իրադրությանը, խղճահարությամբ լի հայացքներ ուղղեցին վրաս, համարելով, որ ինձ արտաքսում են: Ամեն ինչ ասված էր, և դուռը հուչիկ ծածկվեց՝ թողնելով ինձ մյուս կողմում՝ այն համոզմամբ, որ վիճակն արդեն գցված էր՝ Alea jacta est: Իրավունքի պատմության դասախոսը՝ մյուս Լաչամբրը, երրորդ կուրսում, մի անգամ դասին ինքնավստահ ձևով բացատրեց, որ Սուետոնիոն արտահայտվելուն տալիս էր ուրիշ նրբերանգ: Այն, ինչ Կեսարը ցանկացել էր ասել, հետևյալն էր, որ խաղամրցույթը դեռ առջևում էր: Այդ պահին ես էլ էի նույն կարծիքին:

Դարձյալ փորձեցի համոզել մորս: Ճանաչելով նրան՝ անհնարին մի բան: Հետո Աննան՝ իմ նշանածը, համոզվելով, որ իմ որոշումը հաստատ է, սկսեց հեկեկալ ծածկելով դեմքը, մինչև որ հանկարծ վեր կացավ տեղից՝ թողնելով խոսքը բերանումս, սրճարանում, որտեղ մենք ժամադրվել էինք: Հասկացա, որ մինչ այդ նրա կամքին երբեք չէին հակառակվել: Եկա նրան, որ իմ անվճռականությունն էր ինձ հասցրել այդ դժվարին իրադրությանը, որից ասես անկարող էի դուրս գալ:

Այդ վճիռը կայացնելուն պես ինձ համար ամեն ինչ փոխվեց: Մայրս, թեև վերջին շաբաթներին մի քիչ փափկել էր՝ ընդունելով, որ հետդարձ չկար, չէր դադարում ինձ կշտամբել, չէր հասկանում, թե ինչո՞ւ չէի կարող ազատվել այդ անհեթեթ առաջարկից, ինչպես ինքն էր անվանում:

– Այդ Լաքյորին մի նամակ գրիր: Ահ, ոնց եմ ջղայնանում, որ դու այդպիսին ես: Բայց ոչ էլ պետք է գնաս նրան տեսնելու: Եթե պետք լինի, ես ինքս կխոսեմ Անրի դը Վիյեի հետ,– խոսքն արտաքին հարաբերությունների պետական քարտուղարի՝ ընտանիքի վաղեմի բարեկամի մասին էր:

Հրաժարվեցի, միմիայն իմ պատասխանատվության հարցն էր, ուրիշ ոչ ոքի, իսկ մյուս կողմից՝ ինձ նվաստացնում էր այն, որ մայրս շարունակում էր վերաբերվել ինձ որպես երեխայի:

Անկախ բոլոր անպատեհություններից՝ չէի կարողանում զսպել հետաքրքրությունս և օգտվելով Փարիզում ինձ մնացած օրերից՝ տեղեկացա Օսմանյան կայսրությունից և Բյուզանդիայից: Փնտրեցի հին քարտեզներ Կոստանդնուպոլսի տեղը գտնելու համար, կարդացի նրա պատմության մասին, խորամուխ եղա նրա ավանդույթներին ու սովորույթներին,– և առանց հստակորեն իմանալու՝ թե ինչու,– իմ ներսում ինչ-որ բան փոխվեց:

Այդ պահից սկսած հասկացա, որ ինձ հարկավոր է գնալ այնտեղ, ասես մի կանչ էր հոգուս խորքից գալիս՝ մի բան, որ մյուս կողմից ոչ մի իմաստ չուներ. որքան ինձ հայտնի էր, իմ ընտանիքը երբեք որևէ կապ չէր ունեցել Թուրքիայի հետ:

Այդ ժամանակ էլ վճռեցի նախապատրաստվել գնալուն և այդ մասին պատմեցի Պուանկարեին, որն ինձ վերաբերվում էր որպես իր որդու: Ինձ մի քանի խանութներ խորհուրդ տվեց, որոնցում նա նույն բանն էր արել երեսուն քանի տարի առաջ: Այդ խանութներում հագուստներով և հանդերձանքով սպասարկում էին նրանց, ովքեր ուղևորվում էին գաղութներ՝ լիներ Աֆրիկա թե Ամերիկա, Ասիա թե Օվկիանիա: Երբ մտա և մինչ զննում էի այնտեղ տիրող մոդան, ծառայողներից մեկը ժպտացող դեմքով մոտեցավ ինձ: Չկարողացա խույս տալ այն մտքից, որ դա հենց այն նույն մարդն է, որ ժամանակին սպասարկել էր իմ հոգևոր առաջնորդին, որովհետև այդ վայրում այն տպավորությունն էր, որ ժամանակը կանգ էր առել:

– Եթե թույլ տաք ինձ, մսյե, դուք ո՞ւր եք մեկնում: Կոստանդնուպոլիս... Ունենք մի հրաշալի բամբակյա կոստյում, շատ հարմար Արևելք մեկնողների համար... – վաճառողն ինձ զննում էր նախանձի և հարգանքի խառնուրդով՝ համոզված, որ ինքը երբեք չի լքի «Քամիների Վարդ: Պատրաստի հագուստեղեն: Ճանապարհորդի համար լրացուցիչ պարագաներ» խանութի վաճառասեղանները:

Ի վերջո, դա ուղևորություն էր Մերձավոր Արևելքի մի երկիր՝ բոլոր տեսանկյուններից տարբեր մի վայր, թեև Պուանկարեն պարզորոշ ասաց, որ տարբերությունն անկասկած այն է, որ խոսքը մուսուլմանական երկրի մասին է:

– Իսլամին պատկանելը,– ինձ հետ խոսում էր հայրաբար,– նրանց դարձնում է բոլորովին ուրիշ: Պետք է որ հասկանաս, թե ինչ եմ ուզում ասել, քանի որ ընտանիքի, կնոջ, հասարակության և կրոնի նրանց սկզբունքը մեզ հետ ընդհանուր ոչինչ չունի: Սակայն գիտե՞ս ինչ, քեզ նախանձում եմ: Կոստանդնուպոլիսը, հիրավի, աշխարհի ամենագայթակղիչ քաղաքներից մեկն է:

Պատրաստեցի հաստ կաշվե երկու ճամպրուկներ, որ մի ժամանակ հորս էին պատկանել: Թեև փոքր-ինչ հնաոճ և աշխարհ տեսած լինելուց սպիներով՝ ինձ թվացին ավելի հարմար, քան այն մեծ աստառապատ փայտյա ճամպրուկը՝ մետաղյա անկյունագամերով, որ առաջարկում էր մայրս: Ես նրանից ընդունեցի միայն մի փոքրիկ ատրճանակ փղոսկրե կոթով: Միմիայն նրա համար, որ ինձ թողներ հանգիստ, թեև սկսեց լաց լինել, երբ տեսավ, որ այն սեղմում եմ հեգնորեն, երևի կարծում էր, թե չուտով պեղելու եմ մի հեռավոր և վայրենի վայր: Հետո եկա այն մտքին, որ վատ չէր լինի հետս տանել այն:

Երբ հասավ մեկնելու պահը, փորձեցի կապվել Աննայի հետ: Երկու ամիս իրարից նեղացած էինք, բայց համոզված էի, որ ի վերջո հաշտվելու էր իրականության հետ և ամեն բան առաջվա պես կլիներ: Ինձ զարմացրեց նրա արձագանքը, քանի որ մեր ընդհանուր ընկերուհիներից մեկն ինձ պատմեց, որ որոշ ժամանակով գնացել է Լոնդոն, որտեղ ապրում է իր հորաքույրներից մեկը և վերջին բանը, որ նրան ասել էր՝ այլևս երբեք ինձ տեսնել չի ուզում:

Որոշ չափով ճնշված՝ համոզվելով, որ իրականությունը գլխիս փուլ է գալիս, նստեցի էքսպրես գնացք, որն ընդամենը մեկ օրում ինձ տանելու էր մինչև Մարսել: Այնտեղ պետք է նստեի «Բրետանիա» չոգենավը, որն ըստ ուղեցույցի՝ բեռ էր փոխադրում, սակայն ուներ նաև քառասուն նավախցիկ: Գնում էր Մարսել–Նեապոլ–Պիրեա–Կոստանդնուպոլիս երթուղիով՝ տասնմեկօրյա ուղևորություն: Լավ եղանակի դեպքում կամ էլ հույս ունեի, հաճելի օրեր կլինեին, քանի որ մինչ այդ երբեք նավով չէի ճամփորդել և ինձ պատել էր ոգևորության ու վախի խառը զգացում:

Գնացքից իջնելուն պես՝ ես Մարսելում զգացի, որ այդ քաղաքի բույրը առանձնահատուկ էր, բոլորովին ուրիշ: Վերջին հաշվով դա այն դուռն էր, որով Արևելքը թափանցում էր Ֆրանսիա: Իմ ընդունած որոշումից զոհ՝ խոր շունչ քաշեցի: Հենց այնտեղ էլ նստեցի մի խարխուլ քառանիվ կառք, որն ինձ մի քանի րոպեում կայարանից հասցրեց նավահանգիստ: Գրեթե մի քանի քայլ հեռավորության վրա էր, սակայն երկու ճամպրուկներս չափից ավելի ծանր էին: Հարկ չեղավ կառապանին բացատրել, թե որտեղ է չոգենավը, քանի որ քթի տակ ասաց, որ հենց նոր է տարել այնտեղ ուրիշ ուղևորների: Մտածեցի, որ պետք է դիվանագետներ եղած լինեին ուղեկիցներս, որոնց հետ ճամփորդելու էի և մեջս հետաքրքրասիրություն առաջացավ: Ձին նման չէր ո՛չ մեր ունեցածներին և ո՛չ էլ նրանց, որ

սովորաբար վարձում էի Փարիզում: Կապիչների թողած վերքերով և զանգակներով զարդարված մի քնձռոտ ձի էր, որը բավականին կաղում էր մի ոտքից: Մթնոլորտը՝ պատուհաններին կամ երկար պարաններին փռված չորերը, որոնք ձգվում էին փողոցների մի մայթից մինչև դիմացինը՝ ինձ հուշում էին, որ լավ թե վատ՝ այդ էր Միջերկրականը:

Մի քանի րոպե անց հասանք նավակայան: Այնտեղ խարիսխ գցած կանգնած էր «Բրետանիան», մի պերճաշուք շոգենավ՝ ավելի մեծ, քան կարող էի պատկերացնել, քանի որ հարյուր մետրից պակաս չէր լինի նրա տախտակամածի երկարությունը, և նրա ընդարձակ ծավալն ինչ-որ կերպ ինձ հանգստացրեց: Նոր էի իջել կառքից, երբ քառասուն տարեկանին մոտ մի մարդ, նիհար, ինձնից մի քիչ բարձրահասակ, շատ բաց գույնի մաշկով և կապույտ աչքերով՝ պաշտպանված ոսկեզօծ ակնոցով, ժպտադեմ մոտեցավ ինձ, պարզելով իր ձեռքը.

– Անրի դը Լատուր:

– Ես Պիեռ Լըկլերկն եմ: Եթե դեմ չես, իրար հետ դու-ով խոսենք, մանավանդ, որ լինելու ենք դժվարություններ կիսող ընկերներ: Ուրախ եմ քեզ հետ ծանոթանալու համար, մնացածներն արդեն այստեղ են և քիչ հետո քեզ բոլորին կներկայացնեմ: Ըստ ինձ հասած տեղեկության՝ դու լինելու ես այսպես կոչված պաշտոնական թղթակիցը, այնպես որ լավ կլինի, որ քեզ հետ բարեկամանանք: Քո նավախցիկը քսաներկուերորդն է, իմը՝ քսանչորսերորդը, ու եթե որևէ բանի կարիք ունենաս, ինձ իմաց տուր: Կարծում եմ, որ հենց այս գիշեր ենք ծով դուրս գալու վատ եղանակի պատճառով: Այս ծովայինները կբարձրացնեն ճամպրուկներդ, թեյադրամ չտաս, կապիտանի հաստատած կարգն է: Հետո կխոսենք:

Մինչ բարձրանում էի չարժական կամուրջով, մի պահ շրջվեցի: Հենց այդ պահին հասնում էր մեկ այլ կառք, և ի զարմանս ինձ՝ մի երիտասարդ աղջիկ իջնում էր դրանից: Տեսա նաև, թե ինչպես է Պիեռ Լըկլերկը մտերմաբար համբուրում նրա երկու այտերը: Ինձ ոչ ոք չէր ասել, որ մեկնող անձնակազմում կին կա, և ես ուսերս թոթվեցի:

Նավը, թեև շատ հին չէր թվում, արձակում էր մազութի հետ խառն օխրայի, ներկի և քարածխի հոտ՝ համեմված ծովային գոլորշիներով, որ բերում էր քամին: Ես հակվեցի այն մտքին, որ այդ հոտը կպչելու է հագուստիս և ստիպված Կոստանդնուպոլիս հասնելուն պես՝ ողջ ուղեբեռս ուղարկելու եմ քիմմաքրման:

Նավախցիկը նեղ էր, բայց բավարար չափերով, ամբողջապես երեսպատված կաոբայով, համենայնդեպս թվում էր հյուրընկալ: Ամեն դեպքում մի քանի օրվա հարց էր, և պետք է վարժվեի, թեկուզև ամեն բան այլ կերպ լիներ: Այդ իսկ պատճառով որոշ չափով համակերպվեցի և կոստյումս կախեցի պատի մեջ փորված պահարանում: Պարզեցի, որ ունեի նաև անհատական փոքրիկ սանհանգույց, որից լավ էլ ի՞նչ կարող էր լինել:

Քանի որ ինձ հաղիվ հաջողվելու էր քնել, հանեցի պիջակս և մեկնվեցի մահճակալին: Պետք է որ երկար ժամանակ մնացած լինեի քնած, քանի որ երբ պառկած տեղում ուղղվեցի, կլոր պատուհանից լույս չէր ընկնում. զգացի, որ նավը առաջ է գնում: Փոքր-ինչ անհանգիստ՝ ոտքերս ու ձեռքերս ձգեցի, պիջակս գցեցի վրաս և դուրս եկա միջանցք: Հենց այդ նույն պահին բացվեց դիմացի նավախցիկի դուռը, և հայտնվեց առեղծվածային տիկինը, որն ինձ ժպտաց ներկայանալով՝ Էլեն դը Ֆավը: Նրան պատասխանեցի խոնարհելով գլուխս և չչնջացի անունս: Ի զարմանս՝ առանց այլևայլության հարցրեց.

– Այդ դու ես նշանավոր Անրի դը Լատուրը: Ինձ շատ են պատմել քո մասին, որպես մեկի, որ նախընտրում է մեկնել Արևելք, քան լինել իր նշանածի կողքին... Թե կուզես իմանալ, ես Աննա Բալենի ընտանիքի վաղուցվա մտերիմ բարեկամուհիներից եմ և այդ հարցին լավատեղյակ: Ներիր ինձ աննրբանկատ լինելուս համար, սակայն դու դարձել ես ողջ Փարիզի բամբասանքի առարկան: Ինչ արած: Ծանո՞թ ես Կոստանդնուպոլսին: Քեզ դյութելու է: Այնտեղ ապրել եմ երեխա ժամանակ, բայց հետո հորս նշանակեցին Մոսկվա, իսկ հիմա նորից նրա կարիքը զգում են Թուրքիայում, այսպիսին է դիվանագետների՝ վտանգներով լի կյանքը... և նրանց ընտանիքների:

– Լավ,– մի քիչ անհամարձակ վրա բերեցի ես,– ճչմարիտն ասած՝ դիվանագիտական անձնագիրն ինձ տվել է մեր ընտանիքի մի բարեկամ, որը բարձր պաշտոն է զբաղեցնում: Իմ կարծիքով այն ապահովության երաշխիք է, բայց որոշ ժամանակ անց իմ իսկական կարգավիճակը Կոստանդնուպոլսում լինելու է «Լ'Օրոր»-ի թղթակցի իմ պաշտոնը: Անձնագիրն ինձ տվել են ելնելով բարությունից, որպես մորս անհանգստությունների սփոփանք: Նա համոզված է, որ դա այն թալիսմանն է, որ կպահպանի ինձ չարիքներից:

Այդ ընթացքում հասել էինք այն դահլիճին, վեցը տասներկուսի վրա մի սրահի, որը տեղակայված էր կառավարման վահանակից հետո: Մեզ դիմավորեց Պիեռ Լըկլերկը հինգ երիտասարդների ուղեկցությամբ: Նրանցից և ոչ մեկի տարիքը երեսունից չէր անցնում, բա-

ցառությամբ մի մարդու, մոտավորապես վաթսունին մոտ, որ խորքում նստած խորասուզված էր ընթերցանության մեջ.

«Տեսնում եմ, որ դուք միմյանց ներկայացել եք,– Լըկլերկը կատարյալ հյուրընկալ տանտիրոջ կերպար էր: – Ուրեմն պետք է իմանաս, որ էլենի հայրը Ֆրանսիայի նոր դեսպանն է Կոստանդնուպոլսում՝ մսյե Ժակ դը Ֆավրը, որ մի քանի օր է, ինչ գտնվում է այնտեղ: Ինչ վերաբերում է մնացածներին, ահավասիկ Գիյոմ դը սեն Ժերմեն՝ երկրորդ քարտուղար, Անտուան Մոնժ՝ առևտրական հանձնակատար, որ իրոք չատ լավ գիտե այդ երկիրը, Ֆրանսուա Սենտ Էտիեն՝ Ֆրանսիայի բանկից, Ժան Կառնո՝ Հատուկ ծառայություններ... Ավելի ուշ ինքը կբացատրի, թե խոսքը ինչ ծառայությունների մասին է: Ժակ դը Շոնի՝ զինվորական խորհրդական և Պետական ծառայության կապիտան... Այնպես որ, նրան երբեք չդրդես մենամարտի, քեզ ոչինչ չի հաջողվի. տասը մետրի վրա ընդունակ է ծակել մետաղադրամը համարյա առանց նշան բռնելու, և քեզ հավատացնում եմ առանց չափազանցության: Ահա և Լուի դը Ֆլյորին՝ դեսպանի անձնական խորհրդատուն: Երբևէ ճանաչե՞լ ես մի մարդու, որը կատարելապես խոսի տասներկու տարբեր լեզուներով:

– Հիմա, երբ բոլորս միմյանց ծանոթացանք,– շարունակեց նա,– մսյե դը Ֆլյորին մեզ համար մի արագընթաց դասընթաց կվարի այնտեղ մեր ունենալիք դիրքորոշման վերաբերյալ: Այնպես որ, եթե դեմ չեք, նստեք և քանի դեռ ծովը թույլ է տալիս և մոտենում է ընթրիքի ժամը, մեզ կպատմի Թուրքիայում տիրող իրադրության մասին: Երբ ցանկանաս, Լուի, ուշադրությամբ քեզ ենք լսում:

Դը Ֆլյորին սլացիկ մարդ էր ձյունաճերմակ մազերով և մորուքով: Կրում էր թանկարժեք զգեստներ, թեև իր ընդհանուր տեսքը մի քիչ անփույթ էր, ասես նրան էլ ոչինչ չէր մնացել ցուցադրելու: Ժպտաց և կանգնեց խմբի դիմաց:

– Լավ, չատ ուրախ եմ ձեզ ուղեկցելու համարյա բոլորիդ համար առաջին ուղևորությունում դեպի Կոստանդնուպոլիս, բացի էլենից, որի հետ ինձ թույլ եմ տալիս խոսել դու-ով, քանի որ նրան ճանաչում եմ չատ վաղուց: Դուք գնում եք դեպի մի անհավատալի վայր, բայց ամենից առաջ պետք է խոսենք պատմությունից,– Լուի դը Ֆլյորին ձեռքով հարդարեց կարճ կտրած մորուքը դասախոսին հատուկ մի ժեստով, ով պատրաստվում է տալ մի արտասովոր դաս:

– Անկասկած, ամենակարևոր առարկան, որ մեզ թույլ է տալիս հասկանալ մեզ շրջապատող աշխարհը: Ձեզ դո՞ւր գալիս է պատմությունը: Ուրեմն պատրաստվեք, քանի որ չուտով ընկղմվելու եք

նրանում, վերջին հաշվով երկիրը, որ մեզ սպասում է՝ արտասովոր է: Ասացի երկիր՝ ոչ: Խոսքը մի վիթխարի կայսրության մասին է՝ դեռևս այսօր: Մի կայսրություն, որն այնքան ազդեցություն է ունեցել, որ վերջին դարերի ընթացքում հիմնովին փոխել է միլիոնավոր մարդկանց կյանքը: Գիտեք, որ Մուհամմեդ II-ը արյամբ և կրակով է նվաճել Կոստանդնուպոլիսը 1453 թվականին: Դա եղավ Բյուզանդական կայսրության անկումը: Ավելի ուշ, տարիների ընթացքում թուրքերը տիրացան Հունաստանին, Բուլղարիային, Ալբանիային, Բոսնիային, Հերցեգովինային, Հունգարիային, Վալախիային և Ղրիմին: Արդեն իսկ տասնվեցերորդ դարի սկզբներին տարածվեցին դեպի Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս, Տրիպոլի, Թունիս և մինչ ամրապնդում էին իրենց դիրքերը Անատոլիայում, Կովկասում, Ատրպատականում, Արևելյան Հայաստանում, Միջագետքում ու Արաբիայի մեծ մասում, բնականաբար դարձան Միջերկրականի տիրակալները: Կա՞ մեկը, որ լսած չլինի Կարմրամորուքի և ծովահենների մասին: Բայց հանգիստ եղեք, Միջերկրականում հազիվ թե մնացած լինի որևէ ծովահեն: – Դը Ֆլյորին ժպտաց կիսելով մեզ հետ իր հեգնանքը: – Ինչ խոսք, ոչ մուսուլման փոքրամասնություններին վերահսկելու և կառավարելու նպատակով սահմանեցին այսպես կոչված ջիմիզ-ի կարգավիճակներ կամ Պայմանագրի ժողովուրդներ, որոնք երաշխավորում էին, անչուշտ, պաշտամունքի ազատություն, յուրաքանչյուր մարդու անհատական կարգավիճակ, համապատասխան դատական ատյաններ այդ փոքրամասնությունների համար, ունեցվածքին տեր կանգնելը և սուլթանի հովանավորությունը, այսինքն՝ ապրելու իրավունքը: Այս կարգավիճակները պարունակում էին այնպիսի յուրահատուկ պայմաններ, որոնց հանրագումարը նշանակում էր հնազանդություն օսմանյան իշխանությանը և հարգանք մուսուլմանական կրոնին ու օրենքին. սրա մեջ նաև մտնում էր հարկերի պարտադիր վճարումը, իսկապես չատ պատկառելի, եթե չասենք չատ դեպքերում չափից ավելի մեծ հարկերի:

– Ուզում եմ պարզաբանել,– շարունակեց,– որ Օսմանյան կայսրությունը եղել և մինչև օրս շարունակում է մնալ որպես նվաճված ժողովուրդների մի վիթխարի գլուխկոտրուկ, նրանցից մի քանիսը մուսուլման, բայց չատերն էլ քրիստոնյա են, ինչպես ուղղափառ հույները, բուլղարները, ասորիները և նրանցից բացի՝ մանավանդ իրենց թվով և պատմականորեն ապրած լինելով մասամբ Անատոլիայում և Կիլիկիայում, հայերը: Ձպետք է մոռանանք հրեաներին, որոնց ազդեցությունը Կայսրության վրա վիթխարի է: Այսպես ու-

րեմն, այս փոքրամասնությունները կազմում են համայնքներ կամ «միլլեթներ» և հայկական միլլեթի դեպքում կրոնական առաջնորդը Կոստանդնուպոլսի պատրիարքն է, որին անձամբ ծանոթ եմ և ասեմ ձեզ, որ այդ առումով նա իր ժողովրդի համար իսկական առաջնորդ է: Թուրքերը ոչ մուսուլմաններին անվանում են գյավուրներ, այսինքն՝ անհավատներ: Այս անվանումը կարևոր իմաստ ունի, քանի որ «գյավուրը» մուսուլմանի համեմատ ըստ օրենքի ստորին շարքում է և Կոստանդնուպոլսում... չոգենավից իջնելու պահից սկսած՝ ինքներդ կզգաք այդ իրավիճակը, անչուշտ ոչ մեր՝ ֆրանսիացիների դեպքում, քանզի թեև անհավատներ՝ ունենք մի մեծ իշխանություն՝ այնպիսի ուժեղ ազգ, որ ամեն կերպ մեզ սատարում է: Տարբերությունն այդ է, քանի որ եթե կա մի բան, որ թուրքերն հարգում են, ուժն է: Հիմա, եթե ինձ թույլ տաք, ձեզ կպատմեմ ներկա դրության մասին, սակայն դրա համար հարկավոր է մի փոքր անդրադառնալ նորագույն պատմությանը:

Դը Ֆլյորին ասես վերապրում էր իր պատմածը, մինչ մենք մնացել էինք ապշահար, չնայած նրան, որ նավը վատ եղանակի պատճառով սկսել էր տարուբերվել:

— Քսան տարի առաջ էր: Աստված իմ, ինչպես է անցնում ժամանակը: 1865 թվականին գտնվում էի Փարիզում, երբ մի գրություն ստացա ճանաչված թուրք լրագրող Նամիկ Քեմալից՝ մի հետաքրքիր անձնավորություն, որն ամենուրեք թողնում էր իր հետքը: Ինձ բացատրեց, որ վերջերս հիմնել են մի ռեֆորմիստական շարժում, քանի որ սուլթանները ոչինչ չեն անում հանուն Թուրքիայի առաջադիմության: «Մսյե Ֆլյորի,— ասաց,— Սուլթանները միշտ էլ ինչ որ ասել են, հակառակն են արել: Կուչտ ենք Թուրքիան կառավարելու նրան ձևից և հիմա գիտենք, որ եթե միանանք, կարող ենք շատ բաներ փոխել: Ուզում ենք լինել եվրոպացիներ»:

Շարժումը նրանք կնքել էին «Նոր օսմաններ» անվամբ: Մեկ ամիս անց մասնակցեցի այդ կուսակցության «պաշտոնական» հիմնադրմանը Փարիզում՝ որպես հրավիրված անձ: Ինձ հրավիրել էր ինքը՝ Նամիկը, որն իմ ազդեցիկ հեղինակության մասին սխալ կարծիք ուներ: Այնտեղ ծանոթացա Մուրադ և Աբդուլ Համիդ արքայորդիների հետ, որոնք ավելի ուշ դառնալու էին սուլթաններ: Թանզիմաթի բարեփոխումները նրանց բավարար չէին թվում և անհամբերությամբ սպասում էին, թե երբ էին երկիրը իսկապես փոխելու: Առիթ ունեցա զրուցել, այդ առթիվ մտքեր կիսել այն ժամանակ արքայորդի Աբդուլ Համիդի հետ..., և թույլ տվեք կարծիք չհայտնել: Մենք ներկայացնում

ենք Ֆրանսիայի արտաքին հարաբերությունների նախարարության դիվանագիտական մարմինը և որևէ դիվանագետ, ի տարբերություն սուլթանի, չպետք է ասի այն, ինչ մտածում է, այլ պետք է մտածի, թե ինչ է ասում: Ինձ հասկանում եք: Այդ ժողովին ներկա մարդիկ ագահորեն կարդացել էին Վոլտերին, Ռուսսոյին, լուսավորության ժամանակաշրջանի գրողներին, մի բան, որ դուք լավ գիտեք, չի արվում հենց այնպես, առանց հետք թողնելու, քանզի այդ ժամանակ է, որ ներթափանցում են իսկական ազատության սերմերը, կամ գուցե իրենց էր այդպես թվացել երիտասարդական երևակայության պոռթկումի պահին: Իրականում դա մի շարժում էր սուլթան Աբդուլ Ազիզի դեմ, որին մեղադրում էին համարելով վատ, անկարող, արտառոց և պետության գանձարանը մսխող կառավարիչ: Արքայորդիներ Մուրադը և Աբդուլ Համիդը ամբողջ ուժով սատարում էին այդ շարժումը, որովհետև Օսմանյան կայսրությունում կա մի ավանդույթ՝ վերացնել դեպի իշխանություն տանող ճանապարհի խոչընդոտները:

Մեղադրանքները տեղին էին: Ինչ տեսակ կառավարիչ է նա, ով միայն մտածում է, թե որին է տանելու անկողին հաջորդ գիշեր իր սիրուհիներից... (Էլեն, խնդրում եմ, ներիր ինձ անկեղծ լինելուս համար) կամ իր սիրած տղամարդկանցից, քանի որ Դոլմաբաղչեն չնայած իր կարճ պատմությանը, շատ գաղտնիքներ է թաքցնում: Ամեն դեպքում մի մարդ է, որ հանուն իր քմահաճույքների չէր թողել աչխատել իր նախարարներին սնանկացման մեջ գտնվող մի երկրում, որն իր հետ քարշ էր տալիս հսկայական մի պարտք՝ կուտակված դեռևս 1854 թվականի Ղրիմի պատերազմից սկսած: Ուզում եմ այստեղ հատուկ նշել, որ վարկատուները Ֆրանսիայի և Անգլիայի հասարակ քաղաքացիներ էին: Երկու երկրների համար էլ Թուրքիայի ֆինանսական ճեղքվածքը կնշանակեր իսկական աղետ, իսկ սուլթան Աբդուլ Ազիզի կառավարումը լցրել էր համբերության բաժակը թե՛ Կայսրության ներսում և թե՛ դրանից դուրս: Ինչ վերաբերում է մեզ՝ ֆրանսիացիներիս, իսկապես հավակնում էինք Թուրքիա արտահանել հեղափոխության մի յուրօրինակ ձև: Ցանկանում էինք, որ այնտեղ ստեղծվեր կենտրոնացված և կիրթ պետություն՝ ունակ ընձեռելու հավասարություն, եղբայրություն և ազատություն, որ կարողանար Անատոլիայի աղքատ գյուղացիներին դարձնել սանկիլոտներ՝ լինեին մուսուլմաններ թե քրիստոնյաներ: Այսինքն՝ ուտոպիա առանց որևէ իրական հիմքի, այնպիսի քաղաքականություն, որ նպաստելու էր նրան, ինչը ի վերջո տեղի ունեցավ:

Ձեզ ասեմ, որ Կոստանդնուպոլսում Ռուսաստանի և Անգլիայի դեսպանատներում մշակվեց սուլթան Աբդուլ Ազիզին և նրա մեծ վեզիր Մահմուդ Նեդիմին տապալելու դավադրությունը: Ռազմական դպրոցի սաները, որոնց դասախոսները «Նոր օսմաններ» միության անդամներ էին, դիմեցին կրոնական առաջնորդ շեյխ ուլ-իսլամին, որը հեղինակություն էր սուլթանի, նույն իր՝ խալիֆի համար, նրան ուղղելով հետևյալ հարցը. «Եթե խալիֆը դրսևորում է անհարիր վարքագիծ, զուրկ է քաղաքական բավարար պատրաստվածությունից և բացի այդ մսխում է Կայսրության ունեցվածքը, կարո՞ղ է գահից զրկվել»: Նկարագրությունը հավաստի դիմանկարն էր այդ այլասերված իշխանի: Ամեն ինչ գաղտնի համաձայնեցված էր, և պատասխանը եղավ դրական. սուլթանն անմիջապես հանվեց և իր շքախմբով ուղարկվեց Թոփ Գափուի պալատ իր մոր, իր կանանց և իր սիրուհիների հետ: Երկու ամիս անց նրան գտան հարեմում մեռած, սպանված պալատի իր իսկ բժշկի կողմից, ում այդ քայլին հարկադրել էին դավադրության հեղինակները՝ չցանկանալով ունենալ նման թշնամի իրենց թիկունքում:

Ինչ վերաբերում է նոր սուլթանին՝ Մուրադ V-ին,– ճնշող, հարբեցող և էությամբ անկայուն,– նախքան պաշտոնանկ լինելը հազիվ երկու ամիս դիմացավ, իսկ այդ ժամանակ Բարձր Դռնից գահին բարձրացավ ներկայիս սուլթան Աբդուլ Համիդ II-ը՝ առաջ մղված «Նոր օսմանների» առաջնորդ Միդհատ փաշայի կողմից, ում մասին ավելի ուշ կխոսենք: Հիմա այստեղ ես չեմ մեղադրելու ներկայիս սուլթանին: Միայն պետք է զգուշացնեմ, որ դժվարին մարդ է, ... շատ դժվարին: Հասկանում եք, որ չեմ ցանկանա ծավալվել: Պետք է պահպանեմ այն կանոնները, որ թելադրում է պաշտոնս, և բացի այդ, ձեզ մի բան զգուշացնեմ, որ չպետք է մոռանաք: Թուրքիայում պատերը լսում են: Ողջախոհ եղեք, երբեմն պետք է լեզուն կծեք և ոչ ոքի չվստահեք: Բարի, շարունակենք, եթե դեռ չեք հոգնել այս ծեր դասախոսից: Իր պաշտոնը ստանձնելուց մի քանի ամիս անց Անատոլիայի կենտրոնական և եռուն քաղաքներից մեկի՝ Վանի քրիստոնյա հայերը իմացան, թե ո՞վ է նոր սուլթանը, երբ տեսան իրենց տները և խանութները այրվելիս: Մի քանիսը մահացան, շատերն էլ փախան ինչ որ հագներին ունեին: Այդ ժամանակ էլ հայերը դիմեցին Ռուսաստանի ցարի հովանավորությանը, մինչ անգլիացիները ուրիշ կողմ էին նայում: Բոլոր դեպքերում գուցե հիշեք, որ եվրոպական հասարակական կարծիքը ճնշում գործադրեց սուլթանի վրա և վերջապես Կոստանդնուպոլսում գումարվեց մի միջազգային խորհրդակցություն. հավակնում

էին ձեռք բերել ինքնավարություն Թուրքիայի հպատակ ժողովուրդների համար, քանզի ակնհայտ էր՝ եթե շարունակեին ապրել այդ ռեժիմի ներքո, ցանկացած բան կարող էր պատահել:

Եվ նորից Միդհատ փաշան հայտնվեց որպես աճպարար՝ հանելով գլխարկի միջից մի սահմանադրություն, որում բոլոր հպատակները համարվելու էին օսմանցիներ, ինչ կրոնի որ պատկանելիս լինեին և բոլորն էլ ունենալու էին հավասար իրավունքներ: Որքանով ինձ է հայտնի այդ սահմանադրությունը ընդամենը մի ալիբի է եղել և հասցրել անչրջելի մի իրադրության, որում քրիստոնյա փոքրամասնությունները մեղադրվել են երկիրը մասնատել ցանկանալու մեջ, բայց այդ մասին դեռ կխոսենք երկար և հանգամանալից:

1877 թ. սուլթանը, տեսնելով իրեն նեղն ընկած, բանտարկել տվեց իր հավատարիմ ծառային՝ Միդհատ փաշային, քանի որ չէր վստահում նրան: Մի քանի շաբաթ անց ցրեց Ասամբլեան, որը հենց ինքն էր մեծ շուքով և ազատության խոստումներով հանդիսավորությամբ բացել, պատճառաբանելով, որ դա ոչ մի բանի չէր ծառայել բացի դավաճաններ ծնելուց:

Ասեմ ձեզ, որ պատմության ողջ ընթացքում նրանք, ովքեր շատ են խոսում դավաճանությունից, իրենք են՝ հենց բռնակալները: Այս պահին Աբդուլ Համիդի իշխանությունը բացարձակ է: Գերմանիայի հետ նրա հարաբերությունները հրաշալի են, կարծես թե այդ երկու երկրները հասկացել են, որ ունեն պատմական միահամուռ մի նպատակ, որին պետք է միասին հասնեն... Շատ տարօրինակ մի բան,– ես կասեի հակաբնական,– քանզի ես լավ եմ ճանաչում թե՛ սրանց և թե՛ նրանց: Մի դաշնություն, որի հիմքում ընկած է գերմանական փառասիրությունը՝ կայսրությանը տեր կանգնել, ձեռք բերել նոր տարածքներ և դրանցում ընդլայնվել, իսկ մյուս կողմից՝ թուրքերի նպատակն է՝ դուրս պրծնել այն վտանգավոր հորձանուտից, որում մեր երկիրը (Ֆրանսիան), Անգլիան և Ռուսաստանը վաղուց ի վեր սուզել են նրան: Գերմանական այդ ազդեցությունը,– մյուս կողմից՝ այդքան թարմ,– դրսևորվում է շատ և ամենատարբեր կողմերով, ինչպես որ կհամոզվեք դուք գալիք ամիսներին: Ահավասիկ մի օրինակ. պրուսացի գեներալները թուրքական բանակը կազմակերպում են իրենց սկզբունքներով:

Մեր երկրի հետ նրանց հարաբերությունները, ընդհակառակը, հիմա ավելի սառն են: Մեզ չեն վստահում, թերևս այդ անվստահությունը, գերմանացիների ձեռքի գործն է, որոնք հավակնում են Թուրքիան դարձնել իրենց դավթողական ռազմամոլ քաղաքականու-

թյան հարավային թևը: Հավատի իրազեկիչներից գիտենք, որ հայերի հանդեպ այս սուլթանը համակված է ատելության մոլուցքով: Վերջին տարիներին կանոնավոր զորքերի կողմից արևելյան գավառներում թույլ են տրվել չարաշահման բազմաթիվ դեպքեր, որն անկասկած տեղիք է տալիս ասելու, որ դրա հետևում կանգնած է սուլթան Աբդուլ Համիդը:

Այս ամենը, ինչպես հասկանում եք, անհանգստացնում է մեր երկրին: Ֆրանսիան պատմականորեն վարում է իրավունքների և ազատությունների միջազգային քաղաքականություն և չի կարող հանդուրժել, որ կոտորվեն փոքրամասնությունները՝ լինեն քրիստոնյա թե ոչ: Այդ իսկ պատճառով ցանկացա, որ իմանայիք իրավիճակն առանց այլևայլությունների: Կրկնում եմ, մեր վիճակը հեշտ չի լինելու, բայց ոչ էլ ուզում եմ իրադարձություններից առաջ ընկնել: Մի տրվեք արտաքին տպավորությանը: Ձեզ արդեն ասել եմ, որ Թուրքերը մի բան արտահայտելու և ճիշտ դրա հակառակը անելու արվեստի մեծ վարպետներ են, նաև համոզելու, սակարկելու և իրենց նպատակներում ոչ մի բանի առաջ չկանգնելու: Երբ որևէ բան են ուզում, դրան հասնելու համար ամեն ինչ անում են, ես ձեզ այդ մասին նախազգուշացրի: Իսկ հիմա, կարծում եմ, ժամն է, որ գնանք ճաշարան: Շնորհակալություն ձեր ուշադրության համար:

Այդ պահին Էլեն դը Ֆավրը ինձ նշան արեց, որ նստեմ իր կողքին: Տպավորությունս այն էր, որ մնացած բոլորը դեսպանի աղջկա հետ ունեին վաղեմի վստահելի հարաբերություն և, իսկապես, հետաքրքրությունս որոշ չափով շարժվեց:

– Քեզ դուր եկա՞վ,– զգացի, որ Էլենն այնպես էր հետս վարվում, ասես ողջ կյանքում իրար ճանաչում էինք:

– Պատմությունն ինձ իրոք հրապուրում է... և մանավանդ, երբ մոտիկից է մեզ առնչվում:

– Ծնվել եմ Փարիզում, բայց ընդամենը վեց տարեկան էի, ինձ տարան Կոստանդնուպոլիս, այնպես որ քաջ ծանոթ եմ այդ քաղաքին և նրա բնակիչների խառնվածքին: Այն, ինչ պատմեց հայերի մասին, չափազանցություններ չեն:

Ես շատ հայ ընկերուհիներ ունեմ, ինչպես Ռիտա Ջամբազյանը կամ Ազատուհի Ժամհարյանը հրաշալի ընտանիքներից և, անշուշտ, ոչ մի կապ չունեն Թուրքերի հետ: Մինչդեռ՝ համարյա անհնարին է ունենալ որևէ Թուրք ընկերուհի: Նրանց թույլ չեն տալիս չփվել արտասահմանցիների հետ և մանավանդ, եթե քրիստոնյաներ են: Կարծում են, թե աղտոտում ենք իրենց աշխարհը և հոգու խորքում մեզ

չեն ընդունում: Թեև դիվանագիտական մակարդակի վրա ամենը հավերժ բարեկամության գեղեցիկ բառեր են և խոստումներ... Իրականում մենք էլ ենք «գյավուրներ», անհավատներ, որոնց չի կարելի վստահել, որքան էլ որ մեզ ժպիտներ նվիրեն: Հենց որ հասնենք, ուզում եմ, որ անցնես դեսպանատուն... Լավ, կարծում եմ, որ դու ամեն դեպքում էլ պետք է երևաս այնտեղ: Բացի այդ, հայրս հաստատ կուզենա քեզ հետ ծանոթանալ: Հրաշալի մարդ է, որը քաջատեղյակ է այն ամենին, ինչ կատարվում է այնտեղ և քեզ անչափ դուր կգա նրա հետ կարծիքներ փոխանակել:

Այդ գիշեր նավի օրորվելը խանգարեց ինձ քուն մտնել: Մտածում էի լոկ այն մասին, թե ինչ է ինձ սպասում Կոստանդնուպոլսում: Նախկինում երբեք չէի ուղևորվել որևէ մուսուլմանական երկիր և նրանց մասին ոչինչ չգիտեի, այդ պատճառով էլ որոշ պահեր օգտագործում էի կարդալու այն, ինչ ինձ տվել էր դը Ֆլյորին, որը դարձել էր մեր խնամակալն ու ղեկավարը:

Ամեն երեկո, ընթրելուց առաջ մեզ հետ անցկացնում էր որևէ զրույց և անգամ չզլացավ պատմել մեզ իր արկածները. այդ մարդն ունեցել էր բուռն և շատ հետաքրքիր կյանք: Մյուս կողմից՝ ամբողջ խումբը անմիջապես հաստատեց բարեկամական կապեր: Ի վերջո, բացի Էլենից ոչ ոք նախկինում Թուրքիայում չէր եղել, իսկ դա ծնում էր մտերմիկ, խոր և եղբայրական հարաբերություն, մանավանդ որ անտեղյակ էինք, թե ինչ էր մեզ սպասում այդ անծանոթ և տարաշխարհիկ վայրում:

Նավարկության օրերն անցնում էին արագ, հետո Պիրեայում՝ Աթենքի նավահանգստում, նավ բարձրացավ հույների մի խումբ, թվով յոթը, որոնք ուղևորության վերջին հատվածում իրենց պահում էին բոլորից հեռու: Էլենն ինձ բացատրեց, որ դրանք քաղաքական գործիչներ են, որոնք փորձում են հարաբերություններ հաստատել Թուրքական կառավարության հետ, քանի որ Փոքր Ասիայում դեռևս գոյություն ուներ հույների մի մեծ համայնք, որը մշտական ընդհարումների պատճառ էր հանդիսանում:

Ըստ նրա պատմածի՝ Օսմանյան կայսրության ներքո նրանք ենթարկվում էին նույն չարաչահումներին և ունեցվածքի կողոպուտներին, ինչ քրիստոնյա հայերը, թեև ի տարբերություն նրանց՝ հույներն, այո՛, ունեին կառավարություն և մի ժողովուրդ, որոնք մտահոգվում էին իրենց վիճակով՝ անկախ ամեն ինչից:

Ութերորդ օրը հասանք Կոստանդնուպոլիս: Լուսաբացին մշուշը ցրվեց Իշխանաց կղզիներից դեպի վեր, և հանկարծ աչքերիս առջև

հայտնվեց քաղաքի յուրատեսակ ուրվագիծը, որն ինձ ծանոթ էր մանավանդ իմ գրադարանի հանրագիտարաններում գրչածայրով արված նկարներից: Ափից երկու հարյուր մետրի վրա խարիսխ գցեցինք ուղիղ մինարեթների առջև: Փչում էր արևելյան ուժգին քամի՝ իր հետ բերելով ալեկոծության փրփրալի ցայտեր: Կապիտանը մեզ զգուշացրեց, որ դեռ չի պատրաստվում նավը մոտեցնել ափին և եթե ուզում ենք դուրս գալ ափ, պետք է նստենք մեկն այն մակույկներից, որոնք մոտենում էին շոգենավին: Էլենը, որ ասես շտապում էր, ինձ հրաժեշտ տվեց և կրկնեց, որ անցնեմ դեսպանատուն իրեն տեսնելու: Հերթի կանգնեցի, և այդ կարճ ճանապարհը համընկավ Լուի դը Ֆյորիի հետ: Մինչ մոտենում էինք նավամատույցին, ինձ առաջարկեց մի քանի օր ապրել Մարմարա ծովի դիմաց՝ իր բնակարանում, ծովեզերին, Կապույտ մզկիթից հարավ: Ինձ համոզեց, որ ես նրան ոչ մի նեղություն չեմ պատճառի և որ այդ կերպ քաղաքի մասին կարծիք կկազմեմ նախքան որոշելը, թե որտեղ վերջնականապես կուզենայի բնակվել: Հաճույքով ընդունեցի: Լուի դը Ֆյորին ինձ մեծ հարգանք էր ներշնչում ոչ միայն իմ կրկնակի տարիքի կամ էլ Թուրքերի պատմության և սովորույթների իր խոր գիտելիքների առումով: Նա յուրատեսակ մարդ էր, որն իրեն սիրել էր տալիս իր բարեսրտությամբ և իրենից ճառագող մեծ վստահությամբ:

Նավամատույցին, որը տեղավորված էր Ոսկեղջյուրի ծոցաբերանին, մեզ մի կառք էր սպասում, որն անցնելով քաղաքի մեծ մասով՝ մեզ տարավ մինչև այն տունը, որտեղ ապրում էր նա: Այդ եռուն և զարմանալի միջավայրում ինձ ամեն ինչ նոր էր թվում:

Բազմաթիվ մզկիթներում մոլլաները կանչում էին աղոթքի, բայց նրանց չէր հաջողվում լռեցնել ո՛չ շրջիկ վաճառողներին, ո՛չ նրանց, ովքեր գովերգում էին իրենց ապրանքների գերազանց հատկությունները՝ դրդելով անցորդներին մտնել նայելու, ո՛չ էլ նրանց, ովքեր առաջարկում էին հագեցնել ծարավը, և մանավանդ ո՛չ էլ աներևակայելի խայտաբղետ բազմությանը, որ վերև ներքև էր անում՝ առանց որոշակի նպատակի: Սկզբից ևեթ նկատեցի, որ այդ մարդկանց մեջ կային այնպիսիք, որ հագնված էին հատուկ ձևով:

— Հայեր են,— հակիրճ ներկայացրեց դը Ֆյորին: — Այն մյուսներն էլ քրդեր են, թեև նախկինում նրանց երբեք չեմ տեսել այս թաղամասում: Կոստանդնուպոլսում նրանք սովոր չեն մարդամեջ դուրս գալ: Այս քաղաքը գոյություն ունեցող ամենակոնակարգված խառնաշփոթությունն է, սկզբում թվում է մի քաոս, բայց հետո գլխի ես ընկնում, որ գոյություն ունի մի տարօրինակ կարգ և յուրաքանչյուրը

գրավում է ճիշտ և ճիշտ իր համապատասխան տեղը: Տե՛ս, Թուրքերն այն են, ինչ որ կան, ինքդ կիմանաս դա, սակայն շուտով կհասկանաս, որ աշխարհի ուրիշ ոչ մի տեղ նման հիերարխիա գոյություն չունի, ոչ էլ այսքան խիստ բարքերով և կարգ ու կանոնով մեկ այլ հասարակություն... Թեկուզ բարձր դասակարգի շերտերում. պաշտոնյաները, որոնք չրջապատում են սուլթանին կամ ծառայում Բարձր Դռանը, զինվորականները, ինչպես որ ինքդ կհամոզվես, մեծ կշիռ ունեն այս հասարակության մեջ, կամ էլ ուլեմները՝ իսլամական աստվածաբանության այդ դոկտորները, որոնք իրենց համարում են Ղուրանի պահապաններ: Բոլորը և նրանցից յուրաքանչյուրը գտնվում են այս վիթխարի գլուխկոտրուկի ճշգրիտ ու կոնկրետ տեղում և չեն կարող ոչ մի կերպ շարժվել, եթե մնացած մասերը տեղի չտան: Այստեղ ամեն մեկն ունի մի հատուկ առաքելություն, երբեմն չնչին, մեկ այլ դեպքում բացարձակ՝ ինչպես սուլթանի դեպքում և պետք է պահպանի իր տիրույթը՝ խույս տալով, որ այլք դրան չտիրանան: Նաև կհամոզվես այն բանում, որ քրիստոնյա փոքրամասնությունները նրանց համար ընդամենը անհավատներ են, որոնց հարկավոր է շահագործել: Անշուշտ այդ փոքրամասնություններում գոյություն ունեն տարբերակված դասեր: Այստեղ՝ Կոստանդնուպոլսում և երկրի այլ մեծ քաղաքներում կա մի յուրատեսակ հայ արիստոկրատիա՝ ամիրաների դասը, որոնք բավականին զորեղ են: Սակայն այս ամենի շուրջ ավելի ուշ կխոսենք, հիմա հիացիր այս տեսարանով, որ անկասկած մի բան արժե:

Շուտով հասանք այն չենքին, որում գտնվում էր Լուի դը Ֆյորիի առանձնահարկը՝ արտաքուստ նեոկլասիկ մի կառույց, փոքր-ինչ ծանրանիստ, սակայն լավ կերտվածքով: Կարող էր համեմատվել Փարիզի չենքերից որևէ մեկի հետ, բայց նրանում մի հակասող բան կար: Գուցե քիվերի և վերջնամասերի ավելորդ ճոխությունը, փականների ճարտարապետական լուծումը, դռների զարդանախշերի քանդակը:

Ինչ-որ առումով այդ ամենը ծնում էր բյուզանդականի և արևելյանի մի մթնոլորտ, որն ինձ անսովոր էր:

Դը Ֆյորին ապրում էր չքեղ կահավորված և մեծ գրադարանով մի վիթխարի հարկաբաժնում: Մի սպասավոր վեր բարձրացրեց ճամպրուկները, և Ֆյորին ինձ առաջնորդեց: Ինձ հատկացրած սենյակը, որն իրականում մի յուրատեսակ բնակարան էր իր լոգարանով և Մարմարայի վրա բացվող անկրկնելի տեսարանով, որտեղ առագաստանավերի, շոգենավերի մի բազմություն,— «Բրետանիան» նրանց

թվում,— սպասում էին նավամատույցին մոտենալու իրենց հերթին, մինչ մակույկները և նավակները գնում գալիս էին, ինչպես մեղուներն իրենց պարսում: Ինձանից ձախ մի քանի մեծ այգիներ իրենց մեջ թաքցնում էին կառույցների մի համալիր: Ավելի ուշ իմացա, որ դա Թոփ Գափուի պալատն էր:

Դը Ֆլյորին ինձ ակնարկեց, որ մի հանդիպում ունի, որից անհնարին է խույս տալ, քանի որ պետք է գնար Դոլմաբաղչեի պալատ, մինչև ուշ գիշեր չէր վերադառնա: Ինձ խորհուրդ տվեց, որ ուսումնասիրեմ շրջակայքը, որտեղ անկասկած կգտնեմ ճաշելու համապատասխան մի տեղ, եթե չեմ ցանկանում իր տանը ճաշել:

— Միշտ մոտդ ունեցիր դիվանագիտական անձնագիրդ,— զգուշացրեց ինձ: — Ոչ մի խնդիր չես ունենա, բայց եթե հարկ լինի ապացուցել քո ինքնությունը, այդ փաստաթուղթն անմիջապես քո առջև կբացի ցանկացած դուռ:

Ճամպրուկս բացելուց հետո անհամբեր դուրս եկա փողոց: Սկսեցի աննպատակ քայլել, բայց քիչ անց զգացի, որ քաղցած եմ և փնտրեցի մի ռեստորան: Մտա մեկը, որ արտաքուստ եվրոպական էր և ազդարարում էր ֆրանսիական ճաշատեսակներ:

Ինձ սպասարկեց մի մատուցող, որը կատարելապես խոսում էր իմ լեզվով: Նրան հարցրի, թե որտե՞ղ էր այդքան լավ սովորել: Առանց կարևորելու, ասաց, որ Փարիզում: Հայ էր՝ առաջինը, ում հետ իմ ողջ կյանքում պետք է չփվեի: Ներկայացավ որպես Ժորժ Ղազարյան և վստահության մթնոլորտում, որ արդեն ստեղծվել էր, բացատրեցի նրան, որ նոր եմ եկել, որ մի քանի օր բնակվելու եմ այդտեղ՝ մոտերքում, բայց փնտրում եմ ինձ համար մի բնակարան: Հավանության նշան արեց և պատասխանեց, որ կկարողանա ինձ օգնել: Հետո մատուցեց ճաշը, որն ինձ հրաշալի թվաց, թեև շատ ավելի համեմված, քան Ֆրանսիայում, ավելի բազմազան և հագեցած բուրմունքներով, որոնք ինձ ամենևին անախորժ չթվացին: Հրաժեշտ տալիս չընդունեց ընծայավճարը, և երբ ձեռքս մեկնեցի՝ ամուր սեղմեց ժպտալով: Հասկացա, որ Թուրքիայում գտել եմ իմ առաջին բարեկամին:

ՄԱՅԻՍ — ՆՈՅԵՄԲԵՐ 1885

2. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Կոստանդնուպոլսում առաջին ամիսները ինձ համար նշանավորվեցին նոր փորձի կուտակմամբ, քանի որ սովորույթները, միջավայրը, կյանքն ընկալելու ձևերը ինձ համար նորություն էին: Այդ քաղաքը ոչ մի կապ չուներ Փարիզի, Լոնդոնի կամ Բեռլինի հետ, վայրեր, որոնք ինձ քաջ հայտնի էին: Աստիճանաբար սկսեցի ծայրեծայր շրջել այն՝ այցելելով ամենահետաքրքրական և գեղատեսիլ վայրերը՝ մեծ բազարը կամ էլ մեծ մզկիթների շրջակայքը և հասկացա, որ քաղաքում իշխում է հին Կոստանդնուպոլսի շունչը:

Լեռնագոտու շնորհիվ քաղաքն արդեն իսկ դարձել էր ապշեցուցիչ մի վայր, անկասկած դրա այդպիսին դառնալուն նպաստել էին այնտեղ ապրող մարդկային տարբեր տիպեր. թուրքերն իրենց տարաշխարհիկ զգեստներով և ֆեսը գլխներից անպակաս, արաբներ, քրդեր, հայեր, հույներ և տարբեր ազգության եվրոպացիներ՝ ուլեմների, իմամների, կաթոլիկ, ուղղափառ կամ հայ քահանաների, պճնազարդ համազգեստներով զինվորականների, ջորիներով լծված սայլերի, ձիասայլերի, կառքերի, ձի նստած հեծյալների և փոչու մեջ կորած ուղտերի հետ խառնված, որոնք գալիս էին Միջագետքից կամ Սիրիայից:

Այդ վայրը մշակույթների և քաղաքակրթությունների մի քառուղի էր, որտեղ ծովն իշխում էր այդ ամենի վրա, լիներ կամրջից սկսած, որ կտրում անցնում էր Ոսկեղջյուրը, Էմինյոնյուի նավամատույցները, Մարմարա ծովը, կամ նոր պալատները, ինչպես Դոլմաբաղչեն նոր քաղաքում, կազմում էին Բոսֆորին նայող քաղաքի ցնցող ճակատը:

Այցելելու և տեսնելու այնքան հրաշալի վայրեր կային, որ ինձ անհնարին թվաց դրանք խորապես ուսումնասիրելը, որքան երկար ժամանակ էլ որ ապրեի այնտեղ, երբեք չէի կարողանա խորապես յուրացնել դրանք, իսկապես ես ապշել էի այն ամենով, ինչ ինձ շրջապատում էր և որոշեցի դրան արձագանքել հանգիստ:

Եվրոպայի համեմատությամբ ամեն ինչ թվում էր նոր և տարբեր: Ծանոթացա շատ թուրքերի և հայերի հետ, բայց հատկապես մտա

այն չինծու նեղ աշխարհը, որ շրջապատում էր դիվանագետներին, մարդիկ, որոնց ոչինչ չէր ցնցում և որոնք ի վիճակի էին զսպել ժպիտը կամ առնվազն չփոխել դեմքի արտահայտությունը, եթե անգամ աշխարհը շուռ գար իրենց գլխին:

Շարունակեցի կապերս ուղևորության ընկերներիս հետ, մանավանդ Լուի դը Ֆլյորիի հետ, որին համարում էի յուրատեսակ ուսուցիչ՝ նկատի ունենալով նրա լայն գիտելիքները և առինքնող բնավորությունը: Նրա տանը մնացի մի երկու շաբաթ, մինչև որ իմ նոր ընկեր Ղազարյանը, որ ինչպես պարզվեց հայկական ռեստորանի սեփականատիրոջ որդին էր, ինձ համար գտավ դեպի արևելք՝ Բոսֆորին նայող մի հրաշալի բնակարան երեք պատշգամբներով: Այնտեղ ապրում էին մի քանի հայ ընտանիքներ, համարյա բոլորն էլ իմ նոր ընկերոջը քիչ թե շատ մոտ հարազատներ: Բացի այդ, բնակարանը կահավորված էր զուտ եվրոպական ոճով, քանի որ այնտեղ բնակվել էր Թուրքիային սիրահարված մի ոմն Յուլիուս ֆոն Ռիթեր՝ վախճանված մի քանի ամիս առաջ: Նրա ժառանգատիրական գործակալը որոշել էր կրկին վարձով տալ բնակարանը նույն վիճակով, քանզի մերձավոր ժառանգորդներ գոյություն չունեին, ինչից բախտս իրոք բերեց: Բնակարանը կահավորված էր ճաշակով թեև փոքր-ինչ ճոխ, բայց ոչ մի բանի պակաս չունեի. նույնն էր, ոնց որ մարդ Եվրոպայում լիներ: Ինձ համար շուտ պարզ դարձավ, որ ոչ ոքի առանձնապես չէր հետաքրքրել, թե ինչ կար այստեղ՝ մի հրաշալի գրադարան, իհարկե, վերնագրերի մեծ մասը գերմաներեն, նաև անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և արաբերեն: Գտա թղթերով լի արկղեր, դրոշմատիպ և մամուլից հանած կտրտված նյութեր: Սկզբում դրանց վրա առանձնապես ուշադրություն չէի դարձնում, քանի որ արթնանում էի շատ վաղ, քայլում քաղաքով մեկ վերից վար և վերադառնում սաստիկ հոգնած: Զարմանալի կլիներ, որ դեռ սկսեի հետազոտել այդ ամենը: Հասկացա, որ այդ մարդը պետք է եղած լիներ մի ուժեղ անձնավորություն, որի չունչը դեռ իրեն զգացնել էր տալիս տան մթնոլորտում:

Ինչ վերաբերում է հայերին, որոնց ես հանդիպում էի մուտքի մոտ, ինձ զննում էին առանց թաքցնելու իրենց հետաքրքրասիրությունը, թեև բոլորն էլ ջանում էին դիմել ինձ ֆրանսերեն: Նրանք իմ մեջ տպավորվեցին որպես մտայնությամբ շատ մոտ մարդիկ, ոչ միայն որովհետև համարվում էին եվրոպացիներ և քրիստոնյաներ, այլ իրենց դաստիարակությամբ, բարքերով և սովորություններով: Այնպես որ, աստիճանները, որ կարող էին լինել Փարիզի չենքերից մեկինը՝ անթերի էին, իսկ դռնապանը՝ նույնպես հայ, ջանում էր մարմարները պահել փայլուն, իսկ սանդուղքի մետաղները ողորկ: Այս առումով, անկասկած մեծ տարբերություններ կային Թուրքերի և հայերի միջև:

Զգում էի, որ վաղ թե ուշ ուզենալու էին հետս ծանոթանալ. չենքից դուրս գալիս և մտնելիս ինձ ողջունում էին գլուխ խոնարհելով: Այդպես էլ եղավ, չատ չանցած նրանք ինձ հրավիրեցին ճաշի: Օհանյանների ընտանիքը անթերի ֆրանսերենով ինձ մի գրություն ուղարկեց՝ գցելով չքամուտքի փոստարկղում.

> Օհանյան–Մալումյան ընտանիքը,– Կոստանդնուպոլիս, Նուզրեթի Քադեսի 127-ից, 3-րդ հարկ,– պատիվ ունի հրավիրել պարոն Անրի դը Լատուրին լինելու ճաշի իր սեղանակիցը եկող կիրակի: Հուսով ենք վայելել ձեր ներկայությունը, ընդունեք մեր ամենահարգալից ողջույնները:
> Դոկտոր Հովհաննես Օհանյան

Ինչ խոսք, որ նույն ֆրանսիական սովորությունները չէին, բայց ինձ թվաց նոր հարևանին ընդունելու չատ սրտագին մի ձև: Այնպես որ այցեքարտս դրեցի մի ծրարի մեջ, ընդունելով հրավերը և այն սահեցրի Օհանյանների դռան տակով: Վստահ չէի, թե այդպես վարվելը ճիչտ էր, բայց նրանց պատասխանեցի ճիչտ նույն անկեղծությամբ, ինչպես որ իրենք էին արել:

Երկար հյուսերով մի հայ աղջնակ բացեց դիմացի բնակարանի դուռը և մի պահ զննեց ինձ ժպիտով, որ նրան վերադարձրի, հետո կրկին փակեց, և լսեցի նրա ծիծաղը:

Կիրակի օրը ժամը երկուսին, քանի որ դռնապանը ինձ խորհուրդ էր տվել այդ ժամը, ներկայացա իրենց դռան առջև և մի պահ վարանելուց հետո սեղմեցի զանգը: Ներսից աղմուկ լսեցի և երկու բոպե սպասեցի մինչև դուռը բացեց մի բարձրահասակ մարմնեղ տղամարդ՝ հաստ բեղերով, ինչպես իմ կարծիքով ընդունված էր Կոստանդնուպոլսում, թեթևակի խոնարհվեց, մինչ մեկնում էր աջ ձեռքը.

– Մսյե դը Լատուր, մեծ հաճույք է ձեզ հետ ծանոթանալը:

Հավանության նշան արեցի: Ներկայացավ որպես Հովհաննես Օհանյան, բժիչկ վիրաբույժ և ձեռքի լայն չարժումով ներս հրավիրեց: Տեղ-տեղ ճերմակած մազերով, միջին տարիքի մի կին երկչոտ ժրպտաց:

– Պատիվ ունեմ ներկայացնելու ձեզ կնոջս՝ Ալիսիա Մալումյան, իր հայրական ազգանունն է... Ահ, իսկ սրանք դուստրերս են՝ Ալիսիա, Կարոլինա և Մարիա,– երեք թխահեր և սևաչյա դեռատի աղջիկներ

թեթևակի ծալեցին ծնկները՝ փորձելով հաղթահարել իրենց երկչոտությունը: – Ինչ վերաբերում է մեր ավագ որդուն՝ Էդվարդին, նա հենց հիմա Փարիզում է, ավարտում է բժշկականը,– շարունակեց Օհանյանը հպարտորեն ժպտալով: – Մ, Ֆրանսիա, մեզ՝ հայերիս համար նա շատ կարևոր է: Մենք իրոք մեզ շատ մոտ ենք համարում Ֆրանսիային և նրա մշակույթին: Մեր կարծիքով նա մի ջահ է, որ լուսավորում է աշխարհը... Զնայած մեզ երբեմն թվում է, թե այդ ջահը մարում է, երբ անցնում է Հայաստանով... Սակայն դա այլ պատմություն է: Հիմա ձեզ խնդրում եմ, անցեք և նստեք: Պատրաստել ենք հայկական ավանդական մի կերակուր և հուսով ենք՝ ձեզ դուր կգա: Իմ ողջ ընտանիքն իրեն մեծ պատիվ է համարում ձեր այցը և ցանկանում, որ դուք համարեք այս տունը որպես ձեր սեփականը: Իսկ հիմա նստենք սեղանի շուրջ, մեզ են սպասում հայկական համադամ ուտեստները: Բայց նախ թույլ տվեք, որ օրհնենք սեղանը, քանի որ իր բարեհաճությամբ Աստված է մեզ չնորհել այս բարիքները:

Բնակարանը կահավորված էր թուրքականի և եվրոպականի տարօրինակ զուգակցությամբ: Թեև կահույքը կարող էր մրցել Արևելյան Եվրոպայի ցանկացած երկրի տան կահավորանքի հետ, վարագույրների գունեղությունը, գորգերը և սփռոցները ինձ հուշում էին, որ այդտեղ առկա է Արևելքը:

Այդուհանդերձ նկատեցի, որ հատկապես տարբերվում էին թուրքերից աթոռների և սպասքի գործածությամբ, տանը տիրող մթնոլորտով, նույնիսկ հագնվելու ձևով. ես ուշադրություն էի դարձրել բարեկեցիկ հայ ընտանիքների աղջիկների վրա, որոնք ինչպես ինձ հյուրընկալող տան տերերի դուստրերը, հետևում էին եվրոպական նորաձևություններին անգամ ամենափոքր մանրուքներում, թեև քաղաքամերձ թաղամասերում հագնվում էին թուրքական ոճով:

Օհանյանն օրհնեց սեղանն ըստ հայկական ավանդույթի և իր լեզվով: Ինձ թվաց բնական, թեև ես կրոնական հարցերում սկեպտիկ եմ, ինչպես որ ինձ դաստիարակել են: Այնուամենայնիվ ես հասկացա, որ այդ մարդիկ ոչ թե սոսկ միակամներ էին, ինչպես որ ինձ էին բացատրել, այսինքն՝ հավատում էին միայն Քրիստոսի աստվածատուր էությանը, այլ եվրոպացիներ էին իրենց սովորույթներով և բարքերով, կյանքն ընկալելու իրենց եղանակով և նաև մի բանով, որ քեզ ենթագիտակցաբար մղում է հավատալ, որ դու քո յուրայինների մեջ ես: Երբ ճաշի ողջ ընթացքում նրանց բացատրեցի այդ զգացողությունը, տեսա, որ հպարտ էին, որ ես ըմբռնել էի այդ, թեև ինձ զգուշացրին, որ հայերը շատ տարբեր են: Շատերն էին գյուղացիական դասից կամ արհեստավորներ, միայն թե բոլորն էլ քրիստոնյաներ էին: Ինձ պատմել էին, որ Անատոլիայի խորքի գյուղերում և Պատմական Հայաստանի հեռավոր շրջաններում, որտեղ խոսում էին միայն հայերեն և թուրքերեն, շատ քիչ էին ծանոթ Եվրոպային:

Զէին կարողանում թաքցնել իրենց ուրախությունը, որ ես իրենց հյուրն էի, իսկ ես ինձ համարում էի հյուրասիրված և մեծարված ինձ այնքան հար և նման մարդկանց կողմից: Այնպես որ, առատ ճաշից հետո, որի ընթացքում աշխատեցի հարմարվել իրենց սովորույթներին, լսեցի և մասնակցեցի բազմաթիվ կենացաճառերի, որոնցում ձևացրի, թե խմում էի, քանի որ սովոր չէի ուժեղ ոգելից խմիչքների: Շուտով սկսեցին գալ ազգականներ և հարևաններ, որ նույնպես ուզում էին ծանոթանալ և ողջունել ինձ: Տպավորությունն այն էր, որ կարծես իմ մեծարման արարողությունն էր, որն ինձ մի տեսակ վհատեցնում էր:

Հրաժեշտ տալիս ինձ ստիպեցին խոստանալ իրենց, որ կրկին կայցելեմ, և չնայած նրանց բացատրեցի, որ շատ գործեր ունեմ, խոստացա, որ չեմ մոռանա այդ անել: Ամսաթիվ չպայմանավորվեցինք, քանի որ իրենց սիրո ցույցերը և հետաքրքրասիրությունը մի կողմ՝ չէի ուզում կորցնել իմ անկախությունը, ոչ էլ որևէ կերպ լինել վերահսկված:

Այնուամենայնիվ ազգականներից մեկն ինձ թվաց բավականին հետաքրքիր՝ Խաչատուր Մալումյան անունով, միջահասակ մի մարդ, շատ կիրթ և ինչ-որ տեղ կրքոտ: Նա պնդեց, որ տեսնվենք՝ զրուցելու Թուրքիայում տիրող իրավիճակի մասին և քանի որ դա այն էր, ինչից ես ուզում էի օր առաջ տեղեկանալ, նրա առաջարկն ընդունեցի սիրով:

Երկու շաբաթ անց պատահականորեն նրան հանդիպեցի քաղաքի մեծ զբոսայգիներից մեկում: Իմ առաջ նպատակ էի դրել ինչպես հարկն է ծանոթանալ քաղաքին և ազատ ժամանակ աշխատում էի վեր ու վար քայլելու ոչ մի առիթ բաց չթողնել՝ զննելու մի արտասովոր մշտնջենական ներկայացում՝ եռուն այդ քաղաքը, որում բոլորը և բնակիչներից յուրաքանչյուրն ուներ իր դերը անվերջանալի երգիծական ողբերգությունում՝ մայթերի վրա սափրող սափրիչներով, կոշիկ մաքրողներով, որոնք առաջարկում էին իրենց աշխատանքը կոշիկ հագածներին, ջուր ծախողներով և անթիվ կերպարներով, որ անցնում դառնում էին: Նրանցից ոմանք ինձ ուշադիր զննում էին, մի քանիսն էլ աշխատում էին քարշ տալ ինձ դեպի այն խանութներն ու

ռեստորանները, որոնցից դուրս էին գալիս համատարած քաբաբի համեմունքի հոտերը: Թվում էր, թե մարդիկ չէին չտապում: Մի քանիսը տեղավորվում էին կամուրջներին ձուկ որսալու, ուրիշներն էլ նրանց էին նայում ծուլորեն, կասկածամիտ քմծիծաղի արտահայտությամբ: Շատերը խմբվում էին չաղատանների շուրջ, նրանցից շատերը պետք է որ աշխատանք չունենային, բայց թվում էին պատրաստակամ վերցնելու այն, ինչ իրենց առաջարկվեր: Այն զգացողությունն էր, որ վայելում էին կյանքը ընդամենը այնտեղ գտնվելով, մեկմեկու զննելով և եռուզեռին մասնակից լինելով:

Ակնհայտ էր, որ հայերը ջանում էին տարբերվել, մի քանիսն անգամ հագնված էին եվրոպական ոճով, ինչ խոսք՝ միմիայն անդադար աշխատելով: Նրանք էին, որ ունեին գորգերի խանութ, կարի արհեստանոց, կոշիկի խանութ, ոսկերչական խանութ կամ զբաղվում էին վերանորոգման աշխատանքներով: Նաև տեսա մի քանի հրեա սեֆարդիտների, ոչ շատ աչք գարնող, ավելի զուսպ ամեն ինչում, միշտ լռակյաց՝ հայերին հակառակ. ասես չէին ուզում նկատվել, խոսում էին հին իսպաներենի սեֆարդի տեսակով, որն ինձ չափազանց զարմացրեց, քանզի անսպասելի էր:

Կոստանդնուպոլիսը այդ օրերին մի իսկական բաբելոնյան խառնակություն էր, ուր գալիս էին գյուղացիներ Անատոլիայից ոչ միայն առաջարկելու իրենց ապրանքները, այլև շատ դեպքերում տեղ գտնելու այնտեղ. երբեմն կատարելու մի հուսահատ փորձ՝ հանուն իրենց հարազատների կյանքի պայմանների բարելավման: Կային նույնպես չեղաչք տղամարդիկ և կանայք, ծագումով Կենտրոնական Ասիայից, այնպիսի հագուստներով, կարծես դեռ Միջնադարում ապրելիս լինեին, խուսափող հայացքով, հակադրվելով բազմաթիվ զինվորականների, որոնք իրենց ճչացող համազգեստներով, շլացուցիչ ուսադիրներով, լաքապատ երկարաճիտ կոշիկներով և գոտիներով ինքնագոհ ման էին գալիս: Հետաքրքրությունս չարժեց ոչ միայն զինվորականների քանակը, որ բազմության մեջ երևում էին, այլ անսքող տարբերությունները համազգեստակիրների միջև. մի քանիսը Գերմանիայի և Անգլիայի իրենց նմանակներին էին ընդօրինակել: Ինչ վերաբերում էր ռազմածովայիններին կամ սուլթանի պալատի պահակախմբերին, աչք էին գարնում իրենց տարօրինակ հանդերձանքով և գլխարկներով: Ակնհայտ էր, որ այնտեղ, հնամենի Կոստանդնուպոլսում բախվում էին երկու աշխարհներ. Արևմուտքը՝ Եվրոպան, ներկայացված հույներով, բուլղարներով, ճենովացիներով, ալբանացիներով, լեհերով և ավելի արևմտյան ու ժամանակակից եվրոպացիներով, Արևելքը՝ Ասիան, մի անվերջանալի մայրցամաք, որից ծագում էին արաբները, չինացիները, մոնղոլները, հնդիկները և Կենտրոնական Ասիայից՝ թուրքմենները, որոնք նախանձախառն հիացմունքով գալիս էին ապացուցելու, թե իրենց հեռավոր զարմիկները, Օսմանի հետնորդները, ինչերի էին հասել ի վերջո:

Այդ քաղաքում էր, որ խաչվում էր Մետաքսի ճանապարհը դեպի Արևելք տանող Եվրոպայի ճանապարհների հետ: Ամեն օր հասնում էին քարավաններ, ջորիների երկար չարաններ հսկա հակերով կամ ուղտերի քարավաններ, լեփլեցուն բեռնված հսկա սայլեր, բերելով Ասիայի ամենահեռավոր ծայրերից անթիվ անհամար ապրանքներ՝ փոխանակելու դրանք Կոստանդնուպոլսի նավահանգիստներից մեկում տեղ հասած այլ ապրանքներով: Հեռավոր վայրերից, Թուրքմենստանի և Տաջիկստանի տափաստաններից մարդիկ, դեղնականչավուն՝ ոնց որ դաբաղած մաշկով և բաց աչքերով տաջիկներ, ազերիներ, որոնք Թավրիզի գորգերի և Թանկարժեք ձկնկիթի առևտրով էին զբաղվում, Իրանի Ֆարսի լեռներից քաչքեր, դաղախներ, որոնց մեջ լինում էր որևէ չման՝ ժողովրդական բժիշկ, ցանկացած հիվանդության դեղ ու դարման անող, լազեր Տրապիզոնից, թուրքմեններ, որ թվում էր, թե փախել էին պատմության գրքերից և ասես ժամանակի մեջ մնալով բանտված՝ խոսում էին պարզունակ թուրքերենով կամ անհասկանալի լեզուներով: Այնտեղ նույնպես իսլամը գտնվում էր քրիստոնեության հետ մեկտեղ. սահմանը երկու միանգամայն տարբեր աշխարհների միջև պարզորոշ երևում էր թեկուզ այն բանով, որ ցանկացած ուլեմ,– հագուստներից էր երևում,– որևէ ուղղափառ կամ Հայ Եկեղեցու քահանայի հանդիպելիս երբեք չէր ողջունում: Իսլամն, իսկապես, ամեն ինչ էր այնտեղ՝ կրոն, քաղաքականություն, իրավունք, կյանքն ընկալելու որոշակի ձև, որոշակի սովորույթներ և ավանդույթներ հիմնված չարիաթի վրա: Նույնիսկ սուլթանը ամենից առաջ սուլթան էր, քանզի որպես խալիֆ ներկայացնում էր գերագույն արժանապատվություն, այսինքն՝ որպես մարգարեի հետևորդ ողջ աշխարհում և ումմայի կամ մուսուլմանների համընդհանուր համայնքի առաջին իմամ:

Ինչ վերաբերում էր քրիստոնյաներին, մեծաթիվ էին հույն ուղղափառները, որ տարբերվում էին իրենց հագուստներով, հայերը, որ հավանաբար նրանց գերազանցում էին թվով, բայց ավելի համեստ էին իրենց դրսևորումներում, սիրիացի քրիստոնյաները՝ իրենց տարաշխարհիկ զգեստներով, և կային նաև հռոմեդավան կաթոլիկներ. բոլորն էլ համատեղ գոյակցում էին Թուրքիայում այն համաձայնա-

գրերի և պայմանագրերի շնորհիվ, որոնցում խալամը պաշտոնական կրոն էր նաև տարբեր ժողովուրդների՝ միլլեթների և ազգային համայնքների կրոնական դավանանքների համար: Ջիմիդ կամ պաշտպանված կարգ ունեցող հպատակները իրականում ենթարկվում էին իսլամական օրենքի կանոններին դեռևս հեռավոր՝ Օմար խալիֆի ժամանակներից սկսած: Իսկ նրա հայտնի «կանոնագիրը» կամ կարգավիճակը սահմանում էր այդ հպատակների վիճակը որպես ոչ մուսուլմանների՝ ենթակաների, և քանի որ շատ թուրքեր սոսկ հանդուրժում էին նրանց ներկայությունը, այդ իսկ պատճառով հաճախ ծագում էին վեճեր և քաշքշուկներ, որոնցում քրիստոնյաները միշտ էլ տուժող կողմն էին, քանի որ այդ ստատուս քվոն ողջ Թուրքիայում՝ արտաքուստ և գործող, խախտվում էր չափազանց հաճախ. Կոստանդնուպոլսում՝ նվազ, քանի որ իր ունեցած դիրքի շնորհիվ թուրքական ադմինիստրացիան այն համարում էր երկրի դեմքը Եվրոպայի առջև, բայց թուրքերի հանդուրժողականությունը ոչ մուսուլմանների հանդեպ երբեմն հավասարվում էր զրոյի երկրի խորքում, որից էլ չուտով ծագելու էր մի ողբերգական իրողություն:

Այսպիսով, քիչ-քիչ սկսեցի ծանոթանալ քաղաքին և իր բնակիչներին: Տրամաբանորեն, մշակույթի և կրթության առումով ինձ ավելի հարազատ էին հույները և հայերը: Մանավանդ վերջինները, քանի որ ավելի բաց էին եվրոպացի արտասահմանցիների նկատմամբ: Իրենց հերթին նրանք աշխատում էին ուղարկել այնտեղ իրենց զավակներին և զարմիկներին, ամենից առաջ, որպեսզի ուղղակիորեն ճանաչեին Ֆրանսիան՝ ավանդական հանգրվանը այն հայերի, որոնք հասնում էին Եվրոպա:

Խաչատուր Մալումյանը հոգու խորքում ավելի չուտ փիլիսոփա էր, քան ցանկացած այլ բան, համոզված, որ Պատմությունն իր ժողովրդի գլխին վատ խաղ է խաղացել: Սովորաբար նրան հանդիպում էի Պալատական հրվանդանի սրճարաններից հատկապես մեկում, որ պետք է գոյություն ունենար դեռևս հին ժամանակներից ի վեր՝ Լևանտեի սրճարանում, նստած բացօթյա պատշգամբում, պճնված եվրոպացու պես, թեև մի փոքր հնաոճ, անթերի կաթնագույն կոստյումով, փողկապի հանգույցով և ծղոտե գլխարկով: Մալումյանը բավականին կարճատես էր, սակայն չնայած դրան ասես օժտված էր կռահելու այնպիսի կարողությամբ, որ չրջվեց և նայեց ոսկեզօծ ակնոցի միջով, երբ մոտեցա.

— Ինչպես եք, մսյե դը Լատուր,— նա իրոք հրաշալի ֆրանսերենով էր խոսում: — Ուրախ եմ ձեզ տեսնել, նստեցեք ինձ հետ և միասին սրճենք: Շատ եք չտապում: Դուք ինձ համար հաճելի անձ եք, այն

կարգի մարդկանցից..., անվանենք նրանց դրական... Նայեք այնտեղ: Տեսնո՞ւմ եք այն հայ վաճառականին: Նրան կոչում են Գասպար Զավարյան: Այս առավոտ նրան զգուշացրել են, որ հայերի դեմ կարող են անկարգություններ լինել և եկել է ասելու ինձ... Թերևս հուսանք, որ դա տեղի չի ունենա, քանի որ այս իրավիճակն արդեն իսկ անտանելի է: Սակայն թույլ տվեք, որ ձեզ բացատրեմ այն, ինչ կատարվում է այս պահին: Ռուսներն իրենց երկրում հռչակել են հայկական դպրոցների փակում, ուզում են հայերին «ռուսացնել», համայնքը քայքայել և վերածել այն ռուսական ականատեսի, և այստեղ խնդիրը կրոնական չէ, այլ քաղաքական: Անգլիացիները իսկապես դրանում տեսնում են որոշակի սպառնալիք և ըստ այդմ՝ նախընտրում ներկայիս իրավիճակը: Նրանց անհանգստացնում է այն, որ հանկարծ Ռուսաստանին չհաջողվի տիրել Հայաստանին և անգամ իրեն միացնի Թուրքիայի հայկական նահանգները, քանզի սա Կենտրոնական Ասիայում կարող է նշանակել ռազմավարական փոփոխություն: Ինչ խոսք, կան հայեր ի օգուտ Ռուսաստանի և այլք, որոնք նախընտրում են ներկայիս իրավիճակը, ինչպես օրինակ՝ Կոստանդնուպոլսի պատրիարքը, և հայեր, որոնց կարող էինք կոչել «սուլթանամետ»: Թեև անհնարին թվա՝ այդպիսիք էլ կան... Անշուշտ, թուրքերը միշտ էլ մեզ վրա հարձակվում են՝ օգտվելով մեր որևէ թույլ տեղից: Հենց այսօր,— և տեսեք թե ձեզ ինչ եմ ասում,— անկառավարելի խմբեր մութն ընկնելիս ավերելու են հայերի սեփականությունները, և հավանաբար մերոնցից մի քանիսը մեռնելու են: Դուք մտածում եք. «ինչպիսի սառնությամբ է այդ ամենն ինձ պատմում»: Եվ արդարացի կլինեք: Գալիս է մի պահ, երբ մեկը սկսում է սովորել իր դչխեմ բախտին:

Վաղը հայերը բողոքելու են, և թուրքական մամուլն ու կառավարությունը մեզ մատնացույց կանեն դաժանորեն հաստատելով. «Ինչ դժբախտ են հայերը»: Ռուսներն ուզում են տրոհել իրենց ցեղը վիթխարի Ռուսաստանում, իսկ հայերը բողոքելու բան են գտել: Այստեղ ամեն բան այսպես է գործում: Պետք է որ նկատած լինեք, որ թուրքերի համար մենք խոչընդոտ ենք, որից նրանք վաղ թե ուշ կազատվեն: Ինչ վերաբերում է անգլիացիներին, ուսերն են թոթվում և սատար կանգնելու նվազագույն փորձ են անում, երբ իրենց երկրի հասարակական կարծիքը նրանց ստիպում է ցուցաբերել մարդասիրության մի դույզն, սակայն իրականում այն, ինչ Անգլիան պաշտպանում է, իր ֆինանսներն են, բրիտանական առևտրի ճանապարհները և իր ունեցվածքը: Մնացյալն իր համար ոչ մի արժեք չունի:

Հայաստա՞ն: Ո՛նց չէ: Ի՞նչ կչիռ ունեն հայերը Սիթիի գործարար շրջաններում: Ոչ մի: Ստացվում է, որ Հայաստանն առհասարակ գոյություն չունի: Եթե խոսենք գերմանացիների մասին: Օ՜, ունեն շատ մեծ պատմական բարդույթ, ուզում են լինել ավելի մեծ, քան Անգլիան և Ֆրանսիան միասին վերցրած: Կուզենային ունենալ առաջինի գաղութները և երկրորդի հատուկ հեղինակությունը, բայց սոսկ գարեջուր խմողների համբավ են վայելում, ինչու չէ, նաև մեծամտում են, թե ամենաքաղաքակիրթն են, սակայն եթե կուզեք իմանալ, ինձ վախ են ներշնչում: Նրանց դեսպանատունը իրենց «երիտթուրքեր» հորջորջող մարդկանց ձևավորման կենտրոնն է: Այնտեղ նրանց ֆինանսավորում են, ղեկավարում, ուսուցանում, վճարում են Գերմանիա կատարվող ուղևորությունները, կարդում դասախոսություններ... Ինչո՞ւ: Տեսե՛ք: Գերմանիան հավակնում է համեղ պատառի կարևոր մասը, օրինակ՝ երկաթուղի մինչև Հնդկական օվկիանոս, Պարսից ծոց: Ոչ մի խենթություն էլ չէ: Դա նրանց օպերետային կայզերի անսահման փառամոլությունն է: Գիտե՞ք, թե այս օրերին ո՞վ է գըտնըվում Կոստանդնուպոլսում՝ հայտնի գեներալ ֆոն դեր Գոլցը: Ձեզ նախապես հավատացնում եմ, որ հայերի համար դա կնչանակի սև ապագա: Գերմանացիները տեսնում են այն փայլուն ապագան, ինչ մնում է Օսմանյան կայսրությունից: Դա նման է անապատում փղի կմախքին, մի հսկա նեխած դիակի, որը գայթակղում է անգղներին: Իսկ այդ անգղները պրուսական ռազմամոլներն են, որոնք այստեղ փնտրում են չուկաներ, զինվորականներ, դաշնակիցներ, բերրի հողեր, հանքեր, էժան աշխատուժ: Ի վերջո, կարելի է սահմանել մի բառով, որ ավելի լավ է հնչում գերմանացիների չուրթերին էքսպանսիոնիզմ՝ գավթագործություն:

Այո՛, թեև ազգային փոքրամասնությունների համար դա կնչանակի անարդարություն: Դուք կարծում եք, թե գերմանացիներն իրոք կմտածե՞ն հայերի մասին: Ինչպե՞ս չէ:

Ինչի մասին, որ իրոք մտածում են, այն է, որ մենք խանգարում ենք իրենց պլաններն իրականացնելուն: Դուք, որ երիտասարդ եք, կտեսնեք ձեր սեփական աչքով: Դուք դեռ շատ հետաքրքիր բաներ եք տեսնելու, ողբերգական նաև հետաքրքրական,— սակայն չլինենք հոռետես,— անգամ մարդասիրական:

Շատ տարիներ առաջ մի թուրք, որի հետ բարեկամներ ենք եղել, ինձ կանչեց նախազգուշացնելու մեզ սպասող վերահաս աղետի մասին: Այդ մարդը չուտով մեռնելու էր և գիտեր այդ: Այդ ժամանակ էլ մտածեց, որ իրավունք չուներ էն աշխարհ գնալուց առաջ լռել՝ իմանալով, թե ինչ է տեղի ունենալու հետո: Ոչ ավել, ոչ պակաս նահանգի գայմագամն էր: Ինձ բացատրեց, որ հավաքվել էին սուլթանի պալատում: Նրա հետ ուղղակիորեն չէին խոսել, բայց մեծ վեզիրի հետ՝ այո՛: Որոշել էին, որ պետք է ուղղեին իրենց թույլ տված պատմական սխալը,— այդպես էին այն անվանում,— որ այն ժամանակ չէին վերացրել քրիստոնյա փոքրամասնություններին:

Եթե կայսրության թուրք նվաճողները քրիստոնյաներին մաքրած լինեին,— սա էր իրենց գործածած արտահայտությունը,— Թուրքիան երբեք չէր ունենա ներկայիս խնդիրները իրեն միացրած տարածքներում և ազգություններում: Մեծ վեզիրն ասել էր, որ ռումինացի, սերբ, բուլղար, հույն, հայ, սիրիացի և այլ քրիստոնյա տղամարդկանց և կանանց կյանքը հարգելը եղել էր պատմական խոշոր սխալ:

Երբ գայմագամին հարցրի, թե ո՞վ էր նրանց ներշնչել այդ գաղափարները, ինձ պատասխանեց, որ անշուշտ գերմանացիները: Նրանք ուսյալ և կազմակերպված մարդիկ են, նրանց դուր չի գալիս անկարգությունը: Ռազմամոլ ազգայնամոլներ են, քանզի գիտեն, որ կյանքում որևէ բանի հասնելու համար հարկավոր է պայքարել: Այդ իմաստուն դասախոսները խոսել էին ամենաուժեղի գոյատևելու, այնպիսի նոր հասկացություններից, ինչպիսիք են օրինակ «կենսոլորտը», «ընտրյալ ազգերը», դաշնակիցներին օգնելու բարոյական պարտքը, ներքին թշնամիներին բնաջնջելը, այդ ամենի իրագործման ամենաարդյունավետ մեթոդներից, փոքրամասնություններին վտարելու մասին, որոնք կփորձեին քայքայել այն պետությունները, որոնք իրենց թույլ են տալիս ապրել, քաղաքական պրոպագանդան որոշակի գործողությունների արդարացման նպատակով օտագործելու մասին և այնպիսի մի բանից, որ սուլթանին թվացել էր մեծ գյուտ, այն, որ կեղտոտ աշխատանքը պատվիրեին նրանց, ովքեր կորցնելու ոչինչ չունեին:

Խոսեց նաև մի տարեց իմաստուն՝ իշխանության քաղաքական ամենակարևոր գործիչներից և պետության վարչակազմի ներկայացուցիչներից մեկը՝ գերմանական և թուրքական բանակի բարձրաստիճան զինվորականների առջև: Բոլորն էլ տեղյակ էին, որ ինքը՝ սուլթանը, գտնվում է այնտեղ թաքուն, լսում է շերտավարագույրների հետևում, մեծ վեզիրի հետ միասին: Նրանց բացատրեց, որ որոշ ազգեր ավելի ուժեղ են, քան մնացածները, որ գերմանները և թուրքմեններն իրար շատ նման են: Ընդունակ, ուժեղ, աննկուն՝ հակառակորդի դիմաց: Պատմականորեն բոլորն էլ իրենց տարածքում եղել են գերիշխող մարտնչողներ: Ինքը՝ կոմս Գորինոն իր «Մարդկային

ռասաների անհավասարության մասին էսսեում»՝ հրատարակված 1854 թ., խոսում էր Թուրքեստանի տղամարդկանց և կանանց գեղեցկության մասին, թե ինչպես է հարստացել այդ ռասան այլ ազգություններից վերցրած արյամբ: Այդ գերմանացի ուսյալը խոսեց Կուրտե դը Լ'Իլի կողմից կատարված հետազոտությունների մասին, Հյուստոն Ստյուարտ Չեմբեռլայնի «Տասնիններորդ դարի հիմնադրումը» գրքից և այլ աշխատությունների մասին:

Այդ օրը սուլթան Աբդուլ Համիդը հասկացավ, որ իր ընտրած մարտավարությունը ճիշտ չէ և որոշեց սովորել գերմանացիներից, միակ անհավատներից, որոնք իսկապես գնահատում էին Թուրքերին և ապացուցում դա իրենց գործողություններով:

Հետո, այդ Թուրքը ինձ հետ խոսեց անկեղծորեն: Ինձ բացատրեց, որ Թուրքիայում հայերս ապրում էինք խաբված և որ կգա այն օրը, երբ մենք լիովին բնաջնջված կլինենք, մեր գյուղերն ու եկեղեցիները՝ ավերված, մեր քարերը փոշու վերածված և երբ տարիներն անցնեն ոչ ոք չի հիշի, թե այնտեղ գոյություն է ունեցել մի քրիստոնյա ժողովուրդ: Հենց այդ է, որին այժմ հավակնում են: Թուրքերը կարծում են, որ հանգամանքները իրենց օգտին երբեք չեն լինի, ինչպես հիմա և չպետք է ժամանակ կորցնեն:

Խաչատուր Մալումյանն ինձ նետեց մի սուր հայացք իր ոսկեզօծ ակնոցի միջով, որ մի պահ փայլատակեց մայրամուտի արևի տակ:

– Լավ, ըմբոշխնեցի՞ք սուրճը: Ճիշտն ասած դա Թուրքերի քիչ բաներից է, որ ինձ դուր է գալիս: Լավ, սիրելի բարեկամս, ահավասիկ ես ձեր տրամադրության տակ եմ, իսկապես դուք ինձ շատ համակրելի եք ... Սակայն հիմա պետք է գնամ: Այս գիշեր դուրս մի եկեք, որովհետև ձեզ կարող են չփոթել որևէ հայի հետ: Կարող է շատ վտանգավոր լինել Թուրքիայում, և դա՝ կրկին մեր շատ սիրելի սուլթանի շնորհիվ:

Մի պահ մնացի նստած սրճարանում: Մամուլյանի խոսքերը դեռ հարվածում էին գլխումս: Հավատս չէր գալիս, որ հայերի համար իրավիճակն այդչափ օրհասական լիներ: Հետո վեր կացա և դանդաղ քայլեցի դեպի նավահանգիստ: Ես շատ էի սիրում նայել, թե ինչպես են տեղ հասնում մինչև վերև բեռնված ձկնորսների նավերը, մինչ ճայերը դրանց վրա ծղրտում են՝ իրենց մասնակցությունը բերելով Կոստանդնուպոլսի ոսկեզօծ մթնշաղի աներևակայելի տեսարանին:

ՆՈՅԵՄԲԵՐ 1885

3. ԱՆՏՈՒԱՆ ՄՈՆԺ

Մի քանի ամիս շարունակ զբաղված էի տարբեր մարդկանց հետ խոսելով: Այդ քաղաքը՝ կառուցված էր պատմական Կոստանդնուպոլսի վրա, որը IV դարում հիմնադրվել էր Բյուզանդիոնի տեղում, եղել էր հոների, ավարների, պարսիկների, արաբների և ռուսների կողմից պաշարված. նրա յուրաքանչյուր հինավուրց քար իր մեջ պատմություն էր ամփոփում, իսկ նրա պարիսպները, տաճարները, մզկիթները, կամուրջներն ու պալատներն ինձ ապշեցնում էին իրենց գեղեցկությամբ:

Այդ ժամանակ էլ մտածեցի, որ ինձ հարկավոր է իմանալ ավելին, այցելել մոտակա բնակավայրերը, թեև ինձ զգուշացրել էին, որ երկրի ներսում մենակ չճամփորդեմ, քանզի այն Եվրոպա չէ, և այն, ինչ ինձ հաջողվել է տեսնել, որևէ վայրում գտնվել, ու զգացողությունը, որ համարվում է մերձակա, վերանում է արդեն իսկ քաղաքի արվարձաններում: Ընդամենը մի քանի քայլ այն կողմ հայտնվում էր գեղջկական Թուրքիան, հնագույն պարիսպներից քիչ այն կողմ գյուղացիները կրում էին ավանդական հագուստներ, կանայք խուսափում էին մարդկանց հայացքից և առհասարակ, մարդիկ իրենց աննկատ էին պահում՝ բացառությամբ, երբ որևէ բան էին առաջարկում օտարերկրացիներին, թեև անկեղծությունը, որով վերաբերվում էին, որ ընդամենը վաճառողի կեցվածք էր, անմիջապես հոգս էր ցնդում, հենց որ որոշակի հարցեր էի տալիս իմ աղքատիկ Թուրքերենով. այդ ժամանակ անմիջապես հեռանում էին՝ թողնելով խոսքս բերանումս:

Ցանկանում էի գիտենալ ավելին, չէի համակերպվում այն Թուրքիայի հետ, որը համարվում էր քաղաքակիրթ, թեկուզև ելնելով նրա ժամանակակից լինելու անտարակույս նշաններից, ինչպիսին Կոստանդնուպոլիսն էր որոշ թաղամասերում: Ուզում էի իմանալ, թե ի՞նչ է կատարվում երկրի ներսում, համոզվել, թե արդյո՞ք ճիշտ է այն ամենը, ինչի մասին խոսում էին դեսպանատներում, թե կա՞ այդքան տարբերություն քաղաքի, որում ապրում էի և Թուրքիայի մնացած մասի միջև. պատկերացնում էի, որ չէին կարող համեմատվել: Այնուհանդերձ ինձ չէր հրապուրում մենակ ճամփորդելը, այնպես

որ, երբ Լուի դը Ֆլյորիի միջոցով իմացա, որ Անտուան Մոնժը ճամփորդելու է Բուրսա, գնացի նրան տեսնելու և հարցնելու, թե դեմ չի՞ լինի իմ ընկերակցությանը: Մոնժը շատ ուրախացավ իմ առաջարկից, քանի որ նա էլ չէր ուզում մենակ գնալ, և ժպտալով ինձ խորհուրդ տվեց, որ ճամպրուկս պատրաստեմ տասնհինգ օր մնալու հավանականությամբ: Ինձ խնդրեց, որ հաջորդ առավոտ՝ մոտավորապես ժամը յոթին, պատրաստ լինեմ:

Նոյեմբերի կեսերն էին, ջերմաստիճանը նկատելիորեն իջել էր, և, թեև դեռ շարունակվում էր միջերկրականյան աշունը, շատ ավելի անձրևոտ էր, քան ես պատկերացնում էի:

Հազիվ լուսացել էր, երբ դուրս եկանք Կոստանդնուպոլսից: Ճամփորդում էինք օգնականի հետ կառքով, կառապանի և կառքի առջևում տեղավորված. փոխադրամիջոց, որը շատ ավելի վայելուչ էր, քան հարմարավետ: Անտուանը որոշ հեգնանքով ինձ բացատրեց, որ կառքը պատկանում է սուլթանի պալատին, բայց այն օգտագործում է ֆինանսների պատասխանատուն, ով էլ կառքը դրել է Ֆրանսիայի դեսպանատան տրամադրության տակ. մի դժվարին գործընթաց, բայց այդպես էր գործում ամեն բան օսմանյան վարչակարգում: Երբ դա մեկնաբանեցի, ժպտաց և ասաց.

– Լավ չգիտես: Սա բյուրոկրատիայի երկիր է... Իհարկե, արտասովոր կերպով խիստ հիերարխիայի շրջանակում. բուրգի գագաթը գրաղեցնում են սուլթանը և իր անձնական որոշումները: Իսկ անձնական ասելով՝ նկատի ունեմ իր ամենաարտառոց քմահաճույքները, ինչպես օրինակ՝ բերել տալ Փարիզից 20 կոստյում իրենց համապատասխան գլխարկներով, ձեռնոցներով, գավազաններով, երկարաճիտ կոշիկներով և հարդարանքի այլ պարագաներով, կամ ինչ որ մտքով անցնի. օրինակ՝ առանձնացնել մի վագոն ուղարկելու իր ժամագործներին, որ փնտրեն մի ժամացույց իր հավաքածուն լրացնելու համար, կամ իր հարեմի կանանց համար արկղերով ներքին հագուստ: Այս մարդուց ամեն ինչ սպասելի է: Իրականում նա մի բռնակալ է, որ գործադրում է իր իշխանությունը ամեն կերպ նրանց դեմ, ովքեր իր առջև բավարար չափով չեն խոնարհվում, մի մսխող, որ վատնում է կայսերական գանձարանը անհեթեթ քմահաճույքների վրա: Մարդասիրությունից բացարձակապես զուրկ արարած է: Բացի այդ, խնդիրն այն է, որ բարեփոխումներ իրականացնելու չափանիշ չկա, քանի որ, իրոք, միշտ խոսում են Թանզիմաթ-ի հայրության, այսինքն՝ շահավետ օրենսդրության մասին, բայց այն երբեք չեն կիրառել գործնականում:

Բնականաբար, իշխող դասակարգը, սկսած պալատից և վերջացրած հարկահավաքներով, իր արտոնություններից և ոչ մեկը չի ուզում կորցնել, չնայած ժամանակը առաջ է գնում և մերթ ընդ մերթ նրանց ստիպում է բարեփոխել վարչակարգն ու բանակը, որ կարողանան շարունակել կառավարել:

Առաջինն ունի շատ և ծանր խնդիրներ. ամենամեծը կաշառակերությունն է՝ բյուրոկրատական, չափազանց բարդ և անշուշտ խնամիական ուղիով պաշտոններ գրաղեցնելու հետևանքով: Այստեղ լավագույնները չեն գրաղեցնում ամենապատասխանատու պաշտոնները, այլ խորամանկները և ընչաքաղցները... Լավ, սա ամենուրեք է, բայց այստեղ հատկապես է նկատվում, քանի որ վարչակարգը չի գործում: «Գիտե՞ս, թե ովքեր են ի վերջո վճարում դրա դիմաց՝ հայերն ու հույները, ամենից շատ նրանց է վիճակվում: Դրանում կհամոզվես դեպի Բուրսա այս ուղևորությունում: Գիտե՞ս այդ քաղաքը: Այնտեղ է գտնվում հելլենական հնադարյան օլիմպիական լեռներից մեկը, Ուլու լեռը: Բուրսան դարձավ օսմանյան մայրաքաղաք սկսած այն ժամանակից, ինչ նախապատրաստվում էր Կոստանդնուպոլսի անկումը: Եվ գլխի կընկնես, թե ինչու են այդքան փառք վայելում իր գորգերն ու կարպետները: Քեզ դուր կգա, ավելի ճիշտ՝ քեզ կզարմացնի, քանզի այնտեղ արդեն Եվրոպան մնում է շատ հեռու:

Ուղևորությունը տևեց երկու օր, այդ իսկ պատճառով ստիպված փոխեցինք ձիերը և այդ գիշեր քնեցինք մի իսկական ֆունդուկում: Ակներև էր, որ Կոստանդնուպոլսում չէինք, քանզի ինձ համակել էր այն զգացումը, որ ժամանակի առումով մի քանի դար հետ էինք գնացել, թեև այդ նահանգը համարվում էր Թուրքիայի ամենաառաջավորներից մեկը: Դրա մասին ես կարծիքս հայտնեցի Անտուանին, որը գլխով համաձայնության նշան արեց:

– Պետք է իմանաս, որ այս երկիրը, այսինքն՝ Օսմանյան կայսրությունը, սնանկացման շեմին է: Փաստորեն մեր երկիրը ներկայացված է Օսմանյան կայսրության բանկի միջոցով, որը կարող էր անվանվել «Ֆրանսիայի բանկ Թուրքիայում», քանի որ նրա սեփականատերերը, կառավարիչները և բարձրաստիճան պաշտոնյաները մեր հայրենակիցներն են, որոնց առաքելությունը խոչընդոտելն է, որ սուլթանը և իր ծառայողները ձեռքները մտցնեն գանձատուն, և եթե անեն՝ իմանանք, թե որքա՞ն և ո՞ւր են տանում դրամական միջոցները: Ահա քեզ ողբալի կառավարում: Քեզ մի բան պատմեմ. համարյա տասնհինգ տարի է, 1871 թ. մեզ տրամադրեցին մի երկաթուղային գիծ Հայդար փաշայից մինչև Իզմիթ: Մեզ վրա դա շատ

թանկ կանխիկ փող նստեց՝ տառացիորեն պարկերով ու անվերջ պարկերով փող: Բայց մի ընդվզիր, որովհետև կյանքն այստեղ այդպիսին է: Մյուս կողմից՝ Գերմանիան է իմպերիալ բանկերի միջոցով տրամադրում վարկեր: Ինչ վերաբերում է Անգլիային, հսկայական շահույթադրույք ունի, օրինակի համար՝ «Դենտ, Պալմեր և Գործընկերներ» բանկում, և նույն բանը եվրոպական այլ երկրների հետ է: Բայց ծախսերը կրկնակի գերազանցում են մուտքերին, և չնայած Աբդուլ Համիդը փորձում է ցույց տալ, որ այժմ սուլթանի պալատը դարձել է ողջախոհ և չի մսխում փողերը, ինչպես իր նախորդի ժամանակ, և մերթ ընդ մերթ մեզ զարմացնում են նոր բարեփոխումների ծրագրով և մոդեռնացման խոստումներով, ի վերջո տնտեսական ծախսերը միշտ էլ գերազանցում են, անցնում ստացված եկամուտներից, չնայած այն բանին, որ գյուղացիությունը, ինչպես Թուրք, այնպես էլ քրիստոնյա փոքրամասնությունների հարկահավաքներից բացարձակապես ուժասպառ է եղել:

Այնպիսի բանակ պահել, ինչպիսին Թուրքիան է ուզում, անհնարին է առանց երաշխավորված տնտեսական հատկացումների, և արդեն ոչ մի տեղից հնարավոր չէ փող հանել: Ամբողջը հիպոթեկացված է ստացված վարկերի դիմաց, ամբողջը՝ մաքսատները, արբիտրաժային հարկերը, սիրիական մաքսային իրավունքները, ծխախոտը, աղը, նամականիշները, մակնիշները: Անգամ Բալկանների գառների վրա դրված հարկերը: Մեր պահանջների դիմաց, որ դրեցինք նրանց առջև, որպեսզի համաձայնվենք թարմացնել վարկերը, որպես երաշխիք մեզ տվեցին Թուրքիայի բոլոր եկամուտների երաշխիքները, ներկայիս և ապագայի: Պատկերացնո՞ւմ ես, թե սա ինչ է նշանակում: Թեև իհարկե, առայժմ Ֆրանսիային որևէ կերպ ձեռնտու չէ Թուրքիայի ֆինանսական ձախողումը, սակայն մյուս կողմից՝ դա կնշանակի իր այն համոզմունքի կատարյալ ձախողումը, ըստ որի՝ միայն քաղաքակիրթ համախմբման ճանապարհով կարելի է հասնել առաջընթացի և դեմոկրատիայի՝ չհաշված միլիարդավոր ֆրանկների կորուստը:

Տե՛ս, նայիր այն գյուղացուն: Այո՛, նրան, որ գալիս է դեպի մեզ, հաստատ հայ է, որ աշխատում է արևածագից մայրամուտ իր ընտանիքը պահելու համար: Հարկահավաքները տանում են նրա համարյա ամբողջ ստեղծածը. հուսախաբ և դառնացած մի մարդ է, որովհետև իրեն համարում է խաբված: Ինչ վերաբերում է հավաքված փողին, ինքը՝ հարկահավաքը իրեն վերցնում է մի լավ պտղունց, մեկն էլ մութասարիֆը՝ այսինքն պրեֆեկտը, վեզիրը՝ նույնպես, մնացածը սուլթանի պալատը: Ի՞նչ է մնում երկիրը կառավարելու համար, համարյա ոչինչ: Եվ գիտե՞ս, թե ինչ է նշանակելու այս իրադրությունը: Որ ի վերջո այնքան են սեղմելու պարանը, որ խեղդելու են գյուղացիներին և առևտրականներին: Վախենամ, որ գա մի օր, երբ ուզենան տիրանալ այն չնչին բանին, որ մնում է նրանց, այդ ժամանակ էլ ստեղծված իրադրության մեղքը կգցեն հայերի և հույների վրա, քանի որ մուսուլմաններ չեն, բայց ոչ էլ Թուրք, բացի այդ նրանք այստեղ էին, երբ իրենք եկան, իսկ դա, բարեկամս, դժվար է հանդուրժել:

Հայերն այստեղ են հազարավոր տարիներ ի վեր: Կասես, որ ես օբյեկտիվ չեմ և իրավացի կլինես: Սակայն չէ՞ որ ես երկու կողմերին էլ քաջ ծանոթ եմ: Երբ հասանք Բուրսա, տեղեկացա, որ այնտեղ բնակվում էին բարձրակարգ խավի հայեր, որոնք զբաղվում էին գորգագործությամբ և գորգերի ու կերպասների առևտրով: Անտուանն ինձ բացատրեց, որ հայերը Անգլիայի լավ կլիենտներն էին, քանի որ չուկա էին հանում անգլիական բամբակի ողջ գործվածքեղենը, որ հասնում էր Կենտրոնական ու Փոքր Ասիա, և վճարի մի մասը փոխհատուցում էին Թուրքիայում արտադրվող մետաքսի միջոցով:

Այնտեղ մնացինք մի շաբաթ: Անտուանը, որ շատ չափված մարդ էր իր գործերում, չասաց ինձ, թե ինչն էր նրան բերել Բուրսա, ես էլ օգտվեցի առիթից զբոսնելու համար, անգամ մի ամբողջ օր տրամադրեցի Օլիմպիական լեռը բարձրանալու համար: Ինձ ուղեկցեցին մի քանի Թուրքեր, որոնց այդ նպատակով էի վարձել և ոչ մի բողոք չունեցա՝ ո՛չ իրենց վարքագծից, ո՛չ էլ իմ նկատմամբ նրանց սրտագին վերաբերմունքից: Այդ փորձն ինձ ստիպեց խորհրդածել, որ անհնարին է, որ այդ սրտաբուխ մարդիկ երկու երես ունենան և որ պետք է ճանաչեմ այլ Թուրքերի և նրանց վարկածներն էլ լսեմ՝ նախքան վճիռ ընդունելը:

Երբ վերադարձին այդ մասին ասացի, Անտուանը գլխով համաձայնության նշան արեց, ժպտաց և մնաց լուռ: Ակնհայտ էր, որ նախընտրում է, որ ինքնուրույն հասնեմ ճշմարտությանը:

ԱՊՐԻԼ 1886

4. ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ

Հաջորդ տարվա գարնանը, երբ լրանում էր Կոստանդնուպոլսում գտնվելուս մի տարին, բրիտանական դեսպանատնից մի հրավեր ստացա թագուհի Վիկտորիայի՝ որպես Հնդկաստանի կայսրուհու, տասնամյա տարեդարձը տոնակատարելու կապակցությամբ: Խոսքը չքեղ տոնի մասին էր, և պետք է պատվիրեի մի ֆրակ, քանի որ իմը գործածելուց մաշվել էր, իսկ ես չէի ուզում բաց թողնել տոնը: Գիտեի, որ ներկա էին գտնվելու Կոստանդնուպոլսի հասարակական շարժման ներկայացուցիչներ, իսկ դա ինձ հետաքրքրում էր: Ինձ խորհուրդ էին տվել դիմել մի դերձակի, ոմն Օսման Ռումի անունով, որը հենց աշխատում էր դեսպանատների համար և Փարիզի լավագույն դերձակների պես կարողի համբավ էր վայելում, միայն թե նրանց գնից հինգ անգամ պակաս վճարով:

Մի պատեհ առիթով Լուի դը Ֆլյորիի տանը ծանոթացել էի սըր Էդվարդ Թորնթոնի՝ Անգլիայի դեսպանի հետ, ոչ պաշտոնական ընթրիքի ժամանակ, քանի որ երկուսով վաղեմի բարեկամներ էին: Նա ինձ թվաց դիվանագետի նախատիպ, նախկին դասախոս, որն ուսուցանում էր՝ խոսակցից միշտ հեռավորություն պահպանելով: Պետք է խոստովանել, որ նա խորապես իրազեկ էր այդ հարցերին՝ անկախ այն բանից, որ նրա մեջ մարդասիրությունն խպառ բացակա էր: Ամեն դեպքում ես չէի կարող չրջանցել բարձր հասարակության այդքան կարևոր իրադարձությունը:

Տոնը նշվեց մայիսի տասնհինգին անգլիական դեսպանատան պարտեզներում և բացօթյա պատշգամբներում: Զէր համընկնում տարեդարձի ճշգրիտ տարեթվի հետ, բայց դեսպանը հասկացել էր, որ մի չարք պատճառներով դա էր առավել պատեհ պահը արարողության երկրում և նաև պատշաճության պահպանման առումով:

Երեկոյան պալատից դուրս եկող պերճաշուք ծածկակառքերը լցրել էին զբոսավայրը: Ասում էին, որ ինքը՝ սուլթանն էլ պետք է մասնակցի, բայց ի վերջո դա Կոստանդնուպոլսով մեկ չրջող այն կեղծ լուրերից էր: Ճիշտն այն էր, որ սուլթանը գրեթե դուրս չէր գալիս Դոլմաբաղչե պալատից, քանի որ նրան հետապնդում էր ահարեկչության գոհ դառնալու սևեռուն միտքը: Այնուամենայնիվ իր կողմից ուղարկել էր մեծ վեզիրին՝ մի նյարդային մարդու՝ մսակալված և եվրոպական կոստյումը հագին, որն առատորեն քրտնում էր, չնայած նրան, որ այդ գարնանային գիշեր ջերմաստիճանը բավականին զով էր:

Ժակ դը Ֆավրը՝ Ֆրանսիայի դեսպանը, կամեցավ, որ անձամբ ընկերակցեմ իրեն, որն էլ ինձ առիթ ընձեռեց ողջունելու Էլենին՝ իր դստերը, որը երկար ժամանակ մնացել էր Փարիզում: Տեսա, որ թեվանցուկ գնում էր Անրի դը Վիյեի հետ, որ շարունակում էր մնալ Արտաքին հարաբերությունների պետական քարտուղարի պաշտոնում, և ինչպես որ ինձ ասաց Անտուան Մոնժը, որ նույնպես գտնվում էր այնտեղ, մի քանի չաբաթ էր, ինչ նշանված էին:

Ինչ-որ կերպ չկարողացա նախանձս զսպել, որ նա ինձանից առաջ էր ընկել: Ընդունելությունը չքեղ էր. մի քանի տասնյակ լաքեյներ մատուցում էին ըմպելիքները և ուտեստները՝ փորձելով գոհացնել հարյուրավոր հրավիրվածների:

Ցանկացած եվրոպացու համար զարմանալի էր, որ թուրքերն առանց կանանց ընկերակցության էին: Դա էլ ակնառու էր դարձնում դիվանագետների այն սակավ կանանց ու դուստրերին, որոնք հետևելով Փարիզի նորաձևության համարձակ թելադրանքին՝ անթաքույց ցուցադրում էին իրենց հմայքները: Այնուհետև դեսպանը մի քանի բառ արտասանեց անգլերեն, որոնց մեծ վեզիրը պատասխանեց թուրքերեն: Ճառերի վերջում մատուցեցին սառն ըմպելիքներ, և տոնն ավարտվեց մոտավորապես ժամը տասներկուսին մեծ դահլիճում՝ դաշնամուրի մենահամերգով և արհեստական կրակներով:

Մի պահ ինձ հաջողվեց խոսել Ֆլիֆորդ Լլոյդի՝ Էրզրումում Անգլիայի հյուպատոսի հետ, որի մասին ինձ արդեն տեղեկացրել էին: Անսպասելիորեն ինձ հրավիրեց ծանոթանալ այդ քաղաքին, և ես խոստացա գնալ տեսնել նրան, քանի որ վաղուց էի ուզում այցելել Թուրքիայի խորքը:

– Դը Լատուր, մի բան եմ առաջարկում: Քանի որ երեք ամիսը մեկ դեսպանատնից դուրս է գալիս մի փոստային գնացք, կարող եք ուղևորվել դրանցից մեկով. շատ ապահով են, որովհետև պահակախմբով են և շատ արագընթաց: Ընդամենը 6 օրում Կոստանդնուպոլսից հասնում են, այնպես որ սպասում եմ ձեզ: Եկեք հնարավորին չափ շուտ, ձեզ հաստատ դուր կգա: – Լլոյդը այն մարդն էր, ով հեշտ համոզող էր, և հրաժեշտից առաջ, մինչ մի քանի հրավիրվածներ մո-

տենում էին, ավելացրեց – խոստացեք ինձ, որ ինձ կայցելեք: Էրզրումը եզակի վայր է, որ չի կարելի չմանալ:

Քանի որ այն տպավորությունն ստացա, որ անկեղծ է խոսում, սիրով ընդունեցի և պայմանավորվեցինք, որ գնալուց առաջ նրան կհայտնեմ:

Հետո, երբ ես ուղղվում էի դեպի այն խումբը, որտեղ Լուի դը Ֆլյորին էր և դեսպան դը Ֆավրը, մի Թուրք՝ երեսուն տարեկանին մոտ, ժպտալով մոտեցավ ինձ՝ խոսելով անսխալ ֆրանսերենով:

– Մսյե դը Լատուր, ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու համար, անունս Իբրահիմ Ջեմո է, ես ալբանացի եմ... Ալբանիան Օսմանյան կայսրության կարևոր երկրներից էր... Լսեք, ինձ պատմել են ձեր մասին... չեք կարող պատկերացնել, թե ով... Բայց ձեզ վստահեցնում եմ, որ երկուսիս համար էլ նա է կարել ֆրակը: Այո՛, իհարկե, Օսման Ռումին, Կոստանդնուպոլսի մոդայիկ դերձակը: Ինչպես գիտեք, դերձակները ուշադրություն են դարձնում ամենափոքր մանրուքներին, և որ հարկավոր է նրանց հետ զգուշավոր լինել, եթե մեկը չի ուզում քաղաքի ծաղրի առարկա դառնալ հաջորդ օրը: Բայց մի մտահոգվեք: Այստեղ՝ Կոստանդնուպոլսում, իրոք երկու ազդեցիկ մարդիկ կան. մեկը մեր պարոն սուլթանն է, իսկ մյուսը՝ Օսման Ռումին: Կարող եմ ձեզ վստահեցնել, որ ձեր մասին հրաշալի կարծիքի է... Լավ, բանն այն է, որ ես գիտեմ, թե ով եք դուք... Երբ ապրում էի Փարիզում, միշտ կարդում էի «Լ'Օրոր»-ը՝ մի շատ հետաքրքիր թերթ: Կըմպե՞ք մի զովացուցիչ ինձ հետ: Ինչպես գիտեք, մուսուլմաններս ոգելից չենք խմում... այնտեղ, որտեղ մեզ կարող են այլ մուսուլմաններ տեսնել, հա-հա, հա, քանի որ եթե հանդիպենք Փարիզում՝ հաճույքով կհրավիրեմ ձեզ մի չիչ շամպայն խմելու: Կարող ենք մի քանի բոպե նստել բաց պատշգամբի այս բազկաթոռներին. այստեղ լավ կլինի, չնայած ձեզ և ինձ համար ավելի լավ կլիներ, որ հանդիպեինք Հընդկաստանում քան Թուրքիայում:

Մի մատուցող մեզ բերեց երկու բաժակ սառը թեյ լիմոնով: Հետո Ջեմոն մի քանի վայրկյան լուռ մնաց: Դա ինձ սթափեցրեց. ինչի՞ շուրջ էր ուզում խոսել ինձ հետ այդ ալբանացին: Երկար մի կում թեյ խմեցի, և երկուսս էլ լուռ զննում էինք միջավայրը: Անգլիայի դեսպանը ոչինչ չէր խնայել Հնդկաստանի կայսրուհու տարեդարձի տոնին: Հարյուրավոր մոմեր ապակյա երկար բաժակներում լուսավորում էին հանգիստ գիշերը: Բացի այդ, ամեն տասը մետրի վրա վառել էին մի ջահ: Երևում էր, որ պարտեզը խնամված է մանրակրկիտ ձևով՝ ցանված ծաղիկներով և Եվրոպայում դեռ քիչ տարածված բույսերով: Միակ բանը, որն ինձ նյարդայնացնում էր, այն էր, որ էլեն դը Ֆավրից և Եվրոպայի դեսպանների կանանցից բացի համարյա ուրիշ ոչ մի կին չէր երևում:

Իբրահիմ Ջեմոն պետք է որ կարդար միտքս և կրկին ժպտաց:

– Դուք Փարիզում հարսնացու ունե՞ք: Այստեղ Կոստանդնուպոլսում ձեզ համար դժվար է լինելու... Հավատացած եմ՝ ուրիշ բան է, եթե լինի երիտասարդ մի հայուհի: Դա շատ ավելի հեշտ կլիներ, որովհետև ցանկացած հայ իր կյանքի կեսը կտար հանուն իր դստերը եվրոպացու հետ ամուսնացնելու: Թուրքերի հետ անհնարին է, բացառությամբ, եթե դուք որոշեիք իսլամ ընդունել... Եվ անգամ այդ դեպքում բավարար թուրք չէիք լինի թուրքի համար: Տեսեք, ես մուսուլման եմ, ունեմ կրթություն և վերնախավի զինվորական եմ՝ որոշակի սոցիալական և բարեկեցիկ մակարդակի տեր մարդ և այնուամենայնիվ թուրք չեմ: Գիտե՞ք, թե դա ի՞նչ ասել կուզի: Թերևս այն, որ չնայած այս ամենին՝ ինձ նայում են վերևից, որ ինձ համարում են դրսից եկած մեկը, և որ ինձ երբեք լիովին չեն վստահի: Ձեզ կբացատրեմ: Սուլթանը միմիայն վստահում է սուլթանին: Իմացեք, որ մինչև վերջերս այստեղ գոյություն ուներ մի սարսափելի ավանդույթ, որի համաձայն՝ ժառանգորդը սպանում էր իր մնացյալ եղբայրներին, երբ կառավարելու իր հերթն էր գալիս: Այսպիսով, մեկ հարվածով վերացնում էր իր բոլոր հնարավոր մրցակիցներին: Երբ հասնում էր այդ օրը, կարելի է պատկերացնել, թե ինչ էր Թոփ Գափուում կատարվում. ֆավորիտուհիների հուսահատությունը, որոնք ջանում էին փրկել իրենց որդիներին՝ թաքցնելով նրանց կասկած չհարուցող տեղերում, հագցնելով նրանց աղջկա հագուստ, փորձելով հանել պալատից, հեծկլտոցով և հառաչանքով պատուհաններից պարաններով իջեցնել ուրիշների՝ որպես ստրկուհիների որդիների: Ահ, որքան սարսափելի կարող է դառնալ զորեղների կյանքը: Կարող եմ պատկերացնել. միջանցքներով վազվզոցներ, հուրհրացող դաշույնները՝ դահիճների ձեռքին, որ պետք է սպանեին երիտասարդ իշխաններին՝ շատ անգամներ դեռ երեխա: Սա էր իշխանության հասնելու սուլթաններին ժառանգաբար անցնող զգուշավորության միակ քաղաքականությունը, որոնք նվաճել էին մեզ հայտնի աշխարհի մեծ մասը:

Ինձ կհարցնեք, թե ինչո՞ւ եմ ձեզ պատմում այս ամենը: Տեսեք: Հենց այս գիշեր ողջ Թուրքիայում մեռնելու են հարյուրավոր մարդիկ՝ այն պարզ պատճառով, որ սուլթանը ամեն գնով ուզում է պահպանել իր իշխանությունը, իսկ Եվրոպայում դրանից տեղյակ չեն, և որ վատ-

թարգմանն է՝ չեն էլ ուզում տեղեկանալ: Դուք «Լ'Օրոր»-ի թղթակիցն եք, և պետք է իմանաք, որ այստեղ այնպիսի բաներ են կատարվում, որ ցանկացած եվրոպացու ամոթալի կլինեին...

Այդ պահին ցանկացա ընդհատել նրան.

– Կարո՞ղ եմ ձեզ մի հարց տալ:

Ուզում էի իմանալ, թե ինչու էր այդ բարձրաստիճան զինվորականը ինձ այդ ամենը պատմում: Չէի կասկածում, որ ճշմարիտ էր, սակայն անկախ ամեն ինչից՝ ինձ տարօրինակ էր նրա օրինավորության առանձնահատուկ զգացումը...

Գնդապետ Ջեմոն մի պահ լուռ մնաց՝ նախքան աջ ձեռքը բարձրացնելը:

– Այո՛, ինչպես չէ, կարող եք ուզած հարցը տալ, թեև լավ գիտեմ, թե ինչ եք մտածում: Տեսեք, արդեն երկու տարի է՝ ապրում եմ մի քրիստոնյա կնոջ՝ վանեցի հայուհու հետ: Ձեզ խոստովանում եմ, որ չեմ ապրի առանց նրա և դա է ինձ ստիպել տեսնել, թե ինչ է կատարվում Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների հետ: Մտածեցի, թե արդյոք չպե՞տք է խոսեի ձեզ հետ այս ամենի շուրջ... Եվ ի վերջո, դա այն բանն է, որ պետք է իմանայիք... և ոչ երրորդ մարդու միջոցով: Ձեզ հուզո՞ւմ է դա: Թե՞ նախընտրում եք, որ խմենք զովացուցիչ ջուրը և ծափահարենք հրավառությանը:

Գլխով ժխտելու նշան արեցի. ինձ անչափ մտահոգում էին այդ մարդու անկեղծ պատմածները և իհարկե այն վստահությունը, որ ուներ իմ նկատմամբ: Այդ ժամանակ համաձայնվեց և շարունակեց խոսել.

– Լսեք, ես հրետանավորի գնդի լեյտենանտ եմ, գնդապետի օգնական: 1876 թ. մայիսին, երբ Աբդուլ Համիդը պետական հեղաշրջում արեց: Այդ դեպքերը երեկվա պես հիշում եմ: Այն ինչ կատարվեց՝ կարծես նորից տեսնելիս լինեմ:

Գնդապետ Մուրադ բեյը իր դիրքի չնորհիվ մեծ արտոնություններից էր օգտվում: Փաստորեն եղել էր Բոսֆորի մյուս ափին տեղակայված աչքի ընկնող կառույցի՝ զինվորական ակադեմիայի տնօրենը:

Բաղդադի կառավարիչը՝ Միդհատ փաշան, նրա հովանավորը, այն մարդը, որը լծակներ էր գործի դնում իր խարդավանքների և հրսկայական հարստության միջոցով, պետական հեղաշրջման և աստվածաբանության սոֆթերի՝ ուսանողների ճնշման արդյունքում նշանակվեց մեծ վեզիր:

Այդ ժամանակ էր, երբ Մուրադ բեյը՝ իմ պետը, բարձրաստիճան սպան հասավ այն բանին, որ զինվորական վարժարանի սաները մի գրավոր բողոք ներկայացնեին սուլթանի անխոհեմ վարքագծի և գանձարանը նրա կողմից մսխելու մասին, հարցնելով չարիաթի նախարարին, թե արդյոք չի՞ կարելի սուլթանին գահընկեց անել: Ամեն ինչ համաձայնեցված էր: Հասան Կարուլլահը ստորագրեց ֆեթվան՝ կրոնական հռչակագիրը, որն անմիջապես իմամները տարածեցին մզկիթներով, իսկ սուլթան Աբդուլ Ազիզը մի քանի ժամ անց փոխարինվեց: Բանակը համաձայն էր, իսկ ռազմական նախարարը՝ Հուսեին Ավնի փաշան, մոբիլիզացրեց Կոստանդնուպոլսի զորանոցները: Ես լավ եմ հիշում, որովհետև Գլխավոր շտաբում գնդակահարեցին մի գեներալի, որն ընդդիմացել էր, և գահին բարձրացավ մի անբարո երիտասարդ՝ Մուրադ V անունով, որին մե՛կ սրանք, մե՛կ նրանք թելադրում էին իրենց ուզածով կառավարել: Գահընկեց սուլթանին՝ Աբդուլ Ազիզին, պետք է ուղեկցեի մի մակույկով մինչև Թոփ Գափու պալատը: Հիշում եմ, որ մանր անձրև էր տեղում, և ջրի ցայտերը թռչում էին նավակի վրայով: Նույնիսկ գահընկեց՝ սուլթանը ջանում էր մնալ տախտակամածի վրա, նավավարի մոտ, թրջված, փորձելով չկորցնել արժանապատվությունը, չնայած նրա ներքևի շուրթը դողում էր, ու ձախ աչքը անընդհատ թրթռում առանց հանդարտվելու, ասես կոահելով, թե ինչ է կատարվելու: Ոչ մի խոսք չասաց, բայց իր ծառաները անդադար փսփսում էին՝ վախեցած, որ իրենց սպասում է նույն ճակատագիրը, ինչ իրենց տիրոջը: Արդեն Դոլմաբաղչեի պալատից տեղափոխել էին իր կանանց՝ մորը, սիրուհիներին...

Նավից իջանք Պալատական հրվանդանի քարե սանդուղքի մոտ՝ Սարայ Բուրնիեում, այնտեղից մի կառք մեզ տեղափոխեց Թոփ Գափու:

Ես երբեք այդքան մոտ չէի գտնվել որևէ սուլթանի, ինձ հրամայել էին աչքս նրա վրա պահել, քանի որ Միդհատ փաշան վախենում էր, որ այդ մարդը որևէ հիմարություն թույլ տար. օրինակ, փորձեր հակահարված տալ, քանի որ պետական հեղաշրջումը դեռևս թելից էր կախված և նման դեպքում ինչ ասես, որ չէր կարող պատահել, որովհետև Աբդուլ Ազիզը դեռևս ազդեցիկ մարդ էր, և շատերն էին ատում Միդհատին:

Դուք ծանոթ չե՞ք Թոփ Գափու պալատին՝ վիթխարի բակերով ու պարտեզներով: Հարեմն իսկական լաբիրինթոս է, և երբ իջնում է գիշերը, դառնում է երկյուղալի: Այդ վայրը քաջատեղյակ է վերջերս կայացած աշխարհի պատմության մեծ մասին: Շատերի համար եղել

է դրախտ, այլոց համար բանտ, Աբդուլ Ազիզի դեպքում՝ կառափ-նարան:

Կպատկերացնեք անչուշտ իմ վիճակը: Նա՝ ժամեր առաջ սուլթան, հավատացյալների խալիֆ և ընդարձակ կայսրության տիրակալ, հանկարծ ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ մի գերի. որքան էլ որ նրա առաջ խոնարհվեին, վրաս ատելության կատաղի հայացքներ էր գցում՝ ինձ համարելով իր այդ վիճակի պատասխանատուն: Չէի կարողանում ձերբազատվել այն մտքից, թե ի՞նչ էր ինձ հետ կատարվելու, եթե ամեն բան կրկին փոխվեր:

Դա տևեց մի ամբողջ շաբաթ. պահապանները հսկում էին ելքերը, ներքինիները վախեցած էին, կանայք հառաչում էին, սուլթանի մայրը նստած գորգին՝ անխոս առաջ ու հետ կռանալով կանխազգում էր մոտալուտ աղետը: Աբդուլ Ազիզին գտան մեռած, առանց բռնության հետքերի, արյան լճակի մեջտեղում՝ հարեմի սենյակներից մեկում: Ծառաներից մեկը հայտնեց պալատի բժշկին, որն անհապաղ իր սենյակից չտապեց օգնության, սակայն ընդամենը կարողացավ հաստատել, որ մահը ինքնասպան լինելու հետևանք էր, թեև շատ լավ գիտեր, թե ինչ է տեղի ունեցել:

Սակայն Միդհատ փաշան շատ խորամանկ մարդ էր և չէր կարող թույլ տալ պետական ոճրագործության՝ հանցանքի կասկած: Տարբեր դեսպանատներից հրավիրվեցին բժիշկներ: Հավաքվեցին մինչև 19-ը բժիշկներ, որպեսզի կասկածի մի նշույլ անգամ չմնար: Աքիլ Դիքսոնը՝ Անգլիական դեսպանատան բժիշկը, Միդհատին հանձնեց դատաքննչական եզրակացությունը: Նախկին սուլթան Աբդուլ Ազիզը ինքնասպան է եղել հուսահատությունից: Բոլորն ընդունեցին փաստաթուղթը և չչնջում էին՝ համաձայնվելով այն բանում, թե ինչ է կյանքը, և ինչպես են մահանում անգամ ամենազորեղները: Աբդուլ Համիդը՝ Մուրադի եղբայրը, նորընտիր սուլթանը, հրապարակավ ցուցադրեց ընտանիքի վիշտը, թեև ոչ ոք չհավատաց: Չեմ կարող մոռանալ, որ Միդհատ փաշան քիչ մնաց, որ սպանվեր մահացած սուլթանի փեսաներից մեկի կողմից: Հասան բեյը ներս խուժեց պետական խորհրդի առաջին ժողով և իր ատրճանակով մոտիկից կրակեց Հուսեին Ավնիի՝ Ռազմական նախարարի ու Ռեշիդ փաշայի՝ Արտաքին հարաբերությունների նախարարի վրա: Փաշան թաքնվեց սեղանի տակ, մինչ ձերբակալում էին Հասան բեյին:

Բայց պատմությունը սրանով չի ավարտվում: Նոր նշանակված սուլթանը՝ Մուրադ V-ը, խմում էր սպունգի պես և մանուկ հասակից տառապում նյարդային նոպաներով, որոնց ժամանակ թվում էր, թե

խելագարվում է: Իր եղբոր՝ Աբդուլ Համիդի կողմնակիցները, որքան կարող էին, ամեն առիթով նրան հեղինակազրկում էին, որոնց միջտ փառամոլ իշխանը գազազած վիճակում էր պահում, անհամբեր, թե երբ է իրեն վիճակվելու բազմել գահին:

Այդ շոգ ամառը նպաստեց դրան հասնելուն: Մի գիշեր, երբ սուլթան Մուրադը կավատների ուղեկցությամբ գնաց իր ապարանքը, որոնք իրեն պահպանում էին, շատ սուր նոպա ունեցավ և սկսեց ահավոր գոռալ: Անգամ քնաբերը, որ նրան սրսկել էր իր բժիշկը, չհանգստացրեց նրան: Աբդուլ Համիդը, ամեն բանից տեղյակ, արագ հասավ պալատ:

Բախտը բերել էր:

Հաջորդ օրը տարբեր դեսպանատներից բժիշկներ բերել տվեց: Այնտեղ էին բժիշկ Զետտեն Ավստրոհունգարական դեսպանատնից, բժիշկ Աքիլ-Դիքսոնը Մեծ Բրիտանիայից, բժիշկ Մարրուեն Ֆրանսիայից, բժիշկ Մյուլինգը Գերմանիայից և ուրիշներ: Նրան պետք էր եվրոպական տերությունների՝ մանավանդ անգլիացիների աջակցությունը, որոնք գաղտնի համաձայնության էին եկել Միդհատ փաշայի և հենց իր՝ Աբդուլ Համիդի հետ:

Այստեղ, այս նույն դեսպանատանը, կնքվեց Աբդուլ Համիդի կողմից իշխանության նվաճումը: Մեծ Բրիտանիայի համար դա այն երաշխիքն էր, որ իր ճանապարհը դեպի Հնդկաստան լինելու էր բաց և առանց խոչընդոտների: Բայց տեսեք, այդ ամենից մեկը պետք է որ տուժեր, և դրանք լինելու էին քրիստոնյա փոքրամասնությունները:

Մանավանդ հայերը, Փոքր Ասիայի հույները, քրիստոնյա ասորիները, նույնիսկ հրեաները, բայց սա այլ երկար խոսակցության խընդիր է: Արդեն վեր կենամ: Դուք հաստատ ուզում եք ողջունել այդ գեղեցիկ տիկնոջը, որին չեք կորցնում ձեր տեսադաշտից: Պատահաբար ֆրանսիական դեսպանի դուստրը չէ՞: Դեսպանը շատ հետաքրքիր մարդ է:

Լավ, ահավասիկ իմ այցետոմսը: Կուզենայի ձեզ ցույց տալ մի քանի փաստաթուղթ, ասենք՝ շատերին ոչ հասանելի:

Սիրելի բարեկամս, շուտով կտեսնվենք, իսկ հիմա՝ առայժմ: Իսկապես հաճելի էր, այնպես որ էլ մի սպասեցրեք ձեր գեղեցիկ բարեկամուհուն: Մնաք բարով, արդեն պետք է գնամ:

Գնդապետ Իբրահիմը դանդաղ հեռացավ դեպի ճեմասրահը: Մտածեցի, որ տեսնելու եմ նրան, որ ինձ շատ ավելի բաներ պատմեր: Այդ մարդը ոչ միայն լավ գիտեր Թուրքիայի պատմությունը. լինելով նրա կարևոր դերակատարներից՝ թվում էր՝ պատրաստ է ինձ հետ շատ գաղտնիքներ կիսել:

Էլեն դը Ֆավրը ժպտաց, երբ մոտենում էի նրան:

– Սիրելի Անրի, սա լավագույն առիթն է քեզ հորս ներկայացնելու: Նա այնտեղ է՝ անգլիական դեսպանի և Պիեռ Լըկլերկի հետ: Ընկերակցի՛ր ինձ:

Մենք մոտեցանք բաց պատշգամբի ծայրին, և տեսնելով Էլենին՝ երեք տղամարդն էլ տեղից վեր կացան:

– Հա՛յր, քեզ եմ ներկայացնում սիրելի բարեկամիս՝ Անրի դը Լատուրին, «Լ'Օրոր»-ի թղթակցին, այստեղ՝ Կոստանդնուպոլսում, միստըր Էդվարդ Թորնթոն, Մեծ Բրիտանիայի դեսպան և Պիեռ, ում արդեն ծանոթ ես:

– «Լ'Օրո՞ր»: Մի շատ լավ թերթ,– բրիտանական դեսպանը դիմեց ինձ ինչ-որ կերպ հայրաբար՝ գերազանց ֆրանսերենով: – Լսել եմ ձեր մասին, երիտասարդ իմ բարեկամ, անգամ շատ հոդվածներ եմ կարդացել, որ դուք ուղարկել եք ձեր օրաթերթին... Եթե ինձ թույլ տաք մի խորհուրդ: Սա մուսուլմանական երկիր է, իսկ սուլթանն էլ՝ հավատացյալների խալիֆը: Ձեզ դա ասում եմ, որովհետև այստեղ քրիստոնյաները փոքրամասնություն են կազմում:

Դեսպանը նկատի ուներ իմ վերջին հոդվածը, որն իրոք տպագրվել էր ընդամենը երկու շաբաթ առաջ, որում ինձ թույլ էի տվել քննադատել, որ քրիստոնյաները պետք է օգտվեին ավելի մեծ ինքնավարությունից:

– Տեսեք, մսյե Լատուր, անկեղծորեն եմ ձեզ դա ասում: Ձէ՞ որ մենք ընկերներ ենք: Կարծում եմ, որ դուք մի փոքր անզգույշ քայլ եք թույլ տվել, սակայն դուք, շատ եմ խնդրում, մի նեղացեք ինձանից, ձեր լավի համար եմ ձեզ ասում, քանզի իմ կարծիքով ես մարդկանց լավ եմ ճանաչում: Տեսեք, թուրքերը շատ կասկածամիտ են այդ հարցում և հավանաբար սխալ մեկնաբանեն ձեր հոդվածները... և այդ ժամանակ ձեզ այլևս ոչ ոք մի խոսք անգամ չի ասի: Լսեք, «Լ'Օրոր»-ը քիչ են կարդում այստեղ: Հավանաբար միայն օտարերկրացիները, բարձր դասի որոշ հայեր, որոնց մի ձեռքի մատների վրա կարելի է հաշվել: Բայց ի վերջո թուրքերը ամեն ինչից տեղեկանում են, շատ աչալուրջ են և սարսափելի զգայուն այն ամենի հանդեպ, ինչ ասում են իրենց մասին: Լսեք ինձ, եթե կարծիք եք հայտնում փոքրամասնությունների մասին, մտածեք երկու անգամ: Մենք համենայնդեպս այդպես ենք անում մեր դեսպանատանը:

– Արդարացի եք: Այստեղ հարկավոր է խոսել՝ լեզուն կծելով,– ժակ դը Ֆավրը գլխով համաձայնության նշան արեց իր գործընկերոջը,– տեսեք, Անրի, կան շատ գաղափարներ, որ սովորական են Եվրոպայում, մինչդեռ այստեղ չեն ընկալվում: Օրինակ՝ մարդկանց միջև արտահայտվելու ազատությունը, հավասարությունը զուտ խոսքեր են: Այստեղ բառերն այլ իմաստ ունեն՝ կախված այն բանից, թե ինչպե՞ս, ե՞րբ և ո՞ւմ են ասում, բայց ի վերջո դուք էլ այդ գիտեք: Դեսպանը փորձում է ձեզ զգուշացնել, որ այդ հարցը տաբու է այստեղ: Զարմանալի է, երբեմն ինձ թվում է, որ հայերը՝ ընդունակ և աշխատող մարդիկ, գերազանց, վարժ մասնագետներ, ինչպես օրինակ՝ ճարտարապետների այն գերդաստանը, որ նախագծեց և դեկավարեց Դոլմաբաղչեի ցնցող պալատը, կամ ինժեներներ, բժիշկներ, գրողներ՝ որպես հայազգի, պարզապես չկան: Թուրքերն էլ կարծես թե չեն ցանկանում ընդունել, թե իրենցից հայերը որևէ բնագավառում կարող են ավելի լավը լինել: Հիշում եմ, մի քանի տարի առաջ, խոսում էի մեծ վեզիրի հետ մի ընդունելությունում: Հայ ֆինանսիստների մի խումբ պետք է պալատի համար վարկ երաշխավորեր ֆրանսիական բանկերի միջոցով, և թվում էր, թե այնքան էլ տրամադիր չէին, քանի որ իրականում խոսքը վերաֆինանսավորման մասին էր, վեզիրը դիմեց ինձ՝ նրանց մասին մի ահավոր վատ մեկնաբանություն անելով: «Այս շները,– ասաց,– փորձում են կծել իրենց տիրոջ ձեռքը, և դա նրանց վրա շատ թանկ կնստի, ավելի թանկ, քան նրանք կարող են պատկերացնել: Կարծում են, թե այն փողը, որ գործի մեջ են դնում, իրենցն է, և որ մեծ տներն էլ են իրենց պատկանում: Սակայն ոչինչ, ոչ էլ սիրտն անգամ, որ բաբախում է իրենց կրծքում, առանց թուրքերի թույլտվության չէ: Սա է թուրքերի փիլիսոփայությունը փոքրամասնությունների վերաբերյալ: Նույնն է, որ մարդ ապրի պարտքով, և մի բան ասեմ, ներքուստ ինձ թվում է, որ խնդիրը դեպի լավը չի գնում:

Ընդունելության ավարտին հրաժեշտ տվեցի Էլենին, քանի որ պնդեց, որ ինձ մինչև դուռը ուղեկցի:

– Ուշադրություն մի դարձրու անգլիացի դեսպանի մեկնաբանություններին: Նա հայտնի է որպես սառն ու տարօրինակ մարդ:

– Այո՛,– պատասխանեցի,– մի կատարյալ ջենտլմեն բրիտանական խառնվածքով, բայց խորքում, կարծում եմ, որ իրավացի է: Գուցե ավելի ողջախոհ պետք է լինել: Վերջիվերջո ես այստեղ ընդամենը մի հրավիրված եմ:

Էլենը այս համբուրեց, և ես դուրս եկա փողոց: Լուսավոր էր միայն պարտեզի ցանկապատի շուրջը. մի քանի մետր այն կողմ մնացյալը սպառնալի մշուշում էր, քանի որ գազի ջահերը տեղադրված էին միայն կենտրոնի մի քանի փողոցներում և պողոտանե-

ում: Երբ մութն ընկնում էր, Կոստանդնուպոլիսը դառնում էր թշնամական մի վայր մանավանդ եվրոպացու համար:

Չնայած այն բանին, որ հանցագործները պատժվում էին ողջ խստությամբ, հաճախակի էին հարձակումներն ու գողությունները, և ես մտածեցի, որ պետք է մի ավտոմեքենա կամ կառք վարձած լինեի, որն ինձ տուն հասցներ: Այդ ժամանակ, մինչ արագ քայլում էի մթության մեջ, գիտակցեցի, թե ինչ հեշտ է լինելու իմ վերջը տալը որևէ մեկի համար, ում համար իմ բառերը անախորժ լինեին:

Չնայած ինքս ինձ վախկոտ չէի համարում, ցնցված էի: Անգլիական դեսպանը գուցե շատ վատ կողմեր ուներ, բայց իրականում ինձ անկեղծ նախազգուշացում էր արել:

Մի քանի օր անց ստացա մի նամակ Ֆրանսիայի դեսպանատնից ստորագրված իր՝ Ժակ դը Ֆավրի կողմից:

> *Մայե Անրի դը Լատուր*
> *Թուրքիայում «Լ'Օրոր»-ի թղթակից.*
> *Մեծարգո բարեկամ: Սույնին կից դուք ստանում եք պաշտոնական հաստատված փաստաթուղթ, որպես Թուրքիայում Ֆրանսիայի այս դեսպանատան մամուլի պատասխանատու:*
> *Պետք է կապվեք առաջին քարտուղարի՝ պարոն Պիեռ Լըկլերկի հետ մանրամասնելու համար:*
> *Մեզ հետ ձեր աշխատելու մեծագույն գոհունակության առիթով իմ սըրտագին ողջույնը ձեզ:*
> *Ստ. Ժակ դը Ֆավր*
> *Ֆրանսիայի դեսպան:*

Ակներև էր, որ այդ նշանակման հետևում կանգնած էր Անրի Վիյեն, որին մայրս էր համոզել՝ վախեցած իմ անվտանգությունից:

Ինձ վատ չթվաց: Ի վերջո լրացուցիչ երաշխիք էր իմ դիվանագիտական անձնագիրը, որ բացի այդ բացելու էր իմ առջև այլ դռներ և արդեն համոզված էի, որ Կոստանդնուպոլսում լավագույն բանալին դիվանագիտական անձնակազմին պատկանելն էր:

ՀՈՒԼԻՍ 1886

5. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻ ԴԱՍ

Եկավ նախատեսված ամսաթիվը, երբ փոստը պետք է մեկներ Էրզրում, բայց վերջին պահին պարզվեց, որ ամբողջ ճանապարհը ցամաքով՝ Անատոլիան կտրել-անցնելու փոխարեն պետք է ուղևորվեին ծովով մինչև Տրապիզոն և այնտեղից փոստային վագոնով մինչև Էրզրում: Պաշտոնական բացատրություններ չկային, բայց կարծում էին, որ Սրվազում տեղի ունեցող լուրջ անկարգությունների հետևանքով էր: Ինֆորմացիայի պակասը Թուրքիայում սովորական էր, որտեղ պաշտոնական հերմետիզմը ընդունված բան էր: Մյուս կողմից, այն սակավաթիվ թերթերը, որ հրապարակվում էին երկրի ներսում՝ այնպիսի տեղերում, ինչպիսիք Սամսունը կամ Էրզրումը, սուղ օրինակներով էին և սովորաբար չէին հասնում Կոստանդնուպոլիս:

Որոշ թույլ կասկածներից հետո որոշեցի գնալ՝ ընկերակցելով Քլիֆորդ Լլոյդին՝ այդ քաղաքում անգլիական հյուպատոսին, որը շատ գոհ էր իմ որոշումից: Ուստի պատրաստեցի մի ճամպրուկ ամենաանհրաժեշտ պարագաներով և իջա քայլելով դեպի նավահանգիստ, որտեղ սպասում էր մի առագաստանավ՝ «Բախտավոր», որ, ինչպես Քլիֆորդն ինձ բացատրեց, դեսպանատան համար սովորաբար բեռներ էր տանում-բերում: Ավելի ուշ իմացա, որ նավի տերը տեղեկատվություն էր անցկացնում Անգլիայի դեսպանատուն, ինչը նույնպես զարմանալի չէր:

Թեև շոգ էր, արդեն հուլիսի կեսերն էին: Հենց որ նավը բաժանվեց ափից, եղանակն այն աստիճան զովացավ, որ ստիպված եղա հաստ ժակետ հագնել, բայց անգամ այդ պայմաններում հաճելի էր մնալ կամրջի ծածկի տակ՝ զննելով Թուրքիայի քարքարոտ ափը:

Քլիֆորդը ճանապարհի արտասովոր ընկեր էր, և առաջին պահից հասկացա, որ խոսքը կիրթ մարդու մասին է, երկրի մասին խոր գիտելիքներով և բացի հնէաբանության մեծ սիրահար լինելուց, ինչպես բոլոր բրիտանական բարձր պաշտոնյաները՝ համոզված էր, որ Մեծ Բրիտանիան աշխարհի կենտրոնն է և որ իրենց վրա է դրված կարգ ու կանոնի պատասխանատվությունը:

Քլիֆորդը համարյա տասնհինգ տարի էր, ինչ Թուրքիայում էր և Թուրքերի մասին չատ վատ կարծիքի էր, առհասարակ նրանց համարում էր հույներին և հայերին տանջելու գործում մեղավորներ:

– Ուզում եմ, որ մի բան քեզ պարզ լինի: Իմ իսկական մասնագիտությամբ, նախքան փոխհյուպատոս նշանակվելս, պատմության դասախոս էի: Երբ եկա Թուրքիա, մասնագիտացա Մերձավոր Արևելքի գծով: Եթե ինձ դիմանալու ուժ գտնես մեջդ, կփորձեմ քեզ բացատրել այս երկրի ծագումը:

Ոգևորությամբ ընդունեցի իր առաջարկը, և Քլիֆորդը ժպտաց:

– Բարի, ինքդ քեզ կրակը գցեցիր, ուրեմն՝ լսիր,– մատնացույց արեց ժայռեղեն կտրտված զանգվածը: – Զննիր այս ցնցող ափը՝ Եվքսինյան Պոնտոսը: Մի հսկա տարածք, որը պատմության ընթացքում կամուրջ է ծառայել, որպեսզի Թուրքմեն ցեղերի հորդաները հասնեն մինչև Բյուզանդիա: Երբ Մուհամեդ II-ը նվաճեց Կոստանդնուպոլիսը, Եվրոպան ցնցվեց՝ հիշելով Աթիլլային, և այդ օրը աշխարհը փոխվեց: Ամեն ինչ սկսվեց, երբ Օսմանը ընդունակ եղավ միաձուլել տափաստանների ցիրուցան ցեղերին:

Իր ճարպկության շնորհիվ հասավ դրան որպես ցեղապետ, համախմբելով տարբեր կրոնական միավորումների, խոստանալով նրանց որպես հատուցում, ինչպես որ ենթադրում էին, անհավատների հետ սահմանամերձ հողատարածքները: Այսպիսով, նա դարձավ չատ հայտնի իշխան, և նրան հաջողվեց գայթակղել հազարավոր քոչվոր վաչկատուների՝ կորցնելու ոչինչ չունեցողների և ծարավի՝ տիրանալու խոստացած ավարին:

Մոնղոլներն էին, որ առաջանալով իրենց նվաճողական հաղթարշավի ճանապարհին և ամեն ինչ հրկիզելով՝ քշեցին Թուրքմեն ժողովուրդներին դեպի Անատոլիա և Փոքր Ասիա: Նրանք հեռատես գտնվեցին և հասկացան, որ պետք է յուրացնեն բյուզանդական իշխանությունը և օգտագործեն այն որպես հիմք այն իշխանության ստեղծման համար, որին իրենք էին հավակնում: Նրանց հաջողվեց նաև իրենց կողմը գրավել քրիստոնյա վարձկանների՝ իրենց գլխավոր թշնամիների դեմ պայքարելու համար: Այդ թշնամիները հենց իրենք՝ Թուրքմեն առաջնորդ կոչվածներն էին, որ դեռ հավակնում էին չուտափույթ ավարի, ունեցվածքի, թալանի՝ հետևում թողնելով հրկիզված հողերը՝ մշտական բնակատեղիի փոխարեն: Դա Օրհանի գաղափարն էր՝ Օսմանի անդրանիկ զավակի: Այդ իշխանապետը հասկացել էր, որ հարկավոր չէր ուժով ներխուժել՝ տիրանալու ոսկու

ավարին և ստրուկներին, այլ հիմնել պաշտպանիչ կետեր անհավատների կամքը կոտրելու համար:

Դեռ վաղ էր, որ համարձակվեին դիպչել Կոստանդնուպոլսին և ստիպված մեկ դարից ավելի սպասեցին, մինչև որ Մեհմեդ II-ը կարողանար այն նվաճել, օգտվելով այն բանից, որ Բյուզանդական կայսրությունն արդեն իր դարն ապրել էր: Բայց նրանց իսկական հաջողությունն այն համարձակ մարտավարությունն էր, որ նրանք պահեցին տեղական կառավարիչներին՝ նրանցից պահանջելով պարտավորություն տարեկան տուրք տալու և օսմանցիներին զորքեր մատակարարելու: Վասալության ակտիվ համակարգ, որը գործեց չատ արդյունավետ, քանի որ նվաճված ժողովուրդները կարծում էին, թե կարող էին ապահով դարձնել իրենց ունեցվածքը, սեփականությունը և իրենց կյանքը տարեկան տուրքի դիմաց: Այսպիսով, այդ համակարգի պաշտպանությունը երաշխավորված էր հենց իրենց՝ նվաճողների կողմից: Հետո հաջորդեցին Մուրադը, որը տարածեց իր իշխանությունը Արևելյան Եվրոպայով, Բայազիդը՝ իր որդին, որը վերջ չտվեց պատերազմելուն՝ կայսրությունը պահպանելու համար նման անկայուն աշխարհում:

Սուլթանները՝ անչափ չահագրգռված իրենց արյունը ազնվացնելու, կնության առան քրիստոնյա, բյուզանդացի, սերբիացի, բուլղարացի արքայադուստրերի: Սա ուղղակիորեն ազդեց նրանց աշխարհընկալման և հետևաբար՝ նրանց ծիսակատարությունների և արարողակարգի վրա: Այդտեղ է, որ սկսվեց իրագործվել հիերարխիայի և բյուրոկրատիայի բարդ համակարգը, այն չափով, ինչ հեռանում էին հասարակ ժողովրդից արիստոկրատների վերածվելու համար:

Բնականաբար, պատերազմի ռազմիկները, չատ ավելի կոչտ ու պարզունակ, չարունակում էին իրենց ձեռքում պահել կարևոր բանակներ, որոնք սպառնում էին սուլթանի իշխանությանը, որի զինված ուժերը անհեթեթության աստիճան չատ ավելի սուղ էին: Այդտեղ էլ երևան եկան այսպես կոչված կապիկուլները կամ տան ծառաները՝ պատերազմի ավարի մաս կազմող, որ Մուրադից սկսած սուլթանի անձնական սեփականությունն էին:

Այս ստրուկները, մեծ մասամբ քրիստոնյաներ, դարձել էին իսլամի հետևորդներ, եթե չէին ցանկացել զրկվել կյանքից, և նրանց դաստիարակում էին Թուրքերենով՝ որպես օսմանցիների: Այնուհետև նրանց կրթում էին որպես զինվորների, իսկ նրանց, ովքեր աչքի էին ընկնում կամ դրսևորում էին բարձր հատկանիշներ, առաջ էին քա-

չում որպես կառավարիչներ: Այսպիսով, նրանք դառնում էին սուլթանի ամենահավատարիմ վասալները, և այդտեղից էլ սկիզբ առան ենիչերիները կամ նոր զինվորները:

Պետք է իմանաս, որ Մուրադ II-ի իշխանության օրոք մի քիչ ուշ պատահեց, երբ ի հայտ եկավ դևշիրմեն կամ քրիստոնյա լավագույն պատանիների պարտադիր զինակոչը, բոլորն էլ մեծ մասամբ Բալկաններից: Եթե կուզես այն կարող ենք անվանել առևանգում, քանի որ ուրիշ բան չէր: Ընտրվել էին բեյերի կողմից և ուղարկվել սուլթանի պալատ, որտեղ նրանց բռնությամբ ստիպել էին իսլամ ընդունել և կրթվել դրա ոգով: Ժամանակի ընթացքում նրանք դարձան մի նոր քաղաքական իշխանություն՝ առճակատման գնալով հին օսմանյան արիստոկրատիային:

1444 թ. ասպարեզ է գալիս Մեհմեդ II-ը, թերևս օսմանյան ամենաականավոր սուլթանը, որը 1453 թ. Բյուզանդիայից նվաճեց Կոստանդնուպոլիսը և այն դարձրեց Ստամբուլ, օսմանյան արքունիքի կենտրոնը և իսլամական աշխարհի նոր մայրաքաղաքը, քանի որ կայսեր հնագույն նստավայրի նվաճումը նույնպես նրան դարձրեց աշխարհի մուսուլման հավատացյալների իսկական խալիֆ, մի բան, որ նրան երաշխավորում էր բացարձակ իշխանություն: Մեհմեդը գոռոզամիտ մարդ էր, իշխանամոլ ու փառասեր և նպատակ ուներ վերակերտել «նոր իսլամական Հռոմ»: Այդտեղ եկան հրեաներ, հայեր, ուղղափառ քրիստոնյաներ, արաբ մուսուլմաններ, որոնք չուտով չունչ տվեցին հնագույն քաղաքին: Փաստորեն, այնտեղ հաստատվեցին պատրիարքություններ, ինչպես ուղղափառ հունական, այնպես էլ հայկական: Ի հայտ եկավ հրեական համայնքը: Բայց, այո, բոլորն էլ միշտ միլյեթներ՝ համայնքներ էին՝ Թուրքերին ենթակա:

Զավեշտականն այն է, որ սուլթանները ոչ թե վստահում էին իրենց արյունակից եղբայրներին՝ օսմանյան Թուրքերին, այլ դևշիրմեի համակարգի միջոցով իսլամ ընդունած քրիստոնյաներին, կարծում եմ, որ, ինչպես այս վարքագիծը, այնպես էլ համարյա ավանդական դարձած կայսերական ընտանիքի որևէ անդամի սպանությունը (որ գահի հանդեպ իր նկրտումներով չդառնար անդրանիկ որդու մրցակիցը) արտացոլում է մի հնագույն մտածելակերպ՝ արմատացած տափաստաններում ապրած մարդկանց վարքագծում, որոնք երբեք չգիտեին, թե ո՞ր կողմից կհասներ նետը, որը վերջ կտար իրենց կյանքին:

Այդ քոչվոր ցեղերը, որ սկզբում վրաններով էին գնում այնտեղ, ինչին հանգամանքներն էին ստիպում, ընդունակ եղան միաձուլվել և սպառնալ հզոր Արևմուտքին այնքան երկարատև պատերազմում, որն ավարտվեց Կոստանդնուպոլսի անկումով՝ իսկական աղետ, որը ցնցեց քրիստոնյա երկրներին, ինչպես մի հեռավոր թնդյուն՝ սպառնալով կայծակն իր հետ տանել դեպի Եվրոպայի սիրտ: Տես, Անրի, պետք է մի շատ կարևոր բան ըմբռնես: Թուրքերի մտածելակերպը մերժում է այն ամենը, ինչը համապատասխան չէ իրենց խորհելաձևին, այնպիսին է, որ ասես մնացածները՝ իր չուրջ գտնվող օտարները, գոյություն չունեն: Արևմուտքի կարծիքները նրանց համար ոչ մի նշանակություն չունեն: Բացի այդ, այն համոզմունքին են, որ միակ արժեքավորը օսմանյան մտածելակերպն է, մշակույթն ու կյանքն ընկալելու իրենց կերպը:

Դու դա ինքդ քեզ կպարզես Թուրքերի և տարբեր միլյեթների՝ օրթոդոքս հույների, կաթոլիկ քրիստոնյաների, հայերի և հրեաների հետ շփվելիս:

Ինքնավարությունները ոչ թե նշանակում են ազատություն, այլ անջատում: Ամեն ինչում գոյություն ունի Թուրքականի բացարձակ գերիշխանություն, որն ուղեկցվում է մեկ այլ՝ անսահման արհամարհանքով նրանց հանդեպ, ովքեր Թուրք չեն: Ապացուցում են, որ եվրոպացիների դեմ ոչ մի մարտում չեն պարտվել, իսկ եթե դա տեղի է ունեցել՝ ապա միայն հանգամանքների բերումով: Այդ իսկ պատճառով ոչ Թուրքերը ոչ մի կերպ չեն կարող համարվել առաջին կարգի քաղաքացիներ: Քեզ բերեմ մի օրինակ: Ցանկացած հայ համարվում է գյավուր, այսինքն՝ անհավատ: Եթե մեկը քրիստոնյա է, չի կարող դատվել ըստ շարիաթի, և նրա իրավունքները դրանով չեն երաշխավորված, անգամ պետք է վճարի տուրք՝ ջիզյա, այսինքն՝ «ապրելու իրավունքի հարկ», որ տարեկան պետք է վճարեն բոլոր ոչ մուսուլման տղամարդիկ, որոնք բնակվում են կայսրությունում: Ինքդ քեզ հարց կտաս, թե ինչո՞ւ է այս անգլիացին այդքան անհանգստացած քրիստոնյա փոքրամասնությունների համար: Քեզ կասեմ գաղտնիքը. ինձնից առաջ իմ հայրն է այստեղ եկել որպես զինվորական-խորհրդական Անգլիական դեսպանատանը: Հասել է Կոստանդնուպոլիս 1850 թ., հազիվ 24 տարին լրացած, Սանդհրստը[1] նոր ավարտած: Իր պաշտոնակից ընկերը այդ ժամանակ քառասունին մոտ մի տղամարդ էր՝ Դեյվիդ Էրքհարթ անունով, գաղտնի ծառայությունների գործակալ, որը տասը տարի այդ երկրում էր հատուկ ծառայությամբ:

[1] *Արքունական ռազմական հայտնի ուսումնարան (հիմա ռազմական ակադեմիա) Անգլիայում:*

Հայրս էլ այդ ժամանակ իր հետ բերեց իր կնոջը՝ մորս: Ես ծնվեցի Թուրքիայում, իսկ մայրս մահացավ ծննդաբերության ժամանակ: Մարի Դադրյանը՝ մի երիտասարդ հայուհի, ինձ մեծացրեց և խնամեց մինչև 11 տարեկան դառնալս: Նրա շնորհիվ սովորեցի խոսել և գրել հայերեն, նրանց լավ եմ ճանաչում, գիտեմ, թե ինչպիսին են և ինչպես են մտածում: Մարիին սպանեցին 1862 թ. Կիլիկիայի հյուսիսում գտնվող մի քաղաքում՝ Զեյթունում: Այնտեղից էր նա և իր ընտանիքը: Գնում էր այնտեղ իր հարազատների հետ ամռան մեկ ամիսն անցկացնելու: Քեզ մեկ ուրիշ օր կպատմեմ, թե ինչ պատահեց: Հետագայում վերադարձա Անգլիա, քանի որ հայրս ավարտեց իր գործը Թուրքիայում, դե ինչ, շատ երկար պատմություն է, սակայն գուցե քեզ հետաքրքրի:

Զգացի, որ Քլիֆորդի աչքերը խոնավ էին, ասես այդ հուշերը նրան հուզել էին:

– Այո՛: Շատ լավ եմ ճանաչում, թե՛ սրանց և թե՛ նրանց, և քեզ կարող եմ վստահ ասել, որ այս երկրում քրիստոնյա փոքրամասնություններին սարսափելի հետապնդում են, բայց այսօր այսքանը: Զէ՞ որ ես քեզ զգուշացրի...

Մի քանի օրում կհասնենք Տրապիզոն, իսկ այնտեղից՝ կուղևորվեք Էրզրում: Այդ նահանգը պատկանում է Պատմական Հայաստանին, և քեզ շատ դուր կգա:

Հիմա իջնենք խցիկը, սկսում է մթնել, և պետք է ուժ հավաքենք:

Այդ դասախոսությունն ինձ համոզեց, որ իմ նոր բարեկամը՝ Քլիֆորդ Էլոյդը, կիրթ և հղկված մարդ է, և այդ երկիրը իր հինգ մատի պես գիտե: Ես շատ գոհ էի, որ ընդունել էի նրա առաջարկը և որոշեցի օգտվել նրա կողքին գտնվելու այդ օրերից:

Գիշերվա մեջ քամին ուժով վեր բարձրացավ, և նավը սկսեց շարժվել ընկույզի կճեպի պես, որն էլ ինձ բախտս անիծել տվեց, որովհետև մի քանի ժամ շարունակ ինձ թվում էր՝ ցանկացած պահին խորտակվելու ենք: Երբ ալեկոծությունից վրաս անձկություն իջավ, մտածում էի, թե որքան հարաբերական է կյանքը: Այնուամենայնիվ լուսաբացն իր հետ լավ եղանակ բերեց, քամին այնքան հանդարտվեց, որ դարձավ մեղմ զեփյուռ, իսկ Անատոլիայի ափն ինձ մոռացնել տվեց այդ վատ պահը:

Որոշ հեգնանքով Քլիֆորդն ինձ հարցրեց, թե ոնց եմ անցկացրել գիշերը, և ես նույն ծաղրանքով ասացի, որ քնել եմ կոճղի պես: Այդ ժամանակ նա լայն ժպտաց, մինչ դողում էր:

– Հիմա քեզ տեղը բերեցի որպես Թուրքի, քանի որ Թուրքը երբեք չի ընդունի, որ որևէ պատճառով վախեցել է. նրանք ասում են ճշմարտությունը, երբ իրենց է ձեռնտու: Այն, ինչ քեզ հետ կատարվում է, կոչվում է Թուրքական սինդրոմ:

Շուտով հանգամանքներն ինձ ուղղակիորեն ստիպեցին հասկանալ, որ պատմությունն այնպիսի բան է, որ բոլորին է ներքաշում իր մեջ, իսկ պատահականությունը կարող է երբեմն մեզ դարձնել նրա գլխավոր դերակատարները:

ՕԳՈՍՏՈՍ 1886

6. ԴԱԺԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տրապիզոնում նավից իջնելիս, նույն նավահանգստում Անգլիական հյուպատոսարանի անդամներից մեկը սպասում էր Քլիֆորդ Լլոյդին: Իրար մեջ երկար խոսում էին, մինչ լցնում էին դիվանագիտական փոստային փաստագրությունը կառքի մեջ, որը մեզ պետք է տաներ այնտեղ: Քլիֆորդը վերադարձավ այնտեղ, ուր գտնվում էի, և տեսա, որ այլայլված է:

— Շատ եմ ցավում, որ քեզ ասում եմ, որ ներքին գործերի հետ կապված՝ անմիջապես պետք է վերադառնամ Կոստանդնուպոլիս՝ դեսպանատուն: Այնուհանդերձ, քեզ խորհուրդ չեմ տալիս, որ ուղևորվես պաշտոնական փոստային կառքով, քանի որ ինչպես ինձ հայտնեցին, ճանապարհին քուրդ հրոսակների մի խումբ փորձել է կառքի վրա հարձակվել: Վախենում եմ, որ գուցե պահ մտած սպասելիս լինեն, համոզված, որ կառքում գտնվում է պաշտոնյաների աշխատավարձը, իսկ դա ճիշտ է: Այսինքն՝ զղջում եմ, որ քեզ համոզեցի գալ ինձ հետ այստեղ, բայց սա անկանխատեսելի և վտանգավոր վերադարձ է դեպի Միջնադար, թող մեջդ չնչին կասկած չմնա, որ Անատոլիայի խորքում կառչած են մնում դեռ այդ ժամանակաշրջանին: Ի՞նչ ես որոշում, վերադառնո՞ւմ ես ինձ հետ Կոստանդնուպոլիս, թե՞ մի քանի օր մնում ես Տրապիզոնում: Կարծում եմ, որ ողջամիտ կգտնվես և չես փորձի ուղևորվել Էրզրում, ամեն բան այնպես է փոխվել, որ կարող է վտանգավոր լինել:

Իսկապես որ այդ պահին հուսախաբված էի: Դա իմ պատկերացրած ծրագիրը չէր: Բացի այդ, ինչո՞ւ չխոստովանել, որ ես Քլիֆորդի կողքին ապահով էի: Նա քաջատեղյակորեն վերահսկում էր իրադրությունը մի աշխարհի, որն ինձ լրիվ անծանոթ էր:

Բայց ի՞նչ կարող էի անել: Վերադառնալ նրա հետ Կոստանդնուպոլի՞ս: Իմ կարծիքով դա չէր հարցի լավագույն լուծումը: Դա կնշանակեր, որ ի վիճակի չեմ ընդունելու մարտահրավերը և առանց երկար խորհրդածելու նրան պատասխանեցի, որ մնում եմ:

— Ցավում եմ, որ ստիպված վերադառնում ես,— ասացի նրան,— հավատացած եմ, որ ճանապարհի ամենալավ ընկերն ես, բայց քանի որ արդեն այստեղ եմ, նախընտրում եմ մի քանի օր մնալ և կվերադառնամ Կոստանդնուպոլիս նավով, որ ինչպես երևում է, դուրս է գալիս ամեն շաբաթ:

Հրաժեշտ տվեցի Քլիֆորդին, որը դարձյալ ինձ խորհուրդ տվեց ողջամիտ լինել՝ կեսկատակ-կեսլուրջ: Վախենում էի մենակ մնալ, բայց մտածում էի, որ դա այն պատեհ առիթն էր, որ ցույց տայի, որ կարող եմ հույսս ինձ վրա դնել անսպասելի իրավիճակներում:

Մի քանի օր մնացի Տրապիզոնում: Նավահանգստի շրջակայքում և առևտրական մի քանի հարակից փողոցներում միջավայրը հիշեցնում էր Կոստանդնուպոլիսը, բայց կյանքն ավելի դանդաղ էր, կարծես ժամանակը կանգ առած լիներ: Նավահանգիստը լարված առևտրական եռուզեռի մեջ էր, եվրոպական ապրանքներ էր ներմուծում, մանավանդ անգլիական, որոնք գալիս էին Մանչեստրի, Լիվերպուլի և Լոնդոնի տեքստիլ արդյունաբերական ֆաբրիկաներից: Երևում էին հայկական առևտրի շատ կենտրոններ և ամեն տեսակի ապրանքների ներմուծման ու արտահանման ձեռնարկություններ, թեև ամենաաչքի ընկնողները գորգերն էին, դրանցից շատերը պարսկական ոճի, քանի որ սկսել էի տարբերել դրանց ծագումն ու որակը՝ մանավանդ Կոստանդնուպոլսում իմ հայ բարեկամների շնորհիվ: Թվում էր, թե Թուրքերն ու հայերը իրար հետ շատ նորմալ հարաբերությունների մեջ են. թե՛ մի կողմը և թե՛ մյուսը արժանավոր կեցվածք էին ընդունում, երբ իրար հետ խոսքի էին բռնվում: Քրդերի հետ այդպես չէր. այնտեղ նույնն էին, ինչ գնչուները Եվրոպայում, քանի որ գալիս էին քաղաք իրենց անասուններով և ողջ ընտանիքով, այսինքն՝ մի հարյուր հոգով. որոշ դեպքերում տեսա, որ երբ մոտենում էին, վաճառականները չտապում էին փակել իրենց խանութները, կարծես իրենց ներկայությունը խանգարում էր նորմալ կյանքին: Նման մի բան կատարվում էր չերքեզների հետ. նրանցից շատերը պրիմիտիվ մարդիկ էին, թվում էր՝ մեծ ատելություն և նախանձ ունեին հայերի հանդեպ, որոնք, սկսած ամենահայտնի վաճառականներից մինչև համայնքի ամենապարզ անդամները, ցանկացած պահի և հանգամանքի իրենց արժանավայել էին պահում: Ոմանք ինձ դիմում էին առանց այլևայլության՝ որևէ սրճարանի բաց պատշգամբում կամ ռեստորանում: Հավասարապես Թուրքերն էլ, հայերն էլ ուզում էին իմանալ՝ ո՞վ էի ես, որտեղի՞ց էի և ի՞նչ էի անում այնտեղ: Հավանաբար հետաքրքրասի-

րությունից էր: Ստիպված օգտվեցի միակ բանկից, որ գործում էր քաղաքում, Օսմանյան կայսրության բանկի մասնաճյուղից, որի տնօրենը ինձ մտնելիս տեսնելով, դուրս եկավ իր գրասենյակից և ներկայացավ որպես Միդհատ բեյ, և իմանալով, որ ես «Լ'Օրոր»-ի թղթակիցն եմ և Կոստանդնուպոլսում Ֆրանսիական դեսպանատան մամուլի պատասխանատուն, հորդորեց, որ մի գավաթ թեյ խմենք:

Երբ ավարտեց իր երկար բարեմաղթանքների և բարի գալուստների շարանը, նրան բացատրեցի, որ ուզում եմ Կոստանդնուպոլսում իրենց գլխավոր բանկի կողմից տրված մուրհակը փոխանակել հազար թուրքական լիրայով: Երբ նշեցի քանակը, այդ մարդն ինձ գննեց անհանգստացած տեսքով:

– Հազա՛ր լիրա: Ինձ ասացիք հազար լիրա: Դա ավելին է, քան շատ մարդիկ կարող են վաստակել ողջ կյանքում:

Այդ մարդը շարունակում էր ինձ նայել կասկածանքով: Երբ գլխի ընկավ, ժպտաց.

– Խոսքն այն մասին չէ, թե դուք ինչ եք մտածում, մսյե դը Լատուր: Տեսեք, դուք չեք կարող այստեղից գնալ այդ գումարով, որովհետև ձեր կյանքը կվտանգեք: Ինչպես ինձ ասացիք, դուք ուղևորվելու եք Էրզրում... Ձեզ խորհուրդ չեմ տա նման բան անել, հիմա այնտեղ գնալը խենթություն կլիներ:

Տեսեք, գնացեք Սամսուն նավով կամ ավելի լավ է՝ չոգենավով, կամ էլ ձեզ ավելի լավ չի՞ թվում, որ գնաք Ռիզա: Բայց Էրզրո՛ւմ, Թեոդոսիո արքայի քաղա՞քը... Թուրքական է յոթ դար ի վեր... դե ինչ, Թուրքական և չհաշված ժամանակ առ ժամանակ գլխին եկած երկրաշարժերը: Ասածս լսեք, այստեղ՝ Տրապիզոնում շատ լավ են ապրում, շատ հյուրընկալ քաղաք է, և շատ ուրախ ենք, որ ձեզ նման մարդիկ գալիս են այստեղ՝ մեզ հետ որոշ ժամանակ ապրելու:

Լսեք, մենք կանենք հետևյալը, հանում ենք հազար լիրա, այստեղ դուք հաշիվ եք բացում, ներդնում եք ութ հարյուրը և երկու հարյուրով մեկ ամիս սուլթանի պես կապրեք և այն էլ փողերը չռայլելով: Լսեք ինձ և կտեսնեք, թե ինչպես եք չնորհակալություն հայտնելու: Այդքան փող մի վերցրեք ձեզ հետ: Դա ձեզ միայն գլխացավանք է պատճառելու:

Նրա դատողությունները ինձ հասկացրին, որ այդ բարի մարդը իրավացի է: Ճիշտն այն է, որ հավակնում էի ձեռք բերել ամենալավ պարսկական գորգը մորս ուղարկելու համար, բայց ամեն ինչ այլ կերպ էր, պետք է նրա խորհրդով չարժվեի և կլինեի ավելի խոհեմ: Գլխով համաձայնության նշան արեցի:

– Համաձայն եմ: Ձեր հիմնավորումներն ինձ համոզեցին, և չնորհակալ եմ ձեր խորհուրդների համար, բայց ձեզ կլսեմ միայն մի մասում: Հետո կվերցնեմ երեք հարյուր լիրա և կուղևորվեմ Էրզրում: Ինձ հարկավոր է գնալ մինչև այնտեղ:

Տնօրենը մերժեց՝ գլուխը շարժելով:

– Ո՛չ, մի արեք դա, մսյե... Վտանգավոր է... մանավանդ այդքան փողը ձեզ հետ: Այստեղ մի մարդու կյանք մեկ լիրա չարժե: Մի գնացեք այդ քաղաքը: Բայց պարզ է, դուք թղթակից եք, և ես մեկին էլ գիտեի տարիներ առաջ: Ոչ ոք այդքան հաստագլուխ չէ, որքան որևէ թղթակից... Ներեցեք ինձ, մսյե, ձեզ նկատի չունեի:

Երբ հրաժեշտ տվեցի Միդհատ բեյին, չէի դադարում մտածել, որ այդ մարդը շատ անհանգստացած է իմ որոշումից, և գրասենյակի ապակու միջից տեսա, որ ինձ կասկածող աչքերով է գննում: Բայց ես վճիռ էի ընդունել և դուրս եկա բանկից՝ դրամապանակիս մեջ երեք հարյուր թուրքական լիրա՝ մտածելով, որ ամեն դեպքում հաստագլուխ լինելը լրագրողի պարտքն էր:

Տեղեկացա, որ հաջորդ օրը փոստային կառքը դուրս է գալիս լծված չորս ձիով: Այնպես որ մի տոմս ճարեցի՝ ցանկանալով համոզվել, որ եթե այդ փոստը ճամփա է ընկնում, ուրեմն ճանապարհին որևէ վտանգ չի լինի: Կառքում տեղավորվում էին վեց մարդ ուղեբեռների հետ միասին, և երբ նստեցի, երեք ուղևոր ինձ հետաքրքրությամբ գննեցին՝ ողջունելով գլխի թույլ խոնարհումով: Երկուսը թուրք էին, իսկ մեկը՝ պարսիկ, և թվում էին հաջողակ վաճառականներ: Միակը, որ հագնված էր եվրոպական ոճով, ես էի, ինչն էլ պատճառ եղավ, որ երկու ժամ իրենց հեռու պահեին, մինչև որ վերջապես պարսիկը տանելի անգլերենով դիմեց ինձ, բայց մի ահավոր չեչտով՝ կանգառներից մեկում պանդոկում ճաշելու համար: Սպիտակեցրած աղյուսով կամարապատ բակն ինձ մտածելու տեղիք տվեց. այդ երկիրը ոչ միայն տարածությամբ էր գտնվում շատ հեռու, այլև ժամանակով:

– Ինձ կոչում են Մուհամեդ Զիա,– տղամարդը շատ ցածր էր խոսում, փորձելով խուսափել, որ չլսեն իր բառերը: – Զբաղվում եմ հնագույն գորգերով... Իսկապես հնագույն: Մեկն այն քիչ ապրանքներից, որ նախկինում անհամեմատ լավ էին անում: Այլևս չեն հյուսում այնպիսի գորգեր, ինչպես նախկին գորգերը. ոչ մետաքսը, ոչ բուրդը, ոչ ներկերը, ո՛չ էլ տնայնագործների ձեռքերը, ո՛չ էլ գեղեցկության հանդեպ ճաշակը, իրականում ժամանակի հետ ո՛չ մի բան դեպի լավը չի գնացել... առավել ևս գորգերը: Տեսեք, իմ ընտանիքում

արտադրվել են Պարսկաստանի լավագույն գորգերից մի քանիսը: Դրանք պատրաստում ենք ոչխարի բրդից, ուղտի մազից, մետաքսից, անգորայի մոհերից... իմ նախասիրածն են: Ձեզ հետաքրքրո՞ւմ են պարսկական գորգերը: Դա է. իմ արհեստն է:

Համաձայնվելու նշան արեցի, ինձ այն աստիճանի էին հիացնում, որ ցանկացա մեկը, որպես նվեր ուղարկել իմ մորը: Այդ մարդը լավ առևտրական էր և չարունակեց իր զրույցը, մինչև որ դարձյալ նըստեցինք փոստային կառք: Իրականում դա մի ամրակուռ կառք էր՝ երկար ուղևորությունների համար, սակայն բավականին անհարմար՝ ճանապարհների և խճուղիների պատճառով: Նույնն էր, որ մարդ դիմանար մի տանջանքի, որ գնալով ավելի էր սաստկանում ժամ առ ժամ, կարծես թե քեզ հասցնում էին փայտի անվերջանալի հարվածներ:

Ամեն դեպքում դա էր եղել իմ ընտրությունը, և ես տեղի տվեցի, համոզված, որ ի վերջո մի բան կարժենան ճամփորդությունը և փորձությունը:

Այն տեղանքը, որոնցով անցնում էր ճանապարհը, հնամենի էր, եթե չանվանենք նախնադարյան: Նույնն էր, ինչ ճամփորդեինք ժամանակի մեջ. նահանջել էինք մինչև պատմության այն պահը, երբ կարծես այլևս անհնարին պիտի լիներ գտնելու անգամ մի չնչին վկայություն, որ այդ վայրերը վերաբերում են ներկայիս դարաշրջանին:

Մյուս կողմից, անդադար բարձրանում էինք, մինչև երկու հազար մետրի վրա հասնելը, կարծես թե լեռնային նավահանգիստ անցնելիս լինեինք, որի պատճառով էլ թեև ամառվա կեսն էր, երբ երեկոն իջավ, բավականին զովացավ:

Իրիկնամուտին էր, մեզ ընդամենը մնացել էր տասը կիլոմետր հասնելու, որտեղ գիշերելու էինք, երբ անիվներից մեկը սուր ճռռաց և թափով թեքվեց, եղեգների տակ գաղտնի բացված մի անցքի հետևանքով:

Ոչ ոք չէր պատկերացնում, թե չարունակությունն ինչ է լինելու: Մի տասներկու տղամարդ, արտաքինից քուրդ, դուրս եկան իրենց հրացաններով մոտակա ժայռերի արանքներից՝ մեզ վրա նշան բռնելով: Ինչ խոսք, անկասկած հրոսակներ էին, և հիշեցի Միղհատ բեյի՝ բանկի դիրեկտորի անհանգիստ աչքերն ու նախազգուշացումները: Այդ պահին ինձ ոչ թե փողն էր անհանգստացնում, այլ կյանքից զրկվելը: Ամեն դեպքում վտանգավոր իրավիճակ էր, և մի պահ մըտքովս անցավ, որ չպետք է այնտեղ գտնվեի, ոչ էլ Թուրքիայում, այլ Փարիզում, քաղաքակիրթ վայրում:

Իսկապես քրդեր էին: Մեզ անմիջապես իջեցրին, խուզարկեցին և մեզանից խլեցին ցանկացած արժեքավոր իր, ներառյալ մատանիներ, ժամացույցներ, դրամապանակներ: Անչուչտ ինձնից խլեցին թուրքական երեք հարյուր լիրան, չնայած այդ ամենին, այդ միջոցին ներքուստ օրհնում էի իմ բարեկամ Միղհատ բեյին, որ հասցրել էր փըրկել տարեկան աշխատավարձիս մեծ մասը: Կռահեցի, որ մեզ մեծ վնասներ չեն պատճառելու, քանի որ այդ մարդիկ այն, ինչ փափագում էին, մեր փողն էր և զարդերը: Քիչ անց եկան ձիեր հեծած ուրիշ մարդիկ և մեզ ստիպեցին հեծնել ուրիշ ձիեր, որոնց բերեցին սանձերից բռնած: Դա ինձ մտահոգեց, քանի որ մի պահ հաստատ կարծում էի, թե նրանց միակ նպատակը մեզ կողոպտելն էր և հետո լքելը: Բայց չէր թվում, թե դա էր իրենց մտադրությունը առնվազն այդ պահին, քանի որ մեզ տանում էին ինչ-որ անծանոթ վայր: Տեսա երկու թուրք վաճառականների աչքերում արտացոլված ահը: Պարսիկը թողնում էր իրավիճակի հետ հաշտվելու տպավորություն:

– Մենք Աստծու ձեռքում ենք,– չչնջաց, երբ հեծնում էր իր ձին, իր ճակատագրին հնազանդվելու մի ժեստով:

Թեև գնում էինք թեթև վարգով, վախեցա, որ կարող էինք գլորվել նեղ ճանապարհներից մեկից, լուսավորված լիալուսնով, որը փայլատակում էր գլխներիս վերևում, սակայն քուրդ հեծյալները պետք է ճանաչելիս լինեին ամեն քար և արահետի ամեն ոլորան, քանի որ իմ կարծիքով անխոհեմ կլիներ, որ առանց վարանելու ձիերին ստիպեին գնալ այդպիսի ժայռոտ վայրերով և այն էլ մշուշում:

Վերջապես հասանք մի քանի անձավների, որոնք տեղակայված էին սարերի արևելյան ճակատում: Մենք գտնվում էինք երկար ու խոր կիրճում, որի միջով հոսում էր մի ջրահորձանք, քանի որ լսում էինք ջրերի հեռավոր մռնչոցը, որոնք գահավիժում էին դեպի կիրճը:

Բավականին վախեցած իջանք ձիերից, և խարույկի չուրջ նստած մի քանի տղամարդ ձեռքի շարժումով հասկացրին, որ մոտենանք իրենց: Նրանցից մեկը՝ առաջնորդի տեսքով, ինձ գոռաց թուրքերեն:

– Ի սեր ամենագթառատ Աստծու, որտեղացի՞ ես, օտարակա՞ն: Ի՞նչ ես անում ես վայրերում: Հարո՞ւստ ես: Ինձ ասել են, որ մոտդ ունեիր երեք հարյուր թուրքական լիրա... Դա շատ փող է այդքան երիտասարդ մարդու համար... Ամեն դեպքում շնորհակալություն, որովհետև էս թշվառական թուրքերը մոտներն ունեին դրա տասներորդ մասը... Վա՜յ երազանքների և խաբեությունների վաճառականներ... Իսկ պարսիկը, դրա ունեցածը աղոթքի գորգն է: Ասել կուզի՝ դու այս ուղևորության ամենահարուստն ես:

Այդ մարդը մոտենում էր ինձ այն չափով, ինչ խոսում էր, մինչև որ համարյա կպչում էր դեմքիս, ձեթի ճրագով լուսավորելով երկուսիս: Անկասկած քուրդ էր, և մոխրագույն աչքերն էլ, ոնց որ գայլինը, մթության մեջ պսպղում էին:

– Անունդ ի՞նչ է, օտարական: Էս սարերում անհավատներ չենք ուզում: Որքա՞ն կարժենաս: Հազա՞ր լիրա: Երկու հազա՞ր... Գուցե ավելի՞ն: Շուտով կիմանանք: Հակառակ դեպքում՝ կստանան քո գլուխը: Մի պահանջագիր կուղարկենք քո դեսպանատուն, որպեսզի պատասխան տան: Ի սեր Աստծու, ես լուրջ եմ ասում: Հեյ դո՛ւ, Մուստաֆա: Էս անհավատի դիմաց որքա՞ն ուզենք: Ձեզ հարմա՞ր է թվում երկու հազար լիրա,– մարդը նորից մոտեցավ ինձ՝ զննելու իմ արձագանքը: – Կամ գուցե սխալվո՞ւմ եմ: Դո՛ւ դիր գինը, անհավատ: Ասա մեզ, թե ինչ կարժենա քո գլուխը: Ասա՛ ինձ, հենց հիմա:

Այն, ինչ այդ մարդն ասում էր, ես միայն որոշ բառեր էի հասկանում, բայց պարսիկը, որ չէր կորցրել իր սառնասրտությունը, տեղավորվեց իմ հետևում և թարգմանում էր ինձ տանելի ֆրանսերենով: Սարսռացի՝ հասկանալով, որ իրոք այդ քուրդ հրոսակը ոչ թե պոռոտախոսում էր, այլ գցել-բռնել էր, որ ես իր համար շատ արժեքավոր ավար եմ:

Չնայած այդ սպառնալիքներին՝ չկամեցա կորցնել հոգեկան հավասարակշռությունս և ընդունեցի խիզախ մարդու կեցվածք, պատասխանեցի ֆրանսերեն՝ հատ-հատ արտասանելով բառերս՝ ժամանակ տալով իմ թարգմանչին:

– Չգիտեմ, թե ովքեր եք, ոչ էլ ինձ հետաքրքիր է: Եկել եմ իմ սեփական աչքերով տեսնելու, թե ինչ է կատարվում Անատոլիայում, քանի որ ինձ ասել են, որ երկու տեսակի քաղաքացիներ կան այս երկրում: Թուրքերը և մնացածները: Ես «Լ'Օրոր»-ի՝ մի չատ կարևոր թերթի լրագրող եմ: Այս բառը ուզում է արտահայտել նոր օրվա, ավելի լավ ապագայի հույս:

Տեսա, թե ինչպես էին կամաց-կամաց մոտենում մեզ, հասկացա, որ իմ արձագանքը դրական արդյունք էր տվել:

– Ես հարուստ չեմ, սա իմ ունեցած ամբողջ փողն է, ապրում եմ իմ աշխատանքով, բայց եթե դուք դրա կարիքն ունեք, ոչինչ, ես նորից այն կվաստակեմ: Իմ երկիրն ունի մի խորհրդանիշ իր դրոշի վրա: Հավասարություն, եղբայրություն՝ մարդկանց և ժողովուրդների միջև, բայց մանավանդ՝ ազատություն: Որոշ չափով ծանոթ եմ քրդերի պատմությանը, գիտեմ, թե ով է Բեդիր խանը:

Դուք պետք է որ լինեք Ղզլբաշի ցեղակիցներից և գիտեմ, որ քաջարի կռվողներ եք... Բայց թշնամու հարցում կարծում եմ, որ սխալվել եք: Ես եկել եմ մինչև այստեղ՝ աշխարհին բացատրելու, թե ինչո՞ւ են ճնշված արժանավոր մարդիկ, ինչո՞ւ չունեք ձեր սեփական հայրենիքը, ինչո՞ւ են ձեզ վտարել և հասցրել նրան, որ ստիպված հարձակվում եք նրանց վրա, ովքեր սեփական կամքով հասնում են այստեղ: Գուցե ես սխալվում եմ, գուցե ես զղջամ իմ որոշման համար, բայց քեզ մի բան կասեմ: Թող ինձ վերադառնալ և թույլ տուր ինձ, որ քրդերի մասին ճշմարտությունը պատմեմ, դա չարժե՞ երկու հազար լիրա... Արժե չատ ավելին: Դու համաձա՞յն ես:

Քուրդ ղեկավարի կեցվածքը փոխվել էր: Ինձ զննում էր, եթե ոչ հարգալից, այո՛, որոշ հիացմունքով՝ համոզվելով, որ իր սպառնալիքները ոչ մի տպավորություն չէին թողնում, բայց չնայած դրան՝ նրանում ագահությունը կարող էր ավելին անել, քան ցանկացած այլ զգացում և կտրուկ շրջվեց՝ թիկունքն ինձ դարձնելով:

– Բառե՛ր: Բառե՛ր: Անհավատներդ ավելի չատ եք խոսում, քան կանայք և հետո ոչ մի խոսք չեք կատարում: Այդտեղից կգնաս, երբ որևէ մեկը հանուն քեզ վճարի երկու հազար լիրա: Եվ եթե անցնի երկու ամիս, նրանց կուղարկեմ քո գլուխը: Դա էլ կլինի քո գիշլիկը: Ամեն դեպքում քո բառերը ոչ մի բանի տեղ չեն անցնի, որովհետև քրդերս միշտ մնալու ենք քրդեր: Եվ այստեղ դեռ երբեք ոչ ոք թերթ չի կարդացել: Այստեղ դրանք կոչում ենք կեղտոտ թղթեր՝ ներծծված ստերով:

Ամենահարմար պահը չէր որևէ քննարկում սկսելու համար, և մտածեցի, որ հակահարված տալը մի մեծ օգուտ չի բերի: Այդ ժամանակ մեզ տարան քարայրի ներսի մասը և մեզ թողեցին հրացաններով զինված իրենց մարդկանցից մեկի հսկողությանը: Երբ նրան սևեռուն նայեցի, այդ անհատը, նստած ժայռի բարձր մասում, ձեռքով խփեց իր հրազենի փողին, կարծես հասկացնում էր մեզ, որ խենթություն թույլ չտայինք:

Պարսիկը նստեց կողքիս և սկսեց խոսել ինձ հետ իր առանձնահատուկ անգլերենով, այնքան ցածր, որ հազիվ էի նրան լսում:

– Այս քուրդ ավազակներին ամիսներ ի վեր փնտրում են ոստիկանությունը և բանակը: Նրանք ասում են, որ հայրենասերներ են, բայց իրականում հանցագործներ են, որոնք կախաղան կհանվեն, հենց որ բանտարկվեն: Առաջնորդը Ջեզիրեից է, նրան կոչում են Մուհամեդ Կուլիխան, և գլուխը բարձր գին ունի: Քեզ մի բան ասեմ,

Թուրքերը չեն հանդուրժի, որ մի կարևոր օտարերկրացի, ինչպիսին դու ես, մնա այս իրավիճակում: Դու մեր հույսն ես, եթե հանուն մեզ լիներ, ոչ մեկն անգամ մատը չէր շարժի, բայց մի ֆրանսիացի դի-վանագետ և լրագրող... Գալու են քեզ ազատելու, որի դեպքում քեզ որպես պատանդ կօգտագործեն, իսկ դա վտանգավոր կլինի: Տես, մեր միակ լուծումը փորձել փախչելն է, քիչ են՝ հազիվ տասը կամ տասներկու մարդ:

Հենց որ պարեկության գնան կեսը կամ ավելին, գուցե օգտվենք առիթից: Այս երկու Թուրքերը չափից ավելի գեր են ու ծեր են թվում, անտառով փախչել կարողանալու համար... Այնպես որ, ավելի լավ է նրանց ոչինչ չասենք, և բացի այդ, կարծում եմ, եթե այդպես չվարվենք, մեզ ամեն դեպքում կսպանեն: Համաձա՞յն ես:

Հառաչեցի: Մտել էի այդ անհեթեթ պատմության մեջ՝ չնայած Միդհատ բեյի նախազգուշացումներին, և այդ էր պատճառը, որ իրավունք չունեի բողոքելու: Իրավիճակը բարդ էր, և չէինք կարող ինքներս մեզ խաբել: Որքան ինձ հայտնի էր, քրդերը շատ էլ չեն գնահատում կյանքը, ոչ էլ անգամ իրենց սեփականը: Ներքուստ համաձայնվեցի, մինչ խորհում էի, որ պատահականությունը այդ պարսիկ վաճառականի կյանքը կապել է իմ կյանքի հետ: Ինչ տարօրինակ ճակատագիր:

Այդ ժամանակ տեսա, որ մոտենում է քրդերից մեկը, հավանաբար նրանցից, որ գտնվում էին այնտեղ, ամենատարիքով: Այդ մարդը մոտեցավ մեզ, նստեց գետնին ավելի թեթև, քան կսպասվեր այդ հասակի տեր մարդուց և սկսեց խոսել աղքատիկ ֆրանսերենով, բայց բավարար՝ հասկանալու համար:

– Լսեցի խոսքերդ, օտարական: Դու նույնպես Փարիզի՞ց ես:

Հաստատեցի՝ վրաս պահելով նրա հայացքը:

– Ինձ քո լեզուն սովորեցրել է մի միսիոներ, երբ երեխա էի: Նրան թույլ չտվեցինք քարոզել քո կրոնը, բայց մեր ցեղապետը համաձայնվեց, որ երիտասարդներին ֆրանսերեն սովորեցներ: Նրան թողեց ապրել, որովհետև ուզում էր, որ իրեն պատմեր Նապոլեոնից: Ասում են, որ լրագրող ես: Մինչև հիմա ֆրանսիացիները ոչինչ չեն արել քրդերի համար, մինչդեռ նրանք Թուրքերի լավագույն հովանավորներն են: Նույնիսկ Կոստանդնուպոլսում, հարուստների սրահներում խոսում են ֆրանսերեն,– ծեր քուրդը թքեց ի նշան արհամարհանքի: – Մեզ արհամարհում են նրանք, ովքեր իրականում մեզ չեն ճանաչում: Գիտե՞ս թե ինչու: Քրդերս երբեք չենք խոնարհվել սուլթանի առջև, և դա նրանք մեզ չեն ներում, ոչ էլ այն, որ մենք դարեր առաջ

ենք այստեղ եկել, նախքան իրենց գալը... Եվ կարծում եմ՝ կմնանք այնքան, մինչև իրենք հեռանան: Տուրքեր չենք վճարում, որովհետև ճորտ չենք եղել և ունենք մեր սեփական առաջնորդները: Էրզրումում Այլադին բեյն է՝ Վանա լճի հարավի լեռներում Հեքքիար էմիրը, մնացած տարածքում՝ Բոխտան էմիրը, մեր ունեցած ամենալավը՝ Բեդիր խանն է: Աստված թող կողքին լինի: Էհ, եթե քրդերն ու հայերը միավորված լինեին Թուրքերի դեմ... Թուրքերն են թշնամացրել մեր ժողովուրդներին:

Մարդը մի քանի պահ լուռ մնաց: Հետո նրա աչքերը բոցավառվեցին՝ արտացոլելով խարույկի բոցերը:

– Ֆրանսիացի՛, ազատ ես, կարող ես գնալ: Քեզ կբացատրեմ: Անունս Ահմեդ խան է, և ես եմ այս սարերի տերը, բայց իմ պայքարը չի անցնում օտարերկրացի պատանդ վերցնելով, իսկ Ֆրանսիայի դեմ ոչինչ չունենք, թեև երբեմն մտածում ենք, որ Ֆրանսիան, այո՛, քրդերի դեմ բան ունի: Վաղ առավոտյան դու և պարսիկը կարող եք հեռանալ:

Թուրքերը ոչ, նրանք մեր թշնամիներն են: Երկուսն էլ հարկահավաքներ են, նրանց ճակատագիրը որոշված է: Օգտվում են թույլ մարդկանց վախից, միայն դա է արժանի պատժի: Երբ վերադառնաս Ֆրանսիա, պատմիր այնտեղ ճշմարտությունը: Ասա նրանց, որ Անատոլիայում կա մի տարածք՝ Քրդստան անունով, որտեղ կա տգիտություն, աղքատություն, հետամնացություն, բայց, չնայած այդ ամենին, նրա ժողովուրդը չի հնազանդվել բռնակալներին և ազատությունն են դարձրել իրենց դրոշը:

Ծեր մարդը տեղից վեր կացավ՝ անսովոր ճկունությամբ ծալելով սրունքները:

– Եվրոպան այնպիսի վայր է, որտեղ չէի կամենա ապրել: Այնտեղ խոսում են ազատությունից և հավասարությունից: Մինչդեռ այնտեղ կառավարողները բանկիրներ ու առևտրականներ են: Իմ ժողովրդին դեռ կառավարում է ազատությունը:

Մարդը հեռացավ մինչև խարույկը, մինչ պարսիկը, որն ամեն ինչ հասկացել էր, վրաս գաղտագողի գոհունակության հայացք էր գցում:

Հազիվ էր լուսացել, մի քուրդ երկու ձի բերեց և ցույց տվեց, թե ինչ ուղղությամբ պետք է գնանք: Պարագլուխ Ահմեդը մոտեցավ՝ ինչ-որ բան աջ ձեռքում բերելով:

– Ահա, վերցրու քո փողը: Պատմիր քո թերթում, թե ովքեր են քրդերը: Հիմա գնացեք, Աստված ձեզ հետ:

Մի երկու ժամ քչեցինք ձիերին, մինչև գտնելը Էրզրում տանող ճանապարհը: Զէի դադարում մտածել, սակայն անկախ ամեն ինչից՝ ես ցնծության մեջ էի և մտածեցի, որ այս փորձությունը մի բան արժեր:

Հազիվ մի քանի րոպե էր, ինչ գլխավոր մայրուղու վրա էինք, երբ ձիու վրա նստած մի քանի զինվորներ շրջապատեցին մեզ: Լեյտենանտը մեզ կասկածանքով գննեց: Երբ նրան բացատրեցի, թե ով եմ, ինձ վստահաբար ասաց, որ մեզ մեռած էին համարում, համոզված, որ քրդերը մեզ սպանած կլինեն:

Այնուհետև մեզ տարան Էրզրում, որտեղ պետք է տեղեկացված լինեին: Դա կարևոր բնակավայր էր, որի փողոցները ամառային փոթորկի հետևանքով լի էին ցեխով, և որտեղ ապրում էին շատ քրդեր ու հայեր: Թուրքերն այնտեղ մեծամասնություն չէին կազմում, թեև, ինչպես որ ինձ պատմել էր Ջլիֆորդ Լլոյդը, զբաղեցնում էին բոլոր վարչական և զինվորական պաշտոնները:

Ոստիկանության պետը բավականին երկար հարցաքննեց մեզ: Զէր կարողանում հասկանալ, թե ինչու էին մեզ ազատ արձակել և միթե հնարավոր էր, որ փողիս ձեռք տված չլինեին: Ի վերջո ավարտեց՝ ասելով, որ ոչինչ չի հասկանում և մեզ հրաժեշտ տվեց տարակուսանքով:

Մենք տեղավորվեցինք քաղաքի միակ հյուրանոցում: Մնացածը պանդոկներ էին կամ մասնավոր տներ, որոնցում հյուրեր էին ընդունում: Բավականին շոգ էր, և մի պահ մեկնվեցի խսիրի վրա, գետնին:

Մեկ տարուց ավելի էր, ինչ ես այդ երկրում էի, սակայն հազիվ էի սկսել գլուխ հանել որոշ կարևոր բաներից, թեև դա ընդամենը հպանցիկ իմացություն էր:

Համոզված էի, որ այնտեղ շատ բաներ պետք է տեղի ունենային և ցանկանում էի դրանց ականատեսը լինել: Հետո, այդքան հույզերից սպառված, խոր քուն մտա՝ առանց կարողանալու գլխիցս հանել պարագլուխ Ահմեդ խանի մոխրագույն աչքերը:

ՕԳՈՍՏՈՍԻ ՎԵՐՋԵՐ 1886

7. ԴԱՎԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Էրզրումն ինձ հետաքրքիր քաղաք թվաց, թեև ցերեկվա անտանելի շոգը ինձ խանգարում էր բավականություն ստանալ նրանից: Այնպիսի մի վայր, որի բազմադարյան պատմության չունչը չոչափելի էր նրա միջավայրում: Մինչև այնտեղ հասել էի զուտ հետաքրքրությունից մղված, բայց հանգամանքներն ինձ ներքաշեցին մի դժվարին իրադարձության մեջ:

Ոստիկանության պետը՝ Մահմուդ բեյ անունով մի թուրք, բանակի հին սպա, կոպիտ և կասկածամիտ մարդ, նորից ինձ համառորեն հարցրեց սարերում պատահածի չուրջ, բայց ես նրան կրկնեցի նորից ու նորից, որ քրդերը չէին ցանկանում այդ երկրների հետ ոչ մի կոնֆլիկտ: Մահմուդը ինչ-որ պատճառով մինչև վերջ չէր համոզվում և շատ անգամներ ինձ կանչել տվեց:

Սկսեցի գլխի ընկնել, որ թուրքերը երբեք չեն հավատում, ինչ ուրիշն է իրենց հավաստիացնում: Այն միտքը, որ ճշմարտությունը և սուտը մի քանի երես ունեն, իրենց ազգային մտածողության մի մասն է: Նույն բանն էր, ինչ բառերով էին սակարկում և միշտ հնարավորություն էին գտնում այլ մեկնաբանություն անելու: Միայն համառությամբ, շատ անգամներ բռնի ուժի գործադրմամբ, ընդունակ էին հասնել այն ճշմարտությանը, որ հավակնում էին:

Ինչ վերաբերում էր պարսիկին՝ Մուհամեդ Զիային, դարձել էր իմ ստվերը և ամենուրեք ինձ ուղեկցում էր: Համոզված էր, որ ես նրան բախտ էի բերում և չէր դադարում կրկնել դա ցանկացած մարդու, ով հարցներ: Խելացի մարդ էր և խորամանկ, խոսում էր բավականին տանելի ցանկացած լեզվով և գիտեր շատ հետաքրքրաշարժ բաներ, ունակ էր սահուն խոսակցություն վարել ռուսերեն, գերմաներեն, ֆարսի, արաբերեն, թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն, հայերեն և շատ տեղային բարբառներով: Այնուհանդերձ մեծ կարևորություն չէր տալիս այդ հատուկ ճկունությանը: Պարզապես այն կարծիքին էր, որ որևէ բան մարդ կարող է իմանալ միայն այն լեզվի միջոցով, որին տիրապետում է:

Երկուսով վերապրել էինք մի այնպիսի դրամատիկ իրավիճակ, որն ինձ երաշխավորում էր նրան՝ որպես ողջ կյանքում բարեկամի: Նա ինձ հրավիրեց իր հետ գնալ Թեհրան և Թավրիզ, որտեղի ծնունդ էր: Ինձ այնքան չնորհակալ էր, որ ցանկանում էր ինձ ներկայացնել իր ընտանիքին. չէր դադարում կրկնել, որ եթե ես այդ ժամանակ չլինեի, ինքն արդեն մեռած կլիներ:

Նրան ասացի, որ գուցե՝ հետագայում, որ ես պետք է հնարավորին չափ շուտ վերադառնամ Կոստանդնուպոլիս, որտեղ ինձ սպասում են իմ մասնագիտական պարտականությունները:

Այդ օրերից մեկում էրզրումում, երբ ավարտում էի ճաշը, ինձ մոտեցավ վաթսունին մոտ մի մարդ, անկասկած հայ, քանի որ իր դեմքը, աչքերի արտահայտությունը, ինքն ամբողջովին այդ ռասայի նախատիպն էր: Հագնված էր արևմտյան ոճով, թեև հագուստը, որ մոդայից դուրս էր եկել, գործածելուց և ժամանակից մաշվել, կրում էր մեծ արժանապատվությամբ: Տեսքից երևում էր, որ նախկինում ավելի լավ ժամանակներ ապրած կլիներ: Ձեռքն ինձ պարզեց, մինչ կներկայանար:

– Մսյե դը Լատո՞ւր: Ինձ կոչում են Դավիթ Մուրադյան: Եթե ձեզ նեղություն չէ, կուզենայի մի փոքր խոսել ձեզ հետ: Ինչպես գիտեք..., այս քաղաքներն այնքան փոքր են, երկու օրվա մեջ ողջ քաղաքը խոսում է մի օտարերկրացուց... Հիմա այդ դուք եք:

Նրան հրավիրեցի նստել և ինձ հետ կիսել ճաշը, բայց միայն սուրճ ցանկացավ: Դպրոցի ուսուցչի կամ պաշտոնյայի տպավորություն էր թողնում: Սկզբում երկչոտ էր թվում, բայց երբ համոզվեց, որ նրան լավ եմ ընդունում, սկսեց խոսել անկաշկանդ գուցե մի քիչ վերամբարձ, բայց ճիշտ ֆրանսերենով:

– Շնորհակալ եմ ձեր բարեհաճության համար, մսյե: Այստեղ քիչ են գալիս եվրոպացիներ, գալիս են վրացի և ռուս վաճառականներ, սակայն այդ երկրները Եվրոպա չեն, թեև նրանք այդ են պնդում: Ինչ վերաբերում է հյուպատոսներին, ինչպես գիտեք, կան Ֆրանսիական, Անգլիական և Գերմանական հյուպատոսարաններ, բայց գրեթե անմատչելի սովորական մարդկանց համար: Ուզում եմ ասել, որ եթե որևէ եվրոպացի ինչ-որ խնդիր ունի՝ փորձում է լուծել անմիջապես: Եվրոպացիները ինձ նման մեկին հազվադեպ են ընդունում: Ինձ ցավ է պատճառում ասել, բայց հայերս Եվրոպայի համար ոչինչ ենք:

Մուրադյանը խոսում էր դառնացած, ես էլ իմ հերթին բավականաչափ տվյալներ ունեի և գիտեի, որ այդ մարդու խոսքերը ճշմարիտ

են: Ես, անխոս, հասկացա, որ նա յուրահատուկ մարդ է: Ինձ դիմելու նրա ձևը հատուկ էր լայնախոհ մտավորականի, և հանկարծ ինձ սաստիկ հետաքրքրեց այն, ինչ ինձ պատմում էր:

– Ինձ տեղեկացրել են, որ դուք լրագրող եք: Ձեզ նորից եմ կրկնում, սրա պես քաղաքներում նորությունները վառոդի պես են տարածվում: Մի ֆրանսիացի թղթակից՝ էրզրումում: Դա այնպիսի բան է, որ ամեն օր տեղի չի ունենում: Մանավանդ, եթե այդ թղթակիցն ունի դիվանագիտական անձնագիր:

Ես հայ ազգային ասամբլեայի անդամ եմ, որ ինչպես գիտեք՝ ներկայացնում է հայ միլյեթը: Պետք է իմանաք, որ կայսրությունում կան վեց ճանաչված միլյեթներ, հունականը, բուլղարականը, հրեականը, հայկականը և հայ կաթոլիկականը: Բայց մի հավատացեք ոչ մի բանի: Սուլթանը միայն հավակնում է ցույց տալ, որ այստեղ՝ Օսմանյան կայսրությունում, փոքրամասնությունները պաշտպանված են և հարգված: Իրականությունից հեռու ուրիշ ի՞նչ կա: Սակայն, պարզ է, ինչո՞ւ պետք է ինձ հավատաք: Մի անծանոթ ծեր հայ գալիս է, ձեզ պատմում է իր վարկածը: Տրամաբանական կլինի, որ մտածեք, նա ինձ արդյո՞ք ճշմարտությունն է պատմում: Ինչո՞ւ պետք է հավատամ այս մարդուն, որը գուցե ատում է թուրքերին ինձ անհայտ պատճառներով:

Թույլ տվեք ձեզ բացատրել: Կոստանդնուպոլսի շատ հայեր, մանավանդ բարձր խավի, պատրիարքին մոտ կանգնած մարդիկ, անչուշտ հոգևորականության մեծ մասը և նրանք, ովքեր հասել են ամեն ինչի, գուցե եսասիրական տրամաբանությունից ելնելով, չեն ուզում խնդիրներ ունենալ: Այդ Սահմանադրությունը կազմվել է նրանց համար, ովքեր ընդունում են այս իրավիճակը: Այդ կարգի մարդիկ չեն ցանկանում իրենց ոիկի ենթարկել: Սուլթանը լավ գիտեր, թե ինչ էր անում՝ ստեղծելով ահռելի կեղծիք միայն մի նպատակով, որ փակեր նրանց բերանները, ովքեր քննադատում էին փոքրամասնությունների նկատմամբ թուրքերի վարքագիծը: Ո՛չ, հավաստիացնում էին, դրանց բանի տեղ մի դրեք: Բայց չէ՞ որ ունեն իրենց սահմանադրությունը: Էլ ինչ են ուզում..., – Մուրադյանը հատուկ ընդգծում էր իր բառերը: – Ուրեմն եկեք ասենք՝ այո՛, ազատությո՛ւն, իսկական ազատությո՛ւն, ոչ թե մնջախաղ, որի ներքո փորձում են ծածկել զարհուրելի ճշմարտություններ:

Լսեք, մսյե: Հայերն անգամ չնչին իրավական երաշխիք չունեն: Ինչ եմ ասում, ո՛չ մի: Պետք է իմանաք, մուսուլմանի խոսքը միակն է, որ օսմանյան դատարաններում արժեք ունի: Ցանկացած դատական

հայցում, եթե կողմերից մեկը հայ է, կանխապես դատապարտված է: Իսկ բանտերում անմարդկային ձևով են տանջում հայերին, կարծես թե մենք նրանց վատթարագույն թշնամիները լինենք... առանց նվազագույն դատավարական երաշխիքի: Հայերը մահապատժի են ենթարկվում միանգամից, շների պես:

Հայերս նրանց համար միմիայն խոչընդոտ ենք: Ոչինչ չեն ուզում իմանալ այն մասին, որ մենք արդեն պետություն էինք, քրիստոնյա տարածք, երբ անսպասելի եկան նախճիրով և հրով: Գալիս էին Կենտրոնական Ասիայի անծայրածիր տափաստաններից, անվերջանալի ձյան մրրիկներից, դաժան ձմեռներից, ամռան անողոք արևից և երբ հասան Հայաստան, հայերի նախնյաց հողը, չէին հավատում իրենց աչքերին: Համոզվելով, որ դա իսկական դրախտ է, անմիջապես վճռեցին, որ այդ հողը պետք է իրենցը լինի: Ինչ կարևոր էր, թե բնակեցված էր, հրաչալի մշակված, որ հայերն այնտեղ ապրում էին հազարամյակներ ի վեր, նրանց համար ոչ մի նշանակություն չուներ, սովոր էին հողին հավասարեցնել այն տարածքները, որտեղով անցնում էին: Ահ, դժնի ճակատագիրը... խեղճ Հայաստան:

Դավիթ Մուրադյանը հետևում էր, թե իր ասածները ինչ ազդեցություն էին թողնում ինձ վրա: Պոռթկուն շարժում էր իր երկար ձեռքերը, կարծես վեհաժողով ղեկավարելիս լիներ: Բայց ավելի քան պատգամավոր կամ զուտ քաղաքական գործիչ՝ այդ մարդը խորքում բանաստեղծ էր, ներքուստ ջախջախված իր երկրի տխուր ճակատագրի պատճառով, որի հետ ոչ մի կերպ չէր հաշտվում: Մի պահ լուռ մնաց, ասես չունչ էր առնում, հետո, ծանր հառաչանքով շարունակեց.

– Այն օրը, երբ առաջին թուրքմենը տափաստաններից հայտնվեց Հայաստանի հովիտներում, մեր ճակատագիրը կնքվեց: Ինչպե՞ս կարող էինք մրցել այնպիսի ցեղերի հետ, որոնք թվով գերակշռում էին. այդ եկվորների հորձանուտը թվում էր անվերջանալի: Մարտերում կոփված մարդիկ էին, անողոք, որոնց համար կյանքը և մահը այլ բան չէին նշանակում, քան ավար և արյունահեղություն: Ի՞նչ գթասրտություն կարող էին հուսալ գառները գայլից:

Նախ, եթե ուզում եք ինձ հասկանալ, գործի դրեք ձեր միտքը, չատ եմ խնդրում: Պատկերացրեք, որ խաղաղ հովիտներում, որտեղ տիրում էին անդորը ու բարգավաճում, հողի մշակումը բավարար բերք է տալիս, իսկ հոտերը աճում են տարեցտարի, ջուրը բարձր գագաթներից հորդառատ թափվում է և թույլ տալիս մշակելու այգիներ ու տնամերձներ, տղամարդիկ ոչ թե դաշույնի, այլ գրքի կարիք ունեին,

կանանց անհանգստությունը իրենց դուստրերի ապագա ամուսնու լավ ընտրությունն էր, որ իրենց ընտանիքներում ոչինչ չպակասեր... Ես ձեզ փերիների հեքիաթ չեմ պատմում: Սա էր Հայաստանը, խաղաղության և բարգավաճման երկիր, որում եկեղեցիների և վանքերի զանգերի ղողանջը ավետում էր ժամերի փոխվելը:

Հանկարծ, ոնց որ անեծք, հայտնվեցին տափաստանի փոքր ձիերի վրա չեղաչք հեծյալներ՝ նիզակներով, նետ ու աղեղով, կաչվե վահաններով և կոպիտ կարված մորթե փափախները գլխներին: Հորդաների առաջին հրոսակներն էին, որ Արևելքից խուժելով, ամեն ինչ ոտքի տակ տվեցին, սպանելով տղամարդկանց, բռնաբարելով կանանց, առևանգելով մանուկներին, անասուններին քշելով իրենց ճամբարները, այրելով տներն ու խոտանոցները: Եկել էին Թուրքերը: Հետո, զենքի ուժով, ստիպված ընդունեցինք ավատատիրություն՝ ջիմիզների կամ պաշտպանվածների կարգավիճակ, որով մեզ միայն երաշխավորում էին ապրելու իրավունք, եթե դա կարելի էր կյանք անվանել:

Հաճախ մտածում եմ, որ Մեսրոպը՝ հայ գրերի ստեղծողը, սխալվել է: Միշտ այն համոզմանն էր, որ մեր ժողովրդին սպասում է ապագա և փառավոր պատմություն, և... տեսեք, չատ հլու հնազանդ ժողովուրդ ենք, այն աստիճան, որ մեր նախնյաց հողի վրա ձի նստելու իրավունք չունենք, մեր հազարամյա զանգերը ղողանջել չեն կարող քաղաքներում և ստիպված մեր հանգուցյալներին հակում ենք լռությամբ:

Լսեք, մայե, ինձ ինտուիցիան է մղել գալ և ձեզ հետ խոսել: Լավ, ճշմարիտն այն է, որ կինս է ունեցել այդ ներքին կոահումը, ես կասկածում էի գալ և ձեզ անհանգստացնել, բայց նա պնդեց, որ գամ... և այստեղ եմ: Գուցե ձեզ հոգնեցնում եմ իմ չաղակրատանքով, սակայն դուք պետք է ինձ ներեք: Իմանալով, որ մի ֆրանսիացի թղթակից այստեղ է..., ինչ արած, չէի կարող բաց թողնել այդ պատեհ առիթը:

– Ո՛չ, պարոն Մուրադյան,– մի պահ չհիշեցի անունը,– ինձ չեք խանգարում, ընդհակառակը, ինձ չատ օգտակար է ձեր այցը: Բացի այդ, ես լավ հայ ընկերներ ունեմ Կոստանդնուպոլսում և ինչ-որ տեղ ես ձեզ պարտական եմ: Այնպես որ, ձեզ խնդրում եմ, որ չարունակեք, քանզի այն, ինչ պատմում եք, ինձ չատ պիտանի է: Ես ձեզ լսում եմ համակ ուշադրությամբ, ձեր պատմելու ձևը անչափ տպավորիչ է:

– Լավ, չնորհակալ եմ ձեր սիրալիր վերաբերմունքի համար: Ձեզ կպատմեմ հենց սկզբից: Պետք է իմանաք, որ ներկայիս իրավիճակը բխում է սուլթան Աբդուլ Մեջիդ II-ի 1839 թ. իշխանության հասնե-

լուց: Առաջին հերթին նա ուժի մեջ դրեց Մահմուդ II-ից ժառանգած հռչակագիրը, այդ հռչակագիրը կրում էր շատ բանաստեղծական խորագիր, քանի որ, ինչ խոսք, հռետորության մեջ ոչ ոք Թուրքերին չի կարող հաղթել, «Վարդերի տան հայտնի գրվածքը»[1]: Նրանում խոսք կար այն մասին, որ անհրաժեշտ է իրականացնել փոփոխություններ, որոնք երաշխավորեն կայսրության բոլոր հպատակների կյանքը, արժանապատվությունը և ունեցվածքը, ներառյալ փոքրամասնություններինը: Նաև հավակնում էին բարելավել զինվորների զորակոչը, զինվորական ծառայության տևողությունը և հարկերի հավաքման եղանակն ու միջոցը:

Համարյա հեղափոխական ծրագիր՝ ցանկացած կառավարության համար, սակայն ինչպես հասկանում եք, միմիայն ուզում էին ցույց տալ, որ Թանզիմաթը՝ բարեփոխումների կանոնակարգումը, արդեն սկսվել էր:

Իրականում, գուցե և տհաճ, դա ընդամենը նշանակում էր Եվրոպային ինչ-որ բան ակնարկել, որը ցանկանում էր Օսմանյան կայսրությունում բարելավել քրիստոնյա փոքրամասնությունների դրությունը: Ոչնչի չհասանք: Ոչ մուսուլմաններս շարունակում ենք մնալ առանց որևէ իրավունքի՝ հնազանդվելով դերբեյների կամայականություններին, որոնք գնալով ավելի ու ավելի են քամում քրիստոնյաներին: Զգիտեմ, տեղյա՞կ եք արդյոք, որ Թուրքիայում հասարակական պաշտոնները ձեռք են բերվում փակ աճուրդներում:

Սա նշանակում է համատարած կաշառակերություն, իշխանության չարաշահում, խառնաչփոթ վիճակ վարչական մարմիններում, բայց ամենից շատ՝ ահավոր անարդարություններ, որոնք դժբախտաբար շատ ավելի արձագանք գտան հայ ժողովրդի, քան այլ ժողովուրդների մեջ: Ո՛չ մուսուլման հոգևորականները, ո՛չ էլ պաշտոնյաները, ո՛չ էլ արտոնյալները, ո՛չ էլ բանակը, ո՛չ էլ արիստոկրատները չցանկացան գործի դնել բարեփոխումները, քանի որ ոչ մի նշույլ ցանկություն չունեին անելու դա և ինչպես այլ անգամներ՝ նրանց հաջողվեց խաբել դյուրահավատ Եվրոպային, որը կրկին ընկավ նույն ծուղակը, որ սուլթանները նրան հրամցնում են:

1856 թ. արդեն երեսուն տարի էր անցել, հռչակագրի բովանդակությունը չտկեցին անվանելով այն Հաթթը Շերիֆ Հումայուն՝ նոր խարդախություն, որը կրկին միմիայն հավակնում էր հանգստացնել եվրոպական պետություններին, քանի որ սուլթանը ֆինանսավորման կարիք ուներ և միայն Եվրոպայում կհասներ դրան: Այդ ժամանակ էլ հենց հիմնադրվեց Օսմանյան կայսրության բանկը և առաջին վարկերի հատկացումներից մեկը օգտագործվեց Դոլմաբաղչեի պալատի կառուցումը ֆինանսավորելու համար: Այնտեղ սկզբնավորվեց այս կայսրության փլուզումը, որը կավարտվի, Աստված տա, իսպառ կործանումով: Եթե դեռ չի հասցրել:

Կարծում եմ, որ դուք ճիշտ եք վարվել, որ համարձակվել եք ուղևորվել մինչև այստեղ: Ավելի լավ կլիներ, որ ինձ ընկերակցեիք այցելելու մի քանի մոտակա գյուղեր: Թեև պարզ է, որ երբ տեսնեն մի օտարերկրացու, ոչ մի Թուրք իրեն չի պահի այնպես, ինչպես սովորաբար: Ինձ չե՞ք հավատում:

— Այո՛, իհարկե ես ձեզ հավատում եմ, բայց ձեզ մի բան ասեմ: Այն ամենին, ինչ պատմում եք, չեմ կասկածում, սակայն, այո՛, ուզում եմ մի քանի հոդված գրել քրիստոնյա փոքրամասնությունների վիճակի մասին, այլ տարբերակ, քան ինքս անձամբ հաստատել, չունեմ:

— Լավ,— Մուրադյանը գլխով հաստատեց,— ինձ Թվում է խելամիտ, այնպես որ, եթե ցանկանում եք ընկերակցել ինձ, ես գնալու եմ Վան, քաղաք, որին կարող ենք կոչել Անատոլիայի հայերի մայրաքաղաք: Այնտեղ շատ բաներ են տեղի ունեցել, և նրա բոլոր քարերից պատմություն է հորդում: Եկեք ինձ հետ, փորձեք ողջամիտ լինել և շատ բաներում կհամոզվեք, հաստատ գիտեմ, որ ձեզ կհետաքրքրի:

— Համաձայն եմ,— պատասխանեցի՝ համոզված, որ դա այն պատեհ առիթն է, որին երկար էի սպասել:

Զնայած այդ հայն ինձ բացարձակ անծանոթ էր, նրանում մի բան կար. ես հավատում էի նրա անկեղծությանը:

Պայմանավորվեցինք հանդիպել նույն վայրում, հենց որ լույսը բացվի՝ այն ժամին, երբ փոստակառքը մեկնում է Վան: Վստահ էի, որ այդ անգամ բախտը մեզ կժպտա, և ո՛չ քրդերը մեզ վրա կհարձակվեն, ո՛չ էլ հանցագործները: Ուզում էի մոտիկից ծանոթանալ իրավիճակին, իսկ դա հարմար առիթ էր: Օգտվեցի երեկոյից հավաքելու վերջին օրերի բոլոր գրառումները, քանի որ այնպիսի փորձություններ էի ապրում և այնպիսի իրականության հետ չփվում, որ իմ կարծիքով դրանք չպետք է կորստյան մատնվեին: Վճռել էի գրել այդ ամենի մասին, քանի որ համոզված էի, որ ապագայում կարող էր օգտակար լինել:

Հաջորդ առավոտ հանդիպեցի Մուրադյանի հետ հրապարակում: Հաշիվը փակել և վերցրել էի իմ իրերը, ինձ ոչինչ չէր կապում Էրզրումի հետ, քանի որ ամեն դեպքում Քլիֆորդ Լլոյդը դեռ Կոստանդ-

[1] 1893 թ. նոյեմբերի 3-ին պալատական «Գյուլխանա» պարտեզում հրոչակված գյուլխանյան իրադարձության մասին է:

նուպոլսում էր և չգիտեր, թե երբ եմ վերադառնալու: Ինչ վերաբերում էր Մուհամմեդ Զիային, նա վերադարձել էր Տրապիզոն և հրաժեշտ տալիս՝ ինձ հավատացրել, որ երբևէ կրկին հաստատ միմյանց հանդիպելու ենք:

Նստեցինք փոստակառք չորս այլ ուղևորների հետ, բոլորը Թուրք, որոնք փորձեցին ննջել, հենց որ շարժվեցինք, չնայած ուժեղ ցնցումներին և դղրդյուններին: Ուղևորությունը երկար էր և վճռեցի խորանալ Թուրքիայի մասին իմ գիտելիքներում:

Գնալով ավելի էի համոզվում, որ հայերը որոշ չափով արդարացի են, բայց ոչ լրիվ: Մարդիկ, որոնց հետ խոսել էի, փորձել էին ինձ համոզել, որ Թուրքերն են միակ պատասխանատուն, իսկ ես դրանում համոզված չէի: Թուրքերի վարկածը շատ տարբեր էր, և այդ իսկ պատճառով, պետք է համոզվեի, թե որն է ճշմարտությունը:

Բացի այդ, այդ ուղևորությունը ինձ թույլ էր տալիս հասկանալ Կոստանդնուպոլսի և Անատոլիայի ներսում եղած վիթխարի տարբերությունները, անցնելով զուտ նախնադարյան չքնաղ վայրերով, տեսնելով գլխապտույտ առաջացնող անդնդավոր կիրճեր, բյուրեղյա հորձանքներ, որ իջնում էին սարերից ջրվեժների աղմուկով, հանդիպում էինք ճամփաների, երբ ստիպված պետք է կառքից իջնեինք օգնելու՝ հրելու, խույս տալով, որ կառքը չգլորվի, լեռնաշղթաների, որոնց գագաթները կորչում էին ամպերում, հորդառատ գետերի, որոնցում պետք է փնտրեինք ծանծաղուտը, եթե չէինք ուզում, որ ուժեղ հոսանքը մեզ քշեր տաներ: Անկախ այն բանից, որ կառապանները գոռում գոչում էին, ձիերն էլ վիթխարի ուժ գործադրում, երեք օրում հասանք: Երբ իջնում էր երեկոն, կանգ էինք առնում փնտրելու քարվանսարա գիշերն անցկացնելու համար: Ամեն օր երկու անգամ փոխում էին ձիերին, առաջինը կեսօրին և վերջինը գիշերային դադարի ժամանակ: Դրանք գեղջկական շենքեր էին, կենտրոնում մեծ բակով, որի դռնակները փակվում էին իրիկնամուտին, իսկ նրա շուրջ կային մի քանի սենյակներ, որտեղ ճաշ էին պատրաստում, մի ընդարձակ ճաշասենյակ խսիրներով, որտեղ խումբ-խումբ մարդիկ գաղտնի զրուցում էին, ընդարձակ զով սրահներ, որոնցում խսիրների վրա քնում էին կամ եթե ուզում էին ավելի հարմարավետ բան, պառկում էին հատուկ ներքնակների վրա՝ լցված եգիպտացորենի թփերով: Ճամփորդներից ոմանք իրենց հետ բերում էին ուտելիքներ, որ առատաձեռնորեն կիսում էին, մինչդեռ մյուսները ուտում էին այն, ինչ ամեն տեղ նրանց տալիս էին: Մի բանում, այո՛, համոզվեցի, որ մուսուլմանները չէին խառնվում քրիստոնյաների հետ, թեև այն տպավորությունը չէին թողնում, թե իրար հետ վատ են, պարզապես տարբեր մշակույթներ էին և կերակուրներ, որ չէին կարող խառնվել: Սա էլ եկավ հաստատելու իմ այն տեսակետը, որ գուցե նրանց համատեղ գոյակցումը պետք է որ դժվարին եղած լիներ, այդտեղից էլ հետևում էր այն մեկնաբանությունը, որ նախնյաց միմյանց ատելը երկար ճամփա էր անցել: Բնականաբար, Թուրքերը և սակավաթիվ քրդերը, որոնք գտնվում էին քարվանսարայում, կատարում էին իրենց ավանդական լվացումները, իսկ եթե եղանակը ներում էր՝ դուրս էին գալիս բակ՝ դրանք կատարելու: Անում էին լուռ և մեծ երկյուղածությամբ, և դա ինձ խորհրդածելու տեղիք տվեց, որ մուսուլմանները իրենց կրոնը այլ կերպ էին արտահայտում, բայց ամեն դեպքում ավելի ջանադիր էին, քան քրիստոնյաները, որքան էլ որ վերջիններս բարեպաշտ լինեին:

Երբ այդ մասին խոսեցի Մուրադյանի հետ, նա էլ չկարողացավ զսպել իր տարակուսանքը:

– Տեսեք, ես էլ չեմ կասկածում, որ իսլամը այն կրոնն է, որ պահանջում է մեծ համոզմունք և լիակատար նվիրում: Մուսուլման բարեկամներ ունեմ, բայց իմ համոզմամբ Թուրքերը արաբների հետ համեմատած այն այլ կերպ են ապրում: Թույլ տվեք ձեզ բացատրել իմ տեսակետը: Սկսեմ այն բանից, որ Թուրքերը ռազմատենչ ժողովուրդ են: Ինչի որ հասել են, սրի միջոցով է և քիչ է այն, ինչ իրոք պատկանում է իրենց մշակույթին: Հասարակ մարդիկ էին, երբ դուրս եկան տափաստաններից: Անգամ չգիտեին գործածել այնքան պարզ և կենսական բան, ինչպես աղյուսը, օրինակ: Իրենց ողջ կահ-կարասին, պատսպարվելու պարագաները, իրենց գործիքներն ու ունեցվածքը կարելի էր բեռնել ջորիների կամ ձիերի վրա: Խփում էին ճամբար այնտեղ, որտեղ թարմ խոտ էր աճում և այն տեղափոխում, երբ փոխվում էր տարվա եղանակը:

Իսլամն էր, որ ամեն ինչ փոխեց, երբ այդ կրոնը սրընթաց հորձանքի պես մտավ Կենտրոնական Ասիա: Թուրքմեն ժողովուրդները, անգամ իրենց առաջին մերձավորները՝ կիրգիզները, ուզբեկները, դազախները, ույգուրները, դրանք բոլորը խոսում են թյուրքական լեզուներով, բնականաբար աղքատ էին, քանի որ տափաստանում կարիք չունեին շատ ավելիի: Տեսեք, օրինակ, դազախները Թուրքեր են, մի ցեղ, որ սերում է մոնղոլներից: Կենտրոնական Ասիայում առկա է Թուրքական մեծ ազդեցությունը, դա այն է, որ նրանք համարում են Թուրան, այսինքն՝ մի հին Թուրքական հայրենիք, որը հասնում է մինչև Հնդկաստան, Բակտրիական բարձրավանդակները և

անապատները, որի հարավարևմտյան սահմանը լինելու է Եփրատը, իսկ հյուսիսայինը՝ Կովկասը և Սիբիրը: Իրոք, կարևոր է թուրքարմատ լեզուների ազդեցությունը, որն անչուշտ ընդգրկում է այդ լայնարձակ տարածքը: Թաթարները, օրինակ, պատկանում են թյուրքալեզու խմբին և սերում են քոչվոր ցեղերից:

Նրանք բոլորն էլ ծագում են այնպիսի քոչվորներից, որոնց համար ամենակարևորը ձիերն էին ու նետերը: Այնտեղ հողի սեփականությունը նվաճվում էր պատերազմով և ամենաուժեղ մարդու իրավունքով: Ցեղերի միջև արյունարբու ընդհարումներով էին ձեռք բերվում որսորդության և արածացնելու տարածքները, կամ էլ դրանք ծագում էին որևէ կնոջ, ավարի, ջրի փոսի կամ պարզապես որևէ թշնամական հայացքի պատճառով:

Իսլամն էր, որ ամեն ինչ փոխեց տափաստաններից եկած այդ կոշտ ու կոպիտ մարդկանց համար: Նրանց համար դա մի ջահ էր, որ լուսավորեց իրենց կյանքը, գոյությունը, բայց ամենից առաջ համախմբեց ցեղերին՝ ընդունելով մի համընդհանուր գաղափար, որն իր հետևում էր թողնում նրանց պարզունակ կյանքը: Իսլամը տարածվեց ինչպես կրակը չոր տափաստանում VII դարից մինչև IX:

Այդ պահից սկսած՝ ինչ ասես որ տեղի չի ունենում իսլամական աշխարհում, քանզի Ալլահը այդպես է ցանկացել, և բոլորը ենթարկվում են նրան՝ անառարկելի հնազանդությամբ: Բայց չեմ ուզում հեռանալ այն գաղափարից, որ իսլամը թեև լաքով պատեց հին հոգևոր պաշտամունքները և բնությունը, միևնույն է, դրանք չարունակում են մնալ թուրքմեն ժողովուրդների հոգու խորքում. տարածքների զավթումը, բռնությունը և արհամարհանքը նրանց հանդեպ, ովքեր չեն պատկանում իրենց ցեղին:

Երբ դարեր անց Մեհմեդ II-ը նվաճեց Կոստանդնուպոլիսը, Օսմանի երազանքն իրականացավ: Այդ քոչվոր ռազմատենչ հորդաները պետք է դառնային նստակյաց, և հաստատվեին վերափոխելու կայսրության ավարն ու նվաճած տարածքը: Դարձյալ կրկնվեց այն դասական ասացվածքը՝ «Գերված Հունաստանը գերեց իր գերողին», որն այստեղ փոխակերպվեց՝ «Գերված Բյուզանդիան նվաճեց իրեն գերեվարողներին»: Ահմեդը, մտնելով այն պալատները, որ եղել էին բյուզանդական կայսրերի նստավայրը, չանթահարվել էր գեղեցկությունից, որ իրեն չրջապատում է: Այդ ժամանակ էլ վճռեց յուրացնել այդ ապրելակերպը, իսկ դա նրան մղեց արմատապես փոխելու իր շատ սովորույթներ և վարվելաձևեր, քանի որ նրա փառամոլությունը նոր՝ Օսմանյան կայսրության նոր կայսր դառնալն էր և նրա պերճաշուք մայրաքաղաքը՝ Ստամբուլ անունով կնքելը, որը նշանակում է «Դեպի քաղաք»՝ մարտական ոռնոցը և նվաճումն իր գորքերով:

Ձեզ այս ամենը պատմում եմ՝ փորձելով բացատրել, թե ովքեր են թուրքերը, և որն է կյանքի մասին նրանց պատկերացումը: Խալիֆաթի զավթումից սկսած, սա մի արտոնություն է, որով կարող են օժտված լինել մարգարեի ցեղի անդամները, մինչև իսկ սրբազան պատերազմի կոչել միայն մեկ նպատակով՝ ընդարձակել իրենց կայսրությունը: Արաբները լավ ծանոթ են թուրքերին և համամիտ չեն կյանքն ընկալելու նրանց կերպին:

Ինչպես գիտեք, հայերս և այլ փոքրամասնություններ, թուրքական տերության ենթակայության տակ ենք համաձայնագրերի միջոցով, միլյեթների համակարգի ներքո, մեր դեպքում՝ Կոստանդնուպոլսի պատրիարքի իշխանության ներքո, որն էլ ստանում է իր իշխանությունը ուղղակիորեն սուլթանից: Դա թղթի վրա ճիշտ է, խնդիրն այն է, թե ինչպե՞ս է կենսագործվում իրականում: Վաղ թե ուշ ինքներդ կհամոզվեք դրանում այստեղ՝ Թուրքիայում:

Մուրադյանը, որ ապշեցնում էր իր արտասովոր իմացականությամբ, ինձ զննեց հեգնաբար և ավելացրեց:

– Տեսեք, երիասա՛րդ իմ բարեկամ, ձեզ մի օրինակ բերեմ: Երիտասարդ ժամանակ ես եղել եմ, ինչպես ասում են, «մեղավոր ճորտ»: Ծնվել եմ Թարսում, Տավրոսյան սարերի ստորոտում և եղել առևանգված պետության պաշտոնյաների կողմից: Ես ձեզ պատմում եմ հիսուն տարվա վաղեմության մասին: 1832 թ., դա սովորական ապրանք էր, թեև միշտ վշտալի և ողբերգական: Հիշում եմ, որ մայրս, կանխագուշակելով փորձանքը, ինձ թաքցրեց խորդանոցում, և ստիպված մտա մի մեծ դեզի մեջ, համարյա խեղդվում էի: Այն ժամանակ տասներկու տարեկան էի, բայց տանը ես շատ պետքական էի, քանի որ հայրս մահացել էր մի քանի տարի առաջ՝ ժանդարմների հետ արյունալի ընդհարման ժամանակ: Եթե ինձ տանեին, լուրջ խնդիր կառաջանար, քանի որ տանը հազար ու մի աշխատանք կար, որ պետք է օգնեի: Բախտս չբերեց, և ինձ գտան չանս պատճառով: Կապված էր, բայց փախել էր, և բնազդը նրան մղեց փնտրել ինձ:

Մորս ծեծեցին և սպառնացին, հետո ինձ տարան ուրիշ շատ ու շատ տղաների հետ, քայլելով ձիերին հավասար՝ դեպի Կոստանդնուպոլիս, մինչ կանայք մնում էին հեկեկալով, հուսահատությունից մազերը պոկելով:

Նրանց համար մենք ոչինչ էինք: Երբ գիշերով ճամբար էին խփում, մեզ պատսպարվելու ոչինչ չէին տալիս, անգամ մի ծածկոց՝ ցրտից

պաշտպանվելու համար: Երկու հոգի մահացան. չկարողացան դիմանալ: Երբեմն մեզ հացի փչրանքներ էին նետում և մեզ թույլ էին տալիս խմել, երբ անցնում էինք որևէ առվի վրայով:

Երբ հասանք Կոստանդնուպոլիս, մեզ հանձնեցին մի աղյուսագործական ձեռնարկության: Մենք տիրոջ ստրուկներ էինք, և մեզ հետ մտրակով էին վերաբերվում: Ի վերջո, ընդամենը անհավասար ստրուկներ էինք, մեզ արժևորում էին ամեն օր՝ մեր արտադրած աղյուսի քանակով: Այնտեղ մենք անուն չունեինք, միայն մի թիվ, և միայն կարող էի մտածել Տարսոնում իմ տան, մորս ու եղբայրներիս մասին:

Այնտեղ, երեք տարվա ընթացքում տեսա, թե ինչպես մահացան ուժասպառ լինելուց ջահելներից մի քանիսը, մյուսները պարզապես անհետացան, նրանցից մի քանիսին գուցե հաջողվել էր փախչել, բայց բոլորս ապրում էինք սարսափահար, որովհետև չէինք հասկանում, թե ի՞նչ հանցանք ենք գործել, որ մեզ հետ այդ ձևով են վարվում:

Մի հայ վաճառական ինձ ազատեց: Այնտեղ մի խմբաքանակ աղյուս էր գնում, և ես բռնեցի նրա սայլը: Տեսավ, որ ուժեղ եմ և գլխի ընկավ, որ հայ եմ: Իմ դիմաց լավ գին վճարեց, և ինձ թողեցին գնալ նրա հետ:

Նոր էինք հասել իր տուն, ինձ ասաց, որ ազատ եմ և կարող եմ գնալ՝ ուր որ կամենամ, բայց մնացի: Հետո ինձ տարավ մի դպրոց և ավարտեցի ուսումս..., բայց այդ ամենն արդեն հեռվում է, չափազանց հեռվում: Տեսեք, մայ՛ր, արդեն մտնում ենք Հալիլչավու:

Այդ գիշեր չկարողացա քնել: Միայն մտածում էի Մուրադյանի ասածների շուրջ: Խորհեցի, որ ավելի լավ կլիներ հեռանալ Թուրքիայից, վերադառնալ Փարիզ, մոռանալ այդ ամենը, փնտրել մի երիտասարդ Ֆրանսուհու և Ֆրանսիայում բուրժուական կյանք վարել: Ամեն դեպքում, ինչ էլ որ անելու լինեի, չէի կարողանալու ոչինչ փոխել:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1886

8. ԱՆԿԱՐՈՂ ԱԿԱՆԱՏԵՍ

Չկարողացանք հասնել Վան, քանի որ ամբողջ մարզը կռվի պատրաստ վիճակում էր: Բանակը որոշ բնակավայրեր պաշարված էր պահում, և ինչպես մեզ ասացին, ոչ մի արտասահմանցի չէր կարող մտնել, որի պատճառով գնացինք Ռեչադիե, Վանա լճի ստորոտ:

Մուրադյանն այնտեղ ազգականներ ուներ, իր մոր հորեղբոր տղան էր, բայց այդ հեռու ազգակցական կապը հայերի միջև բավական էր յուրայիններից մեկը լինելու համար և ներկայացնելով ինձ որպես բարեկամի՝ ինձ անմիջապես ընդունեցին առանց ձևականությունների: Այդ մարդիկ մտերմության և ընտանիքի հանդեպ խոր բարեկամական զգացում ունեին: Եթե քեզ որպես բարեկամի են ընդունում, ինչպես որ եղավ իմ դեպքում, անմիջապես դառնում էիր յուրայիններից մեկը:

Մարզում Փանոսյանները կարևոր ընտանիք էին: Պատրիարքը՝ Մատթեոս Փանոսյանը մեզ բացատրեց, որ այդ անգամ հարցը հայերի և Թուրքերի միջև չէր, այլ Թուրքերի ավանդական անբարյացակամությունը քրդական ցեղերի հանդեպ, որոնք խռովության էին պատրաստվում մի քանի շաբաթ ի վեր: Ոչ մի նոր բան չկար, քանի որ քառասուն տարի էր, ինչ խոսվում էր չդադարող խռովության մասին:

Փանոսյանը ազդեցիկ մարդ էր, և իր հայտնած կարծիքները՝ նույնպես: Մուրադյանին բացատրեց, որ քրդերի խռովության հետևում անգլիացիներն են:

– Միշտ անգլիացիները: Նրանք ուզում են փոխել Կոստանդնուպոլսի կառավարությունը և այդ անում են տարբեր ճանապարհներով: 1833 թ. ստորագրեցին Բալտա–Լիման համաձայնագիրը՝ չնայած ռուսական արջին: Այդ ժամանակից սկսած անգլիական կտորեղենը լցնում է մեր շուկաները, և մեր ցորենը տանում են այնպիսի գնով, որ մեզ կործանում են: Ահ, ինչ ճարպիկ են Մեծ Բրիտանիայի զավակները: Նրանք են պահում սուլթանին, որպեսզի սուլթանը պահի Թուրքիային, որպեսզի Թուրքիան պահպանի Բաղդադի ճանապարհը, որտեղից հույս ունեն դուրս բերել չգիտեմ թե ինչ, բայց

հաստատ մեծ չահույթով: Ճարպիկ, բայց անամոթ՝ Հայաստանի հետ իրենց քաղաքականությունում: Ցարը չէր, որ ասաց, որ Թուրքիան հիվանդ մարդ է: Ես կասեի՝ մահվան եզրին կանգնած: Եթե լրջորեն օգնած լինեին հայերին, կունենայինք այն Հայաստանը, որ նախկինում էր: Լավ, թեկուզ լիներ միայն կեսը:

Բայց ո՛չ: Իրավիճակը ավելի վատ չի կարող լինել, թեև հիմարություն եմ ասում, որովհետև դե ինչ, կարող էր այդպես լինել: Հիմա քրդերի հետ են զբաղված, բայց ձեզ մի բան կասեմ: Զինվորական լեզվով դա անվանում են ուշադրությունը շեղելու մանևր, որովհետև եթե որևէ մեկին նշանակետի տակ են առել, մեզ է, հայերիս: Բայց դուք, մայե, պետք է որ կուշտ լինեք այս ծեր հայի բողոքներից: Այստեղ՝ մեր երկրում արտասովոր բաներ կան Եվրոպային անծանոթ, և դուք կարող եք պատմել, երբ վերադառնաք: Ի՞նչ կարծիքի եք այս հսկա գեղատեսիլ լճի մասին,– Փանոսյանը մատնացույց արեց Վանա լճի հորիզոնը՝ ավելացնելով տրտում տոնով,– սա է Հայաստանի իսկական սիրտը:

Մարդը մեզ էր նայում անհանգիստ աչքերով:

– Ես չգիտեմ, թե կտեսնեմ այն, բայց վախենամ օգտագործեն պապենական մեթոդը, Թուրքիայի հիվանդությունը հավակնի բուժվել հայկական արյուն հեղելով: Սարսափելի մղձավանջի մեջ եմ և վախենում եմ մերոնց համար: Ոչ, ոչ միայն իմ ընտանիքի, բոլոր հայերի համար:

Այդ պահից սկսած սկսեց խոսել հազիվ լսելի ձայնով, այն աստիճան, որ ստիպված մոտեցանք՝ նրան լսել կարողանալու համար:

– Դու, Մուրադյան, պիտի որ հիշես,– Փանոսյանը մատնացույց արեց ընկերոջը համառորեն: – Երկուսով Կոստանդնուպոլսում չէի՞նք քսանմեկ տարի առաջ, հունիսի այն կիրակին, վաթսունհինգին: Իհարկե, հիշում ես:

Բաներ կան, որ չեն կարող մոռացվել: Ես այն զգացումն ունեմ, որ կարծես դեռ այնտեղ ենք, այն ժամանակվա ուժեղ ոտքերով, ստիպված չէի՞նք վազում զառիվայրով, այծյամների պես Գալատայի Աշտարակից սկսած: Էս ոսկորներս առաջվանը չեն... Ա՜հ: Այո՛, դա կատարվեց այն ժամանակ, երբ հիմնադրեցին «Նոր օսմաններ» կուսակցությունը. այնտեղ նրանք էին, ովքեր ուզում էին վերացնել հայերին այս հողից: Եվ գիտե՞ք, թե ինչո՞ւ... քանի որ այն մերն է, մեզ է պատկանում այս հողը վաղնջական ժամանակներից, և այսպիսով կարծում են, թե ոչ ոք նրանց դեմ չի բողոքի: Հայի յուրաքանչյուր հայացք բողոք է, այնպես չէ՞: Եվ պարզ է, ի վերջո նրանց համար

դա դառնում է անտանելի, ա՜հ, իհարկե, դո՛ւ, Մուրադյան, այնտեղ վազում էիր ինձ հետ թև թևի՝ հետապնդված պահակների կողմից, քանի որ այնտեղ էին մինչև իսկ իշխանները... ամեն ինչ հորինվեց օսմանյան ձևով:

Ստերի մի վիթխարի չղթա, որպեսզի հավատացնեն, որ մեծ բարեփոխումներ են: Այդ մեկը՝ այո՛. բոլորն էին համոզված, որ ներծծված են ֆրանսիական հեղափոխության շնչով,– Փանոսյանը մնաց՝ ինձ սևեռուն նայելով, ցույց տվեց իր ոսկրոտ ցուցամատով և ասաց.

– Դու, ֆրանսիացի երիտասարդ, պետք է անշուշտ իմանաս, թե ինչն էր նրանց ոգևորում. հավասարություն, ազատություն, եղբայրություն, Ռուսոյի և Մարատի ոգին: Արդյո՞ք ժամանակից առաջ չէր ընկել Փարիզում լույս տեսնող թուրքական թերթը՝ «Հուրիեթ»-ը, որ նշանակում է «Ազատություն»:

Ազատություն ո՞ւմ համար: Թուրքիայի հայերի համար: Շատ անհամ կատակ է: Գուցե քրիստոնյա, փոքրամասնությունների սոցիալական պայմանների լավացո՞ւմ: Վայ, ստե՛ր ու էլի՛ ստեր: Թեև մի բանում, այո՛, ճշմարտությունն էին ասում: «Նոր օսմաններ» կուսակցությունը հիմնվում է Արևելքում ռուսական ազդեցությունը կործանելու նպատակով, որը ձգտում է Թուրքիայում քրիստոնյա ժողովուրդների ազատագրմանը: Դա ճշմարիտ է, չնայած պետք է ասվեր, որ հիմնվում էր կործանելու քրիստոնյա ժողովուրդներին Թուրքիայում: Ինձ հետ համամիտ չե՞ս, Մուրադյան, թուրք քաղաքացիների նշանաբանն է՝ «Թուրքիան թուրքերի համար»: Իսկ մնացածնե՞րը... քեզ կասեմ կարճ և չիտակ: Մնացածներս ավելորդ ենք, եթե ոչ, ժամանակը ցույց կտա:

Տեսա, թե ինչպես է Մուրադյանը գլխի չարժումով համաձայնվում այն ամենին, ինչ իր ընկերը պատմում է:

– Ինչ խոսք: Միդհատ փաշան թերևս կայսրության ամենափառամոլ մարդն էր: Շատ լավ գիտեր, որ չէր կարող բարգավաճել առանց Եվրոպայի համաձայնության, չնայած իր հոգու ներսում ատում էր այն ամենը, ինչ նշանակում էր Եվրոպա: Բայց մեկն էր ամենամեծ երկերեսանիներից և վարպետորեն կեղծում էր իր ամենահակադիր զգացմունքները ոչ միայն իր մտածելակերպով, նաև գործելակերպով: Նրա ներքին քաղաքականությունը ազգայնամոլական է, հրահրում է ժողովրդին Արևմուտքի դեմ: Իսկ հետո արտասահմանում հավատացնում է, որ ժամանակակից մարդ է և զուսպ, որ ցանկանում է Թուրքիան բացել առաջավոր գաղափարների առջև: Ստահակի՛ մեկը:

Նա հրահրեց մուսուլման ուսանողներին և սպառնաց քրիստոնյաներին անխտիր սպանդով, մինչև որ սուլթանը նրան նշանակեց մեծ վեզիր: Ընդամենը երկու օր անց, նրա ղեկավարած պետական հեղաշրջման արդյունքում տապալվում է սուլթան Աբդուլ Ազիզը, և թագադրվում է Մուրադ V-ը, անընդունակ մեկը՝ հարբեցող և կիսախելագար, որին հավակնում էր իր օգտին ծառայեցնել: Մեկ շաբաթ անց Աբդուլ Ազիզը սպանվեց: Օգոստոսի վերջին, Մուրադը գահընկեց եղավ և Աբդուլ Համիդ II-ը նշանակվեց սուլթան՝ Միդհատ փաշայի կողմից... Ձեզ ասեմ, որ հավանաբար այդ նույն օրը կնքվեց հայ ժողովրդի ճակատագիրը:

Այսպես շարունակեցին Մուրադյանը և Փանոսյանը՝ հիշելով անցած-գնացած ժամանակները և հանգամանքները, որ ապրում էր երկիրը: Երկուսն էլ շատ վատատես էին մոտ ապագայի հանդեպ: Ես մտածեցի, որ ինչ-որ բան է կատարվելու, եթե այդքան կտրուկ ձևով հաստատում են այնպիսի կիրթ մարդիկ, որ քաջ ծանոթ էին թե՛ երկրին և թե՛ նրա պատմությանը:

Ճաշեցինք Փանոսյանի տանը և գնացինք փնտրելու Մուրադյանի ծանոթներից մեկին, որը զբաղվում էր առագաստանավով բեռների տեղափոխմամբ՝ լճով: Շատ չպնդեց, որ համոզեր, որ մեզ տանի մինչև Վան, մի վաթսուն մղոն դեպի արևելք, որի պատճառով նստեցինք «Աչխարհաբար»-ը, որ կես ժամ անց խարիսխը հանեց և շարժվեց հարավարևմուտքից փչող սյուքով:

Ամեն ինչ գնում էր նախատեսված պլանով, երբ անսպասելիորեն նավը փոխեց իր երթուղին և ուղղվեց դեպի մի փոքր ծովածոցի խորքը:

Մութն ընկնում էր, իսկ ափը ժայռոտ էր և կտրտված, այդ իսկ պատճառով չէր թվում ավելի ու ավելի սաստկացող քամուց պաշտպանվելու լավագույն վայրը: Այդուհանդերձ, նավատերը բացարձակապես լուռ էր իր մտադրությունների վերաբերյալ:

Խարիսխ ձգեցինք համարյա ափին կպած: Տպավորությունն այն էր, որ պետք է գիշերեինք այդ վայրում, բայց կարելի է պատկերացնել մեր զարմանքը, երբ տեսանք մի խումբ մարդկանց, որոնք մակույկով մոտենում էին առագաստանավին: Մուրադյանն ինձ չչընջաց, որ գաղափար չունի, թե ինչ է կատարվում և թոթվեց ուսերը:

Մի քանի րոպե անց, հինգ մարդ, հավանաբար քուրդ, նավ բարձրացան, մակույկը վերադարձավ դեպի ժայռ, իսկ մեր առագաստանավը բարձրացրեց խարիսխը և բացեց առագաստը: Ակնհայտ էր, որ տերը պարզ որոշում էր ընդունել քրդերի և թուրքերի մարտում, սակայն ակնհայտ էր նաև այն, որ մեզ վտանգ էր սպառնում այն դեպքում, եթե թուրքերը որևէ բան կասկածեին:

Գիշերվա մնացած մասը նավարկեցինք հետ ու առաջ գնալով-գալով, որ կարողանայինք գնալ արևելյան ուղղությամբ, իսկ եղանակն էլ շատ էր վատացել: Նոր էր լույսը բացվում, երբ տեսանք Վանի ուրվագիծը: Քաղաքը մոտավորապես երեսուն հազար չունչ կունենար, և անչուշտ դուրս էր խռովության սահմաններից: Եվ դեռ այսպես՝ նավապետը մեզ ասաց, որ քրդերի հետ պետք է իջնենք նավից, հույս տալով, որ Վանում խարիսխ ձգելիս որևէ խնդիր չի ծագի: Ուրիշ ճար չունեինք և ստիպված համաձայնվեցինք:

Մի թիանավ արագ մոտեցավ առագաստանավին: Պետք է շտապեինք, որովհետև սկսում էր լուսանալ և ցամաքից կարող էին հայտնաբերել մեզ: Նավավարը թիավարում էր արագ և ճարպկորեն, մի քանի րոպեից արդեն գտնվում էինք մի փոքրիկ ծովափում:

Հենց այդ պահին էր, երբ կրակոցներ լսվեցին: Քրդերը վազեցին մոտակա ժայռերի արանքում պատսպարվելու, իսկ Մուրադյանը չչուկով ասաց, որ պետք է գնանք հակառակ ուղղությամբ: Բայց ուրիշ ելք չունեինք, քանի որ թուրքերը շրջապատել էին և փախուստն անհնարին էր: Ամենավատթար դրությունն էր, որում գտնվում էինք: Քրդերից երկուսը մեռած ընկած էին ավազին, իսկ մնացած երեքը ձերբակալված էին:

Հանկարծ լսեցի շատ մոտ կրակոցներ: Շրջվեցի և տեսա թուրքերի համազգեստով մի խումբ, որոնք անխտիր կրակում էին ժայռերի հետևում գտնվող մարդկանց վրա: Համարյա բոլորն էլ քրդերի նման էին: Համիդիեները մոտիկից էին կրակում, և կատարյալ խառնաչփոթ էր: Այնուամենայնիվ, ձերբակալվածները ցույց չէին տալիս, թե ուզում են փախչել: Այնպես էր, որ ասես նախապես հաշտվել էին իրենց բախտի հետ և ընկնում էին մի քանիսը մյուսների վրա, մինչ ավազը թրջվում էր արյամբ: Սարսափելի իրավիճակ էր, և ինչպես Մուրադյանը, այնպես էլ մենք, մնացինք անշարժ, որևէ արձագանքի անընդունակ:

Այնուհետև ամեն բան ավելի արագ կատարվեց: Տեսա ոչ համազգեստավորների ղեկավարներից մեկին: Ձեռքում ուներ ատրճանակ: Առանց մի խոսք արտասանելու մոտեցավ քրդերին, անսպասելիորեն կրակեց գլխներին, և երեք տղամարդ ընկան: Հետո մոտեցավ մեզ. պետք է որ գլխի ընկած լիներ, որ ես օտարերկրացի եմ և մի պահ կասկածեց: Անմիջապես ուղիղ գնաց դեպի Մուրադյանը և ատրճանակի կոթով ամբողջ ուժով խփեց գլխին, փորձեցի պաշտպանել

նրան, սակայն մեկ այլ կոթի հարված էլ ես ստացա, որից ուշագնաց եղա:

Երբ գիտակցությունս տեղը եկավ, բերանումս դառնահամ զգացի: Արյունն էր, որ հոսում էր ճակատիս վրայով: Գլուխս չատ էր ցավում, և ոտքերս ու ձեռքերս կապկպել էին: Չնայած դրան՝ տեսա, որ Մուրադյանն էլ նույն վիճակում էր: Ուզեցի նրան մի բան ասել, բայց նորից ուշաթափվեցի:

Երբ գիտակցությունս տեղը եկավ, տեսա՝ համիդիեական ղեկավարը գտնվում է իմ դիմաց: Մի նշան արեց, և ոտքերս արձակեցին: Հետո ինձ նստեցրին ինչ-որ տաբուրետի վրա: Ինձ դիմեց մի ահավոր ֆրանսերենով:

– Ձեր անունը Անրի դը Լատուր է, և լրագրող եք: Ես դա հաստատել եմ՝ ըստ ձեր դիվանագիտական անձնագրի: Ինչո՞ւ եք կրում այդ անձնագիրը: Դուք չպետք է այստեղ լինեիք, որովհետև սա հիմա չատ վտանգավոր տեղ է: Ես ձեր դեմ որևէ հրահանգ չունեմ: Ձեր բախտը բերել է, բայց դուք չատ մի հավատացեք դրան, այն միշտ էլ մեզ լքում է ամենաանսպասելի պահին: Պետք է ձեզ ասեմ, որ դուք ձեր տեսածից ոչինչ չեք կարող պատմել: Հասկանո՞ւմ եք: Եթե դա անեք, Մուրադյանը կսպանվի: Պա՞րզ է: Նա մնալու է այստեղ, բայց ամեն ինչ կախված է նրա ողջամտությունից: Երկու օր անց դուք կգնաք, մինչ այդ կմնաք ճամբարում՝ առանց ձեր տեղից դուրս գալու: Ձեր անվտանգության համար է: Պա՞րզ է:

Համաձայնեցի: Այդ պահին ուրիշ ոչինչ չէի կարող անել: Ինքս ինձ մեղադրում էի այդքան անխոհեմ լինելու համար, չնայած իրականում այն, ինչ ինձ անհանգստացնում էր, Մուրադյանի դրությունն էր: Համոզված էի, որ ամեն դեպքում նրա վիճակը ծանր է: Չնայած այդ ամենին՝ իմ զայրույթն ավելի մեծ էր, քան իմ խոստովանությունը:

– Ինչո՞ւ եք սպանել այս բոլոր մարդկանց: Նրանք քաղաքացիներ են, իսկ դա ռազմական ոճիր է:

– Զգիտե՛մ, թե ինչ եք ակնարկում: Այդ մարդկանց սպանել են քուրդ խոռվարարները: – Այդ մարդը անհավատալի սառնություն էր պահպանում, մինչ խոսում էր. կարծես փորձում էր իրեն վերահսկել:

– Ստո՛ւմ եք,– բղավեցի, զգալով, թե ինչպես է արյունը խփում գլուխս,– ձերոնք էին, առանց համաձգեստի: Տեսա, թե ինչպես էին նրանց սպանում:

– Տեսեք, մսյե դը Լատուր,– պարագլխի ձայնը արտացոլում էր իր աճող բարկությունը: – Մի չարաչահեք իմ համբերությունը: Ձե՞ք հասկանում, որ դուք կարող էիք անհայտանալ: Քուրդ խոռվարարներն էին, որ սկզբում հաջողեցրել էին նրանց սպանելուց հետո մերոնց տեղ անցնել: Սա է, ինչ մեզ հայտնի է և ապացույց կա, որ դրանից անմիջապես հետո փախել են: Եկեք տեսեք, թե արդյոք իմ մարդկանց մեջ նրանցից մեկին կճանաչե՞ք:

Մի պահ այդ մարդու սառնասրտությունը պատճառ դարձավ, որ ես ինձ կասկածեմ: Բայց նաև հիշեցի նրա սպառնալիքները, որ ես չպետք է խոսեմ տեսածիս մասին:

– Ձեզ մի համաձայնություն եմ առաջարկում,– ասացի: – Ես մոռանում եմ այս ամենը, իսկ դուք ազատում եք Մուրադյանին և մեզ թույլ եք տալիս հասնել Վան: Ես ձեզ խոստանում եմ իմ պատվով և բացի այդ, ընդունում եմ, որ ձեր բացատրությունը ինձ կասկածելու տեղիք տվեց: Չպետք է ձեզ մեղադրեի առանց ամբողջովին տեղյակ լինելու:

Պարագլուխը ինձ թերահավատորեն զննեց որոշ արհամարհանքով:

– Համաձայն եմ, բայց, բացի ձեր խոստումներից, Մուրադյանը որոշ ժամանակ մնում է այստեղ: Երբ դուք վերադարձած լինեք Կոստանդնուպոլիս, և ես վստահ լինեմ դրանում, որ խոհեմություն եք պահպանել, այդ ժամանակ և միայն այդ ժամանակ նրան ազատ կարձակեմ: Հիմա, եթե դուք թույլ տաք որևէ հիմարություն, ուրեմն...,– գլուխը թոցնելու ակնհայտ նշան արեց աջ ձեռքով,– և մեղքը միայն ձերը կլինի ստելու պատճառով: Բացի այդ, թող ձեզ պարզ լինի, այս պահից ի վեր պետք է հնարավորին չափ չուտ դուրս գաք Թուրքիայից: Ինչպես որ հասկանում եք, մենք ձեռքներս ծալած չենք նստի, եթե որևէ մեկը մեզ զրպարտի: Հասկանալի՞ է: Ես ձեզ զգուշացնում եմ, չեմ ասում պարզապես ասելու համար: Այդ մարդու կյանքը կախված է ձեզանից:

Տեսա, թե նրա աչքերը ատելության չանթեր էին արձակում: Համաձայնվեցի: Ուրիշ բան չէի կարող անել: Գուցե չափազանց երիտասարդ էի, և ինձ սարսափեցնում էր այն միտքը, որ Մուրադյանին կսպանեն, և մյուս կողմից՝ ես վստահ չէի կատարվածում, ոչ էլ որևէ բան կարող էի ապացուցել: Բայց այդ օրից ի վեր հասկացա, որ ո՛չ հայերը ու ո՛չ քրդերը հազիվ թե ընդհանուր լեզու գտնեն թուրքերի հետ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1886 – ԱՊՐԻԼ 1887

9. ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

Շատ ժամանակ անցավ մինչև հասկանայի, որ բռնածս գործը սխալ է եղել: Վերադարձա Կոստանդնուպոլիս, չգիտեի, որպես կալանավոր, թե՞ մեծարգո մեկը, համիդիեների պարագլուխ Մուստաֆա Քյամիլի՝ բանակի նախկին սպայի ուղեկցությամբ: Իր ասելով պետք է որ ունեցած լիներ կապիտանի կամ հրամանատարի աստիճան, բայց ինչ-ինչ պատճառով բանակից արտաքսված էր: Այլևս հետս ոչ մի բառ չփոխանակեց: Ուժեղ բնավորության տեր մարդ էր, իր մարդկանց հետ բռնակալի պես էր վարվում: Ինձ վիճակվել էր լինել գերի կալանավորների նկատմամբ ունեցած դաժան վերաբերմունքի վկա: Երբ օրեր անցան, համոզվեցի, որ ջանում էր խաբել ինձ և վախեցա, որ կորոչի սպանել մեզ՝ ինչպես Մուրադյանին, այնպես էլ ինձ, քանի որ նրա համար ընդամենը քրդերի հանդեպ գործած ոճիրի անցանկալի վկաներ էինք:

Ինձանից չբաժանվեց մինչև Ֆրանսիական դեսպանատան դուռը և հրաժեշտ տալու միջոցին սառնորեն քրթմնջում էր.

– Հիշեք, որ ձեր բարեկամ Մուրադյանի կյանքը կախված է ձեր խոհեմությունից,– և առանց այլ բացատրության՝ հեռացավ:

Կարծում եմ, որ իմ անփորձությունից, վախից էր, որ պատահեց մի բան, որ ինձ ողջ կյանքում պետք է հանգիստ չտար: Հետո մտածեցի, որ պետք է անմիջապես պատմած լինեի Ֆրանսիայի դեսպանին և հայտնած լինեի քրդերի վիճակի մասին, որում ապրում էին, որ չէին ենթարկվում այն դաժան ավատատիրությանը, որ նրանց պարտադրում էր Թուրքական պետությունը:

Առաջին տարիներին ոչ մի քուրդ բարեկամ չունեցա: Հանրահայտ քրդերը մայրաքաղաքին չէին մոտենում այս կամ այն պատճառով, համարյա բոլորն էլ Թուրքական արդարադատության հետ չլուծված խնդիրներ ունեին, չնայած նրան, որ սուլթանների կառավարությունները նրանց հաճախ օգտագործում էին որպես հայերի դեմ մերկացրած սուր, քանի որ արևելյան տարածաշրջաններում քրդերը շահագործում էին հայերին՝ գործադրելով բռնություն, ահաբեկչություն հայկական գյուղերի նկատմամբ, թալանում էին, մշտապես սարսափ տարածում, ինչին հրահրում էին, անչուչտ, Թուրք իշխանությունները, այսպիսով երկու կողմին էլ պահելով իրենց բռնության ներքո:

Բայց այդ ամենի մասին շատ ավելի ուշ իմացա: Այն ժամանակ դեռ կարծում էի, թե մեծ մասամբ դա չափազանցություն էր և կեղծիք: Դաժան իրականությունն էր, որ ինչպես համարյա միշտ, բացեց աչքերս:

Կրկին տեսա Խաչատուր Մալումյանին, իմ ճամփորդությունից մի քանի ամիս անց, և նա էլ ստանձնեց ինձ տալ այդ սարսափելի լուրը:

– Որքան ուրախ եմ ձեզ տեսնել, մսյե դը Լատուր: Ուզո՞ւմ եք ինձ հետ մի բաժակ ընտիր սուրճ խմել: Այստեղ այն հրաչալի են պատրաստում: Այնպես որ, նստեցեք խնդրեմ: Ինչպե՞ս եք անցկացրել այս ամիսները, որոնցում մենք առիթ չենք ունեցել հանդիպել: Ահ, ինչպես է անցնում ժամանակը: Գիտեմ, որ եղել եք Էրզրումում: Ձեզ դուր եկա՞վ: Դա Պատմական Հայաստանն է՝ հիմա ավերված Օսմանի Թոռների կողմից, որոնք մեր հինավուրց դրախտը դարձրել են դժոխք հայերի համար: Բացի այդ, քրդական խռովությունների պատճառով մեզ դրել են աքցանի մեջ: Իմ խեղճ բարեկամ Մուրադյանը մի քանի ամիս առաջ սպանվեց Վանում քրդերի կողմից:

Այդ մարդուն լսելիս Թուքս չորացավ կոկորդումս:

– Խոսքը Դավիթ Մուրադյանի մասի՞ն է: Հայկական պառլամենտի անդամի՞:

Մալումյանը համաձայնության նշան արեց:

– Իհարկե, մի պայծառատես մարդ և արտասովոր կիրթ: Ինչ ափսոս: Եվ բացի այդ մեռնել ա՛յդ ձևով:

Վայրկենապես վատացա և խզված ձայնով հարցրի բարեկամիս:

– Ի՞նչ ես ուզում ասել: Ինչպե՞ս մահացավ Դավիթ Մուրադյանը:

– Դե ինչ, Էրզրումում ինչ-որ մեկը նրա տուն է ուղարկել փայտյա մի արկղ, որի մեջ նրա գլուխն է եղել՝ մի գրություն հետը, որում ասվել է, որ Մուրադյանի մարմինն ու աչքերը Վանի սարերում կերել են վայրի խոզերը: Կարելի՞ էր այդ աստիճան դաժան լինել:

Երբ լսեցի դա, ուժեղ սրտխառնոց զգացի և մեծ ճիգ գործադրեցի, որ չփսխեմ: Խաչատուրը զգաց, որ հետս մի բան է կատարվում և անհանգստացավ ինձ համար:

– Դուք լա՞վ եք, մսյե: Գուցե ճանաչո՞ւմ էիք Մուրադյանին: Խեղճ մարդ՝ միշտ այնքան բարեհամբույր և բարի:

– Այո,– պատասխանեցի՝ համարյա կակազելով: – Նրա հետ ծանոթացա Էրզրումում, և ինձ ուղեկցեց մինչև Վան: Այդ նա էր, որ

անսպասելի ներկայացավ, և առաջին իսկ պահից հասկացա, որ հրաշալի մարդ է... Այնտեղ, պատահականորեն մենք շատ դաժան պատմության մեջ ընկանք քրդերի և Թուրքերի միջև... Խեղճ մարդ: Վերջին բանը, որ իմացա Մուրադյանից այն էր, որ նրան կալանավորել են Թուրքերը: Էդ Ֆյամիլը իսկական մարդասպան է,– գոռացի զայրացած: – Մուրադյանը լավ մարդ էր և իրավունք չունեին նման բան անելու:

– Իմ երիտասարդ բարեկամ, Թույլ տվեք ձեզ խորհրդի կարգով մի բան ասել: Երբեք բարձրաձայն մի արտահայտեք ձեր համոզմունքները, քանի որ դա այսօր և այստեղ շատ վտանգավոր կարող է լինել: Տեսեք, գուցե ավելի լավ կլինի, որ մի քանի բան էլ իմանաք: Մուրադյանը մի ահավոր սխալ էր Թույլ տվել երիտասարդ ժամանակ: Հարաբերություններ էր ունեցել մի քուրդ կնոջ հետ: Կարծես անգամ ունեցել էին մի զավակ, և սա էլ իր մնացած կյանքի վրա խոր կնիք դրեց, քանի որ գիտեք, Թե ինչ դժվարին է հարաբերությունը հայերի և քրդերի միջև: Մենք շատ տարբեր ենք, կասեի համարյա հակադիր: Այնուհանդերձ, դրանում համոզված եմ, մենք իրար կհասկանայինք, եԹե Թուրքերը մեզ չենԹարկեին իրենց դավերին: Տարել են. պառակտման և առճակատման քաղաքականություն քրդական ցեղերի միջև՝ միաժամանակ բորբոքելով «սրբազան» գաղափարներ՝ պատերազմելու հայերի դեմ: Արդյունքում ստացվեց մի իսկական աղետ. քրդերն ատում են հայերին, իսկ մենք արհամարհում ենք քրդերին, մինչ սուլթանի կառավարությունը հասնում է իր զազրելի նպատակներին՝ ստրկացնելով երկու ժողովուրդներին էլ: Մի դժոխային արատավոր շրջապտույտ, որում հավանաբար մեղավոր ենք ու անմեղ և ինչ-որ տեղ՝ պատասխանատու: Իսկ ինչ վերաբերում է մեզ՝ հայերիս, նույնպես զուրկ չենք մեղքից: Տաքարյուն ժողովուրդ ենք, մնացածների հանդեպ խոր սեր և սարսափելի ատելություն ենք տածում: Մեղադրում ենք Թուրքերին մեր բոլոր չարիքների համար, բայց մենք նույնպես շատ սխալներ ենք Թույլ տվել և երբեք իսկապես համախմբված չենք եղել: Ամիրաները կամ բուրժուական դասակարգը, որոնց հետ դուք չփվում եք այստեղ՝ Կոստանդնուպոլսում, համարյա միշտ չարաշահել են էնաֆներին՝ աշխատավորներին, և ձեզ ավելին կասեմ, ոչ էլ մեր հայրապետներն են եղել իրենց գործունեության մեջ օրինակելի: Բացի այդ, գործի անցնելուց առաջ հազար ու մի անգամ գլխներիս զոռ ենք տալիս... Միշտ զբաղված ենք հանձնաժողովներ ստեղծելով կամ կազմակերպություններ հիմնադրելով. այս մեկը, այո՛, մեծ ճարտասանությամբ: Ի՞նչ կուզենաք, որ

ասեմ ձեզ: Մարդկային արարածներ ենք... գուցե և չափազանց մարդկային, բայց ի վերջո պատմությունը յուրաքանչյուրին իր տեղը կդնի: Իսկ հիմա խմեք սուրճը, Թեկուզև սառած լինի ինչ-որ մի հայի լեզվին տալու պատճառով:

Հրաժեշտ տվեցի Խաչատուր Մալումյանի տված սարսափելի լուրի դառնագին զգացումով: Խեղճ Մուրադյան: Հազիվ ժամանակ ունեցա նրան ճանաչելու, սակայն առաջին իսկ պահից հասկացա, որ խոսքը մի կատարյալ մարդու մասին էր՝ իմաստությամբ լի: Երբեմն կյանքը սարսափելի դաժան կարող է լինել և մտածեցի, որ պատմությունը անարդար է այդ մեծ հայ ժողովրդի հանդեպ:

Կյանքս Կոստանդնուպոլսում մի նոր Թափ առավ, երբ ծանոԹացա Աբբէդդին փաշայի հետ, որ Մեծ Դռան կողմից նշանակված էր որպես լիազոր ներկայացուցիչ Դիարբեքիրում, քրիստոնյաների նկատմամբ Թույլ տված չարաշահումները բացահայտելու նպատակով: Ֆրանսիայի դեսպանատան միջոցով ինձ հրավիրեցին մի ընդունելության Դոլմաբաղչե՝ սուլթանի արքայական նստավայրը, Աբդուլ Համիդի ծննդյան տարեդարձի կապակցությամբ, քանի որ 1887 Թ. ինձ նշանակել էին երրորդ քարտուղար: Դեսպանն ինձ բացատրեց, որ ինձ առաջարկել է այդ պաշտոնի համար առանց ինձ հետ խոսելու, և նշանակումն արդեն հասել է Փարիզ: Այսպիսով ես ևս դեսպանատան անդամ էի պարտականություններով և իրավունքներով, որը բարելավում էր իմ սոցիալական կարգավիճակը, բայց խանգարում լինել «Լ'Օրոր»-ի հաստիքացուցակում: Երբ դեռ չէր մԹնել, Ժակ դը Ֆավրի ընկերակցությամբ հասա Դոլմաբաղչե: Մոտավորապես ժամը հինգը կլիներ: Բոսֆորը, որին նայում էր պալատի հարավային ճակատը, պողպատի գույնի էր և ճնշող, ասես փոԹորիկ էր խոստանում:

Երբ արդեն այնտեղ էինք, դեսպանն անցավ իր գործերին, ես էլ Թափառում էի ընդարձակ այգով և սրահով, որտեղ տեղի էր ունենալու ընդունելությունը: Այնտեղ հանդիպեցի Իբրահիմ Ջեմոյին, ալբանացի գնդապետին, քառասունին մոտ մի զինվորականի՝ Աբբէդդին փաշայի ընկերակցությամբ, որին ինձ ներկայացրեց որպես Թուրքական մեծ պետության անդամի: Քիչ հետո նրա հետ մենք մտքեր էինք փոխանակում, մինչ Ջեմոն մի կողմից մյուսն էր գնում, քանի որ Թվում էր, Թե բոլորին ճանաչում է:

Աբբէդդին փաշան մարմնեղ մարդ էր, ամբողջովին ճաղատ, հիսունին մոտ, մուգ աչքերով և շատ սպիտակ մաշկով, որի վրա պարզորոշ երևում էր խիտ մորուքը: Հագին ուներ անԹերի համազգեստ՝ զարդարված չքանշաններով:

Իմ նկատմամբ ցուցաբերեց անսովոր ուշադրություն, որն ինձ զարմացրեց, քանի որ ի վերջո իմ նվազ արժանիքների բերումով ես Ֆրանսիայի դեսպանատան երրորդ քարտուղարն էի:

– Ուրախ եմ ծանոթանալու մի ֆրանսիացի երիտասարդ դիվանագետի հետ: Այստեղ՝ Թուրքիայում հարգում ենք Անգլիային, Գերմանիային և Ռուսաստանին, բայց Ֆրանսիայով հիանում ենք: Դա ոչ միայն մեր կարծիքն է Եվրոպայում, այլև աշխարհում: Ազատության հայրենիքն է... Եվ այսպես, բարեկա՛մս, վաղո՞ւց եք Կոստանդնուպոլսում: Ձեզ չեմ առարկի, որ այստեղ՝ Թուրքիայում, ունենք շատ խնդիրներ, ինչո՞ւ ժխտել ակներև մի բան, սակայն բացի դրանից նկատած կլինեք, որ սա մի հրաշալի երկիր է, որտեղ ջանում ենք ընդօրինակել Ֆրանսիային, թեև շատ բաներում, իհարկե, սովորելու դեռ շատ բան ունենք:

Ձկարողացա ինձ զսպել: Երբ ուզեցի ինքս ինձ հաշիվ տալ, արդեն ուշ էր լեզուս կծելու համար, քանի որ ես նրան ասացի դա առանց խորհելու, թե դիվանագիտության աշխարհում որն է իմ նոր դիրքորոշումը:

– Իսկ ի՞նչ կասեք հայերի մասին... Այդ խնդիրը լուծման կարիք ունի:

Ձինվորականն ինձ թույլ չտվեց շարունակել, քանի որ պատասխանեց հանկարծակի, վերահսկելով իր պատասխանը կամ առնվազն ջանալով դրանում, նայելով ինձ վերևից ներքև ասես զարմացած:

– Ի՞նչ եք ցանկանում ակնարկել: Հայերի հետ ոչ մի խնդիր չկա, օսմանյան հպատակներ են, ինչպես մնացածները,– նկատեցի, որ այդ մարդը զայրույթից դողում է իմ տված հարցից: – Դուք ևս ճնշված հայերի մի նոր բարեկա՞մ եք, դե եթե այդպես է՝ ասեմ ձեզ, որ սխալ կողմ եք ընտրել, քանի որ հայերը երբեք հավատարիմ չեն եղել Օսմանյան կայսրությանը: Նրանց համարում են ազգ, նրանց թույլ է տրվել պահպանել իրենց կրոնը, իրենց լեզուն, իրենց ավանդույթները: Գոյություն ունեն համաձայնագրեր, որոնք պահպանում և հովանավորում են նրանց քաղաքացիական և կրոնական ազատությունները: Մի մոռացեք, որ ունեն սեփական պատրիարք, իսկ Օսմանյան պետության Սահմանադրությունը պաշտպանում է նրանց տարբերությունները:

Դուք ծանո՞թ եք Թանզիմաթին: Նրանում երաշխավորվում են օսմանյան բոլոր հպատակների ազատությունները, կյանքի, արժանապատվության և անձնական ունեցվածքի իրավունքները և հայերը, թեև ձեզ համար ցավալի է, նրանցից են: Ոչ ոք: – Աբբէդդին փաշան

չրջվեց դեպի ինձ՝ ընդգծելով – ոչ ոք, լսո՞ւմ եք ինձ, իրավունք չունի միջամտելու այն հարցում, թե ինչպես է Թուրքիան իրականացնում նրանց ազատությունները... Բայց կրկնում եմ ձեզ, հայերն այն հպատակները չեն, որ հարգեն օրենքները, երբեք դա չեն արել: Մի բան, որին հավակնում են, անհեթեթ ցնորք է, որ կրկին ձեռք բերեն այն երկիրը, որ կոչում են Պատմական Հայաստան, երկիր՝ միայն իրենց երևակայությունում: Այստեղ միայն մի հայրենիք կա՝ դա Թուրքիան է: Ինձ հասկանում եք: Ձեզ մի օրինակ բերեմ: Եթե որևէ հարկահավաք չափն անցնում է, եթե որևէ հայ վիրավորվում է որևէ ընդհարման ժամանակ, եթե նրան որևէ հանցանքի համար բանտարկում են, ուրեմն դա վերածվում է թուրքական կառավարության՝ հայերի դեմ դավադրության: Խաղի կանոնները չեն ընդունում, և մի բան էլ ձեզ ասեմ, դա անչուշտ անուն ունի, կոչվում է հայրենիքի դավաճանություն և կավելացնեմ մի բան. շատ թուրքեր այլևս չեն հանդուրժում այս իրադրությունը: Այստեղ՝ Թուրքիայում, կուշտ ենք հայերի անհիմն բողոքներից, և գուցե ստիպված լինենք դրա վերաբերյալ մի բան անել: Տեսեք, Թուրքիայում բացի հայերից կան թուրքեր, նաև քրդեր, հույներ Փոքր Ասիայում, եզդիներ, հրեաներ, արաբներ, ասորիներ, չերքեզներ... և շատ եվրոպացիներ: Ոչ մեկն այնքան անհավատարիմ չէ, որքան հայը, ոչ ոքի չեն տվել այդքան արտոնություններ: Ամիրաները այնպիսի արտոնյալներ են, այնպես որ հարցրեք նրանց: Սուլթանների կառավարությունները նրանց թույլ են տվել դառնալ հարուստ, ապրել այնպես, ինչպես ոչ ոք՝ անգամ Եվրոպայում:

Որտե՞ղ են նրանց հայկական պահանջատիրությունները: Ահ, եթե ես ձեզ պատմեի: Նրանք երբեք չեն գոհանա, մինչև Թուրքիայից անկախ հայկական տարածք չունենան: Իսկ դրան, բարեկամս, երբեք չեն հասնի, քանի որ պատմությունը պատմություն է, և ամեն մեկին իր տեղն է դնում: Լավ, սակայն անկախ ամեն ինչից, ձեզ ասեմ, որ Հայկական հարց գոյություն չունի: Թուրք ժողովուրդը դիմանում է եսասեր վաճառականների այդ ցեղին իր հանդուրժողության և հպատակների նկատմամբ սուլթանների մեծահոգության շնորհիվ: Դուք չգիտեք, թե իրականում ովքե՞ր են այդ հայերը...

Երկար ճամարտակելը թվում էր, թե հանգստացրել էր նրան, և նա ինձ ժպտալու մի անօգուտ ջանք գործադրեց:

– Կարծում եմ, որ դուք տեղեկատվության կարիք ունեք, ու ես պատրաստ եմ ձեզ օգնել: Ահավասիկ իմ այցետոմսը: Երբ ցանկանաք կխոսենք հայերի հետ, որոնք Թուրքիայի հանդեպ ատելություն չեն

զգում, և ինչ վերաբերում է ձեզ, մայե, կարծում եմ, որ պետք է փորձեք ջանալ հասկանալու իսկական իրավիճակը: Սա մեծ երկիր է, իր խնդիրներով, ինչպես բոլորը: Թե՞ դրանցից զերծ է Անգլիան Իռլանդիայի հետ: Կամ Ֆրանսիան Կորսիկայի... Եվ շատ շատերը՝ ազգային փոքրամասնությունների հետ բազմաթիվ բախումներով: Ինձ լսեք, ուշադրություն մի դարձրեք նենգ խոսքերին: Այս աշխարհում միայն մի մեծ երկիր կա և կոչվում է Թուրքիա: Ով ուրիշ դիրք բռնի, դավաճան է կամ քարոզիչ:

Զինվորականը չրխկացրեց կրունկները, թեթև խոնարհեց գլուխը և առանց այլևայլության հեռացավ:

Ընդունելությունը շարունակվեց, թեև սուլթանը չէր երևում՝ շատերին հիասթափություն պատճառելով: Հետո, Ժակ դը Ֆավրը ինձ բացատրեց, որ դեսպաններին ընդունել էր վերին հարկի սրահներից մեկում:

Մի քանի օր անց Աբբէդին փաշայից ստացա մի գրություն, որին կից փաթեթով ինձ ուղարկել էր գերմանական արտադրության մի նոր ատրճանակ:

Անպաճույճ այդ գրության մեջ ասված էր.

> «Իմ սիրելի բարեկամ Անրի դը Լատուրին՝ սիրով և այն ցանկությամբ, որ երբեք կարիք չունենա գործածել այն:
>
> Ի նշան բարեկամության՝ «Աբբէդդին փաշա»:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1887

10. ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՓԱՐԻԶ

Պարզվեց, որ Հովհաննես Օհանյանը՝ բժիշկը, որ ապրում էր մի հարկ վերև և որի հետ սկսել էի բարեկամական հարաբերություն ունենալ, քանի որ նույնիսկ ինձ բուժեց, երբ ուժեղ մրսել էի, հրավիրեց ինձ իրեն ընկերակցել Սիմոն Զիլինգարյանի տուն, որի հետ հեռավոր ազգական էր: Բավարար մի բան հայկական աշխարհում. եթե մեկը համարվում է ընտանիքի մերձավոր, հետևաբար ունի բավարար վստահություն իր հետ հյուր տանել և ներկայացնել ինձ:

Զիլինգարյանը ապրում էր մի հին շենքում, շատ մոտ Գալատայի աշտարակին, վերջին հարկում, մի հատուկ վերնահարկում՝ մի շատ հարուստ գրադարանով և բաց պատշգամբներով, որոնք ինքը տարիների ընթացքում փակել էր, միացնելով ներսի սենյակներին՝ դրանք դարձնելով սրահներ:

Այնտեղից նշմարվում էին Բոսֆորի և Ոսկեղջյուրի միացումը՝ առագաստանավերի, մի քանի շոգենավի և շատ ձկնորսական նավակների բազմությամբ, որոնք գնում էին և գալիս: Իրոք, դա ցնցող տեսարան էր, որին չէի հասցնում ընտելանալ, մզկիթների և պալատների կտրտված ուրվագծերով, որոնք այդ գեղեցկագույն քաղաքին տալիս էին եզակի բնույթ:

Մտածեցի, որ ինձ հյուրընկալողը ընտրել էր ապրելու համար մի անկրկնելի վայր և այն պահից, ինչ մտա այնտեղ, հասկացա, որ այդ տունը մեծ պատմություն ունի և նրա տերը շատ յուրահատուկ մարդ է:

Սիմոն Զիլինգարյանը բարձրահասակ էր, նիհար, խորաթափանց հայացքով, շատ սպիտակ դեմքով և դեպի հետ սանրած խիտ, տեղտեղ սպիտակ մազերով: Նրա ոսկեզօծ ակնոցը նրան տալիս էր ակադեմիական տեսք, իսկ նրա անթերի, թեև մի քիչ մաշված հագուստը՝ հին ժամանակների դասախոսի կերպար: Նա ուներ վաղուցվա ծխողի խզված ձայն: Սակայն ուներ նաև այնպիսի հմայք, որ նրան լսողը չէր կարող զերծ մնալ նրա համարյա հիպնոսացնող ազդեցությունից: Այդ պատճառով էլ նա միշտ դառնում էր խոսակցության կենտրոնը:

Այդ պահին էլ իմացա, որ խոսքը Կոստանդնուպոլսի հայերի շատ կարևոր ժողովի մասին է, կոնկրետ այն մարդկանց, ովքեր Ներքին գործերի կոմիտեին էին պատկանում, շատ անհանգստացած մուսուլմանների և քրիստոնյաների միջև հարաբերությունների վատթարացումից:

Այնտեղ էլ հասկացա, որ ի զարմանս ինձ՝ իմ բարեկամ և հարևան Օհանյանը արտաքուստ այն հանգիստ ծառայողը չէր, որ թվում էր իր առօրյա կյանքում, այլ ի ծնե առաջնորդ, որը պահպանում էր իր բուրժուական անձնավորության կերպարը զուտ ստրատեգիական նպատակով և որ իմ ներկայությունը այդ ժողովում ոչ թե պատահականության արդյունք էր, այլ այն բանի, որ կարիք ունեին մի անկախ եվրոպացու, ինչպես իմ դեպքում, դիվանագիտական պաշտոնով, որը համոզվեր, ըստ իրենց, որ ստեղծված վիճակը իսկապես թուրքական կառավարության մշտական թշնամական գործողությունների և մեքենայությունների արդյունք է:

Չիլինգարյանը սկսեց ժողովը: Ներկա գտնվողներին ավանդաբար ներկայացրին, մինչ թեյ էինք խմում, որը ոչ մի կապ չուներ եվրոպական սովորույթի հետ, քանի որ մի մեծ սեղանի վրա դրել էին մեծ քանակությամբ սկուտեղներ և ափսեներ, տարբեր աղցաններ և ճաշատեսակներ՝ պատրաստված հայկական ավանդական եղանակով:

Երբ ասացի, որ ինձ շատ է դուր գալիս թուրքական խոհանոցը, տիրեց բացարձակ լռություն:

– Իմ երիտասարդ բարեկամ,– Չիլինգարյանը դիմեց ինձ կատարյալ ֆրանսերենով,– թուրքերը բերել են միայն մի հասարակ քեբաբ, միսը պատրաստված խարույկի վրա, մի մեծագույն սնապարծություն և իրենց արհամարհանքը մյուսների նկատմամբ, ովքեր մուսուլմաններ չեն՝ թուրք կամ օսման: Մշակույթի մնացած մասը հռոմեական, բյուզանդական, Միջերկրականի հույների և ամենից շատ հայկական ժառանգություն է: Քանզի բազմիցս ձեզ այդ ասած կլինեն, այդ ժամանակ Հայաստանը իրավական պետություն էր՝ իր սեփական մշակույթով, իր գրերով, իր հարուստ լեզվով, իր բանաստեղծներով, դրամատուրգներով, գիտության մարդկանցով, այսինքն՝ որպես քաղաքակիրթ երկիր:

Այն ամենը, ինչ մատուցվում է այս սեղանին, զուտ հայկական ճաշատեսակներ են մեզ հասած դարեդար, և իրոք, մեծ մասամբ հրաշալի: Ուզո՞ւմ եք համտեսել այս խորոված կամ այս երշիկը: Բայց ավելի լավ է սկսենք այս խորտիկներից և կանցնենք բյուրեկներին՝ ընդեղենին: Դե ինչ, համտեսեք այն, ինչ ավելի ուզենաք, բոլորն էլ վստահելի են, ամենն էլ հայկական է:

Դուք ինչպե՞ս եք ասում՝ «Պատրաստված տանը»: Լավ, իսկ հիմա նստեցեք, քանի որ երկար ենք խոսելու և իրադրությունից կախված: Եթե համաձայն եք, ի հարգանք մեր հրավիրյալի պատվին, ժողովն անց կացնենք ֆրանսերեն:

Լավ: Թույլ տվեք սկսել հարգանքով՝ հիշելով քուրդ կառավարիչ Օբեյդուլլահին: Նրան սուլթանը համոզել էր դառնալ քրդերի առաջնորդ: Հայ ծագումով մի թուրք, որի անունը չեմ տա, ինձ պատմել է Դոլմաբաղչեում սուլթանի և կառավարչի միջև տեղի ունեցած զրույցի մասին: Աբդուլ Համիդը միշտ էլ մեզ ատել է, քանի որ մեզ է մեղադրում այն բոլոր չարիքների մեջ, որոնք ամայացնում են կայսրությունը և ուզում էր կառավարիչ Օբեյդուլլահին հայերի դեմ դարձնել իր զենքը:

Ճիշտ է, որ Կոստանդին Կամսարականը և ես, մեծ ջանքերով, համոզեցինք կառավարչին, որ իրենց իսկական թշնամիները Պարսկաստանի քրդերն են: Ի՞նչ իմաստ ուներ հարձակվել հայերի վրա, որ իր դեմ ոչինչ չունեին և անուշադրության մատնել թիկունքը: Զուտ բանականության հարց էր, և Օբեյդուլլահը խորաթափանց մարդ էր, իսկույն հասկացավ: Դրանից հետո նա մեզ այլ կերպ էր նայում: Շատ ցավալի էր, որ պարտվեց: Հանձին նրա մենք միշտ կունենայինք մեր հավատարիմ դաշնակցին: Ոչ թե հիմիկվա նման, որ մեզ ուզում են դարձնել իսլամի թշնամի, ինչպես այդ Սայիդ Ջեմալ ալ-Դինը, որ առաջ է քաշում պանիսլամիզմը և հետևաբար պանթուրքիզմը: Կարծում եմ, որ նա ներկայումս բնակվում է Ֆրանսիայում: Նրա համար հայերս միմիայն խոչընդոտ ենք: Մի քանի քրիստոնյաներ արգելակում են մեծ Թուրքիայի ճանապարհը, որը հավակնում է զավթել Ատրպատականից այն կողմ:

Ձեզ մի բան կասեմ, որից գլուխս պտտվել է: Սուլթան Աբդուլ Համիդը կարծիքներ է հավաքում այնքան սարսափելի և անհեթեթ մի բանի մասին, թե ինչ կարող էր պատահել, եթե հայերը անհետանային Թուրքիայից: Ինձ մի նայեք կարկամած: Բարեփոխումների ամբողջ այս պատմությունը ընդամենը մի ծխե չղարշ է, և անգլիական դեսպանը՝ սըր Էդվարդ Թորնթոնը բոլորից լավ գիտե այդ:

Նա ցանկանում է լինել մեր հովանավորը. կեղծի՛ք: Անգլիան երկակի խաղ է խաղում և միակ բանը, որ նրան հետաքրքրում է՝ պահպանել ստատուս քվոն, որ ոչ ոք չփորձի մասնատել թուրքական կայսրությունը:

Քանի որ անգլիացիներին ձեռնտու է, որ մնա, ինչպես որ կա, քանզի Թուրքիան նրանց համար բացի մի հսկա չուկա լինելուց՝ ապահով ուղի է մոտենալու Միջագետքին և Հնդկաստանին: Ձենք

կարող հավատալ, թե Եվրոպան կօգնի հայերին և եթե դուք դրանում համոզված չեք, կուզենայի, որ մեր բարեկամ Օհանյանը մեզ պատմի այն, ինչ լսել է անցած օրը:

Այն կարծիքը, որ մինչև այդ պահը ունեի Հովհաննես Օհանյանի՝ որպես մի բուրժուական մարդու մասին, որին միայն հետաքրքրում էին իր աշխատանքն ու ընտանիքը, մի քանի ակնթարթում հօդս ցնդեց: Թվում էր վերափոխված, ուրիշ, շատ ավելի եռանդուն, ոչ մի կապ այն բարեհոգի մարդու հետ, որն ամիսներ առաջ ինձ ճաշի էր հրավիրել իր տուն՝ որպես ընտանիքի հայր:

– Այո՛, Սիմոն Զիլինգարյան: Շնորհակալություն քեզ վստահության և այն ամենի համար, ինչ անում ես հանուն մեր ժողովրդի: Բոլորդ էլ գիտեք, որ ցանկացած ժողովուրդ հիմնվում է սեփական մշակույթը պահպանելու կարողության վրա: Դա կարող են անել միայն նրանք, ովքեր ի վիճակի են: Շնորհակալություն, Սիմոն, այս դըժվարին ժամանակներում հավատը չկորցնելու համար:

Ձեզ կխնդրեմ, որ լինեք ողջախոհ: Գիտեք, որ երբեմն ինձ Դոլմաբաղչեից կանչում են թագավորական հարեմին սպասարկելու համար, քանի որ բոլորդ էլ գիտեք, որ ես մասնագիտությամբ գինեկոլոգ եմ: Ինձ ներս են մտցնում հյուսիսային դռնից, որն ուղիղ տանում է դեպի հարեմ, քանի որ սա ամենահամեստ դուռն է, և սովորաբար ընդունում եմ իշխանուհիներին և սիրուհիներին փոքր չենքում, որ հայտնի է որպես այգեպանի տուն: Մի երկու շաբաթ առաջ այնտեղ էի: Թեև ժամացույցների հանդեպ սուլթանի ունեցած մոլուցքին,– այնտեղ թվում է, թե ժամանակը ամենաանկարևորն է,– ինձ հանկարծ հայտնեցին պալատի ներսում շտապ օգնություն ցույց տալու մասին և ինձ խնդրեցին, որ անմիջապես հասնեմ:

Դա մի լաբիրինթոսային և վիթխարի չենք է: Վազեցի ներքինու հետևից միջանցքներով և հարկաբաժիններով, մինչև որ հասանք թեվերից մեկը, որտեղ գտնվում են անձնակազմի ննջարանները: Ինձ զարմացրեց այն, որ հիվանդը գերմանացի զինվորական էր, որը սուլթանի չքախմբի անդամներից էր. հենց իր՝ սուլթանի մոտ էր եղել և սրտի կաթված ստացել: Ահա թե ինչ է կյանքը. մինչ ես փորձում էի նրան կրծքի մերսում անել, եկավ գերմանական դեսպանատան բըժիշկներից մեկը: Խոսքը մի վաղեմի ընկերոջ՝ Իոախիմ ֆոն Շյոնեբերգի մասին էր, որի հետ սովորել էի Բեռլինում: Ինչ փոքր է աշխարհը: Ասեմ ձեզ, որ հիվանդին ոչնչով չկարողացանք օգնել՝ բացի նրա մահը հաստատելուց: Բայց պայմանավորվեցինք հնարավորինս շուտ տեսնվել, քանի որ Բեռլինում լավ ընկերներ էինք եղել:

Այդպես էլ եղավ, և այդ նույն երեկո իրար հանդիպեցինք իմ մասնավոր բուժարանում:

Ֆոն Շյոնեբերգը ընդամենը մի ամիս է, ինչ Կոստանդնուպոլսում է և դեռ գտնվում է չարունակ զարմացողի փուլում: Ինձ բացատրեց, որ Գերմանիան Թուրքիայի հետ համաձայնության է եկել: Միշտ կարծել ենք, թե գերմանացիները մարտականորեն տրամադրված մարդիկ են: Ասեմ ձեզ, որ ֆոն Շյոնեբերգը իմ ճանաչած ամենախաղաղասեր և հակառազմատենչ մարդկանցից է, համաձայն չէ այն բանի հետ, ինչ այժմ հասունանում է: Ինձ ասաց, որ լսել է և գիտե Գերմանիայի մտադրությունը ֆինանսապես և ռազմականորեն օգնելու Թուրքիային: Մինչև այդտեղ առարկելու ոչինչ չկար, բացի մի բանից, ինչ ինձ ասաց մի պահ, որ օգնելու են Թուրքիային ազատվելու Հայկական հարցից: Ինչպես որ լսում եք: Անմիտ բան է թվում և հիվանդագին մտքին հատուկ, բայց ճշմարիտն այն է, որ խոսքը բոլորովին էլ նոր բանի մասին չէ, քանի որ այս կարգի խոսակցություններ սկսվել են տարիներ առաջ հենց Բեռլինում, մինչ ժողովներ էին գումարվում յոթանասունութի հուլիսի համաձայնագրի առիթով: Այդ ժամանակ առաջին խոսակցություններն էին գնում այս համաձայնագրին հասնելու, որից ոչինչ հայտնի չէ և դեռ գաղտնի է պահվում. համաձայնության են գալիս ռազմավարական և լարվածությունից զերծ Թուրքիայի օգտին, որն իրենց կարծիքով հարուցում են քրիստոնեական փոքրամասնությունները, և ամենից շատ մենք՝ հայերս:

Ավելացնեմ, որ ընկերս՝ ֆոն Շյոնեբերգը իրեն չի համարում հայրենիքի դավաճան, ընդհակառակը, վախենում է, որ այդ ճանապարհով իր երկիրը կործանեն, օրեցօր աճող արմատական ռազմատենչ ոգով, որը կանխագուշակում է տարածքային մեծ ընդարձակում:

Ըստ իր բացատրության՝ Գերմանիան երկակի խաղ է խաղալու, չարունակելու է պնդել ողջ աշխարհի առջև այն բանը, որ Թուրքիան պետք է ձեռնամուխ լինի բարեփոխումների, բայց իրականում սկըսելու է աջակցել սուլթանին իր նենգ մտահղացումներում: Ինձ պատմեց, որ մի ժողովի ժամանակ, նույնպես տեղի ունեցած Դոլմաբաղչեում, պարզաբանել էին այն հարցը, որ արևելյան նահանգներում հայ բնակչությունը ներկայացնում է Թուրքիայի սեփական գոյության համար վտանգ և խոչընդոտ տեղի մուսուլմաններին՝ Կասպյան թուրքմեն ժողովրդին թուրքական մեծ կայսրության մեջ ներգրավելու համար, որը ձգվելու է մինչև Կենտրոնական Ասիա... Եվ պարոնա՛յք, այդ ամենը կարող է թվալ արտառոց, անհեթեթ, անիրական, անախորոնիկ իր հասկացություններում, սակայն հստակորեն մեր ազգի համար մի սպառնալիք է, քանի որ այսօրվա օրով ո՛չ

Հայաստանը և ո՛չ էլ հայերը պատրաստ չեն այդ մեծածավալ արհավիրքին:

Սիրելի՛ բարեկամներ, սա մի նոր բան է մեզ համար, և չպետք է դրան թեթևակի նայենք՝ կարծելով, թե անհնարին է, որ մի քրիստոնյա երկիր, ինչպիսին Գերմանիան է, ընդունակ լինի դառնալ մեղսակիցը այդպիսի ահավոր բանի, միանալով մի մուսուլմանական երկրի՝ նման ծանր ոճիր իրականացնելու համար: Գիտեմ, որ հրաժարվում եք ընդունել, որ կարող եք կասկածի տակ առնել ինձ կամ Շյոներերգի մտավոր վիճակը: Բայց ձեզ վստահեցնում եմ, նրան լավ եմ ճանաչում, նա պատվախնդիր մարդ է, ամուր համոզմունքներով, որ լավ գիտե յուրայիններին և գիտե, որ զավթողականությունը, ռազմամոլությունը և կայսեր փառամոլությունը սահման չունեն:

Հիմա, ինչպես երբեք, պետք է միավորվենք հայերս Փարիզում Ավետիք Նազարբեկյանի կողմից ստեղծված այդ նոր կուսակցության շուրջ. գուցե այնքան հատկանշական հնչակ անվամբ կարողանա լինել ապագայի հույս: Եթե չնախապատրաստվենք մեր գլխի գալիքին, ոչինչ չենք կարողանա անել նման զորեղ թշնամիների դեմ: Միշտ էլ մեր պարտքն է եղել պաշտպանել մեր գաղափարները, մեր համոզմունքներն ու ավանդույթները, բայց այս անգամ պետք է փորձենք պաշտպանել մեր սեփական գոյությունը:

Նկատեցի, թե ինչպես բոլորը լուռ մնացին՝ փոխանակելով կասկած հարուցող հայացքներ: Կրկին ձայնը տրվեց Սիմոն Զիլինգարյանին՝ համընդհանուր հուսախաբության մեջ.

— Բարեկամնե՛ր, այն, ինչ հենց նոր ձեզ պատմեց Օհանյանը, ասես մի կուժ սառը ջուր է լցնում մեր այն սպասումներին, որ Բեռլինի համաձայնությունը կարող էր նշանակել՝ որևէ դրական փոփոխություն մինչ այժմ մեր նկատմամբ Թուրքերի ցուցաբերած վերաբերմունքում: Նրանցից ինչ կարող ենք սպասել, բացի նվաստացումներից, անխտիր կոտորածներից. փորձում են կործանել մինչև վերջին խաչքարը՝ ամեն հայկականի հանդեպ սոսկալի ատելությունից մղված: Նրանք հավակնում են բացառապես Թուրքերի երկրի՝ առանց այլ ազգերի և կրոնների, քանզի համոզված են, որ այդ դեպքում Եվրոպան պատրվակ չի ունենա ներխուժելու Թուրքիա: Անգլիայի համար գոյություն չունենք. նրանց ձեռնտու է խոսել «քրդերի հարցի» մասին և պնդել, որ մեր Հայաստանը ամեն դեպքում պետք է կոչվի Քրդստան: Բրիտանացիների անտեղյակությունից չէ, այլ պետության նկատառում՝ թեև մի նենգ նկատառում, ի վերջո Թուրքական կառավարության նույն երգն է: «Հայաստա՞ն,— ասում են,— Թուրքիայում ոչ մի վայր չկա այդ անունով»: Այժմ Գերմանիան է, որ ասում է, թե ավելորդ ենք: Կարծում եմ, որ կարող ենք դիմել միայն Ֆրանսիային՝ իրավունքների ու ազատությունների երկրին և Ռուսաստանին, որ մեզ միշտ օգնել է..., թեև մեծ նախապայմաններով և իր ավանդական ռազմավարությամբ՝ լուծել հայկական աղը ռուսական կաթսայում:

Եղբայրներ, պետք է վարվենք, ինչպես Աղասին՝ մեր վարպետ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի հերոսը: Պետք է մեր արյունը թափենք, պաշտպանելով ցանկացած հայկական գյուղ, գյուղակ կամ քաղաք, քանի որ ոչ ոք հանուն մեզ ոչինչ չի անի, ոչ էլ փրկություն կգա Եվրոպայից կամ Ռուսաստանից, որքան էլ որ երազենք այդ հույսերով: Խորհենք դրա շուրջ, փորձելով գտնել ճանապարհը, բայց վախենամ Ռաֆֆին իրավացի էր, որ առանց արցունքի և զոհերի Հայաստանի համար փրկություն չի կարող լինել:

Ժողովն ավարտվեց մթնշաղին: Մարդկանց միջև մթնոլորտը շատ հոռետեսական էր, և Սիմոն Զիլինգարյանը ամուր սեղմեց ձեռքս՝ հրաժեշտ տալիս:

— Մայե դը Լատուր, հայերս այլևս ոչ մի երկրի չենք հավատում, թեև իրենց հռչակում են մեզ բարեկամներ, այլ հավատում ենք միայն մարդկանց: Հայերի իսկական բարեկամները նրանք են, ովքեր մեզ ճանաչում են, բարի կամքի տեր զգայուն մարդիկ, որոնք ոչ մի կերպ չեն կարող ընդունել այն ահավոր անարդարությունները, որ մեզ ուզում են պարտադրել Թուրքերը: Դուք, կասկածի մի նշույլ անգամ չունեմ, մեծ սրտի տեր հայ եք, և դա մեզ համակում է հպարտությամբ ու գոհունակությամբ, քանի որ միշտ էլ լավագույններն են մեզ հասկանում: Դուք շատ բան կարող եք անել հանուն մեզ, և Հայաստանը երբեք չի մոռանա իր իսկական բարեկամներին: Թող Աստված ձեզ օրհնի:

Վերադարձա իմ բնակարանը մտախոհ, որտեղ գտա դեսպանատնից մի գրություն, որ ինձ հանդիպում էր նշանակում հաջորդ օրը: Դրան առանձնապես նշանակություն չտվեցի, քանի որ դա էր այն ձևը, որով դեսպանն ինձ կանչում էր, հաճախ անգամ մասնակցելու մի երեկույթի կամ բարեկամական ընթրիքի:

Այնուամենայնիվ, երբ առավոտյան մտա դեսպանատուն, տեսա, որ բեռնում էին մի սայլ՝ արկղերով ու ճամպրուկներով: Երբ բարձրացա դեսպանի գրասենյակ, ինձ ընդունեց գրկախառնությամբ, բայց նրա աչքերում նկատեցի տխրության և անհանգստության մի շղարշ:

– Վատ լուրեր ունեմ ձեզ համար: Խոսքն իմ փոխարինման մասին չէ, որը ինչ-որ տեղ սպասվող բան էր: Ասեմ ձեզ, որ ինձ փոխարինելու են Պոլ Կամբոն անունով մի շատ լավ բարեկամով, մի հրաշալի դիվանագետ և կիրթ մարդ, որոնցից քիչ են,– նկատեցի, որ կասկածում էր, բայց շարունակեց: – Նստե՛ք, բարեկամս և լսեք ինձ ուշադիր: Պետք է ձեզ մի սարսափելի լուր տամ, ձեր մայրը վախճանվել է: Շատ եմ ցավում, ընդունեք իմ անկեղծ ցավակցությունները:

Մնացի առանց իմանալու՝ ի՞նչ անել և ի՞նչ ասել: Անմիջապես աչքերիս առաջ հառնեց նա՝ ուժեղ ու կենսունակ, և ես չկարողացա արձագանքել: Ժակ դը Ֆավրը, որ փորձառու մարդ էր, ինձ գրկեց և մնաց իմ տրամադրության ներքո:

– Տեսեք, Անրի: Այս գիշեր ես չոգենավ եմ նստում դեպի Մարսել երթուղիով, ձեզ առաջարկում եմ մի տոմս, քանի որ իմ տրամադրության տակ կան տարբեր խցիկներ, իսկ մեկը պատահաբար մնացել է ազատ: Մտածեք այդ մասին, եթե ուզում եք ուղևորվել Ֆրանսիա, սա ամենաարագ և ամենաապահով միջոցն է: Հինգ օրում կլինենք Մարսելում, իսկ այնտեղից կնստեք Փարիզ գնացող գնացք: Համաձա՞յն եք:

Երկար չմտածեցի: Երբ տեղ հասնեի, մայրս թաղված կլիներ, բայց պետք է դասավորեի նրա թղթերը և ամեն ինչին տեր կանգնեի: Համաձայնեցի և սեղմեցի դեսպանի ձեռքը:

Այսպես պատահեց, որ 1887 թ. վերջին վերադարձա Ֆրանսիա: Երբ նավը լքում էր Կոստանդնուպոլսի նավամատույցը խորանալով Մարմարա ծովում՝ ինքս էլ ինձ չէի կարող պատկերացնել այն, ինչ ճակատագիրը պատրաստվում էր ընձեռել ինձ՝ կապված այդ էկզոտիկ և բարդ աշխարհի հետ:

1884 – 1894

11. ՓԱՐԻԶ – ՆՅՈՒ ՅՈՐՔ

Հասա Փարիզ այն ժամանակ, երբ մեկ շաբաթ առաջ մորս հանձնել էին հողին Մոնպառնաս գերեզմանոցում: Ընդամենն ինձ հաջողվեց այցելել մեր ընտանեկան պերճաշուք պանթեոնը և լռության մեջ խորհրդածեցի, որ գուցե ես էլ պետք է նրանց կողքին լինեմ: Մինչ քայլում էի դեպի ելքը՝ տեսա մի տպավորիչ տապանաքար արձանով, որը կարծես զննում էր ինձ: Շառլ Բոդլերինն էր՝ «Չարի ծաղիկներ»-ի հեղինակի: Թուրքիայում դրանք արագ էին աճում, անկախ նրանից, թե Եվրոպայում արդյոք գիտակցո՞ւմ էին, թե ի՞նչ է կատարվում այնտեղ, եսասիրությամբ և բութ անտարբերությամբ նայելով հեռավոր այլ ժողովուրդների խնդիրներին այն համոզմունքով, որ նրանք շատ քիչ կամ էլ առհասարակ ոչնչով չէին կարողանալու ազդել եվրոպական երկրների ապագայի վրա: Ինչպիսի՜ անհեթեթ տեսակետ:

1888 թ. ձմռանը շատ աշխատեցի: Մեր ընտանիքն ուներ կարևոր շահույթներ ոչ միայն Փարիզում, նաև Բրյուսելում, Լիոնում ու այլ քաղաքներում, և ես ստիպված ստանձնեցի կարգավորելու բոլոր թղթերը և կատարել մանրազնին այցելություններ, վերստուգումներ՝ կալվածքների և գործվածքեղենի տարբեր ֆաբրիկաների գործունեությունը վերահսկելու համար: Մտածեցի, որ որոշ ժամանակ պետք է դրանցով զբաղվեմ, քանի որ աններելի կլիներ, որ սերունդների թափած ջանքերից հետո այդ կարևոր ժառանգությունը իմ մեղքով փլուզվեր:

Մյուս կողմից՝ իմ իսկական կիրքը այդ տարիներին շարունակում էր լինել լրագրությունը: «Լ'Օրոր»-ի տնօրենն ինձ տեսակցություն նշանակեց իր գրասենյակում և իր ցավակցություններից հետո շնորհավորեց ինձ Թերթի այն տեղեկությունների կապակցությամբ, որ վերջին տարիներին ուղարկել էի Կոստանդնուպոլսից: Ավարտելիս ինձ խնդրեց, որ ընդունեմ միջազգային կապերի բաժնի գլխավոր խմբագրի պաշտոնը: Նկատելով, որ խուսափում եմ, ինձ բացատրեց, որ կարող էի ի նկատի ունենալ երկու կից գլխավոր խմբագիրների օգնությունը, որը կհեշտացներ իմ աշխատանքը: Այլ տարբերակ

չկար: Ընդունեցի այդ պաշտոնը և դիմեցի արտգործնախարարությունում ժամանակավորապես աշխատանքս դադարեցնելու խնդրանքով: Ես իսկապես կարոտում էի լրագրությունը, իսկ դեսպանատան իմ փորձն ավելի դրական չէր, քան ես սպասում էի: Բայց տնօրենին պարզ ասացի, որ դրան համաձայնվում եմ միմիայն հանուն Թերթի հետ կապ պահպանելուն և որ պետք է օգտվեմ լիակատար ազատությունից: Տնօրենն ընդունեց իմ բոլոր պայմանները, և չկարողացա մերժել: Ի վերջո, այդ Թերթն էր իմ առաջ բացել աշխարհի դռները, և երբեք չէի կարողանա փոխհատուցել իմ նկատմամբ նրա հավատը:

Այնուամենայնիվ, այդ պաշտոնը խլում էր իմ մնացյալ ժամանակը, որի պատճառով էլ սուտ կլիներ, եթե ասեմ, որ անցնում էին օրերը և ես դադարել էի մտածել Թուրքիայի ու նրա խնդիրների մասին: Դա եղել էր իմ կյանքի հետաքրքիր ժամանակներից մեկը, որ երբեք չէի մոռանա, սակայն Փարիզում պետք է այլ բաների մասին մտածեի, իսկ Օսմանյան կայսրությունը կրկին դառնում էր հարաբերական, և դառնում էր խմբագրության աշխարհի քարտեզին մի բաց կապույտ բիծ և մի քանի դառնաքաղցր հիշողություններ:

Ստիպված էի ընդունել, որ անգամ ինձ համար ժամանակ չունեի: Փարիզում ամեն ինչ անցնում էր ֆինանսական, առևտրական, սոցիալական և լրագրական իրադարձությունների արագ հաջորդումով, որոնք ինձ չնչելու ժամանակ չէին տալիս:

Հանկարծ բացահայտեցի իմ ազգանունների կարևորությունը, իմ տնտեսապես զորեղ, ազդեցիկ լինելն և ինչո՞ւ չասել՝ այդ չքեղ կյանքի հարմարավետությունները: Դրանցից բացի Փարիզի հասարակությունն ինձ չողոքորթում էր. ցանկանում էին հրավիրել ինձ բարձր հասարակության բոլոր տոնախմբություններին, և շատ ընտանիքներ ինձ ներկայացնում էին իրենց դուստրերին, գուցե մի բարեհաջող ամուսնության հույսով:

Այնուամենայնիվ, ճշմարիտ է, որ մարդը միակ կենդանին է, որ երկու անգամ բախվում է նույն քարին. քիչ ամիսներ անց կրկին սկսեցի հանդիպել Աննա Բալենի հետ: Ճիշտն ասած, այդ նա էր, որ ինձ ժամադրեց և քանի որ հոգուս խորքում ուժեղ կարոտ ունեի, ընդունեցի: Այնպես որ, մեր բոլոր ազգականներն ու բարեկամները համարեցին, որ ի վերջո ամուսնանալու ենք և վարելու մեր ազգանուններին և հարստություններին համապատասխան կյանք: Իմ մորաքույր Կլերը, որ հմուտ խնամախոս էր, ինձ լրջորեն առաջարկեց, որ եթե խելքս գլուխս հավաքեմ,— նա բացարձակապես չէր ըմբռնում, որ լրագրությունը կարող էր լինել պատվավոր մի բան,— ինձ կնչանակեր համընդհանուր ժառանգորդ, եթե ամուսնանայի և լքեի «Լ'Օրոր»-ը:

— Անրի, ի՞նչ է քո արած գործն այնտեղ,— տրտնջաց ներշնչված,— պետք է կենտրոնանաս քո ունեցվածքը կառավարելու մեջ, և միմիայն դա քեզ այնքան գլխացավանք կտա, որ հարկ չի լինի մտածել ուրիշ բանի մասին:

Հավանաբար իրավացի էր, սակայն, իրականում, ես հակառակ կարծիքին էի: Ինչ մնում էր ամուսնանալուս, այդ պահին այդ մասին չէի ուզում անգամ մտածել, քանի որ օրեցօր ավելի էի համոզվում, որ անձնական ազատությունից առավել ոչինչ չկա:

Հետո, օրերն անցնում էին բնականաբար, և ես ընկղմվեցի այնպիսի հոգենեցուցիչ աշխատանքում, որն ինձ հազիվ էր չունչ քաշելու ժամանակ տալիս, երբ գլխի ընկա, որ միակ կառավարիչն էի մի մեծ հարստության, որով պետք է զբաղվեի ամեն օր: Սա այն չէր, ինչ ես երազում էի, բայց այդ ժամանակ իմ չուրջ վստահելի ոչ ոք չկար, որին դնեի իմ բազմաթիվ և տարբեր բնույթի առևտրական գործերի հավատարմատար: Այդ ժամանակ էլ որոշեցի ազատվել դրանցից մի քանիսից՝ Բորդոյի գինու մառաններից, Լիոնի տեքստիլ ֆաբրիկաներից և Բելգիայում իմ բոլոր շահույթներից: Ատում էի այդ աշխատանքը, քանի որ ինձ միայն ժամանակ էր մնում խորհրդածելու և մի քանի առաջնորդողներ գրելու «Լ'Օրոր»-ում, արտոնություն, որ նույնպես ինձ ընձեռել էր տնօրենը: Ժամանակն անցավ արագ, և հանկարծ մի օր գլխի ընկա, որ չորս տարի է, ինչ Փարիզում եմ: Իրականում կորած ժամանակ փաստաբանների, թղթերի և նոտարական գրասենյակների միջև, կյանք, որ հակառակն էր նրա, որ ըստ իս՝ հանուն ապրելու կյանքն էր:

Ինչ վերաբերում է Աննային, սպասելուց կուշտ, թե ինչ որոշում էի ընդունելու, մի օր ինձ որոշ խստությամբ հարցրեց, թե իրականում մտադի՞ր եմ ամուսնանալ իր հետ, և ստիպված եղա լինել անկեղծ: Պատասխանեցի, որ առայժմ նախընտրում եմ շարունակել այն ձևով, ինչպես որ ենք: Նա նույնը չէր մտածում, և դարձյալ բաժանվեցինք այն բանից հետո, որ նա ինձ խոստովանեց, որ իրեն կրկին հիասթափեցրի: Վերջում ինձ ասաց, որ երբեք չփորձեմ կրկին տեսնել իրեն: Չեմ կարող ասել, թե վրաս ազդեց. խոսքը մի հարաբերության մասին էր, որին մայրս էր մղել ժամանակին:

Ինչ մնում էր մորաքույր Կլերին, հրաչալիորեն տեղյակ էր իմ գնալ-գալուց, գործերից, մի բան, որ չէր դադարում ինձ զարմացնել,

քանի որ փորձում էի լինել նրբանկատ: Ինձ հրավիրեց Թեյի՝ բացահայտ ցույց տալու համար իր դժգոհությունը Աննա Բելենի հետ տեղի ունեցածի շուրջ, քանի որ բացի այդ՝ նրա մոր լավագույն ընկերուհիներից էր:

Նրա հույսերը, կապված հիշյալ ամուսնության գլուխ գալու հետ, ձախողվել էին, և մորաքույր Կլերը ինձանից չթաքցրեց իր տհաճությունը: Նրա հետ իմ հարաբերությունները միշտ էլ եղել էին փոթորկալի, քանի որ երկուսս էլ ուժեղ բնավորության տեր էինք և հրաժեշտ տալիս որոշեցի որոշ ժամանակ չայցելել նրան:

Այդ ժամանակ էլ ինձ բախտ վիճակվեց իդեալական աշխատակից գտնել. գիտակ ֆինանսներում և իմ ողջ վստահությունը վայելող անձնավորության: Խոսքը երկրորդական զարմիկիս՝ Ժորժ Լորանի մասին էր, որն անխոս ընդունեց իմ պայմանները: Ի տարբերություն ինձ՝ այդպիսի կյանքի համար ստեղծված մարդ էր, քանի որ միայն առևտրական գործերից էր հաճույք ստանում: Մնացյալը նրա համար ավելորդ էր:

Դա ինձ օր-օրի ազատեց, և սկսած 1892 թվականի սկզբներից՝ սկսեցի ավելի ու ավելի կենտրոնանալ թերթի միջազգային կապերի բաժնի վարիչի պաշտոնում, որն ի վերջո ինձ կլանեց:

1893 թ. մարտին հարկ եղավ, որ գնամ Միացյալ Նահանգներ, քանզի թերթի խմբագրության խորհուրդը որոշեց, որ հարկավոր է նշանակել Նյու Յորքում մի պատվիրակ և անգամ ուսումնասիրել մի թերթ ստեղծելու հնարավորությունը, որը կոչվեր «Լ'Օրոր ամերիքեն», քանի որ ԱՄՆ-ը գնալով մեծ կշիռ էր ձեռք բերում որպես ազատության և առաջադիմության հայրենիք:

Նավ նստեցի Հավրում: Նոր էր բացվել այդ գիծը, և ինձ զարմացրեց, թե որքան արագ հասանք Նյու Յորք. ընդամենը տասն օր ուղևորվելով, բացի այդ, մի յուրատեսակ լողացող հյուրանոցով, որում ուղևորները չէին նախանձում ոչ որևէ հարմարության և կամ էլ ճոխության, որ գոյություն ունեին Փարիզի ուղիղ կենտրոնի լավագույն տներում:

Ակնհայտ էր, որ աշխարհը փոխվում էր աչքներիս առաջ, ինչպես դեպի լավը, այնպես էլ դեպի վատը: Առաջադիմությունը չոչափելի էր կյանքի բոլոր ոլորտներում, սակայն միևնույն ժամանակ թվում էր, թե մի քանիսը չէին հասկանում դա և շարունակում էին իրենց քաղաքականությունը տարօրինակ պարով, որի մասնակիցները միանալով և անջատվելով իրարից, բարեկամանալով և թշնամանալով, տարիներ անց աշխարհը տանելու էին դեպի մի սարսափելի ճգնաժամ:

Նավից իջա Նյու Յորքում, անցնելով իմ հայրենակցի՝ Բարտոլդիի[1] նոր բացված Ազատության արձանի մոտով: Ինձ պատեհ առիթ էր վիճակվել տեսնել այն Փարիզում, երբ մոնտաժում էին, իհարկե թաքուն, չինարարական տախտակամածների արանքից, քանդակագործի արվեստանոցի դիմաց, Կուրսել զբոսայգում: «Աշխարհը լուսավորող Ազատությունը» ինձ ստիպեց խորհրդածել, հասկանալ, որ աշխարհը կարող էր փոխվել, եթե համապատասխան քայլեր անեին: Հիշում եմ, որ Բարտոլդին պատմեց, որ նրան դուր չէր գալիս Ազատությունը կտորների վերածելը, թեկուզև անհրաժեշտ լիներ ուղարկելու այն Ամերիկա: Ինքը՝ հեղինակն ինձ բացատրեց, որ այն նվիրում է բոլոր ճնշված ժողովուրդներին, և երբ նրան պատմեցի հայերի մասին, ինձ սեեռուն գննեց:

– Գիտե՞ք, թե ով է ինձ ներշնչել այս արձանի գաղափարը... Անատոլ Ֆրանսը, նա է ինձ պատմել մի քանի ժողովուրդների, մանավանդ հայ ժողովրդի նկատմամբ հալածանքի մասին... Այդ ժամանակ էր, որ սկսեցի մտածել այդ ամենի շուրջ և ահավասիկ: Ազատությունը: Աշխարհը լուսավորող Ազատությունը:

Գուցե պետք է այն տեղադրած լինեին Բոսֆորի մուտքի մոտ... Բայց այստեղ էր՝ վսեմ, վիթխարի և հիասքանչ: Այդ ասել էր իր բանաստեղծության մեջ Էմմա Լազարուսը.

«Եկեք ինձ մոտ բազմություններ հոգնած, խեղճեր,
Ազատության մեջ չնչելու բաղձանքով»:

Սկզբում իմ ուղևորությունը ծրագրված էր երեք ամիս ժամկետով: Վերջում մնացի համարյա հինգ ամիս այդ քաղաքում: Այնտեղ սովորեցի, որ պատահականությունն էր մատնանշում մեր կյանքերը, և որ մարդն իր ճակատագրին միջամտում է ավելի քիչ, քան պատկերացնում է:

Մայիսի վերջին ինձ հրավիրեցին մի ընդունելության՝ հովանավորված Կոռնելիուս Վանդերբիլթի՝ ֆինանսների մագնատի, լեգենդար միլիոնատիրոջ որդու կողմից: Ես բնակվում էի Կրոտոնյան ջրամբարի մոտ, նոր չենքի բնակարաններից մեկում: Հանրակառքը, լծված չորս ձիերով, անցնում էր չքամուտքի մոտով, և ես նստում էի այն՝ կենտրոն գնալու համար: Զէի ուզում ապրել բանից անտեղյակ, պարզապես ուզում էի ծանոթանալ ամերիկացիների ամենօրյա ապրելակերպին:

[1] *Ֆրեդերիկ Օգյուստ Բարտոլդի (1834–1904) – քանդակագործ, «Աշխարհը լուսավորող Ազատություն» արձանի հեղինակ:*

Վանդերբիլթը իր համար կառուցել էր տվել մի հրաշալի նեոկլասիկ ոճով առանձնատուն Հուդզոնի դիմաց, մի մեծ մասնավոր պարտեզով: Այնտեղ պետք է տեղի ունենար ընդունելությունը: Հասա առաջիններից մեկը, երբ մայրամուտի արեգակն իջնում էր: Մի քանի մատուցողուհիներ մատուցում էին ֆրանսիական գինի և կանապեներ սկուտեղներով: Բնականաբար այնպես չէր, ինչպես Փարիզում, բայց ակնհայտն այն էր, որ մասնակիցներից ոմանք չուտով կդառնային համաշխարհային տնտեսության իսկական արքաներ:

Այդ ժամանակ էր, որ սեղանապետերից մեկը մոտեցավ և մի պահ նայեց ինձ: Նրա դեմքն ինձ թվում էր ծանոթ, բայց անկարող էի այն տեղը բերել: Հանկարծ այդ մարդը, որը պետք է որ նույնը զգացած լիներ, տեղից պոկվեց և թևերը բացեց՝ ասես ինձ գրկելու համար:

– Մայե դը Լատուր: Հիշո՞ւմ եք ինձ... – ճիշտն ասած, այդ պահին մտքովս էլ չէր անցնում, թե ճանաչում եմ այդ մարդուն: – Ես Ղազարյանն եմ՝ Կոստանդնուպոլսի հայկական ռեստորանից:

Հենց այդ պահին տեղը բերեցի:

– Իհարկե, Ղազարյան: Բայց ինչպես կարող եմ չհիշել: Դուք ի՞նչ եք անում այստեղ:

Մենք գրկախառնվեցինք մի քանի հրավիրվածների հայացքների ներքո, որ սկսել էին գալ:

– Իսկ դո՞ւք: Դուք ի՞նչ եք անում այստեղ, մայե: Ահ, ինչ պատահականություն և ինչ մեծ ուրախություն: Մի քանի ամիս է, ինչ ես գաղթել եմ: Դրան նպաստեց իմ մի քիչ անգլերեն խոսելը և կերակուր եփել գիտենալը:

Հիմա նոր ինձ նշանակել են մի շարք ռեստորանների պետ: Ինձ շատ լավ են վճարում, և արդեն ներկայացրել եմ թղթերը արտագաղթի դեպարտամենտ՝ կնոջս և զավակներիս բերելու: Այստեղ կան մի քանի թուրքեր: Բայց տեսեք, այստեղ՝ Ամերիկայում բոլոր մարդիկ հավասար են... Գուցե դա սարքովի ասված բան է, սակայն մարդիկ Ամերիկայում հավատում են, որ ճիշտ է: Լավ, հիմա պետք է աշխատեմ, բայց ուզում եմ, որ ինձ խոստանաք, որ կգաք ինձ այցելելու: Նյու Յորքում կան մի քանի հայեր, և կուզենայի նրանց ներկայացնել ձեզ, քանի որ ես վստահ եմ, որ դուք Հայաստանի լավ բարեկամ եք,– այս բառերով Ղազարյանը հեռացավ՝ ձեռքերը շարժելով, ղեկավարելով մատուցողներին այնպես, ինչպես դիրիժորն իր երաժիշտներին:

Վանդերբիլթը քաջ տեղյակ էր, թե ով եմ ես: Նրա մասին ասում էին, որ ինքն էլ հոր պես ուներ լուսանկարչական հիշողություն և մի անգամ, որ տեսնում էր մի դեմք, այլևս երբեք չէր մոռանում. հիշում

էր անգամ ամենափոքր մանրամասնը: Նրա համար պատրաստել էին մի դոսիե հրավիրվածներից յուրաքանչյուրի մասին: Նա իրեն դրսևորեց որպես շատ շահագրգիռ մարդ Եվրոպայի տնտեսական իրավիճակով:

– Ինձ պատմել են, որ դուք Թուրքիայի մասին ունեք խոր գիտելիքներ: Ձեզ մի բան ասեմ, նավթը նախանշելու է մարդկության ապագան, իսկ Թուրքիան բնական կամուրջ է Ասիայի և Եվրոպայի միջև: Իմ խորհրդականները խոսում են այն մասին, որ Միջագետքում կարող է լինել ծովի չափ նավթ, այնքան, որ կարելի կլինի մատակարարել ողջ մարդկությանը գալիք դարերում:

Այնտեղ ոչ ոք չխոսեց հայերի մասին, ոչ էլ Օսմանյան Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունների իրավիճակի մասին: Ակնհայտ էր, որ ոչ ոք նրանց մասին ոչ մի տեղեկություն չուներ: Ինձ տարօրինակ չթվաց, քանի որ միակ բանը, որ նրանց ստիպում էր արձագանքել, որևէ նավթային կամ հանքային հատկացում ձեռք բերելու հնարավորությունն էր:

Ընդունելության ավարտին Ղազարյանը նորից ինձ մոտեցավ՝ ձեռքին մի ծալված թուղթ:

– Ահավասիկ իմ հասցեն: Ձեզ աղաչում եմ, որ գաք ինձ տեսնելու: Ավելի լավ կլինի որևէ երկուշաբթի, որովհետև երեկոյան ազատ ենք: Ի՞նչ եք կարծում: Կոստանդնուպոլսում պետք է աշխատեի տասներկուսից տասնչորս ժամ տարվա բոլոր օրերին: Սա առաջադիմության երկիր է: Ցտեսություն:

Երկու շաբաթ անց ազատ ժամանակ գտա նրան այցելելու համար: Խոսքը Բրոդվեյին մոտ գտնվող մի թաղամասի մասին էր, որտեղ ապրում էին շատ իտալացիներ, մանավանդ հրեաներ, որ կարծես թե մեծամասնություն էին: Մի քիչ ուշ գտա տունը, մինչև որ պատահմամբ Ղազարյանը դուրս եկավ մեկ ուրիշ մարդու ուղեկցությամբ, որն անկասկած նույնպես հայ էր:

– Մայե դը Լատուր: Սա իմ ընկեր Սվազյանն է, Էդուարդ Սվազյանը, Մալաթիայից, երաժշտության դասախոս, ինչպե՞ս է ջութակ նվագում: Մի օր պետք է լսեք նրան, որովհետև իսկական տաղանդ է: Ինչ ուրախություն, որ եկաք: Ուղեկցեք մեզ, գնանք ընթրելու մի բան գնենք: Կպատրաստենք մի քանի այնպիսի խորտիկ և լուլա քեբաբ, որ մատները հետը կուտեք: Անկեղծորեն ձեզ ասեմ, որ խմելու ենք իտալական գինի..., որ, իրոք, այնքան լավն է, որքան հայկականը: Գիտե՞ք, որ Նոյը հայ էր: Թաղված է Արարատի ստորոտում, և չար լեզուներն ասում են, որ ջրից ահավոր զզվում էր և որ կենդա-

նիներից բացի՝ խաղողի վազեր դրեց տապանում: Այ քեզ լավ միտք: Նա իրոք հեռատես մարդ էր: Բայց լուրջ, ուղեկցեք մեզ: Եկեք մեզ հետ, դա ձեզ կհիշեցնի այն, ինչ ուտում էինք Կոստանդնուպոլսի իմ ռեստորանում:

Գնացինք, իհարկե, մի հրեական խանութ՝ կանաչեղեն գնելու, մի գերմանացի մսագործի մոտ՝ միս գնելու և մի հայտնի իտալացու՝ իր լավ մառանի համար: Ղազարյանը ցնծության մեջ էր. ինձ վերաբերվում էր հարգալից, բայց նաև որոշ ընտանեվարությամբ,– ինչպես անում են հայերը նրանց հետ, ում գնահատում են,– ցանկանալով ցույց տալ իր մտերիմ մարդուն՝ Էդուարդին, որ մեզ կապում էր շատ հին բարեկամություն և ինձ իսկապես բավականություն պատճառում:

Ավելի ուշ, մինչ մենք ընթրում էինք բնակարանի բաց պատշգամբում գարնանային եղանակին, անհավատալի մի վայրում, քանի որ Նյու Յորքն ասես մի վիթխարի խառնարան էր, որում խառնվում էին իրար աշխարհի բոլոր մարդկային ցեղերը: Մտածեցի, որ իրոք հայերը եզակի մարդիկ են:

Ժորժն ինձ ներկայացրել էր իր հայ բարեկամներին՝ Կրիկոր Նալպանտյանին, Արամ Ջելկյանին, Գրիգոր Բրոչյանին և Գասպար Թաչչյանին: Նալբանդյանը ինտերիերի և ցուցափեղկերի ձևավորող էր: Ջելկյանը՝ տոպոգրաֆ ինժեներ: Բրոչյանը հավաստիացնում էր, որ վիպասան է և դրամատուրգ, իսկ Թաչչյանը՝ գորգերի վաճառական: Այնուամենայնիվ, ամենից առաջ հայ էին և շարունակելու էին լինել, թեկուզև իրենց կյանքի մնացած մասն անցկացնեն Ամերիկայում: Դեռ Կոստանդնուպոլսում իմ անցկացրած տարիներից ի վեր գիտեի, որ հայերը զարգացած մարդիկ են, խոր սիրով լի դեպի արվեստը, երաժշտությունը և գրականությունը, որոնց նաև հրապուրում էին համեղ կերակուրը և ըմպելիքը, քանի որ, ըստ նրանց, կյանքը չէր կարելի պատկերացնել, ոչ էլ ապրել՝ առանց այն կիսելու սեղանի շուրջ հավաքված այլ հայերի հետ:

Ինձ վրա մեծ տպավորություն թողեց Գրիգոր Բրոչյանը: Իմ տարիքին էր, ուժեղ անձնավորություն էր և շատ կիրթ մարդու տպավորություն էր թողնում: Գուցե դա նրա արտաքինից էր, քանի որ այդ խմբի ոչ այնքան հայն էր և գաղափարներն ավելի հստակ էին: Նիհար, բայց ուժեղ, մոտ մեկ և ութսուն հասակով, կարճ չագանակագույն մազերով, սպիտակ մաշկով և խիտ մորուքով, իր հավաստիացումներում վստահ և համոզիչ: Համարյա երեք տարի էր, ինչ Նյու Յորքում էր և միակն էր, որ ուներ ամերիկյան անձնագիր, թեև ծնունդով Ուրֆայից էր, որտեղ, ըստ իր պատմածի՝ դեռ ապրում էին իր ծնողներն ու իր քույրը՝ Մարին:

Հասկացա, որ հենց նոր գտել էի հարմար մարդուն և նրան առաջարկեցի մի պաշտոն՝ «L'Orror»-ի թղթակից Նյու Յորքում: Ընդունեց ոգևորությամբ. ի վերջո նրա զբաղմունքը գրելն էր: Եվ կարդալով մի քանի էջ, որ իր մոտ ուներ, ինձ թվաց, որ լավ է գրում, թեև իր անգլերենը դեռ չափազանց բոնազբոսիկ էր:

Ղազարյանը պետք է որ նրանց իմ մասին պատմած լիներ, քանի որ երեկույթի ընթացքում չէին դադարում զննել ինձ ակնհայտ հիացմունքով: Ես նրանց համար պետք է մարմնավորեի հաջողության կերպարը՝ Եվրոպայից, դիվանագետ, ճանաչված լրագրող... և հարուստ: Հայերի համար, որոնց ճանաչեցի, հարստությունը նպատակ էր: Այն կապում էին իրենց ամենանվիրական ցանկությունների հետ և անձնուրացորեն պայքարում դրան հասնելու համար: Դա ոչ այնքան կյանքի ծարավի զգացում էր, որքան կարողանալ ապացուցել յուրայիններին, որ հաղթել էին, թեև սրտի խորքում նրանք բավականին անկողմնակալ էին:

Անմիջապես այդ հայերը դարձան իմ ընկերները, և իտալական գինու չչերի չնորհիվ ազատագրված ոգով բոլորս երդվեցինք պայքարել հանուն հայերի պահանջատիրությունների: Նրանց համար, անկասկած, ես արդեն ես մեկ հայ էի, և ինձ հպարտություն էր ներշնչում այդ պատվավոր տիտղոսը: Կատակով ինձ կոչում էին պարոն Դելատուրյան:

Պայմանավորվեցինք կրկին տեսնվել, թեև նրանց բացատրեցի, որ այդ երկրում իմ մնալը ժամանակավոր է և որ միջոցառումների ու հարցազրույցների իմ ծրագիրն ազատ ժամանակ չի թողնում:

Քիչ օրեր անց հավաքվեցինք ճաշելու Բրոդվեյի ռեստորաններից մեկում Գրիգոր Բրոչյանը և ես. ընտրեցինք իտալական խոհանոցի բաց պատշգամբով այնպիսի հաստատություն, որ ասես գտնվում էինք Նեապոլում: Ինձ համար պարզ դարձավ, որ Գրիգորը նույնպես հրաշալի պատմող է, և առանց ընդհատելու թողեցի նրան խոսել:

– Մանկությանս ընթացքում ամեն գիշեր երազում էի, որ մի օր ապրելու եմ Ամերիկայում: Հիմա ընդհակառակն է, կարծում եմ, թե երազում եմ և երբ արթնանամ, վերադառնալու եմ կրկին Ուրֆայի իմ տուն: Հայրս դպրոցի ուսուցիչ է, իսկ մայրս, թեև նա դա չգիտե, արտասովոր բանաստեղծուհի է: Ինչ վերաբերում է քրոջս՝ Մարիին, ուզում եմ, որ գա այստեղ: Նա արժանի է ավելի լավ կյանքի և ուրիշ ապագայի:

Տեսա, որ կասկածում է, չարունակի՞ իր պատմությունը, բայց նրան շատ խնդրեցի, որ պատմի, և չարունակեց, ասես գնահատելով նոր բարեկամությունը, որ ծագել էր մեր միջև:

– Երբ Մարին տասնվեց տարեկան էր, մի Թուրք, որը նրան շատ էր հավանում, Մուստաֆա Օսմանիե անունով, ապրում էր մեր տան մոտ մի մեծ տանը և զբաղվում մաքսանենգությամբ, իհարկե մութասարիֆի լուռ համաձայնությամբ, հրապուրվեց նրանով: Դա, ինքնին, մի անհնարին բան էր, եթե խոսքը վերաբերում էր մի մուսուլմանի և մի քրիստոնյա կնոջ: Բացի այդ, հիսուն տարեկան էր, ամուսնացած երկու կնոջ հետ, առանց որևէ կրթության: Բայց այնքան ուժեղ էր կպել, որ համարձակվեց ուղարկել իր բարեկամին՝ հորս առաջարկ անելու՝ խոստանալով մի ծանրակշիռ գումար: Այն խավի մարդկանցից էր, որ կարծում էր, թե կարող է ամեն ինչ փողով գնել: Ինչպես որ հասկանում ես, հայրս, որ միշտ եղել էր հանգիստ մարդ, իր կյանքում այդքան սաստիկ երբեք չէր զայրացել և վռնդեց մեր տանից այդ հանձնակատարին՝ գոռալով նրա վրա, որ հանգիստ թողնեն իր դստերը:

Մեկ շաբաթ անց Մարին անհայտացավ: Հայրս գնաց հայտնելու այդ մասին մութասարրիֆին, բայց սա չուզեց ընդունել նրան: Այդ ժամանակ ուղղվեց դեպի Օսմանիեի խանութը, որը երդվեց, թե ոչինչ չգիտե այդ մասին, թեև ակնհայտ էր, որ ստում է:

Միևնույն ժամանակ ես, որ Մարիից երկու տարով մեծ էի և նրա նկատմամբ քնքշանք և պատասխանատվություն էի տածում, ներքուստ մի բան կռահեցի և տանիքներով սողացի: Ինձ չզարմացրեց, երբ նրան տեսա մի ներքին բակում: Երկու կին նրան պինդ բռնած գոռով լվանում էին և փորձում էին հագցնել Թուրքական ոճով: Ողջ սառնասրտությամբ, որպեսզի չսայթաքեմ, կրկին դուրս եկա նույն ճանապարհով: Ստիպված մեծ ջանք գործադրեցի, որպեսզի նյարդերս չմատնեին ինձ: Բայց գիտեի, թե ինչ պետք է անեի, եթե ուզում էի ազատել Մարիին Օսմանիեի ճանկերից:

Այդ նույն երեկո վերադարձա, համարյա մութն ընկնելիս: Բակը դատարկ էր, և ես կախվեցի մի հսկա խաղողի վազից մինչև տանիքը: Տեսա, որ մի կին ննջում է փակ դռան առջև և կռահեցի, որ Մարին այնտեղ է գտնվում: Անհամբերությունս առանց զսպել կարողանալու մոտեցա՝ փորձելով աղմուկ չանել և երբ նրա հետևում էի, փայտով խփեցի գլխին, որ վերցրել էի ինքնապաշտպանության նպատակով՝ թողնելով նրան ուշագնաց: Դուռը բացելուն պես տեսա քրոջս՝ հատակին նստած՝ ինձ լրիվ զարմացած նայելիս, առանց հեծկլտոցը կտրելու:

Առանց ժամանակ կորցնելու դուրս եկանք այնտեղից՝ մագլցելով խաղողի որթի վրայով, անցնելով երեք տանիքներով և կախվելով քարե մի պատից: Քույրս միշտ էլ քաջ էր եղել ու շատ ճկուն և որևէ դժվարություն չունեցավ ինձ հետևելիս:

Բախտներս բերեց, որ ոչ ոք մեզ չտեսավ, քանի որ մինչև հայկական թաղամասում մեր տուն հասնելը՝ վազելով անցանք Թուրքական տների ետնամասով: Երբ վերջապես հասանք, ծնողներս ուրախությունից խենթացան, քանի որ համոզված էին, որ այլևս չեն տեսնելու իրենց դստերը:

Բայց այդ հանգամանքներում չպետք է շատ ժամանակ կորցնեինք: Հնարավորին չափ շուտ այնտեղից փախչելուց զատ՝ ուրիշ ոչինչ չէինք կարող անել: Այնպես որ, նրանք մեզ տվեցին իրենց օրհնությունը, և անմիջապես ուղղվեցինք՝ վազելով մեր ընտանիքի մի բարեկամի, որին լիովին վստահում էինք՝ Գասպար Անտոնյանի տուն: Նա ապրում էր դեպի հյուսիս՝ կես ժամվա հեռավորության վրա: Մեր միակ պատեհությունն էր, քանի որ համոզված էինք, որ մեզ փնտրելու էին ոչ միայն Մուստաֆա Օսմանիեն, նաև մութասարիֆի ժանդարմները, որոնք անկասկած, նրա ոչ միայն մեղսակիցներն էին մաքսանենգության մեջ, այլև մնացյալ ամեն ինչում: Չէին կարող թույլ տալ, որ զոհը՝ երիտասարդ անպաշտպան հայուհին, որ իրենց ձեռքում էր, իրենց այդ ձևով ծաղրեր, քանի որ վաղ թե ուշ կիմացվեր և կդառնային ամբողջ Ուրֆայի ծաղրի առարկան:

Ինչ վերաբերում էր ծնողներիս, հեռանալուց առաջ հազիվ հասցրի նրանց ասել, թե ինչպես պետք է արտաքուստ ցույց տային: Երբ ժանդարմները գային, պետք է դառնագին բողոքեին՝ պահանջելով, որ վերադարձնեին իրենց դստերը: Եթե հարցնեին իմ մասին, ասելու էին, որ ես մի քանի օր է, ինչ Դիարբեքիրում եմ: Պնդեցի, որ նրանք հնարավորինս իրենց համոզեցուցիչ պահեին, քանի որ մեր կյանքը դրանից էր կախված:

Երկուսն էլ քաջ գիտակցում էին, որ դեռ երկար ժամանակ ո՛չ Մարին և ո՛չ էլ ես չէինք կարող վերադառնալ Ուրֆա: Խոսքը վտանգավոր թշնամիների մասին էր, և դրա ապացույցն այն էր, որ քաղաքում բոլորն էլ իրենց հեռու էին պահում Օսմանիեից՝ քինախնդիր ու չար մարդ, մանավանդ, եթե իր անվան հետ էին խաղում: Բայց չէ՞ որ հենց այդպես էր: Վառոդի պես կտարածվեր պատահածի մասին բամբասանքը, և նախքան մութն ընկնելը, բոլորը կիմանային: Իսկ դա Օսմանիեին անտանելի խայտառակություն կնշանակեր, քանի որ անկասկած, վստահեցրել էր, որ աղջիկն արդեն իրենն է: Բացի

այդ, երբ խոսքը մի իրավիճակի մասին էր, որում ներքաշված լինեին Թուրքեր և հայեր, ոչ մի հնարավոր պաշտպանություն գոյություն չուներ մերոնց համար: Որևէ հայի կյանք ավելի պակաս արժեր, քան որևէ գառանը, սակայն սա այն է, որում, կարծում եմ, դուք ձեր սեփական փորձով համոզվեցիք:

Փառք Աստծո, Մարին ասաց, որ այդ մարդը չէր հասցրել դիպչել նրան: Մարիին պատրաստում էին, փորձելով ենթարկեցնել, դարձնել ընծա. նվերի մի տեսակ: Հաշվի չէին առել, որ որևէ մեկը այնքան խենթ կլիներ, որ նրան կազատեր:

Գնացինք մինչև Լաթակիա և այնտեղից էլ շատ ձախորդություններից հետո նավ նստեցինք դեպի Կոստանդնուպոլիս՝ հորս զարմիկներից մեկի տուն: Հայերի մեջ հորեղբոր տղան նույնն է, ինչ եղբայրը և հետևաբար մենք նրանց համար հարազատներ էինք:

Իսկ հետո ընդունվեցի որպես կրտսեր նավաստի մի արագընթաց ճենովական նավի վրա, որն ընթանում էր դեպի Պորթսմութ, Անգլիա, բայց սրանք ուրիշ դեպքեր են: Իսկ կարևորն այն է, որ հիմա այստեղ եմ:

Ուզում եմ, որ հասկանաս,– Գրիգորը սկսեց ինձ հետ դու-ով խոսել,– թե ինչ ձևով են Թուրքերը վարվում հայերի հետ, թեև պետք է պարզ ասեմ, որ բոլորը չեն այդպիսին, և բնականաբար կան շատ օրինավոր մարդիկ: Խնդիրն այն է, որ մի անհաղթահարելի պատնեշ կա նրանց և մեր միջև՝ կրոնը:

Ուլեմները աղավաղում են իսլամի իմաստը, Ղուրանը ճիշտ ճանապարհով գնացողին մարդկային ուժ է տալիս, մինչդեռ ջիհադը շատ այլ մեկնաբանություն է տալիս՝ «սրբազան պատերազմ» անհավատների դեմ, որ նույն իմաստն ունի, բայց ագրեսիվ է, բացասական: Թուրքիայում իսլամի մեկնաբանությունը շատ դաժան է, բայց միայն նրանց նկատմամբ, ովքեր այդ հավատքին չեն պատկանում: Ափսոս, որ դա չի տարածվում խալիֆի ու նրան շրջապատողների վրա, իրականում նրանք մեզ նայում են որպես ստրուկների, ճորտերի և հարկեր վճարողների:

Ուզո՞ւմ ես իմանալ, թե քանի տեսակ հարկ ենք վճարում, որ մեզ թողնեն ապրել մեր հողի վրա: Քանի որ, մի առարկիր, այդ երկիրը շարունակում է լինել Հայաստան, այսինքն՝ մեր հինավուրց երկիրը: Ես սխալված չեմ լինի, եթե քեզ ասեմ, որ Թուրքիայի առնվազն քառասուն տոկոսը Պատմական Հայաստանն է, Միջերկրականից սկսած մինչև Կովկաս: Իսկ Քրդստանի տարածքի հետ՝ սահմանակից է հարավ-արևելքում... Մի հարկ ունենք ապրելու իրավունքի համար,

որ կոչվում է ջիզյա, այլ տուրքեր՝ մեր տների, տարածքների, հողի պտուղների, հերկելու, արոտավայրերի, տավարի, ոչխարների, խոզերի, գառների, ընտանի թռչունների, մեր սեփականությունների, մաքսատների՝ երկիր մտնող և երկրից դուրս եկող բաների, աղի, գինու, ծխախոտի, հագուստի, մեկ այլ հարկ՝ զինվորական ծառայություն չանելու, քանի որ մեզ չեն վստահում և չեն ուզում, որ սովորենք պայքարել կամ զենք գործածենք: Նաև վճարում ենք դպրոց հաճախելու, Թուրքական բանակի գոյության համար, որ մերթ ընդ մերթ մեզ զանգվածաբար կոտորում է, վճարում ենք ժառանգություններ ստանալուց, վճարում ենք դատական հարկադրույքներ, բացի այդ սուլթանը պահանջում է մեզանից, որ պահպանենք իր ճանապարհները, կամուրջները, խճուղիները և պաշտոնական շենքերը: Տարեկան մի քանի օր պետք է պետության համար ձրի աշխատենք:

Մենք՝ քրիստոնյաներս, այնքան տուրքեր ենք վճարում, որ ընդամենը մեզ մնում է գոյատևելու համար, և խնդիրը ինքնին տուրքերը չեն, այլ կաշառակերությունը, ահաբեկումը և հարկահավաքների սարսափը, մշտական նվաստացումները, բռնությունը, սպառնալիքները:

Եթե որևէ հայ ուշացնում է վճարումը, կարող է կյանքին հրաժեշտ տալ..., և իր ընտանիքն՝ իր հետ: Թուրքերը առնում ու ծախում են հասարակական պաշտոնները, շորթում են կառավարիչներից, իսկ եթե նրանք քրիստոնյաներ են..., ուրեմն փրկություն չունեն: Ամեն բան առուծախ է. մի մշտական շուկա՝ ազդեցությունների և արտոնությունների, մյուս կողմից մի ժողովուրդ, որ չի կարող հանդուրժել ավելին՝ չարաշահումներից, ստորացումներից և վատ վերաբերմունքից կուշտ: Առևանգում են մեր որդիներից շատերին դեսվիրմեի համար, ուժի զոռով նրանց իսլամացնում են: Շատ երիտասարդ հայ աղջիկներ անհայտանում են մասնավոր տների կամ պալատների հարեմներում, ինչպես կարող էր պատահել Մարիի հետ:

Եվ ոչ միայն այդ: Օրինակի համար քրդերին հաճախ օգտագործում են մեր դեմ որպես մերկացած սուր: Սուլթանի կառավարությունը նրանց թույլ է տալիս պարտադրել գիշլիկը՝ հայերի համար տուրք, և այդ ձևով նրանց դարձնում են հասարակական հարկահավաքներ որոշակի գումարների փոխարեն: Քրդերն էլ օգտվում են պետական վերահսկողության բացակայությունից իրենց ցեղային վայրագությունը հայերին պարտադրելու համար: Եթե որևէ քուրդ մի բան է ուզում, պարզապես այն վերցնում է, թույլտվություն չի խնդրում, և եթե հայ գյուղացին դրա դեմ բողոքում է Թուրք իշխանությունն-

ին, նրան ոչ մի ուշադրություն չեն դարձնում և բացի այդ, քուրդը, որ հային հնազանդեցնում է, մահով է սպառնում: Երբ թուրքական բանակը պատժելու հանձնարարությամբ հասնում է հայկական տարածաշրջան, նրա հետևից գնում են քրդերը՝ հողին հավասարեցնելու այն, ինչ թողած լինեն թուրքերը: Ո՛չ: Այդպես չի կարելի ապրել: Եվ այնքան քիչ է համակրանքը երկու ժողովուրդների միջև, որ կհամարձակվեմ ասել, որ այս բռնի և դաժան հարաբերությունը լավ չի վերջանա:

Ճիշտ է, որ ողջ մեղքը թուրքերինը չէ, անարդար կլիներ, որ այդպես ասեի: Հայերս նրանց համեմատ քիչ ենք և անհաշտ: Բարդ մարդիկ ենք, որոնց դժվար է համաձայնության գալ, նաև բարեկամական, ընտանեվարի, ընդունակ... բայց շատ անգամներ մեր հերոսությունն արտահայտում ենք՝ լեզվին տալով: Կոստանդնուպոլսում ապրող հայերը չեն ուզում տեսնել իրականությունը և շատ դեպքերում, երբ նրանց հետ խոսում են երկրի ներսում հեռավոր քաղաքներում տիրող իրավիճակի մասին կամ սարերում խուլ, կորած հայ համայնքների մասին, ուսերն են թոթվում: Եթե եկողը հեռավոր ազգական է, երբեմն նույնիսկ չեն էլ ընդունում նրան կամ հորինում են արդարացումներ:

Սա մի աղետ է. հայերի մեջ դա մահացու մեղք է: Բարեկամը հավերժ է՝ թե՛ լավի և թե՛ վատի համար: Իսկ եթե խոսքը ազգականի մասին է՝ չի համարվում պարտավորություն, այլ մի սքանչելի պարտականություն: Որևէ ազգականի երբեք, երբեք չի կարելի թողնել ցանկապատի մոտ:

Եվ, այնուամենայնիվ, այս գոռոզ ամիրաները, որ թույլ չեն տալիս, որ որևէ բանով իրենց անհանգստացնեն, կարծում են, թե իրենց հնարավոր չէ վնասել:

Որքա՜ն են սխալվում և շա՛տ թանկ են վճարելու: Ինչ մնում է հայրապետներին՝ սպասում են մինչև փոթորիկն անցնի: Բայց ամենից շատ գյուղացիները և տնայնագործներն են սեփական կաշվի վրա զգում այդ իրավիճակը:

Գրիգոր Բրոչյանը գննում էր իմ արձագանքը իր երկար բացատրությունից հետո, ուզում էր իմանալ, թե արդյոք ինձ ցնցել էին իր խոսքերը:

– Ինչպես տեսնում ես, իրականում մի մարդկային աղետ,– ասում էր այդ դառնությամբ և համոզված,– մի ժողովուրդ, ինչպիսին մերն է, որ պետք է գտնվեր Եվրոպայի կիրթ և առաջադեմ ազգերի միջև...: Եվ տե՛ս, թե ինչ է մեզ տվել պատմությունը. թուրք ժողովրդի

ճորտացած վասալներ: Եթե մուսուլմաններ եղած լինեինք, դարեր առաջ մեզ ձուլած կլինեին, և այլևս գոյություն չէինք ունենա որպես ժողովուրդ՝ ուժեղ անհատականությամբ:

Բայց չէինք կարող լինել այդպիսին, մեր հոգեկան կերտվածքը քրիստոնյա լինելու համար է, երբեք չէինք կարողանա դառնալ խալամի կրող, և այդուհանդերձ մենք ոչինչ ենք քրիստոնյա ժողովուրդների համար և նրանցից ոչ ոք ոչինչ չի անի հանուն մեզ, թեկուզև գա այն օրը, երբ ստիպված լինենք պայքարել հանուն մեր ժողովրդի սեփական գոյության: Իհարկե, անկասկած, հետո մեզ կնվիրեն մեծազգու խոսքեր, սարսափահար կլինեն այն ամենից, ինչ թուրքերը արած կլինեն մեզ հետ... Բայց հարկ եղած ժամին ոչ ոք մատը մատին չի խփի հանուն հայերի. «Որտե՞ղ է գտնվում Հայաստանը»... ոչ մի տեղ:

Ես ծնվել եմ քրիստոնյա, բայց երբեմն մտածում եմ, որ Աստված մեզ ատում է: Թող նա ինձ ների: Ինչո՞ւ, ինչո՞ւմ ենք սխալվել... Ա՜հ, պատմության ուժը: Երբ թուրքերը քայլում էին դեպի Արևելք իրենց ճակատագիրը փոխելու՝ մենք ճանապարհի մեջտեղում էինք..., և բանն այն է, որ Կենտրոնական Ասիան մի վիթխարի վայր է, անհյուրընկալ, ամայի, իսկ բոլոր այդ թուրքմեն ցեղերն ընդունակ էին մտածել սոսկ իրենց սրերի և նիզակների սուր ծայրի մասին: Նրանց չամանները, մուսուլմաններից առաջ թուրքմեն ցեղերը հավատում էին կախարդությանը և մոգությանը, մատնացույց արեցին մայր մտնող արևի ճանապարհը: Մի անիծյալ օր էր, որում կնքվեց մեր ճակատագիրը: Երբ որոշեցին գնալ ու շարունակ վստահորեն գնալ դեպի հսկա ավարը իրենց փոչոտ տափաստանները՝ դրախտով փոխելու տենչով: Երբ հայտնվեցին և տեսան առաջին հայերին, իրենց դաշտերը մշակելիս և բերքը հավաքելիս, միայն մտածեցին ստրկացնել նրանց և ոչնչացնել: Մենք նրանց համար միայն խոչընդոտ ենք: Աստված իմ, ցանկացած բան կտայի, միայն թե հայերս նրանց կարողանայինք խիզախորեն դիմակայել: Եթե նույնիսկ բոլորս ստիպված լինեինք զոհվել այդ փորձությունում:

Բրոչյանի դառնությունն ինձ ցույց տվեց, որ գոյություն ուներ պատմական մի նվաստացում, անարդարություն, որ բարձրանում էր պարիսպի պես երկու ժողովուրդների միջև: Անհաշտելի տարաձայնություններ էին, որոնք երբեք չէին կարողանալու լուծվել: Այդ ժամանակ էլ որոշեցի նրան ներկայացնել իմ տեսակետը, նույնիսկ ռիսկի դիմելով, որ նա իմ մասին իր կարծիքը կարող է փոխել:

– Բրոչյան, կարծում եմ, որ մեծ մասամբ դու իրավացի ես, բայց հայերդ չափազանց ֆատալիստներ եք և երբեմն թողել եք, որ ձեզ ոչխարների պես քարշ տան սպանդանոց: Ես կուզենայի մի բան անել ձեզ համար, թեկուզ այս պատմության հետ ինձ կապողը իմ համակրանքն է որոշ հայերի նկատմամբ: Քեզ մի բան առաջարկեմ: Մտածի՞ր ես վերադառնալ Թուրքիա: Դու չե՞ս կարողանա հասնել այնտեղ քո ամերիկյան անձնագրով, քանի որ այնպիսի մեկի կարիքն ունեմ, որ ինտեգրվի որպես մեկ ուրիշ հայ և պատմի առօրյա իրականությունը, «Լ'Օրոր»-ի միջոցով ստեղծի հասարակական կարծիք: Մենք մեկն ենք այն սակավաթիվ թերթերից, որոնք պայքարում են միջնադարյան ասպետների պես վիշապների դեմ, որոնք գնալով մեր շուրջն են գետնի տակից դուրս գալիս:

Դուք քրիստոնյա ժողովուրդ եք՝ եվրոպական մտածելակերպով, մուսուլմանական օվկիանոսի մեջտեղում և փրկվելու միայն մի հնարավորություն ունեք, կարողանաք՝ ձայն տալ աշխարհին...: Աշխարհը պիտի իմանա ձեր մասին: Հիմա, մինչ ինձ պատմում էիր քո խորհրդածությունները, մտածեցի, որ որևէ բան անելու համար պետք է հրապարակենք մի հոդվածաշար Հայաստանի մասին:

Կլիներ թերթի տեսություն այն մասին, թե ինչ է կատարվում այնտեղ իրականում՝ առանց գրաքննության և քաղաքական լուրերի: Դու լրագրող ես, ինչպես ես, լավ գիտես, թե ինչ եմ ասում, և Հայկական խնդիրը, Հայկական հարցը, ինչպես այն անվանում են դեսպանատներում, պետք է հասնի լայն հասարակությանը, միայն այդ ձևով պատեհություն կունենաք:

Լսի՛ր, Գրիգոր, ես էլ եմ հոռետես: Հավատ չեմ ընծայում քաղաքական խոստումներին, որ մեծ մասամբ չեն կատարվում: Ապրում ենք մեծ փոփոխությունների ժամանակաշրջանում, իսկ դուք այս պահին գտնվում եք այդ փոթորիկի կենտրոնում:

Տես, ես հայ չեմ և հետևաբար չեմ կարող ձեզանից որևէ մեկին փոխարինել, իմ կացությունը դժվարին է, եթե չասենք անհնարին, որ կարողանամ դառնալ ձերոնցից մեկը: Ճիշտ է, որ դու հայերի առումով շատ հայ չես,– երբևէ ինձ ծանոթ,– բայց այդ ազգից ես, այդ լեզվով ես խոսում, մտածում ես որպես հայ... և գաղափարներ ունես հստակ: Այն, ինչ քեզ առաջարկում եմ, շատ վտանգավոր է: Գտնվում ես այստեղ, Նյու Յորքում, բացի այդ ունես փայլուն ապագա և հանկարծ գալիս եմ ես՝ մի օտար մարդ և քեզ հորդորում եմ ամեն ինչ փոխել, վերադառնալ գայլի որջը...:

Հենց այդ պահին, առանց թույլ տալու, որ ավարտեմ խոսքս, Գրիգոր Բրոչյանը վեր կացավ և ինձ գրկեց, համբուրելով երկու այտերս:

Նկատեցի, որ իր երեսն ի վար արցունքներ էին հոսում: Մի պահ լուռ մնաց, ասես փորձելով վերահսկել իր զգացմունքները խոսելուց առաջ:

– Անրի, հենց նոր դու ինձ ցույց տվիր ճանապարհը, որի համար քեզ հավերժ երախտապարտ եմ: Այդպես էլ կանեմ: Հանկարծ, երբ դու խոսում էիր, հասկացա, որ չեմ կարող լինել այդքան եսասեր: Քեզ հետ անկեղծ կլինեմ, ամեն գիշեր երազումս Հայաստանն եմ տեսնում, տեսնում եմ ծնողներիս, քրոջս, բայց չեմ կարող նրանց հետ հաղորդակցվել: Կռահում եմ, որ նրանց հետապնդում են մահացու թշնամիներ: Իսկ ես այստեղ եմ, նստած, մտածելով հիմնել օջախ, լավ տուն կառուցել, կյանքի բարիքներից օգտվել, մինչ իմ ժողովուրդը այնպիսի վտանգի մեջ է, որ անհետացման եզրին է կանգնած:

Այո՛, պետք է վերադառնամ և հնարավորինս շուտ: Ինչի՛ս պետքն է, թե ինչ կարող է ինձ պատահել: Հայերս պետք է խոսենք քիչ և գործենք ավելի... Իսկ դրա համար քեզ շատ եմ խնդրում, որ օգնես ինձ կոնկրետացնել պլանը, որի մասին խոսում էիր ինձ հետ: Շարունակիր, խնդրում եմ, այն գաղափարը, որ ուրվագծում էիր: Քեզ աղաչում եմ:

Ինձ չզարմացրեց իր պատասխանը, բայց իր հոգեկան արձագանքը՝ այո, քանի որ այդ ուժեղ և զորեղ մարդը լաց էր լինում մանկան պես՝ խորապես ազդված իմ բառերից: Եվ դա ինձ հանկարծակիի բերեց, և մի պահ չիմացա ինչ պատասխան տալ նրան:

– Լավ: Արել են մի պաշտոնական առաջարկ. նորից Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանատանը՝ որպես առաջին քարտուղար: Ճիշտն ասած, մորս մահվանից հետո, մի քանի տարի անց անձամբ ես խնդրեցի նախարարին և հիմա, մեկ տարի լռելուց հետո, ինձ հասել է պատասխանը: Այդ առումով կունենամ դիվանագիտական անձեռնմխելիություն, կկարողանամ ճանապարհորդել երկրի ներսում, ներկա կգտնվեմ ընդունելություններին և հավաքույթներին, կունենամ ձեռքիս տակ գաղտնի տեղեկատվություն առաջին աղբյուրից: Նաև կկարողանամ տալ իմ կարծիքը և իմ տեսակետը դեսպանին, որը դեռ շարունակում է լինել Պոլ Կամբոնը, մի անկաչառ, արդարամիտ ու զուսպ մարդ, որը նաև քաջ ծանոթ է խնդրին:

Ինչ վերաբերում է քեզ, ունես ամերիկյան անձնագիր, դա շատ կարևոր է, բայց որը քեզ ոչ մի երաշխիք չի տա: Ես կստանձնեմ ֆինանսավորումը, որպեսզի փնտրես և գտնես ուրիշ հայերի, որ աշխատակցեն մեզ: Թեև պարզ է, որ պետք է գաղտնի պահենք, քանզի ինչպես գիտես, Կոստանդնուպոլսում պատերը լսում են:

Գրիգորը, նյարդային, գրգռված, գլխի շարժումով հաստատում էր իմ ասածները:

– Ինձ դուր է գալիս այդ գաղափարը: Այո՛, այո՛: Այն է, ինչ միշտ ցանկացել եմ անել և ունակ չեմ եղել նախաձեռնել այն, բայց հանկարծ դու եկար և հստակեցրիր մտքերս: Դու չգիտես, թե որքան շնորհակալ եմ քեզ... Շատ անգամներ ծառերը չեն թողնում տեսնել անտառը:

– Համբերիր,– վրա բերեցի, Գրիգորը շատ էր ոգևորվել, բայց ես պետք է նրան չափի մեջ պահեի,– քեզ նամակով կհայտնեմ, թե երբ և ինչպես ենք սկսելու: Նորից եմ պնդում, սա չպատմես ոչ ոքի, պետք է մնա մեր մեջ, կամ էլ ամեն ինչ կտապալվի:

– Անգամ Ժորժ Ղազարյանի՞ն. նա մտածում է, ինչպես ես:

– Նրան կասենք հարմար պահին,– պնդեցի: – Զսպիր համբերությունդ և ամեն ինչ լավ կլինի: Եթե չտապենք, կարող ենք վրիպել նախքան ձեռնարկելը:

Գրիգորը, համոզված, գլխով համաձայնության նշան արեց, քանի որ անտարակույս հավատում էր իմ ասածներին այնպես, ինչպես Ավետարանին:

– Համաձայն եմ, Անրի: Դու ես կարգադրում, բայց ինձ չափից ավելի սպասել չտաս: Հիմա հասկանում եմ, որ շատ բաներ այլ կերպ պետք է արած լինեի, բայց դու իրավացի ես: Երբեք ուշ չէ և մանավանդ սրա համար: Շնորհակալություն, շնորհակալություն, որ աչքերս բացեցիր:

Մենք միմյանց հրաժեշտ տվեցինք սրտագին ձևով: Ընդամենը երկու մարդկային արարածներ էինք, որոնք փորձում էին պայքարել հանուն իրենց գաղափարների: Բայց Գրիգորի համար այն ժամանակ պարզ չէր, թե մինչև ինչ աստիճան դա պետք է փոխեր իր հարմարավետ կյանքը Նյու Յորքում և Ազատության արձանի շուքը փոխարինվեր մի այնպիսի վայրով, որտեղ գոյություն չուներ իրավական ամենաչնչին ապահովությունը և որտեղ մարդկանց կյանքը ոչինչ չարժեր:

Մնացի անհանգիստ: Այդ գիշեր արթնացա թախծոտ, գիտենալով, որ մի մարդու ներքաշել էի սարսափելի վտանգավոր ձեռնարկման մեջ: Եթե նրան բան պատահեր, ինձ երբեք չէի ներելու, իսկ այդ ժամանակներում Թուրքիայում նրա համար, ինչի մասին որ մտածում էինք, վճարում էին մահով:

ԱՊՐԻԼ 1894

12. ՍԱՅԻԴ ՋԵՄԱԼ ԱԼ-ԴԻՆ ԱԼ-ԱՖՂԱՆԻ

Երբ վերադարձա Փարիզ, Թերթի տնօրենը, որը ոչինչ չգիտեր դիվանագիտական անձնակազմում իմ հավանական նշանակման մասին, ինձ առաջարկեց իր պաշտոնը: «Մնա որպես տնօրեն: Ձկա ոչ ոք ավելի պատրաստված, քան դու»: Չնայած նրա համառորեն պնդելուն՝ չկարողացա ընդունել նրա սրտագին առաջարկը: Ինձ թույլ չէին տալիս ո՛չ իմ ֆինանսական գործերը, ո՛չ էլ նոր պատասխանատվությունը դիվանագիտական անձնակազմում, որի պատճառով էլ ոչ միայն մերժեցի նրա առաջարկը, այլև նրան կարծես լրիվ չփոթեցնելու համար խնդրեցի թույլ տալ ժամանակավորապես դադարեցնել աշխատանքային գործունեությունը «Լ'Օրոր»-ում:

Առանց իմանալու՝ կորցնելու էի լրագրության բնագավառում ինձ համար կարևոր հնարավորություններից մեկը և մանավանդ «Լ'Օրոր»-ի համար: Ժորժ Կլեմանսոն էր ղեկավարում Թերթը այդ ժամանակաշրջանում, և «Դրեյֆուսի դատավարության գործը» սատարող հոդվածներով պարբերականը հասավ եվրոպական մամուլի փառքի գագաթնակետին:

Ճիշտ է, որ իմ իսկական հակումը միշտ եղել էր լրագրությունը, բայց ես այն ընկալում էի այլ կերպ, ավելի մեծ ազատությամբ և ճշմարտացիությամբ, չնայած մեր թերթից միշտ էլ հղում էին կատարում ողջ Եվրոպայում:

XIX դարի վերջը կարևորվեց սոցիալական, ռազմական և տնտեսական փոփոխությունների հորձանքով: Այն ժամանակ չգիտեինք, որ այդ բուռն ալեկոծությունը մեզ տանելու էր անխուսափելիորեն դեպի մեծ պատերազմ, որը մեր գլխին գալու էր քսան տարի անց: Ես նոր էի դարձել երեսուներեք տարեկան և տեսնում էի, թե ինչպես էին իմ բարեկամները, ազգականներն ու ծանոթները օջախ հիմնում՝ կյանքին նայելով բուրժուայի տեսանկյունից, որպես բարեկեցությանն ուղղված իրադարձությունների հաջորդականություն, առանց որևէ հետաքրքրության, թե ինչ է կատարվում աշխարհի մնացյալ մասում:

Իմ ձգտումը դա չէր, քանի որ Կոստանդնուպոլսում անցկացրած տարիներն իրենց կնիքն էին դրել ինձ վրա: Դեռ այն ժամանակ հույս ունեի, թե հայերն ու թուրքերը կհասցնեն միմյանց հասկանալ: Այն նախաձեռնությունը, որ սկսել էի Նյու Յորքում և որում Գրիգոր Բրոչյանը պետք է գլխավոր դերակատարությունն ունենար, պահանջում էր նախապատրաստել ամեն բան՝ խուսափելու իմ հայ բարեկամի անիմաստ զոհաբերությունից:

Հաջորդ երեք ամիսների ընթացքում Գրիգորն ինձ ուղարկեց երեք ուղերձ Ամերիկայից, որոնցում ես զգում էի, թե ինչ անհամբերությամբ է ուզում վերադառնալ Թուրքիա՝ ասես չցանկանալով անցկացնել ոչ մի զուր վայրկյան առանց հանուն Հայաստանի մի բան անելու:

Նրան պատասխանեցի՝ խնդրելով վստահություն և որ հանգիստ լինի, թեև պարզ էր, որ հազիվ թե ինձ հաջողվեր նրան համոզել:

Ինձ զանգահարեց Հանոտոն, որը բարձր պաշտոն էր զբաղեցնում ֆրանսիական արտգործ նախարարությունում, հանձնարարելու մի գաղտնի առաքելություն Լոնդոնում: Այնտեղ գտնվում էր Սայիդ Ջեմալ ալ-Դինը, հայտնի որպես ալ-Աֆղանի՝ մուսուլմանական աշխարհի կարևոր մտածողներից մեկը, արագ զարգացող պանիսլամիզմի գաղափարախոսության ստեղծողը:

Ֆրանսիան ուներ խոշոր շահույթներ մուսուլմանական երկրներում, ինչպիսիք են Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը, Ալժիրը և Մարոկկոն, եթե չասենք Թուրքիան: Ֆրանսիական կառավարությունը ցանկանում էր հաստատել արտոնյալ հարաբերություն այդ մարդու հետ, և ինձ վիճակվեց գնալ՝ նրան առաջարկելու պայմանագիր:

Վերջին տարիների ընթացքում Ջեմալ ալ-Դինը արդյունավետորեն համագործակցել էր Անգլիայի հետ: Ոչ ոք նրա պես այդքան ազդեցություն չուներ Աֆղանստանից մինչև Ալժիր: Այնտեղ անգլիացիները ջանում էին պահպանել իրենց ստատուս քվոն այդ մարդու օգնությամբ, որի տան պատերի պաստառներն իսլամի պատկերներն էին. այն աստիճան, որ նա գաղտնի նշանակվեց անգլիական դեսպանատան խորհրդական Կոստանդնուպոլսում 1880 թ. սկզբներին:

Ջեմալ ալ-Դինը հովանավորում էր տարբեր պետությունների մուսուլմանների միությունը: Հետևաբար կարևոր անձնավորություն էր, իսկ իմ մտադրությունն այն էր, որ ինձ բացատրեր իր դիրքորոշումը այն ակնհայտ անհուսալի հիվանդության վերաբերյալ, որով տառապում էր Օսմանյան կայսրությունը:

Արդեն Լոնդոնում ինձ ընդունեց Ֆրանսիայի դեսպանը: Խնդրեց լինել բացարձակապես նրբանկատ և ինձ ներկայացրեց այն մարդուն, որը պետք է ինձ ուղեկցեր մուսուլմանների առաջնորդի մոտ, մսյե Անդրե Բիրսոնին՝ դեսպանատան խորհրդականներից մեկին: Նա խոսում էր արաբերեն կատարելապես, որը մուսուլմանների աչխարհում նրա առջև շատ դռներ էր բացել:

Գնացինք կառքով մինչև մուսուլման մտածողի առանձնատունը, որը գտնվում էր Վեսթ Էնդ-ում՝ պաշտպանված ոստիկանության կողմից: Բիրսոնը սակավախոս էր, և երբ նրան ճանապարհին խընդրեցի, որ խոսեր նրա մասին, միայն պատասխանեց, որ անհնարին է նրան բնութագրել:

— Համբերեք մի քիչ, ավելի լավ է, չտրվեք կանխակալ կարծիքների,— ավելացրեց:

Այնպես որ, ուղևորվեցինք բացարձակ լուռ մինչև ալ-Աֆղանի առանձնատունը, կարմիր աղյուսից մի իսկական անգլիական տուն՝ սև ներկված պատուհաններով, ճակատը ծածկված հսկա բաղեղով, որ թողնում էր այն տպավորությունը, որ ասես ուզում էր խեղդել տունը:

Ջեմալ ալ-Դինը մեզ դիմավորեց անձամբ: Մոտ հիսունհինգ տարեկան էր, բարձրահասակ, նիհար, խորաթափանց հայացքով և սևաթույր աչքերով, որոնցով հատում էր դիմացինին, լուրջ և կենտրոնացած արտաքինով, գուցե փոքր-ինչ խուսանավող, հագին՝ սպիտակ տունիկա, որն ասես նրան օգնում էր վերագտնել իր սեփական աչխարհը:

Բիրսոնը չնորհակալություն հայտնեց մեզ ընդունելու համար, իսկ Ջեմալ ալ-Դինը, գլուխը թեթևակի խոնարհեց ի պատասխան: Հավանաբար այդ մարդն ապրել էր լարված կյանքով և ամեն ինչից հիասթափված էր: Երբ նրան հարցրի իր չուտափույթ ուղևորությունից դեպի Կոստանդնուպոլիս, նայեց ինձ սևեռուն, հավանաբար մտածելով, թե ո՞վ կարող էր ինձ տեղեկացրած լինել իր նոր և գաղտնի պաշտոնի մասին: Այդ ժամանակ ես նրան բացատրեցի, որ ինքս էլ չուտով գնալու էի այնտեղ իմ նշանակման պատճառով՝ որպես Ֆրանսիայի դեսպանատան առաջին քարտուղար Թուրքիայում: Ասացի, թեև գիտեի, որ նա արդեն տեղյակ էր: Ոչ ոքի չէր ընդունում և եթե մեզ չէր մերժել, իրեն հյուրընկալողների՝ անգլիացիների պահանջով էր:

Ջեմալ ալ-Դինը չափից ավելի խելացի էր՝ ընթացքին հակառակ գնալու համար:

Այդ ժամանակ նրան չատ ավելի ուղղակի հարց տվեցի:

– Ձեր կարծիքով քրիստոնյաները մեծ թիվ են կազմում Թուրքիայում:

Ինձ զննեց մի պահ, և ես տեսա նրա սև բիբերի բռնկումը: Կարող էր ինձ ստել կամ պատասխանել ուզած բան, բայց չարեց: Մնաց մի պահ մտազբաղ, մինչ թեյի մի կում էր անում, որ մեզ նույնպես առաջարկել էր:

– Իսլամը մեծահոգի կրոն է, բայց Աստված պատժում է նրան, ում Ինքն է ուզում[1]: Եթե ձեր հարցը քաղաքական է, ձեզ ասեմ, որ երբ առաջին սուլթանները թույլ տվեցին մնալ քրիստոնյա փոքրամասնություններին, ծանր սխալ թույլ տվեցին: Իմ կարծիքով, այո՛: Փոքր Ասիայի հույները պետք է գնան իրենց մայր հայրենիք... Հնարավորին չափ չուտ, խորհուրդ չի տրվում, որ մնան այնտեղ: Ինչ վերաբերում է հայերին, եվրոպական մշակույթով քրիստոնյաներ են և զանգվածաբար պետք է գաղթեն Եվրոպա, իսկ եթե այստեղ նրանց չեն սիրում, հարցի էությունը դա է և ոչ այլ բան, քանի որ Եվրոպայի քրիստոնյաները չգիտեն, թե ինչ է գթասրտությունը, ոչ էլ սերը՝ մերձավորի հանդեպ,– ուրեմն թող գնան Ռուսաստան կամ Հարավային Ամերիկա: Բայց ո՛չ Թուրքիայում և ո՛չ էլ մուսուլմանական այլ երկրում ապագա չեն ունենա: Իսկապես, մի բան կասեմ, որ ձեզ անհեթեթ կթվա. այս քրիստոնյա Եվրոպան վաղ թե ուշ պարուրված կլինի իսլամով, քանզի մեր կրոնը անհամեմատելի է, որովհետև Աստված մեզ հետ է: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կպատահի, երբ դա կատարվի: Ես, այո՛, գիտեմ, թե ինչ տեղի կունենա: Բայց դառնանք հայերին. մի ժամանակավրեպ ժողովուրդ են, որը զբաղեցնում է կարևորագույն տարածք իսլամի զարգացման համար: Եթե ողջախոհ գտնվեին, իրենց եղած-չեղածը կհավաքեին և ճամփա կընկնեին..., ոչ ոք չի կարող կանգնեցնել Աստծու մտահղացումները և ոչ էլ ջանալ պայքարել տարերքների դեմ: Իրենց ժամանակը այդ տարածքում վերջացել է, և եթե դա չեն տեսնում՝ կույր են: Հիմա մտածեք այն բանի շուրջ, ինչ որ ձեզ ասել եմ:

Ջեմալ ալ-Դինը մնաց լուռ, սպասելով իր խոսքերի թողած ազդեցությանն ինձ վրա: Այդ մարդը կանխագուշակում էր սարսափելի մի բան, և ուզեցի ստուգել, թե արդյո՞ք ակնարկում էր այն, ինչ ես հասկացել էի:

– Դուք ինձ ակնարկում եք, որ կգա այն օրը, երբ հայերին կվտարեն Թուրքիայից:

[1] Ղուրան, սուրահ 5:

Չկարողացա խուսափել, որ նա այդ պահին չնկատեր իմ անհանգստությունը:

– Ոչ: Ես ձեզ դա չեմ ասում, իմ երիտասարդ բարեկամ: Դա ձեր անձնական մեկնաբանությունն է: Ձեզ միայն հաղորդել եմ իմ տեսակետը: Կարծում եմ, որ նրանք գտնվում են այնտեղ, որտեղ պետք է լինեին իրենց համար ամենադժվարին պատմական պահին: Անհրաժեշտ չի լինի, որ որևէ մեկը կոնկրետ այդքան արմատական որոշում ընդունի: Դա կանի պատմությունը... Եվ նույնպես պատմությունն է, որը վաղ թե ուշ հրճվելու է ողջ աշխարհում իսլամի հաղթանակով: Պարզ է, որ ո՛չ ես, և ո՛չ էլ դուք չենք տեսնի, քանզի մարդու կյանքը ընդամենը մի ակնթարթ է Աստծու ժամանակում:

Տեսեք, եթե անկեղծ լինենք, ձեզ այսպես կասեմ: Մուսուլմանները չեն կարողացել միացնել իրենց ուժերը՝ դիմակայելու անհավատներին: Թույլ են տվել, որ իսլամի հաշվին մեծանան, սակայն դա սոսկ անցողիկ փորձ է: Այսօր մենք արդեն երկու հարյուր ութսուն, թե երեք հարյուր միլիոն հավատացյալներ ենք, բայց վաղը,– իսկ ժամանակը թռչում է և կանգ չի առնում,– կդառնանք միլիարդավոր և անմիջապես, մի ակնթարթում, ավելի չատ մուսուլմաններ կլինեն,– քան մնացած բոլոր դավանողները միասին վերցրած: Կգա մի օր, երբ ամեն ծնվող եվրոպացու դիմաց կծնվի հինգ մուսուլման: Դե դուք հաշվեք, և հետո..., ինքներդ ձեզ պատկերացրեք:

Դա է Աստծու կամքը: Ու դա տեսել եմ Կահիրեից մինչև Դելի..., իսկ դուք կհասկանաք, որ եթե որևէ թույլ փոքրամասնություն,– հայերի պես ցրված, անպաշտպան և այդքան փոքր,– խոչընդոտում է աստվածային մտահղացումների իրականացմանը, պետք է ջնջվի քարտեզից: Լինելու է այդ: Իսկ մի՞թե չեն անհետացել ողջ քաղաքակրթություններ, որոնք իրենց համարում էին աշխարհի կենտրոնը: Բայց ինձ սխալ մի մեկնաբանեք, քանզի ես՝ անձամբ, հայերին ոչ մի չարիք չեմ ցանկանում: Հավանաբար իրենց խնդիրը հենց իրենց մեջ է, որ չեն ընդունում իսկական հավատը:

Ձեզ մի բան ասեմ, հաստատ գիտեմ, որ մինչև այս վայրը, Լոնդոնը, որը համարվում է ողջ աշխարհի մայրաքաղաքը՝ այս գոռոզամիտ անգլիացիներով, համոզված, որ աշխարհն իրենցն է, չատ կզարմանան, երբ հասնի այն օրը, երբ իսլամը հանկարծակիի բերի նրանց, իսկ երբ ուզենան գլխի ընկնել..., կհասկանան, որ ոչինչ չեն կարողանա անել խուսափելու համար: Աստված ամենազորեղն է: Մուսուլմանական կրոնը վերջին դարերում արժեզրկվել է՝ իր մեջ ներառելով

մեծ մասամբ սնահավատություններ և չինծու հավատներ: Բայց դա չէ այն ուղին, որ մեզ մատնանշել է մարգարեն, Աստված նրան օրհնի, այլ մաքրել իսլամը այն ամենից, ինչ ավելորդ է, վերածելով այն պաշտպանության և պայքարի մի գործիքի՝ մեր թշնամիների դեմ: Մենք պետք է ազատվենք եվրոպական և քրիստոնեական ազդեցությունից որոշ վայրերում: – Անատոլիայում հայերը, Փոքր Ասիայում հույները, Լիբանանում՝ մարոնիտները, Պաղեստինում՝ քրիստոնյա փոքրամասնությունների մնացորդները, Կահիրեում՝ դպտիները և այսպես ողջ Դար-էլ-իսլամում նույնպես հրեաները: Մեզ համար՝ պատրիարքի նեխած ճյուղը... Սուլթանի ձեռքը չպետք է դողա, եթե ուզում է համարվել մարգարեի հետնորդը... Թեև նա գիտե, որ քուրայշի չէ և իրավունք չունի կոչվել խալիֆ: Վերադառնալու համար նախկին ջինջ հավատին՝ պետք է դժվարին ճանապարհով գնանք: Եվ մի քանիսը՝ իսլամից դուրս և նրանում, կմնան ճանապարհին: Միայն Աստված է հաղթող:

Մենք հրաժեշտ տվեցինք Ջեմալ ալ-Դինին բավականին տագնապահար: Անտարակույս, պանիսլամական առաքելությունը ոչ մի գթասրտություն չէր ունենա որևէ քրիստոնյա փոքրամասնության հանդեպ: Պատկերացնում էի, թե ինչ ազդեցություն կարող էր ունենալ սուլթանի վրա և այն, թե ինչ կարող էր դա նշանակել Թուրքիայում ապրող հայերի ապագայի համար:

Մի քանի շաբաթ անց վերադարձա Փարիզ, քանի որ սպասում էի իմ մոտալուտ նշանակմանը որպես առաջին քարտուղար Կոստանդնուպոլսում և անհամբեր սպասում էի վերադառնալ այնտեղ: Իմ ֆինանսական գործերը հուսալի ձեռքերում էին, և շատ անելիքներ չունեի Փարիզում, քանի որ լարված սոցիալական հարաբերություններով այդ կյանքն ինձ թվում էր դատարկ և անիմաստ:

Այն, ինչ իրոք ինձ անհանգստացնում էր, այն էր, որ եվրոպական մամուլում համարյա չէին խոսում Թուրքիայում տիրող իրավիճակի մասին, քանի որ երբ որևէ լուր էին տալիս, համարյա միշտ թուրքերի տեսանկյունից էր՝ հայերին համարելով որպես արմատական ազգայնամոլներ և ահաբեկիչներ, որոնց միակ հավակնությունը երկիրն ապակայունացնելն էր: Այդ մեքենայության պատճառներն ինձ պարզաբանեց Փարիզի մեկ այլ թերթի տնօրեն Մամուլի ասոցիացիայի կազմակերպած ընթրիքի ժամանակ, և այդ բացահայտումը փոխեց լրագրողի էթիկայի մասին իմ տեսակետը:

Պիեռ Լբկլերկը այդ ժամանակ փարիզյան «Գազետ»-ի տնօրենն էր: Նստեցինք իրար մոտ պատահականորեն, և զրույցն ընթացավ

առանց խորանալու, մինչև որ կենտրոնացավ Արևելքում տիրող իրավիճակի վրա: Ակնհայտ էր, որ այդ մարդն իրականությունից շատ անտեղյակ էր: Փաստորեն ես նրան հարցրի, թե ծանո՞թ էր Միջին Արևելքին: Նա ժպտալով գլխով ժխտեց. այն, ինչ հաստատում էր, որ ոչ մի շահ չուներ այն գիտենալու:

– Եթե ուզում եք, որ ձեզ ասեմ ճշմարտությունը, միակ դրականը աշխատավարձն է. ստանում ենք Թուրքիայի դեսպանատնից: Այնպես չէ, որ մեզ հարստացնեն, բայց ավելի լավ է դա, քան ոչինչ այս ժամանակներում:

Առանց ինձ զարմացածի տեղ դնելու՝ նրանից խոսք քաշեցի.

– Ահ, այո՛, աշխատավարձը,– վրա բերեցի,– ասում են, որ եթե շարունակենք իրենց քաղաքականությունը, այն չուտով կբարձրացնեն:

– Ջեմ հավատում,– Լբկլերկը հերքեց գլխով՝ բավականին վհատված: – Թուրքիան ի վիճակի չէ անգամ վճարել իր պաշտոնյաներին, այնպես որ պետք է բավարարվենք նրանով, ինչ բաժանում են:

– Բաժանո՞ւմ են,– էլ չկարողացա խույս տալ ցույց տալու զարմանքս:

– Քանի՞ հոգու մեջ են բաժանում այն, ինչ գալիս, տեղ է հասնում:

– Իմ իմանալով առնվազն տասնհինգ թերթ են և ամսագիր, գուցե և ավելին: Ինձ չասեք, թե «Լ'Օրոր»-ը չի մասնակցում: Իմ կարծիքով մի քանիսը առհասարակ ոչ մի վճար էլ չպետք է ստանան: Միակ բանը, որ պահանջում են, այն է, որ ասենք ճշմարտությունը այս հայ հրոսակների մասին: Ինչպես գիտեք այդ մարդիկ՝ զինված մինչև ատամները, համարյա միշտ հասնում են իրենց ուզածին: Ռուսները նրանց ուղարկում են մեծ քանակությամբ զենք... Իսկական հեղափոխականներ են: Միակ բանը, որ Թուրքիան մեզ խնդրում է, այն է, որ նրանց մերկացնենք և մեզ ուղարկում են տեղեկագրեր այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում երկրի ներսում, որպեսզի դրանք հրապարակենք: Եվ դա բնական է, ձեզ չի՞ թվում:

Այդ խայտառակ բացահայտումն ինձ զայրացրեց, բայց հարցն այն չէր, թե ինչ կարծիքի էի Պիեռ Լբկլերկի մասին, որի պատճառով էլ լեզուս կծեցի: Այնուամենայնիվ, տեղեկանալով այն ողջ ստոր խարդավանքներից, որոնցից օգտվում էր թուրքական քաղաքականությունը հայերի հանդեպ, ինձ կարող էր շատ օգտակար լինել առաջիկայում ունենալիք ռազմավարության մեջ:

Թուրքերը շատ լավ գիտեին, որ իրենց աքիլլեսյան գարշապարը քրիստոնյա փոքրամասնություններն էին, որոնք նաև պատրվակ էին,

որ Եվրոպան մերթ ընդ մերթ միջամտեր և պարզապես գործում էին, ինչպես այլ անգամներ՝ ջանալով աշխարհին հակառակը համոզել: Այսպես, կրկնության չնորհիվ, ստեղծում էին մի կեղծ իրականություն, որը շատ ձեռնտու էր իրենց նպատակներին:

Ոչինչ չէին ասում ճշմարիտ իրավիճակի՝ չարաշահումների, կամայական ձերբակալությունների, բռնությունների, սպանությունների և անգամ զանգվածային կոտորածների մասին, որ Թուրքերը կատարում էին հայերի դեմ: Ոչ էլ անդրադառնում էին նույնիսկ այն նվազագույն դիմադրությանը, որով հայերի խմբերը ընդամենը փորձում էին պաշտպանել իրենց իրավունքները ողջ Թուրքիայի տարածքում քրիստոնյաների հանդեպ տարվող մաքիավելյան քաղաքականության դեմ:

Լուրերը, որ գալիս էին Թուրքիայից, մշտապես խեղաթյուրված էին, և այդ ամենի ապացույցը հենց նոր ինձ տվել էր Լրկլերկը: Այդ ձևով էլ Եվրոպայում հայերի դեմ ստեղծվում էր կարևոր կարծիք՝ նրանց համարելու հեղափոխականներ, ապակայունացնողներ, սարերի ավազակներ: Իրենց վիճակից հուսահատ... Եվ շատերը պատրաստ ամեն ինչի...

Արդյունքում Թուրքերը դառնում էին անպաշտպան զոհեր, իսկ հայերը ներկայացվում էին որպես հանցանք իրագործողներ:

Ինչ չափով, որ բարդանում էին «Եվրոպայի հիվանդ մարդու» գործերը, ինչպես որ հայտնի էր քաղաքական ոլորտներում Թուրքիան վերջին տարիներին, Փոքր Ասիայում միաժամանակ ավելանում էր ճնշումը հայերի և հույների նկատմամբ. ավելի շատ հարկեր, վատթար վերաբերմունք, նվազ իրավական երաշխիքներ, կամայականություններ, անսահման բռնություններ, որոնք կրկին անհուսության էին տանում ազգային փոքրամասնություններին: Թուրքական կառավարության կողմից մշակված և իր՝ սուլթանի կողմից հրահրված խարդախ ռազմավարությամբ Եվրոպան ստանում էր հակառակ պատկերը:

Հարձակվողները, օրինախախտները, առանց դրդապատճառի հեղափոխականները Փոքր Ասիայի հայերն էին, իսկ ժամանակ առ ժամանակ՝ հույները: Սուլթանը ընդհակառակը, և իր կառավարությունը, իր զինվորականները, իր ոստիկանությունը միակ բանը, որ անում էին, այն էր, որ փորձում էին պահպանել կարգուկանոնը՝ ցուցաբերելով մարդկային և համբերատար վերաբերմունք այն խռովարար փոքրամասնության հանդեպ, որ փորձում էր կործանել կարգուկանոնը և կայսրությունը:

Հրաժեշտ տվեցի Պոլ Լրկլերկին՝ սրտխառնոցով: Համոզված էի, որ Թուրքերի մեջ մեծամասնությունը պետք է որ լիներ պարկեշտ, բայց իրենց կառավարության խարդախ գործողությունները քրիստոնյա հպատակների դեմ ինձ համար զզվելի էին:

Հենց այդ ժամանակ էլ որոշեցի մի բան անել՝ օգնել ավելի Թույլ հատվածին: Տարիներ անց, այն բանից հետո, ինչ կատարվեց, խորհեցի, որ պետք է հավանաբար ավելի համառ և անձնազոհ եղած լինեի, քանի որ այն ժամանակ գուցե մեզ հաջողվեր փորձել կանխելու սարսափելի աղետը, որ մոտենում էր և չնայած այն ակներև էր, բոլորս էլ հրաժարվեցինք ընդունել այն:

Ճիշտ է, որ դժվարին տարիներ էին, որ եվրոպական երկրները ունեին իրենց խնդիրները, որ Հայաստանը հեռավոր վայր էր և համարյա անծանոթ և որ ոչ ոք չէր ուզում ներքաշվել այնպիսի պարտավորություններում, որ Թվում էր, թե իրեն չէին վերաբերում:

Բայց այն, ինչ կատարվեց, ցնցեց մարդկանց խիղճը, ինչպես մուրճի հարվածը, երբ քիչ կամ ոչինչ հնարավոր չէր անել հանուն հարյուր հազարավոր զոհերի:

Մի քանի օր անց մի պաշտոնական բանբեր սպա ձեռքին բերեց իմ նշանակումը որպես Ֆրանսիայի դեսպանատան առաջին քարտուղար Օսմանյան կայսրությունում: Իմ կյանքում սկիզբ էր առնում մի նոր ժամանակաշրջան:

ՄԱՅԻՍ 1894

13. ՎԵՐԱԴԱՐՁ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Մարմարա ծովից նշմարելով Կոստանդնուպոլսի ցնցող ուրվագիծը՝ կրկին սարսուռ զգացի: Այդ վայրն ունի կախարդանք, որով հողագնդի վրա քիչ վայրեր են օժտված: Անսահման քանակությամբ մակույկներ ու թիանավեր էին մեզ շրջապատում, և խարիսխ գցած կամ նավամատույցներում կանգնեցրած առագաստանավերի կայմերի անտառը վկայում էր, որ այդ վայրն իսկապես Ասիայի նավահանգիստն էր:

Մինարեթները և վիթխարի գմբեթները օտարերկրացուն ցույց էին տալիս, որ այդ քաղաքը եվրոպական մայրաքաղաք չէր: Ես քաջ ծանոթ էի դրանց և մտքում դրանց անուններն էի տալիս:

Մինչ շոգենավը արագ մոտենում էր Սուլեյմանիե մզկիթի ստորոտում գտնվող նավամատույցին՝ Ոսկեղջյուրում, ակամայից մտաբերեցի այն ժամանակը, երբ այնտեղ նախկինում եղել էի մոտ տասը տարի առաջ: Այնտեղ ունեի շատ բարեկամներ և ծանոթներ, ինքս էլ իմ տեղն էի գտել տարբեր ազգերի զարմանալի այդ քուրայում՝ Թուրքերի, հայերի, ալբանացիների, հույների, լեհերի, քրդերի, բուլղարների, արաբների և անչուշտ եվրոպացիների մեծ համայնքում, որոնք աշխատում էին կամ որոնց դուր էին գալիս այդ աներևակայելի քաղաքը և նրա ապրելակերպը: Հառաչեցի, տարիներն անցնում էին շատ արագ, բայց թվում էր, թե այստեղ ժամանակը կանգ է առել:

Մոտեցանք աղմկոտ նավամատույցին, մինչ անթիվ-անհամար ճայեր դիմավորում էին ձկնորսներին՝ բարի գալուստի շարունակ ճղճղյուններով: Կոստանդնուպոլիսը ինձ հմայում էր հատուկ ձևով, թեև չէի դադարում մտածել, որ կրկին մեծ սխալ եմ թույլ տալիս՝ փոխարինելով հարմարավետ կյանքը, որում ամենավտանգավոր իրադարձությունները բորսայում արժեթղթեր գնելն ու վաճառելն էր, ճանապարհորդելը՝ հսկելու, թե ինչպես են գործերը կալվածքներում, շաբաթ օրերին առավոտյան Բուլոնյան անտառում ձի նստելը, դիվանագիտական վատ վարձատրվող ծառայությամբ,— թեև ինձ համար դա նշանակություն չուներ,— որևէ հեռավոր վայրում և այնպիսի

մշակույթով, որը շատ տարբեր էր ֆրանսիականից: Ինչ վերաբերում էր իմ սուղ պաշտոնական աշխատավարձին, այն գումարը, որ ինձ տալիս էր պետությունը այդ աշխատանքի դիմաց, ես հարյուր անգամ ավելի և հաճույքով կվճարեի, եթե ինձ թույլ տային աշխատել իմ հայեցողությամբ:

Բայց նորից ես այնտեղ էի, մի մարմնեղ բեռնակիր տղայի հետ, որ ջանում էր տանել հսկա ճամպրուկը և երեք փոքր ճամպրուկները դեսպանատուն, մինչ բազմաթիվ շրջիկ վաճառառողներ ինձ հազար ու մի էժան և անպետք բաներ էին առաջարկում՝ համոզված, որ շատ պնդելու դեպքում վերջը մի բան կգնեմ: Ստիպված նրանց համառությունը կոտրեցի՝ պատասխանելով Թուրքերեն՝ տեղի ընդունված բառերով: Քանի որ ես խոսում էի սահուն, վրաս գցեցին զարմացած հայացք, ասես կշտամբելով, որ պետք է նախապես զգուշացրած լինեի: Թուրքերի մեծամտությունն անսահման է:

Այնուամենայնիվ, հենց այդ պահին տեսա, որ գալիս է դեսպանատան փայլուն լանդոն՝ լծված երկու չքնաղ ձիերով, դռներին արծնապատ Ֆրանսիայի դրոշը: Անմիջապես բարձրացա ու տեղավորվեցի նրանում՝ փորձելով ազատվել վաճառողների և խեղանդամների աղմուկ-աղաղակից, որոնք բոլոր կողմերից շրջապատում էին ցանկացած մարդու, ով հասնում էր այնտեղ՝ այն լայնարձակ աշխարհի նախամուտքը, որը Ասիան էր:

Արդեն դեսպանատանն ինձ անձամբ ընդունեց Պոլ Կամբոնը՝ շատ մեծ հեղինակություն ունեցող մի մարդ, որը զբաղեցնում էր խնդրահարույց պաշտոն, բայց միշտ պատրաստ էր ընտրելու որևէ ուղի՝ լուծելու դիվանագիտական ընդհարումը, որքան էլ դժվարին կամ փչոտ լիներ այն:

Ես գնացի նրա պաշտոնական, ինձ այնքան ծանոթ գրասենյակը՝ նրբաճաշակ հարկաբաժինը՝ հագեցած տարիների բույրով, որում վեց վիթխարի պատուհաններ թույլ էին տալիս վերահսկել մուտքը դեպի Բոսֆոր և Ոսկեղջյուր: Հավանաբար նա հիացմունքով հետևել էր իմ նավի ժամանմանը այնտեղից և սպասել ինձ: Կամբոնը հիսունին մոտ տղամարդ էր, բարձրահասակ, նիհար, միջօրեի արևից այրված մաշկով, անթերի հագնված փարիզյան վերջին նորաձևությամբ: Նրանից հորդում էր վստահություն և միաժամանակ փորձառություն և հենց որ նստեցինք՝ առանց որևէ ներածության սկսեց ներկայացնել ինձ իրավիճակը:

— Անրի, ձեր գալով կարծես երկնքից իջաք և անկեղծորեն ասած անչափ ուրախ եմ, որ լինելու եք իմ աշխատակիցը:

Այստեղ գործերը գնալով ավելի են բարդանում, քանի որ Սասունի դեպքերից սկսած իրավիճակը վատթարացել է: Գուցե կհիշեք, թե ինչպես ամեն ինչ սկսվեց այն բանից, երբ այդ գավառի հայերը,– հարկավոր է ամեն բան ասել,– այսինքն՝ ազգային կենտրոնի հայերը, հրաժարվեցին քրդերին վճարել որոշ հարկեր, ըստ սուլթանի հետ ունեցած համաձայնագրերի, նշելով, որ չպետք է վճարեն երկու անգամ, քանի որ Թուրքերին արդեն վճարել են: Իմ կարծիքով, անկախ ամեն ինչից և հարգելով հայերի դիրքորոշումը, դա մի սադրանք էր: Այդ դեպքից հետո մեծ չափով բարձրացավ լարվածությունը, անգամ այն աստիճան, որ մի քանի ընդհարումներից հետո միջամտեց բանակը անկանոն քրդական հեծելազորի՝ համիդիեների օգնությամբ, ի գիտություն ձեզ՝ ուսուցանված բրիտանական սպաների կողմից, որոնք դեպքի վայր եկան ծպտյալ, թեև մեր գաղտնի գործակալների շնորհիվ բացահայտվեցին:

Անցած գարնան ընթացքում Թուրքերը ձերբակալեցին Դամադյանին՝ հայ առաջնորդներից մեկին, բայց ինչ-որ մեզ անհայտ պատճառով, մեկ ամիս անց ազատեցին: Քիչ ժամանակ անց համիդիեները հարձակվեցին Սասունի վրա, բայց հետ չպրտվեցին, մինչև որ օգոստոսի վերջերին Թուրք գեներալ Զեքի փաշայի ղեկավարությամբ ուժեղ գրոհով մի քանի գյուղեր վերցրին:

Ըստ մեր դիտորդների՝ դա մի իսկական սպանդ էր, տասը հազարից ավելի մահացածներ և ամբողջ մի տարածաշրջան ամայացած, այրված:

Վատթարն այն է, որ դա կրկնվեց ավելի ուշ Մուշում և Անատոլիայի ու Կիլիկիայի այլ քաղաքներում:

Տեսեք, Անրի, այս պատկերը ամենևին չի կարող մեր սրտով լինել: Որպես քրիստոնյա և Ֆրանսիայի քաղաքացի՝ շատ եմ ցավում հայերի հետ տեղի ունեցածի համար, բայց մի բան սկզբից ևեթ ձեզ պետք է պարզաբանեմ: Մեր երկիրը վիթխարի շահեր ունի Օսմանյան կայսրությունում, և մեր պետական քարտուղարը՝ Հանոտոն, որը, ինչպես գիտեք, այս օրերին գտնվում է այստեղ՝ Կոստանդնուպոլսում հատուկ առաքելությամբ, ինձ տվել է կոնկրետ հրահանգներ: Մեր դիվանագիտական դիրքորոշումը Բարձր Դռան կողմից է և ոչ՝ հայերի: Հիմա, բարի, պետք է փորձենք ուղղակիորեն չներքաշվել «Հայկական հարցում», բայց, այո՛, օգնել գտնելու որևէ լուծում: Եթե ոչ, հարցը կարող է չուռ գալ մեր կառավարության դեմ, քանի որ Ֆրանսիայում հասարակական կարծիքը քրիստոնյա փոքրամասնության

կողմն է: Զուտ մարդասիրական զգացմունք: Ըստ ինձ հասած տեղեկությունների՝ դուք հարցին խորապես տեղյակ եք: Ձեզ հայտնում եմ պաշտոնապես, որ կառավարությունը ձեզ վստահում է հանդես գալ միջնորդությամբ և նաև հետևյալում, որ փորձեք խույս տալ, որ չչարունակվեն Թուրք կառավարության չարաշահումները այս փոքրամասնության նկատմամբ: Հիմա պետք է որ ձեզ համար պարզ լինի, որ այս դեսպանատան պաշտոնական դիրքորոշումը եղել և լինելու է լիակատար աջակցություն և համագործակցություն Թուրքական կառավարության հետ: Եթե որևէ պահ ստիպված լինեք վճիռ ընդունել, թող պարզ լինի. կաջակցենք սուլթանին: Շատ ենք ոխակի դիմում: Այդտեղ է գտնվում Օսմանյան կայսերական բանակը, որը մեծամասնորեն ֆրանսիական է. երկաթգծերի մեծ մասը, հանքարդյունաբերական կարևորագույն ներդրումները՝ սեփականության մեր իրավունքով: Ամբողջը՝ մինչև Հայդարփաշա կենտրոնական կայարանի վերջին պտուտակը, Ֆրանսիայի սեփականությունն է, ինչպես նաև նավերի, գնացքների և նավամատույցների մեծ մասը: Ինչպես տեսնում եք, խաղաքարտերին մի վիթխարի հարստություն է, և իրավունք չունենք մեզ թույլ տալ թեթևամտություններ:

Լսեք ինձ, Անրի, պետք է հավատաք ինձ, եթե ձեզ ասում եմ, որ համակրում եմ հայերին: Շատ նման են ֆրանսիացիներին իրենց բնավորությամբ և բացի այդ, քրիստոնյաներ են, որը մեծ արժանիք է: Բայց Թուրքերը մեր գնորդներն են և մեր դաշնակիցները, մանավանդ այս պահին և բացի այդ, մեզ պարտք են շատ ու շատ փող, բարեկամս, իսկ դա շատ ավելի ծանր է կշռում, քան սիրտը: Ինձ հայտնի է, որ դուք դիվանագետ լինելուց բացի կարևոր ֆինանսիստ եք և կարող եք ինձ կատարելապես հասկանալ: Դժբախտաբար, աշխարհի համար, ի վերջո, կարևորը արդյունքների հաշիվն է:

Բայց թույլ տվեք ինձ ներկայացնել ձեզ իրավիճակը: Մեկ ամիս առաջ մեզ՝ Հանոտոյին և ինձ, ընդունեց Աբդուլ Համիդը Դոլմաբաղչեի իր պալատում: Փողեր մսխելու ինչ անհավատալի ընդունելություն, իսկապես: Ահ: Այդ չքեղ ապակյա աստիճանները ֆինանսավորվել են ֆրանսիական վարկերով... Լավ, սուլթանը շատ սիրալիր գտնվեց մեզ հետ, մեզ այնպես ընդունեց, որ կարծես իր վաղեմի շատ սիրելի ազգականները լինեինք: Ակնհայտ է, որ խարդախի և ստահակի մեկն է..., բայց այն է, ինչ որ կա: Նրա ողջ հմայքը և վարդաջրով ողողված անուշահոտ նրբակիրթ շարժուձևը ի վերջո հասցրել են նրան, որ ամբողջ սրտով ատում է հայերին և եթե կարողանար՝ հողին կհավասարեցներ Եվրոպան...

Բայց այս վերջինը չի կարող անել, իսկ հայերի ճակատագիրն այնուամենայնիվ կախված է նրանից: Ճշմարիտն ասած, չէի ցանկանա լինել հայ Թուրքիայում, ներքուստ զգում եմ, որ առաջին իսկ պատեհ առիթով Թուրքերը կփորձեն ազատվել նրանցից, իսկ դա մենք չենք կարող հանդուրժել չատ պատճառներով, սակայն եթե նման սարսափելի բան կատարվի, ողջ աշխարհը մեզ մատնացույց կանի:

Բարձր Դուռը, անկախ իր պատմությունից և իշխանության ցուցադրումից, մեր բանկիրների, ինչպես նաև Անգլիայի ու Գերմանիայի ֆինանսիստների ձեռքերում է: Բոլորն էլ այն կարծիքին են, որ Թուրքիան տեխնիկական սնանկացման մեջ է, պարզապես էլ տեղ չի մնացել փող հանելու, որ վճարի տոկոսադրույքները, իսկ դա Թուրքական կառավարությանը կարող է հասցնել բարոյալքված քաղաքականության:

Այո՛, իմ երիտասարդ քարտուղար: Դուք պետք է դառնաք քրիստոնյա փոքրամասնությունների հետ կապը: Ձենք ուզում, որ իրենց լքված զգան, բայց պետք է գործենք չատ նուրբ ձևով, խուսանավելով, որ Թուրքական կառավարությանը հանկարծ չվիրավորի: Իսկ դա... ձեզ հեչտորեն չի հաջողվի, քանի որ մի կողմից՝ հարկ է ընդունել, որ Թուրքերը չատ լավ տեղեկացված են, մյուս կողմից՝ չատ դյուրազգաց են և չեն ընդունում ամենափոքր միջամտությունն իրենց ներքին գործերին: Բողոքում են... գուցե ինչ-որ տեղ իրավացիորեն, քանի որ չատ ենք վերահսկում իրենց ֆինանսները: Հիչո՞ւմ եք Մուհարրեմի դեկրետը: Տոկոսների ընդհանուր գումարը կրճատվեց պարտքերի վճարման երաչխիքի և հարկերի բռնագրավման դիմաց:

Այդ պահից ի վեր՝ Թուրքիան իր հարկային տուրքերի զգալի մասը հատկացնում է տոկոսների վճարմանը: Իհարկե, դա նչանակում է, որ պետք է վերահսկենք, թե ինչի վրա է ծախսվում հասարակական փողը, իսկ Թուրքերն էլ դառնորեն բողոքում են, թե միջամտում ենք իրենց ներքին գործերին... Արդարացի են, բայց մենք ուրիչ ելք չունենք: Ժողովուրդը, անչուչտ, Թուրքերը նույնպես, արդեն կուչտ են այդքան հարկերից, իսկ Փոքր Ասիայի հույները և Անատոլիայի հայերը այլևս անկարող են դիմանալ:

Այստեղ, Կոստանդնուպոլսում, հայերի բուրժուական դաս կա, որոնց չատ ձեռնտու է այդ համակարգը և Թուրքամետ են..., բայց այդ արդեն ինքներդ գիտեք:

Վերջապես ձեր հիմնական առաքելությունը լինելու է այդ քրիստոնյա փոքրամասնությունների հետ կապը՝ այն ձևով, ինչպես խորհուրդ տվեցիք դուք հենց իրեն՝ նախարարին Փարիզում: Այնպես որ, դուք հասել եք ձեր ուզածին և ձեզ չնորհավորում եմ, բայց կրկնում եմ ձեզ դեսպանատան դիրքորոչումը: Առաջինը լավ հարաբերություններն են Թուրքերի հետ, հայերի խնդիրները մեզ համար երկրորդական են պաչտոնական մակարդակով: Թեև ոչ բացահայտ ձևով՝ նրանց կօգնենք, որքան կարողանանք: Հասկանալի՞ է:

Դե ինչ, թող ձեր բախտը բերի ձեր առաքելությունում, դուք կունենաք դրա կարիքը:

Այս սրտագին և անկեղծ ձևով ինձ ընդունեց դեսպանը: Նա, ինչպես ես, քաջ գիտեր, որ ինձ վրա դնում է դժվարին մի առաքելություն: Որովհետև ես էի, որ իմ ներքին կանչով դա խնդրել էի, քանի որ իրականում ոչ մի կապ չկար: Բացի որոչ մարդկանց հանդեպ իմ ունեցած համակրանքից՝ ես ոչինչ չունեի Արմենիա կոչված այդ հեռավոր՝ համարյա առասպելական տարածքի ժողովրդի հետ:

ՕԳՈՍՏՈՍ 1894

14. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Կոստանդնուպոլսում ինձ համար դժվար չեղավ՝ վերստին կյանքիս հունի մեջ մտնելը: Այդ ամառ քաղաքի ամենանշանավոր հայ ընտանիքներից մի քանիսը և ամենաազդեցիկ օսմանյան ընտանիքներն ինձ հրավիրեցին տոնախմբությունների և ընդունելությունների, որոնք նշվում էին իրար հետևից՝ իրար հետ համաձայնեցված մի հատուկ օրացույցով:

Ծանոթացա Թալիբ բեյի հետ Դոլմաբաղչեում մի ընդունելության ժամանակ: Սուլթանը հրավիրել էր բոլոր դեսպանություններին: Նաև ներկա գտնվեցին կառավարությանը նվիրված ամենաաչքի-ընկնող քաղաքական գործիչներ:

Թալիբ բեյը զբաղվում էր բանակի համար զենքերի ներմուծմամբ և համարվում էր իր իսկ սուլթանի մերձավորներից մեկը, որի հետ, ասում էին, իրար մեջ կիսում էին խոշոր եկամուտներ, քանի որ սուլթանի պալատը մշտապես անհագորեն հետևում էր դրամական մուտքերին՝ իր կյանքի պերճաշուք մակարդակը պահպանելու համար:

Այնուհանդերձ, ինչ-որ պատճառով այդ մարդը շատ չահագրգռված էր մեր դեսպանատան հետ կապեր հաստատել: Ակնհայտ էր, որ ծրագրավորել էր մի գործ, որում Ֆրանսիան կարող էր վճռական դեր ունենալ, քանի որ բոլորը, ովքեր նրան ճանաչում էին, պատմում էին, որ Թալիբ բեյը զուր տեղը երբեք չի վատնում իր թանկարժեք ժամանակը:

Մի քանի շաբաթ անց ստացա մի հրավեր՝ մասնակցելու մի ճաշկերույթի իր ամառային առանձնատանը, որ գտնվում էր Օրթաքյոյի մոտ, շատ մոտ Բոսֆորի վրա գտնվող մզկիթին: Երբ այդ մասին պատմեցի Պոլ Կամբոնին, ինձ խորհուրդ տվեց, որ շատ զգուշավոր լինեմ:

– Մեծ պատիվ է, որ քեզ հրավիրել է: Ինչպես գիտես, այս թուրքերը շատ խստապահանջ են և անհաղորդ: Պաշտոնական տոների և ընդունելությունների կարող ես գնալ, բայց դժվարությամբ են հրավիրում իրենց տները: Ես մի ֆրանկով գրազ եմ գալիս, որ ձեր հավաքը անկողմնակալ չի լինելու:

Գրազն ընդունեցի և գնացի մինչև այնտեղ՝ դեսպանատան սեփական կառքով: Շատ չոգ էր, բայց ճանապարհն ընթանում էր Բոսֆորին զուգահեռ, և մեղմ քամին օգնում էր դիմանալ նրան:

Զէր դադարում ինձ հիացնել այդ տեղանքի անհավատալի գեղեցկությունը: Հորձանուտը, որ մտնում էր հորդառատ գետի պես Մարմարա ծովից, նեղուցում կազմում էր վիթխարի ջրապտույտներ, որոնք հիացնում էին միայն այդ տեսարանով:

Մի քանի առագաստանավեր հետ ու առաջ էին գնում-գալիս՝ փորձելով նավարկել հոսանքին հակառակ և ճայերի մի հսկա երամ իջնում էր որս անելու այդ առատ ծովում, մինչ հավքերը կտրումանցնում էին նեղուցը մեծ բարձրության վրա:

Ես չէի կարոտում Փարիզի իմ կյանքը, ընդհակառակը, ես երջանիկ էի վերադառնալու որոշում կայացնելու համար:

Հասա հանդիպմանը տասը րոպե շուտ, քանի որ չէի սիրում ոչ ոքի սպասեցնել, մանավանդ որ գնում էի ինձ ցուցադրելու: Տեսա, որ մեծ դուռը կրնկի վրա բաց է, իսկ դռնապանը, տեսնելով Ֆրանսիայի գերբն իմ կառքի վրա, հնչեցրեց զանգը: Երկու րոպե անց ինքը՝ Թալիբ բեյը ժպտադեմ ու ոգևորված իջնում էր աստիճաններով, դիմելով ինձ ճիշտ, բայց չափից ավելի ակադեմիական ֆրանսերենով, ինչը հատուկ էր Կոստանդնուպոլսի բարձր դասի անդամներին, ինչպես Թուրքերին, այնպես էլ հայերին:

– Աստված գթառատ է: Վստահ էի, որ չեք մոռանա, բայց իրոք պատիվ և մեծ բավականություն է ձեզ տեսնելը: Բայց թողեք կառքը և այս չքնաղ ձին իմ կառապանի՝ Ալու վստահելի ձեռքերում, և գնանք ինձ հետ, խնդրեմ: Ուզում եմ ներկայացնել ձեզ մի քանի երևելի բարեկամների:

Այդպես էլ արեցի, և Թալիբ բեյը բարի գալուստի մի շարք շարժումներով ինձ ուղեկցեց մի ծածկված դռնից իր չքեղ առանձնատան ներսը՝ զարդարված օսմանյան ոճով, եվրոպացու համար գերբեռնված, բայց որի վրա ակներևաբար ո՛չ փող էին խնայել և ո՛չ էլ ջանք՝ հզորության և հարստության զգացողություն տալու նպատակով: Կտրեցինք-անցանք սպիտակ մարմարե տարբեր բակեր, որոնցում չատրվանների ջրի ձայնը թարմություն էր պարգևում:

Ամեն քայլափոխի ծառաները խոնարհվում էին բացարձակ լռության մեջ, որ խզվում էր միայն վանդակների ներսում արևադար-

ձային թռչունների ճղճղոցից: Թանկարժեք գորգեր, բոլորն էլ մետաքսից և պարսկական նուրբ բրդյա հյուսվածքից, ծածկում էին հատակը: Այդ մարդը կանչել էր ինձ իր տուն՝ ցուցադրելու իր իշխանությունն ու իր աշխարհընկալման կերպը: Այդ ցուցադրությունը զուտ թուրքական էր, իսկ ես պետք է ընկալեի դա որպես բարեկամություն և միաժամանակ նախազգուշական ուղերձ:

Վերջապես հասանք մի վիթխարի սրահ, որն ապակյա դռան միջով Բոսֆորի վրա էր բացվում: Այնտեղ չորս տղամարդ՝ բոլորն էլ թուրք, ժպտադեմ ինձ էին սպասում:

— Սիրելի բարեկամներ,— Թալիբ բեյը ի նշան հարգանքի չարունակեց խոսակցությունը ֆրանսերեն, որը գործածվում էր ոչ միայն դիվանագիտական մակարդակով, այլև Կոստանդնուպոլսի բարձր դասի կողմից, երբ ներկա էր գտնվում որևէ եվրոպացի,— պատիվ ունեմ ձեզ ներկայացնել մսյե Անրի դը Լատուրին՝ Թուրքիայում Ֆրանսիայի դեսպանատան առաջին քարտուղարին: Մսյե դը Լատուրը, չնայած իր երիտասարդ լինելուն, մեր երկրի վաղեմի բարեկամն է, որը մի քանի տարի ապրել է այստեղ այն ժամանակ որպես «Լ'Օրոր»-ի թղթակից և դեսպանատան արտաքին հարաբերությունների խորհրդական: Կարծում եմ, որ ապագայում նրան կտեսնենք որպես դեսպանի: Կուզենայի ավելացնել, որ մսյե դը Լատուրը ներկայացնում է Ֆրանսիայի ամենամեծ դինաստիաներից մեկը: Կարևոր ֆինանսիստ է, շատ փորձառու, հետևաբար նրան մենք ոչինչ չենք կարող ուսուցանել: Իսկապես մեծ առավելություն է նրան այստեղ տեսնելը, իսկ հիմա թույլ տվեք, որ ներկայացնեմ ձեզ այս լավ բարեկամներին:

Ներկաները թեթևակի խոնարհեցին գլուխները՝ ցույց տալով թուրքական խառնվածքի այդ գիծը. ըստ որի՝ հյուրընկալությունը նոր եկածի հանդեպ, իր բարեկամությունը նրան առաջարկելը և ծայրաստիճան սրտագին վերաբերմունքը չատ կարևոր են:

Ակնհայտ էր, որ այդ հավաքույթը սովորական ծիսակարգից այն կողմ էր տարածվում և խորքում նրանք ցանկանում էին ավելի մտերիմ հարաբերություն հաստատել Ֆրանսիայի դեսպանատան այդ բարձրաստիճան պաշտոնյայի հետ, իսկ ես՝ իմ կողմից, հավակնում էի ներթափանցել թուրքական իշխանության թաքուն շրջանները:

Մեզանից ոչ ոք իրեն չէր խաբում, բայց անգամ այսպես՝ համակրանքի և փոխադարձ անվստահության տարօրինակ այս խառնուրդը չոչափելի էր այդ մթնոլորտում: Մյուս կողմից՝ Թալիբ բեյը այդ պահերին ցնծության մեջ էր:

— Սա իմ բարեկամն է և փեսան՝ Ահմեդ էֆենդի, որ ինժեներային գործ է սովորել Բեռլինում, խոսում է գերմաներեն պրուսացու պես և նույնպես զբաղվում է սարքավորումներ ներմուծելով: Շատ ավելի խաղաղասեր է, քան ես, որ զբաղվում եմ զենքերով:

Ահմեդ էֆենդին, ամրակազմ մի տղամարդ, ցածրահասակ և միջին տարիքի, ձեռքս սեղմեց՝ գլուխը թեթևակի խոնարհելով: Նկատեցի, որ ժպտում էր բոնապրոսիկ, թեև գուցե նրա երկչոտությունից էր:

— Ահա ձեզ եմ ներկայացնում Մուստաֆա բեյին՝ Թուրքիայի ուղեղներից մեկին, ներքին քաղաքականությունում սուլթանի անձնական խորհրդատուն է՝ մի մարդ, որ կարող է ձեզ չատ օգտակար լինել, երբ կարիք ունենաք, ասենք, հատուկ, բացառիկ տեղեկատվության:

Մուստաֆան մի քանի անգամ իրար հետևից գլուխը թեթևակի խոնարհեց, մինչ ինչ-որ բան էր չչնչում, որ չհասցրի հասկանալ: Ջլապինդ էր, ինչպես թուրքերի մեծամասնությունը և կրում էր ոսկյա չրջանակով և հաստ ապակիներով ակնոց, որը փորձում էր կարգավորել իր կարճատեսությունը: Գլուխը սափրած էր, և հագնված էր նրբաճաչակ. անթերի էր կարված ֆրանսիական կոստյումը: Ակնհայտ էր, որ նրանց բոլորի մեջ ամենաչատ ճանապարհորդածներից մեկն էր և հաստատ լավ պետք է ճանաչեր Փարիզը:

— Մսյե դը Լատուր, ուրախ եմ ձեզ ներկայացնել ներքին քաղաքականության բաժնի նախագահին՝ իմ սիրելի բարեկամ Քյամիլ բեյին՝ մի մարդու, որ նույնպես կրթվել է Գերմանիայում, Բեռլինում: Ուզում եմ ձեզ մի բան զգուշացնել նախապես... Զգույշ եղեք նրա հետ, քանզի ամեն ինչ գիտե: Երբ ուզում եմ ասել «ամեն ինչ, ...»: Այնպես որ նրան ոչինչ մի պատմեք:

— Հա, համոզված է, որ ուրիշ մեկը ավելի թուրք, քան ինքը, չկա... Մեծ հայրենասեր է: Ամենալավը մեր տեր սուլթանից հետո:

Քյամիլ բեյի աչքերը նեղ բացվածքով էին, բացվածք, որը նշում էր մոնղոլական հեռավոր ժառանգությունը՝ բնորոշ չատ թուրքերի: Աչքերը վառ մոխրագույն էին, ինձ հիշեցնում էին այն գայլի աչքերը, որին իմ գործավարներից մեկին հաջողվել էր ընտելացնել Գրենոբլի իմ առանձնատանը:

— Իսկ հիմա պատիվ ունեմ ձեզ ներկայացնել Սայիդ փաչային՝ արտաքին գործերի նախարարին... Սա է այն մարդը, ում ամբողջապես վստահում է մեր սուլթան Աբդուլ Համիդը... և մենք նույնպես, կարծես նա մեր ավագ եղբայրն է:

Սայիդ փաշան նիհար տղամարդ էր, վաթսուն տարեկան, տեղ-տեղ սպիտակ մազերով, հագնված գերմանական նորաձևությամբ և շատ ընդգծված, համարյա հավակնոտ՝ նրբաճաշակ երևալու իր բուռն ճիգում: Ինձ թույլ ժպտաց և գլուխը խոնարհեց, մինչ բռնում էր ձեռքս՝ առանց այն սեղմելու և ինձ ասաց.

– Ուրեմն դուք եք առաջին քարտուղարը... Բարի, այդ կապակցությամբ ձեզ չնորհավորում եմ: Պետք է որ ուրեմն ծանոթ լինեք այն հին ավանդությանը, որի համաձայն, ով որ ցանկանա դառնալ Եվրոպայում արտգործնախարար, պետք է նախ դառնա իր դեսպանատան քարտուղարը Կոստանդնուպոլսում: Երբ Կամբոնին դարձնեն նախարար, դուք կլինեք կատարյալ թեկնածուն:

Գլխով ժխտեցի՝ նույնպես ժպտալով նրան: Ծանոթ չէի այդ թեվավոր խոսքին, բայց եթե խորը մտածեի, ուներ իր տրամաբանությունը:

Այդ հրավերը պատահական չէր: Այն նուրբ ձևով հրահրել էր Պոլ Կամբոնը՝ դեսպանը, որն ուզում էր կասեցնել կամ գոնե դժվարացնել այն դերակատարությունը, որին հասնում էր գերմանական դեսպանատունը Կոստանդնուպոլսում՝ Գերմանական արևելյան բանկով՝ վերջին ժամանակներում սատարելով ցանկացած նախաձեռնություն, օրինակ՝ տրանսատլանտյան երկաթգծի անցկացմանը իրենց աջակցությունը, որը միացնելու էր Կոստանդնուպոլիսը Բաղդադի հետ կամ այնպիսի անառարկելի ազդեցության տեր մարդկանց մեծարելը, ինչպիսին Կիպերտն էր՝ նշանավոր աշխարհագրագետ, որը մանրամասնորեն կազմել էր Անատոլիայի քարտեզը: Այդ քաղաքականության ֆոնին նշմարվում էր կայզերի հզոր ուրվանկարը: Նա հինգ տարի առաջ այցելել էր սուլթանին իր պաշտոնական ուղևորության ընթացքում,– փառաբանվելով գլխավոր զինվորական շտաբի կողմից,– որն ավարտվեց իսլամի հիմնահարցին իրեն նվիրած կայզերական ընտանիքի՝ Մերձավոր Արևելքը տեսնելու էքսկուրսիայով և հուշանվերներով, գորգերով, ճենապակյա իրերով և տարաշխարհիկ օծանելիքներով բեռնված Բեռլին երթուղիով: Այդ ժամանակ Աբդուլ Համիդը հասկացավ, որ իրենց ապագան հարկադրաբար կապված է Գերմանիայի հետ: Ֆրանսիան, հետևաբար, չէր կարող մնալ ձեռքերը ծալած, մինչ բանկիրները, տեխնիկները, երկաթուղային ինժեներները և մանավանդ անթիվ-անհամար գերմանացի զինվորականները հասնում էին Կոստանդնուպոլիս այն խոր համոզմամբ, որ սուլթանի կողմից լինելու էին պաշտպանված: Եվ նրանց օրեցօր ավելի էին տեսնում միանգամայն հանգիստ զբոսնելիս վերև ու ներքև էմինյունյուից սկսած մինչև Մեծ Բազար այն ազատությամբ, որ ընձեռվում էր իրադրությանը տեր մարդուն և սպասվող հյուրին, որին դիմավորում էին ըստ արժանվույն:

Փաստորեն Նաումանը՝ աշխարհագրագետ, որը հավակնում էր Ասիայում ստեղծել գյուղատնտեսական գաղութներ, պնդում էր, որ հարկավոր է փոխել թուրքական քաղաքականությունը՝ Գերմանիայից կախված մի համակարգ ստեղծելու նպատակով:

Առաքելությունը, որ ինձ վրա դրել էր դեսպանը, այն էր, որ Կոստանդնուպոլսի փաստացի իշխանությունների առջև ցույց տայի, որ Ֆրանսիան չի դիջելու արտոնյալ իր դիրքը գերմանացիներին, անգամ եթե Կոլմար ֆոն դեր Գոլցը պատկաներ սուլթանի անձնական խորհրդին, թեկուզև պրուսացիները երկաթուղի գցեին Հայդարփաչայի և Իզմիթի միջև: Գերմանական նոր՝ զավթողական քաղաքականության առաջին քայլերն էին, որոնք ի վերջո տանելու էին անխուսափելի ընդհարման Մեծ Բրիտանիայի հետ:

Ինչո՞ւ էր ինձ ընտրել դեսպան Կամբոնը: Դա իր բացատրությունն ուներ. գիտեր Հանոտոյի հետ իմ ունեցած՝ Փարիզի բորսայում հարաբերությունների մասին, իմ արտոնյալ դիրքի, իմ ֆինանսական դրության մասին և Թուրքիայի քաղաքականության վերաբերյալ իմ անձնական իմացության մասին:

Ես կարող էի նրանց առաջարկել երկու տարբեր ճակատներ, բայց միմյանց լրացնող: Առաջինը Թուրքիայի ֆինանսական դրության բարելավման համար աշխատակցելն էր վերաֆինանսավորման և թուրքական պարտքի էական մասը պետության պարտավորությունների վերածելու միջոցով: Երկրորդը և ավելի նուրբը, սակայն ավելի ուղղակին, նրանց ախորժելի առևտուր առաջարկելն էր: Նրանց հետ ունեցած իմ փորձն ինձ հուշում էր, որ երբեք բաց չեն թողնի հարբստանալու պատեհ առիթը:

Այնտեղ հավաքվածները կռահում էին այդ հնարավորությունը և ինձ զննում էին՝ սպասելով, թե ինչ էի ասելու այդ լարված մթնոլորտում,– թեկուզև լի բարեկամական հղումներով և փոխադարձ գովեստներով,– մինչ բազմաթիվ սպասավորներ բերում էին լիմոնադ և սառույցով թեյ, խմորեղենների և սենդվիչների սկուտեղների ուղեկցությամբ, այդ ամենում հետևելով եվրոպական դեսպանատների սահմանած կարգին ու օրինակներին, բայց միևնույն է՝ օսմանյան միջավայրում, որքան էլ որ աշխատեին թաքցնել այդ: Կոստանդնուպոլսի վերնախավի թուրք քաղաքագետները, ֆինանսիստները իրենց համարում էին եվրոպացի և արհամարհում էին աշխատավոր

մարդկանց ու նրանց դասակարգը, գյուղացիությանը, կարծես իրենք ուրիշ աշխարհից էին: Նրանցից շատերը, կրթված լինելով Եվրոպայում կամ հաճախակի այցելելով եվրոպական մեծ մայրաքաղաքներ, կատարելապես սովորել էին այդ շարժումները, թեև նրանց չէր հաջողվում թաքցնել արևելյան երանգավորումը՝ կամ ավելի ճիշտ օսմանյանը, անգամ իրենց անձնական կամ ընտանեվարի պահվածքում: Օրինակ, նրանց կանայք ոչ մի իրադարձության մասնակից չէին, իսկ եթե որևէ բան էին անում, շատ նեղ և սահմանափակ բնույթի: Հրավիրում էին դիվանագետների կանանց, երբ Կոստանդնուպոլսում բացում էին դեսպանատուն... Միայն այս կերպ, միայն հազվադեպ առիթներով, քանի որ թուրքերը նախընտրում էին իրենց կանանց հեռու պահել ժամանակակից բարքերի ազդեցություններից՝ հոգու խորքում համարելով դրանք այլասերված և վնասակար: Ինչ խոսք, որ բոլորովին այլ մթնոլորտ էր տիրում այն երեկույթներում, որոնք ոչ թե դեսպանատներում, այլ դիվանագիտական անձնակազմերի մասնավոր առանձնատներում էին կազմակերպվում, որոնցում ի ցույց էր դրվում եվրոպականը և ժամանակակիցը՝ ասես ցանկանալով ընդգծել հակադրությունը սրանց և նրանց միջև:

Դե ինչ, մենք այնտեղ էինք գտնվում՝ զննելով միմյանց որոշ զգուշավորությամբ, պարուրված քաղաքավարի ժպիտներով և մաղթանքներով: Թուրքերը չողոքորթության ճարտասանական արվեստի մեծ վարպետներ են, կարծես իրենց պետքն էլ չէ, թե մնացածներն ինչ կմտածեն:

— Լավ, լավ,— Թալիբ բեյը փորձում էր կոտրել սառույցը,— ցանկանում ենք շնորհակալություն հայտնել ձեզ ձեր այցի համար: Գիտենք, թե որքան զբաղված մարդ եք և որքան քիչ ազատ ժամանակ ունեք ձեր տրամադրության տակ: Տեսեք, մսյե Լատուր, օգտվելով այստեղ ձեր ցանկալի ներկայությունից, կուզենայինք կիսել մեր անհանգստությունները ձեզ հետ: Գիտենք, թե ով եք և ձեր անուն-ազգանվան կարևորությունը Ֆրանսիայում: Նաև մեզ հաճելի է այն, որ դուք պատկանում եք այն ժողովրդին, որը խորհրդանշում է ազատությունները և ողջախոհությունը, որը, բացի այդ, Օսմանյան կայսրության հին բարեկամն է: Պատահական չէ, որ այս պահին գործածում ենք ֆրանսերենը, որը շատ ավելին է, քան դիվանագիտության լեզու: Առնվազն այստեղ՝ Թուրքիայում, մեզ համար այն լեզուն է, որով մենք արտահայտվում ենք, երբ ցանկանում ենք խոսել ապագայից, միջպետական հարաբերություններից, առևտրից և, իհարկե, մշակույթից:

Նկատեցի, թե ինչպես էին բոլորը գոհունակ հաստատում տանտիրոջ ասածները:

— Դու հասնելու ես նրան, որ մեր հյուրը չառագունի,— ասաց Սայիդ փաշան: — Եթե ինձ թույլ տաք, այն, ինչ ուզում է արտահայտել Թալիբը, մեր մեծագույն ուրախությունն է, որ այս պահերը կիսում ենք ձեզ հետ: Համոզված ենք, որ դուք, մսյե դը Լատուր, թուրք ժողովրդի մեծ բարեկամն եք, քանզի նա, ով գալիս է այստեղ ոչ թե ապրուստ վաստակելու, այլ իր զգացումները հագեցնելու, արժանի է հիացմունքի և հարգանքի:

— Ճիշտ այդպես,— հաստատեց Մուստաֆա բեյը, որն ըստ երևույթին չատ էր ցանկանում իր խոսքն ասել: — Մենք բոլորս խոր հիացմունք ենք տածում Ֆրանսիայի և նրա ժողովրդի հանդեպ: Դուք նրանց որպես օրինակ եք ներկայացնում:

Հասկացա, որ անօգուտ էր կասեցնել գովասանքների և բարեմաղթանքների այդ շարանը: Դա զուտ արևելյան մի բան էր, ասես նրանց մշակույթի հիմնական մասը և հյուրընկալության իրենց ըմբռնման կերպը, այնպես որ թողեցի, որ շարունակեն, մինչև որ ինձ հասնի պատասխանելու հերթը:

— Սիրելի բարեկամներ, այստեղ եմ եկել կրկնակի առաքելությամբ: Առաջին քարտուղարի իմ համեստ մակարդակով հիրավի ներկայացնում եմ Ֆրանսիան: Խորապես երախտապարտ եմ ձեր խոսքերի համար, քանի որ համոզված ենք, որ մեր երկու երկրներին մեկտեղ մեծ ապագա է սպասում: Սա մի կայսրություն է, որ իր հետքն է թողել աշխարհի պատմության վրա և իմ երկիրը հպարտ է նման պատմական բարեկամությամբ: Բայց այս ասելով, մենք մեր կողմից՝ Ֆրանսիայի ներկայացուցիչներն ենք Թուրքիայում, մյուս կողմից՝ դուք լիդերներ եք այս մեծ երկրի չատ բնագավառներում՝ զինվորական, քաղաքական, դիվանագիտական, միջազգային առևտրի, տնտեսական: Եվ պետք է միահամուռ ջանք գործադրենք հուսախաբ չանելու երկու ժողովուրդներին: Եվրոպան Թուրքերի կարիքն ունի..., և կարծում եմ՝ չեմ սխալվի, եթե ինձ թույլ տամ հաստատել, որ դուք էլ Եվրոպայի կարիքն ունեք:

Ուզում եմ ձեզ հավաստիացնել, որ Ֆրանսիան ձեզ հուսախաբ չի անի: Ճիշտ է, որ ապրում ենք դժվար ժամանակներ, որոնցում անհնարին է հաստատել որևէ բան: Սակայն Ֆրանսիան ցանկանում է նպաստել Թուրքիայի զարգացմանը և հավատում է այս վիթխարի կայսրության միասնությանը: Այստեղ նորեկներ կան,— ներող կլինեք, եթե նրանց չհիշատակեմ...,— ովքեր այն կարծիքին են, որ իրենց

համարում են Թուրքերի եղբայրներ՝ միմիայն այս երկրում տեղավորվելու նպատակով: Դուք լավ գիտեք, թե ինչպես է զարգացել պատմությունը և յուրաքանչյուրն իրենից ինչ է ներկայացնում: Ի վերջո, ժամանակն ամեն մեկիս կդնի իր տեղը, իսկ պատմությունն անողոք է:

Ֆրանսիան ցանկանում է համագործակցել Թուրքիայի հետ: Կայսերական օսմանյան բանկը Թուրքիայում իմ երկրի շահագրգռվածության վառ ապացույցն է: Հարկ է նշել երկաթուղու ներդրումները ֆրանսիական այնպիսի արդյունաբերական մեծ խմբավորումների կողմից, ինչպիսիք են Կոլլան, Ֆիվ-Լիլը կամ Սոսյետե դը Բատինյոլը...

— Շատ եմ խնդրում, կներեք որ ձեզ ընդհատում եմ,— Սայիդ փաշան բարձրացրեց ձեռքերը՝ ի նշան ներողության,— Տեսե՛ք: Մեզանից ոչ ոք չի կասկածում ձեր ասածներին: Բայց ասում են, որ Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև կա մի մերձավորություն, իսկ դա կարող է նշանակել մեր և ձեր կառավարության միջև օտարացում: Դա սուլթանի և նաև բարեպաշտ Թուրքերի մեծ անհանգստությունն է:

— Իմ սիրելի բարեկամ,— դեսպանի հետ խոսել էի այն հնարավոր հարցի շուրջ, որ կարող էր չոչափվել մեր խոսակցության ընթացքում, հետևաբար դա ինձ հանկարծակիի չբերեց,— Ֆրանսիան, քիչ առաջ նշեցի այդ, երբեք հուսախաբ չի անի Թուրքիային: Ռուսաստանի հետ հարաբերությունները սովորական են երկու տերությունների միջև, բայց դրանք դեսպանատների իրավասությունների մակարդակից այն կողմ չեն անցնում: Տեսեք, իմ այցը նպատակ ունի միայն ցրել կասկածներն այն մասին, թե Ֆրանսիան շարունակելո՞ւ է համագործակցել և ֆինանսավորել այս երկրին: Այո՛: Առանց որևէ կասկածի: Սակայն, ձեզ թախանձագին խնդրում եմ, որ ինձ սխալ չհասկանաք: Ե՛վ ֆրանսիական, և՛ թուրքական կայսրության շատ ձեռնարկություններ կարող են օգուտ քաղել այդ վստահությունից և այդ հարաբերությունից: Լինենք անկեղծ: Խաղի մեջ շատ փող է դրված, չափից ավելի..., և կարող ենք բոլորս շահույթ ստանալ: Ֆրանսիայի ներդրողները և ֆինանսավորողները կարիք ունեն խոսելու և համաձայնության գալու ձեզ նման մարդկանց հետ թյուրիմացություններից խուսափելու համար, քանի որ չպետք է մոռանաք, Թուրքիայում վարկերի վաթսուն տոկոսից ավելին պատկանում է ֆրանսիական հասարակական և մասնավոր բանկերին: Մեզ անհրաժեշտ է կայուն վիճակ և համապատասխան գործընկերներ: Եվ օգտվելով ձեր վստահությունից՝ կասեմ, որ մենք շատ մոտ և նման ենք ձեր պես անձանց:

Այդ պահին հանդես եկավ Ֆյամիլ բեյը՝ որոշ հեգնանքով:

— Մսյե դը Լատուր, թույլ տվեք ձեզ հետ խոսել որպես Թուրք ժողովրդի մոտ բարեկամի, դուք դա ցույց եք տվել բազմիցս, և հետևաբար, ձեզ հետ խոսում ենք որպես մի մարդու, ում գնահատում ենք և կարող ենք անել դա ամենայն վստահությամբ, այո՞: Դե ուրեմն, ամենայն անկեղծությամբ ձեզ կասեմ, որ դուք ունեք այն, ինչ անվանում ենք այստեղ ոսկե բերան, և դա ձեզ ասում եմ որպես գովեստ, քանզի Թուրքիայում հիանում ենք ճարտասանությամբ շատ ավելի, քան մեկ ուրիշ բանով:

Հիմա, բարի, խնդիրը ծագում է, երբ վերադառնում ենք իրականությանը: Ահավասիկ, մենք ունենք մի լուրջ խնդիր, որին դուք, հենց դուք, քաջ ծանոթ եք: Խոսքը այն քաղաքականության մասին է, որ իրենց՝ Թուրքիայի բարեկամներ անվանող երկրները հանդես են բերում Թուրքական կայսրության քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ: Այդ իրավիճակը նման է մի ծանր քարի, որպեսզի թույլ տա, որ մեր հարաբերություններն առաջ գնան, և մեզ անհանգստացնում է այն, որ նման հասարակ թյուրիմացությունների պատճառով չլինի թե ձախողվեն: Հայերը, Փոքր Ասիայի հույները, հիմնականում նրանք պաշտպանված են օսմանյան օրենքներով: Նրանց դեմ ոչինչ չունենք, կարո՞ղ էր արդյոք լինել այլ կերպ: Օսմանյան քաղաքացիներ են, թեև կան այնպիսիք, որոնք չեն ընդունում իրականությունը և թույլ են տալիս վնասարար գործողություններ Թուրք ազգի հանդեպ՝ պաշտպանվելով կեղծ հայտարարություններով, ավելի ճիշտ՝ ստերով: Ահավասիկ ողջ այդ խարդախությունը, այն, որ կոչում են Հայոց հարց կամ Սամոսի, Էֆեսի, Իզմիրի հույների խնդիրներ... Սակայն չէ՞ որ նրանք են, որ օգտվում են Թուրք գյուղացիների միամտությունից... Մի պտույտ տվեք Կոստանդնուպոլսով, և կհասկանաք ինձ, նայեք հայ մեծահարուստների վիթխարի առանձնատներին: Հարցրեք նրանց: Ձեզ անկեղծորեն կխոստովանեմ այն, ինչ մտածում եմ: Հավաստի տվյալներ ունենք, որ կան ռուս գործակալներ, որոնք հրահրում են հայերին: Սա ուրիշ հարց է: Այն, ինչ նրանք կցանկանային, Թուրքերին վտարելն է... Նկատի ունեմ ռուսներին և նաև հայերին... Եվ ձեզ մի բան կասեմ: Մենք ենք այս տարածքի տերը: Դարեր են անցել, ինչ այն նվաճել ենք, և եթե կա մեկը, որ ավելորդ է այստեղ, Թուրքերը չեն:

Ավելորդը հայե՛րն են,— տեսա, թե ինչպես են Ֆյամիլ բեյի վզի երակները պրկվում, ինչպես է դեմքը կարմրատակում: — Անչնոր-

հակալների մեկն են: Դավաճաններ են և եթե գնան այս ճամփով, թանկ կվճարեն: Բոլոր նրանք, բոլորը:

Այդ պահին Թալիբ բեյը հանկարծ տեղից վեր կացավ, հավանաբար ցանկանալով մեղմել հավաքույթը:

– Դե լավ, լավ, իմ սիրելի Քյամիլ: Մինչև ուր են, տեսեք, հասցնում նրան իր մտահոգությունները: Ո՛չ, Քյամիլ: Մեր լավ բարեկամ մսյե դը Լատուրն այստեղ չի եկել քո կոպիտ քարոզները լսելու: Նրան ուշադրություն մի դարձրեք: Քյամիլը խաղաղասեր և մեծահոգի մարդ է, ասես բարության մարմնացում, միայն թե երբեմն մի փոքր բարկանում է: Բայց մենք այստեղ գտնվում ենք դրական բաներից խոսելու համար: Քյամիլ, ա՛յ մարդ, մոռացիր հայերին: Թե՞ ուզում ես, որ այս տոնը գլխիդ հարամեն:

– Ո՛չ,– Մուստաֆա բեյը մինչև այդ պահը լուռ՝ սուր ձայնով դիմեց Թալիբ բեյին: – Ո՛չ, հազար անգամ ո՛չ... Ներեցեք, մսյե դը Լատուր, բայց չենք թույլ տա, որ այստեղից գնաք՝ սխալ կարծիք կազմած: Մենք՝ թուրքերս, հայերի դեմ ոչինչ չունենք: Այդ նրանք են, որ փնտրում են այլ երկրների միջամտությունը մեր երկրի ներքին գործերին: Նրանք են, որ ռուսների համար լրտեսում են, որոնք կառավարության դեմ ներկայացնում են փաստաթղթերի տրցակներ, որոնք հավակնում են ստեղծել Հնարովի մի ազգ, որպեսզի հույներից, բուլղարներից և սերբերից հետ չմնան, իսկ նրանք չունեն այլ հայրենիք, եթե ոչ օսմանյան և ոչ էլ այլ ազգություն, եթե ոչ թուրքականը, իսկ դա, դուք լավ գիտեք, կոչվում է դավաճանություն հայրենիքին: Ահ, պետք է ներեք մեր պոռթկումները: Սակայն եթե այսօր ուզում եք որևէ պատվարժան թուրք քաղաքացու ափերից հանել, բավական է նշել այդ խնդիրը: Ինչպե՞ս են այն անվանում նրանք: Ահ, այո՛, «Հայոց հարց»: Լավ, ուրեմն կփորձենք վերացնել այդ հարցը... Ուզում եմ ասել... Ահ: Դուք ինձ հասկանում եք, մսյե... Ինչպե՞ս եք դուք ասում. «Շունը սատկեց, կատաղությունն էլ վերացավ»: Իսկ հիմա խոսենք լուրջ բաներից: Լսեք, պարոնայք: Չենք եկել այստեղ ժամանակ վատնելու:

Իրոք, այլևս չհիշատակեցին հայերին, ոչ էլ հույներին, այդ պահից սկսած միայն խոսեցինք եկամտաբեր առևտրական գործերից, հանրային ու մասնավոր, և մթնոլորտը անմիջապես դարձավ վերստին սրտագին: Ժամեր անց, առատ ճաչկերույթից հետո, հրաժեշտ տվեցի նրանց, և բոլորն ինձ հավաստիացրին, որ իրենց լավագույն խոսակիցը Ֆրանսիան և ֆրանսիացիներն են:

Մթնշաղին վերադարձա Կոստանդնուպոլիս: Քամին մեղմացել էր, և Բոսֆորը մի հայելի էր մայրամուտի արևով: Հրաչալի եղանակ էր. մի պահ կանգ առա՝ հիանալու արևամուտով՝ խորհրդածելով այն բանի շուրջ, թե ինչ կուզենար ակնարկած լինել Մուստաֆա բեյը «Հայոց հարցը» վերացնելու առումով: Արևը թաքնվում էր հորիզոնում, և երկինքը ներկվեց կարմրավունով, իսկ ինձ համակեցին մթին կանխազգացումներ, երբ կրկին նստեցի լանդո: Բայց բնապատկերի գեղեցկությունն ինձ մոռացնել տվեց այդ ամենը մի քանի րոպեում: Դեսպանատուն վերադառնալու ճանապարհին լսեցի մուեսինի կոչը Մեջիդիե մզկիթի բարձրաչուք մինարեթներից մեկից, որը հրավիրում էր աղոթքի, մինչ աճող լիալուսինը արտացոլվում էր Բոսֆորի մթին ջրերում:

ՕԳՈՍՏՈՍԻ ՎԵՐՋԵՐ 1894

15. ԽԱԶԱՏՈՒՐ ՄԱԼՈՒՄՅԱՆ

Վերջապես Գրիգոր Բրոչյանը հասավ Կոստանդնուպոլիս: Իր ամերիկյան անձնագրով նա Գրեգորի Բրոչ էր, լրագրող, «Լ'Օրոր»-ի կողմից պայմանագրով աշխատակից՝ երկիրը հանգամանալից ներկայացնելու համար, որը հրատարակվելու էր ամեն ամիս: Փաստաթղթում, որն ինձ հպարտորեն ցույց տվեց, որպես ծննդավայր նշված էր Նյու Յորքը: Այդ առթիվ նա ինձ բացատրեց, որ Էլիս կղզու ներգաղթի տեսուչներից մեկը, որ հայ էր, հաստատել էր իմ այն տեսակետը, որ Հայաստանն ամենուր էր, որտեղ որ թեկուզ մի հայ լինի:

Հասնելուն պես՝ նույն երեկո, նա եկավ դեսպանատուն ինձ ասելու, որ անմիջապես գնալու է Բիթլիս՝ Վանա լճի հարավ-արևմուտքում գտնվող մի բնակավայր, որտեղ հայ բնակչության նկատմամբ անխտիր հարձակումներ են գործում: Նրան ասացի, որ ողջախոհ լինի և նոր տեղ հասած չմտնի գայլի երախը, այնինչ՝ նա ինձ հպարտորեն առարկեց՝ ասելով, որ հենց դրա համար է եկել:

Գրիգորի արտաքինը նպաստում էր հայի տեղ չանցնելու նրա հավակնությանը, և հաստատ որոշել էր ուղևորվել: Զգացի, որ ինձ չի հաջողվի համոզել նրան, որ հետաձգի: Բացի այդ, Գրիգորը շատ ավելի լավ գիտեր թուրքերին, քան ես և ինձ խոստովանեց, որ Նյու Յորք կատարած իմ այցից սկսած՝ միշտ մտածել է վերադառնալ Թուրքիա, որպեսզի փորձի վկայություն տալ որպես ականատես:

Նրան բացատրեցի, որ Միացյալ Նահանգները, ինչպես նաև Ֆրանսիան Վանում հյուպատոսարան ունեն, և նրան տվեցի մի կնքված և զմռսված փաստաթուղթ՝ ակրեդիտիվ, ըստ որի՝ նա գտնվում էր այնտեղ ֆրանսիական թերթերից մեկին աշխատակցելու նպատակով: Բիթլիսի նահանգը գտնվում էր այնպիսի ողբերգական պայմաններում, որ այդ վկայականը հաղիվ թե նրան ընձեռեր անձեռնմխելիություն, բայց դա ավելի լավ էր, քան ոչինչը:

Ակնհայտ էր, որ Գրիգորը ցանկանում էր անհապաղ մեկնել Բիթլիս և նրան հրաժեշտ տվեցի՝ մաղթելով հաջողություն: Պայմանավորվեցինք, որ նա ամեն պատեհ առիթով կուղարկի ինձ թերթի իր

քրոնիկոնները, որոնք ես կառաքեի «Լ'Օրոր»-ին՝ կեղծանունով, քանի որ այլ կերպ նրա համար վտանգավոր կլիներ:

Երբ նա դուրս եկավ գրասենյակից, զգացի, որ իմ բարեկամը խակապես դժվարին հանգամանքներում դիմում է չափազանց մեծ ռիսկի: Ես էլ էի մեծ պատասխանատվություն կրում, որ նրան մի բան չպատահի, որովհետև նրան համոզել էի թողնել Նյու Յորքը, որտեղ, ինչ խոսք, ապրում էր առանց խնդիրների և առջևում նրան մեծ ապագա էր սպասում: Դրանում առիթ ունեցա անձամբ համոզվել այդ քաղաքում գտնվելու ընթացքում, քանի որ հայերը կազմում էին մի զարգացող համայնք, որը գնալով տարածվում էր Միացյալ Նահանգներում: Նրանք անվեհեր առևտրականներ էին, ձեռներեց և խելամիտ մարդիկ, ուրիշ հայերի նկատմամբ,– եթե հայտնվում էին իրենց ճանապարհին,– անկողմնակալ և այդ մրցունակ ու ազատությունների երկրում ապրում էին, ինչպես ձուկը ջրում: Գրիգորը լքել էր այդ ամենը՝ անհավասար և անողոք պայքարի առաջին գիծ վերադառնալու համար:

Շարունակեցի աշխատանքս առանց կարողանալու առաջիկա չարաթներին իմ մտքից հանել Գրիգորին: Ինձ համար անբացատրելի էր նրա ընդունած որոշումը, ամեն դեպքում գուցե այդ քայլին դիմել էր քրոջն ու ծնողներին Թուրքիայից հանելու նպատակով, սակայն իր ժողովրդի առաջ ծառացած հարցի հանդեպ նրա նվիրվածությունն ու վճռականությունը տվյալ պահին ինձ հիացմունք էին պատճառում:

Այն վայրը, որ ցանկանում էր հասնել Գրիգորը, Սասունն էր, Բիթլիսի մոտ մի բնակավայր, որ կարող էին անվանել Պատմական Հայաստանի սիրտ: Այնտեղ վերջին տարիներին գոյություն ուներ ընդհատակյա խռովություն՝ ճնշման, կեղեքման, անվտանգության բացակայության, մշտական չարաչահումների, ծանր հարկերի հետևանքով, որ դնում էին թուրքերն ու քրդերը՝ խոչընդոտելով հայերին ապրել: Ճիշտ է, որ հնչակ կուսակցությունը կանգնած էր ժողովրդական զինված դիմադրության թիկունքում, որին վերջերս հաջողվել էր թուրքերին և քոչվոր քրդերին դուրս քշել քաղաքին հարող ծայրամասերից. անընդունելի մի բան օսմանյան կառավարության համար, որը ի դեմս կուսակցության՝ տեսնում էր հեղափոխության սաղմը ողջ պետությունում՝ խրախուսված մի քանի խանդավառ հայորդիների կողմից, ինչը կարող էր օրինակ ծառայել:

Լուրերը, որ հասնում էին մինչև Կոստանդնուպոլիս, այդ քաղաքի հայ համայնքի կողմից ընդունվում էին մեծ բավականությամբ, մինչդեռ ակնհայտ էին թուրքերի աճող ատելությունն ու դժկամությունը,

այն աստիճան, որ մի երկու տարի առաջ սուլթանը քրդերից կամ համիդիեներից ստեղծել էր մի անկանոն կարևոր բանակ, որոնց ղեկավարում էին իրենց իսկ ցեղապետերը՝ որոշ սպաների վերահսկողությամբ, որոնք գործում էին բանակի IV ստորաբաժանմունքի ենթակայությամբ, հենակետը՝ Երզնկայում:

Դիվանագետները խոսում էին այն մասին, որ Անգլիան ոչ միայն համաձայն է դրան, այլև այդ անկանոնների զինվորական հրահանգավորման անմիջական պատասխանատուն է, և այդ նպատակով էլ արևելյան նահանգներ է ուղարկել հատուկ գործակալների: Անտարակույս, դա մի խարդախ քաղաքականություն էր, սակայն նպատակահարմար՝ իր ռազմավարական շահերին:

Հետևաբար Անատոլիայի հայերի համար ո՛չ հեշտ և ո՛չ էլ բարենպաստ ժամանակներ էին, ինչի պատճառով էլ անհանգստանում էի Գրիգորի ճակատագրի համար:

Անգամ շատ ամիսներ անց Գրիգորի մասին ոչինչ ավելի չիմացա, թեև այդ ընթացքում պատահեց մի բան, որն ինձ ուղղակիորեն ներքաշեց այդ հարցի մեջ: Խաչատուր Մալումյանի միջոցով, որի հետ պահպանում էի ջերմ հարաբերություն, սկսեցի հաճախել Կոստանդնուպոլսի հայ բուրժուազիայի որոշ հավաքույթների: Նա, սակայն, համարյա կապ չուներ իր ազգակիցների հետ, քանի որ բարձր դասակարգը շատ ավելի մոտ էր կանգնած օսմանյան կառավարության վարած քաղաքականությանը և իրեն՝ սուլթանին: Նույնը կրկնում էին բարձր եկեղեցական դասի ներկայացուցիչները՝ սկսած պատրիարք Իզմիրլյանից:

Նրանք իրենց պարզորոշ համարում էին բարձր դաս, որի մեջ մտնում էին ֆինանսիստներ, բանկիրներ, բարձր մակարդակի առևտրականներ, քաղաքագետներ և մչակույթի ու կրոնի գործիչներ, այսպես կոչված՝ Հայ համայնքի խորհրդի ամիրաներ:

Շուտով գլխի ընկա, որ նրանց չէին հուզում այն նույն գաղափարները, ինչ ավելի ժողովրդական խավերին, այսպես կոչված՝ էսնաֆներին, այսինքն՝ հայ բնակչության մեծամասնությանը, որոնք համախմբվում էին շատ ավելի համերաշխ և անկողմնակալ ընկերություններում, քան բարձր դասերին պատկանողները: Նրանց միավորողը միայն հայ լինելու փաստի գիտակցումն էր և գուցե մի քիչ ավելին:

Մի առավոտ Մալումյանի հետ սուրճ խմելիս՝ նրան պատմեցի իմ ստացած տպավորություններից: Այդ մարդն էլ դրա վերաբերյալ ինձ հայտնեց իր տեսակետը:

– Տեսեք, դը Լատուր: Շատ բաներ կան, որ երբեք այն չեն, ինչ թվում են: Եվ հայերի մեջ էլ շատ տարբերություններ կան, քանզի ընչաքաղցությունն ու փառամոլությունը համարյա միշտ անհաղթահարելի պատնեշներ են: Ես ունեմ լավ բարեկամներ թե՛ այս և թե՛ այն դասում և կասեմ ձեզ, որ մենք այդ իսկ պառակտման պատճառով շատ բանի չենք հասնի: Մինչդեռ թուրքերն օգտվում են մեզանից, իսկ պատրիարքներն էլ շատ քիչ կամ բոլորովին չեն միջամտում: Արտոնյալ դասը հավակնում է պահպանել իր իրավունքները, ուղարկում է իրենց զավակներին Փարիզ, Վենետիկի Մխիթարյանների միաբանություն, կամ էլ Գալատա Սարայի լիցեյը: Շատերը բնակվում են Եվրոպայում, որտեղ ստանում են համալսարանական մասնագիտական կրթություն կամ անչուշտ, հաճախում լավագույն մասնավոր ակադեմիաներ: Այդ մարդիկ կարծում են, թե աղքատ հայերը ոչինչ են, պարզապես նրանց արհամարհում են... Կարելի է շատ խոսել հայոց հայրենիքից, պատմություններ պատմել, բայց կարևոր պահին թվով քիչ ենք և ոչ միաբան. մի քանիսը՝ կառավարության հետ բռնած իրենց առևտրական մեծ գործերով, մյուսները՝ հուսախաբ՝ գոյություն պահպանելու խնդրից, իսկ սուլթանը գոհ է իրավիճակից: Եվ հաստատ գիտեմ, որ մոտալուտ է այն օրը, երբ մենք կզգանք մեկս մյուսի կարիքը, քանի որ թուրքերը մեզ հետ տարբեր կերպ չեն վարվի, մեր միջև տարբերություն չեն դնի: Մեզ ատում են այնքան, որ ամեն բանի ընդունակ են մեր վերջը տալու համար: Իսկ այդ ժամանակ ի՞նչ: Որտե՞ղ է լինելու Գալատայի բանկիրը: Կամ էլ Օրթաքյոյի առևտրակա՞նը, կամ այդ ֆինանսիստը, որ երբեմն-երբեմն Դոլմաբաղչեում ընդունելության է արժանանում: Բուրժուազիայի կարևոր և անվանի ճարտարապետները մի՞թե կարծում են, թե իրենց այդ ժամանակ կհարգեն: Քանի որ չարամիտ եմ և կարծում եմ՝ շատ իրատես, ձեզ կասեմ, որ ո՛չ: Թեև կինս վերջերս ինձ ասում է, որ տարիքի հետ դառնում եմ մտագար. կարող է պատահել:

Մալումյանը խոր հառաչեց, ասես օդը նրան չէր բավականացնում:

– Ձեզ մի բան պետք է խոստովանեմ և խնդրում եմ ինձ սխալ չհասկանաք: Գիժ չեմ, ո՛չ էլ տառապում եմ սևամաղձությամբ, ոչ էլ մեծամտությամբ, ո՛չ էլ ընդունում եմ ափիոնի թմրաղեղ, որքան գիտեմ՝ հիվանդ չեմ... Ուզում եմ ձեզ ասել, որ ինձ առողջ մարդ եմ համարում, իհարկե, այն բանականությամբ, որին կարելի է այս երկրում հասնել: Տեսեք, արդեն բավական ժամանակ է՝ տառապում եմ սարսափելի մղձավանջներից. տեսնում եմ մարդկանց շատ երկար շարքեր, որոնց սարսափազդու տեսքից կարող եմ վստահ ասել, որ

մեռած են: Նրանք ուղղվում են ինձ՝ ձեռքերը տարածելով, կամ ասես կամենալով ինձ մի բան ասել և գնում են իմ առջևով՝ ասես պաշարելով, և ինձ չի հաջողվում հասկանալ, թե ինչ են ինձ ասում: Բայց կա մի բան, որ, այո՛, գիտեմ: Հայե՛ր են, ավելի ճիշտ հայեր էին: Շարքը թվում է անվերջանալի և կորչում է բլուրներում, մի թույլ մչուչի մեջ, որն ինձ խանգարում է տեսնել դրանից այն կողմ: Ձեզ կարող եմ երդվել, որ ես կոփված մարդ եմ, բայց այդ տեսիլքներն ինձ թվում են անտանելի, և ես արթնանում եմ կեսգիշերին՝ սառը քրտինքով պատված, մահվան և անկարողության զգացողությամբ:

Մալումյանը նայեց իմ աչքերին և նկատեցի, որ իր աչքերն արցունքից մչուչված էին, որ անօգուտ ջանում էր թաքցնել:

– Գիտեք, թե ի՞նչ եմ կարծում: Որ կատարվելու է մի հրեշավոր բան մեր ժողովրդի դեմ, որ թուրքերը մեզ չեն ներելու որպես ազգ գոյատևելու համար, մեզ չեն ներելու որպես մչակույթի կրողի, որպես գրաբարի պես անզուգական լեզու ունեցողի (թեև այն ժողովրդի կողմից փոխատեղվեց աշխարհաբարով. մեր մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը մեզ թողեց իր «Վերք Հայաստանի» ստեղծագործությունը այդ լեզվով, որում բոլոր հայերս մեկեն գտանք մեր արտացոլումը):

Մեզ չեն ներում հայ լինելու, Հայաստանը սիրելու հանցանքը, կամ ինչպես ասում էր իմ բարեկամ և ուսուցիչ Բաֆֆին, Հայաստանի սիրուց ըմբոստ դառնալը: Դուք հայ չեք, բայց ներքուստ կռահում եմ, որ սկսում եք ինչ-որ բանով համակվել մեր մարդկանց հանդեպ, և ձեզ հետ կարող եմ խոսել ամենայն անկեղծությամբ:

Թուրքերն ուզում են այս հարցը մեկընդմիշտ լուծել: Սուլթանն ատում է քրիստոնյա փոքրամասնություններին, մեզ մեղադրում է դավաճանության մեջ: Բալկանյան բոլոր ժողովուրդները՝ բուլղարները, հույները սկսել են ազատագրվել. մի ձեռքում խաչը, մյուսում՝ սուրը: Այդ բռնակալը վախենում է, որ Հունաստանը պահանջի այն, ինչ պատմականորեն նրան է պատկանում, այսինքն՝ Փոքր Ասիայի մեծ մասը, իսկ մյուսը... Հայաստանն է: Ուրեմն, իսկ ի՞նչ կմնա իրենց՝ թուրքերին: Ա՜հ: Սա է հարցը: Այդ պատճառով էլ գիտեմ, որ կգա այն օրը, երբ կփորձեն բռնությամբ վերացնել բոլոր փոքրամասնություններին: Կփորձեն, երբ հավատան, որ եկել է իրենց պատեհ ադիթը, ինչպես գայլերն են մութն ընկնելիս չրջափակում ոչխարների փարախը: Այո՛, երբ որևէ եվրոպական երկիր առանց խղճմտանքի նրանց ցույց տա այդ ճանապարհը, քանի որ իշխանության հանդեպ փառամոլությունը ավելի բարձր է դասվում, քան մարդասիրական

սկզբունքները: Եվ ի վերջո, վախենամ իրենք գնան իրենց նպատակին՝ նայելով այլ կողմ: Այնտեղ Ռուսաստանն է, որը հավակնում է հայերին տարրալուծել «Մեծ Ռուսաստանում»: Եվ այլևս ոչ մի տարբերություն չի լինի, միմիայն ռուսներ և երկու սերունդ անց մոռացության կտրվեն մեր լեզուն և մեր սովորությունները, կլինենք ռուսներ՝ մեծ քթերով, մուգ մազերով և պնդաճակատներ..., բայց ռուսներ: Անգլիան, որ միայն մտածում է պահպանել Օսմանյան կայսրության խախուտ հավասարակշռությունը՝ իր արտոնյալ դիրքն ապահովելու համար: Ֆրանսիան... ահ, Ֆրանսիան՝ ազատություններ ուսուցանողը: Արդյոք չի՞ վաճառվել լավագույն աճուրդին... Կներեք ինձ, քանի որ անձամբ դուք, ինձ շատ համակրելի եք, սակայն Ֆրանսիան այլևս այն չէ, ինչ նախկինում էր, Ավստրիան արդեն ունի այն, ինչ ցանկանում էր Բալկաններում և չի շարժվի դեպի Արևելք:

Ո՞վ մնաց մեզ, այո՛, Գերմանիան: Քանի տարի է, ինչ սեթևեթում է Աբդուլ Համիդի հետ: Երբ Վիլհելմ II-ը համբուրեց իր «զարմիկի» երկու այտերը, կնքվեց Հայաստանի ճակատագիրը: Դա Հուդայի համբույրն էր: Կայզերը տեսնում էր գերմանացի ժողովուրդների զավթողական քաղաքականությունը Ասիայում: Երկու տարի առաջ Բեռլինում լսեցի առաջին անգամ գերմանական ռազմատենչ գաղափարի արդարացման մի փորձ: Գիտե՞ք, թե ինչպես էին այն անվանում՝ «կենսոլորտ»: Ի՞նչ է ձեզ թվում: Այն, ինչ հասկացա, հետևյալն էր. եթե ես ինձ համարում եմ ավելի ուժեղ, քան հարևանս, տիրանում եմ նրա տանը: «Կենսոլորտ»: Երդվում եմ ձեզ, որ այդ լսելիս սարսռացի: Իրենք՝ գերմանացիները զեկուցմանը չափից ավելի ծափահարեցին՝ համոզված, որ իրենց հին աստվածները իրենց ցույց են տալիս ճանապարհը՝ Նիբելունգների պատմական ուանչը: Եվ չեմ սխալվում, ահա և գեներալ ֆոն դեր Գոլցը և իր խորաթափանց գաղափարները...՝ Կրուպի ծանր թնդանոթների հետ: Գերմանիան իր զավթողական ծրագրերի հենակետը ցանկանում է ունենալ Թուրքիայում:

Իսկ գիտե՞ք, թե ես ինչ եմ կարծում: Որ հայերը չափից շատ են իրենց ապագա ռազմավարության համար:

Հիշում եմ, որ ներկա էի գտնվում Բեռլինում մի ներկայացման՝ «Աստվածների մայրամուտը»: Այդ Վագները խոր ուսումնասիրություններ է կատարել Ռեյնի դուստրերի, հերոսի՝ Զիգֆրիդի, Վոտանի, գերմանացի աստվածների հնագույն անտառների մասին, բայց մի բան կա նրա երաժշտության մեջ, որ հնչում է տագնապով: Կարծես հանկարծ այդ ռիթմերը... հանդիսավոր, ինչու չէ, ցույց տան մի ան-

չոչափելի գիծ, որն ակնարկում է. դուք այդտեղ եք, իսկ մենք՝ այստեղ... ձեր մտքով չանցնի հատել այս գիծը, եթե ոչ՝ ձեզ վրա դա թանկ կնստի»:

Այո՛, սիրելի բարեկամ: Տխուր եմ և վհատված: Այն բոլոր ժողովուրդների միջից, որոնք անցել են պատմության ընթացքում այս վիթխարի կամրջով, որը Փոքր Ասիան է, Թուրքերին էր վիճակված, որ մնային այստեղ: Ահ, խեղճ Հայաստան: Վախենամ, որ իմ մղձավանջները չուտով վերածվեն իրականության:

Խաչատուր Մալումյանը հուսահատ շարժումով ծածկեց դեմքը ձեռքերով, և խոր կսկիծ զգացի նրա հեծկլտոցը լսելիս:

Զիմացա՝ ինչպես արձագանքել: Մի բան ինձ համար ակնհայտ էր, որ այդ մարդը կորցրել էր հույսը, մինչ Եվրոպան միայն հավակնում էր քաղել ամենամեծ օգուտը, առանց կարևորելու այն մեծ ողբերգությունը, որը կարող էր վրա հասնել ամեն վայրկյան հյուսիս-արևելքից փչող սառնաշունչ քամիների ուժով, օտար մի վայրից, որին Թուրքերն անվանում էին Թուրան:

ՆՈՅԵՄԲԵՐ 1894

16. ՌԻՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Դա կատարվեց այն ընդունելության ժամանակ, որը տեղի ունեցավ Ֆրանսիայի դեսպանատանը, որտեղ և առաջին անգամ տեսա Ռիտա Հակոբյանին: Մի կողմ թողնելով ավելորդ ամոթխածությունը՝ պետք է խոստովանեմ, որ նրան տեսնելուն պես խելակորույս սիրահարվեցի, քանզի ուրիշ բան ասել՝ կլիներ մեղանչել ճշմարտության դեմ: Քիչ էր մնում, որ չգնայի և իմ փոխարեն հանձնարարեի մասնակցել այդ ընդունելությանը երկրորդ քարտուղարին, բայց վերջին պահին որոշեցի ներկա լինել: Ահ, պատահականությո՛ւն: Ինչ իմանայի, թե մինչև ինչ աստիճանի էր փոխվելու կյանքս:

Միակ խնդիրն այն էր, որ Ռիտա Հակոբյանն ամուսնացած էր մեծ հարստության ժառանգորդ Պողոս Հակոբյանի հետ, ինչը և Կոստանդնուպոլսում ստեղծում էր անհնարին իրավիճակ, քանի որ դա չէր կարող համեմատվել Եվրոպայում համանման իրադրության հետ: Հայերը համարվում էին եվրոպացիներ և նույն կերպ, ինչպես բարձր դասի Թուրքերը, մրցակցում էին ժամանակակից լինելու առումով: Այնուամենայնիվ, երբ խոսում էին ընտանիքի պատվի մասին, որն արմատապես իրենց կանանց պարկեշտության մեջ էր, երկու համայնքներն էլ համընկնում էին, թեպետև տարբերությունն այն էր, որ հայերը թույլ էին տալիս, որ կանայք իրենց ընկերակցեին տոներին ու հասարակական զբոսանքներին, հավաքույթներին, մինչդեռ Թուրքերի մեծամասնությունը այդ ամենից հեռու էր պահում իրենց կանանց: Երկու դեպքում էլ նրանց մշակույթը ներծծված էր արևելյան առանձնահատկություններով:

Պողոս Հակոբյանն ուղևորվել էր Փարիզ, իսկ Ռիտան ներկա էր գտնվում այդ արարողությանն իր եղբայրների հետ՝ ելնելով այն սերտ կապից, որ այդ ընտանիքը պահպանում էր Ֆրանսիայի հետ:

Երբ մեր երկուսի հայացքները խաչվեցին, ներքուստ զգացի, որ նա իմ նկատմամբ անտարբեր չէ, իսկ ես, որ ինձ ձևացնում էի անտարբեր և չրջահայաց, զգացի, որ սիրտս ուժգին բաբախում է, երբ նրա ձեռքը մոտեցրի շուրթերիս:

Հետո՝ երեկույթի ընթացքում, նրան հետևեցի աչքերով և տեսա, որ նա էլ ինձ է հայացքը դարձնում: Երկուսիս համար էլ դժվարին իրավիճակ էր. որևէ մեկը կարող էր մեզ ուշադիր հետևել և գլխի ընկնել, թե ինչ է կատարվում: Մտածեցի, որ իմ անխոհեմ պահվածքով նրան կարող էի անախորժ դրության մեջ դնել: Այդուհանդերձ, ես ի վիճակի չեղա թողնել ընդունելությունը, թեև դուրս գալն էլ հեշտ չէր լինի, քանի որ առաջին քարտուղարի իմ դիրքը պետք է համապատասխաներ արարողակարգին:

Ռիտա Հակոբյանը Ջամբազյանների կրտսեր դուստրն էր, Կոստանդնուպոլսի ամենանշանավոր ընտանիքներից մեկի, որոնք պատկանում էին երևելիների կամ ամիրաների դասին: Նրա հայրը, արդեն վախճանված, եղել էր Հայկական խորհրդի անդամ, պաշտոն, որը շարունակում էր վարել Ռիտայի ավագ եղբայրը:

Ուրեմն իմ սիրային հավակնությունը նրա նկատմամբ բացարձակապես անհեթեթ էր, և եթե չդիմեի սեփական ողջամտությանս, եթե փորձեի մոտենալ, անհնարին իրավիճակ կստեղծեի նրա համար և որ ամենավատն էր՝ կարող էի նվաստացնել նրան: Զգացի, որ այդ ամենը պետք է մոռանամ, քանի որ դրանք զուտ դատարկ մտքեր են և միայն դժվարացնելու են կյանքս:

Չնայած զգացմունքային ցնցումին՝ հաջորդ շաբաթների ընթացքում փորձեցի շարունակել իմ սովորական կյանքը. ինձ համար շատ դժվար էր, քանի որ գիշերներն արթնանում էի նրանով տարված: Այնքան խորն էի հափշտակվել այդ երիտասարդ կնոջով, որի հետ հազիվ էի ծանոթացել, որ տարբեր առիթներով զբոսնելիս մոտենում էի այն առանձնատանը, որտեղ ապրում էր նա: Մոտակա մի սրճարանում նստում էի բաց պատշգամբում այն հույսով, որ նրան անցնելիս տեսնեի, բայց պետք է խոստովանեմ, որ անգամ այդ փորձերում աննչան իսկ հաջողության չհասա. դրանից, սակայն, չպակասեց նրա հանդեպ բուռն հրապուրանքս:

Նոյեմբերի վերջին դեսպանն ինձ հանձնարարեց ուղևորվել Փարիզ: Պետք է ներկայացնեի դեսպանատունը մի կարևոր ժողովի, որում չոչափվելու էր «Արևելքի հարցը»...: Ներկա էին գտնվելու նաև Թուրքական կառավարության ներկայացուցիչներ մի շատ բարդ ժամանակում, քանի որ վերջերս Թուրքերի կողմից իրականացված հայերի նոր ջարդերը Սասունում լցրել էին եվրոպական տերությունների համբերության բաժակը:

Անգլիական թերթերն էին, որ բացահայտել էին 50 գյուղերի ավերման և երեք հազարից ավելի սպանված հայերի մասին: Սկզբում

Թուրք կառավարությունը հերքեց բոլորը, ավելի ուշ՝ ընդունեց քրդերի կողմից մի քանի տասնյակ ազատամարտիկների սպանությունը: Բայց Վանի անգլիացի հյուպատոսը, որ ներկա գտնված վկաներից էր եղել, դայրացած ժխտեց այդ հաստատումները, որը մի նոր իրարանցում առաջացրեց եվրոպական հասարակական կարծիքում:

Այդ ժամանակ էր, որ Թուրք արտգործնախարար Սայիդ փաշան քաղաքական երկերեսանության մի վարժանքում, փաստարկելով, որ խոսքը Թուրքական ինքնավարության հանդեպ ուղղակի հարձակման մասին է, մեղադրեց անգլիական հյուպատոսին ստախոսության, ստահոդ լուրեր տարածելու և կայսրության հանդեպ անխախտ հավատքը վնասելու մեջ:

Ինքը՝ սուլթանը բողոքեց տերությունների միջամտելուց՝ անվանելով այդ խնդիրը «կայսրության ներքին հարցեր», և քաղաքական իրադրությունը բարդացավ հաղորդագրությունների մի պատերազմով տարբեր դեսպանատների և Բարձր Դռան միջև, թեև եվրոպական բոլոր դիվանագիտական ներկայացուցիչները համակարծիք էինք պաշտպանելու բրիտանական հյուպատոսի արժանապատվությունն ու արիությունը:

Այս ամենի արդյունքում ստիպված պատրաստվեցի ուղևորվել Փարիզ ֆրանսիական «Լիբերտե» շոգենավով, որը բեռներ էր տեղափոխում Մարսել՝ տարանցումով: Մի ցուրտ և անձրևոտ գիշեր նավ նստեցի Էմինյոնյուում՝ Ոսկեղջյուրի ծովածոցում տեղակայված նավահանգստում: Ոչ մի շահ չունեի այդ ուղևորությունը կատարելու, չնայած այն բանին, որ իմ սեփական գործերը վաղուց կանչում էին ինձ Փարիզ, բայց վատ եղանակը և մի շարք անձնական հանգամանքներ ճանապարհ ընկնելը դարձնում էին անցանկալի:

Այսպիսով, լուսաբացին հազիվ էինք թողել նավահանգստի մերձակայքը և խորացել Մարմարա ծովում: Շոգենավը, որ իրոք բավականին մեծ էր, քանի որ Կոստանդնուպոլիս հասնող շոգենավերից ամենատարողունակն էր, սկսեց շարժվել չափից ավելի արագ, որն ինձ մտահոգվելու տեղիք տվեց, երբ թողեցինք Դարդանելը Էգեյան ծով մտնելու համար: Եթե վատ եղանակը շարունակվեր, լուրջ խնդիրներ կունենայինք:

«Լիբերտե» շոգենավը կարող էր տեղափոխել մոտավորապես երեք հարյուր ուղևոր, քանի որ ուներ ութսուն երկտեղանի նավախցիկ և քառասուն միտեղանոց, չնայած այդ ճամփորդությունում կապիտանն ինձ ասել էր, որ նավում հազիվ քսան ուղևոր լիներ: Ինձ գիջել էին այսպես կոչված նավավարի նավախուցը, ինչը սովորական բան էր, երբ ճանապարհորդում էին ֆրանսիացի դիվանագետներ:

Զնայած վատ եղանակին՝ բարձրացա ընթրելու, քանի որ օրորվելուց հետո կուզենայի մի բան տանել ստամոքսս: Ճաշարանում մենակ էի. սպառնալից ծովը, լուսավորված անընդմեջ կայծակներով, չանթերով, շրջափակում էր մեզ, մի քանի վայրկյանում մտքովս անցավ, թե ինչ գործ ունեմ այստեղ՝ փոխանակ գտնվելու Կոստանդնուպոլսի իմ հարմարավետ բնակարանում:

Այդ պահին մեկը մտավ ճաշարան: Նվազ լուսավորությունը թույլ չտվեց ինձ տարբերել նրա դեմքը, բայց անկասկած դա մի երիտասարդ տիկին էր, ինչը վկայում էին նրա ուրվագիծը և ճկունությամբ սեղանների միջով շարժվելը՝ փորձելով պահել մի փոքր հավասարակշռություն՝ նավի ուժեղ տարուբերվելուց:

Հանկարծ նավն ուժեղ թեքվեց, և նա սայթաքեց, ես չտապեցի օգնել նրան այնքան վատ ձևով, որ մի քանի վայրկյան անց երկուսս էլ հատակին էինք՝ անկարող ուղղահայաց դիրք ընդունել: Հենց այդ պահին էր, երբ նրան վերհիշեցի այնպիսի կայծակի լույսի տակ, որը ճերմակաթույր լույսով ողողեց սրահը: Չէի կարողանում հավատալ աչքերիս: Խոսքը Ռիտա Հակոբյանի մասին էր: Ի՞նչ էր անում այնտեղ: Նա նույնպես շատ զարմացավ՝ հանդիպելով ինձ այնտեղ, և երբ վերջապես կարողացանք նստել, իրար նայեցինք՝ առանց իմանալու՝ ինչ ասել իրար, մինչև որ Ռիտան մի փոքր հուզված, ինձ ասաց՝ նավում իր գտնվելու մասին:

Նրա ամուսինը ինչ-որ պատահարի պատճառով հիվանդանոց էր տեղափոխվել: Ըստ իր բացատրության՝ նա ձիուց ընկել էր և կորցրել գիտակցությունը, և վերջին բանը, ինչ նրա մասին իմացել էր՝ շարունակում էր գտնվել անզգա վիճակում: Նույն ճակատագրական պատահարը, ինչ տեղի էր ունեցել հորս հետ: Պողոս Հակոբյանը երկու ամիս էր, ինչ գտնվում էր Փարիզում, ուր հաճախ էր գնում իր առևտրական գործերով: Եվ ճիշտ մի շաբաթ առաջ՝ նախքան վերադառնալն էր պատահել դա: Նա ճամփորդում էր իր քրոջ՝ Էլիզայի և մի ընկերուհու ընկերակցությամբ: Ինձ խոստովանեց, որ գուցե իրենք անխոհեմ արարք էին թույլ տվել, բայց իր կարծիքով իր պարտքն այնտեղ՝ ամուսնու կողքին լինելն էր:

Տեսա, որ շատ նյարդայնացած է, բայց դա վերագրեցի այն առկա իրադրությանը, գուցե և փոթորիկին, ինձ հետ մենակ գտնվելուն, իրենից չկախված մի շարք հանգամանքներին: Նրան առաջարկեցի ուղեկցել իր նավախցիկը և համաձայնեց: Բռնեց թևս և ինչպես կարողացանք, գնացինք՝ հենվելով միջնորմներին, մինչև որ հասանք իր խցիկին՝ տեղակայված նույն տախտակամածին, ինչ իմը՝ հազիվ տասը քայլի վրա: Այնտեղ՝ առանց մի բառ ասելու, մատնահոդերով թակեց և անմիջապես մտավ, մինչ ես մնացի դրսում՝ չնչելով հևագին, խորհրդածելով պատահականության տարօրինակ ճամփաների մասին:

Ես բացում էի իմ նավախցիկի դուռը, երբ նրան կրկին տեսա միջանցք դուրս գալիս: Ոչ մի բառ չասաց, ուղղվեց դեպի ինձ, և այդ ժամանակ մենք անխոս գրկախառնվեցինք: Հրեցի դուռը, և միասին մտանք: Նա լռելյայն թողեց, որ իրեն ընկերակցեմ, մինչ ճոռում էին միջնորմները, լսվում էր ալիքների խուլ ձայնը, երբ խփվում էին նավի կմախքին, իսկ կայծակներն անընդմեջ խզում էին բացարձակ լռությունը: Խորհելու պահը չէր: Պարզապես նա այնտեղ էր, ինձ հետ, համոզված, որ պետք է օգտվեինք այն առիթից, որ մեզ շնորհում էր պատահականությունը: Առանց իմանալու, թե չոգենավը դիմանալո՞ւ է ալիքների բուռն գրոհին, թե՞ մի քանի բոպեում ամեն ինչ վերջանալու է: Համարյա չէինք խոսում: Ի՞նչ կարող էինք անել: Գուցե նա դժբա՞խտ էր իր շահեկան ամուսնությունում ու մինչ այժմ չէ՞ր իմացել իսկական սերը:

Պետք է խոստովանեմ, որ սիրո հարցում ես էլ նույն զգացողությունն ունեի և գուցե այդ պատճառով էլ գրկախառնվեցինք շատ ուժեղ, ասես կռահելով, որ այդ առիթն այլևս երբեք չի կրկնվելու: Հետո մենք ընկանք մահճակալին, նա ոչ մի դիմադրություն ցույց չտվեց, ընդհակառակը, զգացի, որ նա սիրո ծարավի էր: Ժամանակն ասես կանգ էր առել և համարյա երկու ժամ մնացինք մերկ՝ իրար գրկած, կարծես մեր կյանքը ուր որ է վերջանալու էր: Նրան տիրելիս՝ ես համակվեցի երջանկության զգացողությամբ, մինչ այդ ինձ անծանոթ, և հաստատ նրա համար նույնպես, քանի որ լսեցի նրա հեծկլտոցը, մինչ կրքոտ պատասխանում էր իմ համբույրներին:

Հետո մնացինք մեկնված մահճակալին, իրար գրկած, լուռ, ուժասպառ, բայց այն անհանգստությամբ, որ երջանկությունը, որ մեզ տրվել էր, չէր կարող տևական լինել: Ռիտան հակվեց ինձ վրա և կրկին համբուրեց ինձ: Լսեցի, որ ասում է, որ ինձ միշտ սիրելու է: Հետո վեր կացավ, հավաքեց զգեստները, և լսեցի նրանից հետո նավասենյակի դռան փակվելը: Մանուշակների մի թեթև բույր էր թափանցել նավախուց, ծովը կարծես կամաց-կամաց խաղաղվում էր, և ես մնացի խորը քնած:

Արթնանալիս սկսեցի կասկածել, թե այդ ամենը գուցե ցնորք էր: Բայց մանուշակների բույրը դեռ մնում էր, և ցանկացած կասկած ցրելու համար՝ մի գուլպա էր կախված մահճակալի ոտքերից: Ինձ մի

քիչ ամոթահար զգացի, բայց միևնույն ժամանակ սաստիկ երջանիկ, դեռ այն անհանգստությամբ, որ չգիտեի, թե երբ կրկին կկարողանամ տեսնել նրան:

Լուսաբացին քամին դադարել էր, թեև խորքում ծովը համառում էր:

Բարձրացա նախաճաշելու և հանդիպեցի տարբեր ուղևորների, որ կարծես թե արթնացել էին մղձավանջից և իրար մեջ խոսում էին, որ բախտները բերել է, որ փոթորկից հետո ողջ են մնացել, քանի որ մեծամասնության համար դա մի փորձություն էր, որ հիշելու էին ամբողջ կյանքում:

Ռիտան վերև չբարձրացավ, թեև այն պահին, երբ դուրս էի գալիս ճաշարանից, տեսա նրա քրոջն ու նրան ուղեկցող տիկնոջը, որ մրտնում էին այնտեղ:

Այդպես նախընտրելի էր, քանի որ այն, ինչ եղել էր, պետք է մեր միջև մնար որպես գաղտնիք: Ես խաղաթղթին դրել էի մեծ գումար, մինչդեռ Ռիտա Հակոբյանը խաղի մեջ կարող էր տանուլ տալ ամեն ինչ: Նման հարցերում հայերը չատ չէին տարբերվում թուրքերից, երկուսն էլ կնոջ վերաբերյալ սեփականատիրական զգացում ունեին: Եթե կասկածի տակ էր առնվում, որ կինը չէր պահել ընտանիքի պատիվը, կարող էր կյանքից հեռանալ: Ամեն դեպքում ես գիտակցում էի, որ պետք է ողջախոհ լինեմ, ապա թե ոչ՝ կարող էր կատարվել սարսափելի մի աղետ:

Նրան այլևս չտեսա, մինչև որ հասանք Մարսել: Մի կառք կանգ առավ աստիճանի դիմաց, և վերին տախտակամածից նրան տեսա իր քրոջ և ընկերակցող տիկնոջ հետ իջնելիս: Ներքուստ զգացի, որ գնալու են նույն գնացքով, ինչ ես՝ դեպի Փարիզ: Վերցրեցի ուղեբեռս, հրաժեշտ տվեցի կապիտանին և բարձրացա մի ուրիշ քարուքանդ բաց կառք, որին մի ձի էր լծված, չատ նման Կոստանդնուպոլսի և Միջերկրականի կառքերին:

Չէի կարողանում դադարել մտածել, որ պետք է խոսեմ նրա հետ: Հասա այն բանին, որ մտածեցի, որ երկուսիս համար էլ չատ ավելի լավ կլիներ, որ միասին փախչեինք Նյու Յորք: Այնտեղ ոչ ոք մեզանից հաշիվ չէր պահանջի, կարող էինք մի նոր կյանք սկսել, և ես կյանքիս մնացած մասը կնվիրաբերեի նրան երջանկացնելու համար: Սակայն դրանք զուտ դատարկ մտքեր էին անսպասելի և զարմանալի իրավիճակում:

Համարյա երկու ամիս մնացի Փարիզում և չկարողացա տեսնել Ռիտա Հակոբյանին: Ինչ-որ մեկն ինձ ասաց, որ վերադարձել է Կոստանդնուպոլիս, իր ամուսնու՝ Պողոս Հակոբյանի հետ, որը վերջապես ապաքինվել էր: Ես չատ էի զբաղված աշխատանքով, քանի որ Ֆրանսիան այն հանձնախմբի անդամն էր, որը պետք է ուսումնասիրեր հայերի հանդեպ կոտորածները, թեև սուլթանը արգելել էր հարցաքննել վկաներին, ինչն էլ ավելի հավանական էր դարձնում նրա մեղսակցությունը:

Մի քանի օր անց Պոլ Կամբոնը հասավ Փարիզ: Դեսպանը և նախարարների խորհրդի նախագահ Կազիմիր Պերիեն հանդիպեցին «Հայկական հարցի» չուրջ խոսելու համար, քանի որ այդ ժամանակ արդեն գիտակցում էինք, որ Բարձր Դռան իրական քաղաքականությունը հայերին ոչնչացնելն էր և այդ նպատակով գերտերությունների միջամտությունը Թուրքիայում արգելելը:

1895 թ. փետրվարի վերջին դեսպանը և ես վերադարձանք Կոստանդնուպոլիս: Նավարկության ընթացքում չատ մտքեր փոխանակեցինք հայ փոքրամասնության վիճակի վերաբերյալ: Պոլ Կամբոնը տվայտում էր իր բարոյականության և Ֆրանսիայի չահերի միջև, որոնք ներկայացնում էր իր ողջ եռանդով: Ես գիտեի, որ այդ մարդը սարսափելի ներքին պայքարի մեջ է, բայց գիտեի նաև, որ հանուն ոչ ոքի՝ մատը մատին չէր խփի, եթե դա վնասեր մեր երկրին:

Այն պահին, երբ նավը մտնում էր նավահանգիստ, Պոլ Կամբոնն ինձ մի նախադասություն ասաց, որ երբեք չկարողացա մոռանալ:

— Հայերը կարծես Ֆրանսիայի որբերն են: Եթե նրանց մի բան պատահի, պատասխանատվության մեծ մասը մենք ենք կրելու, որ չենք կարողացել արգելել թուրքերին մարդկության նկատմամբ այդպիսի ոճիր գործել:

ՀՈՒՆՎԱՐ 1895

17. ՌՈԲԵՐ ԿԱՆՎԱՅԻ ՊԱՏՄԱԾԸ

Ռիտա Հակոբյանի դրվագը առօրյա լարված իրավիճակի հետ մնաց հետևում, թեև իրականում դեռ երկար ժամանակ ինձ հանգիստ չէին տալիս գիշերվա հիշողությունները նավում, և չէի դադարում մտածել նրա մասին: Դիպվածը մեզ ընձեռել էր մի պատեհություն, որից և նա օգտվեց հաստատելու համար այն, ինչ զգում էր իմ նկատմամբ: Ինչ վերաբերում էր ինձ, մի զարդատուփում պահում էի թույլ բուրմունք արձակող մետաքսե գուլպան. ընդունակ չեղա նետել, նաև անիմաստ էր ուղարկել այն Ռիտային, որը կարող էր նրան խիստ անվանարկել: Պետք է բավարարվեի այդ երազով, քանի որ ցանկացած այլ արարք նրա հարցում սխալ քայլ կլիներ:

Ֆրանսիայի դեսպանատանը իրադրությունը ծայրաստիճան լարված էր: Ծանր օրեր էին Թուրքիայում, և հազիվ էինք հասցնում ներկա լինել բոլոր այն հավաքներում, որոնցում մեր ներկայությունը պահանջվում էր:

Ինչպես նախորդ անգամներին՝ առաջարկեցին բարեփոխումների մի ծրագիր՝ քրիստոնյա փոքրամասնությունների վերաբերյալ շատ մեծ կամեցողությամբ, սակայն սուլթանը մերժեց նորից ու նորից՝ հիմնավորելով, որ ավելորդ է նման ծրագիրը, մեղադրելով հայերին Անգլիայի և Օսմանյան կայսրության միջև հարաբերությունների վատացման հարցում, քանի որ բրիտանացիներն էին առաջարկել վերոհիշյալ ծրագիրը՝ ելնելով ավելի շատ իրենց ռազմավարական, քան մարդասիրական շահերից:

Կրկին միացա Թալիբ բեյին, որին տեսնում էի դեպքից դեպք: Ինձ հրավիրեց ճաշելու Բոսֆորի վրա գտնվող «Ղազան» լավագույն ռեստորաններից մեկում, որը մի հայի՝ Տիգրան Իզմիրլյանի սեփականությունն էր: Մինչ ճաշում էինք այնտեղ, Թալիբն ինձ բացատրեց Սասունում և Վանում տեղի ունեցած դեպքերի իր վարկածը՝ հավաստիացնելով, որ հարձակվողները հայերն էին:

– Տեսեք, դը Լատուր: Կհամոզվեք դուք ինքներդ: Հիմա մի բոպեով կկանչեմ Իզմիրլյանին: Նա հայ է. մի բանի փոխարեն ուրիշը չի ասի, ոչ էլ յուրայիններին վնաս կտա:

Այդպես էլ արեց: Անմիջապես հայտնվեց ռեստորանի տերը, և Թալիբ բեյը նրան այնքան սիրալիր ողջունեց, որ կարծես վաղեմի բարեկամներ լինեին:

– Տիգրան, սա իմ լավ բարեկամ մսյե դը Լատուրն է: Ուզում է որևէ հայի բերանից իմանալ, թե ինչ է իրականում կատարվում Սասունում և Վանում: Դե, դու գիտես: Դե սկսիր, ասա նրան այն, ինչ մտածում ես, մինչև ես ձեռքերս լվանամ, որովհետև այնքան համեղ խեցգետիններ ես մատուցում, որ ես անկարող եմ եվրոպացիների պես դանակ-պատառաքաղով ուտել, քեզ անկեղծորեն ասեմ: Դա իրոք աններելի հանցանք կլիներ:

Թալիբ բեյը տեղից վեր կացավ և գնաց զուգարանների կողմը, մինչ Իզմիրլյանը հևալով գլուխը տարուբերելով ժխտում էր.

– Տեսեք, մսյե: Այդ հայերը, որ այդքան բողոքում են, Թուրքիայի լավ հայրենասերներ չեն: Կասկածի նչույլ անգամ չունենաք, որ այդ թելերը գործի են դրվում Սանկտ Պետերբուրգից: Ռուսաստանը կայուն սահման չի ցանկանում, քանի որ այդ դեպքում միջամտելու որևէ պատրվակ չի ունենա: Եթե որևէ հայ Թուրքիայում ուզում է աշխատել, կարող է անել նույնը, ինչ որևէ թուրք, վերջին հաշվով բոլորս էլ օսմանյան քաղաքացիներ ենք,– Իզմիրլյանը ժպտաց՝ ցուցադրելով ինձ իր ոսկե շողշողուն ատամները: – Ես բողոքելու ոչինչ չունեմ, նայեք այս բոլոր սեղանակիցներին, թուրք են, իսկ ես՝ հայ: Գալիս են այստեղ, որովհետև գիտեն, որ նրանց տալիս եմ ամենալավ ճաշատեսակը, և ինձ գրկում են եղբոր պես: Ո՛չ, մսյե: Բանն այն է, որ այստեղ որոշ հայեր չեն ընդունում խաղի կանոնները: Ինձ հասկանո՞ւմ է մսյեն:

Այդ պահին ձեռքերն անձեռոցիկով չորացնելով՝ Թալիբ բեյը մոտենում էր սեղանին:

– Ո՞նց եք, ի՞նչ կա: Իմ կարծիքով Իզմիրլյանը խելամիտ հայ է, և ամեն դեպքում դա հաճելի է... Դե լավ, Տիգրան, գնացինք, բարևիր քո ընտանիքին իմ կողմից:

Տիգրանը խոնարհվեց:

– Այդպես էլ կանեմ, էֆենդի: Ձեզ լավ երեկո եմ մաղթում, և նորից համեցեք: Հիմա խեցգետինների ամենալավ ժամանակն է: Ձեզ համար ոչ ոք ինձ նման չի կարող դրանք պատրաստել:

Երբ արդեն կառքում էինք, Թալիբ բեյը մի քրքիջ արձակեց:

– Ահ, էս հայե՛րը: Ջափից դուրս նրբազգաց են այս դաժան կյանքի համար: Դե ինչ, պետք է որ համոզվեք, եթե ձեզ վստահաբար ասում եմ, որ ունեմ քրիստոնյա բարեկամներ, դուք էլ եք ինձ գնալով

ճանաչում, և կարծում եմ, որ մենք իրար հասկանում ենք, ունեմ գերմանացի, իտալացի, ֆրանսիացի և անգլիացի բարեկամներ, նույնիսկ ռուս, բայց հայերը,– ձեզ հետ անկեղծ կլինեմ, առհասարակ և իբրև բացառություն,– նրանց հետ չեմ կարող, ուժերիցս վեր բան է: Մինչև ուղնուծուծս թուրք եմ և դրանով հպարտ եմ: Դարեր շարունակ տիրել ենք աշխարհի մեծ մասին և պարտադրել մեր քաղաքականությունը: Հիմա,– դառնորեն դեմքը ծռեց,– մի բուռ դավաճաններ,– հայերի մեծ մասը ուրիշ բան չեն: Հավակնում են յուրացնել մեր Թուրքիայից մի լավ կտոր... Կրակի հետ են խաղում և ի վերջո այրվելու են..., բայց իրենք՝ իրենց, մենք էլ՝ մեր գործին: Իսկապես, ի՞նչ կարող եք ինձ ասել երկաթգծերի համար նոր վարկեր տրամադրելու մասին... Դուք Թուրքիայի լավ բարեկամն եք և արժանի եք վաստակել մեծ փողեր: Իսկ այդ հայերը թող կորչեն գրողի ծոցը:

«Հայկական հարցի» շուրջ դա շատ բնորոշ մտածելակերպ էր Թուրքերի շրջանում: Նրանց կարծիքով միակ մեղավորները հայերն էին, և ինչ էլ որ նրանց պատահեր, արժանի էին:

Պոլ Կամբոնը՝ դեսպանն ինձ ասաց, որ շատ է անհանգստացած: Թուրքիայի կենտրոնում գտնվող մի բնակավայրից՝ Մուչից, լուրեր էին ստացել լեռնային ինժեներ Ռոբեր Կանվայի միջոցով, որին այնտեղ գործուղել էր ֆրանսիական կառավարությունը՝ Անատոլիայում հետազոտություններ կատարելու նպատակով: Նրան հրավիրել էր գալ դեսպանատուն, որպեսզի պատմեր տեղի ունեցածը՝ նկատի առնելով դեպքերի հանցավորությունը. եղելություն, որն արձանագրված էր լինելու քարտուղարի կողմից: Ինձ խնդրեց, որ ներկա գտնվեի որպես վկա այդ ամենի ներքո ստորագրելու համար:

Երբ հասանք դեսպանատուն, հենց շքամուտքում մեզ սպասում էր Ռոբեր Կանվան՝ միջին տարիքի մի մարդ՝ արևից այրված դեմքով, մարմնեղ, քունքերը ճաղատ և Թուրքերին հատուկ՝ արևելյան ոճի բեղով: Նրա աչքերը և առհասարակ դեմքի արտահայտությունը մատնում էին վճռական խառնվածքը:

Բարձրացանք դեսպանի գրասենյակը, ով մեզ մի բաժակ կոնյակ մատուցեց:

– Ի՞նչ կարծիքի եք,– ասաց,– թեկուզև չհավատաք, այս կոնյակը հայկական է՝ Երևանի կողմերից և համարյա նախանձելու տեղ չունի մեր կոնյակին: Մի իսկական գյուտ:

Ռոբեր Կանվան պատրաստվեց սկսել իր պատմությունը. նստեցինք, և քարտուղարը նշան արեց՝ ցույց տալով, որ պատրաստ է արձանագրելու:

Կանվան գտնվում էր Մուչում նախորդ տարվա վերջից, մի քանի հայ օգնականների հետ միասին, որոնց ինքն էր ընտրել Կոստանդնուպոլսում դաշտային հետազոտություններում համատեղ աշխատելու համար, երբ ծավալվեցին սարսափելի իրադարձությունները:

– Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչ աստիճանի են Թուրքերն ատում հայերին: Եթե չկատարվեր այն, ինչ որ ձեզ հիմա կպատմեմ, երբեք դրան չէի հավատա: Ճիշտ է, որ այստեղ-այնտեղ լսվում էին սարսափազդու պատմություններ: Թուրքերը խոսում էին հեղափոխական հայերից, իսկ վերջիններս Թուրքերի կողմից մշտապես կեղեքված լինելուց: Բայց լավ, ես նաև ճամփորդել եմ Կորսիկա և շատ բաներից եմ գլուխ հանում, ներեցեք ինձ բուն նյութից չեղվելու համար: Մենք գտնվում էինք մի տարածքում, որտեղ ավելի շատ հայեր կային, քան Թուրքեր, երբ հայտնվեցին համիդիեները՝ սուլթանի կողմից ուղարկված անկանոնների քրդական ստորաբաժանումները, հայերի հետ հաշիվները մաքրելու համար:

Գիտեինք, որ նահանգով մեկ իրենց գործերն էին կատարում, բայց նրանցից չէինք վախենում, ի վերջո ես ոչ միայն ունեի ֆրանսիական անձնագիր, նաև ունեի մեծ վեզիրի կողմից ստորագրված թույլտվություն՝ այդ տարածաշրջանում աշխատանքներ ծավալելու համար: Իսկ իմ օգնականները պաշտպանված էին պաշտոնական հռչակագրով՝ հուրիեթով, որը նրանց պահում էր ցանկացած ոտնձգությունից, թեև ճշմարիտն այն է, որ այդ վայրերում հաճախ, երբ ձեռքդ տանում ես որևէ փաստաթղթի, արդեն չափազանց ուշ է:

Ճամբար էինք խփել մի թավուտում՝ սարի թեքության վրա՝ առվակի մոտ, քանի որ մտադիր էինք նմուշներ վերցնել մոտակա պղնձե հին հանքերից, երբ տեսանք ձիու վրա նստած հիսուն համիդիեների գալը:

Հանկարծ տեսանք, որ նրանց հետևից երկուական իրար կապված գերիների մի շարք էր գալիս: Բոլորը տղամարդիկ էին և մեկ էլ՝ հատ ու կենտ տղաներ, բայց նրանց մեջ չտեսանք ոչ մի կնոջ: Գլխի ընկանք, որ այն տեղանքի պատճառով, որը զբաղեցրել էինք, չէին կարող մեզ տեսնել, այնպես որ սկսեցինք դիտել բացարձակ լռության մեջ, քանի որ չէինք ուզում խնդիրներ ունենալ: Ոչինչ չէինք կարող անել, քանի որ չորսս էինք հարյուրի դիմաց, և հայերի շարքի վերջում, թափորը փակում էր ձիավորների մեկ այլ խումբ: Հետաքրքիրն այն էր, որ բոլորը գնում էին լռելյայն, երբեմն լռությունը խզում էր որևէ վրնջոց կամ բազմաթիվ ձիերի խուլ ժխորը, որ լսվում էր ճանա-

պարհին: Ո՞ւր էին տանում այդ մարդկանց: Ինչո՞ւ էին նրանց գերի վերցրել:

Հանկարծ կանգ առան, նրանց տեսնում էինք ընդամենը երկու հարյուր մետրի վրա, և իմ հեռադիտակով կարող էի տարբերել թե՛ սրանց և թե՛ մյուսների դեմքերը: Համիդիեները՝ իրենց գոռոզամիտ քմծիծաղով, հաղթողի տեսքով: Հայերը՝ փոշոտված, համարյա բոլորը գաղանաբար խոշտանգված, մի քանիսն արյունլվա՝ իրենց բախտին համակերպված:

Հենց այդ նույն պահին տեսանք մի քանի զինվորականների, որոնք արագ վարգով գալիս էին հակառակ կողմից, կարծես որոշել էին ինչ-որ պատճառով հանդիպել իրար այդ վայրում: Շուտով իմանալու էինք, թե ինչ: Գլխավոր սպան խոսեց մի քանի բոպե տարբեր պետերի հետ, հետո խթանեցին ձիերին՝ ավելի հեռվում տեղավորվելու համար՝ մի մոտակա բարձունքում սպասելով:

Երեք հայերից մեկը, որոնք ինձ ուղեկցում էին, Մուշից էր և քաջ ծանոթ էր տեղանքին: Սողաց դեպի ինձ և շատ գրգռված չչնջաց, որ այդ վայրում կային շատ խոր անդունդներ, այնքան խոր, որ ասում էին, որ ոչ ոքի չի հաջողվել իջնել մինչև հատակը:

Այդ ժամանակ, իրենից դուրս գալով, դիպավ թևիս և ցույց տվեց գերիների կողմը: Նրանց հրում էին դեպի անդունդներից մեկը: Տեսանք, թե ինչպես էին հայերը փորձում դուրս պրծնել, բայց ոչինչ չէին կարող անել իրենց կապանքների պատճառով: Նրանց տեսնում էինք անհետանալիս և մի քանի վայրկյան ավելի ուշ լսում հուսահատության սարսափելի ճիչեր: Խոսքը զանգվածային մահապատժի մասին էր, որից աշխատում էին ոչ մի հետք չթողնել: Մի քանի գերիներ՝ երկու-երկու կապված, վազում էին մի կողմից մյուսը, բայց համիդիեները նրանց ստիպում էին վերադառնալ և գործն ավարտում էին՝ նրանց հրել-գցելով խորխորատները: Փախչելու նրանց ճիգերը զուր էին, և երբ իմ օգնականներից մեկը ուզեց կրակել պարագլուխների վրա, ստիպված հետ պահեցի նրան, քանի որ այդ հեռավորության վրա անհնարին կլիներ նշանակետին խփել և ամեն դեպքում նրա արարքը մեզ կարժենար չորս հոգուս կյանքը: Մենք սոսկ կարող էինք դառնալ այդ զարհուրելի ոճրագործության վկաները:

Պետք է ասեմ՝ մինչև այդ պահը ես ինձ թրքասեր էի համարում, չէի հավատում այն պատմություններին, որ մե՛կ սրանք և մե՛կ նրանք պատմում էին ստեղծված իրավիճակի մասին: Բայց ականատես լինելով, թե ինչպես սպանվեցին մոտ հարյուր հայեր այդ անսահման դաժանությամբ, այնքան ազդվեցի տեսածից, որ մի քանի անգամ փսխեցի, մինչ իմ հայ օգնականները հուսահատությունից և անկարողությունից մազերն էին փետում:

Կես ժամ անց ամեն ինչ վերջացել էր: Անկանոնները պետք է որ վերադարձած լինեին իրենց ստորաբաժինը, որը վրան էր խփել մոտ տասը կիլոմետրի վրա՝ դեպի հարավ: Ամեն ինչ լուռ էր, մութն արագ իջնում էր, և մենք այնտեղ էինք՝ ամբողջովին ընկճված, կարկամած, քանի որ, իսկապես, ոչինչ չէինք կարող անել՝ հանուն սպանված հայերի:

Այնուամենայնիվ, տեղի ունեցածից ապշահար՝ ուղղվեցինք դեպի անդունդները: Այնտեղ միայն մնացել էին մի քանի պատռված կոշիկներ, մի արնաշաղախ վերնաշապիկ, պարանի մի քանի ծվեն, մի պայտ:

Ոչինչ: Գրեթե հարյուր հոգի, գուցե մի ժամ առաջ, մտածում էին դեռ իրենց ապագայի մասին: Երբեք այս կերպ չէի զգացել մահվան ներկայությունը՝ որպես սարսափելի դատարկություն: Ես հակվեցի կիրճերից մեկի վրա, մի վիթխարի փոսի՝ խորունկ, քանի որ մի պահ միայն նշմարվում էր մթությունը, ասես նույնը, ինչ դժոխքի դռները: Ես գլխապտույտով չեմ տառապում, բայց այդ անհատակ անդունդն իմ մեջ հարուցում էր հոգեկան ծանր ապրումներ և ավելին, քանի որ գիտեի, որ նրա խորխորատներում դեռ տաք էին շատ անմեղ մարդկանց դիակները՝ սպանված լոկ այն փաստից, որ հայ քրիստոնյաներ են:

Տեսա, թե ինչպես էին իմ բարեկամները, նրանց կոչում եմ այդպես, հեռավոր այդ տարածաշրջանում ամիսներ ի վեր աշխատելուց հետո, ողբում երեխաների պես: Իրենց ներկայությամբ կոտորել էին իրենց արյունակից և դավանակից եղբայրներին՝ առանց խղճմտանքի:

Ինչ կարգի մարդիկ էին դրանք՝ ընդունակ կատարելու նմանօրինակ արարք:

Նրանցից մեկը՝ Մարկոսյանը, ինձ ասաց, որ անկանոններն ընդամենը կույր գործիք էին կառավարության ձեռքին: Հիշում եմ, որ մի բան ասաց, որ ինձ շատ հուզեց:

Երբ մենք արդեն մտադիր էինք ճամբար վերադառնալ՝ ծանր սրտով՝ վճռելով հնարավորին չափ արագ հեռանալ, Վարդանյանը՝ տոպոգրաֆը, հավաստիացրեց, որ լսել էր ձայներ՝ անդունդի բերանից: Պնդեց, որ դրանք թվում էին մարդկային հառաչանքներ: Դողէրոցքն ինձ պատեց, երբ ինքս էլ դրանք լսեցի: Տպավորությունն այնպիսին էր, որ դուրս էին գալիս անդունդի ամենանեղ բերանից և ձայնը, որ գալիս էր խորխորատներից, տարօրինակ երանգ էր ստա-

նում: Երբ գլուխներս ներս կախեցինք, այլևս կասկած չունեցանք: Ակնհայտ էր, որ այնտեղ ինչ-որ մեկը կենդանի էր, բայց անհնարին էր թվում իջնել այդ համարյա ուղղահայաց պատերով, որ հսկայական խառնարանի պես էր: Այնուամենայնիվ, երեքն էլ ամբողջ ուժով վազեցին դեպի ճամբար, որտեղ ունեինք երկար պարանասանդուղքներ և ճոպաններ, ճիշտ և ճիշտ անհասանելի տեղեր հասնել կարողանալու և երկրաբանական տեղեկատվություն հայթայթելու համար, որ փնտրում էինք մեր հետազոտություններում:

Մի քանի բոպե անց, Գասպարյանը, որ մեր չորս հոգուց ամենաերիտասարդն էր, սանդուղքով իջնում էր՝ տանելով ուսին մի կծիկ թոկ: Ամրացրել էինք պարանասանդուղքը երկու մեխով: Լսում էինք իջնելը, մինչև որ մեր աչքից անհետացավ: Սպասում էինք անհամբեր և անհանգիստ, երբ լսեցինք նրան հուսահատ բղավելիս, ասես նրան ահավոր մի բան էր պատահել: Հասկացանք, որ մի վիրավոր կար մի ինչ-որ ելուստի վրա՝ մոտ երեսուն մետր խորության վրա, համարյա անհասանելի տեղում:

Անգամ այսօր չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես հաջողվեց մեզ նրան բարձրացնել, սակայն, գերմարդկային ճիգերով հասանք դրան: Գասպարյանը նրան կապել էր թոկով թևատակերով, և երեքով միասին, նույն Գասպարյանի օգնությամբ, որ ղեկավարում էր գործողությունը սանդուղքից սկսած, որով սողում էր աստիճան առ աստիճան խուսափելով, որ վիրավորը չխփվեր, բարձրացրինք նրան մինչև անդունդի բերանը: Երբ նա արդեն այնտեղ էր, նրան տեղափոխեցինք տեղում սարքած պատգարակով մինչև ճամբար: Նա հազիվ քսան տարեկան մի տղա էր: Արտաքինից մի ոտքը կոտրված էր և ձախ կողքը ուժեղ վնասված, բայց Ղազարյանը, որ բուժակ էր եղել, մեզ հավաստիացրեց, որ կյանքին առանձնապես վտանգ չէր սպառնում: Այնուամենայնիվ, թեև գիտակից՝ մեզ նայում էր սարսափահար աչքերով, համոզված, որ նրան պետք է սպանեինք կամ ավելի վատ, որ կրկին կնետեինք անդունդը: Ծառի տերևի պես դողում էր. բացում էր բերանը՝ առանց մի խոսք արտաբերելու:

Ղազարյանը նրա կոտրված ոտքը անշարժացրեց ու կապեց ծառի ուղիղ ճյուղերով, որոնք որ հաջողվեց գտնել և ամբողջ ժամանակ նրա հետ խոսում էր, որքան կարող էր քնքուշ ձայնով, կարծես իր սեփական որդուն վերաբերվեր: Տեսեք, պետք է խոստովանեմ, որ այդ պահերին բացարձակապես հուզված էի: Ականատեսն էի մի անհավատալի հրաշքի, անմեղ մարդկանց սպանդից հետո, որին ներկա էինք գտնվել զուտ պատահականորեն: Նա միակ ողջ մնացածն էր՝

փրկված վերջին պահին պատահականությամբ, երբ մոտեցանք ոճրի վայրին, ասես կամենալով վստահ լինել, որ մեզ չէին խաբել մեր աչքերը:

Իմ կյանքի ընթացքում առիթ եմ ունեցել այցելել շատ երկրներ և ճանաչել ամեն տեսակի մարդկանց: Կարծում էի, թե համարյա ամեն ինչ տեսել եմ. թե՛ լավ, թե՛ վատ: Բայց երբեք չէի կարծել, որ մարդ արարածը ընդունակ լիներ այդքան նենգության, մեկը կարող լիներ ատել մյուսին անհավատալի աստիճան:

Սակայն ատելությունից դրդված բնաջնջե՞լ ամբողջ բնակավայրեր: Նենգորեն սպանե՞լ տղամարդկանց, բռնաբարե՞լ երեխաներին, կանանց և նրանցից շատերի վերջը տա՞լ, սպանե՞լ երիտասարդներին, գողանա՞լ... Այնպես էր, որ ասես հանկարծ աչխարհը տեսնեի այլ կերպ: Այլևս երբեք չեմ հավատա, որ մարդ արարածը բարոյական արժեքներով է օժտված: Հիմա, այդ բանից հետո, իմ տարիքում հավատ չեմ ընծայում իմ նմանակիցներին:

Ինչ վերաբերում է հայ տղային, կոչում են Գասպար Սարգսյան: Կաղում է մի քիչ, բայց դա կբուժվի, իսկական խնդիրը նրա մտայնությունն է: Չի ուզում խոսել, ընդունակ չէ որևէ անծանոթի տեսնել՝ առանց վախ արտահայտելու: Միայն ինձ է վստահում ու իմ բարեկամներին՝ այն աստիճան, որ մեզանից չի բաժանվում: Մյուս կողմից՝ ընտանիք չունի. նրա գյուղն այլևս գոյություն չունի, այրվել և հողին է հավասարեցվել թուրքերի կողմից: Իսկ նա... ինձ վրա այն տպավորությունն է թողնում, որ ընդունակ չէ ըմբռնել՝ կենդանի՞ է թե՞ մեռած, և որ վատթարն է՝ կարծում եմ, որ ոչ էլ դա է նրա համար կարևոր:

Երբ Ռոբեր Կանվան ավարտեց իր պատմությունը, նայեցի Պոլ Կամբոնի դեմքին և հասկացա, որ ճիգ էր գործադրում իր հավասարակշռությունը պահպանելու համար:

Ի վերջո, նա Ֆրանսիայի դեսպանն էր Թուրքիայում, և իր պարտքը մեր երկրի շահերի և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ պահպանելն էր: Բայց Կամբոնը ամեն ինչից առաջ զգայուն մարդ էր, ծայրաստիճան կիրթ, որ վաղուց գիտեր, թե որն է խնդրի իսկությունը և տեսնում էր, թե ինչպես չեն կատարում իրենց խոստումները մեկը մյուսի հետևից, ինչպես են միշտ անում հակառակը, ինչ որ ասում են և ինչպես են մեղադրում քրիստոնյա փոքրամասնություններին կայսրության բոլոր չարիքներում:

Կամբոնն առանց իրեն զսպելու հառաչեց, ասես ցանկանալով մեզ մասնակից դարձնել իր ապրումներին, մինչև որ հանկարծ պայթեց:

— Այս խարդախ սուլթանը բոլորիս հիմարի տեղ է դրել, մինչ իր սարսափելի ոճիրներն է ծրագրավորում: Բայց չի հասնի իր նպատակին: Դուք, Կանվա, ստորագրեք այս տեղեկությունը, որ մեզ պատմեցիք, կամ ավելի լավ է, ձեզ թախանձագին խնդրում եմ, որ գրեք նույն ձևով այդ եղելությունը, առանց որևէ ստորակետ բաց թողնելու... Եկող անգամ Փարիզ գնալիս՝ ես դա կհանձնեմ նախարարին, որպեսզի նա հասցնի երկրի նախագահին: Այս կաշառված քաղաքական գործիչներն ընդունակ են ուրանալ իրողությունը: Խեղճ Հայաստան:

Քիչ ժամանակ անց հասկացա, որ դեսպանի խոսքերը զուր էին, քանի որ կոտորածները, վայրագ սպանությունները, բռնաբարությունները, առևանգումները, կողոպուտն ու թալանը դեռ նոր էին սկսվել:

Ես նույնպես մտորեցի Կամբոնի ասած նախադասության չուրջ: Խեղճ Հայաստան: Եվրոպական տերությունները, դրանց թվում՝ Ֆրանսիան, նայում էին ուրիշ կողմ՝ չուզենալով տեսնել զարհուրելի իրականությունը:

ՕԳՈՍՏՈՍԻ ՎԵՐՋԵՐ 1895

18. ՍԱՅԻԴ ՓԱՇԱ

Կարճ ժամանակամիջոցում Գրիգոր Բրոչյանը դարձավ ՀՀԴ-ի ամենաակտիվ անդամներից մեկը: Հայտնվում և անհետանում էր ամենաանսպասելի պահին, բայց ժամանակ առ ժամանակ ինձ տեղեկացնում էր իր մտադրությունների մասին այս կամ այն ձևով:

Նա ցանկանում էր, որ ես չատ ավելի ներգրավվեի այն հարցում, որում առանց այդ էլ մասնակից էի, սակայն ես նրան հասկացրի, որ դա կարող էր բոլորիս համար վատ լինել. եթե ցանկացած պատճառով տեղեկանային, որ դեսպանատան առաջին քարտուղարը կապեր ուներ ՀՀԴ-ի հետ: Դիվանագիտական կոնֆլիկտից բացի, լավագույն դեպքում անմիջապես պետք է թողնեի երկիրը: Հասկացավ, որ ես իրավացի էի և այդուհետև աշխատում էր ուղարկել ինձ իր գրությունները լիովին հուսալի մարդու միջոցով:

Պետք է նշեմ, որ հայերի մեջ սովորաբար դավաճաններ չկային: Սկզբում ոչ մի հայ փողով չէր ծախվի, ոչ էլ կարևոր տեղեկատվություն կտային թուրքերին, թեև այնպիսիք, ինչպես Էմիլ Բագրատյանը, արտաքուստ չատ հաճոյակատար էին տեղեկություններ քաղելու նպատակով այնպիսի մեծ դիրքի տեր մարդկանցից, ինչպիսիք էին Թալիբ բեյը կամ Ֆյամիլ բեյը: Նրա հետ չատ վտանգավոր էր սխալվելը, քանզի խոսքը ողջ կայսրության լավագույնս իրազեկված մարդկանցից մեկի մասին էր: Այդ իսկ պատճառով, ժամանակ առ ժամանակ հայկական կազմակերպությունները որևէ այլընտրանք չունեին, քան «զոհաբերել» մի գործողություն, կամ կորցնել մի զինվոր ռազմավարական անվերջանալի խաղում, որ երկու կողմերն էլ վարում էին, եթե չասենք, որ համարյա բոլոր հնարավորությունները թուրքերինն էին, քանի որ հայերը ինչի որ հասնում էին, ողջ մնալն էր՝ մանավանդ ներքին տարածաշրջաններում:

Այնուամենայնիվ, ամիրաները,— այսինքն՝ նշանավոր հայերը, նրանց մեծ մասը,— իրենց ունեցած փողով ասես օժտված էին հատուկ մագնիսականությամբ, դեպի իրենց էին ձգում օսմանյան բարձր

պաշտոնյաներին, բարձրաստիճան սպաներին, ի վերջո Թուրքական վերնախավին, որը նրանցում տեսնում էր Արևմուտքին հատուկ շարժուձև, ինչին անկարող էր դիմադրել: Սա ակնառու էր մանավանդ դեսպանատների հանդիսություններում, ուր հրավիրում էին նաև ֆինանսների, մշակույթի և արվեստների բնագավառներում աչքի ընկնող որոշ հայերի, քանի որ եվրոպացի դեսպանները մեծ մասամբ իրենց շրջապատում էին հայ ծանոթներով ու բարեկամներով. մի բան, որ ընդգծում էր այն տարբերությունը, որ հայերը մասնակցում էին այդ տոներին իրենց կանանց ընկերակցությամբ, մինչդեռ Թուրքերի մեջ դա անհնարին էր՝ բացառությամբ եղակի առիթների դեպքում: Թույլ չէին տալիս իրենց կանանց ներկա գտնվել ընդունելություններին և ճաշկերույթներին, որովհետև իսլամը և իրենց հինավուրց ավանդույթները դա արգելում էին:

Ոչ էլ սուլթանն էր թույլ տալիս տեսնել իր պալատի իշխանուհիներին ու տիկնանց: Հարեմին մոտենալու մասին խոսք անգամ լինել չէր կարող, մնում էր արգելված և փակ. միմիայն շատ հատուկ դեպքերում, որևէ եվրոպացի իշխանուհու համար, ինչպիսին եղել էր Վիլհելմ II կայզերի կնոջ համար բացառությունը, որն ապշահար էր մնացել այցելելով այնտեղ զուտ հետաքրքրասիրությունից:

Ասում էին, որ կայզերի տիկինը, մտնելով հարեմ, այնքան էր զարմացել, որ այդ օրվանից սկսած, միշտ խոսում էր դրա մասին և ցանկություն էր հայտնել կրկին կատարելու մի այց, որը լինելու էր ավելի ուշ՝ 1898 թվականին:

Այդ ժամանակներում ականջիս հասավ, որ Ռիտա Հակոբյանն աղջիկ է ունեցել, որին կնքել էին Սոֆյա: Դա ինձ խորհրդածելու տեղիք տվեց. պետք է ջանայի մոռանալ այդ կնոջը, քանի որ ցանկացած այլ միջոցի դիմել, կնշանակեր հետամուտ լինել անհասանելի մի երազի, որը միայն ցավ կպատճառեր ինձ և ամենայն հավանականությամբ, կկործաներ նրա կյանքը:

Այնուամենայնիվ, օգոստոսի կեսերին նրան կրկին տեսա Գերմանական դեսպանատանը և գլխի ընկնելով, որ նա չի նկատել իմ ներկայությունը, կամքի ուժ գործադրեցի, շուռ եկա և հեռացա այնտեղից: Զէի ցանկանում փորձության ենթարկել իմ զգացմունքները և ոչ էլ նրանը: Նրան զննելիս նկատեցի, որ հասունացել էր և մայրանալը հավանաբար նպաստել էր դրան:

Դժվարին իրավիճակ էր, քանի որ չնայած իմ ջանքերին՝ մոռանալ այն, ինչ պատահել էր, անհնարին էր: Եվ համոզված էի, որ նրա հետ էլ էր կատարվում նման մի բան: Դա ինձ անհանգստացնում էր,

քանի որ եթե ինչ-որ ժամանակ Ռիտան անսպասելի ձևով դրան արձագանքեր, կկորչեր:

Սակայն այն, ինչ բոլորիս երկյուղի մեջ էր պահում, քաղաքական իրավիճակն էր Թուրքիայում: Սասունում կոտորածները կրկին ցույց տվեցին, որ Թուրքերը զուր տեղը չէին սպառնում և որ պատրաստ էին դիմել ամեն ինչի՝ կործանելու քրիստոնյա փոքրամասնություններին, մանավանդ հայերին, քանի որ նրանց կարծիքով հայերն էին Թուրքական կայսրությունում եվրոպական տերությունների միջամտության պատճառը:

Մի երեկո Պոլ Կամբոնն ինձ կանչեց իր գրասենյակ: Ինձ ասաց, որ հենց նոր էր Փարիզից ստացել կոնկրետ հրահանգներով մի հեռագիր՝ այցելել և ցույց տալ սուլթանին Ֆրանսիայի բողոքները՝ ստեղծված իրավիճակի կապակցությամբ: Ինձ պատմեց, որ երբ տեսակցություն խնդրեց պալատում, պատասխանը եղավ այն, որ սուլթան Աբդուլ Համիդն առաջիկա շաբաթներին տրամադիր չի լինի և որ շատ է ցավում Ֆրանսիայի դեսպանին ընդունել չկարողանալու համար:

— Շատ պարզ է նրա խաղացած խաղը,— Պոլ Կամբոնը շատ լուրջ էր,— գիտենք, որ վերջին ամիսներին գոյություն ունի մի կարևոր շարժում Գերմանիայի կողմից, որը փորձում է խանգարել Ֆրանսիայի և Թուրքիայի միջև քաղաքական հարաբերությունների նորմալացմանը և նաև Թուրքիայի ու Անգլիայի միջև՝ ասես ուզենալով տիրանալ եղած ողջ տարածքին: Սա մի ռազմավարություն է, որը ոչ մի լավ բանի չի հանգեցնի և որը թև է տալիս Բարձր Դռան քաղաքականությանը: Վախենամ՝ արդեն խախտվել է ավանդական դաշինքը եվրոպական երկրների միջև, որպեսզի մի ընդհանուր ճակատ կազմենք սուլթանի մտադրությունների դեմ և ամենացավալին այն է, որ մեզ չի հաջողվի վերականգնել դաշինքը: Կայզերը ակնհայտորեն խուսափում է Ֆրանսիայից,— և հիմա մեզ ոչ ոք չի լսում,— նա ինձ թվում է ցուցամոլի մեկը, որն ի վերջո Գերմանիային կանգնեցնելու է իսկական խնդրի առջև: Մեր գործակալները մեզ տեղեկացնում են Թուրքական կառավարությունում գերմանական բանակի աճող ազդեցության մասին, իսկ դա խիստ բացասական է Ֆրանսիայի համար:

Չնայած այդ ամենին՝ ինձ հաջողվել է, որ մեզ ընդունի Սայիդ փաշան՝ արտաքին հարաբերությունների նախարարը: Նրան ճանաչում եմ տարիներ ի վեր, շատ խորամանկ մարդ է, զուցե Թուրքական կատարյալ դիվանագետ: Ամեն բոպե ասում է ճիշտ հակառակը, ինչ մտածում է: Բայց այսօր կեսօրին զու կհամոզվես դրանում, քանի որ քեզ չնորհակալ կլինեմ, որ ինձ ընկերակցես:

Այդպես էլ եղավ: Մի քանի րոպե ժամը տաներկուսից անց գտնը-
վում էինք այն առանձնատան առջև, որը Սայիդ փաշայի նստավայրն
էր: Համազգեստ հագած մի քանի սպասավորներ բացեցին կառքի
դռները, և մի արարողապետ մեզ ողջունեց ընդունված կարգով:

Հետո ողջ հանդիսավորությամբ մտանք չենք:

Նախարարը մեզ սպասում էր աստիճանների ներքևում և խախ-
տելով արարողակարգի կանոնները ի նշան բարեկամության՝ մոտե-
ցավ մեզ.

— Իմ սիրելի դեսպան, չգիտեմ, թե ինչու եք անհանգստացել այս-
տեղ գալու համար: Ահ, ինձ համար մեծագույն հաճույք է տեսնել ձեզ՝
առաջին քարտուղարի ընկերակցությամբ... Մսյե... Մսյե դը Լատո՛ւր:
Շատ եմ լսել ձեր մասին և լավ առումով: Սակայն հետևեք ինձ: Ինչ
հաճելի այցելություն...

Թուրք քաղաքագետները և առհասարակ տիրապետող դասի ան-
դամները չատ թերություններ կարող էին ունենալ, բայց անկասկած
իրենց պահել գիտեին:

Դարավոր տիրապետությունը և կառավարումը՝ այդքան էթնիկ
խմբերի, ազգությունների և այդքան տարբեր մշակույթների, նրանց
օժտել էր համոզելու մեծ ընդունակությամբ, երբ նրանց դա ձեռնտու
էր. ձևական քաղաքավարությամբ, ֆրանսիական ճաշակով, բայց
ամեն դեպքում այնքան նրբավար, որ երբեմն կարող էր ճնշել հյու-
րերին:

Այդ առանձնատունը գտնվում էր նույն Պալատական հրվան-
դանում, ճիշտ և ճիշտ Ոսկեղջյուրի ծովախորշում, իսկ այնտեղից
իշխում էր Գալատայի աշտարակը և նոր քաղաքը: Առնվազն չորս
մետր բարձրությամբ պարսպով շրջապատված այգիները մի փոքրիկ
դրախտավայր էին, իսկ Սայիդ փաշան, որը համարվում էր աշխար-
հիկ մարդ, չատ եվրոպականացված, բազմալեզու և մեծ զրուցակից:
Այդ պահին նրա կոնկրետ առաքելությունը մեզ գայթակղելն էր: Մեզ
առաջնորդեց վերին հարկ, և անցանք տարբեր սրահների միջով՝ կա-
հավորված անգլիական ոճով, մի վիթխարի պատուհանով, նախքան
մեզ մեծ զրադարան տանելը, որտեղից նչմարվում էր փայլատակող
Բոսֆորը:

— Այնքան բարձր կարծիքի եմ Ֆրանսիայի վերաբերյալ և այն-
քան եմ հիանում նրա ներկայացուցիչներով, որ ձեզ առաջարկում եմ
խախտել ավանդակարգը: Այո՞: Կուզենա՞ք մի բաժակ խերես: Իմ
տերը՝ սուլթանը և խալիֆը բոլոր հավատացյալների, չնայած իհարկե
նա չի համտեսում, պնդում է, որ Անգլիայից ներմուծվածը լավա-

գույնն է... Բայց փորձեք սա, բերված ուղիղ Կաղիսից, ալ-Անդալու-
զից՝ այդ չքնաղ երկրից, որ այդքան դարերի ընթացքում եղավ խա-
լիֆի մարգարիտը... Եվ հետո ասեք՝ ինչ մտածում եք: Իրոք որ ար-
տասովոր է: Միայն այստեղ կարող ենք խմել այն մեկուսի, որ ուլ-
իսլամի չեյխը չիմանա: Հա՛, հա՛, հա՛: Զգիտի, թե ինչ է կորցնում՝ մի
իսկական նեկտար:

Բայց վերադառնանք իրականությանը, իմ սիրելի՛ դեսպան: Ին-
չո՞վ կարող եմ ձեզ օգնել: Զէ՞ որ գիտեք, որ ձեր ցանկություններն
ինձ համար հրամաններ են, և եթե սուլթանը, Աստված նրան պա-
հապան, իմանա, որ դուք այստեղից գոհ չեք դուրս եկել..., գլուխս
կտրել կտա... Հա՛, հա՛, հա՛:

— Մեծարգո նախարար,— Պոլ Կամբոնը տրամադիր չէր որևէ դի-
վանագիտական խոսակցության՝ առանց որևէ թեմայի, ինչպես որ
ակնկալում էր Սայիդ փաշան: — Ձերդ գերազանցությունը չատ լավ
գիտի մեր այցի չարժառիթը և անկախ միմյանց նկատմամբ մեր անձ-
նական հակվածությունից, որ երկուստեք բարձր ենք գնահատում,
սակայն որը ոչ մի կապ չունի և անկախ այն բարեկամությունից, որ
մեր երկրները պատմականորեն պահպանում են և որը մեզ պատիվ
է բերում և գոհունակություն, ձեզ պետք է արտահայտեմ մեր խոր
անհանգստությունը հայ քրիստոնյաների վիճակի կապակցությամբ և
Մայիսի Հուշագիրը չկիրառելու առթիվ: Ձերդ գերազանցությունը
չատ լավ գիտի, որ առաջարկված կետերից և ոչ մեկը չի կատարվել,
այլ ընդհակառակը, հայերի դեմ շարունակվում են անխտիր հար-
ձակումները, ինչը Ֆրանսիայում և ողջ Եվրոպայում մեծ մտահոգու-
թյուն է առաջացնում:

— Ահ,— Սայիդ փաշան առարկության մի թույլ արտահայտություն
տվեց դեմքին,— Թուրքիայի թշնամիները, այդպես է, որ կա: Ճիշտ է,
որ հայերն ունեն լուրջ խնդիրներ... և դեռ կունենան այնքան ժա-
մանակ, քանի դեռ իրենց առաջնորդները նրանց ուրիշ խորհուրդ չեն
տվել, քան բռնության և խռովության ճանապարհը... Թեև իրակա-
նում այն, ինչ կատարվում է մի չարք վայրերում քրդերի և հայերի
միջև, դեռ հնուց եկած բախումներն են, որոնցում հնարավոր չէ կարգ
ու կանոն մտցնել: Նրանք միչտ էլ չուն ու կատվի պես են եղել: Իսկ
մենք՝ թուրքերս, կուչտ ենք նրանց հասցրած կծոցներից և ճանկռոց-
ներից: Գուցե ինչ-որ ժամանակ չենք կարողացել վերահսկել դրու-
թյունը..., ընդունում եմ: Կամ պարբերաբար որևէ գեներալ չափն
անցել է: Լավ: Կարող է պատահել... Բայց այն, որ հայերի համընդ-
հանուր հալածանք կա և անընդմեջ կոտորածնե՞ր... Վերջ տվեք, պա-

րոնայք: Դա վիրավորում է հատուկ ծառայություններին: Ռուսները, հայերին մեր դեմ հրահրելուց բացի, ուրիշ բան չեն անում, և ասեմ ձեզ, թե մենք՝ թուրքերս, ինչ ենք կարծում: Ցարը կուզենար սուլթան լինել: Սա է հարցի բուն էությունը: Բայց այդպես չէ: Եվ այո՛, գուցե ռուսներինը շատ մեծ կայսրություն է, վիթխարի, անսահման, եթե կուզեք..., բայց ես կմնամ մերի հետ: Գուցե Սանկտ Պետերբուրգում կշտացել է ցրտից և նախանձում է Կոստանդնուպոլսի մեղմ կլիմային... Դե տեսե՛ք: Կոստանդնուպոլիսը թուրքական կայսրության մայրաքաղաքն է և կշարունակի լինել, քանի դեռ արևը ծագում է: Մենք՝ թուրքերս, կուշտ ենք հերյուրանքներից և ստերից: Կներեք ինձ, ձերդ գերազանցություն, իմ անձնական քարտուղարին կոչում են Պողոս Մամուրյան, և հայ է: Դե ինչ, պարոնայք: Ոչ մի հակակրանք չունենք հայերի նկատմամբ: Օսմանցիներ են, ինչպես մենք՝ այս մեծ ազգի մի մասը: Բայց կան այնպիսիները, որ չեն ընդունում պատմությունը... Էլ չենք խոսում ՀՀԴ ակտիվիստների մասին: Բայց թույլ չենք տա, որ հայերը մեր այս հաճելի հանդիպումը հարամեն:

— Դուք ունեք ձեր տեսակետը,— Պոլ Կամբոնը տեղի չտվեց այդ ճոռոմաբանության փաստարկների հեղեղին,— բայց թույլ տվեք հիշեցնել ձեզ, որ հայերի հետ չեն վարվում իրավահավասարությամբ՝ ըստ թուրքական արդարադատության..., և այդ առումով կան անթիվ օրինակներ: Կան հազարավոր արտաքսված հայեր՝ մեղադրված խռովության մեջ միմիայն քաղաքական տարբեր հայացքներ ունենալու պատճառով: Դատավարական պրոցեսները չափազանց դանդաղ են, դեռ չենք խոսում բանտերի և կալանավայրերի ողբալի վիճակի մասին, որոնցում մեծամասնությամբ հայերն են դատապարտված նվազագույն հանցանքների համար: Նրանցից բռնագրավում են իրենց հողերը՝ Բալկաններից եկող թուրքերին բաժանելու համար՝ նույնիսկ առանց վնասները հատուցելու:

— Պահ,— Սայիդ փաշան այլևս ցույց չէր տալիս նույն սրտագին վերաբերմունքը: — Սիրելի դեսպան, գիտեք, որ դուք կարող եք ինձ հետ խոսել ամենայն անկեղծությամբ... և ես էլ նույն ձևով ձեզ պատասխանում եմ, որ սոսկ անճշտություններ են: Թուրքիան ստեղծված է բոլորի կողմից, իսկ հայերը, անհեթեթ կլիներ մերժել այդ, այս երկրի հիմնական մասն են: Տեսեք, դուք լավ գիտեք այս երկիրը: Հյուրասեր ենք, չիտակ, սիրում ենք չփվել և մասնակից լինել այլ մշակույթների: Ամբողջ աշխարհն այս քաղաքում արժանանում է բարի գալուստի, իսկ իր հմայիչ միջավայրը նրանց դա ընձեռում է՝ լինելով մի վայր աշխարհաքաղաքացու համար: Թույլ տվեք ձերդ գերազանցությանն ասել, որ իրավացի չեն նրանք, ովքեր մեղադրում են թուրքերին հայերի դրության պատճառով: Նրանք մեզ մեղադրում են իրենց բոլոր չարիքների համար, իսկ մենք համոզված ենք, որ չարիքը իրենք պետք է փնտրեն իրենց սեփական տան մեջ: Երբեք օրինավոր հպատակներ չեն եղել: Երբեք չեն ընդունել խաղի կանոնները,— Սայիդ փաշայի դեմքը դառնում էր կարմրամանուշակագույն: — Եվ եթե շարունակեն այդ ճանապարհով, նրանց ոչ մի լավ բան չեմ կանխագուշակում: Իսկ հիմա ձեզ խնդրում եմ, որ ինձ ներեք, բայց սուլթանը ինձ թեյի է սպասում: Ձեզ լավ երեկո եմ ցանկանում, և թող Աստված ձեզ պահապան լինի:

Այդպես կոպիտ ձևով ավարտվեց զրույցը նախարարի հետ: Ընդամենը մեկ ամիս անց սուլթանը Քյամիլ փաշային նշանակեց մեծ վեզիր՝ նկատի առնելով անգլիացիների հետ ունեցած նրա պաշտոնական ծառայությունները, որոնց մեջ շատ բարեկամներ և գործընկերներ ուներ: Բարձր Դուռը հոկտեմբերի 17-ին հռչակում էր մի հուրիեթ՝ ներառելով մի շարք բարեփոխումներ, որոնք նախորդների պես մնացին թղթի վրա:

Բայց նախքան այդ, նույն Կոստանդնուպոլսում կատարվեցին սարսափելի բաներ, և ես՝ առանց իմանալու, լինելու էի դրանցից մի քանիսում վկա և գործող անձ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1895

19. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Սեպտեմբերի կեսերին, մի առավոտ, իմ տան չքամուտքի դռնապանի խցիկում ֆրանսերեն գրված փակ ծրարով մի գրություն գտա, որն ինձ հանձնեց Հակոբը՝ դռնապանը, գլուխը թեթևակի խոնարհելով: Այդ մարդը դարձել էր իմ աջ ձեռքը, իր վրա էր վերցրել իմ գրություններն ուղարկելն ու ստանալը, իսկ իր կինը՝ Լիդան, մաքրում էր տունս: Միայն մի թերություն ուներ: Շատ հետաքրքրասեր մարդ էր, և եթե համոզված չլինեի, որ զմուռսը, որով կնքված էր ծրարը, ձեռք տված չէր՝ հաստատ կարդացած կլիներ գրությունը: Ստորագրված էր ոմն Բագրատյանի կողմից, որն ինձ խնդրում էր առանձին տեսակցություն:

> *Մեծարգո մայե դը Լատուր: Ձեզ հաղորդելու շատ կարևոր բան ունեմ: Կնախընտրեի ձեզ տեսնել դեսպանատնից դուրս: Դուք ինձ կարող եք գտնել գորգերի խանութում «Արևելյան գորգեր»-ում, Գալատա աշտարակի ճիշտ մուտքի դիմաց:*
> *Ձեր է. Բագրատյան*

Իսկապես որ հետաքրքրասիրությունը հաղթեց ողջախոհությանը: Պոլ Կամբոնն ինձ զգուշացրել էր, որ չպետք է մենակ գնայի որոշ տեղեր, քանի որ շատ դեպքերում օտարերկրացիներին ենթարկել էին անխտիր հարձակումների: Բայց Կոստանդնուպոլսում ես զգում էի ասես իմ սեփական տանը և համոզված էի, որ ինձ ոչինչ չէր պատահի: Այդ քաղաքում դիվանագետները համարվում էին անձեռնմխելի, և եթե մի որևէ գող համարձակվեր հարձակվել որևէ դեսպանատան գրասենյակի ներկայացուցչի վրա, կենդանի չէր մնա մինչև հաջորդ օրը, և հավանաբար իր մերձավորները նույնպես:

Դեսպանատան մի կառք ինձ մոտեցրեց մինչև կամուրջ, և երբ այնտեղ էի, ազատ արձակեցի կառապանին՝ նրան ասելով, որ իմ միջոցներով եմ վերադառնալու: Հետո քայլելով բարձրացա վեր խոյացող նեղ փողոցով, որ տանում էր Ոսկեղջյուրից դեպի Գալատայի աշտարակ, Կոստանդնուպոլսի ամենախորհրդանշական վայրը՝ կառուցված ՃենՈվայի առևտրականների կողմից, որտեղից նշմարվում էր Բոսֆորի և Ոսկեղջյուրի մատույցը, և շատ օրերին եղանակը թույլ էր տալիս հեռվում տեսնել Իշխանաց կղզիները Մարմարա ծովում:

Այնքան չնչտակի էր գառիվերը, որ հասա աշտարակի ներքևի մասը՝ շնչակտուր: Սկզբունքորեն որևէ դիվանագետ չպետք է անծանոթի հետ հանդիպման գնա, բայց ինչ-որ բան ինձ ստիպում էր կռահել, որ դա կարևոր էր: Երբ հասա «Արևելյան գորգեր»-ի դռանը, նրա դիմաց տեսա մի հայի՝ մոտ վաթսուն տարեկան, գեր, մի քանի ոսկե ատամներով, մազերը մոխրագույն՝ պատված փայլուն քսուքով, իսկ ձեռքերին՝ ականակուռ մատանիներ: Նա վճռական մոտենում էր, ասես ողջ կյանքում ինձ ճանաչած լիներ՝ լայնաժպիտ:

— Մսյե դը Լատուր: Օրհնյալ է Աստված: Ձեք պատկերացնում, թե որքան շնորհակալ եմ ձեր այցելության համար: Իմ անունը Էմիլ Բագրատյան է, սա էլ իմ համեստ առևտուրն է՝ գորգերի արտահանում... Ինչ մեծ պատիվ, սակայն եթե դեմ չեք, ավելի լավ կլինի ներսում խոսենք՝ սառը թեյի ուղեկցությամբ, դեռևս չափազանց շոգ է: Անցեք խնդրեմ, ներող կլինեք անկարգության համար, բանն այն է, որ Լոնդոն գնացող կարևոր առաքում ենք պատրաստում:

Իրոք, ստիպված անցանք իրար վրա դարսված շատ գորգերի վրայով՝ իր գրասենյակ հասնելու համար, որը գտնվում էր խանութի խորքում: Երկու ծառայող, նույնպես հայ, ծալում էին դրանք՝ կապոցներ կազմելով: Այն տպավորությունն էր, որ այդ խանութը գոյություն ուներ դարեր ի վեր, որովհետև ոչ ոք իրեն նեղություն չէր տալիս մաքրել թանձր սարդոստայնները, որ պատում էին սևացած կամարները:

Ինձ զարմացրեց ներսի միջավայրը, քանի որ գրասենյակը, անջատված խանութի մնացյալ մասից ապակյա դռնով, բացվում էր մի փոքրիկ բակի վրա՝ հայկական գունեղությամբ հախճապակիներով մի շատրվանով: Մի բաղեղ, սողում էր շենքի ներքին ճակատներով՝ լույս փնտրելով:

Նստեցի բազմոցին, և նա էլ նույնն արեց, բայց մեծ բարձերի վրա, հետո շատրվանի վրա տեղադրված երկաթյա թեյամանից հմտորեն թեյ լցրեց:

— Տեսնո՞ւմ եք բակի այս շատրվանը: Ակնաղբյուր է, և հետաքրքիրն այն է, որ նրանից հոսող ջուրը սառն է, համարյա սառցակալած: Ոչ ոք չգիտի, թե որտեղից է գալիս, բայց ահավասիկ այստեղ է: Թեյը ձեզ դո՞ւր է գալիս: Այո՞: Ուրեմն օգտվեք սրանից, արտասովոր բան է: Դա բերում են հայ վաճառականների քարավանները Հնդկաստա-

նից և ասում են, որ սերում է Ցեյլոնից: Այդ վաճառականները դարեր չարունակ գնում և գալիս են այդ երթուղիով: Կարծում եմ՝ ինձ հետ համաձայն եք, որ հայերից ավելի ջանադիր վաճառականներ չկան: Ինձ լսեք, թե ձեզ ինչ եմ ասում: Այս թուրքերն ապրում են մեր սեփական ջանքերի շնորհիվ, քանի որ այստեղ աշխատում են միմիայն հայերը, հույները, հրեաները և մի քիչ էլ այլք: Թուրքերն ու արաբները ձևացնում են, թե աշխատում են: Ինչ մնում է քրդերին, երբ լսում են այդ բառը, վազելով դուրս են պրծնում՝ բղավելով, որ աշխատելը աստվածային պատիժ է, և որ իրենք ոչինչ չեն արել դրան արժանանալու համար: Այնպես որ իսլամը քարոզում է, որ հարկավոր է դրախտին նախապատրաստվել այստեղ՝ երկրի վրա: Թեյը ձեզ դուր գալի՞ս է: Իմ կարծիքով՝ հրաշալի է, և իրոք շատ ավելի լավ է նստում, քան սուրճը:

Ես չարունակում էի զննել իմ նոր բարեկամ Բագրատյանին: Հայ վաճառականի տիպարն էր, նույնիսկ կարող էր տեղ գտնել «Աշխարհի ազգությունները» գունավոր փորագրանկարներից մեկի վրա, այն հանրագիտարանի, որի պատճառով մի օր Փարիզից փախա:

Այնուամենայնիվ ինչ-որ կերպ հասկացա, որ նա չէր, ով ուզում էր հետս խոսել, այլ անծանոթ մեկը, որին սպասում էինք, մինչ ինձ հյուրընկալողը փորձում էր զբաղեցնել ինձ:

Ստիպված չեղանք երկար սպասել: Մի քառորդ ժամ անց մի բարձրահասակ տղամարդ՝ խելացի հայացքով և աչքերի տակ կապույտ, մոտավորապես հիսուն տարեկան, մտավ գրասենյակ այն մարդու ընտանեվարի ձևով, որին քաջ ծանոթ է ճանապարհը: Թեթևակի իջեցրեց գլուխը, մինչ պարզում էր ձեռքը:

— Բարի երեկո, մսյե դը Լատուր: Ձեր միջոցով ողջունում եմ ազատությունների երկիր Ֆրանսիային: Ինձ կոչում են Քրիստափոր Միքայելյան, և կասկածում եմ, թե իմ անունը ձեզ որևէ բան ասի: Այնպես որ, ես ձեզ կտամ մի սպառիչ բացատրություն, եթե իմ բարեկամ Էմիլը, որպես գթառատ քրիստոնյա, ինձ իր արտասովոր թեյից մի գավաթ պատրաստի: Չկարծեք, թե ցանկացել եմ չարաչահել ձեր ժամանակը: Ձեր ընկերը՝ Գրիգոր Բրոչյանը, գտնվում է ծանր վիճակում, բայց սպասե՛ք, սպասե՛ք, թույլ տվեք ձեզ բացատրեմ: Տեսեք, ես ՀՀԴ-ի հիմնադիրներից մեկն եմ, Կոստանդնուպոլսում ես գտնվում եմ ծպտյալ, որն ինձ համար չարունակում է լինել Արևմուտքի էական մասը..., ինչպես և հայ ժողովուրդը: Եթե քաղաքական ոստիկանությունն ինձ գտնի, տեղնուտեղը կսպանի: Սա է թուրքական արդարադատությունը, թուրքական քաղաքականությունն

ու թուրքական սովորույթը, բայց պետք է, որ դուք իմանաք դա, քանի որ նորեկ չեք Թուրքիայում: Բայց ոչ էլ կարող ենք թուրքերին մեղադրել այն բոլոր չարիքներում, որ կատարվում են աշխարհում, որովհետև եթե ռուսներն ինձ բռնեն՝ կվտարեն Բեսարաբիա, եթե գերմանացիներն ինձ բռնեն, կհանձնեն թուրքերին, եթե անգլիացիներն ինձ բռնեն, անմիջապես կվտարեն Կիպրոս և կմտցնեն վանդակը՝ ճաղերի հետևը, իսկ եթե ֆրանսիացիներն ինձ բռնեն... Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կանեին ֆրանսիացիները... Ես ձեզ կասեմ... Ինձ կհանձնեին ավստրիացիներին, որպեսզի սրանք իրենց հերթին հանձնեին գերմանացիներին... Եվ Փարիզի մամուլը ինձ կնվիրեր մամուլի ակնառու էջին՝ հետևյալ խորագիրը. «Վերջապես ձերբակալվեց մի վտանգավոր հայ հեղափոխական»:

Գիտե՞ք, որ Աբդուլ Համիդը վարձակալել է Եվրոպայի ամենաառաջավոր մամուլը... Այո՞, դե լավ, քաղաքագետներից բացի բոլորը դա գիտեն: Դիվանագետները սովորաբար լավատեղյակ են լինում, ինչպես որ հասկանում եք՝ հայերի պաշտպանների և եղբայրական բարեկամների հետ միասին: Մեր ինչի՞ն են պետք թշնամիները: Սակայն, ի սեր Աստծու, մի նեղացեք: Գիտեմ, թե դուք ով եք և գիտեմ, որ դուք անձամբ հայերի հանդեպ մեծ համակրանք ունեք: Ձեր դեսպանը մեծ անձնավորություն է, թեև իր կարծիքով Հայաստան գոյություն չունի: Բայց, եղբա՛յր, չէ՞ որ Թուրքիայի կեսը Հայաստանն է՝ իր հայկական քարերով և հայկական այբուբենով: Ամեն խաչմերուկում մի խաչքար վկայում է, որ այս հողը Հայաստանն է՝ Մեսրոպ Մաշտոցի շնորհիվ: Խնդիրը ստեղծված տոկոսներն են, Թուրքիայի ֆինանսական պարտքը, հանքային պայմանագրերը, երկաթուղային հատկացումները, սպառազինության վարձավճարները... և մանավանդ ժառանգությունը: Այո՛, այո՛, ժառանգությունը... Թույլ տվեք բացատրել ձեզ... Տեսեք, մսյե, սա նույնն է, ինչ մեկն ունի շատ հարուստ քեռի՝ տասնհինգ կամ քսան զարմիկներով: Աբդուլ Համիդը չի մեռնի որպես կայսրության սուլթան, ոչ էլ որպես հավատացյալների խալիֆ, դա ինքն էլ գիտի և սրտի խորքում սա է, որ նրան դառնություն է պատճառում: Ի վիճակի չէ ընդունել, որ մեղքն իրենն է, իրենն ու իր խարդախ ու կաշառակեր կառավարիչներինը, իր անընդունակ վեզիրներինը և մութասարիֆներինը, իր անկարող քաղաքագետներինը, իր գեներալներինը և չեյխերինը, որ իրար մեջ բաժանում են այն, ինչ թալանում են հայերից, հույներից և բոլոր նրանցից, ովքեր թուրքեր չեն: Լավ, ես ճիշտ չեմ, թուրք ժողովրդին էլ են դառնություն պատճառել:

Քրիստափոր Միքայելյանը ժայթքող հորձանք էր, իսկ Բագրատյանը, գավաթը ձեռքին, նրան էր նայում առանց համարձակվելու շուրթերին մոտեցնել, մինչ ես հավանություն էի տալիս փաստարկներին:

Այդ պահին Միքայելյանը վերցրեց նրա գավաթը և մի շնչով խմեց նախքան շարունակելը:

– Ինչ վերաբերում է Գերմանիային, արծիվ չէ, ինչպես որ իրեն ուզում է ցույց տալ: Էլ ի՞նչ կուզենար: Իրականում նա լեչ փնտրող անգղ է, թեկուզ ո՛չ Անգլիան, ո՛չ Ֆրանսիան, ո՛չ էլ Իտալիան իրենց ճամփից մի աստիճան էլ չեն չեղվի հանուն հայերին օգնելու: Այս ինչ աղետ է: Բայց տեսեք, Ռաֆֆին մի կարևոր բան է ասել. «Ես ըմբոստանում եմ՝ ուրեմն կամ»... Իսկ եթե՝ ոչ, ո՞րն է հայերի համար այլընտրանքը: Շարունակե՞լ վիզ ծռել Թուրք տիրոջ առաջ: Ո՛չ, ո՛չ և հազար անգամ՝ 'ոչ:

Բայց դուք չեք եկել մինչև այստեղ իմ խնդիրները լսելու, այնպես որ դառնանք մեր գործին: Այս պահին ձեր բարեկամ Բրոչյանը Բիթլիսի բանտերից մեկում է բանտարկված՝ մեղադրված դավաճանության մեջ: Նրան դեռ չեն սպանել, որովհետև ուզում են քաղաքական պատիժ տալ: Բայց հնարավոր մի ելք կա. նրա փախուստի դիմաց փող տալ մի վալու՝ ոմն Բահրի փաշայի, մի թշվառականի: Բայց մյուս կողմից՝ մեզ համար դա շահեկան է: Հանուն փողի ամեն ինչի ընդունակ է, և կարծում եմ, որ անգամ կարող ենք փողով գնել Բրոչյանի փախուստը: Բայց ինձ սխալ չհասկանաք, Ֆրանսիայի փողի կարիքը չունենք, ոչ էլ ձեր: Միմիայն ուզում ենք, որ կարողանա մի երկու գիշեր ապաստանել Ֆրանսիական հյուպատոսարանում, մինչ նրան կփնտրեն Բիթլիսի շրջակայքում: Բահրի փաշային կաշառելու փողը կտա Էմիլ Բագրատյանը... այո՛, իմ պարոն: Այստեղ ներկա Բագրատյանը, որ սնապարծ հայի վառ ներկայացուցիչն է: Բայց այդ մատանիները, այդ ատամները և չողոքորթ ժպիտը դիմակ են, ընդամենը կեցվածք, քանի որ այս մարդը ՀՀԴ-ի գանձապետն է և իսկական հայրենասեր: Ինչպես տեսնում եք, ձեզանից ոչինչ չենք թաքցնում: Մեր ճակատագիրը ձեր ձեռքերում՝ ցույց է տալու, որ ձեզ մեր իսկական բարեկամներից ենք համարում, քանի որ գիտենք, որ կարող ենք ձեզ վստահել... Եվ մի կարծեք, թե ուզում ենք ձեզ ներքաշել մեր հարցում: Միայն թե երբեմն չգիտենք՝ ո՞ւմ դիմել:

Քրիստափոր Միքայելյանը մնաց սևեռուն նայելով ինձ: Իսկապես այդ մարդիկ ինձ են վստահել իրենց կյանքը, բայց հոգուս խորքում գիտեի, որ չէին սխալվում: Հայ ժողովուրդը, իմ պատկերացմամբ, կարծես փոքր ու խիզախ Դավիթն էր, որ դեմ-դիմաց դուրս էր եկել ահեղ ու դաժան Թուրք Գողիաթի դեմ: Դա անհավասար պայքարն էր փոքրաթիվ մեծ ժողովրդի, որը համարյա ամեն ինչ կորցրել էր՝ տափաստանների բարբարոսների կողմից իրենց երկիրը նվաճելուց ի վեր:

Այնուամենայնիվ, չնայած դրան, պետք է ընդունեի, որ այդ երկարատև հակամարտության մեջ Թուրքերը վերջնական հաղթողներն էին թվում, որում Միքայելյանը, Բագրատյանը և նրանց նմանները մշտապես զոհաբերում էին իրենց կյանքը, վտանգելով ամեն ինչ, փորձելով պահպանել այն չնչին մասը, որ մնացել էր իրենց հայրենիքից՝ ասպատակված Թուրք հեծյալների կողմից:

Զգիտեի՝ ինչ պատասխան տալ իմ նկատմամբ նման վստահության դիմաց, այնպես որ չունչս տեղը բերեցի նախքան պատասխանելը:

– Կարծում եմ, որ իմ հարցում չեք սխալվել: Թուրքերի դեմ անձնական ոչինչ չունեմ, բայց եթե պետք է վճիռ ընդունեմ, դա կանեմ հանուն հայերի, որոնց ինձ շատ մոտ եմ զգում: Գուցե և այն տարօրինակ և անհեթեթ զգացումի ազդեցությամբ, որ մեզ ստիպում է անցնել ավելի թույլի կողմը: Բացի այդ, այս դեպքում չգիտեմ, թե ով է ձեզ ուղարկել ինձ մոտ, բայց Գրիգորն իմ ընկերն է, նրա հետ ծանոթացել եմ տարիներ առաջ Նյու Յորքում և պատասխանատու եմ, եթե նրան բան պատահի, քանի որ այդ ես նրան համոզեցի, որ վերադառնա: Ինչպե՞ս կարող եմ լքել նրան հիմա: Անմիջապես հեռագրով մի ծածկագրված ուղերձ կուղարկեմ հյուպատոսին, որպեսզի ոչ մի արգելք չդնի նրան ապաստան տալու համար, եթե ձեզ հաջողվի նրան հանել այնտեղից: Ուզում եմ տեղեկացված լինել, քանի որ եթե՝ ոչ, կանենք անհրաժեշտ դիվանագիտական ձևակերպումներ և կարծում եմ, որ մեզ ուշադրություն կդարձնեն: Զէ որ այդ մարդն ի վերջո ԱՄՆ քաղաքացի է: Ճիշտ է, որ դա կարող է հանգեցնել դիվանագիտական բախման, բայց կան պահեր, երբ անգամ հարկավոր է այդ ռիսկին դիմել:

Երկուսն էլ համաձայնվեցին և թեթևացած իրար նայեցին, ասես կասկածում էին, թե իրենց առաջարկն ինձ համոզեց, թե ոչ: Սակայն իմ կարծիքով Գրիգոր Բրոչյանը ձերբակալված էր, որովհետև ես էի հորդորել, որ նա վերադառնա Թուրքիա և ստանձնի այդպիսի վտանգավոր պատասխանատվություն:

Նրանց հրաժեշտ տվեցի՝ ճշտելուց հետո, թե յուրաքանչյուր դեպքում ինչ պետք է ձեռնարկենք: Գրիգորն ինձ երբեք չէր ասել, որ

պատկանում է ՀՀԴ-ին, թեև հնարավոր էր, որ անդամագրված լիներ վերջին ամիսներին հայկական միակ գաղտնի կազմակերպությանը, որը դիմակայում էր Թուրքերին՝ հաջողության որևէ ակնկալիքով:

Թողեցի խանութը՝ թևիս տակ տանելով մի փոքրիկ մետաքսե գորգ՝ Էմիլ Բագրատյանի նվերը, որն ինձ բացատրեց, որ կասկածի տեղիք կտա, եթե որևէ արտասահմանցի երկար ժամանակ անց դուրս գա խանութից առանց որևէ բան գնելու: Եվ դրանում նա իրավացի էր, քանի որ սկսում էի ըմբռնել, որ հայերը չատ թերություններ ունեին, բայց ինչ խոսք, որ երբևէ իմ ճանաչած լավագույն վաճառականներն էին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26–27, 1895

20. ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Էմիլ Բագրատյանն ինձ լուր ուղարկեց իր հայ աշխատողներից մեկի միջոցով, որն ինձ հանդիպեց Կաֆե Իմպերիալում: Սեպտեմբերի վերջն էր, և եղանակը Կոստանդնուպոլսում չափից դուրս շոգ էր այդ օրերին:

Բագրատյանին գտա Բազար Թաղամասին հարող զբոսայգիներից մեկում: Վախենում էի, որ ինձ հսկելիս լինեին, որովհետև քաղաքական իրավիճակն այնքան լարված էր, որ ցանկացած բան կարող էր տեղի ունենալ: Բայց կապավորը պնդեց, որ պետք է տեսնեմ Էմիլին, իսկ ես որևէ այլընտրանք չունեի: Նաև չէի ուզում, որ հայերն ասեին, թե վտանգի պահին իրենց լքել եմ:

Էմիլը, շուրջն աղավնիներ, մի հովվերգական տեսարանում էր: Մի քանի երեխաներ խաղում էին մոտերքում, իսկ այդ մարդը՝ անմեղ պապիկի կերպարանքով, անվրդով առավոտն էր անցկացնում:

Նստեցի մի նստարանի և բացեցի «Լ'Օրոր»-ը: Թերթը քաղաք էր հասնում երկու շաբաթ ուշացումով, բայց դա ավելի լավ էր, քան ոչինչ և ինձ օգնում էր իրազեկ լինել Փարիզում տեղի ունեցող իրադարձություններին: Ակներև էր, որ այնտեղից Կոստանդնուպոլիսը գտնվում էր աշխարհի ծայրում: Բալկանները ժամանակի առումով, կամուրջի դեր էին կատարում, որովհետև, երբ այն կտրում-անցնում էին, առաջ էր գալիս մի զգացողություն, որ կարծես թե ժամանակաշրջան է փոխվում, քանի որ Թուրքական կայսրությունը՝ անկախ իր գործադրած ջանքերից, թողնում էր այն տպավորությունը, որ անցյալի ժամանակներից ի վեր խարիսխ նետած կանգնած է մնացել և անկարող է ցատկել XX դար, որն օր օրի վրա էր հասնում:

Այդ միջոցին Էմիլն ավարտում էր աղավնիներին կերակրելը՝ առանց ցույց տալու նվազագույն շտապողականություն և ոչ էլ իմ նկատմամբ հետաքրքրություն, որը հավանաբար նրա ռազմավարության մասն էր, քանի որ, անկասկած, իր մարդկանցից մի քանիսը մոտերքում հսկում էին ցանկացած արտառոց շարժում: Թուրքական

քաղաքական ոստիկանության համար ՀՀԴ-ն որսի մեծ ավար էր և չատ ավելի մեծ, եթե նրանց հաջողվում էր ներքաշել այդ գործում ցանկացած դիվանագիտական ներկայացուցչության որևէ անդամի: Հետևաբար պետք է գործեի ծայրաստիճան զգույշ, որքան ինձ համար, այնքան էլ իմ մերձավորների, և մանավանդ Պոլ Կամբոնի՝ դեսպանի համար. եթե ապացուցեին իմ կողմից որևէ նվազագույն հարաբերություն ոչ թե մտավոր հայ աշխարհի, որն իր դիրքորոշմամբ ամբողջովին դեմ էր թուրքական քաղաքականությանը, այլ կոնկրետ ՀՀԴ-ի հետ, ինձ համար անձնական աղետ կլիներ, իսկ Ֆրանսիայի համար՝ մեծ իրարանցում:

Այնքան մեծ չէր վախը գաղտնի ոստիկանության կամ Բարձր Դռան, այսինքն՝ տեղի գործադիր կառավարության կողմից հասարակության մեջ գործող ծպտյալ մատնիչներից, որքան նրանցից, ովքեր լրտեսում էին ուղղակիորեն սուլթանի տված հրամաններով: Պատմում էին, որ Աբդուլ Համիդը, իսկապես շեղվել է իր անձի անվտանգության սևեռուն գաղափարով: Նրա ամենամերձավոր մարդիկ վարձկան լրտեսների, ստահակ կամակատարների, մատնիչների և մարդասպանների բուրգի գագաթն էին, որոնց օգտագործում էր վերահսկելու այն ամենը, թե ինչ էին անում և ինչ էին մտածում իր երկրում:

Միայն մի առիթով էի պատեհություն ունեցել ողջունել Աբդուլ Համիդին, և երբ նա ի պատասխան ինձ ուղղեց հայացքը՝ նկատեցի արհամարհանքի հոգնած արտահայտություն դեպի շրջապատող աշխարհը, չհաշված դեմքի ծամածռությունը, որը որպես բռնազբոսիկ ժպիտ՝ ինձ նվիրեց:

Դեսպանատան բժիշկներից մեկին՝ դոկտոր Պիեռ Լբբլանկին, նյարդային հիվանդությունների մասնագետ, Փարիզի Սալպետրիերի տիտղոսակիր և Շարկոյի հետևորդ, ընդամենը մեկ ամիս առաջ՝ մի առավոտ, չտապ կանչել էին Դոլմաբաղչեի պալատ, քանի որ իր ծառայությունների կարիքն ունեին:

Բժիշկ Լբբլանկն ինձ պատմեց, որ սուլթանն ունեցել էր ուշաթափություն, հավանաբար ափիոնային թմրանյութի չարաշահման հետևանքով:

— Պետք է ինձ ընկերակցած լինեիք: Թագավորական սրահները իսկական լաբիրինթոս են, և մարդ իրեն նրանցում հանգիստ չի զգում: Էդ սուլթանը չատ բաներում է չափն անցնում, և կարծում եմ, որ վատթարագույն չարաշահումը արքունական հարեմին բավարարելն է: Ի՞նչ օրգանիզմ դրան կդիմանա, և ասեմ ձեզ, մանավանդ այն դեպքում, երբ նրա պահանջմունքները նույնն են, ինչ առնական և սեռունակ տղամարդունը: Երբ ես մտնում էի, տեսա սենյակներից դուրս գալիս մի քանի կենակցուհիների, և պարզ է, այդ մարդը ցույց էր տալիս զուտ ֆիզիկական և մտավոր ուժասպառության լուրջ նշաններ: Իմ առջև չարաշահումներից սպառված, անխնամ, չհարդարված մի մարդ էր, որ անկախ իր տարիքից, թվում էր ծերունի՝ թմրադեղեր գործածած լինելու ակնհայտ ախտանիշներով, քանի որ բիբերը սեղմվել, դարձել էին սև կետեր, սրտի զարկերը սովորականից դանդաղ էին, շնչում էր դժվարությամբ և անգամ շնչարգելություն ուներ: Ստիպված անմիջապես ստամոքսի լվացում կատարեցի՝ կալիումի պերմանգանատի լուծույթով, և բարեբախտաբար նրա օրգանիզմը դրան բավականին լավ արձագանքեց:

Հաջորդ օրն առավոտյան կրկին այցելեցի նրան, ինչպես որ խոստացել էի: Նա չատ փոխված էր, քանի որ նրան սափրել էին, հարդարել, սանրել՝ ցողել օծանելիքով: Անգամ հարդարելով քողարկել էին նրա աչքերի տակի կապույտները, և թեև աչքերը դեղին էին և արյունով լցված՝ լյարդի և երիկամի հետ կապված բացահայտ ախտանիշ, համարյա նման էր լրիվ նորմալ մարդու, եթե չլիներ ձախ ձեռքի տիկը և իր այն համառ պնդումը, որ ինձ չարունակ կրկնում էր, թե իրեն ոչինչ չէր եղել: Մեծ վեզիրը, որ այնտեղ էր, անհանգստացած իր տեր ու տիրակալի առողջությամբ, ինձ ստիպեց խոստանալ իրեն, որ նվազագույն մեկնաբանություն իսկ չեմ անի այն բանի չուրջ, ինչին ներկա էի եղել, և այդ մեկը, այո՛, ակնարկեց, որ իմ ծառայությունները չռայլորեն կփոխհատուցվեն: Տեսնո՞ւմ եք այս մատանին: Քարը բավականին արժեքավոր տոպազ է, իսկ աղամանդները թեկուզ կոպիտ են հղկված, ունեն իրենց արժեքը: Ինձ դա տվեց ներքինիների պետը, երբ պալատից դուրս էի գալիս: Ճիշտն ասած, չգիտեմ, թե ինչու եմ այն կրում, մանավանդ որ այս ոճի պաճուճազարդ մատանիներն ինձ բոլորովին դուր չեն գալիս: Բայց, ի վերջո ինձ այն նվիրել է սուլթանը, իսկ ամեն մեկը կարո՞ղ է ասել...

Ի վերջո ուզում եմ ձեզ ասել, որ այդ անհատը գուցե մեծ իշխանավոր է, բայց վատ մարդ է: Ինչ ասեմ ձեզ: Այդքան պալատներ, ծառաներ, կենակցուհիներ, զարդեր, քմահաճույքներ, բայց ներքուստ բացահայտեցի նրա թշվառական և դժնի հոգին:

Բժիշկ Լբբլանկը իրավացի էր, թեև դա ինձ համար նորություն չէր, որ Թուրքիայում, մանավանդ Կոստանդնուպոլսում բոլորը վախենում էին այդ սուլթանից, որի նախարարներն անգամ իր տրամադրության կտրուկ փոփոխությունների և հետապնդման մոլագարության պատ-

ճառով նախընտրում էին, որ իրենց չհրավիրեն պալատ, քանի որ ամեն րոպե դա կարող էր առաջ բերել որևէ լուրջ խնդիր:

Էմիլ Բագրատյանն ինձ հոնքերի մի թույլ դիմախաղով հասկացրեց, որ իրեն հետևեմ: Նա նույնպես վստահ չէր, թե մեզ չեն հետևում, և իրոք դա իր համար ավելի վտանգավոր էր, քան ինձ համար: Այնպես որ, ես ինձ հեռավորության վրա պահեցի, որպեսզի ոչ ոք ինձ նրա հետ չկարողանար կապել, և այդպես գնացինք՝ բարձրանալով երկար զառիվերով դեպի Բազարի թաղամաս: Երբ հասավ այնտեղ, ներս մտավ մեծ դռներից մեկով: Մտնող դուրս եկող այնքան մարդ կար, որ չարչարվեցի, որ նրան չկորցնեի, հետո ներս սողոսկեց մի գավիթ, որտեղ գրքերի, սրբապատկերների ու փորագրական աշխատանքների հնավաճառներ կային և լավ էր, որ գոնե այնտեղ ժամանակ գտա նրան հետևելու:

Էմիլ Բագրատյանը շատ կոփված էր այդ գործում: Առաջին իսկ անգամ, երբ իր հետ խոսեցի, հասկացա, որ նրան ոչինչ չէր նյարդայնացնում, որ նա կարող էր նայել աչքերիդ մեջ և պատմել որևէ հերյուրանք՝ առանց աչք թարթելու: Բացի այդ՝ լինելով Քրիստափոր Միքայելյանի՝ ՀՀԴ-ի թերևս ամենաուժեղ անդամի բարեկամը, վրստահվածը և խորհրդատուն, մի եզակի մարդ էր, որով հիանում էին շատ քչերը, ովքեր ծանոթ էին նրա երկակի անձնավորությանը, որը և նրան դարձրել էր թուրքական ոստիկանության ցանկալի որսը, որը ոչինչ չէր խնայի նրան բացահայտելու համար:

Սարսափելի պահ էր հայերի համար, քանի որ չգիտեին՝ ում օգնության դիմել: Նրանց միակ և վերջին հույսը համայն Ռուսիայի ցարն էր, սակայն իրականությունը նրանց ստիպում էր տեսնել, որ այդ մարդն էլ մինչև վերջ նրանց օգնության չի հասնի: Լրիվ հակառակը, Ռոմանովների հավակնությունը միշտ եղել էր հայերին ռուսացնելը, նրանց տարրալուծելը ռուս բազմաքանակ ազգության մեջ: Չնայած դրան՝ այն վատթար դրությունը, որում գտնվում էին թուրքական կայսրության մեջ, շատերին ստիպում էր փախչել և հարյուր հազարավորներ ապաստանեցին ռուսական Կովկասում, որտեղ մինչ այդ շատ լավ էին ընդունվում, քանի որ նրանցից շատերն ունեին ազգականներ, որոնք արդեն սերնդեսերունդ բնակվում էին սահմանամերձ նահանգներում:

Այսպիսով՝ մտա Էմիլի հետևից: Հայերին օգնելու իմ որոշումը բխում էր զուտ մարդասիրական շահերից, նույնիսկ համակրանքից կամ մտահոգվելուց: Ես, իրոք, խորը զայրույթով էի լցվում օրեցօր Կոստանդնուպոլիս հասնող լուրերի պատճառով: Ամբողջ Եվրոպայով

մեկ հնչում էին սարսափելի դեպքերի մասին մերկացումներ՝ մանավանդ Ֆրանսիայում և Անգլիայում: Հասարակական կարծիքը և շատ մտավորականներ արձագանքել էին իրավիճակին՝ բացառությամբ Փարիզի մամուլի, որի մեծ մասը գնվում էր Բարձր Դռան կողմից, երկրի մնացած մասը մեկնաբանում էր մեծ վրդովմունքով Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դրության մասին: Փաստորեն բրիտանական նավատորմիղը, որը գտնվում էր Դարդանելի մատույցում, հրաման ուներ միջամտելու, եթե սուլթանը չդադարեցներ այդ սարսափելի ոճիրները:

Այնպիսի քաղաքական գործիչներ, ինչպիսիք էին Գլադսթոնը և Սոլսբերին, նախազգուշացնում էին թուրքերին իրենց թույլ տված սարսափելի սխալի մասին:

Հետևեցի Էմիլին մի նեղ սալահատակ անցումով, մինչև որ մի պահ նրան աչքիցս կորցրի: Մի բաղեղ ծածկում էր կողքի պատերը, հետո ես բախվեցի մեխերով պատված մի դռան, որը բացվեց իմ առաջ, կարծես ինձ սպասելիս լինեին: Զգուշորեն մտա ներս, որը մթության մեջ էր և միայն այդ ժամանակ գլխի ընկա, որ դա մի փոքր հայկական եկեղեցի է: Այնտեղ էր ինձ սպասում Էմիլը, որը բացարձակ լուռ ինձ նշան արեց, որ իրեն հետևեմ: Մի քիչ առջևում հասանք դարբնոցի դռան և իջանք նեղ պտուտակաձև սանդուղքով, որ թվում էր, թե տանում է դեպի մչուշի մեջ մի դամբարան: Հետո քայլեցի նրա հետևից մի երկար միջանցքով, հազիվ ուսերիս լայնությամբ, այնքան ցածր, որ ստիպված կուչ եկած էինք քայլում, մինչև որ վերջապես մտանք կամարակապ առաստաղով քարե սրահ: Մի խումբ տղամարդիկ լռելյայն զննում էին ինձ, և նրանց մեջ տարբերեցի Քրիստափոր Միքայելյանին: Այդ ժամանակ հասկացա, որ դա ՀՀԴ-ի կենտրոնն է Կոստանդնուպոլսում, որտեղ տեղի են ունենում նրա անդամների գաղտնի ժողովները: Թաքստոց, որ փորձում էին գտնել ոստիկանությունը և սուլթանի լրտեսները:

Բոլոր մասնակիցները ինձ լուռ գրկեցին, և այդ ժամանակ գիտակցեցի, թե ինչ աստիճանի էի ներգրավված այդ հարցում: Ինձ համար հետդարձի ճանապարհ այլևս չկար, այն պահից, ինչ մտա ՀՀԴ-ի միջուկը՝ դառնալով նրանցից մեկը՝ իր բոլոր հետևանքներով հանդերձ:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋԵՐ 1895

21. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Քաղաքի հայ նշանավոր մարդկանց մի ստվար խումբ, որոնց մեջ էր նաև Պողոս Հակոբյանը, սեպտեմբերի 28-ին կեսօրից քիչ առաջ եկավ դեսպանատուն: Նրանցից մեկը, որ նման էր ղեկավարի, պահանջեց տեսնել դեսպանին, սակայն Պոլ Կամբոնը պաշտոնական ուղևորության մեջ էր, և ստիպված ես նրանց ընդունեցի որպես ի տեղի դեսպան:

– Եկել ենք զգուշացնելու Ֆրանսիայի դեսպանատանը, որ Եվրոպան անուշադրության է մատնում օգնության մեր բազմաթիվ դիմումներն այն ոճրագործությունների դեմ, որ մեր նկատմամբ թույլ են տալիս Թուրքերը, մենք պաշտպանելու ենք մեր իրավունքները ցուցարարների երթով, խաղաղ ու կարգուկանոնով: Պահանջում ենք, որ Ֆրանսիան մեզ ակտիվորեն աջակցի, հակառակ դեպքում նա ևս պատասխանատվություն կկրի, եթե որևէ բան տեղի ունենա:

Բոլորն էլ երևում էին հուզված, գիտենալով, թե ինչ վտանգավոր գործ են հանձն առել, բայց նաև անդիջում՝ իրենց ընդունած որոշման մեջ:

Այլևս ոչ մի խոսք չասացին, տասնհինգ թե քսան հոգին, որ խրմբվել էին դռան առջև, շուռ եկան և լուռ լքեցին Ֆրանսիայի դեսպանատան այգին՝ թողնելով ինձ մենակ և շատ անհանգիստ այն մտորումով, թե ինչ կարող էր տեղի ունենալ՝ իմանալով, որ զուր տեղը չեն խոսում և եթե երթի դուրս գան, Թուրքերը հաստատ կստիպեն նրանց շատ թանկ փոխհատուցել:

Հետո դեսպանատան կառապաններից մեկի՝ Օհաննես Խրիմյանի միջոցով իմացա, որ երթի կազմակերպումը Հնչակ կուսակցության գործն էր, և ամենայն հավանականությամբ ՀՀԴ-ն նույնպես սատարելու էր այն:

– Մայե, շատ վատ բաներ են տեղի ունենալու, շատ, շատ վատ,– ինձ նախազգուշացրեց այդ մարդը:

Խրիմյանը չէր սխալվում: Երկու օր անց՝ սեպտեմբերի 30-ին, հազարավոր հայ ցուցարարներ էին հավաքվում Գալատա թաղամասում: Գալիս էին ամենահեռավոր ծայրերից, նույնիսկ քաղաքից դուրս վայրերից, չնայած Թուրքական բանակը, հրաչալիորեն իրազեկված, տեղակայվեց մուտքերի և ճանապարհների վրա՝ նրանց անցումը թույլ չտալու համար:

Ուզեցի տեսնել այն, ինչ կատարվելու էր, իմ սեփական աչքերով, ոչ թե ինձ պատմեին տեղի ունենալուց հետո, որովհետև ներքուստ ընդվզում էի այդ դաժան իրականության դեմ: Գիտեի, որ անձամբ մեծ ռիսկի էի դիմում, սակայն ինձ համար անտանելի էր հետևել այդ ամենին՝ դեսպանատան դիվանագիտական անվտանգության ապահով պատուհանի հետևից:

Սկզբում չէի ուզում խառնվել ցուցարարներին, ինչն անմիջապես ինձ անհնարին եղավ, քանի որ հորձանքների պես գալիս էին միանալու մեծ լճում: Երևում էր, թե նրանք ինչպես էին վազելով անցնում Ոսկեղջյուրի կամուրջը, ասես լսում էին մի անդիմադրելի կոչ: Մթնչաղին մոտ էր, և շատերը գալիս էին ջահերով:

Հանկարծ զգացի, որ սարսափելի անխոհեմ քայլ եմ կատարում. այնքան շատ մարդ էր հավաքվում այնտեղ, որ ինձ շատ դժվար կլիներ այնտեղից փախչել, երբ ամեն ինչ բարդանար:

Մեկը կողքիս գոռաց, որ պատրիարք Իզմիրլյանը ցույցի առջևում է, և բոլորը ծերունուն դիմավորեցին ծափողջույններով՝ համոզված, որ ի վերջո ամեն բան փոխվելու է, քանի որ մինչ այդ նրան նախատում էին սուլթանի և Բարձր Դռան կառավարության հետ համահունչ քաղաքականություն վարելու մեջ: Առաջին անգամ Թուրքիայի նորագույն պատմության մեջ հայ պատրիարքը նետվում էր փողոց, յուրայինների գլուխ անցած, բղավելով ընդդեմ սուլթանի՝ արտահայտելով Հայ Եկեղեցու զայրույթը անդադար կեղեքումների դեմ, որոնց ենթարկում էին իր ժողովրդին:

Մթնում էր արագ, և շատերը սկսեցին վառել ջահերը: Ցուցարարների երթը ուղղվում էր դեպի Դոլմաբաղչե Բոսֆորին զուգահեռ պողոտայով, և ես կողքից տեղավորվեցի՝ փորձելով միշտ դուրս լինել երթից:

Տեսա, որ մասնակիցներից և ոչ մեկը զինված չէր, թեև շատերն էին ջահերով և բղավում էին կարգախոսներ ՀՀԴ-ի օգտին, դրանցից մի քանիսը սուլթանի և կառավարության դեմ էին, որն ինձ վախեցրեց, քանի որ ոստիկանության պատասխանը կարող էր կործանարար լինել:

Բեյօղլու ողջ թաղամասը խառնաչփոթ վիճակում էր, և գնալով ցուցարարների հետևից՝ տեսա քաղաքացիական հագուստով Թուր-

քերի՝ զինված, իրենց բնորոշ յաթաղաններով՝ հսկա դագանակներով, որոնցով բոլոր թուրք օջախներում գլխատում են գառներին: Այդ ժամանակ խիստ տագնապեցի, որովհետև կռահեցի, որ աղետ է լինելու: Տեսնելով, թե ինչի է վերածվում իրադրությունը, փորձեցի ապաստանել չքամուտքերից մեկում: Դեսպանատանն ունեցած իմ դիրքը թույլ չէր տա ոստիկանությանը ձերբակալել ինձ՝ կառավարության դեմ ուղղված հայերի երթում: Սակայն բոլորն էլ ամուր կողպել էին, քանի որ բնակիչները չէին ուզում չափից ավելի ռիսկի դիմել: Ահաբեկված՝ սկսեցի վազել ուղղահայաց փողոցներից մեկով, բայց ելք չկար, որովհետև ճիշտ այդ պահին դրանով իջնում էին ձի նստած, հարյուրից ոչ պակաս անկանոններ՝ ալբանական հետևակազորի հետևից:

Իրավիճակն անհուսալի էր: Ես ինձ երբեք վախկոտ չէի համարել, բայց այդ պահին ֆիզիկական երկյուղ զգացի այն ստույգ բանից, որ չեմ կարողանալու փախչել. ինքս ինձ մտցրել էի մի մահացու թակարդի մեջ, որտեղից փախուստի հնար չկար:

Հանկարծ ամեն ինչ փոխվեց մղձավանջի: Դա եղավ այն ժամանակ, երբ ցուցարարների առաջին շարքից մի կրակոց հնչեց: Հեծելազորի թուրք սպաներից մեկը վիրավոր ընկավ գետնին: Եվ ճիշտ այդ պահին սանձազերծվեց մի իսկական բաբելոնյան պատուհաս: Հեծյալները նետվում էին բազմության վրա՝ սուսերը, նիզակները, հրացանները թափահարելով, ժամանակ չտալով որևէ ձևով արձագանքելու, տարիքով մեծերի վրա, որ նույնպես ներկա էին գտնվում այնտեղ և բնազդաբար իրար գլխի հավաքված՝ անշարժ կանգնած էին՝ առանց իմանալու՝ ինչ անել:

Այդ ժամանակ էլ ապշահար տեսա, թե ալբանացի հրացանակիրների գումարտակը ինչպես էր բազմության վրա անընդմեջ կրակ տեղում, որը սարսափահար փախչում էր բոլոր ուղղություններով:

Ապաստան փնտրելով անկյուններից մեկում՝ մտել էի մի քարուքանդ, լքված, կիսով չափ այրված, առանց անիվների մի ծածկասայլի մեջ: Նրա միջից տեսա այն սարսափը, որ տարածվեց մի քանի րոպեում: Անկանոններն իրենց սեփական չարությունից բորբոքված՝ հարվածում, դանակահարում և սրախողխող էին անում հայերին: Նրանցից շատերը երիտասարդ, անգամ դեռահասներ էին, որ սարսափահար ընկնում էին գետնին՝ զուր տեղը ջանալով, որ ձիերն իրենց ոտնատակ չանեն:

Ոչնչի ընդունակ չէի, միայն նայում էի սևեռուն, հիպնոսված սարսափելի տեսարաններից, որոնք տեղի էին ունենում ընդամենը մի

քանի մետրի վրա այնտեղից, ուր ես գտնվում էի: Բանակի մի կապիտանի հրամանով ալբանացիների գումարտակը մի տասը քայլ գնում էր դեպի առաջ, լիցքավորում, նշան բռնում ու կրակում՝ առանց մի նշույլ գութ ունենալու վիրավորների հանդեպ, որոնք ցավից ջղաձգվում էին արյունոտ սալահատակին: Կասկած չկար, որ նրանց հրամայել էին բնաջնջել հնարավորին չափ մեծ թվով հայերի, ոչ միայն որպեսզի նրանց համար դա լիներ դառը պատիժ, որը հիշվեր երկար ժամանակ, նաև որպես վրեժխնդրություն այնպիսի գաղտնի կազմակերպության նկատմամբ, ինչպիսիք ՀՀԴ-ն էր կամ Հնչակը, որպես փոխհատուցում, որ չեն կարողացել հասցնել գտնել նրանց առաջնորդներին:

Սուլթան Աբդուլ Համիդը թվում էր, թե խելագար ատելությամբ էր լցված հայերի դեմ, բացասական սևեռունությամբ, որն իր իշխանության տարիների ընթացքում փոխակերպվել էր անդիմադրելի զզվանքի և նրան մղում էր չլսված դաժան արարքների:

Հանկարծ երկու հայ, համարյա երեխաներ, հազիվ 15 կամ 16 տարեկան, մտան այն սայլը, որտեղ ես էի և մնացին զարմացած՝ ինձ ներսում կուչ եկած տեսնելով, մինչ չնչում էին հևհև, վախեցած՝ չիմանալով, թե որն է լինելու իմ արձագանքը, քանի որ անմիջապես գլխի ընկան, որ ես հայ չեմ, հետևաբար ինձ չեն կարող որակել բարեկամ կամ թշնամի:

Ես մի շարժում արեցի՝ տարածելով ձեռքերս՝ փորձելով հանգստացնել նրանց, և պետք է որ հասկացած լինեին, որովհետև երկուսն էլ միաժամանակ նույնը կրկնեցին: Մինչդեռ դրսում, հոգեվարքի ճիչերը, կրակոցները, ձիերի ծառս-ծառս լինելը, կոտորածի շառաչյունը,— որովհետև դա արդեն ուրիշ բան չէր,— ինձ բերում էին այն զգացումին, որ ես ապրում եմ պատմության ամենամութ ու սարսափելի պահերից մեկը: Որքա՜ն մեծ էր կարմիր սուլթանի խարդախությունը, մեծատառով մարդասպանի, որը խաղաղ երթից օգտվելով՝ սանձազերծել էր անիմաստ մի կոտորած:

Այդ ժամանակ տղաներից մեկը հայերեն ինչ-որ բան բղավեց, մինչ շարժում էր անում, հետո դուրս եկավ: Այնտեղ մի քանի անկանոններ սրախողխող էին անում շատ հայերի:

— Իր եղբայրն է,— բղավեց խզված ձայնով նա, ով ծածկասայլում էր՝ ինձ հետ: — Իր եղբայր Հակոբն է,— հասկացա մի կերպ:

Տղան, որ վազում էր, հանկարծ բարձրացրեց ձեռքերը երկինք և տապալվեց այլ ընկած մարմնի վրա: Նույն պահին անկանոններից մեկը նետվեց նրա վրա իր յաթաղանով, նրան իրար հետևից խփեց,

կոացավ և բարձրացրեց մի սարսափազդու ավար. հայ տղայի արյունածոր գլուխը:

Ձկարողացա պահել նրան, ով մնացել էր ինձ հետ. հուսահատությունից ոռնալով դուրս սահեց սայլից և վազեց այնտեղ: Նա էլ չհասցրեց հասնել, քանի որ այդ պահին հնչեց հրացանավորների նոր կրակոց, և կոտրված տիկնիկի պես տապալվեց նրանց մոտ, ովքեր փորձում էին մոտենալ՝ գտնելու յուրայիններից որևէ մեկին, հեռացած մի քանի այգիներում, պողոտայի կենտրոնում, և որոնք նույնպես տապալվեցին:

... Ընդամենը կես ժամ հետո այդ վայրում միայն մնացել էին հարյուրավոր հայերի գլխատված, նույնիսկ քառատված դիակներ, շատ ուրիշներն էլ տարվել էին Կոստանդնուպոլսի բանտերը: Առնվազն մի ժամ անշարժ մնացի՝ զողալով զայրույթի և ահի տարօրինակ խառնուրդից: Մտածելով հազար միջոց՝ վրեժխնդիր լինելու զոհվածների դիմաց, ցանկանալով մարդասպան սուլթանին մահերից վատթարագույնը, մտքում չարադրում էի մի բողոք «Լ'Օրոր»-ում հրատարակելու համար:

Դեռ շատ գիշերներ էի երազում տեսնում այն. իմ մղձավանջների պահին ինձ համարում էի վախկոտ, համոզված, որ լավ կլիներ ես էլ ընկած լինեի որպես կամայականության վայրագության ևս մի զոհ՝ ուրիշ հարյուրավոր անմեղների հետ, ովքեր կյանքից զրկվեցին՝ փորձելով պաշտպանել յուրայիններին:

Ես ընդունակ չեղա: Երբեմն արթնանում էի այն պահին, երբ վազում էի՝ օգնելու հայ տղային: Բայց միշտ ուշ էի հասնում և տեսնում, թե ինչպես էին նրա աչքերը նայում ինձ հույսով, համոզված, որ ժամանակին էի հասնելու նրան փրկելու:

ՆՈՅԵՄԲԵՐ 1895

22. ԳՐԻԳՈՐ ԲՐՈՇՅԱՆԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Հազիվ մի ամիս էր անցել սուլթան Աբդուլ Համիդի հռչակած հուրիեթից հետո, որում ամփոփված էին այն բարեփոխումները, որոնք նա ստանձնում էր անցկացնել եվրոպական տերությունների ճընշմամբ, երբ Պոլ Կամբոնը վերադարձավ Տրապիզոն կատարած իր այցից: Այնտեղ Ֆրանսիան հյուպատոսարան ուներ և առևտրական խոշոր շահույթներ: Նրան հանդիպեցի դեսպանատան դռան մոտ և նկատեցի, որ տարօրինակ էր: Ձեռքս սեղմեց լուռ, գունատ դեմքով և նշան արեց, որ իրեն հետևեմ: Բարձրացանք նրա գրասենյակը, և դուռը փակեց: Նստեցինք բազկաթոռներին՝ պատի վառարանի դիմաց, և Պոլը երկու բաժակ կոնյակ մատուցեց: Իրենը մի կումով խմեց, մինչ ինձ տալիս էր մյուսը: Փնչացրեց և սկսեց ինձ զննել:

– Հիմա ոչ մի կասկած չունեմ: Այս սուլթանը մի անգութ մարդասպան է. մի չարագործ և ամենախաբեբա մարդկանցից մեկը, որ երբևէ ճանաչել եմ: Կհարցնես, թե ո՞րն է իմ զայրույթի պատճառը: Քեզ կպատմեմ. ես Տրապիզոնում էի, մեր հյուպատոսարանում մրտքեր էինք փոխանակում Պիեռ Սեն Ժակի՝ հյուպատոսի հետ, որն ինձ իրոք զգուշացրել էր, որ մթնոլորտը շատ լարված է, և ամեն րոպե կարող է որևէ բան պատահել: Բայց կարծում եմ, որ չնայած դրան, անգամ ինքը չէր ենթադրում, թե ինչ էր շուտով կատարվելու:

Անհավատալի էր. մենք պատշգամբում էինք, իսկ ինքը փողոցում, ինչ-որ բան էր ցույց տալիս, երբ հանկարծ, մի քանի թուրքեր, ասես հատուկ ազդանշան ստացած լինեին, հարձակվեցին մի խումբ հայերի վրա: Խոսքը զուտ սպառնալիքների կամ էլ ուժ ցուցադրելու մասին չէր: Մի քանի րոպեում փողոցները ծածկվեցին կոտորված մարմիններով: Ճշմարիտն ասած, պետք է խոստովանեմ քեզ, որ չգիտեինք ինչ անել, քանի որ համակվեցինք վախի և անորոշության այն զգացողությամբ, որը սովորաբար ծնվում է սարսափի հանդեպ: Հավատա ինձ, եթե քեզ ասում եմ, որ մահը հոտ ունի... մի սարսափելի խառնուրդ՝ արյան, մարմնից դուրս թափված աղիների, քրտինքի. ահավոր մի բան, որից առաջին պահին քար կտրեցինք: Միայն կա-

բողացանք բացել դուռն ու ներս թողնել երեք կանանց, որոնք սարսափահար բղավում էին: Նրանցից մեկը ուշաթափվեց ձեռքերիս մեջ և շատ վատ զգացի, հասկանալով, որ քիչ բան էինք արել այդ խեղճ մարդկանց օգնելու համար:

Տեսանք անկանոնականների խմբեր և քաղաքացիական հագուստով մարդկանց, թե ինչպես էին հայ վաճառականներին հանում իրենց խանութներից և բացարձակ սառնասրտությամբ՝ առանց որևէ խղճմտանքի, դանակի կամ կացնի հարվածներով սպանում կամ քարով խփում նրանց՝ առանց ուշադրություն դարձնելու մեր ճիչերին:

Այնպես էր, որ կարծես ազատ թռիչք էին տվել իրենց դարավոր ատելությանը. աշխատանքով զբաղվելու փոխարեն, ինչպես որ ցանկացած մեկ այլ օր. հանկարծ բնակիչները դադարեցին մարդ արարածներ լինելուց: Մի մասը դահիճ էր, մյուսները՝ զոհեր:

Քեզ պետք է ասեմ, որ մեզ շատ զարմացրեց թուրք ոստիկանության պահվածքը: Ոչինչ չարեցին: Անգամ նվազագույն ջանք, դրանից խուսափելու համար, չնայած կարծում ենք, որ խիստ հրաման ունեին այդպես գործելու համար:

Սարսափելի տեսարաններ էին, եթե չասենք զարհուրելի: Չնայած մեր բողոքներին, որ մեզ տանեն վեզիրի հետ հանդիպման, մի թուրք սպա հրաման տվեց, որ մեզ ուղեկցեն պահակախմբով, եթե չասենք՝ որպես ձերբակալվածների մինչև նավահանգիստ: Ճանապարհին տեսանք շատ հրդեհներ, փողոցներում չպրտված դիակներ՝ մի քանիսը գլխատված, անգամ կանանց և երեխաների: Ինչպես որ կհասկանաս, չնայած իմ եռանդուն բողոքներին, անգամ սպառնալիքներին, չկարողացանք խոչընդոտել: Իսկապես, կյանքում լինում են պահեր, երբ մարդ իրեն անկարող է զգում: Այդ օրը Տրապիզոնում կատաղությունից լաց եղա՝ ըմբռնելով, որ շատ դեպքերում իրականությունը մեզ ոտնակոխ է անում:

Պոլ Կամբոնն իրեն նորից կոնյակ լցրեց և խմեց մի ումպով: Տեսա, որ աչքերը խոնավ են: Շնչում էր այնպես, ասես մեծ ճիգ էր գործադրում:

– Եվ ամենավատն այն է, որ համոզված եմ, որ այստեղ՝ Կոստանդնուպոլսում, ամեն ինչից կհրաժարվեն: Դարձյալ հայերը կլինեն մեղավորները, իսկ թուրքերը՝ զոհ: Բայց այս անգամ ուրիշ է, անձամբ եմ վերապրել այդ, խոսքը հեռավոր քաղաքից ստացած պաշտոնական տեղեկության մասին չէ: Գնալու եմ մեծ վեզիրի մոտ, հաստատ գիտեմ, որ սուլթանն ինձ չի ուզենա ընդունել: Գիտե՞ս, ամենուրեք լրտեսներ ունի: Հրաշալի իրազեկված է, թե ինչ է կատարվում ողջ

կայսրությունում: Դաժան և ցինիկի մեկն է, միակ բանը, որ անում է, չարունակում է նորից ու նորից խաբել Եվրոպային: Բայց այս անգամ ամեն բան այլ կերպ է լինելու: Շատ խիստ զեկուցագիր եմ ուղարկելու մեր պրեզիդենտին և խնդրելու եմ մի տեսակցություն՝ պատմելու նրան անձամբ այս ամենը:

Լսիր, անցած օրը տեսա թուրքական կառավարության իսկական դեմքը, այլևս չի կարող չարունակվել նույն ձևով, քեզ մի բան կասեմ: Ես հուսախաբ եմ և կարծում եմ, որ խնդրելու եմ, որ ինձ փոխադրեն Փարիզ, քանի որ չեմ ուզում չարունակել այստեղ ներկա գտնվել այդ հիվանդ մարդու սարսափելի հոգեվարքին՝ այս կայսրության, որ սկսել է նեխել մեռնելուց առաջ: Այլևս երբեք չեմ սեղմի թուրք քաղաքագետների ձեռքը: Համարյա մեծ մասը, եթե չասենք բոլորը, այն կարծիքի են, որ մեկընդմիշտ կայսրությունից վերացնեն քրիստոնյաներին, քանի որ նրանց չեն համարում հպատակներ, ոչ էլ մտածում են, թե նրանց նվազագույն իրավունք պետք է տրվի: Նրանց համար հայերն ընդամենը կենդանի անցանկալի վկաներ են, որ այս կայսրությունը հիմնված է ճնշման, խոշտանգումների և թալանի վրա: Ո՛չ: Ինձ համար բավական է: Սակայն չեմ ուզում փախչել վախկոտի պես: Գիտես, որ այդպիսին չեմ, միայն մի խորին զզվանք է բարձրանում ստամոքսիցս վեր, քանի որ այդ սարսափազդու աղետից հետո կորցրել եմ հավատս մարդ արարածի հանդեպ: Անցած օրը Տրապիզոնում տեսա, թե ինչպես իմ աչքի առաջ մի քանի հոգի վայրկենապես հրեշներ դարձան: Հասկացա, որ բոլորս մեր մեջ կրում ենք դևերի մի բազմություն, և որ բավական են մի քանի բառեր, մի քանի անմարդկային և բարբարոս հրամաններ, որպեսզի հայտնվեն այդ դևերը: Ինչ անհեթեթ դյուրահավատություն, և ես եմ քեզ ասում, որ եղել եմ զինվոր, որ պատերազմի եմ մասնակցել, բայց անկախ ամեն ինչից, մինչև մի քանի օր առաջ կարծում էի, թե հավասար ուժերի միջև մարդը արդարացում ուներ. մինչդեռ, ո՛չ, չունի: Սոսկ պատրվակ է, որ կտրում է վերջին օղակները, որոնք մեզ կապում են այն զգացմունքների հետ, որոնք կոչվում են մարդկային:

Գիտե՞ս, թե ինչ եմ մտածում: Որ վաղ թե ուշ թուրքերը բնաջնջելու են հայերին: Հիմա հասկացա, որ ընդունակ են դա անելու, այն էլ ինչ ձևով: Ես չգիտեմ, թե ինչպես կխուսափեի նման սարսափելի բանից, բայց, այո՛, չէի ուզենա գտնվել այստեղ, երբ դա տեղի ունենա:

Պոլ Կամբոնը մի որոշ ժամանակ դեմքը ձեռքերով ծածկեց, և ես չհամարձակվեցի որևէ բան ասել, մինչև որ հառաչելով հետ գնաց:

Անտարակույս, Տրապիզոնում ապրած փորձությունը նրա վրա խոր հետք էր թողել:

Այդ ժամանակ փորձեցի փոխել խոսակցությունը և նրան պատմեցի Քրիստափոր Միքայելյանի ու Գրիգոր Բրոչյանի մասին և նրանց հետ ունեցած ժողովի, և ի զարման ինձ՝ նա ասաց, որ ճանաչում է Միքայելյանին՝ տարիներ առաջ Աթենքում ունեցած մի հանդիպումից: Բայց այդ անձնավորությունը հեղափոխական է, նրան փնտրում են, որպեսզի ձերբակալեն:

– Զգույշ եղիր նրանից, կարող է քեզ մի մութ գործի մեջ ներքաշել, չվստահես նրան, և բացի այդ պետք է որ իմանաս, որ այս երկրում միակ բանը, որ լավ է գործում, քաղաքական ոստիկանությունն է: Ամեն ինչի մասին զեկուցում են ներքին գործերի նախարարին... Քեզ ասում եմ՝ ամեն ինչ:

Այդ Գրիգոր Բրոչյանն ունի ամերիկյան անձնագիր: Ինձ չասացի՞ր, որ նրա հետ ծանոթացել ես Նյու Յորքում: Դե լավ, զգույշ եղիր, չեմ ուզում, որ դու ներքաշվես որևէ քաշքշուկում և ոչ էլ ներքաշես դեսպանատանը, քանի որ ես պետք է աղմուկ բարձրացնեմ՝ կապված Տրապիզոնի սարսափելի կոտորածի հետ: Դա չի կարող մնալ հենց այնպես:

Պոլ Կամբոնն իրենից դուրս էր եկել: Այն ժամանակից, ինչ իրեն ճանաչում էի, միշտ հայերի կողմն էր բռնում, քանի որ թույլ կողմն էին, թեև իր դիրքը՝ որպես Ֆրանսիայի բարձրագույն ներկայացուցիչ այդ երկրում, նրան դարձրել էր ծայրահեղ ողջամիտ իր դրսևորումներում: Նույնիսկ եղել էր ինչ-որ տեղ կասկածամիտ՝ փորձելով մնալ չեզոք դիրքում որևէ ընդհարման ժամանակ, որին կարող էր վերաբերել որպես մարդ արարած: Բայց երբ նա դա զգացել էր իր մաշկի վրա, այլևս ոչ մի կասկած չէր մնում: Այդ պահին նրա մտահոգությունն այն էր, որ կոտորածները կարող են տարածվել Թուրքիայով մեկ:

Ներզգացողությունը նրան չէր խաբում, քանի որ քիչ ժամանակ անց Էրզրումում, Խարբերդում, Դիարբեքիրում, Մարաշում և շատ այլ վայրերում սպանվեցին հազարավոր հայեր այն պատճառով, որ պատկանում էին այդ փոքրամասնությանը:

Վերադարձա տուն՝ մտորելով ամբողջ տեղի ունեցածի մասին: Կոստանդնուպոլսում շատ բաներ այլ կերպ էին ընկալվում. չնայած սարսափելի կոտորածին՝ մարդիկ փորձում էին նայել դեպի առաջ: Ներքուստ ես խորհում էի միայն կատարվածի շուրջ և իմ հայ բարեկամների ճակատագրի մասին:

Հաջորդ օրը, երբ մտա դեսպանատուն, ինձ հանձնեցին մի ծածկագրված հեռագիր Բիթլիսի հյուպատոսարանից: Բացեցի այն՝ վախենալով որևէ չարագույժ լուրից, բայց կարդալով՝ թեթևացած շունչ քաշեցի:

> «Գրիգոր Բրոշյանը փախել է բանտից սեփական միջոցներով: Գտնվելու վայրն անհայտ է»,– ստորագրված Պիեռ Սեն Ժակ, Ֆրանսիայի հյուպատոս Տրապիզոնում:

Նրա փախուստը հոգալուց հետո՝ ի վերջո պարզվեց, որ դրա կարիքը չէր եղել: Բրոչյանը շատ վճռական մարդ էր: Վստահ էի, որ առաջին հնարավորության դեպքում՝ կապի մեջ կմտներ մեզ հետ, եթե նրան որևէ ձախորդություն չպատահեր:

Շատ օրեր անցան, սակայն լարվածությունը չէր նվազում, և շարունակում էին լուրեր հասնել դեսպանատուն Թուրքիայի շատ գյուղերից ու քաղաքներից՝ հայերի դեմ հարձակումների ու սպանդների մասին, ինչը ցույց էր տալիս, որ այդ իրավիճակը համատարած էր՝ առանց դադարի, արտաքուստ՝ դուրս վերահսկողությունից: Ինչպես միշտ Բարձր Դուռն ամեն ինչ ժխտում էր՝ արտահայտելով իր զայրույթն ու ցավը կատարվածի հանդեպ, թեև ճշմարիտն այն էր, որ այլևս ոչ ոքի չէր խաբում: Ակնհայտ էր, որ բարեփոխումների հուրիեթը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի փառահեղ ալիբի և դիվանագիտական տարբեր անդամների մեկնաբանություններն այս տեսակետում համընկնում էին:

Օրերն անցնում էին այնքան արագ, որ զարմացա, երբ գլխի ընկա, որ մինչև Սուրբ Ծնունդը մնացել է երկու շաբաթ: Ես չէի կարոտում Ֆրանսիան, բայց հիշում էի իմ մանկությունը, իմ երիտասարդության տարիները, որ կարծես ուրիշինը եղած լինեին: Ինձ ավելի հասուն էի զգում, և մեծ պատասխանատվությամբ պաշտոնը, որ զբաղեցնում էի որպես առաջին քարտուղար, ինձ ստիպում էր աշխատել լարված, բարդ ու խառնաշփոթ ժամանակաշրջանում՝ ջանալով պաշտպանել Ֆրանսիայի շահերը:

Մի օր արագ քայլում էի փողոցով, երբ մի մուրացկան ձեռքն ինձ մեկնեց: Տարօրինակ ոչինչ չկար, քանի որ քաղաքում շատ էին: Այդ պատճառով էլ որոշեցի շրջանցել նրան, բայց նա հասցրեց տալ ինձ մի ծալված թուղթ: Այնպես ցույց տվի, որ կարծես ոչինչ չէր եղել և շարունակեցի քայլել սովորականի պես: Մի քանի քայլ հետո, ապշահար կարդացի միայն. «Կաֆե Իմպերիալ»:

Անտարակույս, ինչ-որ մեկն ինձ սպասում էր այդ վայրում: Շատ մարդաշատ հավաքատեղի՝ դիվանագիտական մարմնի անդամների համար, որը գտնվում էր կամրջի մոտ՝ նույն անկյունում: Ինձ քաջ ծանոթ էր, քանի որ այդ վայրն ինձ շատ դուր էր գալիս և ոչ միայն իր արտասովոր սուրճով, որի բույրը տարածվում էր Ոսկեղջյուրով մեկ:

Ուղղվեցի այնտեղ՝ անգամ իմանալով, որ Պոլ Կամբոնը հավանություն չէր տա: Նոր էր մեկնել Ֆրանսիա, բայց գնալուց առաջ ինձ խոստովանեց, որ հրաժարականը չեն ընդունել:

Այդ չարաթներին ես էի զբաղեցնելու Ֆրանսիայի ի տեղի դեսպանի պաշտոնը, շատ բարդ ժամանակներում՝ երկու երկրների միջև լարված հարաբերությունների հետևանքով:

Մտա և սկսեցի նայել մեծ զգուշությամբ այս ու այն կողմ, մինչև որ սեղաններից մեկից մի հայ ինձ մի թույլ նշան արեց: Ինձ թվաց, թե այդ մարդու դեմքն ինձ ծանոթ էր, բայց ոչ մի կերպ չկարողացա վերհիշել: Հետևեցի նրան, և ինձ առաջնորդեց վերևի հարկը՝ խուցերից մեկը, որոնք նայում էին ներսի կողմին: Այնտեղ, բացարձակապես զարմանալիորեն, ինձ սպասում էր Գրիգոր Բրոչյանը, որը տեղից վեր կացավ ինձ գրկելու, մինչ ինձ հարցնում էր անգլերեն:

– Հիշո՞ւմ ես Էդուարդ Սվազյանին: Այո՛, Նյու Յորքում: Դաշնակահա՛րը, մարդ Աստծո:

– Հիմա, այո՛: Ճիշտն ասած, նրան տեսնելիս իր դեմքն ինձ ծանոթ թվաց... Իհարկե՛: Ինչպե՞ս ես, Էդուա՛րդ: Դեռ մինչև հիմա հիշում եմ, թե ինչ լավ էր հնչում քո դաշնամուրը: Բայց ի՞նչ ես անում այստեղ: Վտանգավոր չէ՞:

Կաֆե Իմպերիալը մի վիթխարի հաստատություն էր բազմաթիվ փակ սրահներով և մի վերնահարկով, որտեղից նա ասես վերահսկում էր կամուրջը և վրայի մշտական անցուդարձը:

– Ահա թե ինչ ենք անելու այստեղ: Ինձ հետ եկել են շատ հայ բարեկամներ, Արամ Ջելկայանը նույնպես, տեղանքագիր և Կրիկոր Նալպանտյանը՝ նկարիչը... հիմա քեզ կբացատրի Գրիգորը,– Սվազյանը ժպտաց՝ ցույց տալով իր բարեկամին:

– Այո՛, նստիր այստեղ և խմիր մի գավաթ այս հրաշալի սուրճից: Ռեչիդ աղայինն է: Կարծում եմ, որ միակ Թուրքն է, որին համակրում եմ:

Այդ նույն պահին մտան Արամը և Գրիգորը, որոնց ջերմորեն ողջունեցի: Բրոչյանի բարեկամներն ինձ բացատրեցին, որ չէին ցանկացել նրան մենակ թողնել, և բոլորը միասին որոշեցին տոմսերը գնել ու վերադառնալ Կոստանդնուպոլիս: Թեև գիտեին այն դժվարությունների մասին, որոնք իրենց սպասում էին, ինձ խոստովանեցին, որ ի վիճակի չեն հանգիստ ապրել Նյու Յորքում, երբ իրենցից մեկը Թուրքիայում կյանքը վտանգի է ենթարկել:

Նրանց տեղ հասնելն ու Բրոչյանի անհավատալի փախուստի զուգադիպումը բոլորին համակել էր մեծ զոհունակությամբ, և նրանք ցնծության մեջ էին: Ինձ տեղեկացնելու համար՝ ուղերձն ուղարկել էին ՀՀԴ-ի անդամներից մեկի միջոցով, որը մուրացկանի զգեստներով կերպարանափոխված, հետևել էր ինձ ուղերձը հասցնելու համար:

– Լավ, Անրի, չգիտեմ՝ լավ թե վատ, քեզ համարում ենք յուրայիններից մեկը: Վստահ ենք, որ քո անձնագիրը ֆրանսիական է, բայց սիրտդ՝ հայկական:

Համաձայնեցի, մինչ չունչս կտրվում էր հուզմունքից: Նրա խոսքերը ճիշտ էին, տարիների ընթացքում այդ երկրում գնալով բարեկամացել էի հայ ժողովրդին: Նրանք չատ մոտ էին Արևմուտքի աշխարհին, նույնիսկ հայ գյուղացիները, որ ապրում էին հեռավոր գյուղերում և ավաններում, տածում էին շատ մեծ մերձակցություն եվրոպականի և մեծ համակրանք Ֆրանսիայի նկատմամբ: Դա այլ բան չէր, քան քրիստոնեական մշակույթը, կյանքն ընկալելու մի որոշակի ձև և մեծ հիացմունք ազատությունների երկրի հանդեպ:

Նստեցինք այդ առանձին սրահում և լուռ մնացինք, մինչ Թուրք սպասավորը մատուցում էր սուրճը: Ցանկացած զգուշավորություն բավարար չէր մի այնպիսի երկրում, որտեղ սուլթանն ուներ աչքեր և ականջներ ցանկացած վայրում. լրտեսները նրան մշտապես իրազեկում էին տեղի ունեցող ամեն ինչից: Եթե մեկը համարձակվում էր ասել մի բան, և դա չէր համընկնում կառավարության տեսակետի հետ, կորած էր. նա կամ ընտանիքի որևէ անդամ մինչև լույս կանհետանար:

Գրիգորը նայեց մեր աչքերին, ասես փնտրելիս լիներ հենարան՝ իր իսկական ընկերների մեջ:

– Ուզում եմ, որ իմանաք, ինչ կատարվեց Բիթլիսում, թեև մյուս կողմից, այնքան էլ տարբեր չէր ուրիշ քաղաքներում տեղի ունեցածից, որտեղ հայեր են ապրում: Ձեզ հստակորեն պետք է ասեմ, որ Աբդուլ Համիդն իր առջև նպատակ է դրել բնաջնջել մեզ, քանի որ այն համոզմանն է, որ Օսմանյան կայսրությունում եվրոպական պետությունների միջամտության պատճառը մենք ենք: Ձեզ մի բան

նախագուշացնեմ: Մինչև իր կյանքի վերջ նա այդ նպատակից հետ չի կանգնի. այդ մարդը մի դև է, որը ձգտում է կործանել հայ ազգը: Իսկ դա անուն ունի՝ կոչվում է ոճիր ողջ մարդկության դեմ, բայց այնքան սովոր է ստին ու կեղծիքին, որ ընդունակ է անգամ հերքել բացահայտ ճշմարտությունը: Ինչ էլ որ անենք, միշտ էլ լինելու ենք հարձակվողները, իսկ Թուրքերը՝ զոհերը, որպեսզի այս ձևով ստեղծեն խարդախության և դավադրության արատավոր մի մթնոլորտ:

Մեզ կողոպտում են Թալանչիական հարկերով, մանավանդ ինչ-որ ձեռնարկում ենք և ինչ-որ ունենք, խլում են: Բռնաբարում են մեր կանանց ու աղջիկներին, առևանգում են մեր որդիներին: Զուրկ ենք ազատությունից, քանի որ ուզում են վերահսկել անգամ, Թե ինչպես ենք հողին հանձնում մեր հանգուցյալներին: Ժամանակ առ ժամանակ մեր գյուղերից մեկը ենթարկվում է ավերիչ հարձակման, որին զոհ են գնում մեր եղբայրներից շատերը: Իրավունք չունենք ձի հեծնել, ո՛չ էլ զենք կրել, ո՛չ էլ հնչեցնել մեր եկեղեցու զանգերը: Կարելի է՞ արդյոք կյանք կոչել նման ապրելակերպը... Իսկ երբ հրաժարվում ենք վճարել, հայտնում ենք նրանց չարաչահումների մասին կամ փորձում ենք հատուցել վիրավորանքի դիմաց, որովհետև չենք կարող հանդուրժել, որ մեր արժանապատվության մնացորդները վերջ տան, ուրեմն ըմբոստներ ենք, որոնց հարկավոր է բնաջնջել: Եվս մի պատրվակ դարձյալ հարձակվելու Փոքր Ասիայի հայերի ու հույների վրա, քանզի չպետք է մոռանանք մեր դավանակից եղբայրներին:

Բոլոր հայերս, կարիք չկա կրկնելու, դեմ ենք այս իրավիճակին, և բոլորիս համար կասկած չկա, որ նախընտրում ենք մեռնել, քան ապրել այսպես: Դա մեզ ընձեռում է բարոյական ու նյութական առավելություններ: Որովհետև երբ քեզ համար միևնույն է մեռնելը և դավանում ես մի արդար գործի, կարող ես վերածվել վտանգավոր թշնամու: Զենք ուզում լինել գառներ, որ առանց ծպտուն հանելու, գնում են սպանդանոց, ինչպես այն խեղճ մարդիկ, որոնց տեսա գըլխատված մեռնելիս Սասունում և Բիթլիսում:

Բրոչյանն ինձ զայրացած հայացք նետեց և ասաց.

– Ներիր այն բանի համար, որ կասեմ և չվիրավորվես: Բայց չե՞ս կարծում, որ հայերի արյունը Եվրոպայի համար ոչինչ չարժե: Չե՞ս կարծում, որ քրիստոնյա երկրները, որ այդքան ճամարտակում են ազատություններից ու մարդասիրությունից, արդյոք մի քիչ ավելին պետք է անեին հանուն Հայաստանի: Այդ երկրները, որոնք իրենց անվանում են քրիստոնյա, մեզ հետ միայն խաղում են՝ մեծ շահույթներ կորզելու համար: Ահ, ինչ սարսափելի բան է թույլ լինելը: Աստված հայերին խելք, բարություն և սիրտ է տվել: Մեր ինչի՞ն են պետք այդ պարգևները: Կուզենայի լինել ինչպես նրանք. դաժան, չարագործ և անմարդկային, որպեսզի պայքարը չլիներ այդքան անհավասար: Այլևս չենք կարող հանդուրժել էլ ոչ մի օր ավելի... Մեր վերջին հույսը Ֆրանսիան է:

Գրիգորի տրամադրությունը դառնում էր այնքան հոռետեսական, որ որոշեցի միջամտել:

– Մասամբ դու իրավացի ես: Եվրոպան չի արձագանքում այնպես, ինչպես որ պետք է աներ, թեև հուսով եմ, որ չուտով ամեն ինչ կփոխվի. կա՛մ ստիպված կլինեն հանգամանքներից ելնելով, կա՛մ էլ հասարակական կարծիքը կստիպի այդ անել:

Ես վստահ եմ, քեզ հետ լրիվ անկեղծ եմ, երբ ձեզ հավաստիացնում եմ, որ շատ ֆրանսիացիներ և եվրոպացիներ կան, որոնք խոր համակրանք են տածում հայերի նկատմամբ, թեև անհասկանալի շատ պատճառներով չեմ հասկանում, թե ինչու որոշ քաղաքագետներ չեն գործում՝ հետևելով իրենց հոգու թելադրանքին: Ճիշտ է, որ պետության շահերը իրականում նաև տնտեսական շահեր են, որոնք ստիպում են կորցնել մարդկայնությունը: Ես նույնպես ամոթ եմ զգում այն բանից, ինչ տեղի է ունենում: Երբ եկա այստեղ, կարծում էի, թե խոսքը միայն տեղեկատվության պակասին է վերաբերում, բայց հիմա գիտեմ, որ կան ուրիշ դրդապատճառներ: Ամեն դեպքում ձեզ առաջարկում եմ, որ միմյանց երդվենք գաղտնի պահել: Ես պատասխանատու եմ ձեր այստեղ վերադառնալու համար և չգիտեմ, թե չսխալվեցի՞ արդյոք՝ Գրիգորին համոզելով, որովհետև այդ պատասխանատվությունն ինձ սպանում է:

Սա մի սարսափելի անհավասար պայքար է, թեև պատմությունը մեզ շատ օրինակներ է տվել: Հիմա դուք Սասունցի Դավիթն եք, իսկ Թուրքերը՝ Գողիաթը, և հետևաբար պետք է գտնեք հսկային տապալելու զենքը: Հսկա, որ ձեզ հետապնդում է, ճնշում, որ ցանկանում է ձեզ բնաջնջել...

Սակայն սա, ինքներս մեզ չխաբենք, լինելու է մի անհավասար ճակատամարտ, որ կարող է շատ երկար ժամանակ տևել, գուցե շատ ավելի, քան մեր կյանքերը իրար գումարած, և պետք է շարունակեք տառապել, իսկ փոխարենը՝ միայն արյուն, քրտինք և արցունքներ: Բայց ձեզ կարող եմ ասել, որ շատ մարդիկ ունեք ձեզ կողմնակից, ունենք մարդիկ՝ համոզված, որ դուք եք արդարացի: Ինչ մնում է ինձ՝ իմ համեստ ավանդին, միշտ ձեր կողքին կլինեմ և հարկավոր չէ ավելին ասել, քանի որ ընտրությունը կատարել է իմ խիղճը:

Ինձ համար հուզումնալից պահ էր, քանի որ չորս հոգին ինձ գրրկեցին մի քանի անգամ: Այլևս հետ գնալու ճամփա չկար, ես լրիվ գիտակցում էի, որ հենց նոր ես ներքաշվել էի մի բանում, որն ինձ վրա թանկ էր նստելու. թե՛ անձիս համար և թե՛ լուրջ հետևանքներ կունենար իմ երկրի համար: Խոսքը այն սկզբունքների դավաճանության մասին էր, որոնք ղեկավարում են դիվանագիտական հարաբերությունները: Դիվանագետը կարող էր իր ներսում վճիռ ընդունել, բայց պարտավոր էր պահել հավասարակշռությունը, ինչ էլ որ լիներ: Եթե ոչ, պետք է հրաժարական տար և միայն այդ պահից հետո որոշում ընդուներ: Մինչդեռ ես պետք է մնայի դիվանագիտական անձնակազմում և այդ արտոնյալ դիրքից փորձելու էի օգնել հայերին: Մինչ քայլում էի դեպի դեսպանատուն, մտածեցի, որ այդ ժամանակից սկսած՝ պետք է փոխեի սովորություններս. ուշադրությամբ հետևեի իմ շրջապատին, լինեի զգուշավոր, համոզվեի, որ ինձ չեն հետևում, իսկ եթե այո՛, փորձեի ճանապարհս շեղել: Ես կյանքս բախտախաղի էի դնում շատ համառ թշնամիների՝ մարդասպան Աբդուլ Համիդի խուզարկումների դեմ: Իրականում նրա քաղաքական ոստիկանությունը իրազեկվում էր ամեն ինչից, այն աստիճան, որ վերջերս Կոստանդնուպոլսում մի ասացվածք կար. «Եթե չես ուզում, որ Աբդուլ Համիդն իմանա, մի մտածիր այդ մասին»:

Վերսկսեցի աշխատել՝ գիտակցելով իմ նոր իրավիճակը և այն վիթխարի պատասխանատվությունը, որ դրված էր ինձ վրա: Բրոշյանը և նրա բարեկամները երդվել էին ոչ ոքի չպատմել իմ որոշումը, միայն այսպես՝ իմ աշխատանքով կկարողանայի ծառայել Հայոց հարցին: Շատ դժվար է որոշել, թե որոնք են մեր իսկ շահերին հակասող այն մեխանիզմները, որոնք մեզ մղում են ընդունել դժվարին որոշումներ:

Ցեմ ժխտի, որ այդ ամենի մեջ իր ծանրակշիռ տեղն ուներ այն փաստը, որ դեռ սիրահարված էի Ռիտա Հակոբյանին, թեև գիտեի, որ դա պետք է թաքուն մնա հոգուս խորխորատում: Գուցե այդ որոշումն էր ինձ մղել մեկ ուրիշի՝ իր միջոցով միաբանվելու հայերին՝ որպես նրանցից մեկը:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՍԿԻԶԲ 1895

23. ՄԵԿ ՈՒՐԻՇ ԱՇԽԱՐՀ

Դեկտեմբերի սկզբներին դեսպանատանն ընդունեցինք Ֆրանսիայի ֆինանսների նախարարության երկու բարձրաստիճան պաշտոնյաների: Պետք է մի քանի ամիս մնային Կոստանդնուպոլսում՝ փորձելով վերակառուցել և վերլուծել Թուրքիայի տնտեսական քաղաքականությունը և պարզել, թե արդյո՞ք Ֆրանսիան նպատակահարմար կհամարի վերաֆինանսավորել իր տրամադրած վարկերը: Պիեռ դը Վիլմենը և Ժորժ Կոնտեն նոր էին հասել Փարիզից՝ նախարարի կողմից նրանց վրա դրված այդ դժվարին առաքելությամբ:

Պիեռ դը Վիլմենը պատկանում էր Փարիզի ճանաչված ֆինանսիստների ընտանիքներից մեկին: Մի բարձրահասակ, ոչ այնքան բարեկազմ, միջին տարիքի և խորաթափանց հայացքով մարդ էր: Ինձ խոստովանեց, որ ոչ միայն պատասխանատվությունից ելնելով է եկել, նաև Թուրքիա այցելելու ցանկությունից:

– Նախկինում երբեք չեմ եղել Արևելքում, և պարզվում է, որ իսկապես, իմ կարծիքով շատ գայթակղիչ է, բայց այս աշխատանքը վախենամ շատ դժվարին լինի: Տեսեք, այս առավոտ զրուցել ենք մեծ վեզիրի հետ, որն անմիջապես կանչել է հաշվապահներին: Ինչ վերաբերում է ֆինանսների նախարարին, նա եկել է ավելի ուշ՝ առանց իմանալու, թե ինչ ենք ուզում և կարծում եմ, որ նրա համար միևնույն էր, քանի որ չի թվում, թե նա է վերահսկում իրավիճակը:

Ցի կարելի անտրամաբանական դատողություններ արտահայտել, բայց իմ առաջին տպավորությունն այն է, որ այս երկիրը հասել է իր վերջին. այսինքն՝ ժամանակավորապես դադարեցված են վճարումները, իսկ դա Թուրքիայի համար կարող է շատ վտանգավոր լինել, բայց վարկատուների առումով Ֆրանսիան հավանաբար նրանցից ամենակարևորն է:

Այստեղ գոյություն չունի պետության բյուջե, կամ առնվազն ոչ այնպես է, ինչպես մենք ենք այն հասկանում: Ցկա ծախսերի և մուտքերի պաշտոնական վերահսկողություն: Փողն օգտագործվում է, ես կասեի, կամայական կերպով՝ սկսած սուլթանի պալատից, որը տա-

նում է մեծ մասը: Ինչ որ մնում է, ամեն նախարար պոկում է, որքան կարող է՝ ինչպես նախարարության հոգսերի, այնպես էլ սեփական գրպանը դնելու համար: Ինչ վերաբերում է բանակին, շատ վատ է վճարվում. բավական է ասել, որ նրանց երկու տարի ի վեր աշխատավարձ չեն վճարել: Իհարկե, սա նրանց ստիպում է ապրուստի համար փող հոգալ և շատ դեպքերում գողանում և կողոպտում են՝ ձեռք բերելով ավար, որն իրենց թույլ տա ապրել:

Այդ պահին միջամտեց Ժորժ Կոնտեն, որին նույնպես վաղուց էի ճանաչում՝ ֆինանսների վերնախավի հետ ունեցած կապերի շնորհիվ:

– Կարծում եմ, որ Պիեռը շատ նուրբ է իր գնահատականներում: Ահա ինչ ուզում է ասել. հանդիպել ենք Ալի Բաբային և քառասուն ավազակներին: Սուլթանն ամեն անգամ, երբ ուզի, ձեռքը մտցնում է տոպրակը՝ համոզված, որ կայսրությունն իրենն է, և ասելով իրենը՝ ուզում եմ ասել իր անձնականը, անչուշտ լավ օրինակ չէ նախարարների համար, որոնք կմտածեն՝ եթե ղեկավարն է դա անում, ինչո՞ւ իրենք չենք կարող անել... Եվ այսպես, ամբողջ սանդղակով, մինչև վերջին խուլ գյուղի պաշտոնյաները, որ նստում են փոքր պատուհանիկի հետևում: Բոլորը գողանում են առանց մի նշույլ ամոթի, իսկ այս ձևով անհնարին է մի երկիր կառավարել՝ այն էլ այս մեծության:

Ձեզ մի օրինակ բերեմ: Այս նույն առավոտ խնդրել ենք ներկայումս գործող բյուջեի մատյանները. ոմն Իբրահիմ փաշա ուսերն էր թոթվում ու մեզ վրա գցում խարդախ սրիկայի հայացք:

Մեզ հետ գալիս էին մի քանի սպա և թարգմանիչներ թարգմանության համար, բայց ոչինչ հնարավոր չի եղել գտնել: Ավելի ուշ Իբրահիմ փաշան մեզ խոստովանել է, որ բյուջե չկա, միայն դրա նման մի բան կա, պարտապաններին համոզելու համար, որ սա մի լուրջ երկիր է, թեև ինձ վստահեցրել է, որ ամեն ինչ կկարգավորվի: Հետո մեզ հրավիրել են նախաճաշելու Դոլմաբաղչե, մի վիթխարի պալատ, որը հավակնում է նմանվել Վերսալին: Այցելելով այն՝ չկարողացա խույս տալ այն մտքից, որ ճարտարապետը ջանացել է սնանկացնել սուլթանին, որն էլ նրան այն պատվիրել է: Ինչպես որ հասկացա, մի ճանաչված հայ ճարտարապետ է: Ինչ հնարամիտ վրեժխնդրություն: Լավ, դե ինչ, նախաճաշը շռայլելու իսկական ցուցահանդես էր՝ մատուցված թվով քսան ծառաներով ու սպասավորներով, որը հարյուր հոգով կուտեին մեկ շաբաթվա ընթացքում: Կարծում եմ, որ գլխի են ընկել, որ սխալվել են, քանի որ այնպես էր, ոնց

որ հարյուր ֆրանկանոց թղթադրամներ այրած լինեին վառարանում: Ի՞նչ մարդիկ են: Ճիշտն ասած. ինձ հրաչք է թվում այն, որ այս երկիրը շարունակում է գործել: Հիմա մեր գահլան տանում են, թե փողի, շատ փողի կարիք ունեն՝ գնելու նավեր, հրանոթներ, ամեն տեսակի զենքեր, կարծես պատերազմի են պատրաստվում: Իբրահիմ փաշայի ենթականերից մեկն ինձ բացատրեց, որ գերմանացի խորհրդատուները հաշվառել են այն ամենը, ինչ ունեն զինամթերքի բոլոր պահեստներում և իրապես ինչի կարիք ունեն: Կարծում եմ, որ անգամ ինքը՝ սուլթանը, որն ազատ ճանապարհ է տվել գերմանացիներին, գլուխը ձեռքերով բռնել է՝ իմանալով պահանջագրի մասին: Ծիծաղելի կլիներ, որ մենք՝ ֆրանսիացիներս, կույտերով փող տրամադրեինք թուրքերին Գերմանիայում նավեր և զենքեր գնելու համար: Այդ մասին անգամ խոսք լինել չի կարող:

– Պատմիր նրան ժամացույցների հետ կապված,– Ժորժ Պիեռ դը Վիլմենը չկարողացավ զսպել ժպիտը՝ ինչ-որ բան հիշելով:

– Այո..., դե ինչ, ճիշտն ասած, այս մարդիկ համոզված են, որ կարող են գնել բոլորին, կամ էլ որ բոլորս կաշառակերներ ենք: Աշխատանքային օրվա ընթացքում մեզ տարան մի փոքրիկ սրահ, կարծես հենց այնպես ցույց տալու մի քանի թանկարժեք և սեղանի պերճազարդ ժամացույցներ՝ արտադրված Փարիզում: Հա, իսկապես, նաև սաղափից զարդատուփեր, որոնք ունեին ոսկե և պլատինե ժամացույցներ՝ թվերի փոխարեն փոքրիկ ադամանդներով: Այդ պահին եկավ մեծ վեզիրը և հազար չողոքորթ խոսքերով պնդեց, որ ընտրենք մեկ հատ սեղանի և երկու փոքր ժամացույցներ. մեկը՝ կանացի, մյուսը՝ տղամարդու:

Շատ չարացած էր, իրոք, քանի որ մարդը ջանք է թափել, որ դրանք ընդունեին: Ճիշտ այդպես: Այն տպավորությունն էր, որ հրաժարվել ընդունել դրանք՝ կնշանակեր վիրավորել սուլթանին... Եվ ահա, այնտեղ են՝ այդ տուփերում, որպեսզի հետներս տանենք՝ ճոխացնելու Լուվր թանգարանի հավաքածուները, և ամենագավեշտականն այն է, որ գնված են Ֆրանսիայում՝ ֆրանսիական գանձարանից եկած փողով: Իսկապես որ այս երկիրը անսպառ հրաչք է: Երբ մեկը գտնվում է Դոլմաբաղչեի ներսում և մտածում, թե որքա՞ն նստած կլինի այդ չքեղաշուք պալատը հասարակական գանձարանի վրա... Ի՞նչ կարող ենք անել այս իրավիճակը չտկելու համար: Այստեղ կաշառակերությունն իրենց բնավորության անբաժանելի մասն է: Ամոթալի բան չէ, ընդհակառակը, ով դրան չի մասնակցում, մատով է ցույց տրվում իր իսկ ընկերների կողմից և հեռացվում որ-

պես խոչընդոտ համակարգի համար: Ինչ վերաբերում է օսմանյան պարտքի վարչության խորհրդին, որի հետ պետք է վաղը տեսնվենք, չգիտեմ, թե ինչ կպատահի, բայց կարծում եմ, որ անդամներից յուրաքանչյուրն իր ջրաղացին է ջուր լցնում, և հատկապես Գերմանիան, որը հավակնում է դիրքավորվել այն կանխատեսումով, որ Թուրքական կայսրությունը չաքարի պես կլուծվի, և հետքն անգամ չի մնա, և ոչ ոք չի կասկածում, որ դա ոչ թե ուշ, այլ շուտ է լինելու և այդ պահին, ինչպես կանխագուշակեց Վիլհելմ Ռոշերը, բոլորը ձգվելու են դեպի ափսեները՝ մեջները մնացած փշրանքները հավաքելու:

Կայզերն իր թաթը դրել է Թուրքիայի վրա և պատրաստ է երդվել, որ անգիր գիտի Ղուրանը, եթե հարկ լինի:

Տեսեք, ձեզ մի բան եմ խոստովանելու: Ձեմ վստահում գերմանացիներին, ուզում են տիրանալ Թուրքիային, լավ թե վատ, ինչ գնով էլ լինի: Իրենք ունեն իրենց ֆոն դեր Գոլցին՝ պրուսացի կայզերի վստահելի մարդուն, որը ղեկավարում է Թուրքական ռազմական ակադեմիաները՝ հրավիրելով առաջադեմ ուսանողներին կրթությունն ավարտել Բեռլինում: Ձեզ վստահեցնում եմ, որ անկողմնակալությունից չէ, այլ լրիվ հակառակը: Մեր գլխին խաղ են խաղալու: Բոլորովին վերջերս Վիեննայում մի զեկուցում լսեցի: Կարդում էր մի գերմանացի պրոֆեսոր՝ այդ աշխարհագրագետը, անունն ի՞նչ էր, Նաումա՞ն: Այո՛, ոմն Նաուման: Խոսեց հարձակումներից, գերմանական իշխանությունից, արիական արյամբ գաղութարնակներից, Կրուպի թնդանոթներից: Համոզված վստահեցրեց, որ Գերմանիան իրավունք ունի գրավել այն տարածքը, որի կարիքն իր ժողովուրդն ունենա: Ինձ բոլորովին դուր չեկավ այդ անհեթեթությունների շարքը, բայց ձեզ վստահաբար ասում եմ, որ ավստրիացիները բուռն ծափահարում էին, նույնն էր թե՝ որ մի մարգարեի լսելիս լինեին: Համոզված եմ, որ գերմանացիները գաղտնի պայմանագրեր ունեն Թուրքերի հետ և վաղ թե ուշ մենք կտեղեկանանք:

– Նույնն եմ կարծում,– հաստատեց Կոնտեն: – Բայց մենք խոսում ենք մի մարդու հետ, որը շատ լավ գիտի այս երկիրը: Ես կուզենայի իմանալ նրա կարծիքը:

Սա երկիր չէ, այլ մի վիթխարի խճանկար, որում ոչ ոք գոհ չէ իր իրավիճակից,– պատասխանեցի,– Թուրքերը նվաճելով են տիրացել նրան: Եկել են այստեղ ուժի զոռով և շարունակում են գործադրել այն բոլոր նրանց դեմ, ովքեր Թուրք չեն: Ինչ վերաբերում է հույներին, համոզված են, որ Փոքր Ասիան՝ հելլենական աշխարհի բնական մի մասը, դեռ ավելին է եղել, քանի որ իրականում այստեղ էր գտնվում նրա հիմնական մասը: Հայերը այստեղ են գտնվում այն ժամանակից ի վեր, երբ գործածում էին քարե կացիններ: Այսինքն՝ վաղնջականից այս տարածքը եղել է իրենց հինավուրց երկիրը, իսկ ինչ մնում է քրդերին, թափառում են այս տարածքներով՝ սկսած խեթերի ժամանակաշրջանից: Արաբները չեն ընդունում սահմաններ և մանավանդ այն ժամանակից, ինչ բերեցին իսլամը, նրանք ումմայի՝ հավատարիմ մուսուլմանների մասն են կազմում, այսինքն՝ իսլամի: Ձեմ խոսում բուլղարների, բոսնիացիների, ալբանացիների և մակեդոնացիների մասին... Յուրաքանչյուրը հարցին նայում է իր ձևով: Իսկ մինչ եվրոպացիներս դիրքավորվում ենք, որ երբ գա պահը..., որ չի ուշանա, այդ ընթացքում սուլթանը՝ այս հիվանդ մարդը կարող է մեռնել մեր ձեռքերին: Հարցն այն է, որ Թուրքերը ըստ երևույթին ցանկանում են մի արմատական լուծում՝ վերացնել անհանգիստ և առանց հովանավորների փոքրամասնություններին, ինչպես օրինակ՝ հայերին, որովհետև Փոքր Ասիայի հույների հետևում Հունաստանն է... և վաղ թե ուշ նրանց կուղարկեն այնտեղ:

Բայց ձեզ հետևյալը կասեմ: Եթե որևէ ողբերգություն կատարվի, ամենամեծ պատասխանատուն մենք ենք լինելու՝ եվրոպացիներս: Թուրքերը կմտածեն, որ այդ ձևով կապահովեն իրենց ապագան որպես պետություն: Իսկ մե՞նք: Ինչպե՞ս ենք այդ ժամանակ արդարանալու: Որ ի օգուտ մեր տնտեսական շահերի թույլ տվեցինք, որ կատարվի՞ նման բան: Ի՞նչ ամոթալի բան Եվրոպայի համար:

Ժորժ Կոնտեն և Պիեռ դը Վիլմենը իրար երկար նայեցին առանց իմանալու՝ ինչ պատասխանել: Հետո ինձ բավականին հապճեպ հրաժեշտ տվեցին: Վերջին իրենց փաթեթները վեզիրի նվերների հետ և գնացին հերթական ժողովին:

Մնացի մտազբաղ: Համոզված էի՝ ոչ ոք ոչինչ չի անի հանուն հայերի, եթե ի վերջո որևէ սարսափելի բան կատարվի: Հայերը ոչինչ չունեին հրամցնելու, թերևս միմիայն իրենց օգնություն հայցող ձեռքերը, ինչը և եվրոպական տերությունների հետ ցանկացած քաղաքական ասուլիսում նրանց դարձնում էր անտեսանելի:

Ֆրանսիական պառլամենտի ստորին պալատի մի բարեկամ պատգամավոր ինձ շատ հստակ էր բացատրել այդ երևույթը:

– Անրի,– նախատեց ինձ,– ի՞նչ երազող ես: Մի՞թե չգիտես, որ հոգիները կշիռ չունեն:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋԵՐ 1895

24. ԲԱՐՈՆ ՄԱՐՇԱԼ ՖՈՆ ԲԻԲԵՐՇԹԱՅՆ

1895 թ. դեկտեմբերի 27-ին Գերմանիայի դեսպան ֆոն Բիբերշթայնը Կոստանդնուպոլսում հրավիրեց ողջ դիվանագիտական ներկայացուցչությանը իր դեսպանատուն՝ հավակնելով, որ դա իր կողմից լինելու է բարի կամքի դրսևորում: Իր գործընկերների կողմից նա մեծ համակրանք չէր վայելում, բայց բոլորս էլ որոշեցինք ներկա գտնվել: Պոլ Կամբոնը դեռ Ֆրանսիայում էր և որպես առաջին քարտուղար՝ ինձ վրա էր դրված ի տեղի դեսպանի պաշտոնավարությունը: Գերմանիայի հետ մեր դիվանագիտական հարաբերությունները սառն էին և մեկուսացած: Սակայն ֆոն Բիբերշթայնը ցանկանում էր կոտրել սառույցը, քանի որ մեզ հայտնի էր, որ եկող տարվա սկզբներին Վիլհելմ II-ը պատրաստվում է ուղևորվել Թուրքիա: Իսկ Բիբերշթայնը ցանկանում էր ցույց տալ, որ մշակույթների դաշնության իր քաղաքականությունը,– ինչպես ինքն էր այն անվանում, որին հետևում էին եվրոպական մնացած երկրները,– թեև ճիշտ չէր, բայց իր համար խիստ շահեկան էր՝ սուլթանին համոզելու համար, և որ Գերմանիան էր այդ քաղաքականության ճանապարհի ուղենիշը: Կամբոնն ինձ մի ծածկագրված հեռագիր էր ուղարկել՝ զգուշացնելով ինձ, որ առնվազն երկու ամիս դեռ ուշանալու է, և որում ինձ պատմում էր Գերմանիայի բռնած երկակի դիրքի մասին, բայց նաև հասկացնում, որ որևէ ընդհարման նրանց հետ չպետք է գնանք, քանի որ Գերմանիայի հետ կապող շատ ընդհանուր շահեր ունենք: Շատ զայրացած էր մեր կառավարության վրա, քանի որ չնայած հայերի կոտորածներին Էրզրումում, Մարաշում, Տրապիզոնում և առհասարակ գործնականում բոլոր այն քաղաքներում ու գյուղերում, որտեղ ապրում էին հայեր, պաշտոնական ոչ մի մեղադրական հաղորդագրություն չէին ուղարկել Թուրքական կառավարությանը, ոչ էլ իրեն էին թույլ տվել դա անել՝ անգամ նկատի առնելով այն վտանգը, որ հարկ կլիներ պատասխան տալ Ֆրանսիայի հասարակայնության դժգոհության առջև, որը մեծ համակրանք էր տածում հայ ժողովրդի նկատմամբ:

Նրա հեռագիրն ընդամենը մի ժեստ էր, որին ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Եվրոպական հասարակական կարծիքը դարձել էր եսասեր, և բողոքները հայերի սարսափելի իրավիճակի մասին այլևս արձագանք չէին գտնում դիվանագիտական գրասենյակներում: Դրանով զբաղվում էին սուլթանի կողմից «գնված» թերթերը, որոնք չարունակում էին խոսել հեղափոխական հայերի, բանդիտիզմի, ավազակության և թուրք խաղաղ քաղաքացիների դեմ հայ խռովարարների մշտական թշնամությունների մասին: Կարծես աշխարհը կույր էր ու համր՝ ճշմարիտ իրականության առջև: Սակայն դա էր Բարձր Դռան քաղաքականությունը, և ոչ ոք ընդունակ չէր ընդդիմանալ նրանց, ամեն բան իր տեղը դնել:

Կոստանդնուպոլսում Գերմանական դեսպանատունը դարձել էր Օսմանյան կայսրությունում Կենտրոնական Եվրոպայի տերությունների իշխանության կենտրոնը և թուրքական բանակի գլխավոր շտաբը: Թուրքական զինված ուժերում ոչ մի բան տեղից չէր շարժվում առանց գերմանացիների համաձայնության, որոնք ամեն ինչ անում էին իրենց ուզածով, նշանակելով ղեկավարներ և փոխելով նրանց, ովքեր նվազագույն դժգոհություն էին հանդես բերում այդ իրավիճակում:

Բոլորին քաջ հայտնի էր, որ Աբդուլ Համիդը չէր վստահում իր սեփական գեներալներին և, այնուամենայնիվ, ասես կուրորեն հավատում էր գեներալ ֆոն դեր Գոլցին, ում նշանակել էր որպես ռազմական ակադեմիաների տնօրեն և բանակի հետ կապված՝ բոլոր հարցերի՝ ռազմամթերք ու զենքեր գնելու, իր անձնական խորհրդատու:

Հասա գերմանական դեսպանատուն ուղիղ ժամը տասներկուսին՝ հրավիրատոմսի մեջ նշված ժամին: Ճաշը ծրագրված էր ժամը մեկին, հետո փոխանակելու էին տպավորություններ, շնորհավորանքներ և բարեմաղթանքներ, և միջոցառումը վերջանալու էր ժամը չորսին: Ամեն ինչ ստույգ և ճշգրիտ: Պրուսական և ռազմական, որոնք դառնում էին հոմանիշներ:

Երբ մտա, անթերի հագուկապով մի սպասավոր վերցրեց վերարկուս, գլխարկս և գավազանս, կրունկներով խփելով գետնին՝ որպես ողջույն: Մեկ ուրիշն ինձ ուղեկցեց սրահի միջով դեպի մի ապակեպատ դիտարան այգու վրա, և բարոն ֆոն Բիբերշթայնն ինձ ողջունեց՝ գլուխը խոնարհելով և ձեռքսեղմումով:

– Սիրելի Անրի, ուրախ եմ ձեզ մեզ հետ տեսնել, բայց մենք չատ ուրախ կլինեինք նաև Պոլ Կամբոնի ներկայությունից: Բարի գալուստ գերմանական տարածքում: Սա իսկապես Եվրոպա է:

Դեսպանը ակնարկում էր, որ դարձյալ գտնվում ենք քաղաքակիրթ վայրում, որովհետև գերմանացիների համար, Թուրք մուսուլմանները, անկախ ամեն ինչից, դեռ արժանի չէին այդ կոչումին, թեկուզ կայզերը անգիր սերտած լիներ Ղուրանը և եղբայրաբար համբուրած լիներ Աբդուլ Համիդի երկու այտերը:

Ես մտա ընդարձակ դահլիճը և սկսեցի ողջունել տարբեր մարդկանց, մինչև որ հանդիպեցի Նիկոլայ Գիրսին՝ ռուս արտգործնախարարին, ում հետ ծանոթացել էի մեր դեսպանատանը՝ ընթրիքներից մեկում, և ով ինձ ողջունեց որոշ սառնությամբ: Դրան կարևորություն չտվեցի՝ վերագրելով մեր երկու երկրների միջև եղած քաղաքական հակասություններին: Ռուսաստանն ուներ շահեր, որոնց հետ Ֆրանսիան համամիտ չէր, և ընդհակառակը: Նա մտքեր էր փոխանակում Լոբանով-Ռոստովսկու՝ Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանի հետ, որը Կամբոնի հետ անձնական հրաչալի հարաբերություն ուներ, բայց ոչ քաղաքական:

– Անրի, կուզենայի իմանալ, թե ինչ կարծիքի եք այն ամենի վերաբերյալ, ինչ կատարվում է: Պետք է հանդուրժենք, որ կիսալուսինը Թուրքիայում բոլոր քրիստոնյաների վերջը տա՞: Գիտե՞ք, ինձ անհանգստացնում է այն, որ վաղվա օրը մեղադրելու են քրիստոնյա ժողովուրդներին, որ համաձայնության չեն եկել միասին, և հավանաբար իրավացի են լինելու: Եկել է այն պահը, որ սուլթանին ասենք: Տեսեք, թե ինչ օրի ենք հասել: Այս իրադրությունը Ռուսաստանի համար դարձել է անտանելի: Հետո երբ խոսում ենք Ֆրանսիայի, Անգլիայի, նույնիսկ Գերմանիայի հետ, դուք բոլորդ համաձայն եք, որ չենք կարող հապաղել, անհրաժեշտ է վճռական միջոցներ ձեռնարկել: Բայց երբ գալիս է վճռական պահը... Դուք միայն մտածեք, հավանաբար հարյուր հազար հայեր կոտորվեցին, կամ երկու հարյուր հազար, իսկ մենք քաղաքականությունից ենք խոսում: Այդպես չպետք է լինի: Իմ կարծիքով դա անընդունելի է:

Ստիպված ընդհատեցի նրան, քանի որ այդ նույն պահին մոտենում էր Ֆոն Բիբերշթայնը, և հարկ չկար ստեղծել մի դիվանագիտական ընդհարում սեփական նստավայրում:

– Ահ, ինչ հաճելի է ձեզ բոլորին միասին տեսնել: Եթե քաղաքագետներն ավելի դիվանագետ լինեին, աշխարհն ուրիշ կլիներ: Դուք

չե՞ք հավատում: Տեսեք այս խաղաղ, կիրթ և սիրալիր մարդկանց հավաքույթը: Ուրիշ ի՞նչ կարելի է խնդրել կյանքում: Հիմա, երբ ինձ չեն լսում մեր ռազմական խորհրդականները, ձեզ կուզենայի ասել, որ ինձ ամենևին չի հետաքրքրում այն, ինչ ձեռք է բերվում ուժով և բռնությամբ:

Այդ պահին Լոբանով-Ռոստովսկին, որ երբեք լեզուն ատամի տակ չէր պահում, չկարողացավ իրեն զսպել:

– Բայց, սիրելի Բիբերշթայն, ի սեր Աստծո, դուք նման չեք գերմանացու: Չէ որ դուք իսկական սպայական գերազանց բանակ ունեք Կոստանդնուպոլսում: Տեսնենք՝ դո՞ւք չեք այն միակ գերմանացի պացիֆիստը, որին ճանաչում եմ: Իսկապես, դուք արտասովոր դիվանագետ եք, քանի որ ասում եք այն, ինչ հաստատ չեք մտածում... Գուցե դրանով մենք նման ենք իրար. դուք և ես, բայց ընկերների շրջանում ես գոնե ասում եմ այն, ինչ մտածում եմ: Հիշեք այն համաձայնագիրը, որ կնքեցինք երկու տարի առաջ: Թե՞ արդեն մոռացել եք:

Ֆոն Բիբերշթայնը չէր թողնում այն տպավորությունը, թե համաձայն է իր գործընկերոջ կծու մեկնաբանության հետ, և մի պահ նրան նայեց խոժոռ, թեև դեմքը անմիջապես ծամածռեց՝ փորձելով ժպտալ:

– Ոչ, Ռոստովսկի, դուք ի վիճակի չեք ինձ բարկացնել, բայց ձեզ ասեմ, որ դուք իմ երբևէ տեսած ամենաքիչ ռուսն եք կամ համարյա լավ գերմանացու տեղ կանցնեք: Բայց ի՞նչ կարող ենք անել: Ես էլ գոհ չեմ այն բանից, ինչ տեղի է ունենում այս երկրում: Եթե խելացի լինեինք, կկարողանայինք այն իրար մեջ կիսել: Ինձ թույլ կտա՞ք, որ դրա վրա խաղամ: Միայն որպես զվարճություն..., ժամանակն անցկացնելու համար: Այո՞: Տեսեք, անգլիացիների համար Եգիպտոսը, Պաղեստինը և Արաբիայի մի մասը: Ֆրանսիացիների համար... Անրի՞, այո՛, ձեզ համար այդ Լիբանանը, որ ձեզ այդքան դուր է գալիս Սիրիան: Իհարկե, Սիրիան, և քանի որ Ալժիրն ու Մարոկկոն ձերն են՝ ձեզ պահեք դրանք: Վայելե՛ք, թեև անկեղծորեն ձեզ ասեմ, որ այնքան էլ ձեզ չեմ նախանձում, քանի որ աշխարհի այդ մասը միշտ լինելու է կրետների բույն: Իսկ դո՞ւք, ձերդ մեծություն Պաուսա, գեղեցիկ Իտալիայի դեսպան: Տորթի ո՞ր կտորն եք ուզում: Այո՛, այո՛, հիմա ես կգուշակեմ... Տեսնենք Տրիպոլիտանիան և Կիրենայիկան: Իսկ ռուսները, ի՞նչ կուզենային ռուսները, ապա տեսնենք, սիրելի Ռոստովսկի և չատ սիրելի Գիրս: Գուցե կբավարարվե՞ք՝ վերահսկելով Դարդանելից սկսած մինչև Սև ծով: Կոստանդնուպոլսի

բանալիները... Գուցե և հնարավոր լիներ: Սպասեք, մի կորցրեք ձեր հույսը: Իսկ ի՞նչ կմնար մեզ՝ գերմանացի զավթիչներիս: Մեզ այսպես չե՞ք անվանում, երբ ներկա չենք... Դե ես ձեզ կասեմ, որպեսզի ոչ մի չփոթմունք չլինի,– ֆոն Բիբերշթայնն այդ պահին չէր ժպտում և իր հայացքը դաժանացել էր: – Մենք ուզում ենք Փոքր Ասիան, Միջագետքից մի կտոր... մինչև Պարսից ծոցը, Բալկաններից մի մաս և այս ցիրուցան տարածքը, որ կոչվում է Հայաստան: Ամբողջը ո՛չ, ամենաարևելյանը ձեզ լինի, Գիրս... Ոչինչ չենք ուզում իմանալ Կովկասի մասին: Դուք նույնպես օգտվե՛ք... և մի բողոքեք բաժանելուց, ուտելուց հետո կարող էինք մեր գործը պատվով ավարտել և բոլորս՝ գոհ: Ահ, Իսպանիայի սիրելի դեսպան: Դուք ունեցել եք այնքան գաղութներ, որ կուշտ եք խնդիրներից, որովհետև կհամաձայնեք ինձ հետ, որ գաղութ կոչվածը գլուխկոտրուկ է: Ուրեմն առաջարկում եմ, որ Իսպանիան հետ տանի սեֆարդիներին: Ինչպես են իրենք ասում՝ սեֆարդիտներին: Նրանց դուրս չպրտեցիք այնտեղից, ուրեմն հավաքեք նրանց նորից, քանի որ գերմանացիներս արդեն չափից ավելի հրեաներ ունենք մեր երկրում: Այսպիսով՝ խնդիրներն ավարտվեցին: Մենք՝ գերմանացիներս, պրուսացիներս, գերմաններս, քառակուսի գլուխներս... Ինչպե՞ս կուզեք կոչել մեզ: Մենք ռազմատենչ չենք, գործնական ենք և անկողմնակալ... Ցանկանում ենք դաշինք և համընդհանուր խաղաղություն բոլոր երկրների միջև:

– Իսկ ինչ է կատարվելու հայերի հետ,– իմ հարցադրման սրությունը փոխեց ցինիզմի մթնոլորտը, որ ֆոն Բիբերշթայնը հավակնել էր տալ հավաքույթին: – Քանի որ, Գերմանիայի պարոն դեսպան, դուք ինձ հետ համամիտ կլինեք, որ եթե կան հայեր, նշանակում է գոյություն ունի մի տարածք՝ Հայաստան անունով: Եվ կարծում եմ, որ հոգու խորքում իրավացի կլինեք: Տեսեք, ձեր այդ բաշխումը ինձ լավ է թվում մինչև որոշակի կետ, բայց ձեզ չնորհակալ կլինեմ, եթե լսեք իմ տեսակետը,– այդ ընթացքում մի խումբ մարդիկ խմբվել էին մեր շուրջ, և բոլորն ինձ սպասողական զննում էին՝ ներառյալ մեզ հյուրընկալողը: – Եթե խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի: Ուզում եմ ասել ձեզ. ինչպե՞ս ենք մեր մեջ բաժանելու մի երկիր՝ առանց հաշվի առնելու նրա օրինական սեփականատերերին: Այսինքն՝ պետք է լսենք Թուրքերին և նրանց տանք նվազագույնը՝ այն, ինչը նախկինում չի պատկանել ուրիշներին:

Բալկանները՝ սերբերի, մակեդոնացիների, բոսնիացիների, հերցեգովինացիների, ալբանացիների, կոսովարցիների, չեռնոգորցիների և այլոց հայրենիքն է: Բուլղարիան բուլղարներինն է, և այսպիսով կարող ենք բաժանել այս մեծ տորթը բոլոր նրանց միջև, որոնց օրինականորեն այն պատկանում է: Իսկ «Հայկական հարցը»: Որքան ինձ հայտնի է, Կիլիկիան արդեն իսկ Հայաստան էր շատ ավելի վաղ ժամանակից, երբ դեռ գոյություն չունեին Մեծ Բրիտանիան, Գերմանիան կամ Ֆրանսիան: Իսկ Պատմական Հայաստանը Տրապիզոնից սկսած, հասնում էր մինչև Դիարբեքիր և Երևանից սկսած մինչև Վան: Առնվազն այդքան: Եղե՞լ եք այնտեղ: Տեսե՞լ եք նրանց հինավուրց խաչքարերը: Գիտե՞ք նրանց այբուբենը, նրանց մշակույթը. քրիստոնյաներ են, այն քրիստոնյա ժողովուրդներից, որոնց մասին քիչ առաջ խոսում էր իմ սիրելի Ռոստովսկին: Եվ ի՞նչ պետք է անենք: Մոռանանք, որ Եվրոպայի քաղաքակիրթ և ուսյալ ազգե՞ր ենք: Ո՛չ: Գուցե Թուրքիա՞ն է Եվրոպայի հիվանդ մարդը, գուցե շատ ավելի՞ն է ուզում զավթել, քան ի վիճակի է: Այլևս չունի օսմանյան առաջին սուլթանների ուժը: Պատճառը գուցե և բյուրոկրատիան է, վատ կառավարումը, կաշառակերությունը, որով տառապում են բոլոր պաշտոնյաները և համարյա բոլոր քաղաքագետները: Բայց ինձ ներող կլինեք, որ այստեղ, գերմանական տարածքում ասեմ նաև, որ նրանց իշխանամոլներն են այս կայսրությունը անկման հասցրել: Բայց դուք, սիրելի բարեկամներ, գիտեք, որ բաժանման մասին խոսելիս առաջին հերթին պետք է խոսենք արդարությունից: Այստեղ կան շատ հույներ, որոնք ապրում են այս տարածքներում հազարավոր տարիներ ի վեր: Որտե՞ղ է ծնվել Հերոդոտոսը՝ պատմահայրը. Հալիկառնասոսում, նրա կենդանության օրոք էր պատերազմը Հունաստանի և Պարսկաստանի միջև, այսինքն՝ Արևելքի և Արևմուտքի միջև, որն ինչ-որ կերպ կրկնվում է հիմա:

Ո՛չ, այնքան հեշտ չի լինի, որովհետև երբեք հեշտ չէ վերականգնել արդարությունը և մանավանդ, երբ այն, ինչ կատարվում է մեր շուրջ, դիտում, նայում ենք առանց ցնցվելու. ինչպես են սրի քաշվում հարյուր հազարավոր անմեղ մարդիկ, դիտում, մինչ մեր քաղաքագետները վիճում են մի քարտեզի շուրջ, թե կարմիր գիծը մի միլիմետր ավելի՞ բարձր է, թե՞ ցածր:

– Դե լավ, լավ,– ֆոն Բիբերշթայնը միջամտեց այդ պահին,– սիրելի ի տեղի դեսպան,– նկատեցի, թե ինչպես էր ընդգծում մակդիրը,– դուք հիմա փչացնելու եք հավաքույթը, իսկ ես դրան համաձայն չեմ: Տեսեք, դիվանագետներ ենք, դա նույնն է, թե լինել որևէ խաղի դատավոր. կարող ենք կողքից նշել սխալը, բայց չենք կարող խաղալ: Իսկ երբ մեկը զուտ անհատական ձևով է մոտենում ամեն բանի, հավակնում է ազդել խաղի վրա, հետևաբար չի կարող լինել

դատավոր, բայց մի նեղացեք, գիտեմ, որ դուք դա անում եք ազնիվորեն, և ձեր կարծիքները հրաշալի են:

Սակայն պնդում եմ, լինենք գործնական և թույլ տվեք ձեզ մի օրինակ բերել: Եթե տրամադրվեինք, որ պետք է փրկեինք թուրքերին կամ հայերին, որի՞ն կվճռեինք, ի վերջո: Իհարկե, այդ վերջինները քրիստոնյաներ են, բայց դա դեռ ամենակարևորը չէ, չէ՞ որ կան հինգ անգամ շատ թուրքեր, և բոլորն էլ մարդիկ են, ոմանք մուսուլմաններ, մյուսները՝ քրիստոնյաներ, բայց ի վերջո մարդկային էակներ: Մտածեք դրա մասին, քանի որ շատ ժամանակ չի անցնի՝ նախքան դժվար որոշումներ կայացնելը: Դրանով չեմ ուզում ասել, որ չփորձենք օգնել բոլորին, իհարկե: Բայց դե լավ, այս հավաքույթը շատ լուրջ դարձավ: Միշտ էլ այնքան լուրջ բաներ ունենք քննարկելու, այսօր կարող էինք պարզապես հանգստանալ: Այնպես որ, այսօրվա հարցը ավարտվել է, իսկ հիմա անցնենք ճաշասրահ՝ մի պայմանով, որ արգելված է խոսել քաղաքականությունից: Օգտվենք այս լավ ժամանցից:

Այդտեղ ավարտվեց քննարկումը, և խոսեցին միայն գինիներից և ուտելիքներից, որոնք Թուրքիայում շատ էին և իրոք շատ համեղ, նրանց համար, ովքեր վճարունակ էին: Գինիները գալիս էին հայկական մառաններից և ինչ մնում էր ձկնկիթին, պանիրներին և դելիկատեսներին. գործնականում բոլոր դեսպանատներին մատակարարում էին հայ վաճառականները:

Դեսպան Ֆոն Բիբերշթայնը չէր խնայել ո՛չ ջանք և ո՛չ էլ նախահաշիվ մեզ հյուրասիրելու համար, չնայած որ ցանկանում էր իրեն հավուր պատշաճի պահել, մթնոլորտը տոնական չէր: Այնտեղ գերտերությունները չափից ավելի էին կարևորում իրենց շահերը և բացի այդ՝ Գերմանիայի քաղաքականությունը այդ օրերին շատ ագրեսիվ էր Բարձր Դռան նկատմամբ. առանց հարգելու մնացած հավատարմագրված դեսպանությունների ո՛չ ձեռք բերած իրավունքները և ո՛չ էլ հաստատված հարաբերությունների վաղեմությունը՝ արմունկներով հրմշտելով խցկվում էր այնտեղ, ուր պատմությունը նրան չէր արտոնել:

Երբ ընդունելությունն ավարտվեց, Օգյուստ Մենիեն՝ Դիարբեքիրի մեր հյուպատոսը, ինձ հարցրեց, թե կարո՞ղ եմ նրան տանել դեսպանատուն, և ինձ հետ կառք նստեց:

Նրա ասածները լսեցի ուշադրությամբ:

— Տեսեք, Անրի, թե ինչ տեղի ունեցավ Դիարբեքիրում,— ես ներկա էի,— հոկտեմբերի վերջին: Վանից, Սասունից, Էրզրումից ու Տրապիզոնից եկող լուրերն այնքան տագնապալից էին և միջավայրն այնքան ճնշող, որ հյուպատոսարանում ահավոր վախենում էինք: Ինչպես գիտեք, այնտեղ ապրում են հազարավոր հայեր, և ամբողջ հին քաղաքը, պարիսպներով շրջապատված, վաղնջական ժամանակներից նրանց է պատկանում: Կարող ենք ասել, որ մի կենտրոնական տեղ է, որտեղ հանում են Բաղդադից կամ Պարսկաստանից եկող շատ քարավաններ և թեև վերջին տարիներին թուրքերի, քրդերի, արաբների և հայերի միջև համագոյությունը վատացել է, հույս ունեինք, որ ամեն բան ավելի՝ այս աստիճան չէր վատանա գնալով:

Գնացի վալուն՝ Քեմալ փաշային տեսնելու, այն թուրք պաշտոնյաներից մեկին, որոնք բոլորին նայում են բացարձակ արհամարհանքով, բայց չեն զլանում խոնարհվել օտարերկրացի ներկայացուցիչների առջև: Դիարբեքիրում պատմում էին, որ նա հարբստացել է թույլտվություններով և արտոնագրերով՝ չորթելով բոլորից անխտիր, բայց մանավանդ քրիստոնյաներից: Հյուպատոսարանում այն կարծիքին ենք, որ հրաման ունեն այդպես վարվելու, կարծես նրանց զգուշացնում են, որ ո՛չ իրենց կյանքը, ո՛չ էլ ունեցվածքը որևէ արժեք չունեն:

Քեմալ փաշան ինձ վստահեցրեց, որ ոչ մի բանից չանհանգստանամ, որովհետև ոչինչ էլ չի պատահի, եթե միայն քրիստոնյաները կարգուկանոնը չխափանեն: Սա արդեն իսկ իր արտոնության ցուցադրումն էր, քանի որ չնայած մուսուլմանների կողմից գործադրվող սադրանքներին՝ քրիստոնյաներն ավելի համբերատար էին իրենց դրսևորում, քան Սուրբ Հովեն:

Այնուամենայնիվ վերջին շաբաթների ընթացքում մթնոլորտն ավելի էր վատացել: Շատ մուսուլմաններ մահով սպառնում էին քրիստոնյաներին, և մեզ լուրեր էին հասել մի քանի ծանր խառնակչությունների մասին: Ակներև էր, որ ցանկացած պահի կարող էր կայծ բռնկվել, իսկ եթե դա տեղի ունենար, ոչ մի կերպ հնարավոր չէր լինի աղետը կասեցնել: Քեմալ փաշայի առանձնատնից դուրս եկա այնքան անհանգստացած, որ անմիջապես հեռագրեցի դեսպանատուն, քանի որ այդ կարգի ցուցումներ էր ինձ տվել մսյե Կամբոնը:

Հաջորդ օրը՝ հենց անցած կիրակի՝ կեսօրին, սկսվեցին կրակոցները: Հետո իմացա, որ նրանց հրաման էր տրվել, և մինչև իսկ իրենք՝ կայազորի զինվորները, թուրք քաղաքացիները և շատ քրդեր, որոնց խոստացել էին ավարի նշանակալից մասը, կրակում էին հայկական եկեղեցիների ու խանութների վրա և ցանկացած տարիքի ու դիրքի քրիստոնյայի վրա, ով որ համարձակվեր դուրս գալ փողոց: Փաստո-

րեն հյուպատոսարանը չատ մոտ էր գտնվում հայկական եկեղեցուն, և մենք տեսնում էինք, թե ինչպես էին մուսուլմանները բարձրանում տանիքները՝ կրակելու համար չարունակ, նորից ու նորից: Ձեզ կարող եմ վստահեցնել, որ իշխանություններից ոչ մեկը նվազագույնը չարեց խույս տալու համար այն բանից, ինչ կատարվեց:

Սարսափահար տեսանք, թե ինչպես էին Թուրք քաղաքացիները, նույնիսկ հենց անկանոնականները փողոցներում հետապնդում իրենց զոհերին, հալածում նրբանցքներում և չուկաներում նրանց դանակահարելու համար: Տեսա զարհուրելի տեսարաններ, որոնք ինձ որպես մարդ արարածի ամոթահար են անում. ամեն տեսակի ոճրագործություններ, բռնաբարություններ, թալաններ, հրդեհներ... Մի քանի հայերի հաջողվեց հասնել մինչև հյուպատոսարան օգնություն խնդրելու, բայց ինչպես կհասկանաք, չատ քիչ բան կարող էինք անել նրանց օգնելու համար:

Այնպես եղավ, որ մի քանի կանայք, մոտ տասը թե տասներկու երեխաների հետ, հասցրին մտնել հյուպատոսարան: Բայց այնտեղ, բացի Ֆրանսիայի դրոշից, ուրիշ պաշտպանություն չունեինք և չկարողացանք արգելել, որ մի քսան համիդիներ չմտնեին մի խումբ քրիստոնյաների հետևից: Դա մի ահավոր բան էր: Հարձակվեցին նրանց վրա և գլխատեցին բոլորին, խղճահարության նշույլ չունենալով կանանց և երեխաների հարցում... Վազելով իջա աստիճաններով արգելելու համար և միայն հիշում եմ նրանցից մեկին ինձ վրա հարձակվելիս:

Ահավասիկ այդ նշանը,– Մենիեն իջեցրեց գլուխը, որպեսզի տեսնեի մեծ մի սպի: – Երբ գիտակցությունս տեղը եկավ, գետնին փռված էի, մի քանի ջարդված կահույք, սալահատակը՝ արյունոտ, կեղտոտ լվացած, կարծես ցանկացել էին հետքերը վերացնել: Ահմեդը՝ իմ կառապանը, ինձ ամեն բան հաստատեց: Դիակները տարել էին հյուպատոսարանից: Ինչ սարսափելի իրադարձություն... Եկել եմ ներկայացնելու իմ հրաժարականը: Ես արիություն չունեմ այնտեղ վերադառնալու, չատ եմ ցավում, մսյե դը Լատուր, բայց դուք ինձ կհասկանաք: Կին և երեխաներ ունեմ, ի՞նչ կարող եմ անել... Ձնայած այդ ամենին՝ հաջորդ օրը խոսեցի մի քանի նշանավոր մուսուլմանների հետ, որոնք դեպքը հիմնավորեցին իրենց օգտին, այսինքն՝ որ մեղքը քրիստոնյաներինն էր: Բայց նույնիսկ այսպես՝ ինձ հավատացրին, որ կփորձեն կարգուկանոն իրականացնել: Մի քանի ժամ անցավ, մինչև որ վերջապես դադարեցին կրակոցները, և լուսադեմին ամեն ինչ թվում էր հանդարտ, թեև ինձ զգուշացրին, որ նահանգում

հարձակումները չարունակվում են և իսկապես, երկու չաբաթ չարունակ ոչ մի հայ իրեն հանգիստ չէր զգում:

Ըստ մեր հաշվարկների՝ առնվազն տասնհինգից քսան հազար հայեր սպանվեցին վիլայեթում: Նրանց մեջ կանայք և երեխաներ: Վերջիններից հարյուրավորներ առևանգվեցին, և փորձը մեզ ցույց է տալիս, որ այլևս չեն հայտնվի՝ անդարձ կորան:

Մեր գործակալները մեզ տեղեկացրին, որ այդ գործողությունները ամբողջապես կազմակերպված բնույթ էին կրում: Գիտենք, որ ոստիկանությունն ու բանակը զենքեր էին բաժանել և բացատրել նպատակները: Հրամանները եկել էին Կոստանդնուպոլսից և ինչպես այլ վիլայեթներում, որոնցում մեծ թվով հայեր են ապրում, կոտորածները հրահրվել էին Թուրքական իշխանությունների կողմից:

Հետո ամենաանպատկառ ձևով կատարվածի համար մեղադրեցին հայ հեղափոխականներին՝ սադրանքների, սպանված Թուրքերի և իրենց հրդեհած տների համար: Ձեզ կարող եմ վստահեցնել, որ սպանված մեկ Թուրքի դիմաց մահացել են հարյուրավոր հայեր: Ինչ վերաբերում է Դիարբեքիրում Գերմանիայի հյուպատոսարանին, ինձ համար չատ ցավալի է, սակայն ստիպված եմ ձեզ ասել, որ մեր իրազեկիչները մեզ ասացին, որ Թուրք բարձր աստիճանավորները հավաքվել էին այնտեղ՝ նախքան կոտորածի սկսվելը: Նրանք պնդում են, որ ցանկացել էին դեմն առնել, բայց Թարգմանիչներից մեկը, որը Թարգմանում է ստացված գրությունները և որը աշխատում է մեզ համար որպես իրազեկիչ, ինձ վստահեցրեց, որ գերմանացիները չատ լավ տեղյակ էին, Թե ինչ է կատարվելու և համագործակցեցին Թուրքերի հետ: Դա չլսված բան է, բայց դուք պետք է իմանաք այդ, քանի որ Ֆոն Բիբերշթայնը այսօր ձեզ ստել է: Հայերը չեն կարող որևէ սպասելիք ունենալ Գերմանիայից, քանի որ պրուսացիներն ամեն կերպ աջակցում են սուլթանին և մինչև վերջ կանեն այդ: Իրոք չգիտեմ, Թե ինչ կարող ենք անել այդչափ անարդարության դեմ, բայց հիմա ավելի լավ եմ զգում, որ դուք գիտեք դա և ձեզ երախտապարտ կլինեմ, եթե այս ամենը հաղորդեք պարոն դեսպանին, քանի որ այն բանից հետո, ինչ տեսա, ինչպես ձեզ ասացի, վերադառնում եմ Ֆրանսիա, իմ տուն,– չեմ ուզում լինել գուժկան, բայց ներքուստ կռահում եմ, որ այստեղ չատ ավելի վատ բաներ են կատարվելու,– առաջին հերթին հանուն իմ ընտանիքի: Տեսել եմ, Թե ինչպես են դանակահարում անմեղ մարդկանց հենց այնպես՝ հեշտ ու հանգիստ, ասես առանձնապես բան չի արվում, ներկա եմ գտնվել բռնաբարությունների և առևանգումների, և այլևս ի վիճակի չեմ տանել նման

բան: Այս առավոտ հանձնել եմ իմ հրաժարականը և եթե այսօր եկել եմ այստեղ՝ պատճառն այն է, որ ուզում էի անձամբ դա պատմել մեր դեսպանին: Ահավոր նողկանք եմ զգում այս ամենի հանդեպ և իրոք, հիմնավոր դրդապատճառներ ունեմ ձեզ ասելու, որ այդ բարոն ֆոն Բիբերշթայնը վատ մարդ է, մի լպիրշ՝ ցինիկ սրիկա:

Մնաք բարով, մայե դը Լատուր: Դուք ինձ միշտ կգտնեք, երբ իմ կարիքը զգաք, Գրուշե Լա Վալասում՝ Նորմանդիայի սրտում, մտադիր եմ այնտեղ հանգիստ կյանք վարել:

Պիեռ Մենյեն իջավ կառքից՝ ձեռքս սեղմելուց հետո: Ես նույն մտատանջություններն ունեի, ինչ ինքը, բայց ոչ նույն անկեղծությունը:

25. ՄԱՐԻՑԱ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

Էմիլ Բագրատյանի հետ իմ կապը, թեև միշտ զգուշավոր հեռավորության վրա, բայց այդ ժամանակահատվածում շատ ուժեղ էր: Փոխադարձաբար իրար հարգում էինք, և ինքը, լինելով ՀՀԴ-ում կարևոր մի անձ, երբեմն օգտվում էր իմ ծառայություններից, աշխատելով, սակայն, չվարկաբեկել ինձ: Դա կարող էր ինձ համար ճակատագրական լինել և շատ բացասական հենց իր՝ ՀՀԴ-ի համար, քանի որ իմ դիրքն ինձ բերում էր շատ կարևոր տեղեկատվություն: Դա էլ ինձ ստիպեց, որ կապեր հաստատեի բացառապես Նիկոլ Կաղիֆյանի՝ դեսպանատան թարգմանիչներից մեկի միջոցով, ՀՀԴ-ի անդամ, որը փոխանցում էր տեղեկությունները Կարապետ Մաթոսյանին՝ թանկարժեք գորգերի մի վաճառականի, ով էլ իր հերթին դրանք հասցնում էր Էմիլ Բագրատյանին:

Դա իրոք չտեսնված վստահության հազվագյուտ կապերի մի ամուր շղթա էր: Նրանցից յուրաքանչյուրը կապ էր պահպանում միայն այն մարդու հետ, ում նշանակված էր և ուրիշ ոչ ոքի հետ: Նույնիսկ այս ձևով երբեմն գաղտնի ոստիկանությանը կամ սուլթանի իրազեկողներին, որոնք ինչ-որ տեղ նույնն էին, հաջողվում էր քանդել շղթայի մի մասը, բայց ավելի ոչինչ, քանի որ քանդվում էր մի օղակը, բայց նրանց անհնարին էր մնում հասնել ավելի հեռուն:

Ես ինքս ինձ չէի խաբում: Շատ անգամներ էի խորհում այն մասին, թե որքան դժվար էր ինձ համար, այդ հարցում ներքաշված լինելով և հարուցված խնդիրներով, պահպանել կշռադատված և չեզոք դիրք: Նաև գիտակցում էի, թե որքան վտանգավոր էր իմ վիճակը և չնայած այն համոզմունքին, որ հայերի մեջ գոյություն չուներ դավաճանություն բառը, ոչ ոքի չէի կարող վստահել: Հենց ինքը՝ Պոլ Կամբոնը կմնար զարմացած և եթե մի բան կասկածեր, ինձ կստիպեր հրաժարական տալ և անմիջապես լքել Թուրքիան: Նա շատ անգամներ էր ինձ հանդիմանել՝ իր կարծիքով հայերի նկատմամբ չափից ավելի համակրանք ցուցաբերելու առթիվ:

– Ամբողջ մեղքը միայն մի կողմինը չէ, Անրի: Հայերն իրենց կողմից քիչ ջանքեր են դնում իրավիճակը շտկելու համար: Թեև ընդունում եմ, որ Թուրքերը շատ վատ են վարվում: Բայց հայերի կողմից հարցի կարգավորման մեջ ոչ մի կամք չի գործադրվում, և այս ճանապարհով ոչ մի լավ բան չենք կարող սպասել:

Այս խոսքերն ասաց 1896 թ. ապրիլի 25-ին:

Չկարողացա առարկել նրան, թեև գիտեի, որ Կոստանդնուպոլսում պատրաստվում են մոտալուտ կոտորածի, որովհետև իմանալ այդ տեղեկությունը նույնն էր, ինչ ինքս ինձ մատնեի: Բայց ՀՀԴ-ում կասկած կար, որ սուլթանը որոշել է դաժան հաշվեհարդար տեսնել հայերի հետ հենց մայրաքաղաքում, և որ իր գործակալները հրահրելու են մեծ չափերի կոտորած՝ ապացուցելու համար, թե ով է ղեկավարում Թուրքիան:

Բագրատյանից մի ուղերձ ստացա, որում նա ինձ խնդրում էր, որ դեսպաններն անմիջապես հավաքվեին Կոստանդնուպոլսի պատրիարք Մատթեոս Իզմիրլյանի մոտ, որը նույնպես հայտնի էր որպես «Երկաթե պատրիարք»՝ իր համոզմունքներում կայուն լինելու պատճառով:

Ոչնչի չհասա: Պոլ Կամբոնն ինձ տարօրինակ նայեց, երբ նրան հորդորեցի ժողովի հարցում, թեև ի վերջո տեղի տվեց: Բայց ոչ անգլիացի, ոչ գերմանացի և ոչ էլ ռուս դեսպանները ոչինչ չուզեցին իմանալ, ինչի պատճառով էլ ի վերջո այդ ժողովը չկայացավ:

Ապրիլի 25-ից 26-ի գիշերը ստացա պատրիարքի ծանուցումը: Գիտեր, թե ինչ են պատրաստվում անել, բայց ոչինչ չէր կարող անել խուսափելու համար: Ինչ-որ մեկը նրան խորհուրդ էր տվել, որ միակ տեղը, որտեղ կարելի էր օգնություն ակնկալել, մեր դեսպանատունն էր, և առանց երկար մտածելու՝ ուղարկել էր իր անձնական քարտուղարին՝ Վահագն Մաթոսյանին, իր վստահելի մարդկանցից մեկին:

Պոլ Կամբոնը չէր ուզում սնել անօգուտ խոսակցություններ քաղաքում այն մասին, որ Ֆրանսիան աջակցում է հայերին ավելի, քան Թուրքերին: Այդ պատճառով էլ ինձ հանձնարարեց, որ այդ հարցով լրջորեն զբաղվեմ՝ պնդելով, որ հնարավորության դեպքում ես դա անեմ դեսպանատնից դուրս, ինչը որոշակի վտանգ, ռիսկ էր նշանակում, քանի որ սուլթանի լրտեսները ամենուրեք վխտում էին, իսկ լարված մթնոլորտում՝ շատ ավելի, որ տիրում էր այդ ժամանակ Կոստանդնուպոլսում:

Վահագն Մաթոսյանը ցածրահասակ և չորուկ, դեղնավուն մաշկով և սև խիտ մորուքով տղամարդ էր: Նրա հայացքում անձկություն

կար, ասես համոզված էր, որ մի սարսափելի բան է շուտով կատարվելու:

Մենք իրար հանդիպեցինք Կաֆե Իմպերիալում, և այնտեղ էլ ինձ բացատրեց, թե շատ շուտով ինչ է տեղի ունենալու՝ ըստ իրենց:

– Մսյե դը Լատուր, մենք հուսահատված ենք: Հավատացեք ինձ, եթե ձեզ ասում եմ, որ վաղը Կոստանդնուպոլսի փողոցներով կրկին հոսելու է հայերի արյունը, և մենք չգիտենք՝ ինչ անել կամ էլ ում դիմել: Սուլթանը հանձն է առել զգուշացնել դեսպանատներին, որ չմիջամտեն: Գիտեք, որ միակ լուծումը մեր ընտանիքներին թաքցնելն է կամ սպասելը, որ փոթորիկն անցնի: Բայց այս անգամ նրան չի հաջողվի խաբել աշխարհին, որովհետև կունենանք ականատեսներ, որ ինչպես դուք, տեղ կհասցնեն ճշմարտությունը: Սուլթանն ուզում է վրեժ լուծել հայերից և ապացուցել, որ չի վախենում Եվրոպայի պատժամիջոցներից և այդ պատճառով էլ ընտրել է հենց կենտրոնը՝ Կոստանդնուպոլիսը:

Պատրաստել են ընտրված խմբեր հասարակության տականքից, նրանցից շատերը՝ մահապարտներ, որոնց ազատ են արձակել և բաժանել են փայտե մահակներ, կացիններ ու յաթաղաններ: Չգիտենք, թե ինչ նպատակ են հետապնդում, բայց գիտենք, որ անխուսափելի է աղետը:

– Ի՞նչ կարող եմ անել,– հարցրի նրան՝ վչտացած՝ նկատի ունենալով Մաթոսյանի պատմածը: – Ուզո՞ւմ եք, որ գնամ խոսեմ մեծ վեզիրի հետ: Ամեն դեպքում կարծում եմ, որ պետք է փախչեք քաղաքից, թաքնվեք մոտակա գյուղերում:

– Արդեն ուշ է, մսյե դը Լատուր: Կոստանդնուպոլսի ելքերը հրսկողության տակ են առնված, գիտենք, որ մերոնցից մի քանիսը ձերբակալվել են կամ նույնիսկ սպանվել այդ վայրերում: Թեև մարդկանց հայտնում ենք, բայց դա անելը հեշտ չէ: Այստեղ հազարավոր հայեր են ապրում՝ այս վայրերում սփռված: Շատերը դրան չեն հավատում, մյուսները չեն ուզում թաքնվել՝ ելնելով արժանապատվությունից, կամ էլ ուրիշ ելք չունեն. պետք է գնալ աշխատանքի կամ դուրս գալ՝ սնունդ հայթայթելու... Շատ դժվար է: Ջանում ենք, որ մոտակա օրերին երեխաներն իրենց տներից դուրս չգան: Բայց շատ երիտասարդներ ուզում են ցույցի դուրս գալ: Բացի այդ, քահանաները, բժիշկները, պաշտոնյաները չեն կարող լքել իրենց պարտականությունները. անհնարին է:

Տեսա, թե ինչպես էին դողում քարտուղար Մաթոսյանի ձեռքերը, աչքերը ողողվում արցունքներով, և հանկարծ զգացի, որ նրա կան-

խաղգացումները հաղարավոր հայերինն էին այդ սարսափելի պահերին:

Մաթոսյանն ինձ վարակել էր իր անձկությամբ, և հստակորեն համոզվեցի, որ ոչինչ չէինք կարող անել. անկարողության այն զգացողությունն էր, որ ունենում են բնության ուժերի առջև, երբ պատրաստվում են կասեցնել մահաբեր լինելիքն այդ քառասում՝ մի փխրուն կարգուկանոնով:

– Մեծ երկյուղ եմ զգում,– շարունակեց Մաթոսյանը, ես նախկինում տեսել եմ իմ արյունակից եղբայրների ուրիշ սպանդներ: Դուք գիտեք, թե ինչ է կատարվում ամբողջ երկրում՝ Դիարբեքիրում, Խարբերդում, Էրզրումում, Տրապիզոնում, Բիթլիսում, Քիլիսում և այլ շատ քաղաքներում: Մեզ հետապնդում էին այնպես, ասես մենք կատաղած շներ լինեինք, իսկ կոչերն արեցին սուլթանի հրամանով: Մարդն ատում է մեզ և մեզ մեղադրում իր անձնական ձախողման մեջ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ տիրապետության վերջը: Իսկ հիմա մեզ մատնացույց են անում, կարծես մենք ենք իրենց անկման պատասխանատուները: Աստված իմ, սա անտանելի է:

– Հանգստացեք, Մաթոսյան: Կտեսնեք, որ ի վերջո ոչինչ էլ չի լինի:

Այդ մարդու տառապանքը շարժում էր իմ գութը, բայց ինքս էլ ընդունակ չէի հավատալ այն բանին, ինչ ասում էի նրան:

– Ես դեսպանին կպատմեմ այս ամենը և համոզված եմ, որ մի բան կանի, հավանաբար կգնա նախազգուշացնելու մեծ վեզիրին, որ Եվրոպան ուշի ուշով հետևում է Թուրքիայի դեպքերին և նման մի բան աղետալի կլինի ապագա հարաբերությունների համար:

– Ներեցեք, մսյե դը Լատուր,– Մաթոսյանն ընդհատեց իմ ճառը: – Ձեզ շատ եմ խնդրում, ներող եղեք իմ անպատեհ վարմունքի համար, բայց քաղաքավարության պահը չէ: Մի քանի ժամից շատ հայեր են մեռնելու, և միայն ուզում էի, որ դուք զգուշացված լինեք: Դուք շատ լավ մարդ եք և մեր կարծիքով Հայաստանի լավ բարեկամ: Աստված ձեզ հետ և արեք այն, ինչ ձեր խիղճը ձեզ կթելադրի:

Ձկարողացա պահել Մաթոսյանին: Մարդը շատ անելիքներ ուներ, և լավ խոսքերն այլևս նրան չէին մխիթարում: Դուրս եկավ վազելով՝ փորձելով օգնություն փնտրել՝ այն համոզմունքով, որ ոչինչ և ոչ ոք չի կարող կանգնեցնել այն աղետը, որ հրահրվում էր քաղաքում:

Անմիջապես բարձրացա Պոլ Կամբոնի առանձնասենյակը: Նա դեսպան էր, բայց նրան նաև համարում էի իմ ընկերը և գիտեի, որ ինձ կլսեր, թեև ինչպե՞ս՝ չէի պատկերացնում, քանի որ թուրքերը չէին ուզում հայերի մասին ոչ մի խոսք լսել և մանավանդ եվրոպացիների կողմից: Կրծքումս զգում էի սրտիս խփոցներ, մինչ բարձրանում էի աստիճանները՝ երկու-երկու: Նրա բնակարանի դուռը թակեցի մատներով:

– Այո՞: Անրի՞: Մտիր խնդրեմ, բայց նստիր, դեմքդ այլայլված է: Կոնյակ ուզո՞ւմ ես:

– Տես, Պոլ,– հուզմունքը ինձ թույլ չէր տալիս հանգիստ խոսել,– ինձ հենց նոր տեղեկացրին, որ այստեղ՝ Կոստանդնուպոլսում, հայերի մի նոր ջարդ է տեղի ունենալու, և որքան գիտեմ, լինելու է այս նույն գիշեր, չգիտեմ, թե ինչ կարող ենք անել, բայց չպետք է ուսեր թոթվենք՝ դրա հետ հաշտվենք:

Պոլը լուրջ դեմքով չթողեց ինձ շարունակել:

– Այո՛, Անրի, համոզված եմ դրանում, ինչ որ ասում ես, բայց ի՞նչ ես ուզում, որ անենք: Եթե գործենք որպես հայերի անմիջական պաշտպաններ, արդեն կարող ենք փակել դեսպանատունը և վերադառնալ տուն: Եվ ինձ խոստովանիր, որ սա չի լինի լավագույն տարբերակը, գոնե այստեղ ինչ-որ բան կարող ենք անել նրանց համար: Բայց մի՞թե դու կարծում ես, թե մեծ վեզիրը այս նույն երեկո ինձ կընդունի: Սովորաբար մի ամիս տևում է, մինչ ընդունում է՝ բացառությամբ, եթե լինի մի բան, որ հետաքրքրի սուլթանին կամ իրեն: Երբ սպասում է այնքան անհրաժեշտ մի բանի, ինչպիսին սեղանի ժամացույցն է, մնացած բաները պետք է սպասեն, բայց երբ խոսում ենք անհանգստացած, որ շատ մարդիկ կմահանան, այդ ամենին նա անտարբեր է: Քեզ հավատացնում եմ, որ այդ մարդը մեջս սրտխառնոց է առաջացնում, Անրի, և նրան չրջապատողներից շատերը նույնպես: Սակայն չենք կարող անել ավելին, քան տեղեկացնել Անգլիայի և Իտալիայի մեր գործընկերներին, քանի որ պրուսացիք պետք է որ տեղյակ լինեն: Եվ հետո իրենց դնում են քաղաքակիրթ և ուսյալ մարդկանց տեղ. ստոր են և սրիկա էդ տիպերը: Դրանց միակ արածն այն է, որ քարշ գան այդ օպերետային արքունիքով, և չէին վարանի համագործակցել հայերի բնաջնջման մեջ, եթե դա նպատակահարմար լիներ իրենց սնապարծությանը: Այդ ֆոն Բիբերշթայնը ինձ մի սողունի է հիշեցնում. ընդունակ է սողալ սուլթանի առաջ, եթե դա նպաստի Գերմանիայի շահերին: Շա՛ն որդիներ:

Պոլ Կամբոնին երբեք այդքան զայրացած չէի տեսել: Նա մարդկային մի արարած էր՝ ներքին մեծ կուլտուրայով և նրբակիրթ դաստիարակությամբ՝ հղկված Սեն-Սիրում[1] և Փարիզի պոլիտեխնիկական դպրոցում: Բայց դիվանագիտական համբերության բաժակն

[1] *Ֆրանսիական ռազմական ակադեմիա:*

սկսում էր թափվել ողբերգական իրականության առջև: Այնուամենայնիվ, նա շարունակում էր Ֆրանսիայի դեսպանը լինել, իսկ նրա համար առաջինն իր պարտականությունն էր:

– Ցավում եմ, Անրի, գիտեմ, որ անձնական հակում ունես որոշ հայերի նկատմամբ, բայց մի բան կասեմ, որ գուցե քեզ բարկացնի: Այսօր Ֆրանսիային հետաքրքրում է Օսմանյան կայսրության միասնությունը. դաժան է այդ ասելը, բայց խաղի մեջ դրված են միլիոնավոր ֆրանկներ, հասկանո՞ւմ ես, միլիոննե՛ր:

Այդ պահին, չկարողանալով ինձ զսպել, վեր կացա և Թողեցի Պոլ Կամբոնին՝ խոսքը բերանում: Դուրս եկա դեսպանատնից և սկսեցի արագ քայլել դեպի Ոսկեղջյուր: Լուսանում էր, և ձկնորսները հասնում էին Կարակյոյ դեռ կենդանի ձկներով լի իրենց նավակներով՝ փայլատակող, ինչպես արծաթը՝ քարածխի լամպի արձակած լույսերի ներքո:

Շրջապատում ոչ մի բան չէր կանխագուշակում, թե ինչ է կատարվելու մի քանի ժամ հետո:

Մտա Կաֆե Իմպերիալ, և գլխի ընկա, որ հայ մատուցողներից և ոչ մեկն այնտեղ չէ: Մի սուրճ պատվիրեցի և գննեցի պողոտան՝ ներսից: Փոթորկաբեր երկինքը բոպե առ բոպե սպառնում էր հորդել, և գուցե այդ պատճառով էր քիչ մարդ երևում, քանի որ թուրքերը վաղ էին արթնանում և թեկուզև որևէ կոնկրետ անելիք էլ չունենային, քայլում էին քաղաքով մեկ՝ առանց որոշակի ուղղության՝ կազմելով խմբեր, որ քիչ հետո ցրվում էին՝ քիչ-քիչ լցնելով փողոցները, մի քանիսը՝ աշխատանք փնտրելով, մյուսները՝ պարզապես՝ հաճույքով զբոսնելով:

Հաստատ գիտեի, որ ոմանց անսահման սնապարծությունը, սուլթանի ու իր նախարարների խարդախ քաղաքականությունը և հայերին ընորոշ միահամուռ ճակատով հանդես գալու անկարողությունը՝ իրենց շարունակ հռետորաբանությամբ ու առաջնորդ չունենալու հետևանքով, իրար հակառակորդ երկու կողմերին էլ տանում էր փակուղի, որի միակ ելքը այլ բան չէր, քան թույլ կողմի բնաջնջվելը:

Բայց նաև համոզված էի, որ թուրքական բնակչության մեծ մասը դեմ էր այդ քաղաքականությանը և չէր ատում ո՛չ հայերին, ո՛չ էլ այլ փոքրամասնությունների անդամներին: Ինչպես միշտ, պատմության ընթացքում՝ ամենաարմատականներն էին, ովքեր ընտրում էին բռնության ճանապարհը: Սուլթանը նրանց գաղգեցնում էր իր առաջ ծառացած բոլոր խնդիրների պատճառով՝ մեղադրելով հայերին՝ մատնացույց անելով նրանց, կարծես ուրիշների՝ անասունների, որոնց ճակատներին պետք է խաչ դաջել: Դա մի անգամ խորհուրդ է տվել Թալիբ բեյը, ընկերական մի ճաշկերույթի ժամանակ ավելացնելով. «Այդ քրիստոնյաները ուրիշ են, և մեզ նրանց հետ ոչինչ չի կապում: Ոչինչ, և մեզ բոլորովին չի հուզում, թե ինչ կպատահի նրանց, ի վերջո, այս կյանքում գոյություն ունենք մենք և ուրիշները, այդպես չէ՞»:

Հետո, մի քիչ թեթևացած, բայց համակված խոր անհանգստությամբ, դանդաղ վերադարձա դեսպանատուն՝ մտածելով, որ պետք է Պոլ Կամբոնից ներողություն խնդրեմ, քանի որ նա ընդամենն ինձ հետ անկեղծ էր եղել: Պարզապես նա շատ փորձառու մարդ էր, որ երբեք հիմնական նյութից չէր շեղվում և երբեք զգացմունքներին գերի չէր դառնում:

Սպասված ժամանակը վրա էր հասնում: Դեռ առավոտյան ժամը տասը չկար, երբ տեսա վատ հագնված և լկտի տեսքով թուրքերի մի խմբի, որը վճռական քայլում էր մայթով: Զինված էին երկաթե մահակներով՝ մոտավորապես ութսուն սանտիմետրանոց: Հանկարծ, ասես մի ազդանշան ստացած լինեին, սկսեցին վազել մի տրամվայի ուղղությամբ, որը գնում էր Բերա թաղամասի հիմնական պողոտայով: Մեքենավարին ստիպեցին կանգնեցնել այն՝ կանգնելով նրա առաջ, մինչ մի քանիսը բարձրանում էին փոխադրամիջոց: Տեսա, թե ինչպես էին երկու հոգի փորձում փախչել հետևի դռնից ու վազում էին փողոցով՝ դեպի վեր: Շատ թուրքեր նրանց հետապնդեցին, բայց հույս ունեմ, որ նրանք փախան, քանի որ, անկասկած, երիտասարդ հայեր էին և ավելի արագավազ, քան իրենց վրա հարձակվողները: Հանկարծ ուրիշ զինված մարդիկ դուրս եկան անկյունից՝ ճիշտ նրանց դիմաց և հանկարծակիի բերեցին: Անմիջապես շրջապատեցին և սկսեցին մահակներով վայրենաբար խփել նրանց: Մի քանի վայրկյան անց երկուսն էլ փռված էին սալահատակին, մինչ հարձակվողներից երեքը թե չորսը դեռ շարունակում էին նրանց ամենաանխիղճ ձևով վերջին չնչում սպանել:

Այդ պահին գիտակցեցի, որ իմ սեփական կյանքն էլ է վտանգի տակ, քանի որ այդ զինված մարդկանց հետաքրքիր չէր, որ հարցնեին, թե ինչ ազգության էին պատկանում նրանք, ում հանդիպում էին: Կոստանդնուպոլսում թուրքերը, որ ապրում էին հայերի, հույների, սիրիացիների, արաբների, քրդերի, հրեաների և շատ այլ փոքրամասնությունների, բացի այդ մեծ թվով օտարերկրացիների կողքին, մեծ մասամբ չէին կրում անձը հաստատող որևէ փաստաթուղթ:

Այն սարսափելի տպավորությունը ստացա, որ դրանք պրոֆեսիոնալ մարդասպաններ էին, որոնց վարձել էին հատուկ՝ մայրաքաղաքի հայ համայնքի կոտորածը իրականացնելու համար, ճիշտ այնպես, ինչպես կանխագուշակել էր Վահագն Մաթոսյանը:

Պետք է խոստովանեմ, որ վախեցա և ապաստանեցի առաջին իսկ բաց չքամուտքում, որը նույնպես հեշտ չեղավ, քանի որ համարյա բոլոր շենքերը ամուր մեխված էին: Բարձրացա աստիճաններով մինչև վերջին հարկ. ի վիճակի չէի նորից իջնել և այդ հարկի դուռը շարունակեցի թակել մետաղական զանգահարվածներով: Սկզբում կարծեցի, թե ոչ ոք չկա: Հետո լսեցի՝ ինչ-որ մեկը մոտենում է, և զգացի թույլ ճռռոց՝ դիտահեղքում: Ներսից մի կանացի ձայն ինչ-որ բան հարցրեց հայերեն, թեև լավ չհասկացա: Հետո ֆրանսերեն աղաչեցի, որ ինձ թույլ տա մտնել. սպասման մի քանի վայրկյաններ, և ի վերջո լսեցի, թե ինչպես է շարժում փականքը, և դուռը բացվեց:

Մի երիտասարդ ու վայելչատես կին՝ հաստատ հայ, մի քանի վայրկյան ինձ քննախույզ նայեց և թեթև նշան արեց գլխով, որ մըտնեմ տուն, ինչն անխոս ընդունեցի: Նա կրկին կողպեց դուռը և շարունակեց նայել ինձ: Հանկարծ ռուսերեն ինչ-որ բան ասաց, իսկ ես նրան պատասխանեցի ֆրանսերեն:

– Ֆրանսիացի եմ, ինձ կոչում են Անրի դը Լատուր և Ֆրանսիայի դեսպանատան քարտուղարն եմ: Գտնվում էի փողոցում, երբ սկսեցին հարձակումները:

– Այո, պատշգամբից տեսել եմ,– աղջիկը ամենաչատ քսանհինգ տարեկան կլիներ. ինձ պատասխանեց ճիշտ ֆրանսերենով: – Վախենում եմ եղբորս՝ Օհաննեսի համար, որ դուրս է եկել աշխատանքի... Անունս Մարիցա Փիլիպոսյան է, անցեք սրահ, խնդրեմ:

Նրան հետևեցի դեպի մի սրահ, որի կիսաբաց դուռը բացվում էր փողոցի վրա: Գլուխս հանեցի, և ինքն էլ ինձ հետևեց:

– Եթե եղբայրս վերադառնա, կարող է մեծ վտանգի ենթարկվել,– աղջիկը մտատանջ ինձ նայեց,– կսպանեն:

– Ո՛չ, դա չի պատահի,– պատասխանեցի՝ փորձելով հանգստացնել նրան: – Որտե՞ղ է աշխատում ձեր եղբայրը:

– Բժիշկ է: Հազիվ մի ամիս է, ինչ վերադարձել է Փարիզից... և սովոր չէ այս ամենին: Մայե, ի՞նչ կարող եմ անել: Շատ եմ վախենում...

Պետք է արագ մտածեի: Այդ հանդիպումը, որ դիպվածի արդյունք էր, հանկարծ վերածվել էր անձնական մարտահրավերի: Հանկարծ ճիչեր լսեցի, դուրս եկա պատշգամբ և տեսա, որ մի քանի թուրք ժանդարմներ էին մոտենում, այդ ժամանակ, առանց վարանելու, բղավեցի պատշգամբից՝ ձեռքերս շարժելով, որպեսզի ինձ տեսնեն: Երբ ինձ հաջողվեց, որ ուշադրությունը սևեռեին վրաս, ցույց տվեցի, որ բարձրանան: Սկզբում կասկածեցին, մինչև որ նրանցից մեկը վազելով մտավ չքամուտք: Այդ ժամանակ ես ուղղվեցի դեպի դուռը, բացեցի և այնտեղ սպասեցի, որ բարձրանան:

– Ֆրանսիայի դեսպանատան դիվանագետ եմ,– բղավեցի թուրքերեն,– ֆրանսիս,– պնդեցի թուրք ժանդարմին, որ պետք է որ ինձ հասկանար, մինչ նրան ցույց էի տալիս իմ ակրեդիտիվ անձնագիրը:

Տեսնելով այն՝ այդ մարդը փոխեց դեմքի արտահայտությունը և թուրքերեն ինձ հարցրեց բառերը՝ հատ-հատ արտասանելով, ինչ էի նրանցից ցանկանում:

– Այս կինն աշխատում է դեսպանատանը: Նրա եղբայրը բժիշկ է, և նույնպես աշխատում է մեզ համար: Ձեզ չնորհակալ կլինեի, որ մեզ ուղեկցեիք նրան փնտրելու, քանի որ վախենում ենք, որ փողոցում նրան մի բան պատահի, իսկ դեսպանն անմիջապես նրա կարիքն ունի:

Ժանդարմը մի պահ կասկածեց: Նրա հետևից երկուսն էլ էին եկել. նրանցից մեկը՝ սպա: Մի պահ արագ խոսեցին՝ նախքան ինձ պատասխանելը: Այդ ժամանակ համոզվեցի, որ դիվանագիտական անձնագիրը նրա վրա տպավորություն էր գործել, քանի որ մի պահ տատանվելուց հետո՝ համաձայնվեցին ուղեկցել մեզ: Նույնիսկ այդ ձևով էր խիստ վտանգավոր, եթե հաշվի առնենք սարսափազդու իրավիճակը, որ տիրում էր քաղաքում:

Ես տեղյակ էի, որ թուրք ժանդարմները այդ կոտորածի մեղսակիցներն էին: Հաստատ հրամաններ էին ստացել ոչ միայն չընդդիմանալու, այլև մարդասպանների հետ համագործակցելու: Այնպես որ, իրար մեջ փսփսացին, որ ակնհայտ է, որ երիտասարդ աղջիկը, որ ինձ ընկերակցում է, հայուհի է: Նրան փրկում էր միայն այն, որ նա ինձ հետ էր, քանի որ նրանք այնքան էլ միամիտ չէին, որ չհասկանային, որ իմ ներկայությամբ պետք է ձև տային իրենց: Այսպիսով իջանք փողոց և արագ քայլեցինք դեպի այնտեղ, ուր ցույց տվեց Մարիցան, ժանդարմների ուղեկցությամբ, որոնք մեզ իրենց մեջ էին առել, թեև վախը սրտներումս էր, որ ցանկացած պահի մեզ կարող էին թողնել զինված մարդկանց բազմաթիվ խմբերից մեկի ձեռքերում, որոնք կատաղաբար հետապնդում էին ցանկացած հայի, ով կհամարձակվեր փողոց դուրս գալ:

Տեսանք շատ վայրերում նետված մարմիններ, մի քանիսը՝ գըլխատված, մի տրամվայ՝ բոցերի մեջ, նույնն էլ՝ հայերի շատ խանութներ: Զարհուրելի տեսարան էր, որում չռայլորեն ի կատար էին ածվում Թուրքական կառավարության և սուլթանի սպառնալիքները:

Վազելով մտանք հարևան մի փողոց: Մի խումբ Թուրքեր մեծ թվով հայերի նեղն էին գցել, որոնցից երեքը արյունաթաթախ, վերջին շնչում էին՝ սալահատակին: Բղավեցի, որ սպան միջամտեր, բայց նա թոթվեց ուսերը, կարծես այդ ամենը նրա հետ կապ չուներ: Տեսնելով, որ ժանդարմները չէին կանգնում, ստիպված հետևեցինք նրանց, քանի որ այլ կերպ կհարձակվեին մեզ վրա: Իսկական մի դանթեական, սարսափելի իրավիճակ:

Հասանք իտալական հիվանդանոցի դիմաց, որի դուռը փակ էր, բայց Մարիցան առանց վարանելու հարվածում էր համառորեն բրոնզե զանգակով, մինչև որ լսեցինք, որ ներսից մեկը իտալերեն հարցրեց: Նա նույն լեզվով պատասխանեց, որ բժիշկ Օհաննես Փիլիպոսյանի քույրն է: Մի քանի վայրկյան անց դուռը բացվեց, և մտանք չենք՝ պաշտպանված իտալական վաշտի բազմաթիվ ծովամարտիկների կողմից, որոնք կանգնած էին տանիքին, պատուհաններին՝ ձեռքերում սեղմելով հրացանները՝ ջանալով կանխել ավազակների հարձակումը:

Այնտեղ, իրոք, գտանք Օհաննես Փիլիպոսյանին, որն զբաղված էր ավելի ծանր վիճակում գտնվողների բուժմամբ. քանի որ ապաստան գտած շատ հայերից մի քանիսը ծանր վիրավորներ էին: Ինձ վրա ծանր տպավորություն թողեց մոտ քսան տարեկան մի աղջիկ, որի երկու թևերը անդամահատել էին: Մարիցան ջանում էր հանգիստ երևալ, բայց սարսափելի իրականությունը ցանկացած մարդու կարող էր հանել ափերից:

Սրահներից մեկում դեմառդեմ հանդիպեցի Իտալիայի դեսպանին՝ Թոմազո Կատալանիին, որն ինձ նայեց հարցական, քանի որ ինձ լավ ծանոթ էր և չէր հասկանում, թե ես ինչ գործ ունեմ այնտեղ:

Նրան բացատրեցի հարցի էությունը, և Կատալանին, որից զայրույթ էր հորդում, սկսեց բղավել սպառնալիքներ Թուրքերի դեմ:

— Այս թշվառական սուլթանը չի հասնի իր նպատակին: Մի քանի ամիս առաջ սպանեցին մի խեղճ իտալացի քահանայի, որ միայն բարի գործեր էր անում: Արդեն կուշտ ենք ստերից և ոճիրներից: Իտալիան չի մնա ձեռքերը ծալած՝ տեսնելով, թե ինչպես են Թուրքիայում կոտորում քրիստոնյաներին: Եվ համարձակվում եմ ասել, որ Ֆրանսիան՝ նույնպես: Տեսնո՞ւմ եք, թե ինչ է կատարվում: Ո՛չ ոստիկանությունը, ո՛չ բանակը չեն միջամտում: Ինչ աղետ է. ըստ ինձ հասած լուրերի՝ հարյուրավոր մահացածներ կան: Սա բացարձակապես անընդունելի է: Պետք է գրավոր բողոք ներկայացնեմ մեծ վեզիրին, որն ինձ կրկին կվստահեցնի, որ ոչինչ չգիտի, և որ հայերն են եղել առիթ տվողները. ինչ սարսափելի անարդարություն: Տեսեք, Անրի, պետք է նվաճենք այս երկիրը ու կարգուկանոն մտցնենք, քանի որ այն լուծումը, որ հայերին մեզ հետ տանենք Եվրոպա, նույնը կլինի, ինչ Աբդուլ Համիդին իրավացի համարելը, որը ցանկանում է բնաջնջել կայսրության բոլոր քրիստոնյաներին: Մենք դա նրան թույլ չենք տա:

Այդ մարդը զայրացած էր, սակայն Իտալիան մոտ էր Թուրքիայի հետ հարաբերությունները խզելուն, և ես մտածեցի, որ մեր ապրած իրավիճակը գուցե այն կաթիլն է, որ լցնում է բաժակը:

Մարիցա Փիլիպոսյանը տրվեց հայ կանանց օգնելու գործին, որոնք ապաստան էին գտել հիվանդանոցում, նրանցից շատերը փոքր երեխաներով էին, ինչը բարդացնում էր դրությունը: Նրա եղբայրը աչք չէր բացում վիրահատական սեղանից, քանի որ հազիվ հասցրնում էր մեկի ոտքը անշարժ կապել կամ մեկ ուրիշի ճակատը, երբ հայտնվում էր նոր վիրավոր: Լուրերը, որ գալիս էին դրսից, շատ տագնապալից էին, քանի որ այլևս չէին խոսում հարյուրավոր մահացածներից կամ վիրավորներից, այլ տասնյակ հազարավորներից, որ նշանակում էր իսկական աղետ Կոստանդնուպոլսի հայերի համար:

Հիվանդանոցում գտնվող իտալացիները չէին կարողանում զսպել իրենց զայրույթը, քանի որ իրենց շատ մոտ էին համարում հայկական համայնքին, որոնց հետ բարեկամական, առևտրական և ամեն տեսակի հարաբերությունների մեջ էին:

— Տեսեք,— ինձ պատմեց բժիշկներից մեկը, մեկը՝ Ջուզեպե Մոնտինի անունով,— ես ամուսնացած եմ մի հայ կնոջ հետ և հետևաբար ես ամբողջ համայնքի հետ եմ: Այնքան կուզեի գնալ և մի ռումբ դնել Դոլմաբաղչեում: Զավակներ չունենք, բայց զարմիկներ, այո՛... և եթե նրանցից մեկին մի բան պատահի... Չգիտեմ, թե ինչ կանեմ:

Ուշ կեսօրին լուրեր ստացանք, որ ոստիկանությունն ու բանակը վերջնականապես վերահսկել են դրությունը և մարդասպանների հրոսակախմբերը, գոնե քաղաքի կենտրոնում այլևս չեն երևում: Այդ ժամանակ որոշեցի վերադառնալ Ֆրանսիայի դեսպանատուն: Հրաժեշտ տվեցի Մարիցային ու իր եղբորը, որոնք ինձ չնորհակալություն հայտնեցին այն բանի համար, որ արել էի հանուն իրենց: Խոստացա, որ հնարավորին չափ շուտ կայցելեմ իրենց:

Թոմազո Կատալանին դեմ եղավ, որ ես մենակ գնամ և ստիպեց ինձ ընդունել երկու զինված ծովային թիկնապահների ուղեկցությունը:

– Իսկ եթե ձեզ բա՞ն պատահի... Տեսեք, Անրի, ոչ միայն մեր երկու երկրների միջև կան լավ հարաբերություններ, նաև դուք եք ինձ չատ համակրելի: Ինչպե՞ս կարող եմ թույլ տալ, որ դուրս գաք՝ ձեզ նման վտանգի ենթարկելով: Ոչ մի խոսք:

Իտալական հոսպիտալը թողնելիս քաղաքում ճնշող մի մթնոլորտ էր զգացվում, որ սովորաբար եռուն էր: Փողոցներում գրեթե մարդ չկար, բայց, այո՛, կային չատ անչարժացած մարմիններ, որոնց հավաքում էին ծածկակառքերի մեջ:

Ինձ ահավոր էի զգում՝ հասկանալով, որ մեր բողոքներն անօգուտ են լինելու: Երբ հասա, Պոլ Կամբոնը պաշտոնական կառքով գնացել էր Բարձր Դուռ՝ անձամբ ներկայացնելու իր խոր ցասումը և զգուշացնելու մեծ վեզիրին, որ Ֆրանսիայի համբերությունը սահման ունի: Բայց սուլթանն իրեն անտեղյակի տեղ էր դնում: Այդ ամառ Վանի բնակչությունը Անատոլիայի կենտրոնում վայրագորեն սպանդի ենթարկվեց, իսկ հայկական թաղամասերը ռմբակոծվեցին մինչև լրիվ ջախջախում:

Զբավարարվելով դրանով և ի նշան բացահայտ արհամարհանքի Եվրոպայի հանդիմանանքների հանդեպ՝ օգոստոսի սկզբներին կըրկընվեցին կոտորածները Կոստանդնուպոլսում, այդ անգամ սկսեցին Հասքյոյի թաղամասում և տարածվեցին ամբողջ քաղաքով մեկ:

Այդ ժամանակ էր, որ ինձ հասավ Գրիգոր Բրոչյանի ուղերձը:

> «Կարիք ունեմ ձեզ տեսնելու հնարավորին չափ շուտ: Իմ ժողովրդի համբերությունը սահման ունի»: Գ. Բ.

Երբեք ի վիճակի չէի լինի պատկերացնել, թե ինչ էր այդ պահից սկսած պատահելու: Եվ չէի կարող պատկերացնել այդ ամենի սարսափելի հետևանքները:

ՕԳՈՍՏՈՍԻ ՎԵՐՋԵՐ 1896

26. ԲԱՆԿ ՕՍՏՈՄԱՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Գրիգոր Բրոչյանը ինձ հետ հանդիպում ունեցավ Էմիլ Բագրատյանի խանութում, Գալատայի աշտարակի ներքո: Նրա հետ էին նաև իր ընկերները՝ «ամերիկացիները»,– նրանց գիտեին այդպես,– և Քրիստափոր Միքայելյանը, որը ներկայացնում էր ՀՀԴ-ն: Վտանգավոր էր այնտեղ գտնվելը, բայց ողջախոհության համար ժամանակ չկար:

Բոլորն ինձ ջերմորեն և հարգալից ողջունեցին, ինչն ինձ միշտ էլ թվում էր չափից դուրս, որովհետև չէի հասկանում, թե իմ ո՞ր արժանիքների համար է դա: Զնայած լարվածությանը՝ Էմիլը սառը թեյ պատրաստեց, ինչպես միայն ինքը գիտեր այդ անել, քանի որ հայերի չրջանում անգամ ամենախորհրդավոր պահերին հարկավոր էր պահպանել հյուրընկալության նվազագույն կանոնները:

– Զասես, որ համբերատար չենք եղել,– Գրիգորն ինձ հետ խոսում էր սառնությամբ: – Ոչ ոք չի ասի հակառակը, բայց այլևս չենք կարող հանդուրժել. պետք է աշխարհին ցույց տանք, որ գոյություն ունենք, քանի որ այն տպավորությունն է ստեղծվում, որ մենք էլ ենք մսից ու արյունից միայն այն ժամանակ, երբ մեզ սպանում են: ՀՀԴ-ում մենք ընդունել ենք գործողության մի որոշում, որն իրականացնելու են մեր երիտասարդները, այստեղ՝ ճիչտ և ճիչտ Կոստանդնուպոլսի ներսում՝ տեսնելու, թե արդյոք մեզ կհաջողվի՞ արձագանք գտնել ողջ Եվրոպայում: – Գրիգորը զննում էր իմ արձագանքը,– ուզում ենք, որ իմանաս և նախազգուչացնես քո դեսպանին, որ դա չի արվում Ֆրանսիայի դեմ:

– Ֆրանսիայի դե՞մ... Զեմ հասկանում, թե ինչ ես փորձում ինձ ասել: Ի՞նչ կապ ունի Ֆրանսիան այս ամենի հետ:

– Լավ,– Գրիգորն իրեն պահում էր խոժոռ և օտարոտի,– ասենք թե Ֆրանսիան ներքաչված կլինի... Մի ժամ հետո ՀՀԴ-ն գրավելու է բանկ Օտտոմանը, այստեղի՝ Կոստանդնուպոլսի կենտրոնական նրստավայրը, և որքանով ինձ հայտնի է, նրա իսկական սեփականատերը ֆրանսիական կապիտալն է: Մեզ անհրաժեչտ է, որ Փարիզն ըմբռնի

մեր հուսահատությունը, բայց պետք է հասկանաք, որ խոսքը Ֆրանսիայի դեմ գործողության մասին չէ:

— Ինձ կներեք,— Գրիգորի անսքողությունն ինձ իսկական խենթություն թվաց,— բայց պետք է զգուշացնեմ ձեզ, որ դա կարող է առաջ բերել մի իսկական աղետ: Սուլթանը կօգտվի առիթից՝ հայերի նոր կոտորած իրականացնելու համար... Մի՞թե չեք հասկանում: Շատ վտանգավոր է:

— Մեզ համար միևնույնն է ոիսկը: Զափից ավելի հեզ ենք եղել, եթե ցույց տված լինեինք մեր ճանկերը, մեզ կվերաբերվեին ավելի հարգալից, քանի որ այս թուրքերը միշտ օգտվել են մեր բարությունից՝ համոզված, որ մենք սպանդանոց տարվելու պատրաստի գառներ ենք: Իսկ դրան արդեն վերջ է դրվելու: Հիմա մենք պետք է նշենք, թե ինչ ուղիով ենք գնալու:

Բարեկամներիս ընկճված հոգեվիճակի առջև փորձեցի իջեցնել ձայնս և հանգիստ հիմնավորել խոսքս:

— Լավ, բնականաբար կարող եք անել այն, ինչ կամենաք, բայց ես էլ իրավունք ունեմ անկեղծորեն ասելու ձեզ այն, ինչ մտածում եմ: Նման գործողությամբ դուք ոչնչի չեք հասնի, անհեթեթ մի բան, որը ճակատագրական հետևանքներ կունենա ամբողջ հայ համայնքի համար: Մի՞թե չեք հասկանում, որ այդպիսի գործողությամբ դուք արդարացնում եք սուլթանի քաղաքականությունը... Պետք է լրջորեն մտածեք:

Այդ պահին հանդես եկավ Միքայելյանը, որն իմ կարծիքով շատ զրգռված էր:

— Իսկ ուրիշ ի՞նչ ընտրություն կա: Բոլորս դառնանք մուսուլմա՞ն և սուլթանի ոտքը պագե՞նք: Ուրիշ ելք չունենք, և դուք այդ գիտեք: Ո՛չ Եվրոպան, ո՛չ էլ Անգլիան մեզ համար ոչինչ չեն արել՝ բացի մեզ օգտագործելուց: Մեր հիմնահարցն այն է, որ մենք գիշեր-ցերեկ աշխատելուց բացի, ուրիշ բանի պիտանի չենք: Եվ երբ գնում ենք որևէ հայկական գյուղ՝ նրանց բացատրելու, որ եթե միանանք, մեծ հաջողություն կունենանք, մեզ նայում են առանց որևէ բան հասկանալու և շարունակում են լուծ քաշել. ինչ զարհուրելի ճակատագիր ունենք: Հայերս արյունաքամ ենք լինում, և ոչ ոք ոչինչ չի անում՝ կանխելու համար, իսկ եթե ասում ենք՝ բավ է, ուրեմն մենք ենք սխալ թույլ տալիս...

— Ինձ չե՞ք կանչել խորհուրդ խնդրելու համար,— առաջարկեցի՝ առանց բարկությունս զսպելու,— թե՞ նախքան իմ գալն արդեն որոշումն ընդունված էր: Դուք գիտեք, որ ես ձեր Հարցի համակիրն եմ, բայց չգիտեմ, թե ինչ եք ուզում ինձանից:

— Միայն ուզում ենք, որ իմանաս, որ քեզ վստահում ենք որպես մերոնցից մեկին: Գիտենք, որ սա իր հետևից բերելու է ծանր վրեժխնդրություն, բայց եթե սա չլինի, մեկ ուրիշ բանի համար կլինի, քանի որ ինչպես համոզվել ես, սուլթանի համար միևնույն է: Նրա կարծիքով բոլոր հայերս էլ խանգարող խոչընդոտ ենք, և ճշմարիտն այն է, որ մենք էլ այդ տպավորությունն ունենք:

Մի պահ խորհրդածեցի պատասխանելուց առաջ, քանի որ ինձ անախորժ էի զգում, բայց անհանգստությունը գերազանցում էր անախորժության զգացումին:

— Լավ,— պատասխանեցի մի քիչ վրդովված,— ամեն դեպքում ինչ կարողանամ՝ կանեմ, բայց ձեզ համար պետք է կասկածից վեր լինի, որ Ֆրանսիայի ժողովուրդը եղել և միշտ էլ լինելու է հայերի կողմից, և դուք դա բոլորից լավ գիտեք:

Այսպես ավարտվեց այդ քննադատական ժողովը ՀՀԴ-ի հետ: Դուրս եկա փողոց և արագ քայլեցի դեպի դեսպանատուն: Ոչ ոքի չէի կարող այդ իրավիճակի մասնակիցը դարձնել, անգամ Պոլ Կամբոնին: Ինձ համար դա մի դաժան փորձություն էր, որովհետև ակներև էր, որ նորից շատ մարդիկ էին զոհվելու: Հանկարծ ներքուստ մի բան զգացի և քայլելով ճանապարհս փոխեցի՝ ուղղվելով հնարավորին չափ արագ դեպի բանկ Օտտոման:

Երբ մտա բանկ, ամեն ինչ սովորական էր թվում: Դրսում պողոտան լի էր մարդկանցով, որոնք քայլում էին վերուվար՝ առանց որոշակի ուղղության, ինչը բնորոշ էր Կոստանդնուպոլսին և արտառոց մի բան դրանում չկար: Հետո մի դռնապանի հարցրի տնօրենից: Կարծեմ նա ինձ ճանաչեց, քանի որ հաճախ էի բանկի ծառայություններից օգտվում և ինձ նշան արեց, որ իրեն հետևեմ: Անմիջապես տեսուչը դուրս եկավ ինձ ընդունելու և ինձ ժպտալով, շարունակ մեծարանքի խոսքեր ասելով՝ ուղեկցեց տնօրենի գրասենյակը:

Ճիշտ այն պահին, երբ նստում էի բանկի տնօրենի գրասենյակում, հնչեցին առաջին կրակոցները: Ալֆրեդ Լբբլանկը, մի զվարթ մարսելցի, նայեց վրաս իր ոսկեզօծ ակնոցի վրայով:

— Լսեցի՞ք դա... Պետք է որ փողոցում լինի, իսկապես, ի՞նչ խառը ժամանակներում ենք ապրում: Ձեզ հավատացնում եմ, որ շատ եմ կարոտում իմ Մարսելը:

Նորից մոտիկից լսվեցին մի քանի պայթյուններ: Այդ նույն ժամանակ էր, որ ծառայողներից մեկը, առանց թակելու, վազելով ներս մտավ շատ անհանգստացած և զարմացած:

– Պարոն տնօրեն..., կներեք, որ ձեզ ընդհատում եմ: Տեսեք, մտել են մի խումբ զինված հայեր, ուսանողներ են թվում և պահանջում են ձեզ տեսնել: Ներեցեք, պարոն, բայց կարծում եմ, որ դա լավ բան չի խոստանում:

– Կարո՞ղ ենք հայտնել ոստիկանությանը: Թեև կարծում եմ, որ դրա հարկը չի լինի:

Ճիշտ այդ պահին գրասենյակ մտան չորս երիտասարդ՝ ատրճանակներով զինված:

– Ձեզ ի՞նչ է հարկավոր: Ի՞նչ է կատարվում այստեղ,– տնօրենը զայրացած էր թվում այդ վարվելակերպի հանդեպ: – Բարի եղեք, լքել բանկը:

– Լսեք: Իմ անունը Բաբկեն Սյունի է, և ես այս գրավման պատասխանատուն եմ,– երիտասարդն ինձ նայեց, ասես ինձ ճանաչում էր: – Իսկ դուք ո՞վ եք,– նկատած կլիներ, որ օտարերկրացի էի, և հետս ֆրանսերեն խոսեց:

– Անրի Լատուրն եմ, Ֆրանսիայի դեսպանատան առաջին քարտուղարը, այս բանկում բացված հաշիվ ունեմ:

– Լավ: Ձեր դեմ ոչինչ չունենք, բայց պետք է իմանաք, որ մեր մտադրությունը այս շենքը պայթեցնելն է: Այս պահին ոչ ոք չի կարող դուրս գալ կամ մտնել: Մենք պատրաստ ենք դրան, և ոչ ոք մեզ չի արգելի, այնպես որ ձեզ հանգիստ պահեք և տեղից չշարժվեք:

– Ազա՜տ Հայաստան,– մնացած երիտասարդները գոչեցին այդ կոչը խմբով:

Գրոհողներից մեկը տեղավորվեց դռան մոտ՝ հսկելով մեզ, իսկ Սյունին ու մնացածները դուրս եկան գրասենյակից՝ հրամաններ գոռալով:

Արտաքուստ շենքն անառիկ էր թվում, եթե միայն չօգտագործեին պայթուցիկներ կամ թնդանոթներ: Ձհրկիզվող վիթխարի պահարանի պես՝ նրա պատուհանները պաչտպանված էին հաստ երկաթե վանդակաճաղերով, իսկ մեծ դռները երկաթից էին և կոանակոփ, այնպիսի չափերով, որ անհնարին էր դրանք վնասել:

– Քանի՞ մարդ է աշխատում այստեղ: Վթարային որևէ ելք գոյություն ունի՞,– իմ հարցերը տնօրենին հանկարծակիի բերեցին:

Այդ մարդն ինձ նվաղուն ձայնով պատասխանեց, կարծես հենց նոր էր գլխի ընկել, թե ինչ պատասխանատվություն է հանձն առել:

– Հարյուր քսանհինգ մարդ, բայց գուցե մի քանիսը գործով դրրսում լինեն: Ինչ մնում է ելքին՝ նախկինում փախուստի ստորգետնյա մի ճանապարհ կար..., բայց փակվեց, որովհետև գողության փորձ էր տեղի ունեցել: Այնպես որ, հիմա...

Հենց այդ պահին դռան մոտ կանգնած ուսանողը մեզ ձեռքով ցույց տվեց, որ գնանք դահլիճ, որտեղ մարդիկ կան: Սյունին բարձրացել էր սպասարկման սեղաններից մեկի վրա, և ողջ անձնակազմը հավաքվել էր այնտեղ:

– Հանգիստ մնացեք: Մենք ձեր դեմ ոչինչ չունենք, միայն թե դուք մեզ առայժմ որպես վահան եք ծառայում: Երբ ձեզ ցուցում տրվի, շարքով մեկ-մեկ դուրս կգաք փողոց գլխավոր դռնով: Բայց ձեզ խնդրում եմ, որ ենթարկվեք հրահանգներին և ոչինչ չձեռնարկեք: Եվ մեզ մի ստիպեք ուժի դիմել: Պատկանում ենք ՀՀԴ-ին և պատրաստ ենք ամեն քայլի:

Այդ ժամանակ լսվեցին նոր կրակոցներ և ուժեղ հարվածներ կողմնային դռան վրա: Անկասկած, դա թուրքական ժանդարմերիայի կողմից փորձ էր չենք թափանցելու: Ապակիների փչրվելուց և ներսում հրազենի երկու կրակահերթի ճարճատյունից՝ մարդիկ կուչ եկան: Լսվեցին խուճապի ճիչեր, և երկու թե երեք հոգի վիրավոր ընկան հատակին: Անվստահության կասկածելի պահ տիրեց, քանի որ անգամ գրոհողները, հաստատ, նման հակահարվածի չէին սպասում:

Հանկարծ տեսա, թե ինչպես Սյունին՝ գրոհողների առաջնորդը, սպասարկման սեղանին մի պահ կռացած մնալուց հետո հակվեց ինքն իր վրա և բերանքսիվայր փլվեց սալահատակին: Ընկնելու ձևից մտածեցի, որ նախքան գետնին ընկնելն էր մահացել: Ընկերներից չատերը վազեցին նրա կողմը և փորձեցին տեղավորել նրան սեղաններից մեկի տակ, բայց ակնհայտ էր, որ նրա համար այլևս ոչինչ չէր կարելի անել: Դա մեծ իրարանցում առաջ բերեց նրանց մեջ:

Դրսում՝ փողոցում, ժանդարմները պետք է որ ցրված լինեին, որովհետև հարվածները և պայթյունները մի պահ դադարեցին, ինչից օգտվեցին հայերը՝ պաչտպանվելու նպատակով ծանր կահույքները քարչ տալով և դռների դեմ տեղադրելով:

Մտածեցի, որ ամեն ինչ փոխվելու է իրենց առաջնորդի անսպասելի մահվան պատճառով:

Տեսա, թե նրանցից չատերը՝ իրար օգնելով ինչպես էին տեղադրում մեծ արկղերը մեծ մարտադաչտի ռազմավարական կետերում և գլխի ընկա, որ պայթուցիկներ էին: Ամեն ինչի ընդունակ էին, և

ամեն ինչ ավելի էր վատացել, քանի որ Սյունու մահից անմիջապես հետո ավելի նյարդային էին՝ չիմանալով ինչ անել:

Երիտասարդներից մեկը մոտեցավ ինձ՝ ասելով.

– Ինձ չե՞ք ճանաչում:

Գլխով ժխտեցի:

– Օհաննես Փիլիպոսյանն եմ՝ Մարիցայի եղբայրը...

Այդ ժամանակ նրան ճանաչեցի: Մազերը կտրել էր, իսկ մորուքը՝ սափրել:

– Բայց դուք ի՞նչ գործ ունեք այստեղ,– պատասխանեցի զարմացած,– չէ՞ որ դուք բժիշկ եք:

– Տեսեք, մայե Լատուր: Նախևառաջ ես հայ եմ, իսկ հայերս այլևս չենք կարող հանդուրժել այս իրավիճակը: Գիտե՞ք դուք, մայե, թե որքան հայեր են սպանվել, մահացել վերջին վեց ամիսների ընթացքում: Ավելի քան քառասուն հազա՛ր, այստե՛ղ, Կոստանդնուպոլսում... Դուք ականատեսն եք այն բանի, թե ինչպես են գործում սուլթանի մսագործները: Վանում այդ մարշալ Սահէդդին փաշան թալանեց քաղաքը՝ ի փառ իր տիրոջ՝ բռնաբարելով, սպանելով, նաև այրելով մեր եկեղեցիները: Հրաման ունեին գլխատելու տասը տարեկանից բարձր բոլոր տղաներին: Իսկ ի՞նչ ասացին թերթերը Փարիզում. «Հայ հեղափոխականները ահաբեկչական գործողություններ են իրականացրել թուրք քաղաքացիների նկատմամբ», իսկ Լոնդոնո՞ւմ: Բայց չէ՞ որ հենց ինքը՝ անգլիացի հյուպատոսն է հրահանգներ տվել թուրք հրետանավորներին: Այլևս ոչ մի հույս չունենք և ստիպված ենք փոխել մեր գործելակերպը: Միայն ձեր նման դրական մարդիկ են մեզ օգնում, որոնք գործում են ըստ իրենց բարոյական չափանիշի: Իրոք, դուք մեծ տպավորություն եք թողել քրոջս՝ Մարիցայի վրա... Շարունակ խոսում է այն մասին, թե ինչպես մեզ օգնեցիք:

Այդ ճնշող մթնոլորտում ժամեր անցան, մինչ հարակից փողոցներում լսվում էին ճիչեր, ձիավորների սրընթաց վարգը, անգամ հրազենի երբեմն հնչող ճարճատյուն՝ կարծես ուզենալով հիշեցնել գրոհողներին, թե նրանց ինչ է սպասում, եթե փորձեն փախչել:

Ներսում մթնոլորտը գնալով ավելի չարագուշակ էր դառնում, քանի որ ներսում գտնվող ծառայողները և հաճախորդներն ասես համոզված էին, որ բոլորս էլ այս կամ այն կերպ մեռնելու ենք՝ կա՛մ գրոհողների սարքած պայթյունից, կա՛մ էլ վերջիններիս և ոստիկանության ու բանակի միջև փոխհրաձգության ընթացքում:

Երբ գիշերը եկավ, ինչ-որ մեկը մոտեցավ գլխավոր դռանը՝ թափահարելով մի սպիտակ կտոր: Ծառայողական դուռը մի պահ բացվեց, և մի մարդ ներս մտավ: Ներկայացավ որպես Մաքսիմով՝ ռուսական դեսպանատնից միջնորդի դերով: Ինձ կանչել տվեցին, որպեսզի Մաքսիմովը կարողանար հաստատել, որ պատանդներից մեկը եվրոպական դեսպանատներից մեկի բարձրաստիճան պաշտոնյա է. մի բան, որ, ըստ երևույթին, ավելի ծանրակշիռ էր դարձնում իր խնդրանքը:

Բավականին զայրույթով՝ Մաքսիմովը բացատրեց, որ սուլթանը հրամայել է ռմբակոծել Բանկ Օտտոմանը՝ ցույց տալու համար, որ իր հետ խաղ անել չի կարելի, սակայն դեսպանները պատասխանեցին, որ եթե նման բան տեղի ունենա, պատասխան հարվածը կարող է ջախջախիչ լինել, ինչպես օրինակ՝ Դոլմաբաղչե պալատի ռմբակոծումը ռազմանավերից, որոնք խարիսխ գցած կանգնած էին Բոսֆորի մատույցում: Մաքսիմովը գալիս էր հայտնելու սուլթանի կողմից արդեն ընդունված ցնծագին լուծումը: Գրոհող հայերը կարող էին թողնել երկիրը՝ պաշտպանված դիվանագիտական մի անցաթղթով, նույն բանկի ֆրանսիացի որևէ խորհրդականի առագաստանավը նստել ու այս ձևով փախչել Ֆրանսիա:

Երկար տատանվելուց և երկմտանքներից հետո՝ հայ ուսանողները, թեև շատ կասկածահար, ընդունեցին առաջարկը: Ֆրանսիայի ծովայինների թիկնապահական մի հեծելավաշտ, և մյուսն էլ անգլիական նավատորմիղինը, եկան պայմանավորված ժամին և սպասեցին դրսում նրանց ուղեկցելու մինչև նավ՝ նրանց պաշտպանելով ոչ միայն ժանդարմերիայից, որ նման դեպքերում կփորձեր ձերբակալել նրանց, նաև բազմությունից, որը շարունակ բղավում էր սպառնալիքներ և նրանց հախից գալու առիթը երբեք բաց չէր թողնի:

Ինչ վերաբերում է ինձ, ես չենքը լքելու որևէ խնդիր չունեցա, թեև ոստիկանությունը մի քանի ժամ շարունակ պահեց անձնակազմի մնացյալ մասին՝ այն նպատակով, որ հաստատեին, որ նրանց մեջ մեղսակիցներ չկային: Հետևաբար ինձ թույլատրեցին լքել այդ վայրը դեսպանատան լանդոյով, որը նույն դռան մոտ ինձ էր սպասում: Ոչ ոք չէր ցանկանում մի նոր դիվանագիտական բախում:

Հաջորդ օրը գտնվում էի իմ պաշտոնական գրասենյակում, երբ քարտուղարն ինձ հայտնեց, որ մի հայ ուզում է տեսնել ինձ: Իջա այցելությունների սրահ և անակնկալորեն հանդիպեցի Հովհաննես Օհանյանին՝ այն բժշկին, որը եղել էր իմ առաջին հարևանը:

– Մսյե դը Լատուր, այնքան ուրախ եմ ձեզ տեսնել: Այցելությանս պատճառը ձեզ տեղեկացնելն է, որ մի երկու ժամ առաջ ոստիկանությունը ձերբակալել է մի հայուհու, որին դուք հավանաբար ծանոթ եք: Խոսքը Մարիցա Փիլիպոսյանի մասին է, որն այս պահին գտնվում է Բերայի կենտրոնական ոստիկանատանը: Վախենում եմ, որ եթե չփորձենք անմիջապես նրան այնտեղից հանել, այլևս չենք տեսնի նրան: Նրա ձերբակալության պատճառն այն է, որ նրա եղբայրը՝ իմ գործընկերը, Բանկ Օտտոմանը գրավողների մեջ էր: Զգիտեմ, դուք արդյոք կարո՞ղ եք կամ կուզենա՞ք մի բան անել հանուն նրա, բայց մտածեցի, որ պետք է իմանաք դա:

Տագնապահար տեղից վեր թռա: Մարիցա: Ինչպե՞ս գլխի չէի ընկել: Օհանյանը վազեց իմ հետևից՝ բացատրելով, որ պետք է շատ աչալուրջ լինենք, քանի որ հայերի դեմ խառնակչությունները վառոդի պես տարածվել են ամբողջ քաղաքով մեկ: Ակնհայտ էր, որ սուլթանը չի թաքցնում իր կատաղությունը տեղի ունեցածի առիթով և որ ստիպելու է, որ հազարավոր անմեղներ վճարեն վիրավորանքի դիմաց:

Փորձեցի սառնարյունորեն գործել, թեև քաջ գիտակցում էի, որ ոչ մի բոպե չպետք է կորցնեմ: Բարձրացա իմ գրասենյակ, որտեղ միշտ պահում էի ծիսակարգին համապատասխան մի կոստյում անսպասելի ընդունելությունների համար, քանի որ հանկարծ կարող էի դրա կարիքն անհապաղ ունենալ: Կառապանին կարգադրեցի, որ պատրաստեր պաշտոնական կառքը, դեսպանատան տոնական երկու կառքերից մեկը, որոնք օգտագործվում էին պաշտոնական հանդիսությունների ժամանակ: Օհանյանն ինձ զննում էր առանց թաքցնելու իր ոգևորությունը՝ հասկանալով իմ մտադրությունները:

Վազելով իջանք: Կառապանը նույնպես հագել էր իր տոնական համազգեստը, և ինձ հարցրեց, թե ուր ենք գնում: Կառք նստեցի՝ Օհանյանի ընկերակցությամբ, որն անընդհատ ինձ էր նայում, և կառապանին հրամայեցի, որ տաներ Ներքին գործոց նախարարություն: Այդպես էլ արեց և վարգավազ մտանք պողոտա, որի վրա դեռ մնում էին հրդեհված տրամվայների մնացորդներ, հանրային կառքեր, կոտրված անիվներ, հայերի ավերված խանութներ, փողոցում այս ու այնտեղ նետված դիակներ, և երկաթե մականներով զինված մարդահրեշների խմբեր, որոնք այս ու այն կողմ էին գնում-գալիս առանց թաքցնելու իրենց մտադրությունները:

Առանց մեր խնդրանքի՝ մեզ ուղեկցեցին մի քանի ժանդարմներ՝ հասկանալով, որ դիվանագիտական որևէ միջադեպ կարող է տեղի

ունենալ, եթե մեզ կանգնեցնեն: Կառապանը նրանց բացատրեց, որ գնում ենք նախարարություն և գնացինք այնտեղ փողոցով դեպի վեր և էլի ժանդարմներ ավելացան՝ թողնելով չքերթի տպավորություն, ինչն այլ պարագայում իմ ծիծաղը առաջ կբերեր:

Նախարարության դռնապանները, զարմացած, տեսնելով ուղեկցող թափորն առանց այլևայլության, կրնկի վրա բացեցին կռանակոփ վանդակաճաղերը: Անմիջապես քարտուղարներից մեկը մեզ տարավ դեպի ռոկոկո ոճի մեծ նախասրահ և այնտեղ հանդիպեցինք նախարարի օգնականներից մեկի հետ, որն ինձ հապճեպ ողջունեց՝ սպասողական նայելով ինձ:

Փորձելով զսպել զայրույթս՝ ներկայացա որպես Ֆրանսիայի դեսպանատան առաջին քարտուղար: Նրան ասացի, որ ցանկանում եմ խոսել ոստիկանության գլխավոր պետի հետ և որ խոսքը անհետաձգելի հարցի մասին է: Համաձայնեց փոքր-ինչ կասկածանքով, քանի որ նման գործելակերպը բացարձակորեն նախատեսված չէր արարողակարգում: Հետո մեզ առաջնորդեց մի ընդարձակ սպասասրահ, որտեղ ստիպված քսան բոպե սպասեցինք, մինչև կմտներ մի գեր, քրտնաթոր, վիթխարի փորով տղամարդ, որը ներկայացավ որպես Ահմեդ Ալի բեյ՝ ժանդարմների ոստիկանապետ՝ հարցնելով, թե իրենից ինչ եմ ուզում:

Պատասխանեցի թուրքերեն՝ աշխատելով հնարավորինս հանգիստ լինել՝ վստահեցնելով, որ հավանաբար սխալմունք է տեղի ունեցել, քանի որ դեսպանատան քարտուղարուհիներից մեկը՝ մադմուազել Փիլիպոսյանը, հնարավոր է ձերբակալված լինի, ինչը կարող է մեծ անպատեհություն առաջ բերել երկու երկրների փոխհարաբերությունների միջև, քանի որ խոսքը Ֆրանսիայի քաղաքացու մասին է:

– Ձերդ գերազանցությունն ասում է, որ այդ հայուհին պաշտոնյա է և ունի ֆրանսիական անձնագի՞ր,– Ալի բեյը երկմտանքով զննեց ինձ:

– Իհարկե: Ինքս եմ այն ստորագրել ընդամենը մեկ ամիս առաջ, պետք է որ ձեր մարդկանց տրամադրության տակ լինի, բայց ցանկացած դեպքում կարելի է ուղարկել կրկնօրինակը: Լսեք, կոմիսար, նա անձամբ աշխատում է ինձ համար, և ցանկանում ենք, որ հնարավորին չափ շուտ վերադառնա:

– Ձերդ գերազանցություն, բոլորովին չկասկածեք, որ կանեմ ամեն ինչ, ինչ կախված է ինձնից: Բայց սրանք դժվարին օրեր են,

գուցե մի սխալմունք է եղել, և եթե այդպես է, անմիջապես այն կուղղենք: Հրաման կտամ, որ նրան գտնեն և ուղեկցեն դեպի դեսպանատուն, ի վերջո չգիտեմ, թե ինչ տեղի ունեցած կլինի: Դուք ինձ հասկանո՞ւմ եք... Բոլորիս համար էլ վատ ժամանակներ են, շատ վատ: Կարո՞ղ եք ինձ կրկնել նրա անունը:

Այնտեղից դուրս գալիս Օհանյանն ինձ հիացմունքով լի հայացքներ էր ուղղում, մինչև որ մի պահ վճռեց խոսել շատ հարգալից ձևով:

— Դեռ մինչև հիմա հիշում եմ, որ ձեզ ողջունեցի, երբ մենք հանդիպեցինք իրար չքամուտքում: Ներքուստ զգացի, որ հայերի համար կարևոր մի մարդ եք լինելու, և հենց նոր դուք դա ապացուցեցիք վտանգելով ձեզ չափից ավելի՝ հանուն մի հայուհու մահից փրկելու: Շնորհակալություն իմ ժողովրդի անունից: Երանի շատերը լինեին ձեզ նման: Շնորհակալություն:

Համաձայնեցի՝ փորձելով ժպտալ, կարևորություն չտալով դրան, սակայն ակնհայտ էր, որ Օհանյանը ցնցված էր:

Վերադարձանք դեսպանատուն շատ անհանգստացած՝ համոզվելով, թե ինչպես էին տարածվում անկարգությունները քաղաքով մեկ, մինչդեռ ոստիկանությունը ոչ մի մտադրություն չուներ միջամտելու: Դա այն բանի կրկնողությունն էր, ինչ կատարվել էր ամիսներ առաջ, բայց շտկված և ավելի ծավալուն: Այլևս ոչ ոք չէր կասկածում սուլթանի խարդախ ծրագրերին, որոնք զուտ քաղաքական ընդհարումից վերածվում էին ինչ-որ անձնականի՝ հայ հպատակների նկատմամբ իր ատելության պատճառով:

Հրաժեշտ տվեցի Հովհաննես Օհանյանին, որը դարձյալ հայտնեց ինձ իր շնորհակալությունը: Նրան պատասխանեցի, որ ինքս էի իրեն շնորհակալ՝ ինձ եկած և հայտնած լինելու համար: Հետո կարգադրեցի կառապանին, որ տաներ նաև զինված թիկնապահների, քանի որ այլ կերպ, նկատի ունենալով իրավիճակը, նա տեղ չէր հասնի կենդանի:

Մեզ ավելի ուշ տեղեկացրին, որ կառավարությունը հրաման էր արձակել բացել բանտերի դռները այն խոստումով, որ ներում կշնորհեին նրանց, ովքեր հայերի վրա կհարձակվեին: Կոստանդնուպոլիսը կրկին գտնվում էր ոճրագործների և ամենաստորին խավի մարդկանց ձեռքերում, որոնք գործում էին բացարձակ անպատժելիությամբ, քանի որ տրված հրամանով, բանակը և ոստիկանությունը հետ էին քաշվել իրենց զորանոցները:

Համոզվեցի նրանում, որ անկարգությունները համընդհանուր են և որ հայերը ահավոր վիճակում են՝ անկախ տարիքից, սեռից և դիրքից, մի նոր նենգ սադրանքում, որ Աբդուլ Համիդն էր հրահրել իր կառավարությանը:

Անցավ առնվազն տասներկու ժամ, որոնց ընթացքում կարծեցի, թե այլևս նրան չեմ տեսնելու, մինչև որ ոստիկանության երկու ձիով լծված մի կառք կանգնեց դեսպանատան դիմաց: Մի փխրուն սիլուետ իջավ կառքից և օրորվելով քայլեց դեպի դարպասը: Հասկացա, որ Մարիցան էր և վազեցի փողոց: Երբ մոտեցա, տեսա, թե ինչ վիճակում էր: Նրան դաժանաբար ծեծել էին: Նրա այտուցված դեմքը ցույց էր տալիս գազանաբար ձաղկված լինելու նշաններ, նրա կապտած աչքերը հազիվ էին բացվում, հագուստը բզկտված էր, ինքն էլ նկատելիորեն կաղում էր: Հանկարծ, ինձնից երկու քայլի վրա ընկավ գետնին:

Ես հակվեցի նրա վրա և տեսա, որ ուշագնաց է եղել: Այդ ժամանակ նրան վերցրի թևերիս վրա և տարա դեսպանատան բուժարանը. մի փոքրիկ սրահ մեկ մահճակալով, որտեղ բժիշկը քննում է հիվանդներին: Կանչել տվեցի բժշկին, և Լուի Գոբերն անմիջապես եկավ: Ինձ դուրս հրավիրեց, մինչ քննում էր նրա վիճակը: Քիչ անց նրան պատգարակով տարան հյուրերի սենյակներից մեկը:

— Նրան գազանաբար են ծեծել: Նա կարող էր մեռած լինել հացրված հարվածների պատճառով, բայց ուժեղ, երիտասարդ աղջիկ է, և կարծում եմ՝ կկարողանա դուրս գալ այս դրությունից: Ամբողջ մարմնի վրա արյունազեղումներ ունի, երկու սեղանատամ է կորցրել, իսկ աջ ականջը ուժեղ վնասվել է: Կողոսկրերից երկուսը կոտրված են, ոտքերից մեկին մի կտրվածք կա, ծնոտոսկրի և նաև ձախ նախաբազկի կոտրվածք: Զգիտեմ՝ կա՞ն ներքին լուրջ վնասվածքներ, բայց մեզում արյան հետքեր չկան..., իսկ դա լավ նշան է: Գիտակցությունը տեղն է, բայց նրան հանգստացնող դեղամիջոց եմ տվել, որովհետև ուժեղ ցավեր ունի: Անրի, իսկապես քեզ ոչինչ վստահ ասել չեմ կարող, մինչև որ քառասունութ ժամ չանցնի: Երբեմն խընդիրներ են ծագում, ինչպես օրինակ՝ երիկամային անբավարարություն:

Կարծում եմ, որ ոչինչ չի պատահի, բայց երբեք չեմ տեսել որևէ մեկին՝ այդպես ծեծի ենթարկված: Նա, ով աղջկան ծեծել է,— հավանաբար ոչ մենակ,— մարդու տեսքով գազան է: Ի՞նչ է կատարվում այս երկրում, Սուրբ Աստված:

Մարիցան դուրս եկավ այդ վիճակից: Երբ ինձ թույլ տվեցին մտնել նրան տեսնելու, նրա կապտած դեմքը և կիսափակ աչքերը փորձեցին

դեմքին ժպիտ տալ, սակայն փոխարենը ծամածռություն ստացվեց: Այդ պահին ինձ խանգարում էր հուզմունքը, և չէի կարողանում խույս տալ, որ աչքերս արցունքներով չլցվեին:

– Կրկին շնորհակալություն,– թույլ չչնջաց,– կարծում եմ՝ կյանքով եմ ձեզ պարտական... Եղբայրս և ես ձեր շնորհիվ ենք գտնվում այստեղ:

– Ոչ, ինձ ոչինչ պարտական չեք: – Ես ճիգ գործադրեցի խոսելու համար: – Դուք՝ հայերդ, խրթին մարդիկ եք: Հիմա ավելի լա՞վ եք:

Մարիցան համաձայնության նշան արեց:

– Դե ինչ, ամբողջ մարմինս ցավում է, և ամեն անգամ, որ շնչում եմ, ոնց որ դաշույնով խոցեն, սակայն կարծում եմ, որ բախտս շատ է բերել... Բուժքույրն ինձ պատմել է, որ քաղաքում կան հազարավոր սպանվածներ:

– Դե լավ, ուրախացեք, որովհետև ձեզ նվեր եմ բերել: Մի անձնագիր՝ Մարիցա Փիլիպոսյանի անունով: Այստեղ գրված է. Ազատություն, հավասարություն, եղբայրություն: Ձերն է, հիմա դուք նույնպես ֆրանսուհի եք, և երբ կուզեք, կարող եք թողնել Թուրքիան, բայց լաց մի եղեք, ձեզ աղաչում եմ: Կարծում եմ, որ դուք դրան արժանի եք:

– Անրի, լաց եմ լինում շնորհակալ լինելուց, բայց չեմ կարող չմտածել իմ խեղճ ժողովրդի մասին: Քանի՞-քանի՞ հայեր կուզենային ունենալ այս փաստաթուղթը:

– Լավ: Հիմա աշխատեք հանգստանալ: Բժիշկն ինձ հավաստիացրել է, որ մի քանի օրից ձեզ թույլ կտա վեր կենալ: Այդ ժամանակ էլ կխոսենք:

Այդ նույն առավոտ Պոլ Կամբոնը շատ լուրջ ձևով ինձ կանչեց իր գրասենյակ:

– Անրի, կարծում եմ, որ պետք է խոսենք: Եկող շաբաթ վերադառնալու ես Փարիզ, եթե ոչ, կարող ենք դիվանագիտական ընդհարում ունենալ: Ավելի լավ է, որ մի որոշ ժամանակով անհետանաս: Պատմում են, որ գնում ես այս ու այն կողմ՝ հայերին օգնելու, իսկ դա այստեղ և հիմա կարող է շատ վտանգավոր լինել՝ անձամբ քեզ և մեր դիվանագիտական առաքելության համար: Այնպես որ, մի քանի օր դուրս մի արի և եկող նավով կվերադառնաս Փարիզ: Քեզ հանդիմանելու ոչինչ չունեմ: Քեզ կասեմ, որ հիանում եմ քեզնով, բայց հիմա չես կարող մնալ այստեղ... Հասկանում ես, այնպես չէ՞: Այստեղ՝ Թուրքիայում, գործերը գնալով շատ են վատանալու, և ես չէի

ուզենա, որ քեզ որևէ բան պատահի: Գիտե՞ս, թե որքան հայեր են մահացել այս օրերին: Հազարավոր, հինգ կամ վեց հազար առնվազն, գուցե և շատ ավելի և մի քանի եվրոպացի: Վերադարձիր և որոշ ժամանակ հանգստացիր, հետո կտեսնենք, թե ինչ կանենք քեզ հետ:

Պոլն ինձ գրկեց՝ կամենալով ինձ ասել, որ անկախ ամեն ինչից, նա ինձ հետ է:

Մի շաբաթ անց նստեցի ֆրանսիական նավատորմիղի մի հածանավ: Նավախցիկներից մեկում ճամփորդում էր Մարիցա Փիլիպոսյանը: Որպեսզի նրան թողնեին նավ նստել, ստիպված համոզեցի հրամանատարին, որ նա իմ նշանածն է: Ճամփորդությունն անցավ շատ լավ՝ եղանակի շնորհիվ, և երբ հասանք Մարսել, պատրվակը դարձել էր իրականություն, քանի որ Մարիցան ու ես նշանվեցինք: Տրամաբանական էր, իսկ երբ ոտք դրեց Ֆրանսիա, ինձ պինդ գրկեց: Այդ պահից սկսած՝ իմ սիրտը պատկանում էր Հայաստանին:

1896 – 1902

27. ՓԱՐԻԶ՝ ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ

Փարիզ հասնելուն պես նախապատրաստվեցինք մեր հարսանիքին, որը տեղի ունեցավ երեք ամիս անց. հանուն ինչի՞ սպասեինք: Եվ ուրեմն ինձ համար սկսվեց երջանիկ մի ժամանակահատված: Դիվանագիտական անձնակազմում խնդրեցի աշխատանքի առժամանակյա ընդհատում և վերադարձա իմ առևտրաֆինանսական գործերին, որոնց գերազանց վարույթով մինչ այդ զբաղվել էր իմ աշխատանքային թիմը: Փող աշխատելու և այն ծախսելու հրաշալի պահ էր: Վերականգնեցի Պլաս դը Վանդոմի, մի խաղաղ փոքրիկ հրապարակի մոտ գտնվող այն չքեղ տունը, որում ապրել էին ծնողներս և ձեռնամուխ եղա մեր օջախի ստեղծմանը, քանի որ լրացել էր իմ՝ երեսունվեց և Մարիցայի քսանչորս տարին: Նա սահուն էր խոսում ֆրանսերեն և ընդամենը մի քանի ամիս անց՝ նաև փարիզյան չեչտով: Ինչ վերաբերում էր նրա եղբորը՝ Օհաննեսին, մտավ աշխատանքի Սալպետրիերի հիվանդանոց՝ իր արժանիքների շնորհիվ և շուտով բացեց մասնավոր հիվանդատուն:

1897 թ. մայիսին Մարիցան լույս աշխարհ բերեց մեր որդուն: Էդուարը նման էր ինձ, նաև օժտված էր իր մոր սուր մտքով: Ժամանակն անցնում էր արագ, և XX դարը սրընթաց նետվեց մեզ վրա այն տարակուսանքով, թե ինչե՞ր է մեզ հրամցնելու արդիականությունը: Փարիզը՝ պերճաշուք, ցուցահանդեսով ցույց էր տալիս, թե ինչի էին ընդունակ ֆրանսիացիները: Ինժեներ Էյֆելը հայտնի դարձավ իր ցնցող մետաղյա աշտարակով, անկախ այն բազմաթիվ քննադատություններից, որ ստացել էր՝ մեղադրվելով քաղաքի համայնապատկերը փչացրած լինելու մեջ: Հավաքույթներից մեկում ես նրան ողջունեցի և շնորհավորեցի, քանի որ ինձ դուր էին եկել աշտարակի գեղեցկությունը և խիզախ մտահղացումը, և նրան պատվիրեցի ուսումնասիրել և Լիոնում զբաղվել իմ ունեցած ֆաբրիկաների ընդլայնմամբ:

Ցուցահանդեսի օրերին էր, երբ մարդիկ հասկացան, որ ողջ աշխարհը փոփոխվում է. մտքի լույսն ի վերջո թափանցում էր ամենածածուկ գոյացությունների հիմքերը, և լավատեսությունը, որ թեվածում էր հասարակության շրջանում, ոգեշնչման պտուղ էր և իր հետ բերում էր նոր դարաշրջանը:

Զնայած որ ես ու կինս երջանիկ էինք Փարիզում, չէինք կարողանում մոռանալ Կոստանդնուպոլիսը. որքան հիասքանչ, այնքան էլ ողբերգական մի քաղաք, որում շատ տարիներ էինք ապրել և որում շարունակում էին ապրել Մարիցայի բազմաթիվ ազգականները և իմ լավագույն բարեկամներից շատերը:

Ինձ հիացնում էր նրա՝ հարմարվելու ընդունակությունը, թեև ինքը դրան կարևորություն չէր տալիս: Միշտ այն մտքին էր, որ հայն աշխարհի քաղաքացի է և ընդունակ՝ առաջխաղացման ցանկացած պարագայում:

Անկախ հեռավորությունից և ժամանակից՝ մեր տունը կամաց-կամաց վերածվեց մի տեսակ Հայաստանի դեսպանատան, և այնտեղ սկսեցին գալ ամեն խավի ու դիրքի տեր հայեր: Ոմանք դիմում էին ինձ, որ իրենց նեղ վիճակից հանեի, նրանց համար երկրում ապրելու թույլտվություն կամ աշխատանքի տեղ ձեռք բերեի: Այդ ժամանակ էլ պարզեցի, թե որքան շատ հայեր են ապրում Ֆրանսիայում և մանավանդ Փարիզում:

Մտաբերում էի Կոստանդնուպոլսում անցկացրած տարիները որպես իմ կյանքի ամենահետաքրքիր ժամանակ՝ համոզվելով, որ մարդ-արարածին հատուկ են լավագույն և վատթարագույն հատկություններ: Եթե ինձ հարցնեին, ես կպատասխանեի, որ երբեք այնտեղ չեմ վերադառնա: Սակայն հանգամանքներն ինձ վերստին ստիպեցին հասկանալ, որ մարդկանց ցանկությունները մի բան են, իսկ իրականությունը՝ այլ բան, շատ տարբեր, որն ի վերջո, սպասելով պատեհ առիթի, մեզ պարտադրում է իրեն:

Դա տեղի ունեցավ 1901 թ., երբ Ֆրանսիայի կառավարությունը խնդրեց ինձ համագործակցել որպես արտոնյալ բանակցող՝ գերմանական մեծ բաժնետիրական ընկերությունների հետ երկու կողմերի համար փոխշահավետ տնտեսական համաձայնագրեր կնքելու նպատակով: Գերմանացիներին հաջողվել էր ձեռք բերել Օսմանյան կայսերական ընկերության հատկացումը Բաղդադի երկաթուղու շինարարության համար՝ Գերմանական և Օտտոման բանկերի միջոցով և բարեբախտաբար, ես այդ երկու ընկերությունների խորհրդականն էի, քանի որ ինձ նաև պատկանում էին գերմանական արդյունաբերության արժեթղթային կարևոր փաթեթներ:

Բեռլին կատարած ուղևորություններից մեկի ժամանակ պատեհ առիթ ունեցա հրավիրված լինել ֆոն Զիմենսի կողմից և այնտեղ ծանոթացա գերմանական բանկի տնօրենի՝ Արթուր ֆոն Գվինների հետ պաշտոնական մի ընդունելությունում, որին ներկա էր ինքը՝ կայզերը:

Այնտեղ ֆոն Զիմենսը ներկայացրեց ինձ կայզերին՝ հատուկ նշելով Թուրքիայում ձեռք բերած իմ հատուկ փորձառության մասին: Կայզերը ցուցաբերեց աչխույժ հետաքրքրություն և մեզ պատմեց Կոստանդնուպոլիս կատարած իր երկու այցելությունների մասին, առաջինը՝ 1889 թ., իսկ երկրորդը՝ 1898-ին:

– Շատ էկզոտիկ երկիր է, ահ, մուսուլմանական աշխարհը... Այդ աշխարհը սոսկ գիտենք արտաքուստ, բայց անհնարին է իմանալ, թե իրականում ինչ են մտածում նրա մարդիկ: Ահավասիկ ձեզ օրինակ Աբդուլ Համիդը... Լավ, նա լայնախոհ մարդ է, Գերմանիայի եռանդուն երկրպագու և իմ լավ ընկերը: Նրան հրավիրեցի այցելել Բեռլին, թեև կասկածում եմ, որ գա: Հաճելի մարդ է, բայց ահավոր կասկածամիտ, չատ անգամներ են նրա վրա մահափորձ կատարել, և չեմ կարծում, որ ընդունակ լինի լքել իր սեփական՝ Դոլմաբաղչե պալատը: Ինչ ցուցամոլություն: Հավանաբար նրա համար այն կառուցել է հայ մի ընտանիք: Պայլաննե՞րը, այո՛, կարծում եմ, որ, այո՛... Ի՞նչ տարօրինակ և սրտակեղեք է հարաբերությունը՝ մուսուլմանների և քրիստոնյաների միջև: Հայերի նկատմամբ համակրանք եմ զգում, սակայն վերածվել են պատմական ժամանակավրեպության: Ձեզ այդպես չի՞ թվում: Հիմա, երբ թուրքերը Գերմանիայի բարեկամներն են, ի՞նչ պետք է անենք հայերի հետ: Մարշալ ֆոն դեր Գոլցը՝ ապագան հստակորեն կանխագուշակող մի մարդ, ինձ առաջարկում է տեղափոխել նրանց Միջագետք... Գուցե այնտեղ կարողանային վերստին հիմնել իրենց երկիրը: Զիջենք նրանց մի լավ հողատարածք՝ Եփրատի և Տիգրիսի միջև, և նրանք, լինելով ջանասեր, մի քանի տարում կունենան իրենց երազած երկիրը, որովհետև, որքան ինձ հայտնի է, Թուրքիայում նրանց թև տալը կհանգեցնի աղետի: Ի վերջո, քաջ գիտակցում ենք, որ Գերմանիան հողատարածքների կարիք ունի, նոր տարածքների, որոնցում կարողանա ընդլայնվել: Ինչպես ասել է մեր սիրելի Բերնարդին – «Lebensraum»: Այո՛, հենց այդպես «կենսոլորտ», ահա թե ինչ տեղին նշանաբան է: Ուզում եմ հիշեցնել նաև այն, ինչ ասել է Բիսմարկը. «Ապագան ծովում է և Ասիայում»: Երբ իմ երկրորդ ուղևորության ժամանակ այցելեցի սուլթան Աբդուլ Համիդին,– ինչ մեծ արքա է իր ժողովրդի համար,–

հստակորեն ըմբռնեցի, որ Կոստանդնուպոլիսը Արևելքի դուռն է, և որ Գերմանիան մի նշված ճանապարհ ունի, այնտեղ կան հսկա տարածքներ՝ այսօր խոպան, որոնք մեզ են սպասում: Հրավիրում եմ ձեզ, որ հաստատեք:

Կարող ենք հասնել Պարսից ծոց և այդ ողջ ընդարձակ երկիրը դարձնել մեր հենասյունը: Ձասեք, թե ձեզ չի խրախուսում այս գաղափարը: Ուրեմն՝ այո՛, Գերմանիան պատմության մեջ կգրավի իր իսկական տեղը, որ ամեն դեպքում, վաղ թե ուշ, դրան կհասնի:

Այդպես ավարտեց կայզերն իր հատուկ կանխագուշակությունը: Ինչ-որ մեկը գրավեց նրա ուշադրությունը. առանձնացավ նրա հետ զրուցելու և մի քանի բոպե անց լքեց հավաքույթը՝ ներկաների ծափերի ներքո: Այդ ժամանակ խոսքը տրվեց Գեորգ ֆոն Զիմենսին՝ Գերմանիայի ամենածանրակշիռ մարդկանցից մեկին:

– Մեր կայզերը հեռուն լավ տեսնող մարդ է, և գերմանացիներս պարտավոր ենք լավատեսորեն նայել առաջ... Գիտե՞ք արդյոք, որ արդեն հիսունհինգ միլիոնից ավելի ենք: Եթե չենք ուզում իրար արմունկներով հրմշտել, պետք է նոր տարածքներ փնտրենք, այն կենսական ոլորտը, որի մասին մեր կայզերը պայծառատեսորեն խոսում է, և ես եմ այդ ասում, որովհետև անձամբ եմ այցելել այդ վայրը, որը եղել է դրախտավայր, կարող է վերստին դառնալ դրախտավայր՝ այս անգամ Գերմանիայի համար:

Եվ մենք պետք է անենք դա, արյամբ, քրտինքով և արցունքներով, եթե հարկ լինի: Քանի որ ոչ ոք մեր խնդիրները չի լուծի, Կոստանդնուպոլսից մինչև Անկարա և այնտեղից Դիարբեքիրով, Մոսուլով մինչև Բաղդադ և Պարսից ծոց: Կարող ենք կենտրոնական կայարանում գնացք նստել այստեղ՝ Բեռլինում և մինչև Հնդկական օվկիանոսը չիջնել: Եվ ամբողջ այս ընդարձակ տարածքը կլինի գերմանական տիրապետության ներքո: Անշուշտ, մեր ֆինանսական գործընկերների՝ ֆրանսիացիների թույլտվությամբ:

Ֆոն Զիմենսը մեղսակցության մի հայացք գցեց վրաս.

– Որովհետև էլ ո՞ւմ հետ կարող էինք կիսել այս ձեռնարկումը, միայն ձեզ՝ ֆրանսիացիներիդ, իմ մեծարգո դը Լատուր, մեր լավագույն գործընկերների հետ, ուրիշ ոչ ոք չի կարող մեզ ընկերակցել: Բացի այդ, կայզերը պարզ ասել է. քամին փչում է հօգուտ մեզ:

Ձեզ հիշեցնում եմ, որ Թուրքիայի քրիստոնյա բնակչությունը ձգտում է դեպի Եվրոպա, և կլուծենք պատմական մի դժվարին խնդիր... «Հայկական հարցը»: Անցած օրը այս երևելի մարդը՝ Ռորբախը, ինձ բացատրեց իր տեսակետը, որը համընկնում է մեր կայզերի

կարծիքի հետ: Հրաչալի է: Տեսեք, հայերը պահանջում են ունենալ սեփական հայրենիք, ուրեմն՝ եկեք նրանց տանք այն... Միջագետքում: Սուլթանին մեծ լավություն կանենք, Թուրքերի կոկորդից փուչը կհանենք, հայերին կտանք այն, ինչ ուզում են, իսկ եվրոպացիներս օգուտով դուրս կգանք: Պատկերացրեք այդ ձեռներեց հայերին, որ ստեղծում են հարստություն մի խաղաղ երկրում՝ Ֆրանսիայի և Գերմանիայի հետ համագործակցության համաձայնագրերով: Ես դա տեսնում եմ: Շատ խնդիրների վերջ կտայինք: Հարյուրհազարավոր գերմանացիներս և ֆրանսիացիներս: Ինչ խոսք, ֆրանսիացիները նույնպես կգաղութացնեն չատ ընդարձակ տարածքներ, որ այսօր մի բուռ արաբի և չորս ուղտի են պատկանում: Եկեք գործնական լինենք, և ներող կլինի Լատուրը, սակայն Ֆրանսիան չափից ավելի շահույթներ ունի Թուրքիայում դրանք հաշվի առնելու համար:

Գերմանիան հիմա է դրանք ունենալու, և ասեմ ձեզ, որ Թուրքիան ահավոր հիվանդ է գոյատևել կարողանալու համար: Ուրեմն, ի՞նչ: Դե եկեք նրանց տանք այն մասը, որի կարիքն ունեն, իսկ մնացածը, ահ, մնացածը: Պետք է համաձայնությունների գանք, և լավ կլիներ դրանք արդեն իսկ սկսեինք կնքել՝ մեծահոգաբար և ապագայի տեսանկյունից:

Ինձ հետ համաձայն կլինեք, որ հայերը կարող են մեզ օգտակար լինել: Զպետք է թույլ տանք, որ սուլթանը նրանց բնաջնջի, և ուրիշ կողմ հայացք դարձնենք:

Լավ, պարոնայք, դեռ կչարունակենք խոսել այս հուզիչ հարցի շուրջ, իսկ հիմա ձեզ խորհուրդ կտայի, որ մի քիչ ուշադրություն դարձնեք տիկնանց: Primum vivere, deinde philosophari! Նախ ապրել, հետո փիլիսոփայել կյանքի շուրջ:

Ֆոն Զիմենսի առանձնատնից դուրս եկա զայրացած՝ կայզերի և պրուսացի առաջնորդների ցինիկ մտածելու կերպից, նաև այն համոզմունքն ունեի, որ նրանց տեսակետը ամբողջովին խեղաթյուրված է՝ իրենց իսկ գաղափարական կարճատեսությամբ և իրականում ոչինչ էլ չեն անի, քանի որ համոզված են գերմանական ռասայի՝ մնացած բոլոր ժողովուրդների նկատմամբ ունեցած գերազանցությունում: Համոզված են, որ ի վերջո Վոտանը նրանց տանելու է դեպի փառք:

Այդ ամենն ինձ խորհրդածելու տեղիք տվեց և Մարիցայի հետ Փարիզ վերադառնալով՝ երկար խոսեցինք, որոշում կայացրինք, որ մեր որդին հայերեն սովորի, որպեսզի չմոռանա իր արմատները: Մի ուսուցչի վարձեցինք՝ Արարատ Բալաքյանին, որը նրան չաբաթվա

հինգ օրը սովորեցնելու էր ոչ միայն քերականություն, այլև պատմություն, մշակույթ և աշխարհագրություն:

Բնականաբար, ուշի ուշիով հետևում էինք Կոստանդնուպոլսից եկող լուրերին: Արտաքին գործերի նախարարությունն ինձ խորհուրդ տվեց, որ առայժմ չվերադառնամ այնտեղ, խորհեցի, որ որևէ մեկը կարող էր մատնած լինել ՀՀԴ-ին իմ պատկանելը, իսկ այդ դեպքում ինձ համար վերադառնալը վտանգավոր կլիներ:

Մարիցան մենակ կգնար՝ փորձելով իր ազգականներին Փարիզ բերել: Անկախ տեղի ունեցածից՝ նա ոչ մի վախ չուներ: Բայց եթե չգնայի, նա էլ մենակ չէր ուզում գնալ: Մի քանի գիշեր Կոստանդնուպոլսի Կենտրոնական ոստիկանության ստորգետնյա բանտում տեղի ունեցածի հետ կապված հիշողությունները միտքն էին գալիս, և այդ պահերին արթնանում էր քրտինքով պատված՝ երբեմն հուսահատությունից ճչալով: Այնուամենայնիվ, չէի ցանկանում խոսել այդ մասին, ասես երկուսիս միջև լուռ համաձայնություն կար՝ փորձելով մոռանալ կատարվածը, այն վերջնականապես հետևում թողնելու համար:

1902 թ. փետրվարին ինձ կանչեցին «Լ'Օրոր»-ից, որի տնօրենի հետ ջերմ հարաբերություն էի պահպանում, բացի այդ համագործակցում էի՝ գրելով հոդվածներ: Այդ մարդն ինձ դիմավորեց սրտաբուխ գրկելով իր գրասենյակում:

– Անրի, քեզ հետաքրքիր կլինի՞ ներկա գտնվել Թուրքական Իթթիհադ կուսակցության համաժողովին: Տեղի է ունենալու այստեղ՝ Փարիզում, և ես մտածեցի քո մասին: Ահա քեզ հավատարմագիրը: Նախընտրում եմ, որ դու ներկա գտնվես, քանի որ դու այդ հարցին չատ ավելի տեղյակ ես, քան ցանկացած մեկ ուրիշը: Սկսվում է եկող երկուշաբթի փոքր պալատում: Եթե ժամանակ և ցանկություն ունենաս, փորձիր մի ռեպորտաժ պատրաստել, քանի որ այդ մարդիկ իրենց մասին խոսելու դեռ չատ տեղիք կտան:

Իմ բարեկամը չէր սխալվում: Կարծեցի, թե ժամանակի մեջ հետ էի գնացել, քանի որ համաժողովին ներկայացա չորս այլ ֆրանսիացի լրագրողների հետ միասին, որոնց ճանաչում էի «Լ'Օրոր»-ի հետ իմ առնչությամբ:

Այնտեղ էր գտնվում Ահմեդ Ռիզան՝ գուցե կուսակցության մեծագույն գաղափարախոսը, իշխան Սաբահէդդինի ընկերակցությամբ, որը թեև սուլթանի զարմիկն էր, բայց նրան ամբողջ սրտով ատում էր: Հետո հայտնվեց մի հայ, որն ինձ չատ հետաքրքրական թվաց. Ավետիս Ահարոնյանը, որն իր ասելով պաշտոնապես ներկայացնում

էր հայ ժողովրդին, թեև անգամ պաշտոնական հավատարմագիր չուներ:

Համաժողովը բացեց իշխան Սաբահէդդինը, որը խզել էր բոլոր կապերը, որոնցով նա կարող էր առնչվել սուլթանի պալատի հետ: Խոսեց կաշառակերությունից, ժողովրդի շահագործումից, հավաստիացրեց, որ Իթթիհադը ձեռք կմեկնի քրիստոնյա փոքրամասնություններին և քրդերին, որ պետք է վերջ տալ սուլթանի համակրանքը վայելող այլասերված խավի արտոնություններին, խոսեց համոզմունքով՝ կարևորագույն օրենքների հանդեպ հարգանքի մասին, ինչպիսիք էին 1876 թ. Սահմանադրությունը և Բեռլինի համաձայնագիրը: Իր ուղերձ-ճառն ավարտեց՝ կոչ անելով հանուն ամբողջականության և սոցիալական ու տնտեսական առաջընթացի: Թուրք պատվիրակները հաճույքով ծափահարեցին Սաբահէդդիի ելույթը, մանավանդ նրանք, ովքեր ներկայացնում էին երիտթուրքերին: Ոչ այնպես, ինչպես հայերը կամ հույները, որոնք հավատ չէին ընծայում Իթթիհադ վե Թերրեքի՝ Միություն և առաջադիմություն կոմիտեին:

Ավետիս Ահարոնյանը նստեց կողքիս՝ այդ ամենի մասին իր տեսակետը տալու:

– Տեսեք, մսյե դը Լատուր: Ձեզ լիովին վստահում ենք անկեղծորեն խոսելու համար: Իշխան Սաբահէդդինը ատում է իր ազգականին ամբողջ սրտով, թեև կարծում եմ, նրան չէր խանգարի դառնալ սուլթան: Նա այն գաղափարների ջատագովն է, որոնք ծնվել են այստեղ մեկ դար առաջ, Ֆրանսիական հեղափոխության հետ, բայց որոնց իր հոգու խորքում չի հավատում, քանի որ չի հավատում հավասարությանը, քանի որ կրում է իր միակ իշխանության տիտղոսը, չի հավատում եղբայրությանը, քանի որ հոգու խորքում համոզված է, որ միակ ռասան, որ իր պատմությամբ իրավունքներ ունի, թուրքերն են, որոնց ինքը պատկանում է ժառանգաբար, դաստիարակությամբ և ավանդույթով: Առհասարակ չի հավատում ազատությանը, քանի որ Օսմանյան կայսրությունը հնազանդ փոքրամասնությունների հավաքածու է: Իհարկե, այստեղ՝ Փարիզում, չի կարող այլ կերպ խոսել, բայց մեր մեջ ձեզ ասեմ, որ ամենևին չեմ վստահում Իթթիհադին: Տեսեք, փորձեմ բացատրել: Գուցե և լինեն մի քանի թուրք առաջնորդներ, որոնք ձգտում են եվրոպական առաջադիմությանը, բայց շատերն էլ հենց որ տուն վերադառնան, կհագնեն իրենց չուստերն ու ֆեսը: Եթե հավատանք նրանց խոստումներին, ինչ հարկ կա միանալ մի քանի փոքրամասնությունների: Բոլորս հավասար չե՞նք լինելու: Բայց գիտեն, որ եթե չփոխեն Աբդուլ Համիդի գծած ուղին, նրանք

ենթակա են ձախողման. իսկ պատմությունը չի ներում: Ամբողջապես համաձայն ենք նրանում, որ այդ սուլթանը հակակշիռն է այն ամենի, ինչից խոսել են այստեղ: Նա հիվանդ դատողությամբ մարդ է, որը միայն լսում է պանթուրքերին, պանթուրանիստներին, արմատական ուլեմներին (մի՞թե բոլոր հավատացյալների խալիֆը չէ) և ինչ պարադոքս՝ նաև իր աստղագուշակներին: Եվ գիտե՞ք, թե ինչ են նրան անվերջ կրկնում բոլոր նրանք. ովքեր թուրք չեն, ցանկանում են կայսրության անկումը:

Երբ հիշում է Միսսոլունգը*, կատաղությունից հիվանդանում է, ատում է հույներին, սերբերին, ալբանացիներին, բուլղարներին, բայց բոլորից շատ՝ հայերին: Այդ մարդը, եթե կարողանար, մեզ կբնաջնջեր, և հանգամանքները, Աստված ոչ անի, գուցե և դա նրան թույլ տան:

Այնտեղ՝ կուլիսների հետևում, Ահմեդ Ռիզան է. այդ նա է, որ շարժում է դիրիժորի փայտիկը: Կարողացե՞լ եք աչքի անցկացնել «Երիտասարդ թուրքեր»-ի իր ծրագիրը. միասնականություն, ամբողջականություն, տարածքային անքակտելիություն: Ուրեմն հայերս չաքարի պես պետք է հալվենք, և վերջ խնդիրներին: Տեսեք, ես շատ անգամներ եմ խոսել նրա հետ. միշտ ուզում է ինձ համոզել, որ բոլորս հավասար ենք լինելու, բայց այն, ինչ ուզում է ասել՝ բոլորս լինելու ենք թուրքեր: Իսկ դա անհնարին է: Մենք քրիստոնյա ենք, իրենք՝ մուսուլման... Թեև համոզված եմ, որ Աստված բոլորիս է պաշտպանում: Ինչ մնում է ինձ, ուզում եմ մնալ, ինչպես որ կամ: Այդ մարդը մեր լավը չի ուզում, իսկ ժամանակը դա կապացուցի, բացի այդ՝ ուշադրություն դարձրեք Իթթիհադի ղեկավարներին. այնտեղ են Բեհաէդդին Շաքիրը, դոկտոր Նազրմը, Ջելալ Նուրին և այլն, և այլն: Ես, որպես հայ, ինձ պատկերացնում եմ ձյան վրա՝ չրջապատված սովահար գայլերով: Ձեմ հավատում: Այստեղ ենք, որպեսզի իմանանք այն ամենը, ինչ խոսում են հրապարակավ: Երբեք չենք իմանա նրանց մտքինը, ոչ էլ այն, ինչ թաքուն են պահում: Ուզում են, որ նրանց օգնենք՝ սուլթանին գահընկեց անելու, իսկ հետո կտեսնենք: Բայց տեսեք, այս առաջադիմության ենթադրական կառավարությունում իրենք են վերահսկելու բանակը, ոստիկանությունը և արդարադատությունը: Մերթ ընդ մերթ նրանք բերանից բաց են թողնում մտքեր օսմանիզմի մասին, խոսում օսման ժողովրդի, օսմանյան փառավոր պատմության մասին... Իսկ մենք՝ հայերս, այդ ամբողջ պատմության

* Միսսոլունգի (Հունաստան) ճակատամարտը, որին մասնակցեց Բայրոնը և որտեղ 1824 թվականին մահացավ տենդախտից:

մեջ ի՞նչ տեղ ենք գրավելու: Այն, ինչ կանխագգում եմ, որ մեր գլխին գալու է, ինձ դուր չի գալիս, ի՞նչ եք ուզում, որ ձեզ ասեմ: Ձեմ հավատում նրանց...

Ձկարողացա առարկել Ահարոնյանի ոչ մի փաստարկին, որովհետև Կոստանդնուպոլսում իմ անցկացրած տարիներից հետո ծանոթ էի սրիկայությանը և խաբեությանը:

Այդ նույն երեկո համաժողովի դադարներից մեկում ինձ մոտեցավ մի թուրք, որի դեմքն ինձ ծանոթ թվաց:

– Ինձ չե՞ք հիշում, մայե դը Լատուր: Ութ տարի առաջ էր, այո՛, այո՛, ութ տարի, ճաշում էինք Թալիբ բեյի տանը: Մուստաֆա բեյն եմ: Ինչպե՞ս է անցնում ժամանակը,– ժպտում էր մարդը՝ ակնոցի ոսկեզօծ շրջանակի միջով:

Ըստ սովորության՝ գլուխը սափրած էր և փայլուն:

– Ի՞նչ կարծիքի եք Սաբահէդդինի ելույթի մասին: Տեսեք, իրականում այդ ամենն ինձ թվում է անիրական մի բան: Ինչպե՞ս ենք օսմանացնելու հայերին, արաբներին, քրդերին, հրեաներին, ասորիներին, չերքեզներին, հույներին և մնացածներին: Այ քեզ խճանկար: Ձէ՞ որ նրանցից ոչ մեկը բոլորովին չահագրգռված չէ: Ահավասիկ Իթթիլիաֆի կուսակցության անդամները. նրանք իսկական իդեալիստներ են, իսկ Իթթիհադինը՝ իսկական երազողներ: Թերևս ես պետք է ընդգրկվեի երկրորդի մեջ, որովհետև դա իմ կուսակցությունն է: Իսկ դո՞ւք... Ձեզ կարող էին որևէ հեռավոր երկիր ուղարկել՝ որպես դեսպան, իսկ դուք երազում էիք, որ ձեզ նշանակեին Թուրքիայում, քանի որ ինձ հետ կհամաձայնեք, Բոսֆորի վրա՝ պալատում ապրելը հրաշալի է: Դա իրոք մի դրախտ է: Ես նույնպես կարդացել եմ Միլտոնին: Մուստաֆա բեյը հետևում էր իմ արձագանքին իր կարճատես աչքերով, որոնք որոշակի կասկած էին արտահայտում: – Ի դեպ, կուզենայի ձեզ հետ խոսել ֆինանսական մի քանի հարցերի շուրջ, կկարողանայի՞ք վաղն ինձ մի քանի րոպե տրամադրել:

Նրան տվեցի իմ այցեքարտը, և մենք հանդիսավորությամբ իրար հրաժեշտ տվեցինք, քանի որ բարձր խավի թուրքերը ձևապաշտության մեջ մոտենում են ծայրահեղության: Հիշում էի այն հեռավոր ճաշկերույթը Թալիբ բեյի առանձնատանը, այն օրը, որ փոխեց իմ կարծիքը հարուստ խավի վերաբերյալ, որը կառավարում էր երկիրը՝ սուլթանի շուքի տակ:

Վերադարձա տուն մտորելով, որ Փարիզում իմ կինն ու որդին չեն գտնվում դամոկլյան սրի ներքո՝ միմիայն հայկական արյուն ունենալու պատճառով: Թուրքիայում և առանց հովանավորության, որ նրանց պետք է ընձեռեր որոշակի կարգավիճակ և հասարակական դիրք, կգտնվեին ինչպես իրենց յուրայինները, բացարձակ անապահով վիճակում:

Ես ընդվզում էի, երբ մտածում էի, թե ինչպես են տառապում Մարիցայի ազգականները՝ ենթարկվելով ծայրահեղ նվաստացումների, հետապնդումների և բռնության:

Այդ ժամանակահատվածում ես չունեի ոչ մի կառավարական պաշտոն, բայց դեռ ունեի դիվանագիտական անձնագիր, որը նորացրել էին Արտաքին հարաբերությունների նախարարության հանձնարարությամբ՝ որպես տնտեսական խորհրդատու ծառայության մեջ գտնվելու կապակցությամբ: Ես տեղյակ էի, որ դեսպանատներով մեկ տարածվել էր, որ ես վերահսկում եմ Ֆրանսիայի՝ մի քանի երկրների՝ կոնկրետ Գերմանիայի, Ավստրիայի, Հունգարիայի, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի հետ ունեցած ֆինանսական համաձայնագրերը: Բնականաբար, ոչ մի բան ճիշտ չէր: Ես միայն ուսումնասիրում էի հարցերը և հետո ուղարկում մի կոնֆիդենցիալ հաշվետվություն, որը գրեթե միշտ, կարդում էր գանձարանի նախարարը և երբեմն արտաքին հարաբերություններինը:

Ֆրանսիան մեծ գումարներ էր այդ խաղի մեջ դրել, և երկիրը պետք է զգուշավոր լիներ, մանավանդ հաշվի առներ այն իրադրությունը, որում գտնվում էր թուրքական կայսրությունը: Թուրքիան մեծ խնդիրների առջև էր կանգնած. անհրաժեշտ էր, որ կարողանար մեծ գումարներ վճարել որպես տոկոս՝ վարկերի դիմաց: Ըստ մեր տեղեկությունների՝ իրենց ամբողջ բյուջեի երրորդ մասից ավելին: Եթե դրան ավելացնեին ևս քառասուն տոկոս ռազմական ծախսերի համար, շատ քիչ կմնար՝ կառավարելու համար այնպիսի բարդ, ընդարձակ և վիթխարի բյուրոկրատիայով՝ կայսրություն, որը դեռ ի վիճակի էլ չի հարմարվելու նոր ժամանակներին:

Եթե դրան միանում էին կաշառակերությունը, հովանավորչությունը, վատ կառավարումը և զարթոնք ապրող ազգայնամոլությունը, ի հայտ եկած դժգոհությունը հասարակական բոլոր խավերում և ռազմական խմբավորումներում առաջ կբերեր, անկասկած, քաղաքական անկայունություն:

Մուստաֆա բեյը հաջորդ առավոտյան ներկայացավ իմ գրասենյակ՝ Սուրբ Դրնիզի փողոցում: Հագնված էր վերջին նորաձևությամբ՝ հավանաբար մոդայի լավագույն դերձակներից մեկի շնորհիվ: Նրա լերկ գանգը փայլում էր քրտինքից, և նկատեցի, որ նյարդայնացած է:

– Մսյե դը Լատուր: Երեկ իրար հանդիպեցինք համաժողովի առաջին աշխատանքային օրը, և դուք տեսաք, որ չուտով Թուրքիայում ամեն բան փոխվելու է: Տեսեք, ես ներկայացնում եմ մի խմբի, որ մոտ ապագայում իշխանության գալու շատ հնարավորություններ ունի: Հավանաբար կռահել եք, որ ձեզ հետ խոսում եմ Իթթիհադի ղեկավար սեկտորի մասին: Երբ այս կուսակցությունն իշխանության գա, ամեն ինչ այլ է լինելու: Ուզում ենք, որ Սահմանադրությունը ուժի մեջ մտնի, ուզում ենք հավասարություն, եղբայրություն և ազատություն բոլորի համար: Այլևս չեն լինի քրիստոնյաներ, ոչ էլ մուսուլմաններ, ոչ էլ հրեաներ, միայն օսմանյան քաղաքացիներ, ուզում ենք վերջ տալ արյունահեղություններին, և ինչպես տեսնում եք, մենք ուզում ենք հետևել Ֆրանսիայի օրինակին, չենք ուզում այն ֆինանսավորումը, որ մեզ առաջարկում է Գերմանիան, այլ գնալ առաջ ձեռք ձեռքի՝ ժառանգելով Ֆրանսիական հեղափոխության սկզբունքները և նրա աշխարհընկալումը: – Մուստաֆա բեյը կիսով չափ փակեց աչքերը՝ ոսկեթելով երիզված հաստ ապակիների հետևում,– Ֆրանսիան մեզ կօգնի..., անկեղծորեն ասած դա կարող է կարևոր նշանակություն ունենալ երկու կողմերի համար պատմական այս ժամանակահատվածում:

Մուստաֆա բեյը խոր շունչ քաշեց՝ նախքան շարունակելը: Նա ուզում էր թողնել չափավոր և համոզունակ մարդու տպավորություն:

– Մսյե դը Լատուր, Ֆրանսիան չպետք է մեզ լքի, որովհետև այլընտրանքը կարող է վտանգավոր լինել: Մի պահ խորհեք, նրանք՝ գերմանացիները, խոսում են մեր ռազմական գորեղության ամրապնդման մասին, անվերջ կրկնում են, որ կայզերն ասես սուլթանի արյունակից եղբայրը լինի. խոսում են երկրի բարեփոխման, երկաթուղիների կառուցման, բժիշկներ, ինժեներներ, դասախոսներ և ռազմական խորհրդականներ ուղարկելու մասին, բայց տեսեք, մսյե, մենք վստահում ենք Ֆրանսիային: Մի քանի դար է, ինչ միասին առևտուր ենք անում, այստեղ՝ Փարիզում, ազատությունների այս մրթնոլորտում, բոլորս զգում ենք, ինչպես մեր տանը: Բայց գիտե՞ք, Բեռլինը նույնը չէ: Դուք երաշխիքներ եք ուզում ձեր շահույթների համար, ձեր նպատակն է կատարել լավ գործարքներ, տարածել ձեր մշակույթն ու ձեր գաղափարները, մինչդեռ գերմանացիների ուզածն ուրիշ է, և դուք ու ես գիտենք, թե որն է դա: Այդ իսկ պատճառով էլ ձեզ աղաչում եմ, որ չարունակեք աջակցել Թուրքիային ֆինանսապես, քանի որ եթե ոչ՝ ապագայում հավանաբար բոլորս էլ կզղջանք:

Մուստաֆա բեյը մնաց՝ գննելով ինձ՝ հայացքով ինձ հարցաքննելով: Իմ տեսակետը Իթթիհադի վերաբերյալ շատ դրական չէր, բայց գոնե թվում էր սուլթանի համեմատ՝ նախընտրելի. ու թեև Ահարոնյանի դատողություններն ինձ կասկածի տեղիք էին տվել, ի վերջո տեղի տվեցի:

– Սիրելի բարեկամ, Ֆրանսիան չի լքում իր դաշնակիցներին և բարեկամներին: Բայց Թուրքիան կընտրի՞ այն ճանապարհը, որ դուք խորհուրդ եք տալիս... Ձեզ հետ կխոսեմ նույն հստակությամբ, ինչպես դուք, և ձեզ չնորհակալ եմ: Իթթիհադը ընդունակ կլինի՞ իր երկիրը տանել դեպի խաղաղություն և բարգավաճում: Իսկ միգուցե ձախողմա՞ն... Դա կախված չի լինի Ֆրանսիայից, այլ այդ կուսակցության անդամներից: Բայց այս պահից սկսած՝ ձեզ խոստանում եմ, որ ամեն ինչ կանեմ՝ ինձնից կախված, հասնելու նրան, որ մեր երկու երկրների միջև հարաբերությունները գնալով դառնան ավելի խոր ու անկեղծ:

Մուստաֆա բեյը վեր կացավ՝ ձեռքը երկարելով՝ ցույց տալով իր ոգևորությունը:

– Ձեք զղջա, մսյե դը Լատուր: Իթթիհադի հետ բոլորս էլ հաղթող դուրս կգանք. Թուրքերս՝ անչուշտ: Բայց քրիստոնյա փոքրամասնությունները կլինեն առավել օգուտ քաղողները:

Մուստաֆա բեյը հրաժեշտ տվեց՝ կրկնելով բարեկամության իր խոստումները: Ես մոտեցա պատուհանին՝ նրան տեսնելու, որ քայլում էր դեպի անկյունը, այնտեղ էր գտնվում փարիզյան նշանավոր մի շատրվան՝ «Fontaine des Innocents» – Անմեղների շատրվանը: Տարիներ անց մտածեցի, որ կարող էին կոչել այն «Հայերի շատրվան», որոնք հավատացին Իթթիհադի խոսքին:

1903

28. ԲԵՌԼԻՆ՝ ԱՄՊՐՈՊԻ ՆՇԱՆՆԵՐ

Թվում էր, թե XX դարը չտապում էր. ամեն ինչ ընթանում էր խելահեղ արագությամբ: Այնպես էր, որ կարծես տոնավաճառի կարուսելին նստած՝ չգիտեի անգամ, թե չաբաթվա որ օրն է:

1903 թ. առաջին օրերին կառավարությունն ինձ հանձնարարեց մի չարք բանակցություններ վարել Բեռլինում: Տեղյակ էին Փարիզում Ջորջ ֆոն Զիմենսի, Ալֆրեդ Քաուլլայի և մանավանդ Բեռնարդ ֆոն Բյուլոֆի հետ ունեցած իմ բարեկամության մասին, ով զբաղեցրել էր Գերմանիայի արտաքին հարաբերությունների նախարարի պաշտոնը: Ես ինքս խոշոր ֆինանսական եկամուտների տեր էի՝ Ռուրի ծովածոցում ունեցած իմ ձեռնարկություններով, որոնք ինձ ժառանգաբար հասել էին մորս քույրերից, ովքեր վախճանվել էին՝ առանց զավակներ ունենալու:

Ամեն դեպքում, նրանց բոլորի հետ ունեցած իմ անձնական հարաբերությունները բարեկիրթ և եթե ոչ բարեկամական, ապա գոնե սրտագին էին, անկախ մեր երկու երկրների միջև գոյություն ունեցող հակասություններից և հակամարտությունից:

Մյուս կողմից՝ ակնհայտ էր, որ Գերմանիան, բազմած ռազմամոլության կառքին, համոզված էր, որ այդ ուղիով տիրելու է ողջ աշխարհին: Բայց նա չէր բավարարվում առևտրական կամ մշակութային գերակայությամբ. ազգային տեմպերամենտը նրան մղում էր արհամարհել բոլոր նրանց, ովքեր իր ռասային չէին պատկանում:

Տարբեր առիթներով լսել էի մի արտահայտություն, որ գործածում էին ոչ միայն պրուսացի զինվորականները, այլ նաև իրենց փիլիսոփաները, գրականագետները, քաղաքական գործիչներն ու գործարար մարդիկ՝ «Կենսական ոլորտ»:

«Lebensraum»՝ երբ կարիք է լինում ներխուժել և սփռվել նախապես ընտրված տարածքներում՝ անկախ այն բանից, թե դրանք զբաղեցված են, թե ոչ: Լեհաստանին նայում էին որպես անցանկալի հարևանի, Ռուսաստանին՝ հավակնելով նրա անսահման տարածքներին, Ուկրաինային՝ նկատի ունենալով նրա ցորենի արտերը, Ռումինիային, որ նրանց առջև հորիզոններ էր բացում դեպի Սև ծով և մանավանդ՝ դեպի Օսմանյան կայսրություն, որից պետք է անսահման տարածքներ ճանկեին: Այնտեղ տեղավորվելու էին գերմանական նոր գաղութարարները, որոնց մասին խոսում էր Ռորբախը՝ Գերմանիայի ապագայի վերաբերյալ իր ճարտարաբանություններում:

Հետևաբար, Գերմանիայի պահվածքը պատերազմաշունչ էր և գերիշխող, ինչի հանդեպ ո՛չ Ֆրանսիան և ո՛չ էլ Անգլիան անտարբեր չէին մնա:

Զնայած դրան՝ ֆրանսիական կառավարությունը չէր ցանկանում առաջինը թշնամանալ: Հույս ուներ համաձայնությունների գալ, որոնք կբավարարեին բոլոր կողմերին, և դա էր պատճառը, որ տարբեր ճակատներում ոչ մի ջանք չէին խնայում, ինչը և ինձ ստիպում էր հաճախակի ճանապարհորդել:

Գարնանն ինձ հրավիրեցին Բեռլին՝ կայզերական ծովային առևտրական ընկերության բաժնետերերի ժողովին: Բացառությամբ Ռոտշիլդների ընտանիքի և իմ երեք տոկոսի, որ ես ներկայացնում էի իմ ընկերություններից մեկի միջոցով, դրամագլխի մնացած մասը պատկանում էր գերմանական կառավարությանը և այդ երկրի տարբեր բաժնետերերին: Վերջին ժամանակներում ինձ շատ անգամներ առաջարկեցին, որ գնեն բաժնեթղթերի իմ փաթեթը, բայց ես ոչ մի որոշում այդ առիթով չէի ընդունել:

Հասա կենտրոնական կայարան, որտեղ ինձ սպասում էր Յակոբ Շտրաուսը՝ փաստաբանների գրասենյակից, որը ղեկավարում էր իմ անշարժ գույքը Գերմանիայում և հյուսիսային երկրներում: Նա արտասովոր մտքի տեր մարդ էր և վայելում էր իմ ողջ վստահությունը:

– Մսյե դը Լատուր, բարի գալուստ Բեռլին: Սա ամենալավ ժամանակն է այս քաղաքը գալու: Եթե դեմ չեք, կարող ենք ուղիղ հյուրանոց գնալ, այնտեղ նախապատրաստվել ենք աշխատանքային ժողովի Ալֆրեդ Քաուլլայի հետ, որն անհամբեր ձեզ է սպասում: Ինչ խոսք, գիտեք, որ ուզում է ամեն գնով գնել ձեր բաժնետոմսերը: Այստեղ՝ Բեռլինում, բոլորն էլ փաստում են, որ սա Գերմանիայի առաջին քայլն է դեպի Ասիայի վիթխարի չուկա, բայց այդ առթիվ ես իմ կասկածներն ունեմ: Եթե թույլ տաք, մի խորհուրդ տամ ձեզ. որքան կարող եք՝ մի լավ հուպ տվեք Քաուլլային, թող մինչև վերջին մարկը վճարի և թողեք, որ գերմանացիները մնան սպասելով իրենց մեծապետական երազանքների իրականացմանը:

«Շտրաուս և Մեյեր» փաստաբանների միությունից Յակոբ Շտրաուսը՝ ամենախորաթափանց և սուր մտքի տեր մարդկանցից էր, ում երբևէ ճանաչել էի: Նա ուրիշ չահեր էր հետապնդում, ինչպես օրինակ իր սերտ հարաբերությունը Թեոդոր Հերալի և սիոնիստական շարժման հետ, որին նվիրաբերում էր իր անձնական բոլոր ջանքերը: Շտրաուսը հասել էր նրան, որ սուլթանը մեկից ավելի առիթներով ընդունել էր սիոնիստներին, քանի որ նրա կարծիքով էրեց Իսրայելի վերադարձը չէր բացառվում: Թեև մինչև ուղնուծուծը հրեա՝ միաժամանակ համարվում էր գերմանացի այդ բառի ողջ իմաստով, բայց չէր ապավինում կայսերապաշտական մոլեռանդությանը և ռասիստական նոր տեսություններին, որոնք վերջին տարիներին Գերմանիայում ոգևորություն էին առաջ բերում և որոնց կարելի էր հանդիպել կյանքի բոլոր ոլորտներում. համաժողովներում, կենսաբանական և բժշկական ուսումնասիրություններում, մամուլի հոդվածներում, միտինգներում, ընկերություններում, որոնցից մեկը ստեղծել էր ինքը՝ Ռիխարդ Վագները և որ ամենավտանգավորը հայրենասիրական խանդավառությունն էր, որ անարգել ալիքի պես բռնկվում էր Ստորին Բավարիայի գարեջրատներից մինչև պրուսական զինվորական ակադեմիաները: Այդ ամենի վերաբերյալ իմ կարծիքն այն էր, որ Գերմանիան ներքաշված է այնպիսի պրոցեսում, որը խեղաթյուրում է իր իսկ ազգային արժեքները: Ընդամենը մի քանի հոգու չափանիշներ կործանելու էին իրենց իսկ ազգային մշակույթը, նրա վեհ ու անկողմնակալ բովանդակությունը, քաղաքակրթություն և արդիականություն ծնելու նրա մղումները՝ դրանք փոխարինելով իր հարևան երկրների նկատմամբ սպառնալիքներով և պահանջատիրությամբ: Ըստ նոր՝ գարեջրատներում ստեղծված մշակույթի՝ Հայնեն, Գյոթեն և այլք դասվելու էին ստորին շարքում, ինչը շատերն անվանում էին «ոգելից դեմագոգիա»:

Մինչդեռ սուլթանը հմայված էր գերմանական քաղաքականությամբ, որ ծավալվում էր Թուրքիայում: Կայզերի երկու այցելությունները ենթադրում էին մի նոր շրջադարձ Բարձր Դռան և եվրոպական դաշնակիցների հարաբերություններում: Սուլթանը բաղձում էր այդ փոփոխությունները, քանի որ կուշտ էր վերջին ժամանակներում Անգլիայի և Ֆրանսիայի կողմից արվող կշտամբանքներից, որոնք հանդես էին գալիս քրիստոնյա փոքրամասնություններին վատ վերաբերվելու անհիմն մեղադրանքներով ու սպառնալիքներով կամ այն համառ պնդումից, որ Օսմանյան կառավարությունը վճարեր վարկերի տոկոսները այն երկրներին, որոնց պարտք էր: Մինչդեռ գերմանացիները ոչ միայն չէին քննադատում օսմանցիների ներքին քաղաքականությունը, այլև ընդհակառակը, այն տպավորությունն էին թողնում, որ լրիվ համաձայն էին Թուրքիայի գործելակերպին: Ինչ վերաբերում էր այն վարկերին ու ներդրումներին, որ Գերմանիան կամ իր ձեռնարկատերերը անում էին այդ երկրում, գնալով ավելի էին մեծանում ավելի նվազ շահույթներով քան Ֆրանսիայինը, և որ չատ կարևոր էր սուլթանի համար, Գերմանիան ուղարկում էր վիթխարի քանակությամբ ռազմամթերք և զինանյութ, բացի բազմաթիվ զինվորական հրահանգիչներից, զինվորական ղեկավարներից, մեքենագետներից, ամեն տեսակի մասնագետներից՝ գեներալ ֆոն դեր Գոլցի ղեկավարությամբ, որը, վայելելով սուլթանի և իր՝ կայզերի անձնական վստահությունը, դարձել էր երկու արքունիքների սուրհանդակը: Այս հանգամանքները նպաստեցին, որ սուլթանը վերջին ժամանակներում իր հարաբերություններում ավելի վստահ լիներ, մանավանդ Ֆրանսիայի հետ՝ հեռանալով այն ազդեցությունից, որն իր քաղաքականության համար վնասակար էր համարում, քանի որ իր ախոյանները, որոնց կարգախոսներն էին՝ ազատություն, հավասարություն և եղբայրություն, ընդհանուր ոչինչ չունեին Բարձր Դռան գաղափարների հետ՝ հիմնված բռնակալության, անհավասարության և իշխանության չարաչահման վրա:

Հետևաբար մեր դեսպանատունը նրան օրինակ չէր կարող ծառայել: Գերմանացիներն օգտագործում էին ցանկացած առիթ՝ ի չիք դարձնելու անգամ այն նվազ վստահությունը, որ սուլթանն ուներ Ֆրանսիայի հանդեպ, որին բոլոր դեպքերում նայում էր որպես չքեղության՝ թանկ քմահաճույքների, նրբակրթության և ցուցամոլության խորհրդանիշի, որ այնքան թովում էին իրեն և իր արքունիքին:

Յակոբ Շտրաուսը ինձ տարավ հյուրանոց, որտեղ ինձ սպասում էր Ալֆրեդ Քաուլլան՝ Գերմանիայի ամենաազդեցիկ արդյունաբերողներից մեկը: Ինձ դիմավորեց ժպտալով՝ արջի պես ամուր գրկելով: Քաուլլան այն մարդկանցից էր, որն իր՝ արդյունաբերողի, ագահությամբ ասելիք էր դարձել: Նրա ֆինանսական կայսրությունն աճում էր անհավատալի արագությամբ: Շչուկներ էին պտտվում, որ նա տնօրինում է անգամ հենց՝ Վիլհելմ II-ի ֆինանսական ակտիվի մի մասը, ինչում տարօրինակ ոչինչ չկար, և բացի այդ՝ նա օգտագործում էր այդ շչուկները ցանկացած խոչընդոտ վերացնելու նպատակով: Ով կհամաձայներ ուժերը չափել կայզերի հետ:

– Որքան ուրախ եմ ձեզ տեսնելուս համար, սիրելի՛ Անրի: Ինձ պատմել են, որ դուք Թուրքիայի քաջ գիտակ եք: Ես երկար-բարակ չեմ մոտենալու հարցին, ոչ էլ ձեզ կդրաղեցնեմ՝ գիտենալով, թե որքան թանկ է ձեզ համար ժամանակը, այնպես որ գործի անցնենք: Ես գնում եմ կայզերական առևտրական ընկերության բաժնեթղթերի ձեր փաթեթը: Ասացեք գինը... Թեև հրաչալիորեն հասկանում եմ, որ եթե դրանք ինձ վաճառեք, չի նշանակում, թե ձեզ հանգամանքներն են ստիպում: Դե ինչ, ընդառաջեք իմ ցանկությանը, ի՞նչ կասեք միլիոն ֆրանկին: Ձեր վերջին գնանշման համաձայն՝ արժեթղթի արժեքը կազմում էր հինգ հարյուր ֆրանկ... այսինքն՝ գումարային արժեքը կազմում է յոթ հարյուր հիսուն հազար... Համաձա՞յն եք:

Մի պահ մտքի մեջ ընկա: Ես նույնպես չէի ուզում ժամանակ կորցնել:

– Համաձայն եմ, բայց մի պայմանով: Դուք ինձ փոխարենը կվճարեք Աղանայի մոտ ձեր ունեցած բամբակի պլանտացիաներով: Ըստ ինձ հասած տեղեկության՝ գնահատված են մոտ մեկ միլիոն ֆրանկ: Այդպես չէ՞, ուրեմն եկեք մեկը մյուսով փոխանակենք:

Քաուլլան ձեռքի ափով ուժեղ խփեց ազդրին, մինչ բոնազբոսիկ ժպտում էր:

– Գիտեի, որ դուք շատ խորամանկ եք: Սակայն չէ՞ որ այդ պլանտացիաները մեր ձեռնարկությունների թագի անգին քարն են:

Մեր համաձայնության գալը գրեթե երկու ժամ տևեց: Նա ուզում էր իմ բաժնետոմսերը, ես՝ իր բամբակը. երկուսս էլ գիտեինք, որ արդար գործարք էր, թեև նրան այդքան էլ հեշտ չէր իրենից պոկել այն, ինչին հասնելու համար այդքան ջանք էր գործադրել:

Ի վերջո զիջեց, թեև չուզենալով, քանի որ առանց արժեթղթերի իր խմբին չէր հաջողվի Առևտրական ընկերության խորհրդում մեծամասնության հասնել:

Մյուս կողմից՝ ես հավաստի աղբյուրներից տեղեկացված էի, թե ապագայում ինչ դժվարությունների առաջ է կանգնելու երկաթգծի կառուցումը, իսկ ինչ վերաբերում էր բամբակի պլանտացիաներին՝ դրանք Մարիցային էի խոստացել: Դրանց մեծ մասը նախկինում պատկանել էին նրա պապերին՝ նախքան Թուրքերի տիրանալը: Հիմա պետք է վերադարձվեին իրենց օրինական տերերին, բայց արդեն ֆրանսիական դրոշի հովանու ներքո:

– Դե ինչ, Անրի, պատերազմից հետո բաժակ բարձրացնենք: Զգիտեմ թե ինչու, բայց ինձ համակել է այն զգացողությունը, որ հաղթողը դուք եք: Լսել եմ, որ ձեր կինը հայուհի է... Շնորհավորում եմ ձեզ: Ցավում եմ, որ այդ լավ ժողովուրդը նման վիճակի է արժանացել, ես նրանց համարում եմ խելացի և աշխատասեր ժողովուրդ... Չեմ ուզում ասել, թե Թուրքերն այդպիսին չեն, բայց անչուչտ, հայի հետ կարելի է խոսել իբրև բարեկամի, մինչդեռ Թուրքի հետ մեզ բաժանող դեռ շատ բաներ կան: Ես ձեզանից չեմ թաքցնի, որ Գերմանիան ուզում է ընդարձակել իր տարածքը Օսմանյան կայսրության հաշվին: Ի՞նչ վատ բան կա դրանում: Ունեն այն, ինչ մեզ անհրաժեշտ է, վիթխարի տարածքներ: Միակ բանը, որ նրանց հարկավոր է, ուժեղ ձեռքն է՝ արդյունաբերելու համար: Եվ այդ ձեռքը կպարզի իր մատները Անատոլիայով, Սիրիայով և Միջագետքով... Չկասկածեք, մենք դրանք կգործարկենք: Այսօր երկաթուղու վերահսկողությունը Թուրքերի ձեռքին է, իսկ նրանց ձեռքներից ոչինչ չի գալիս:

Մենք կնախընտրեինք այդ պաշտոններին դնել հայերին... Ավելի լավ կհասկանայինք միմյանց, բայց հնար չկա: Թուրքերի ատելությունը հայերի հանդեպ դարավոր է, իսկ այսօր մեր դաշնակիցներն ու բարեկամները Թուրքերն են: Գուցե և դա ինչ-որ տեղ անբնական է, բայց սա է իրերի դրությունը: Լավ, եկեք խմենք հանուն երկաթուղու և բամբակի: Երբ ուզենաք տեղափոխել ձեր բերքը, դանգահարեք ինձ: Հա՛, հա՛, հա՛:

Հրաժեշտ տվեցի Ալֆրեդ Քաուլլային ճնշող զգացումով. գնալով ավելի էր ակնհայտ դառնում, որ անհրաժեշտ պահին գերմանացիները ոչինչ չէին անի հանուն հայերի: Ուղղվեցի դեպի Կայզերական առևտրական ընկերության նստավայր՝ վաճառքի փաստաթղթերը ստորագրելու և հրաժարվելու խորհրդականի պաշտոնակատարությունից: Բացի այդ, ես պետք է ներկանայի ժողովին որպես ֆրանսիական կառավարության բաժնետոմսերի փաթեթը ստանձնող: Այնպես որ, ես նրանց առաջարկել էի իմ բաժնետոմսերը, սակայն ֆինանսների նախարարը ձեռնպահ մնաց դրանք գնելուց:

Ֆրիդրիխշտրասեի վրա գտնվող պալատ-սրահում տիրում էր բարձր տրամադրություն: Այնտեղ էին ֆոն Զիմենսը, Արթուր ֆոն Գվինները՝ Գերմանիայի կայզերական բանկի նոր տերը՝ Կարլ Ֆյորստեմբերգը, Էմիլ Ռաթենաուն՝ էլեկտրական ընկերության խոշորագույն հիմնադիրը, Ալֆրեդ Բալլինը, Աուգուստ Թյուսսենը, բարոն Օփընհայմը, ֆոն Շվարբախը և շատ այլ բարձր դիրք ունեցող արդյունաբերողներ: Նրանց ընկերակցում էին քաղաքագետներ, որոնց չէի ճանաչում, նախարարներ, ինչպես օրինակ՝ Բեռնարդ ֆոն Բյու-

լոֆը՝ արտաքին գործերի նախարարը: Եվ իհարկե, գործը գլուխ չէր գա առանց այնպիսի գաղափարախոսների, ինչպիսիք էին Ռորբախը կամ Ռիխարդ Թաննեբերգը՝ քրոնիկագիր և կայզերական քաղաքականության պրոպագանդիստը:

Ես ողջունում էի իմ ծանոթ մարդկանց, երբ սրահ մտավ Ալֆրեդ Կրուպը՝ Գերմանիայի թերևս ամենաազդեցիկ արդյունաբերողը, զենքեր արտադրող ամենամեծ գործարանների սեփականատերը: Նրան ուղեկցում էր մի երիտասարդ, որին ինձ ներկայացրին որպես բարոն ֆոն Վանգենհայմ: Ժամանակի ընթացքում այդ մարդը դառնալու էր գերմանական արդյունաբերական քաղաքականության կարևորագույն դեմք Թուրքիայում: Այդ պահից սկսած՝ սրահի դռները բացվեցին, և մտավ փոքր բաժնետերերի մնացած մասը. ինչ-որ մի սպա և մի քանի ռեպորտյորներ, լրագրողներ:

Խոսքով հանդես եկավ Արթուր ֆոն Գվինները՝ Խորհրդի նախագահը: Որոշ ժամանակ բացարձակ լռություն տիրեց, ասես բոլորն էլ գիտակցում էին, որ պահը պատմական կարևորություն ունի:

– Պարոնայք, շնորհակալություն եմ հայտնում Կայզերական առևտրական ընկերության գլխավոր խորհրդում ձեր ներկայության համար, որի պատվավոր նախագահը մեր կայզերն է: Երկար կյանք մեր իմպերատորին՝ կայզերին:

Բոլոր ներկաներս ոտքի կանգնեցինք, և լսվեցին ոգեշունչ ճիչեր, որոնք վկայում էին այն մեծ ժողովրդականությունը, որ վայելում էր Վիլհելմ II-ը, և այն վերելքը, որ այդ ժամանակ ապրում էր Գերմանիան: Ֆոն Գվինները սպասեց, որ ծափողջույնները դադարեն իր ճառը շարունակելու համար:

– Մեր հասարակությունը ապագային կարող է նայել հուսառատ, ինչը գոհունակությամբ է լցնում բոլոր գերմանացի քաղաքացիների սրտերը: Այս երկիրը բարգավաճում է բոլոր առումներով, բնակիչների թվով հասել ենք ավելի քան 60 միլիոնի, մեր արդյունաբերական կարողությունը բազմապատկվել է այնպիսի ձեռնարկատերերի համառ աշխատանքի, տաղանդի և բանիմացության շնորհիվ, որոնց շարքում կուզենայի նշել պարոն Ալֆրեդ Կրուպին, դոկտոր Գեորգ ֆոն Զիմենսին, պարոն Ալֆրեդ Քաուլլային, որոնցով մենք հպարտանում ենք և խնդրում եմ դիմավորել նրանց ծափողջույններով:

Դահլիճը կրկին թնդաց բուռն ծափահարություններից: Ակնհայտ էր, որ դա Խորհրդի հերթական նիստ չէր, այլ ամբողջ Գերմանիայի համար խոշոր նշանակություն ունեցող պահ:

– Այո՛, իմ բարեկամներ: Կարծում եմ, որ հետևում է մնացել մշուշոտ ժամանակաշրջանը, և մեր փառավոր երկրի առջև բացվում են լուսաշող հորիզոններ: Կայզերն իր Կոստանդնուպոլիս կատարած ուղևորություններում բացեց Արևելքի դուռը Գերմանիայի համար: Այսօր սուլթանը մեր հավատարիմ դաշնակիցն է, իսկ մեր կայզերը, որ պարզել է ձեռքը դեպի մուսուլմանական աշխարհ, կհայտնի նրան, որ ովքեր չեն վստահում քրիստոնյա Արևմուտքին, քաղաքակրթությունների դաշնության օգնությամբ իրենք կփոխեն աշխարհը:

Ֆոն Գվինները մի փոքր դադար տվեց մի կում ջուր խմելու համար, մինչ բոլորը նրան գննում էին բացարձակ լռության մեջ՝ գիտակցելով, որ այդ ճառը նախանշելու է Կայզերական ընկերության շահերի առումով մի կարևոր ժամանակաշրջանի սկիզբ:

– Կարևոր է, չափազանց կարևոր, որ մեր երկիրը համագործակցի Օսմանյան կայսրության հետ: Այդ մեծ պետությունը Գերմանիայի հետագա շահերի հենասյունն է Ասիայում և ողջ Միջերկրականում: Մենք չենք կարող թույլ տալ, որ տրոհվի, որ նրա միասնությունը խախտվի չնչին փոքրամասնությունների թույլ տված գործողություններից՝ լինեն մուսուլման թե քրիստոնյա: Բարձր Դուռը հզոր դաշնակից է դեպի Արևելք մեր էքսպանսիայի գործում և այդպես էլ պետք է շարունակվի, եթե մենք ցանկանում ենք դառնալ համաշխարհային կայսրություն... Իրավամբ, մենք արժանի ենք դրան պատմության մեջ մեր առաջընթացով, գիտություններում և մշակույթում մեր ձեռքբերումներով: Չպետք է թույլ տանք, որ չնչին խոչընդոտները խանգարեն մեր առաջխաղացմանը, որ պատմական ինչ-որ անախրոնիզմներ խաթարեն դեպի գալիք տանող մեր ճանապարհը:

Զայրույթս հազիվ զսպեցի այդ բառերը լսելիս, դժվար էր ընդունել, որ բարձր արժեքների տեր երկիրը՝ Գերմանիան, նման ելույթ հանդուրժեր: «Չնչին խոչընդոտները» և «Պատմական անախրոնիզմները», որոնց մասին խոսում էր ֆոն Գվինները, քրիստոնյաներն էին Թուրքիայում. այլ փոքրամասնությունները՝ հայերը, հույները, ասորիները, նեստորականները, հրեաները... Ի՞նչ էր ուզում ասել:

– Գերմանիային փառավոր ապագա է սպասում, եթե մեզ հաջողվի համոզել մեր ժողովրդին, որ նա իր առաքելություններով վեր է մնացածներից: Պատկանում ենք ազնվատոհմ և պատվարժան զավակների տեր ժողովրդի, Աստծու կողմից շնորհված այնպիսի արժանիքներով, ինչպիսիք են՝ հաստատակամությունը, մտավոր կարողությունը, աշխատանքի և ընտանիքի հանդեպ սերը: Այն ժամանակ-

ներից ի վեր, ինչ մեր նախնիները հավաքվում էին կաղնուտներում՝ դիմելով իրենց աստվածներին, գերազանցում էին այլ ժողովուրդներին: Այդ ռասայական գերազանցությունը կասկած չի հարուցում, և մեր պարտքն է՝ դնել Գերմանիան իր արժանավոր տեղում, ինչը պատմությունն է պահանջում: Մենք՝ գերմաններս, ի սկզբանե եղել ենք հրաչալի ռազմիկներ, ազնիվ քաղաքացիներ, ազատ մարդիկ՝ արիացիներ, այսինքն՝ դատողությամբ և ուժով առավել մնացածներից:

Սակայն վերադառնանք նրան, որ մեզ բերել է այստեղ: Մենք այստեղ չենք հավաքվել միմիայն հաջող գործարքներ կնքելու համար... Թերևս նաև դրա համար: Շուտով կունենանք մի երկաթուղի, որը մեզ թույլ կտա գնացք նստել Բեռլինում և իջնել Բաղդադում: Այո՛, Բաղդադում: Ամեն ջանք կգործադրենք դրան հասնելու համար, որպեսզի ստեղծենք նոր չուկաներ գերմանական արդյունաբերության համար: Ես իմ առջև տեսնում եմ անվերջանալի մշակված այգիներ գերմանացիների ղեկավարությամբ, տեսնում եմ հարուստ հանքավայրեր, որոնք կարտադրեն մեր արդյունաբերությանն անհրաժեշտ հումքը, բամբակը, նավթը, որ լինելու է այս՝ XX դարի էներգիայի հիմնական աղբյուրը, տեսնում եմ նրանում ընդգրկված արհեստավարժ աշխատողների: Ինչո՞ւ չէ, այդ խելացի և ճկուն հայերին: Գուցե կարողանանք օգնել նրանց վերահաստատվել նոր տարածքներում, որոնք նրանց հարազատ կդառնան: Այսպիսով՝ մենք կիրագործենք երեք դրական նպատակներ. ամրապնդել Օսմանյան կայսրությունը, օգնել հայերին, չմոռանանք, որոնք ինչպես մենք, քրիստոնյաներ են, տարածել գերմանական տնտեսությունն ու մշակույթը: Սա, ինչպես տեսնում եք, մեկն է այն բազմաթիվ նախաձեռնություններից, որին այս Կայզերական ընկերությունը ձեռնամուխ է լինում և ինչին մենք մեր մասնակցությունն ենք ուզում բերել:

Մյուս կողմից՝ չենք կարող թույլ տալ, որ որևէ կերպ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը խոչընդոտեն և ձախողեն մեր ձեռնարկումները: Անատոլիան, Միջագետքը պետք է դառնան Գերմանիայի չտեմարանները: Հանքանյութերը, նավթը, բամբակը և շատ այլ հարստություններ կարող ենք և պետք է վերահսկենք: Մենք իրավունք ունենք հանուն Գերմանիայի հասնելու այդ «կենսոլորտին», որի մասին խոսում են մեր գիտնականները... Եվ թող ոչ ոք չկասկածի, որ կվերցնենք այն, ինչ մեզ նախասահմանված է պատմության կողմից: Խաղաղ ճանապարհով կամ զենքի ուժով, եթե հարկ լինի: Մերն են

Կրուպի թնդանոթները և հզոր կործանիչները: Թող բոլորն իմանան, որ ոչ ոք չի կարող խանգարել, որ Գերմանիան դառնա համաշխարհային առաջին տերությունը:

Ծափերի երկար տարափը եզրափակեց Գվիններին ճառը: Այդ խոսքերն արտահայտում էին գերմանացիների ռազմամոլությունը, և ակնհայտ էր, որ հայերը տերությունների ռազմական շահերի խաղում ընդամենը զինվոր էին: Ներքուստ կռահեցի, որ նրանց ճակատագիրը վճռված է: Երբ դուրս եկա Ֆրիդրիխշտրասե, ուժեղ անձրև էր տեղում, կայծակները լուսավորում էին Բեռլինի երկինքը, և դողէրոցքն ինձ պատեց: Ոչինչ և ոչ ոք չէր կարող խույս տալ սև մրրիկից, որ կուտակվում էր հորիզոնում:

1904

29. ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄ

Արտաքին գործերի նախարարն ինձ համոզում էր վերադառնալ դիվանագիտական գործունեության՝ առաջարկելով Ֆրանսիայի դեսպանի պաշտոնը Հունաստանում: Ես կրկին հրաժարվեցի: Մենք մանուկ հասակից լավ բարեկամներ էինք. չպնդեց, հասկացավ ինձ, թեև խնդրեց, որ չարունակեի եռանդուն համագործակցել նախարարության հետ՝ Մերձավոր Արևելքում մեր երկրի ունեցած շահերի հարցերով: Չկարողացա հրաժարվել, որովհետև ես շատ էի խորացել Հայկական հարցում, ոչ միայն նրանց նկատմամբ ունեցած համակրանքից և համերաշխությունից, այլև որովհետև որդիս էլ էր պատկանում այդ ժողովրդին, կինս հայուհի էր, հետևաբար, ես նրանց կողմից էի:

Վերջին տարիներին Գրիգոր Բրոչյանը դարձել էր Հայ հեղափոխական դաշնակցության ամենանշանավոր առաջնորդներից և հետևաբար, Օսմանյան կայսրության կողմից ամենահետապնդված մարդկանցից մեկը:

Այնուամենայնիվ, անկախ այդ իրադրությունից, շատ տարօրինակ հարաբերություններ էր պահպանում Իթթիհադի վերնախավի և թուրքական բանակի որոշ սպաների հետ, որոնք «Երիտթուրքերի» շարժման կողմնակիցներն էին: Ես Գրիգորի հետ հաղորդակցվում էի Հակոբ Սարգսյանի՝ մի հայ ձեռնարկատիրոջ միջոցով, որը Ֆրանսիայում զբաղվում էր ռուսական ադամանդների ներմուծմամբ, և իրար հետ հանդիպում էինք սովորաբար Վանդոմյան հրապարակի վրա գտնվող նրա գրասենյակում, որտեղ հավաքվում էին Փարիզի ամենաազդեցիկ հայերից մի քանիսը: Սարգսյանի գրասենյակը գըտնըվում էր հայկական ոճով զարդարված մի չքեղ շենքի առաջին հարկում: Եվ թեև նա իրեն համարում էր կոսմոպոլիտ՝ խոշոր նվիրատվություններ էր անում հանուն այն գործի, որի մեջ ինքը ներգրավված էր: Ինչպես որ ինձ հուզված պատմել էր, նրա ընտանիքը սպանվել էր 1895 թ. կոտորածներին, ինքն այդ ժամանակ սովորում էր լեռնային ինժեների մասնագիտություն Փարիզի պոլիտեխնիկական դպրոցում:

Ես նամակ ստացա Գրիգոր Բրոչյանից, որում գրում էր, որ մայիսի առաջին օրերին լինելու է Փարիզում և թախանձագին խնդրում էր ինձ, որ մասնակցեմ մի կարևոր ժողովի, որը տեղի էր ունենալու Սարգսյանի գրասենյակում: Նշում էր, որ շատ կարևոր է իմ մասնակցությունը, և որ ամեն ինչ անեմ ներկա գտնվելու համար:

Մայիսի առաջին շաբաթ օրը, մի հրաշալի արևոտ օր, իմ կառապաններից մեկի՝ Գևորգ Մանասյանի միջոցով, որը կնոջս ընտանիքի հեռավոր ծանոթներից էր, մի նամակ ստացա: Ինձ հայտնում էր, որ ժողովն ի վերջո տեղի է ունենալու մեկ այլ վայրում, քանի որ նրանց նախազգուշացրել են, որ Փարիզում գործում են թուրք կառավարության որոշ լրտեսներ: Ես չզարմացա, դա ինձ համար նորություն չէր, քանի որ ներքին գործերի նախարարությունն ինձ արդեն հայտնել էր այդ մասին: Այդ պատճառով էլ կառապանին խնդրեցի, որ ինձ մի երկու փողոց չուտ իջեցնի՝ նախքան ժողովի վայրը հասնելը:

Ես լավ գիտեի, թե ինչպես է գործում սուլթանի լրտեսության համակարգը: Ասում էին, որ նա պահում է երեսուն հազարի չափ իրազեկիչներ՝ լրտեսելու, ճնշում գործադրելու, տանջելու, հարկ եղած դեպքում սպանելու, փաստաթղթեր գողանալու, վարկաբեկիչ, ստահոդ գրություններ ուղարկելու բոլոր այն մարդկանց, կազմակերպություններին և հաստատություններին, որոնք փորձում էին օգնել կայսրության քրիստոնյա փոքրամասնություններին և մանավանդ հայերին, որտեղ էլ որ գտնվեին օգնողները՝ Օսմանյան կայսրության ներսում թե նրանից դուրս: Հետևաբար ես գիտեի, որ ինձ հետևում են և տեղյակ են իմ հայանպաստ գործունեությանը: Ինձ անհանգստացնողը, սակայն, դա չէր: Ես վախենում էի մերոնց համար, քանի որ Հայաստանի բարեկամներին ահաբեկելու ձևերից մեկը նրանց հարազատներից մեկին առևանգելն էր, մի դաժան միջոց՝ կայսրության ռեժիմի թշնամիներին զինաթափելու և վախեցնելու համար:

Վերջապես մենք հանդիպեցինք, մուտքի մոտ Գրիգոր Բրոչյանն ինձ գրկեց: Զէ՞ որ նրա համար ես օտար մեկը չէի:

– Անրի, ինչ ուրախ եմ քեզ տեսնել: Եվ որքան կարևոր է հայերիս համար ունենալ իրենց կողքին քեզ պես մարդու... Բայց արի բարձրանանք, մեզ են սպասում: Կարևորագույն մի բան ունեմ բոլորիդ հաղորդելու:

Բարձրացա՝ որոշ չափով մտահոգ: Սարգսյանն ինձ պատմել էր իր մտատանջությունների մասին, և ինձ անհանգստացնում էր որոշ հայերի բռնած դիրքը: Բարեկամիս գրասենյակում գտնվում էին Փարիզի հայ համայնքի ամենաազդեցիկ մարդկանցից աչքի ընկնող քսան անդամներ: Թեև դեմքով ծանոթ էի մեծամասնությանը, առնվազն վեց հոգի ինձ բոլորովին անծանոթ էին: Հետո խոսքով հանդես եկավ Գրիգորը: Հայկական հարցում արժեքավոր էին նրա ծառայությունները, չնայած երբեմն նա չափազանց պոռթկուն էր:

– Սիրելի ընկերներ, նոր ենք եկել Կոստանդնուպոլսից: Այնտեղ ամեն ինչ նույնն է: Ճիշտ է, որ բավական երկար ժամանակ է, ինչ կարծես թե մեր համայնքի հանդեպ նվազել են հետապնդումները: Բայց դա այն տարօրինակ հանգստության զգացողությունն է, որին միշտ հաջորդում է փոթորիկը: Պալյանների ընտանիքի օգնականներից մեկի միջոցով տեղեկացված ենք սուլթանի՝ հայերի ջարդարարի մտադրությունների մասին... Հավանաբար գիտեք, որ վերջերս գերմանացիները դարձել են նրանց խորհրդատուները: Ֆոն դեր Գոլցը նրանց զինվորական խորհրդականն է. սուլթանն առանց նրա հետ հաշվի նստելու պալատում ոչ մի քայլ չի անում: Սուլթանի պալատում այլևս ֆրանսերեն չեն խոսում: Բոլոր բարձր պաշտոնյաներն այժմ ունեն գերմաներենի դասախոսներ, իսկ սպաների համար լավագույն մրցանակն է գնալ Բեռլին սովորելու՝ լինի ռազմավարության թե նորագույն սպառազինության դասընթացին մասնակցելը: Սակայն վերադառնանք բուն հարցին: Սուլթանն ունի ներքին ուժեղ ընդդիմություն, և «Իթթիհադ» կուսակցությունը դրան է գնում: Վաղ թե ուշ գահավիժելու է, և դա մերոնց համար լավագույն լուրը կլինի: Ճիշտ է, որ այդ կազմակերպության մեջ կան մարդիկ, որոնք ամբողջ սրտով, եթե այն ունեն, ատում են հայերին, ինչպես այդ դոկտոր Նազըմը կամ նրա նման մարդիկ, սակայն, չնայած դրան, հույս ունեմ, որ «Իթթիհադի» քաղաքական դիրքորոշումը համաձայնության և համագործակցության գալն է: Ի վերջո, մեզ միավորում է գլխավորը. բռնակալի նկատմամբ ատելությունը, որը կասեցնում է Թուրքիայի առաջխաղացումը և Եվրոպայի առաջընթացին համընթաց գնալու բուռն ցանկությունը: Ուզում եմ հավատալ, որ նրանց առաջամարտիկների մեծամասնությունը մեզ հետ անկեղծ է: Մի քանի անգամ հավաքվել ենք և մշակել ընդհանուր ռազմավարության սկզբունքներ: Ամենակարևորն այն է, որ մեզ խոստացել են, որ երբ հանգամանքները փոխվեն, քրիստոնյա փոքրամասնությունների հետ վերաբերմունքը լինելու է բոլորովին ուրիշ: Ունենալու ենք միևնույն քաղաքական իրավունքներն ու պարտականությունները: Նրանք գիտեն, թե մեզ համար որքան կարևոր է դա: Համոզված եմ, որ այսօր, ես այլ կերպ կասեմ ձեզ. անհնարին կլինի սուլթանին տապալել՝ առանց հայերի ու հույների օգնության: Զարժե անգամ մտածել այդ մասին: Ահա թե ինչ. թեև դա ազգային հարց է, այժմվանից հարկ է, որ պատրաստվենք դրան: Վերջիվերջո ձեզ խնդրում եմ, որ համագործակցեք Իթթիհադի հետ. համաձա՞յն եք:

Այդ պահին Սարգսյանը, սաստիկ հուզված, ասես մեծ ճիգ էր գործադրում իրեն զսպելու:

– Ես համաձայն չեմ,– բացականչեց՝ բացահայտ զայրացած: – Ոչ այն պատճառով, որ չեմ հավատում Թուրքերին: Իմ ընտանիքը երկրի երեսից ջնջվել է ինը տարի առաջ... Միայն քույրս՝ Լիզան է Լոնդոնում, բայց մնացածները հողի տակ են. ճիշտ է, որ այն ժամանակ՝ 1895 թ., մեղավորն այդ մարդասպան Աբդուլ Համիդն էր: Բայց միայն իմ կանխազգացումը չէ, որ ինձ դրդում է այսպես խոսել: Ինչպես գիտեք, առիթ եմ ունեցել հանդիպելու Ահմեդ Ռիզայի և դոկտոր Նազըմի հետ, երկուսն էլ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի, այսինքն՝ այսպես կոչված Իթթիհադի ամենաազդեցիկ գործիչներից են: Ռիզան եղել և միշտ էլ լինելու է սուլթանի ծառան, նա չի դադարում խոսել կայսրության ամբողջականությունից՝ սուլթանի իշխանության ներքո: Մենք՝ հայերս, նրա համար օսմանյան հպատակներ ենք և ուրիշ ոչինչ: Ինչ վերաբերում է դոկտոր Նազըմին, իսկապես չեմ կարող նրա մասին խոսել առանց տագնապի: Այդ մարդն ատում է այն ամենը, ինչ հայի հետ առնչություն ունի: Ըստ նրա՝ պետք է տարրալուծեինք մեր համայնքը Թուրքերի զանգվածում, մոռանայինք մեր լեզուն և ընդունեինք իսլամ և անգամ այդպես, հաղիվ թե մեզ ընդուներ: Այդ Նազըմ կոչվածը տարված է միայն պանթուրքիզմով, չնայած Իթթիհադը ղեկավարում են դյոնմեները: Զէ՞ որ դու գալիս ես Սալոնիկից: Պատմիր մեզ այդ մասին, Գրիգո՛ր:

Գրիգոր Բրուչյանը, որոշ չափով վիրավորված այդ արձագանքից, քանի որ մինչ այդ պահը նրան համարում էր իր ընկերը, նայեց Սարգսյանին, անհանգստացած քմծիծաղ տվեց:

– Այո՛, իհարկե եղել եմ Սալոնիկում. այդ քաղաքում են պատրաստվում այդ մեծ իրադարձությանը, և ձեզ հետևյալը կասեմ. մենք այլընտրանք չունենք: Մենք երբեք չենք կարողանա սուլթանին գահընկեց անել: Զէ՞ որ ինքդ էլ դա գիտես: Թող որ ստիպված կնքենք այդ դաշինքը, բայց չէ՞ որ դա գոնե մի չանս է: Անշուշտ, հնարավոր է, որ Իթթիհադում լինեն այնպիսիք, որ մեզ չընդունեն, նույնիսկ

ատեն մեզ, բայց նրանց մեծամասնությունը հավատում է այնպիսի ապագայի կառուցմանը ազատության և առաջադիմության գաղափարներով, որում բոլորս էլ կգտնենք մեր տեղը:

Բայց Սարգսյանը բոլորովին չէր համոզվում Գրիգորի փաստարկներով և բացասաբար գլուխն էր շարժում՝ գնալով զայրանալով:

– Լսիր, Սարգսյան,– պոռթկաց հանկարծ Գրիգորը,– դու գտնվում ես այստեղ՝ Փարիզում, զբաղվում քո առուծախով: Քեզ չեմ հանդիմանում, բայց իրադարձություններն այնտեղ են՝ Թուրքիայում, շատ հեռու չքեղ Վանդոմի հրապարակից: Գիտեմ, որ դու իսկական հայրենասեր ես, Աստված իմ, գիտեմ: Բայց բաներ կան, որ չեն կարող հեռվից ընկալվել: Գուցե և Թուրքերի հետ մեր ունեցած խնդիրն այն է, որ երբեք չենք նստել՝ նրանց հետ բանակցելու: Ձեզ առաջարկում եմ, որ նրանց մի հնարավորություն տանք:

– Լսեք, իմ բարեկամներ,– Սարգսյանը կրքոտ հանդես եկավ: – Եթե ընդունենք Գրիգոր Բրոչյանի առաջարկը, Լուցիֆերին սատանայով կփոխարինենք և կընկնենք նրանց ճանկը. արեք այն, ինչ ձեզ թելադրի ձեր խիղճը: Ես համաձայն չեմ:

– Դե ինչ, եկեք քվեարկենք,– Սուրեն Մաթոսյանը գործնական մարդ էր. ժողովներին նա միշտ աչքի էր ընկնում իր սառնարյունությամբ, երբեմն թվում էր, թե իրեն բնավ չի հետաքրքրում վեճի առարկան:

– Եկեք քվեարկենք և վերջ տանք այս ամենին: Կվճռենք մեծամասնության կամքով. այդ որոշումը պարտադիր կլինի բոլորիս համար, լսո՞ւմ եք: Համաձա՞յն եք:

Պահը դժվարին էր, ավաղ այդ մարդը իրավացի էր, քանզի պառակտումը հայերի համար կարող էր ողբերգական լինել:

– Այնուամենայնիվ,– կրկին շարունակեց Մաթոսյանը,– կարծում եմ, որ հարկ կլիներ իմանալ Անրի դը Լատուրի կարծիքը: Չպետք է եփվենք մեր սեփական հյութում, իսկ դը Լատուրը միակն է ներկա գտնվողների մեջ, որ իրերին կարող է իրատեսորեն նայել:

Կրկին ստիպված եղա միջամտել բեկումնալից մի պահի, բայց չէի կարող խույս տալ պատասխանից, երբ խոսքը մի բանի մասին էր, որ կարող էր վնասել որդուս ապագային: Բոլորը լուռ զննում էին ինձ, ասես իմ ասելիքը վերջ էր տալու այդ վեճին:

– Լավ,– ցանկանում էի կրկին հանդարտեցնել կրքերը և հաշտություն բերել այդ կարևոր հավաքին: – Ինձ լավ եք ճանաչում, մի քանիսը ձեզանից՝ տարիներ ի վեր: Երբ հասա Թուրքիա առաջին անգամ, ընդամենը քսանհինգ տարեկանում, նախկինում ոչ մի հայի հետ

չէի չփվել: Հայաստանի մասին ոչինչ չգիտեի, ոչ էլ իր հարցի: Աստիճանաբար ես ներքաշվեցի ձեր հարցում մինչև այն աստիճան, որ այսօր որդիս նույնպես հայի արյուն ունի: Չեմ կարող լուռ մնալ, թեև ձեզ ասեմ, որ պատասխանատվությունն ինձ ճնշում է, սակայն ամեն դեպքում ձեզ դիմում եմ որպես հայ, որպես եղբայր...

Հասկանում եմ, թե ինչեր են անցնում ձեր մտքով: Մտաբերում եք կողոպուտները, հրկիզումները, կոտորածները, ձեր կրած անարգանքները, բռնաբարությունները, գիշերվա մեջ տանից փախուստի դիմելը, և այդպես շարունակ, մինչև որ ձեր արցունքները սպառվեն: Ինչո՞ւ: Մի՞թե չենք կարող ապրել խաղաղ: Մի՞թե մեր զավակները, մեր թոռները չպետք է հանգիստ ապրեն յուրայինների հետ: Ի՞նչ է հարկավոր անել՝ ի վերջո մեր դժբախտություններին վերջ տալու համար: Պետք է ընդունենք, որ որոշ չափով մեղքը նաև մերն է, եթե կուզեք՝ թեկուզ դրա փոքր մասը: Հիմա կրկին պետք է ճիշտ ուղու վրա կանգնենք: Մի կողմից՝ փորձենք համաձայնության գալ Իթթիհադի հետ, բոլոր այն վտանգներով, որ նա կարող է հարուցել: Մյուս կողմից՝ պահպանենք ինքնավար Հայաստանի պահանջը: Ինչ վերաբերում է առաջինին, համոզված եմ, որ եթե Իթթիհադը հասնի իր նպատակին՝ սուլթանին գահընկեց անի, անմիջապես կմոռանա իր տված խոստումների մասին: Նրանք իսկական առաջադեմներ չեն: Ծանրակշիռ հիմքեր ունեմ կարծելու, որ նրանք, փոքրամասնությունների իրավունքների տակ քողարկվելով, ուզում են, որ իրենց խռովությունը Եվրոպան համարի սուլթանի ռեժիմի դեմ խռովություն: Մտածեք այն բանի մասին, որ առայժմ եվրոպական տերությունները բոլորովին չեն ցանկանա, որ կայսրությունը վերածվի մասերի առանց իրենց վերահսկողության: Այդ տերությունները ցանկանում են սահմաններով առանձնացնել իրենց ազդեցության գոտիները: Մի՞թե դուք չեք տեսնում: Անգլիան պահանջում է Եգիպտոսը և Միջագետքը, Ֆրանսիան՝ Սիրիան և Լիբանանը, Ռուսաստանը՝ Կովկասը մինչև Պարսկաստան և Բոսֆորի վրա վերահսկողությունը, այսինքն՝ Կոստանդնուպոլսի բանալիները, Իտալիան՝ Կիլիկիան... իսկ Գերմանիան... համոզված եմ, որ Գերմանիան ուզում է բոլորը: Ինչ մնում է երիտթուրքերին, նրանք իմ կարծիքով սնապարծ սպաների, մտավորականների, պաշտոնյաների խումբ են, որոնց հավատամքը իրականում Թուրան կոչվող առասպելն է, որն ինձ տարիներ առաջ բացատրել են: Այն հեռավոր և առասպելական վայրը, ուր բնակվում էին քոչվոր թուրքմեն ցեղերը և որը ցանկանում են դարձնել թուրք ցեղի սրբավայրը՝ անհասանելի նրանց, ում երակներով թուրքական

արյուն չի հոսում, որը խորհրդանշում է իրենց արյան ուժը, իրենց ռազմիկների վայրագությունը, որտեղից էլ գալու են տիրելու ողջ Կենտրոնական Ասիան, այնուհետև... Սա է, ինչին հավատում են Ահմեդ Ռիզան, դոկտոր Նազիմը, այն մյուս բժիշկը՝ Բեհաէդդին Շաքիրը, Ջեմալ Նուրին, Մեհիր Սայիդը և շատ ուրիշներ: Նրանք երազում են ոչ միայն պահպանել կայսրությունը,– ինչ ասել է պահպանել,– նաև ընդարձակել այն, սակայն բացառապես Թուրքերի համար, իսկ մնացյալները՝ հայերը, հույները, ասորիները, հրեաները..., նույնիսկ քրդերն ու արաբները դուրս են մնում այդ չարամիտ ծրագրի շրջանակներից:

Հետևաբար ես համամիտ չեմ քեզ հետ, իմ Թանկագին Գրիգոր: Ճշմարիտ է, որ դու այնտեղ առաջին գծի վրա ես՝ կյանքդ վտանգելով, և որի համար բոլորս քեզ պարտական ենք: Հիմա, սակայն, խոսքը դրա մասին չէ: Հիմա մենք պետք է որոշենք, թե որ ուղիով գնանք, իսկ այդ ընտրությունը դյուրին չէ: Իմ կարծիքով մենք պետք է պայքարենք հանուն անկախ Հայաստանի: Վերադառնանք մեր արմատներին, նրան, ինչ գոյություն ուներ նախկինում, բայց պատմության ցնցումների հետևանքով, կործանվեց: Եթե ընդունենք Իթթիհադի առաջարկը, մենք առհասարակ երկրի երեսից վերանալու վտանգին կենթարկվենք: Եթե ընտրենք անկախության ճանապարհը, կանցնենք երկար, տառապալից ճանապարհ՝ լի փչերով և հիասթափություններով, բայց գուցե ի վերջո դա կարդարացնի իրեն...

Այդ պահին Սարգսյանը հիացմունքով ընդհատեց ինձ:

– Ես լրիվ համաձայն եմ Անրի դը Լատուրի հետ. նա հայից լավ արտահայտվեց: Լրի՛վ համաձայն եմ:

Հենց այդ պահին Գրիգոր Բրոչյանը զսպանակի պես տեղից վեր ցատկեց և սրտնեղած՝ համարյա գոռաց մեզ վրա:

– Ինձ հիասթափեցրիք: Ձեք պատկերացնում, թե ինչեր եք ասում: Վերջապես մի անգամ մեզ հաջողվեց Թուրքերի հետ համաձայնության գալ: Շարունակեք նստած մնալ՝ քննադատելով, մինչ մենք փորձում ենք կրակից չագանակներ հանել: Ցավում եմ, բայց այլևս չեմ հանդուրժի: Գնանք այստեղից, ընկերներ, այստեղ մենք ավելորդ ենք:

Ասածն արած էր. Գրիգորն ու իրեն ընկերակցողները լքեցին սրահը, առանց ուշադրություն դարձնելու մեր հորդորներին, որոնցով մենք նրանց համոզում էինք կշռադատել ամեն ինչ: Հնար չեղավ. շատ բորբոքված էին և վիրավորված:

Մնացածներս մնացինք մտախոհ և տխուր՝ նրանց անսպասելի վարմունքից: Նրանք շատ ավելին էին, քան բարեկամները և նրանք, իսկապես, ամեն ինչ անում էին՝ հանուն Հայկական հարցի: Մտածեցի, որ դժվար ժամանակներ են, և գուցե ինչ-որ պատճառով Գրիգորը շատ նյարդայնացած է, գուցե մի խնդիր ունի, որ մեզ չի կարողանում պատմել: Բայց ակնհայտ էր այն, որ ինչ-որ վճռական պահի կոտրվել էր այն վստահությունը, որ մինչև հիմա մենք տածում էինք միմյանց նկատմամբ՝ Նյու Յորքում այն հուզումնալից ժողովից սկսած:

Սարգսյանը գլուխը տարուբերում էր՝ վշտացած և խռովահույզ՝ չիմանալով, թե որն է լինելու ամեն ինչ շտկելու ճշգրիտ ուղին: Այնուհետև մենք միմյանց հրաժեշտ տվեցինք, և ես երկար ժամանակ փորձեցի նրան համոզել, որ տեղի ունեցածը ընդամենը անիմաստ բան է, և որ շուտով ամեն ինչ կընկնի իր տեղը:

Բայց կյանքը երբեմն շատ բարդ բան է, իսկ մարդկային արարածների արձագանքը՝ անկանխատեսելի: Այն, ինչ թվում էր անցողիկ անախորժություն, պառակտման պատճառ հանդիսացավ:

1895 թ. Հայ հեղափոխական դաշնակցության շարքերը լքեցին շատ կարևոր անձիք, որոնցից շատերը ազդեցիկ և լայն կապերի տեր էին ոչ միայն Փարիզում, Լոնդոնում կամ Բեռլինում, այլև Միացյալ Նահանգներում ու Ռուսաստանում: Այդ փոքրիկ ճեղքվածքները նման են բնության ուժերին՝ երկրաշարժից առաջացած բացվածքին, որն անհնար է, որ կրկին փակվի:

Ժամանակը ցույց կտա, որ համարյա երեխայական այդ պոռթկումը պատճառելու էր սարսափելի մի աղետ՝ վերջնականապես անջատելով «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը» «Հնչակ» կուսակցությունից:

ՀՈՒՆԻՍ 1905

30. ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ

1905 թ. կեսերին Սարգսյանն ինձ ուղարկեց մի չտապ գրություն: Պայմանավորվեցինք հանդիպել այդ նույն օրը երեկոյան: Նրան այդքան գրգռված և նյարդայնացած երբեք չէի տեսել: Երբ մի քիչ հանդարտվեց, ասաց, որ Փարիզում է հայազգի ամենաքաջարի և հմուտ զորավարներից մեկը՝ Անդրանիկ Օզանյանը: Եկել է Ֆրանսիա օգնություն խնդրելու նպատակով և ցանկանում է հանդիպել իր ամենաազդեցիկ հայրենակիցների և Հայաստանին նվիրված բարեկամների հետ: Ըստ Սարգսյանի, անշուշտ, ես նրանցից մեկն էի:

Զհասցրի հետաքրքրվել նրանով: Այդ նույն գիշեր նա ներկայացավ Վանդոմ հրապարակի վրա գտնվող գրասենյակում: Ջլապինդ մարդ էր, դեպի հետ սանրած առատ մազերով և արևելյան ոճի մեծ բեղերով: Կլիներ մոտ քառասուն տարեկան, թեև նրա ասես քարակերտ դեմքին՝ կոպերի տակ և շուրթերի անկյուններում, կնճիռներ էին երևում: Նրանից մեծ ուժ էր հորդում, իսկ մուգ աչքերը ծակում անցնում էին դիմացինի միջով:

Ներկայանալով ձեռքս ուժգին սեղմեց.

– Անդրանիկ Օզանյան, գիտեմ, որ դուք մայե դը Լատուրն եք: Մեծ պատիվ է և երջանկություն հայերիս համար ունենալ ձեզ նման մարդու աջակցությունը: Հազար անգամ շնորհակալություն այն ամենի համար, ինչ դուք անում եք հանուն մեզ... Թեև հայերի հետ ձեր կապն արդեն արյունակցական է, եթե չեմ սխալվում:

Գլխով համաձայնեցի: Այդ մարդը, չնայած ավելի երիտասարդ էր, քան ես, ինձ մեծ հարգանք էր ներշնչում:

– Այո՛, իրավացի եք: Արյունս հիմա հայկական է, քանի որ կինս և հետևաբար տղաս նույնպես հայեր են: Այդ է պատճառը, որ ես շատ սրտացավ եմ ձեր հարցի հանդեպ, որը հիմա նաև իմն է...

– Որքան ինձ հայտնի է, մայե Լատուր, դուք ձեզ հայ էիք զգում ամուսնանալուց դեռ շատ առաջ: Ամեն դեպքում ես անչափ ուրախ եմ:

Զգացի որ Անդրանիկ Օզանյանը պերճախոս մարդկանցից չէր: Մենք նստեցինք մի մեծ կլոր սեղանի շուրջ, մինչ աստիճանաբար այլ աչքի ընկնող հայեր էին գալիս ժողովին:

Սարգսյանը նրան զննում էր անթաքույց հիացմունքով, գուցե համեմատելով իր հարմարավետ կյանքը այդ ռազմի հերոսի կյանքի հետ, ով երբեք հոգ չէր տանում իր սեփական անձին, մինչդեռ երկու օր առաջ ինքը՝ Սարգսյանն ինձ պատմել էր ձիարշավներին իր զտարյուն ձիերի մասնակցության մասին՝ որպես մի կարևոր իրադարձության:

Այդ օրերին Փարիզում խոսում էին միայն մի թեմայից՝ փողից ու էլի փողից: Դրանով կարելի էր ձեռք բերել չքեղ առանձնատներ, ցեղական ձիեր... և կանանց: Այդպես էին մտածում ձեռնարկատերերը, բուրժուաները կարծում էին, որ հաջող գործարք իրականացնելով արդեն իսկ իրավունք ունեին Բուլոնյան անտառում ձի քշել, ունենալ մի չքեղ բնակարան զբոսայգիներում և ունենալ սիրուհի:

Սա էր պատճառը, որ Սարգսյանը և Փարիզի ունևոր հայերը չէին կարողանում աչքները կտրել Անդրանիկ Օզանյանի կամային դեմքից, որն աշխատում էր սիրալիր լինել այդ զուգված-զարդարված բուրավետ օծանելիքներով օծված, խնամված՝ համարյա կանացի ձեռքերով տղամարդկանց հետ, քանի որ նրանք բոլորը հաճախում էին Փարիզի լավագույն վարսավիրանոցները:

Ես ուշադիր նայեցի մեր հյուրի ձեռքերին: Ջլապինդ ձեռքեր՝ ուժեղ մատներով, կարճ կտրած եղունգներով, կապույտ և դուրս պրծած երակները վկայում էին այդ մարդու եռանդը:

Սարգսյանը չկարողացավ զսպել իր հուզմունքը, ոտքի կանգնեց մինչ բոլորը քար կտրած սպասում էին: Նա ոչ միայն հայ համայնքի առաջնորդն էր Փարիզում, այլ նաև տանտերը, և հետևաբար նրան էր պատկանում առաջինը խոսելու իրավունքը:

– Զորավար Անդրանիկ, թույլ տվեք ձեզ դիմել այսպես, ինչպես վայել է ձեր արժանիքներն ունեցող մարդուն: Բոլոր հայերս էլ գիտենք ձեր գործած սխրագործությունների մասին և հպարտ ենք ձեզանով և այն մարդկանցով, որոնք ձեզ հետևում են առաջին գծում: Նաև մենք մեծ պարտքի զգացում ունենք Թուրքիայում գտնվող մեր եղբայրների նկատմամբ, և մեզանից ոչ մեկը երբեք չի մոռանա մեր սիրելի Հայաստանը:

Պատիվ ունեմ ձեզ հայտնելու, որ հանգանակել ենք հարյուր հազար ոսկեդրամ ֆրանկ ձեզ տրամադրելու համար: Շատերը գուցե մտածեն, որ դա շատ մեծ գումար է, իսկ մենք, որ ձեզ այն առա-

ջարկում ենք, կարծում ենք, որ դա նվազագույնն է, ինչ պարտավոր ենք անել: Մեր պայքարը պետք է նպատակաուղղված լինի նրան, որ վառ պահվեն հայերի պահանջատիրական իրավունքները եվրոպական տերությունների, հասարակության բոլոր խավերի առջև: Բոլորն էլ գիտեն մեր պայքարի, այն արյունալի հետապնդումների մասին, որոնց ենթարկվում է մեր ժողովուրդը սուլթանի նենգ, ստորաքարշ կառավարության կողմից: Նման պայմաններում անչափ կարևոր է ձեր և ձեզ նման մարտնչողների կենդանի խորհրդանիշը, որն ապացուցում է, որ հայ ժողովուրդը երբեք չի հանձնվի: Անչափ շնորհակալ ենք ձեզ, Զորավար Անդրանիկ: Հազար անգամ երախտապարտ:

Խոսքով հանդես եկավ Անդրանիկը: Թեև ջանում էր խոսել առանց հուզմունքի, սակայն զգացվում էր, որ նա ջանք է գործադրում:

— Շնորհակալ եմ ձեզ այս ջերմ հանդիպման և ձեր առատաձեռն վերաբերմունքի համար: Ճիշտ չէր լինի, որ ասեի, թե մենք փողի կարիք չունենք, քանզի առանց դրա ոչ զենք ձեռք կբերվի, ոչ մթերք, ոչ էլ տուժածներին օգնություն կտրվի: Շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր չարունակում են իրենց աջակցությունը մեր խնդրում:

Մեր ժողովրդի դժբախտությունը այն է, որ մենք սակավաթիվ ենք և կասեմ ձեզ, ցավոք, որ միմյանց հետ անհաշտ: Հայ հեղափոխական դաշնակցությունը վտանգավոր ուղի է ընտրել, որը չգիտենք, թե մեզ ո՞ւր է տանում: Նրանք կարծում են, թե Իթթիհադը ի վիճակի է ամեն ինչ փոխել: Իմ կարծիքով,— ով կուզենա լսել ինձ,— Թուրքերը ուզում են ազատվել բոլոր նրանցից, ովքեր իրենց ռասային չեն պատկանում: Մենք ավելորդ ենք. ոչ միայն հայերս, բայց ամենից շատ՝ հայերս: Թուրքերը չեն ընդունում մեր մշակույթը, ոչ էլ մեր կրոնը, ոչ էլ մեր լեզուն ու դրանցից բխող մեր հոգեղեն կերտվածքը: Կուզենային վերացնել մեր բանաստեղծներին, գրողներին, փիլիսոփաներին, երգահաններին... և, անշուշտ, մեր զինվորներին: Կուզենային վերացնել մեր հետքերը, մեր խաչքարերը, մեր մատուռները, եկեղեցիները, ցանկացած վկայություն կամ նշան այն մասին, որ այնտեղ երբևէ հինավուրց մի ազգ խաղաղ ապրել է իր սեփական երկրում: Զեն կարող հանդուրժել այն, որ մենք պաշտպանում ենք մեր իրավունքները: Նրանց համար դա անընդունելի է, բայց ես ձեզ խոստանում եմ. քանի դեռ Աստված մեզ ուժ ու կորով է տալիս, մենք կդիմակայենք...

Սարգսյանը բարձրացրեց իր աջ ձեռքը, ինչպես իր ուսուցչին հարց տվող դպրոցականը:

— Զորավար Անդրանիկ, շատ ենք լսել Մուշի մասին և ձեր Սուրբ Առաքելոց վանքի պաշտպանության մասին: Թախանձագին խնդրում եմ ձեզ՝ պատմեք, թե ինչ է տեղի ունեցել: Մեզ համար մեծ պատիվ կլիներ այդ մասին պատմել մեր հարազատներին, դեմ չե՞ք:

Անդրանիկը ժպտաց՝ ասես ցանկանալով մեծ նշանակություն տալ այդ հարցին:

— Գուցե դուք դրան ավելի մեծ նշանակություն եք տվել, քան իրականում եղել է,— ասաց նա անկեղծորեն,— իմ կարծիքով իսկական հերոսները այն որբերն ու վանականներն են, որոնք այնտեղ էին ապրում: Բայց եթե իրոք ուզում եք իմանալ այդ պատմությունը, ձեզ կպատմեմ: Ինձ համար մեծ պատիվ է այդ:

Սկսեմ նրանից, որ Սուրբ Առաքելոց եկեղեցին գտնվում է լեռան գագաթին, Մուշի հարավ-արևելքում: Այդ ժամանակ տարածաշրջանը բնակեցված հայերով՝ Թուրքերի և քրդերի կողմից ասպատակության էր ենթարկվում: Դրությունն անտանելի էր, և միակ ելքն այն էր, որ օսմանյան բանակին ապացուցեին, որ կարող են դրանց դեմ դուրս գալ: Խոսքը դժվարամատչելի մի վայրի մասին է, իսկական մի ամրոցի, որը հնում համարվում էր անառիկ... երբ դեռ գոյություն չուներ հրետանին:

Որոշեցինք մի լավ դաս տալ Սալեհ փաշային՝ Թուրքական զորքերի հրամանատարին: Այնպես որ, հասանք վանք, վանահայրը մի ծեր իմաստուն՝ Հովհաննես վարդապետը մտնելիս ինձ գրկեց: Նա գիտեր, որ Թուրքերը ուզում են տիրանալ վանքին, որպեսզի այն իրենց բերդամրոցը դարձնեն՝ հայերի դեմ օգտագործելու նպատակով:

Ինձ հետ այնտեղ էին հասել նահանգի լավագույն հրաձիգներից երեսունը, պատրաստ ամեն ինչի, իմանալով հանդերձ, որ հնարավոր էր՝ չկարողանային կենդանի դուրս գալ այդ ամրոցից:

Զգիտեմ, կհավատաք ինձ, եթե ասեմ, որ դա այն ժամանակ ամենաքիչն էր մեզ հուզում: Զէինք կարող տեղափոխել որբերին: Ոչ ոքի չէր հաջողվի Թուրքի ձեռքից պրծնել, որոնք ուզում էին բոլորին տանջամահ անել: Այդուհանդերձ մեզ հաջողվեց բավական քանակությամբ զենք ու զինամթերք, նաև պարեն հավաքել: Ինչ վերաբերում էր ջրին, վանքում քարե մի մեծ թաս կար, որի մեջը լցվում էր տանիքների ջուրը և բացի այդ կար մի խոր ջրհոր, որից լավորակ ջուր էին հանում:

Նախ ուզեցի համոզել վանահորը, որ պետք է հեռանա ավելի ապահով մի տեղ: Այնքան համառ մարդ դուրս եկավ, որ ստիպված հրամայեցի նրան հեռանալ համարյա զոռով՝ օգտվելով գիշերվա

մթից: Երկու լավագույն ուղեկիցների օգնությամբ ուղղահայաց իջնող արահետներով նրան այնտեղից հանեցինք: Չէինք կարող թույլ տալ, որ բոլոր հայերի կողմից հարգանք խորհրդանշող այդ մարդը դառնար Ֆերիկ փաշայի որսի ավարը, մի դաժան անհոգի մարդու, որը ցանկանում էր մեր գլուխներն ուղարկել Դոլմաբաղչե՝ որպես ընծա իր արյունարբու տիրոջը:

Այնուամենայնիվ Ֆերիկ փաշան դեռ անտեղյակ էր, որ մենք այնտեղ էինք գտնվում: Գուցե և կասկածում էր, բայց մենք գործում էինք ծայրաստիճան զգույշ: Զնայած դրան, հավանաբար ինչ-որ լրտես նրան հայտնել էր: Տեսանք, որ զորքերը շարժվում և սկսում են մոտենալ:

Պետք է ձեզ ասեմ, որ ինձ հետ էին Ղազարը, Գևորգ Զաուշը, Հարությունը, իմ ամենամտերիմ ընկերները, իսկ հրաձիգները չրջանում լավագույններն էին. հմուտ որսորդներ, բոլորն էլ ընդունակ մի ակնթարթում լիցքավորել հրացանը, ամեն բանի պատրաստ այնպիսի խիզախությամբ, որով երբեմն օժտում է հուսահատությունը... կամ կույր հավատը:

Այդ ժամանակ Թուրքերն արդեն հասել էին բլրի ստորոտին, չրջապատել վանքը, բայց մեզանից շատ ներքև, նրանք մեզ մրջյունների չափ էին երևում: Մեր գլխավերևում երկու արծիվ շարունակ պտտվում էին երկնքում, մեր մարդկանց համար դա լավ նշան էր: Դուք հայ եք և կհասկանաք ինձ, շատ էինք ուզում հավատալ երջանիկ բախտին և վախենում էինք չար աչքից: Ինչևիցե, մենք այդպիսին ենք:

Բարի, ձեր թույլտվությամբ շարունակեմ պատմել: Թուրքերը խիզախորեն վեր էին բարձրանում՝ համոզված, որ թերևս ոչ մի դիմադրության չեն հանդիպի: Ընդամենը մի քանի վանականներ և մի քանի անչափահաս որբեր, մի երկու խեղճ ու կրակ գյուղացիներ, որոնք վախենում էին իրենց ընտանիքի ճակատագրի համար... Գործը եղած պրծած էր:

Անդրանիկը, որ հրաչալի հռետորի պես էր իրեն պահում, դադար տվեց: Դահլիճում քար լռություն էր, բոլորս ապշահար էինք նրա պատմելուց:

Նոյեմբերի 10-ն էր, շատ ցուրտ էր, գիշերը ջերմաստիճանը կրտրուկ իջնում էր: Նրանք, ովքեր մնում էին հերթափոխելու, պետք է հսկեին, թեկուզ ցրտահարվելու վտանգ կար: Նոյեմբերի 11-ին, Թուրքերը սպասելուց հոգնած, որոշեցին գրավել ամրոցը: Հսկայական ջանքեր գործադրեցին և վեր խոյացող կիրճերով բարձրացան, քանի որ ամրոցը ասես աչտարակ էր վիհերի վրա: Նրանց թողեցի, որ հանգիստ մոտենային: Երբ կրակոցի հեռավորության վրա էին, հրաման տվեցի՝ «կրակ» և մի կրակահերթից մոտ քսան հոգի ընկան անդունդը: Նրանց տեսքից երևում էր, որ չփոթահար էին, չգիտեին ինչ անել, քանի որ այդ ընդունելությունը նրանց համար անսպասելի էր: Հանկարծ բոլորը պատահածից սարսափահար սկսեցին զառիվայրով վազել ներքև, ոնց որ սատանի կրունկով:

Հաջորդ օրը ուժեղ ձյուն եկավ: Դա դժվարացնում էր պաշտպանությունը՝ բոլոր պարիսպները ձյունով էին ծածկվել, բայց ավելի բարդ էր չրջափակումը, քանի որ գրոհողները չգիտեին որտեղ թաքնվել:

Հեռադիտակով տեսա, որ մոտակա գյուղերից բռնում-բերում էին հայերին, որպեսզի նրանք խրամատներ փորեին: Համոզված էին, որ նրանց վրա չենք կրակի և բացի այդ նրանց վրա էին թողնում ամենածանր աշխատանքները:

Կառավարիչը մի հայի ուղարկեց վերջնագիրը ձեռքին: Կա՛մ մենք հանձնվում էինք անմիջապես, կա՛մ կօգտագործեին հրետանին՝ կործանելով վանքը: Նա չգիտեր, ովքեր էին ներսում, և նրա համար ոչինչ չարժեին ո՛չ վանահայրերը և ո՛չ էլ որբերը, միայն թե նրան հաջողվեր մեր գլուխները տանել Կոստանդնուպոլիս, որտեղից էլ դա իրենցից պահանջում էին:

Մեր տրամադրության տակ մենք ունեինք չորս փոքրիկ թնդանոթ, ավելի շատ դրանք նման էին երկայնափող հրացանի:

Երբ նրանք սկսեցին կրակել, անմիջապես պատասխանեցինք: Թուրքերը վատ նշանառուներ են, վառոդը պետք է որ փչացած լիներ, թնդանոթները բնականաբար վաղուց կարգի չէին բերվել և մաքրվել: Եթե միայն մենք կանոնավոր բանակ ունենայինք, նրանց ընդմիշտ կվոնդեինք Հայաստանից:

Նրանց զարկերին մենք պատասխանում էինք ավելի դիպուկ կրակոցներով: Անշուշտ մենք ավելի քիչ էինք կրակում, բայց խփում էինք թիրախին և շարքից հանեցինք երեք հրանոթ: Ինչ գոհունակությամբ էինք նայում օդում ցիրուցան վեր բարձրացող նրանց հրանոթներին:

Այդ ժամանակ Ֆերիկ փաշան, ինչպես ասում են, մեռած էր, թաղած չէր: Սուրհանդակները, որոնց նա ուղարկում էր մեզ ահաբեկելու, հայեր էին և մեզ պատմում էին այն, ինչ ուզում էինք իմանալ:

Ուղարկեց մի կնոջ՝ Մարիա Փափազյան անունով, այն ուղերձով, որ ուզում էր բանակցել ըմբոստների ղեկավարի հետ: Մարիան երկու այտերս համբուրելուց հետո ասաց, որ ես շատ նման եմ իր որդուն,

որը սպանվել էր 1895 թ. Թուրքերի կողմից: Հետո ինձ թախանձագին խնդրեց, որ Թուրքերի ոչ մի պահանջին տեղի չտայի. ասաց, որ սպառնում էին, բայց կատաղել էին, որ չէին կարողանում մեզ խպառ ոչնչացնել:

Ինձ պատմեց նաև, որ զինվորները հալից ընկած էին, ուժասպառ, ցրտից փայտացած, վատ վարձատրված, ուտում էին այն, ինչ գտնում էին գավառի գյուղացիներից, որոնք այդ պատճառով քշել էին իրենց անասուններին հեռու սարերը և թեև գիտակցում էին, որ իրենց տավարն ու ոչխարը վատ են կերակրվելու, նախընտրել են կորցնել այդ ամենը, քան հանձնել Թուրքերին:

Մյուս կողմից՝ մեր դիմադրության մասին լուրը տարածվել էր մոտակա բոլոր գյուղերով, և բնակիչներն աղոթում էին մեզ համար ու անիծում զինվորներին: Շատ հայ պատանիներ ուզում էին գալ ու միանալ մեզ, ինչը հպարտությամբ և գոհունակությամբ լցրեց մեր սրտերը, քանի որ դա էր մեր երազած պարգևը, ուրիշ ոչինչ: Ոգևորել գյուղացիներին, ապացուցել նրանց, որ Թուրքերը անպարտելի չեն անգամ իրենց որոտալի թնդանոթներով:

Համաձայնեցի հանդիպում ունենալ Ֆերիկ փաշայի ներկայացուցիչների հետ: Մի քանի ժամ հետո հայտնվեցին վեց Թուրքեր, որոնց մեջ պետք է որ լիներ նահանգի կառավարիչը, որն իհարկե այդպես էլ չերևաց, վախենալով, որ իրեն պատանդ կպահեին:

Գնդապետ Ահմեդ բեյն իր մարդկանց հետ վանք մտան բավականին երկյուղած, գերեզմանային լռությամբ, թեև ես հրամայել էի, որ մերոնք չարունակ մտնեին և դուրս գային, որ թվար, թե մենք պաշտպաններս ոչ թե քառասուն հոգով էինք մարտնչում, այլ հարյուրավոր:

Ասեմ նաև, որ որբերից ավելի մեծերը և խելահասները սկսեցին հրացանները փամփուշտներով լցնել, նրանցից մեկը անգամ շատ դիպուկ էր կրակում:

Ահմեդ բեյը, խուսափելով նայել աչքերիս, ինձ առաջարկեց լիակատար ներում, որ ոչ ոք չի պատժվի: Վստահեցրեց, որ ոչ մի հետապնդում չի լինի, որ ամեն բան կընթանա իր սովորական հունով: Այդ ժամանակ չկարողացա ինձ զսպել:

— Ի՞նչ սովորական հուն: Սովորական կոտորածների, թալանների, բռնաբարությունների և առևանգումների հունո՞վ: Այն, որ չարունակե՞նք հանդուրժել կաչառակեր պաշտոնյաներին, որ անգամ մեր հոգին են ուզում թալանել:

— Ո՛չ,— պատասխանեցի,— չենք ուզում այդ սովորական վիճակը: Քանի դեռ հետապնդում են հայերին, կմնանք այստեղ:

Ունեինք պարեն, զինամթերք, հրետանի, ինչպես որ ապացուցել էինք և երբեք նրանց չէր հաջողվի գրավել վանքը:

Այդ ժամանակ, Մեհմեդ էֆենդին, նրանցից մեկը, որ եկել էր ընկերակցելով Ջեմեդ բեյին և ինչպես հետո իմացա, որ նա էր իսկական ղեկավարը, ինձ որոշ ծաղրանքով հարցրեց, թե ինչ էր վերջապես մեր ուզածը: Առանց հապաղելու պատասխանեցի, որ առնվազն Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածը: Մեհմեդը պնդեց, թե ես արդյոք գիտե՞մ, թե ինչ է այդ հոդվածում ասվում: Ինչպես գիտեք, Թուրքերն արհամարհում են հայերին: Այդ Թուրք պաշտոնյան չէր հավատում, որ ես ծանոթ էի համաձայնագրին: Ես նրան այն արտասանեցի բառ առ բառ, զսպելով կատաղությունս, տեսա, թե ինչպես էր զննում ինձ երկյուղած, քանի որ նա չգիտեր, թե իրականում ում հետ էր խոսում:

Այդ ժամանակ առաջարկեց ինձ, որ փախչեինք այնտեղից: Ինձ ալլահով երդվեց, որ անգամ մեր մազին չէին դիպչի: Ինչ մնում էր որբերին, պետք է հանձնվեին, և նրանց էլ ոչինչ չէր սպառնա: «Ձեզանից կուշտ ենք: Վերջ տվեք այս ամենին: Հեռացեք, այդպես ավելի լավ կլինի, հակառակ դեպքում՝ ոչ ոք կենդանի չի մնա և քարը քարին չենք Թողնի: Սա է մեր վերջին խոսքը»:

Հազիվ ինձ զսպեցի, որ նրան չապտակեմ և պատասխանեցի, որ վերջին խոսքը այդ պահին իմն էր:

«Մեհմեդ էֆենդի, հիմա ժամանակն է, որ դուք հեռանաք: Մենք այստեղ ենք և այստեղ էլ կմնանք: Ասեմ ձեզ, որ ամեն զոհվածին կփոխարինեն երկուսը և ինձ մի հարցրեք թե ինչպես է դա լինելու: Մենք հայերս հազարավոր, հարյուրհազարավոր, միլիոնավոր ենք, և դուք մեր հախից երբեք չեք կարողանա գալ: Իսկ հիմա հեռացեք այստեղից ձեր խարդախ առաջարկներով ու ստերով: Դուք հայերի վերաբերյալ երբեք մի ճշմարիտ բան չեք ասել, և այլևս ձեզ չենք հավատում: Եթե հանենք այս պաշարումը, չենք կրակի, բայց հակառակ դեպքում՝ հակահարված կտանք: Ինչ վերաբերում է վանականներին ու որբերին, նրանք ոչ մի կապ չունեն այս հարցի հետ և հետևաբար անմեղ են: Եթե հետագայում նրանց բան պատահի, դուք, Մեհմեդ փաշա և ձեր ընտանիքը, նույնը՝ Ֆերիկ փաշան, անձամբ պատասխան կտաք: Մենք՝ հայերս չենք մոռանում, լավ հիշողությամբ օժտված ժողովուրդ ենք, և դուք անցնելու եք անարգանքի պատմության

գիրկը: Հարյուր սերունդ անց անգամ ողջ աշխարհը կիմանա, թե ո՞վ էր Աբդուլ Համիդը և նրա կամակատարները»:

Զուգեցի չարունակել և դուրս եկա: Մեհմեդը դուրս եկավ վանքից այն վիճակով, որ կարծես ուր որ է կաթվածահար էր լինելու, որովհետև երբեք որևէ հայ նրա հետ չէր համարձակվել այդպես խոսել:

Սուլթանն անմիջապես իմացավ այն ամենի մասին, ինչ տեղի էր ունեցել: Նրա բազմաթիվ լրտեսներից մեկը Ահմեդ բեյի շքախմբի մեջ էր, որը մասնակցել էր ժողովին և հավանաբար հեռագրել էր տեղի ունեցածը: Բայց մենք էլ էինք տեղեկանում, թե ինչ էր կատարվում Դոլմաբաղչեի ներսում, այնպես որ ձեզ կնկարագրեմ, թե սուլթանը ինչպես էր արձագանքել դրան:

Հեռագիրը պալատ էր տարել մեծ վեզիրը: Սուլթանը լավ տրամադրության մեջ չէր, որովհետև գործերն իր ուզածի պես չէին գնում: Վերջերս նրա գործածած թմրանյութը լավդանոնն էր, որի վրա շարունակ ափիոն էր ավելացնում: Ռևմատիզմի ցավերով էր տառապում, իսկ սեռական կյանքը նրան ամբողջովին սպառել էր: Ձեզ կպատմեմ տեղի ունեցածը, որովհետև պետք է լավ ճանաչենք մեր գլխավոր թշնամուն:

Մեծ վեզիրը վախենում էր սուլթանի զայրույթալի արձագանքներից, բայց նաև գիտեր, որ պետք է անմիջապես նրան հաղորդեր, եթե ոչ՝ իր համար ավելի վտանգավոր կլիներ, այնպես որ որոշեց մտնել և այդ տհաճ պահը հնարավորին չափ շուտ ավարտել:

Այդ օրը Աբդուլ Համիդը անկողնուց դեռ վեր չէր կացել, ավելի վատ էր, քան ուրիշ առավոտներ, չհագնված, մտածելով իր ափիոնի թուրմի մասին, որը նրան թվացյալ ինքնատիրապետման տեսք էր տալիս: Նրա տարփուհիները նոր էին լքել իր վիթխարի ննջարանը: Այնքան ուժասպառ էր, որ որոշել էր անկողնում մնալ նույնիսկ նախաճաշից հետո, երբ իմացավ, որ մեծ վեզիրը ցանկանում է տեսնել իրեն: Այնպես որ, պարտադիր արարողակարգի հատուկ ողջույնից հետո, որի ընթացքում ներողություն խնդրեց տրտնջալով, որ իր բազմաթիվ հիվանդությունների պատճառով չի կարողանում նորմալ կյանք վարել, մեծ վեզիրը նրան հանձնեց հեռագիրը, որում նկարագրված էր վանքում ողջ տեղի ունեցածը:

Ըստ մեր իրազեկիչի՝ սուլթանին մոտ կանգնած մարդկանցից մեկի, ով վայելում էր նրա վստահությունը և համարվում հայ՝ թեև կիսով չափ, երբ Աբդուլ Համիդը կարդաց, ավելի ճիշտ, երբ հեռագիր բերողը նրա համար այն կարդում էր բարձրաձայն, տեսավ, թե ինչպես գիշերանոցը հագին ցատկեց մահճակալից գետնին, մինչ սենեկապետներից մեկը օգնում էր նրան խալաթը հագնել:

Ասացին, որ սուլթանը սկսել էր սուր ճղճղալ, այնքան գայրացած, որ մերկ ոտքով բախվել է բրոնզե մոմակալին և ցավից ու կատաղությունից սկսեց աղաղակել:

«Այդ ըմբոստների վերջը հարկավոր է տալ: Թող թնդանոթները կործանեն վանքը, որ քարը քարին չմնա: Հարկավոր է բոլոր հայերի վերջը տալ: Անիծված դավաճան քրիստոնյաներ: Թող այդ տարածքը հողին հավասարեցնեն»:

Սուլթանն այնքան գրգռված էր, որ ընկել էր ցնցումների մեջ և ստիպված մտել անկողին, քանի որ ոտքի վրա չէր կարողանում կանգնել:

Որ այլևս չերկարացնեմ, ասեմ, որ այդ նույն գիշեր լքեցինք վանքը, ներքևի ամենացածր պատուհաններից դուրս սահեցինք և երբ բոլորով իրար հետ էինք, փախանք սարերը: Կարճ ժամանակ անց Տարոնում էի, հետո գնացի Սասուն ու Վասպուրական, որտեղից էլ ղեկավարում եմ մեր զինվորների գործողությունները, որոնք կարող են առաջ գնալ այն առատաձեռն նվիրատվությունների շնորհիվ, որ ձեզ նման մարդկանց ջանքերով են ձեռք բերվում: Հետևաբար՝ շնորհակալություն և Թող Աստված օգնի Հայաստանին:

Երբ Անդրանիկ Օգանյանը թողեց ժողովը, Սարգսյանը, որի հետ բարեկամական ուժեղ կապ էի պահպանում, ինձ ասաց, որ պետք է նորից տեսնվեին խոսելու Իթթիհադի գաղափարախոսության վերաբերյալ ՀՀԴ կուսակցության որոշ առաջնորդների տեսակետների շուրջ:

Մեզանից ոչ ոք չէր կարող կռահել, թե մինչև ուր էր մեզ հասցնելու այդ միությանը հավատ ընծայելը: Գրիգոր Բրոչյանը ի կատար էր ածել իր սպառնալիքները, և երկու ամենակարևոր կուսակցությունների պառակտումը կայացել էր:

ՀՈՒԼԻՍ 1906

31. ԺՈՂՈՎ ՍԱԼՈՆԻԿՈՒՄ

1906 թ. սկզբներին Սարգսյանն ինձ համոզեց իրեն ընկերակցել Սալոնիկ:

Ուղևորությունն ինքնին մի վտանգավոր ձեռնարկում էր, բայց ես չկարողացա մերժել: Ինձ գայթակղում էր այն զգացողությունը, որ մոտենում էի գայլի որջին և ու որ է ձեռքս մտցնելու էի նրա երախը: Երբ կինս տեղեկացավ, խնդրեց, որ ոչ մի խենթություն չանեմ:

– Զէ՞ որ դու երեխա չես: Եթե կարծում ես, որ պետք է գնաս՝ զգույշ եղիր: Դու շատ լավ գիտես նրանց գործելակերպը:

Մարիցան մի խորթ քույր ուներ Կոստանդնուպոլսում և ինձ միշտ ասում էր, որ նրան համոզենք, որ գա Ֆրանսիա: Խնդիրն այն էր, որ նրա ամուսինը՝ Պողոս Տարպիտյանը այդ մասին լսել անգամ չէր ուզում՝ ճամարտակելով, որ այդ քաղաքը, անկախ ամեն ինչից, հայերի համար մնում է ապահով մի տեղ:

Ինձ տեղեկացրել էին, որ Պողոսը ՀՀԴ անդամ է և եթե բացահայտվեր, նրան կսպանեին, իսկ ընտանիքի անդամներից վրեժ կլուծեին:

Այնպես եղավ, որ հանկարծ հայտնվեցի «Վառնա» շոգենավի վրա, որը ապրանք էր տեղափոխում Մարսելից Պիրեա՝ այնտեղից էլ Սալոնիկ, որտեղից էլ շարունակելու էր ուղևորությունը դեպի իր՝ անունը կրող քաղաքը Բուլղարիայում, Վառնա:

Սարգսյանն ինձ ասել էր, որ պետք է անձամբ տանեի որոշ կոնֆիդենցիալ փաստաթղթեր և մուրհակներ Հնչակ կուսակցության հայերին: Վերջին ժամանակներում ես նույնպես ավելի էի համակրում այդ կուսակցությանը, քան ՀՀԴ-ին, սակայն ինձ վշտացնում էր այն, որ հայերի միասնաբար գործելակերպը գրեթե վերջնականապես խզվել էր: Փաստորեն Գրիգոր Բրոչյանն ու իր խումբը շատ քիչ էին մեզ հետ չփվում: Սարգսյանն ամեն կերպ աշխատում էր, որ ես իրեն ուղեկցեի այն հույսով, որ գուցե իմ ներկայությունը նպաստեր երկու կողմերի վերստին միավորվելուն:

Այդ հարցում այնքան էլ վստահ չէի իմ կարողությանը, սակայն պարտավոր էի ինձ համարում գնալ այդ քայլին:

«Վառնա»-ն փոքր, մոտ քառասունհինգ մետր երկարությամբ շոգենավ էր, սակայն նավորդում էր շատ ավելի խոշոր չափերի նավի պես, երբ գնում էր չեղագիծ ալիքներին ընդառաջ, որոնք հյուսիսային քամու մղումով սկսել էին տարուբերել այն:

Հոնիական ծով մտնելիս Կորնթոսի նեղուցի ուղղությամբ պետք է հասնեինք Պիրեա՝ մեր ուղևորության առաջին նավահանգիստը:

Արիստոտել Պապադոլուսը, հույն՝ ամուսնացած մի բուլղարուհու հետ, մեր առջև շատ էր հպարտանում իր նավով:

– Այս ծովին «Վառնա»-ից հարմար նավ չկա: Ես եմ ձեզ այդ ասում, քանզի ողջ կյանքս նավարկել եմ:

Ինչ խոսք, որ ես նրա պես հիացած չէի իր նավով, ավելին, սիրտս ահ էր ընկել ու եկա նրան, որ այդ նավ կոչված խարխուլ խեցու մեջ գտնվելուս միակ մեղավորն ինքս էի, որ հետևել էի այդ խելագար հային:

Այդ ժամանակ էր, որ ես ընտանիքիս հետ կապված բավականին նոր բաներ էի իմացել: Ավելի խրթին բան, քան հայի բնավորությունը՝ աշխարհում ոչինչ չկա: Բարեհամբույր են, սրտագին, բարեկամասեր, սակայն նաև թերահավատ ու նեղացկոտ և սիրուց մեկեն անցնում են ատելության: Այս վերջին թերությունները, պատմության ընթացքում՝ երկար ժամանակ, թուրքերի կողմից բռնի հպատակեցված լինելու արդյունք էին: Թուրքերը իրենց հերթին, սեփական չահերից ելնելով, ամեն անգամ փոփոխում էին իրենց տեսակետը հայերի վերաբերյալ:

Հինգ օր անց վերջապես հասանք Պիրեա: Այնտեղ մի քանի ժամ կանգ առանք, որպեսզի շարունակենք դեպի Սալոնիկ: Այդ նույն երեկո հանեցինք խարիսխը, թեև նավ էին բարձրացել միայն հիսունին մոտ երկու տղամարդ, որոնք ուղիղ գնացին կապիտանի խցիկը գիշերն անցկացնելու:

– Յուրաքանչյուրից վերցնում եմ երկու հարյուր պիաստր, ինձ համար դա իրոք օգտավետ է: Ինչպես գիտեք, մեր օրերում շատ դժվար է փող աշխատելը... Այս երկուսը իտալական հրեաներ են, և քիթս կկտրեմ, եթե սրանք մասոններ չեն: Սալոնիկում դրանք շատ են:

Նոր ուղևորներին այլևս չտեսա, քանի որ հաջորդ օրը լուսադեմին հասանք Սալոնիկի նավահանգիստ, նրանք բնականաբար անմիջա-

պես իջած կլիներն: Այնուամենայնիվ Սարգսյանն ու ես նավից իջնելու համար նախընտրեցինք սպասել, մինչև լույսը բացվեր:

Երբ արդեն ցամաքին էինք, տեղում վարձեցինք մի կառք, որը մեզ հասցրեց կենտրոն: Քաղաքն իմ պատկերացումից շատ ավելի մեծ էր: Զգացվում էր Արևելքի շունչը, որն ինձ հիշեցնում էր Կոստանդնուպոլիսը, թեև այս քաղաքում՝ ավելի ուժգին, քանի որ բյուզանդական եկեղեցիները մի քանիսն էին, մինչդեռ մզկիթները՝ բազմաթիվ:

– Այստեղ վճռվելու է Թուրքիայի ճակատագիրը,– Սարգսյանը շարունակ խոսում էր կարևորելով իր մտքերը, որպեսզի չարժեր իմ հարցասիրությունը:

Մնացի լուռ, բայց նա դրանից չվհատվեց:

– Քեզ ասում եմ, որ այս քաղաքը անչեջ գործող հեղափոխական կենտրոն է: Նայիր, այստեղ շատ հետաքրքիր մարդիկ են ապրում: Գիտե՞ս, որ հիսուն հազարից ավելի հրեաներ են այստեղ ապրում՝ դեռ չհաշված դյոնմեներին՝ կեղծ իսլամացածներին: Հրեաներից շատերը XVII դարում հետևեցին կեղծ ամենափրկչին, որին կոչում էին Շապտայ Ցվի: Թուրքերի ահից, որպեսզի կենդանի մնային, ձևացրին, թե դավանափոխ են եղել ու դարձել մոլի մուսուլմաններ, թեև գաղտնի շարունակում էին իրենց հրեական ծեսերը... Նրանք իրականում ոչ էլ հրեաներ էին, քանի որ իսկական հրեաները նրանց չէին ընդունում: Դյոնմեներին շատերը կոչում են սարիկլիս (չալմայավորներ): Այստեղ՝ Սալոնիկում ապրում են շատ հույներ, իտալացիներ, վենետիկցիներ, ճապոնացիներ, բուլղարներ և հայեր... Մեր համայնքը շատ կարևոր է: Ինչպես տեսնում ես, այս քաղաքը ժամացույցի սարքով ռումբ է, որը կարող է ցանկացած օր պայթել, քանի որ ռազմավարական տեսակետից կարևոր վայր է Թուրքերի համար, որոնց մեծ զորանոցները և բանակի մի մասը տեղակայված են այստեղ: Այս ամենը քեզ բացատրում եմ, որովհետև մենք հանդիպելու ենք Իթթիհադի ղեկավարներին, իսկ նրա ամենաակտիվ անդամներից մի քանիսը դյոնմեներ են, այսինքն՝ պարադոքս է, սակայն բոլոր Թուրքերից ամենաազգայնամոլ Թուրքերը... Ես իմ տեսակետն ունեմ այդ առթիվ և ուզում եմ, որ իմանաս:

Լսիր: Այս սիոնիստական կոչված շարժումը, որի մասին լսած կլինես, որի առաջնորդը Թեոդոր Հերցլն է, երբ Օսմանյան կայսրությունը երանելի պատառ դառնա, կցանկանա ձեռք բերել իր բաժինը, քանի որ ոչ ոք չի կասկածում, որ շուտով այն կործանվելու է: Հրեաները սատար են կանգնում «երիտթուրքերին», մանավանդ Իթթիհադին՝ համոզված, որ երբ սուլթանը գահընկեց արվի, ինչը շուտով տեղի կունենա, համաձայնության կգան, որ Պաղեստինը մնա իրենց և այնտեղ կհավաքվի ողջ աշխարհով մեկ ցիրուցան հրեական սփյուռքը: Եթե ինձ ասես, որ դա ընդամենը երազ է, քեզ կասեմ, որ ոչ ոք ընդունակ չէ երազները դարձնել իրականություն այնպես, ինչպես հրեաները: Ո՞ւմ ենք պաշտում հայերս, ֆրանսիացիները կամ ռուսները: Մի հրեա Աստծո, կույս հրեուհու զավակին, որոնց առաքյալները բոլորն էլ հրեաներ էին: Ինչ ես ուզում, որ քեզ ասեմ: Եթե նրանք մտցրել են իրենց գլուխը վերստեղծել իրենց Իսրայելը, ուրեմն նրանց կրկին կտեսնեն այնտեղ:

Դե ինչ, այդ տարօրինակ դաշնությունից շատ ուժեր են սատարում «երիտասարդ Թուրքերին»: Եվրոպայի հասարակական կարծիքը սկսում է նրանց նայել որպես սուլթանից ավելի գերադասելի: Եթե ոչ, նրանցից ո՞րը: Մի նոր սուլթա՞ն... Գուցե, Թուրքերի բնավորության պատճառով հնարավոր լինի, մի քանի տարվա մեղմ անցումային շրջան. սակայն իրենց տիրոջ արյունալի բռնակալությանը սովոր՝ ամենալավ պաշտոնները վայելելու կգան զինվորականները և հետևաբար՝ Միությունն և առաջադիմությունը, այսինքն «Իթթիհադը», որ չի դադարում խոսել օսմանյան ազգի մասին և այն, ինչ ուզում է ասել, հետևյալն է, որ բոլոր փոքրամասնությունները բռնի կերպով կթուրքացվեն: Կարդացե՞լ ես Իթթիհադ կուսակցության ամսագիրը: Կան շատ պարզաբանող հոդվածներ, որոնք մեզ մտածելու տեղիք պետք է որ տան: Մեծ Թուրքիայի վերաբերյալ... Քրիստոնյա և ոչ քրիստոնյա փոքրամասնություններին հարգելու խոսքերին ես չեմ հավատում, թեև դժբախտաբար մերոնցից շատերը, այո՛, ահավասիկ Գրիգոր Բրոչյանը, իրոք համոզված են նրանց ասածների բարի մտադրությանը:

Սարգսյանը և ես շատ հարցերում համակարծիք էինք, նա շատ ձեռներեց մարդ էր, այնքան, որ մի քանի տարում մեծ հարստության էր հասել, բայց չէր մոռանում իր ընտանիքի հետ կատարվածը, որն իսպառ սպանվել էր 1895 թ. կոտորածներին: Դա նրան ստիպել էր հանգելու այն եզրակացության,– ինձ խոստովանեց,– որ հայերը Թուրքիայում ապագա չունեն:

Հասանք Իմպերիալ հյուրանոցը՝ Բարոկկո ոճի մի կառույց, չափից ավելի պերճաշուք, որ հավակնում էր ոտք պարզել Փարիզի հյուրանոցների հետ: Անկախ կահավորանքից՝ միջավայրն արևելյան էր: Գործարար հայեր, հույներ, Թուրքեր, հրեաներ հավաքվում էին սյունազարդ բաց նախասրահում, խոսում իրենց հուզող հարցերից: Մի

քանիսը, ծխամորճով հաչիչ էին ծխում, մյուսներն էլ ցուցադրում էին իրենց հաստ փորին ոսկյա չքեղ ժամացույցներ, մինչ քննարկում էին ինչ-որ բան՝ ժամանակ առ ժամանակ բարձրաձայն քրքջալով և երբեմն թերահավատությամբ և հետաքրքրությամբ մեզ էին նայում, տեսնելով, որ մի քանի օտար մարդիկ իրենց գննում են:

Հյուրանոցի սեփականատերը՝ Սարգսյանի հույն բարեկամներից մեկը, մեզ տեղավորեց իր կարծիքով հյուրանոցի լավագույն սենյակներում:

– Դուք գտնվում եք Միջերկրականի ամենահեղինակավոր և ամենահայտնի հյուրանոցներից մեկում: Մեզ համար մեծ պատիվ է ձեզ նման հյուրեր ունենալը:

Ինձ, ի նշան հարգանքի, տրամադրել էին կենտրոնական փողոցին նայող մեծ պատշգամբով միակ երկուսենյականոց համարը, հարմարավետ, բայց չափազանց պճնազարդ և թուրքական ոճի զուգարանով. ինչ խոսք ջանացել էին ինձ համար ստեղծել նրբաճաշակ և ժամանակակից մթնոլորտ:

Հուլիսի կեսին էր, իսկ շոգն անտանելի: Երբ Սարգսյանն ինձ տանում էր տեսնելու հին պարիսպները, նախանձեցի այն տղաներին, որոնք մերկ լողանում էին լճակներում, որոնցով ոռոգվում էին քաղաքի այգիները: Ակնհայտ էր, որ այդ մարդիկ երջանիկ էին, ապրելով հարուստ քաղաքում, որը վերածվել էր արդյունաբերական և առևտրական կենտրոնի: Երևում էին ծխախոտի, գործվածքեղենի մեծ ֆաբրիկաներ, առևտրական գրասենյակներ, պահեստներ: Շարունակ գնում գալիս էին էշերի և մինչև վերջ բեռնված սայլերի երկար շարքեր, որոնցով լիքն էին փողոցները:

Նաև տեսանք բանակի 3-րդ կորպուսի շատ զինվորների, որոնք իրենց ազատ ժամանակն էին անցկացնում քաղաքում:

– Այս սպաներից շատերը Իթթիհադի անդամներ են, չնայած դա նրանց խստիվ արգելված է: Այս երեկո ներկա կլինենք հնչակների ժողովին, կհանդիպենք մեր հին մի քանի բարեկամների և որոշ մարդկանց Իթթիհադից: Ես չեմ հավատում այդ միությանը, սակայն չենք կարող նրանց լսելուց հրաժարվել: Ի վերջո ոչինչ չունենք կորցնելու, և ժամանակն ամեն բան կդնի իր տեղը:

Այնտեղ մենք հանդիպեցինք բազմաթիվ հայ ղեկավարների հետ: Նրանցից մի քանիսը եղել էին Փարիզում, ինչպես Սարահ Կիոլյանը և Համբարձում Բոյաջյանը: Հետո իմացանք, որ ներկա է գտնվելու նաև Գրիգոր Բրոչյանը և իր խմբից մի քանիսը:

Մենք էլ մեր հերթին պատիվ ունեինք ներկայացնելու Փարիզի, Լոնդոնի և Ժնևի հայ համայնքները, որոնք լիազորել էին Սարգսյանին, որը, թվում էր, ջանք չէր խնայել ինձ դարձնելու ևս մի հայ:

Ժողովը տեղի ունեցավ «Երիտթուրքերի» ղեկավարներից մեկի՝ Միդհատ Շյուքրուի Սալոնիկից դուրս գտնվող, դիմացը պարտեզով, հունական ոճով կառուցված ընդարձակ առանձնատանը:

Խաղողի թառամների ներքո սեղաններ էին գցել հայկական և թուրքական ուտեստներով, որպես երկու մշակույթների մերձեցման խորհրդանիշ, որն ինչ խոսք արժանի էր շնորհակալանքի:

Մտնելիս ողջունեցինք Գրիգոր Բրոչյանին, որին ուղեկցում էին իր մշտական ընկերները՝ Գասպար Թաչչյանը և Կրիկոր Նալպանտյանը, որոնց ծանոթ էի դեռ Նյու Յորքից: Բոլորս հասել էինք միաժամանակ: Պետք է ասեմ, որ նրանք մի տեսակ թերահավատորեն էին նայում մեզ, ինչն ինձ անհանգստացրեց, քանի որ այնուամենայնիվ մենք միևնույն խմբակցության անդամներ էինք, թեև Փարիզում ստեղծված իրավիճակից հետո շատ բաներ էին փոխվել:

Այնտեղ էին գտնվում Իթթիհադի ամենակարևոր ղեկավարները և նա, ով տանտիրոջ դերն էր ստանձնել, Միդհատ Շյուքրին, որը մեզ հարգալից ողջունեց:

– Իմ թանկագին բարեկամներ, այս համեստ տունը համարեք ձերը: Մեզ համար մեծ ուրախություն է ձեզ հետ միասին անցկացնել այս հաճելի օրը: Իսկ հիմա թույլ տվեք ինձ ձեզ ներկայացնել Իսմայիլ Ջանփոլադին, որը նույնպես բնակվում է Սալոնիկում: Ահա Ահմեդ Ռիզան՝ մեր ղեկավարներից մեկը..., ով ի դեպ քաջ ծանոթ է Փարիզին: Եվ կուսակցության ոգեշնչողներից մեկը՝ Բեհաէդդին Շաքիր, նաև՝ դոկտոր Նազիմը...

Եթե եվրոպական մամուլը այն մտքին է, որ մենք Եվրոպայի հիվանդ մարդն ենք..., նրան բուժելու համար բժիշկների կարիք կունենանք: Սամի փաշա, Ահմեդ բեյ, Աղան, Մեհիր Սայիդ, Ջելալ Նուրի և սպասում ենք պարոն Թալեաթ բեյին՝ շատ կարևոր մի անձնավորության, որը հրավիրված է որպես դիտորդ: Իսկ հիմա մեծարգո բարեկամներ, ձեզ խնդրում եմ նստել սեղանի շուրջ և կիսել մեզ հետ մեր ճաշկերույթը:

Երբ նստեցինք, բոլորս իրար ծածուկ նայում էինք հաղալով, կոկորդ մաքրելով, պահպանելով լարվածություն, մինչ ծառաները մատուցում էին ըմպելիքները: Հաճելի տեղ էր, քանի որ թառամները ծածկում էին արևը, իսկ մի քանի իչամեղուներ, գուցե բուրումնալի

գինուց, որը մատուցում էին նրանց, ովքեր խմում էին, կամ սառը քաղցր թեյից, որն ըմպում էին ուղղադավանները, արբեցած իրենց բզզոցով՝ այս ու այն կողմ էին թռչում:

Հանկարծ դռների մեջ հայտնվեց մի բարձրահասակ տղամարդ, մարմնեղ, թուրքերին բնորոշ բեղերով: Հենց այն անձնավորությունն էր, որին սպասում էինք, ոմն Թալեաթ բեյ, որի մասին իմ սեղանակից ընկեր Կիուլյանն ասաց կամացուկ, որ նա Սալոնիկի փոստային ծառայող էր, բայց ինչ-որ առիթով հաջողացրել էր կրակոտ ելույթ ունենալ Իթթիհադի միտինգներում, մինչև որ նրան ընդգրկել էին կենտրոնական կոմիտեի կազմում:

Ձեռքս սեղմեց գլուխը խոնարհելով, առանց ժպտալու, պահպանելով հեռավորություն: Մի պահ նրա աչքերը զննեցին այնպես, կարծես ցանկանում էին իմ միջով անցնել: Բոլորին ողջունելուց հետո՝ նստեց հակադիր անկյունում դոկտոր Նազըմի և դոկտոր Բեհաէդդին Շաքիրի միջև: Դա առաջին անգամն էր, որ նրան տեսա, առանց իմանալու, թե ինչ ձևով է այդ մարդը ազդելու հայերի ճակատագրի վրա:

Ճաչկերույթին արտասանեցին բարեկամության մասին ճառեր, խոստումներ, խոսեցին երկրի ցավալի իրավիճակից, հայերին կոտորելու հիշողությունների սարսափից, որոնցում ամբողջ մեղքը դրվեց սուլթան Աբդուլ Համիդի վրա:

– Հրեշավոր չարագործ,– հաստատեց դոկտոր Նազըմը: – Մի մարդ, որին հնարավորին չափ շուտ պետք է գահընկեց անել:

Նաև խոսեցին Հայաստանի համար ինքնավարության մասին, որի համար Ահմեդ Ռիզան ավելացրեց, որ պետք է կազմվի հանձնաժողով, որը նշի սահմանները:

– Քանի որ,– հարցրեց չողոքորթ ժպիտով,– որտե՞ղ է վերջանում և որտեղի՞ց է սկիզբ առնում Հայաստանը...

Այնուհետև հունական թեթև գինին,– որն առատ հոսում էր և ոչ ոք խմելուց չէր հրաժարվում՝ կենաց կենացի հետևից,– մեղմացրեց անգամ ամենաանհողդողդ հոգիներին և նույնիսկ ինքը՝ Սարգսյանը կատակում էր Ջեմալ Նուրիի և Սամի փաչայի հետ...

Մի պահ փակեցի աչքերս պարզելու ինքս ինձ համար, թե արդյոք դա երազ չէ՞ր, երկար մղձավանջի վերջը չէ՞ր և մի՞թե թուրքերը մեկընդմիշտ հասկացել էին, որ միակ ճանապարհը իսկական հեղափոխությունների ուղին էր, որոնցում մարդկանց հոգու մեծությունը ընդունակ էր հողին հավասարեցնել դարավոր կեղեքումն ու նվաստացումը: Արդյոք հասկացա՞ծ կլինեն ֆրանսիական հեղափոխության իսկական իմաստը, որը հասնում էր նրանց մեկ դարից ավելի ուշացումով: Լավ է ուշ, քան՝ երբեք, մտածեցի, մինչ դոկտոր Բեհաէդդին Շաքիրը, ամբողջովին վերացած, մի անեկդոտ էր պատմում հույնի, թուրքի ու հրեայի մասին, որից բոլորը քահ-քահ ծիծաղում էին: Մովրաչուքի պաչտպանիչ ստվերի ներքո, տեղ-տեղ խաղողի վազի ճյուղերի արանքից թափանցում էին արևի շողերը, վայրի մեղուներն էլ իրենց հերթին գնալով ավելի համարձակ էին խնջույքի նստում ափսեների մնացորդների վրա:

Դա կարող էր լինել մի նոր Արկադիայի սկիզբ, որում մարդկանց բոլոր մեղքերը՝ չարությունը, կասկածը, մահը, երկյուղը, մատնությունը կանհետանային երկրի երեսից:

Հայացքս դարձրի սպասավորներից մեկի կողմը, որ մի քանի բաժակ ջուր բերեր ու հանդիպեցի սեղանակիցներից միակ մարդու հայացքին, որն օտար էր այդ ամենին, անհողդողդ, մոայլադեմ՝ չուզենալով փորձել գինին: Թալեաթ բեյն ինձ զննում էր պաղ աչքերով, սևեռուն հայացքով, որում անթաքույց արհամարհանք տեսա:

Հանկարծ ինչ-որ բան ներքուստ ինձ հարվածեց ուժգին, ասես ջորու սմբակի աքացին էր կրծքիս: Գինու գոլորշիները մի վայրկյանում ցնդեցին, և չուրջս ամեն ինչ քարացավ: Դադարեցի լսել քրքիջները, ինչ-որ խոսքեր, սեղանին ձեռքի ափով թկթկացնելը, գավաթների զրնգոցը: Ամեն ինչ քարացավ բացի Թալեաթի մթագնած հայացքից, որն ինձ իր ակնաբիբերով ասում էր, որ սա ամենևին էլ վերջը չէր, այլ անագորույն մղձավանջի սկիզբը:

Փորձեցի վեր կենալ: Զգացի, որ չունչս կտրվում է, որ օդը չի հասնում թոքերիս, և մինչ ուշքս գնում էր, հիշեցի որ մայրս էլ էր այսպիսի նոպայից մահացել:

Երբ ավելի ուշ բացեցի աչքերս, դոկտոր Նազըմը հարցական վրաս էր հառել իր բաց մոխրագույն աչքերը:

– Ինչպես մեզ վախեցրիք, մայե դը Լատուր: Ընդամենը մարսողության մի փոքր խանգարում է եղել: Սրտի հետ կապված ոչինչ չունեք... Ես լսել եմ ձեր սիրտը, լավ է աշխատում... Թերևս չատ արագ զարկերով... բայց ոչինչ: Հիմա ես ձեզ խորհուրդ եմ տալիս, որ այս գով ու մութ սենյակում հանգստանաք և կտեսնեք, որ անմիջապես կլավանաք: Ահ, խեղճ Սարգսյանը, ձեր բարեկամը, ինչ խոսք, տեղը չի գտնում, այնպես որ թույլ կտամ, որ մի քանի բոպեով մտնի, հանգիստ լինի, ինչ խոսք: Ճիշտ են ասում, որ ամոան կեսին կերակուրները չատ հագեցված չպետք է լինեն:

Դոկտոր Նազրմը սենյակից դուրս եկավ, և մի քանի րոպե անց լսեցի, որ ինչ-որ բան է ասում Սարգսյանին: Մտավ իմ բարեկամը այլայլված դեմքով:

– Ահ, Անրի, ինձ լավ վախեցրիր: Բախտներս բերեց, որ ճաշկերույթին երկու բժիշկ կար: Մի անհանգստացիր, դոկտոր Նազրմը ինձ ասել է, որ մի քիչ քնես և երբ որ վեր կենաս, ապաքինված կլինես: Իրոք որ Աստված մեզ հետ է, պատկերացրու, չէ՞ որ կարող էր զեղում լինել: Բայց ոչինչ, ոչինչ: Լավ, քեզ թողնում եմ, որովհետև խոստացել եմ մի րոպեով մտնել:

Մնացի մենակ, Միդհատ Շյուքրուի տոհմական առանձնատան հյուրերի կիսամութ սենյակում՝ երեք ժամ մեկնված մահճակալին: Խորհրդածելու ժամանակ ունեցա, մինչ հեռվից լսում էի նրանց խոսակցությունը: Մի կանաչ-կապույտ մեծ ճանճ մտավ պատուհանից, որը բաց էր, բայց հետո անհամբեր բզզաց մինչև գտավ ելքը:

Դոկտոր Նազրմը ախտորոշել էր մարսողության խանգարում: Բայց դա չէր առաջացրել ո՛չ ծանր կերակուրը, ո՛չ հունական գինին և ո՛չ էլ չոգը: Միակ պատճառը իմ այն բացարձակ համոզմունքն էր, որ այդ ամենը խեղկատակություն էր և Թուրքերից միակ մարդը, որն իրեն նեղություն չէր տալիս թաքցնել կամ գուցե և չէր կարող այդ անել, Թալեաթ բեյն էր՝ Սալոնիկի փոստային ծառայության չարագուշակ և անհայտ պաշտոնյան:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
(1907 – 1911)

ՄԱՐՏ 1907

32. ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ԲԱԲԻԿՅԱՆԸ

Մի քանի ամիս ես ստիպված հանգստացա: Ժնևի նշանավոր սրբտաբան բժիշկ Պինոնն ինձ բացատրեց, որ Սալոնիկում իմ ուշաթափությունը կապված է եղել ոչ թե մարսողության խանգարման, այլ սրտիս վիճակի հետ: Ախտորոշումը շատ անհանգստացրեց Մարիցային: Նա ինձ թախանձագին խնդրեց, որ մի քանի ամիս հանգրստանամ:

Դա այնքան էլ սրտովս չէր, քանի որ շատ անելիքներ ունեի ինչպես անձնական՝ վերահսկել գործարանները, այնպես էլ արտգործնախարարի հանձնարարությունը՝ չհաշված այն, որ հայերն էին պարտադրում:

Նույնիսկ այս դեպքում չունեցա այլ ուղի: Պինոնն ինձ խորհուրդ տվեց, որ որոշ ժամանակ մնամ Շվեյցարիայում, և թեև դժկամությամբ՝ որոշեցի հետևել իր խորհրդին և կնոջս աղերսանքներին: Մենք տեղավորվեցինք Լեման լճի մոտ մի բնակարանում, իսկ մեր որդին՝ Էդուարը, ընդունվեց մերձակայքի մի գիշերօթիկ դպրոց: Ցանկանում էինք, որ սովորեր տարբեր լեզուներ, ներառյալ հայերենը և այս վերջինի համար վարձեցինք Պողոս Կիրակոսյանին՝ մի իսկական մտավորականի: Նա ստիպված թողել էր Թուրքիան՝ սուլթանի ոստիկանության կողմից հետապնդված լինելու պատճառով: Նրան մեղադրում էին ՀՀԴ կուսակցության անդամ լինելու մեջ: Ամեն դեպքում այդ մարդը գոյությունը պահպանելու համար կարիք ուներ վաստակելու և ընդունեց մեր որդու՝ հայ մշակույթի ուսուցչի պաշտոնը:

Այդ ժամանակ էլ որոշեցի գրի առնել հիշողություններս: Ինայած տարիքիս, ես քառասունյոթ տարեկան էի, ուզում էի ի մի բերել այն ամենը, ինչ ըմբռնել էի Օսմանյան կայսրության և մանավանդ հայ մշակույթի վերաբերյալ, որն ինձ ամենևին խորթ չէր, քանի որ որդիս իր արյան կեսով պատկանում էր այդ յուրահատուկ մշակույթին: Մայրական կողմից նրա պապն ու տատը, շատ քեռիներ ու մորա-

քույրներ իրենց զավակներով, մտերիմներով, բոլորն էլ ապրում էին Թուրքիայում: Թեև չատ էի ցանկանում, որ նա հաղորդակից լիներ այդ հարուստ մշակութային ժառանգությանը, միևնույն է, չէի կարող նրան թույլ տալ, որ ուղևորվեր այնտեղ: Քաջատեղյակ էի, թե ինչի էր ընդունակ սուլթանի գաղտնի ոստիկանությունը, գիտեի նրա իրազեկիչներին մինչև ուղն ու ծուծը և երբ պատկերացնում էի, թե նրան ինչ կարող էր պատահել, ինձ ահավոր սարսափ էր պատում:

Ի դեպ խոստովանեմ, որ մի թիկնապահ էի վարձել, որը գաղտնի, էդուարից թաքուն, հսկում էր նրա զբոսանքները և վարժարան ներսուդուրս անելը:

Մարիցայի մաշկին դեռ հետքեր կային, որոնք մնացել էին Կոստանդնուպոլսի գլխավոր ոստիկանությունում նրա գտնվելուց հետո: Նա ջանում էր չհիշել կատարվածը, սակայն պարզվեց, որ անհնարին է մոռանալ իր գլխին հասցրած սարսափելի հարվածները, որոնք ուժեղ գլխացավեր էին պատճառում ուղեղի կիսագնդերում: Ի վերջո նա ընկավ խոր դեպրեսիայի մեջ, ինչն էլ ստիպեց դիմել Ժնևի մի նշանավոր հոգեբույժի, որը չէր հավատացել, երբ Մարիցան նրան պատմել էր իր հետ կատարվածը: Նրա կարծիքով հարկավոր էր, որ Մարիցան կրկին վերապրեր տեղի ունեցածը և այդ նպատակով նրան հիպնոսի ենթարկեց: Սեանսից հետո բացատրեց, որ իր համար անհնարին է հիշողությունից ջնջել նման ցավագին փորձությունը: Մարիցային ասաց. «Բանն այն է, որ ձեր հոգու վրա դաջվածք են թողել»: Մարիցան անխոս համաձայնվեց, մինչ հետևում էր իմ արձագանքին, քանի որ դիմել էր բժշկի՝ իմ համառ պնդումներից հետո: Նա քաջ գիտակցում էր, որ ոչինչ ու ոչ ոք ի վիճակի չէ ջնջել այդ սարսափելի դաջվածքը և թեև չէր կարողանում սովորել դրան, կրում էր հնարավորինս անտրտունջ:

Բոլորիս էլ, անշուշտ, անհանգստացնում էր հայերի դրությունը Թուրքիայում: Այդ հարցում իմ դիրքորոշումը գիտակցված էր և ինքնակամ՝ սկսած այն հեռավոր օրվանից, երբ ես կայացրի իմ վճիռը: Ակնհայտ էր, որ ինձ համար հետդարձի ճանապարհ չկա:

Ժնևում ծանոթացա Գասպար Բաբիկյանի՝ մի հրաշալի դաշնակահարի հետ, որը տարիքն առած՝ թողել էր ակտիվ գործունեությունը, բայց ճկուն միտք ուներ և անհավատալի հիշողություն: Մեզ նրան ներկայացրել էր սրտաբանը: Հրավիրեցի նրան տուն թեյի: Մի քանի օր անց եկավ՝ երեկոյան ժամը 4-ին: Մարիցան չատ հուզվեց այդ ծերունու այցից, որովհետև, ինձ հետո ասաց, հիշեցրել էր իր հորը, ում վաղուց չէր տեսել:

Բաբիկյանը կիրթ մարդ էր, հեչտ համոզվողներից չէր, չէր տարվում Հայաստանի ապագայի հանդեպ պատրանքներով և թեև հոռետես չէր ուզում թվալ, մեզ ասաց, որ իր ժողովրդի համար վատ օրեր են սպասվում:

– Դուք ինձ լսեք: Ես եղել եմ այդ հրեշի որջում, ինչ էլ որ կատարվի ինձ համար նորություն չի լինի: Ես ծանոթ եմ նրա գործելակերպին, երբ արձագանքում է որևէ իրողության: Ես ծանոթ եմ նրա անսահման չարագործությանը, քրիստոնյաների և հատկապես հայկական ամեն բանի հանդեպ նրա ատելությանը:

Ես Աբդուլ Ազիզի պալատի պաշտոնական դաշնակահարն էի: Ոչ թե նրան դուր էր գալիս եվրոպական երաժշտությունը, այլ երբ որ գալիս էր որևէ կարևոր պատվիրակություն, պետք է դաշնամուրային համերգ տայի՝ կատարելով Եվրոպայի լավագույն երգահանների ստեղծագործությունները: Եթե հյուրերը ավստրիացիներ էին, պետք է ընտրեի ավստրիացու, օրինակ՝ Մոցարտին, եթե գերմանացիներ՝ ... Բեթհովենին, եթե անգլիացիներ՝ ... Հենդելին և այսպես չարունակ:

Պետք է մեծ տպավորություն թողնեինք այցելուների վրա, որոնք պալատից դուրս գային համոզված այն բանում, որ սուլթանին ու իր պալատին հարիր էին քաղաքակիրթ, ժամանակակից ու եվրոպական ըմբռնումները: Զգիտեմ, ծանո՞թ եք այդ պալատին: Զնայած ճարտարապետներ Նիկողայոս և Կարապետ Պալյանների թափած ջանքերին՝ նրանց մատնում է իրենց ոճը... Ուզում եմ ասել, որ հեռանում էին մեծ տպավորությամբ, սակայն հյուրերին ճնշում էր վիթխարի պալատի ծանրանիստ չքեղությունը, որը կառուցվել էր այցելուներին ցնցելու նպատակով: Երբ գալիս էր որևէ պրեմիեր մինիստր կամ եվրոպացի արքայազն, մինչ ես նվագում էի կամ ղեկավարում կամերային նվագախումբը, նշանավոր հյուրի ականջին փսփսում էին հարեմում սուլթանի ունեցած սեքսուալ սխրանքների մասին: Դա, եվրոպական մայրաքաղաք վերադառնալիս, դառնում էր ուղևորության բամբասանքի նյութ:

Ձեզ պատմում եմ այս ներածությունը, որպեսզի հասկանաք միջավայրը: 1865 թ. ես քսանութ տարեկան էի, իսկ հիմա, երբ հետ եմ նայում, տեսնում եմ ժամանակի անդունդ, բայց այնտեղ էի ես՝ նվագելու արարողությունների դահլիճում համարյա երկու հազար մարդու առջև, տոնելու համար Թուրքիայի անդամակցությունը Ժնևի պայմանագրին, որում խոսվում էր մարդու՝ գերիների, վիրավորների, բժիշկների և... իրավունքների՛ մասին: Դա սուլթանի 1856 թ. հռչա-

կազրի Hatti Humaiun-ի գագաթնակետն էր, որում երաշխավորվում էին բոլոր հպատակների իրավունքները: Ի՞նչ եք ուզում, որ ձեզ ասեմ:

Սուլթանի կառավարությունը կամենում էր չպարով հարդարել իր ադմինիստրացիայի դեմքը, ցույց տալ եվրոպական երկրներին, որ Օսմանյան կայսրությունը նրանցից մեկն է: Ճշմարիտն այն էր, որ հայերիս վիճակը մնում էր նույնը. Թուրքերի կողմից կեղեքված գյավուրներ՝ անհավատներ:

Սակայն ես կարող եմ ավելի հետ գնալ: Պատկերացրեք: Ծնվել եմ 1837 թ. և բնականաբար վեց տարեկանում ընդունվեցի նոր հայկական «Սահակյան» վարժարանը: Զնայած տարիքիս՝ հպարտ էի, որ գնում էի այնտեղ սովորելու: Պապս տպարան ուներ, որտեղ էլ սովորեցի կարդալ ու գրել հայերեն և Թուրքերեն: Երբ մտա դպրոց՝ գնում էի այլ երեխաների առջևից: Հետո սովորեցի երաժշտություն և դաշնամուր նվագել: Դա էլ ինձ թույլ տվեց պալատ մտնել: Եվ ձեզ որպես գաղտնիք ասեմ. ես տեղյակ էի այն ամենին, ինչ տեղի էր ունենում այնտեղ՝ ծագումով հայ մի ներքինու միջոցով, որն ինձ գաղտնիքներ էր հասցնում, ինչպես օրինակ, երբ սուլթանը որոշում կայացրեց, որ հարկավոր է կործանել այն ամենը, ինչ վկայում է այնտեղ հայերի անցյալը: Քանի՜-քանի՜ հազարավոր խաչքարեր հողին հավասարեցվեցին: Հարյուրավոր եկեղեցիներ ու մատուռներ, որ կառուցվել էին Թուրքերի գալուց հազար տարի առաջ: Աբդուլ Մեջիդը, հետո Աբդուլ Ազիզը, ավելի ուշ Աբդուլ Համիդը շարունակում էին հետևել օսմանյան ավանդույթին: Ոչնչացնել բոլոր նրանց, ովքեր Թուրք չեն: Անշուշտ, քողարկում էին իրողությունը՝ ձևացնելով, որ իբր սուլթանը որպես բարեհոգի հայր՝ ջանք չի խնայում իր անչնորհակալ զավակների համար:

Իրականությունը եղել և շարունակում է մնալ ահավոր: Անդադար չարաչահումներ, կամայական ձերբակալումներ, առևանգումներ, լլկանքներ, բռնաբարություններ, սպանություններ, թալան, բռնագրավումներ, զանգվածային կոտորածներ: Շատ մեծ ու փոքր գյուղեր, որտեղ հազարավոր հայ ընտանիքներ էին ապրել, հիմա ընդամենը ավերակ են, որտեղ միայն քամին է ոռնում. կարծես այնտեղ ապրած հոգիները չուզենան լքել իրենց ապրած վայրերը... Ես լսել եմ այդ մեռելային երաժշտությունը, հավատացեք ինձ:

Բայց ես ձեզ պատմում էի իմ հատուկ կարգավիճակի մասին արքունիքում: Սուլթանին միմիայն դուր էր գալիս Թուրքական երաժշտությունը, իսկ ես այն պետք է կատարեի նրա համար, անգամ դաշնամուրի վրա: Ճշմարիտն ասած՝ դա ինձ դարձնում էր մի տեսակ արտոնյալ մեկը, իսկ երբ սուլթան Աբդուլ Ազիզին դուր էր գալիս նվագը, դառնում էր չռայլ և մի բուռ դրամ էր գցում, քանի որ այդ մարդն անտեղյակ էր արժանապատվություն հասկացությունից:

Քանի որ ես վայելում էի նրա վստահությունը, դրա շնորհիվ 1865 թ. ինձ թույլ տրվեց որպես հանդիսական ներկա գտնվել իր՝ սուլթանի դեմ մի գաղտնի կազմակերպության հիմնադրմանը: Անձամբ Նազըմ Քեմալ բեյն ինձ հրավիրեց, քանի որ ոչ մուսուլման վկաների կարիք ուներ «Նոր օսմանների» սահմանադիր ժողովին: Այնտեղ էին գտնվում մշակույթի գործիչներ, բանակի սպաներ, մտավորականներ, քաղաքական գործիչներ, ներառյալ արքայորդիները, որոնք բնակվում էին Փարիզում, Բեռլինում կամ Վիեննայում և տարիներ անց դառնալու էին սուլթաններ:

Նազըմ Քեմալ բեյը, որը գրող էր. խոսեց խավարի ու ճնշման դարաշրջանի վերջի և նոր լուսաբացի՝ ազատության, հավասարության, եղբայրության և ի վերջո սահմանադրական կարգի մասին, որում քրիստոնյա հպատակները մնացածների հետ օժտվելու էին հավասար իրավունքներով: Ներկաների համար հուզիչ իրադարձություն էր... բացի ինձանից: Հալիլը՝ ներքինին ինձ զգուշացրել էր. եթե խոսեն խոստումներից՝ չհավատաս: Եթե եղբայրական սիրուց՝ ուզում են ազատվել սուլթանի ճնշումից: Եթե հայրենիքի սիրուց՝ նկատի ունեն իրենցը և հավանաբար ամբողջ սրտով գոռան՝ Թուրքիան Թուրքերի համար: Հալիլ բեյը իմաստուն էր՝ ամլացված սուլթանի վարձու մարդասպանների կողմից և ամեն ինչից տեղյակ:

Ստիպված տասնմեկ տարի սպասեցինք սուլթանին գահընկեց անելու համար: 1876 թ. հայտնվեց այն մարդը, որն առաջ էր բերելու այդ փոփոխությունը, բայց նա չէր, ում երազում էին, այլ Միդհատ փաշան՝ ժամանակի փառամոլ ու խարդախ գործիչներից մեկը: Այդ մարդը գիտեր, որ Եվրոպային կուրացնելու համար պետք է օգտագործեր համապատասխան խոսք և ֆինանսավորեց Նազըմ Քեմալ բեյին իրեն ծառայեցնելու համար:

Պետական հեղաշրջումից մինչև այսօր, այսինքն՝ վերջին երեսուն տարում, սուլթանն ունեցել է մի ներքին թշնամի՝ հայերը, ինչն ամենևին չի նշանակում, թե սուլթանի թշնամիները մեր բարեկամներն են, այլ շարունակելով Միդհատ փաշայի գործելակերպը՝ փորձում էին օգտագործել մեզ որպես ալիբի... Եվ հենց որ հասնեն իրենց ուզածին, կփորձեն ազատվել մեզանից: Տեսեք, երիտԹուրքերի իսկական փիլիսոփայությունը Թուրքական էլ մնում է՝ սակայն ոչ այն-

քան երիտասարդ. դա պանթուրքիզմն է: Այսինքն՝ թուրք ազգն է, որ պետք է կառավարի Թուրքիան: Մնացածներս ավելորդ ենք, նրանց խանգարում ենք իրենց նպատակներին հասնելու համար: Շատ ուրախ եմ ձեզ հետ զրուցելու համար, քանի որ ձեր կինը իմ ժողովրդից է և հետևաբար գիտեմ, թե ինչի մասին եմ խոսում: Ինչ վերաբերում է ձեզ, մսյե դը Լատուր, ինձ պատմել են, որ դուք շատ կարևոր մարդ եք հայերի համար: Ինձ համար մեծ պատիվ է գտնվել այստեղ և սեղմել ձեր ձեռքը:

Գասպար Բաբիկյանը վեր կացավ և հուզված գրկեց ինձ: Մարիցան նայում էր մեզ առանց արցունքները զսպելու:

– Լսեք, Անրի, հայերս շատ հատուկ ազգ ենք: Պատմությունը մեզ հետ վատ է վարվել, շարունակում ենք մնալ զավթիչ ժողովրդի լծի տակ, գիտակցում ենք, որ մեր տառապանքները չեն վերջացել: Այդուհանդերձ, նույն այդ հանգամանքները, որ մեզ թույլ չեն տվել հանդես գալ աշխարհի առջև, ունեցել են ձեզ նման մարդկանց ճանաչելու պատեհությունը: Հիմա մենք այստեղ ենք՝ միջազգային քաղաքում, որում կգա մի օր, երբ մեր թոռները կամ մեր թոռների թոռները կտեսնեն շատ ավելի լավ մի աշխարհ: Գուցե այդ ժամանակ, այս թուրքերի ժառանգորդներն անկեղծորեն ընդունեն, որ իրենց նախնիները սխալվել են: Վստահ եմ, որ կգա այդ պահը, որովհետև ի տարբերություն Հալիլ բեյի՝ ներքինու, որն ապրում էր դառնացած՝ իր ամլացված լինելու ցավով, կարծում եմ, որ այդ օրը կխոսեն ոչ թե ազգերը, այլ մարդիկ:

Ճիշտ է, որ սրանք ընդամենը մի խեղճ ծերունու երկարաբանություններն են, ով կուշտ է իրեն շրջապատող աշխարհից, ում միակ հույսն այն է, որ ապագայում աշխարհն ավելի լավը դառնա:

Բաբիկյանը գնաց, և մենք նայում էինք, թե նա ինչպես էր քայլելով հեռանում լճի ափով: Արևը լուսավորում և կարճացնում էր նրա մարմինը: Մարիցան ուժգին սեղմեց ձեռքս:

– Գիտե՞ս՝ ինչ եմ մտածում. այդ օրը, որի մասին նա ասում է, կգա, բայց նախքան այդ՝ հայերս պետք է պատրաստվենք երկար տառապելու:

Մի պահ մենակ մնացի բաց պատշգամբում՝ նայելով, թե ինչպես է արևը թաքնվում սարերում: Որքան իմ կինը, նույնքան էլ Գասպար Բաբիկյանը համոզված էին, որ հայ ժողովրդի գողգոթան դեռ չի ավարտվել: Հառաջեցի, քանի որ հոգուս խորքում ես էլ նույն կարծիքին էի:

ՀՈՒՆԻՍ 1907

33. ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ

Ամառվա սկզբներին չատ լավ էի, գրեթե ապաքինված, սակայն որոշեցի դեռ որոշ ժամանակ մնալ Ժնևի իմ առանձնատանը: Մարիցան երջանիկ էր այնտեղ և ինձ խոստովանեց, որ իր կյանքի լավագույն ժամանակաշրջանը վերջին ամիսներն են եղել, իսկ ինձ թույլ տվեց խորհրդածել և հաշվի առնել, թե ինչ արագությամբ է ընթանում կյանքը: Ավելին, փողի կարիք չունեի, ոչ էլ որևէ մտադրություն պայքարելու հանուն նրա, քանի որ ունեի չատ ավելին: Իմ կառավարիչները չատ ավելի էին իրենց գործն անում, քան ես պահանջում էի և նախընտրեցի երկարացնել այդ երջանիկ վիճակը, որում տնօրինում էի ժամանակս՝ առանց որևէ բանից կախված լինելու: Վեր էի կենում առավոտյան մոտավորապես ժամը իններին, միասին նախաճաշում էինք, երեքից չորս ժամ զբաղվում էի գրելով, ճաշում էինք տանը կամ մոտակա որևէ ռեստորանում, հետո երկար զբոսնում էինք զրուցելով, հետո՝ վերադառնում տուն: Մի քիչ կարդում էինք, թեթև ընթրում, երբեմն երեկոյան մեզ այցելում էին և նորից նույնը: Բացի այդ, կյանքի այդ ռիթմը օգնում էր հիշողություններիս առաջին մասը գրելու համար, մի բան, որ Փարիզում անհնարին կլիներ:

Սակայն Հայոց աշխարհի մաս կազմելը ուներ իր առավելություններն ու թերությունները և այն փաստը, որ միացել էի նրանց Մարիցայի հետ ամուսնանալով՝ ինձ դրել էր առաջին գիծ: Գալիս էին հայեր բոլոր կողմերից՝ իմանալով, որ այնտեղ եմ. գալիս էին ինձ այցելության: Բանն այն է, որ անմիջապես դառնում էիր իրենց ընտանիքի անդամը, կամ էլ նա էր դառնում քոնը: Ուրիշ ելք չկար այդ բարեկեցիկ, սիրալիր, անհանգիստ, զգայուն, կլանող, խանդոտ, կիրթ, հոգնեցուցիչ կենսակերպից: Այսպիսին էին հայերը և այսպես՝ հավերժ բարեկամության վստահությամբ էին ինձ հետ վարվում. Մարիցայի համար իր աշխարհի բնականոն չարունակությունն էր: Ինձ համար... ինքս էի այն փնտրել և հոգուս խորքում, թեև ինչ-որ

պահ էլ չէի դիմանում, ինձ դուր էր գալիս վստահության, սրտագին վերաբերմունքի և համակրանքի զգացողությունը, որ տիրում էր Հայոց աշխարհում:

Այնտեղ՝ Ժնևում հայերն իրենց դրախտում էին զգում: Նրանք կուզենային Հայաստանը վերածել Արևելյան Շվեյցարիայի: Պատմական հանգամանքները նրանց այդ հնարավորությունից զրկել էին, սակայն Շվեյցարիայի բարձր ձյունածածկ սարերը նրանց ընձեռում էին մեծ անվտանգություն: Հետները խոսելիս նկատվում էր նախանձի և դառնության երանգ, քանի որ երջանիկ բախտի խաղաղության և հանգստավետության աստվածները այնքան անբարեհաճ են եղել Հայաստանի հանդեպ:

– Մի օր փոխվելու է մեր բախտը,– Էդուարդ Մալումյանը՝ ՀՀԴ-ի ներկայացուցիչը չթաքցրեց իր հառաչանքը,– եկել եմ ձեզ ասելու, որ մի քանի օր հետո մեզ այցի է գալու Անատոլ Ֆրանսը, այստեղ՝ Ժնևում և ուզում եմ ձեզ ներկայացնել նրան: Հայաստանի մեծ բարեկամն է, երկու ձեզ պես անձինք պետք է որ ճանաչեն միմյանց:

– Ես անչափ ուրախ կլինեմ ողջունելու պարոն Ֆրանսին: Այնպես որ ձեզ սպասում եմ ճաշին մեր տանը, Մարիցային նույնպես մեծ բավականություն կպատճառի:

Մալումյանը մեզ հրաժեշտ տվեց մտերիմ մարդու պես, քանի որ հաճախ էր մեր տանը լինում, որտեղ նրա ներկայությունը հաճելի էր:

Մի քանի օր անց հայտնվեցին Մալումյանը և Անատոլ Ֆրանսը՝ արդեն հանրահայտ ողջ Եվրոպայում, դարձնելով իր գրականությունը սուր զենք, որով մահացու հարված էր հասցնում բոլոր նրանց, ում համարում էր ազատության և արդարության թշնամի:

Անատոլ Ֆրանսը իմ դիմաց զննում էր ինձ իր հեգնաժպիտ աչքերով: Տարիներ առաջ 1900 թ. նա և Ժան Ժորեսը, հայտնի սոցիալիստ առաջնորդը Հայաստանի օգտին ստեղծել էին մի կազմակերպություն՝ «Pro-Armenia»-ն, որն օգնում էր հայերին սպյուռքում, իսկ Ֆրանսը հաճախ էր հոդվածներով հանդես գալիս «Լ'Օրոր»-ում և այլ թերթերում:

Ես ճանաչեցի նրան, քանի որ տեսել էի խմբագրությունում, բայց երբեք նրա հետ առիթ չէր եղել մոտիկից շփվելու: Այդ պահին մինչ մենք միմյանց ձեռք էինք սեղմում, Մալումյանը խանդավառության գագաթնակետին էր՝ գտնվելով երկու այնպիսի անձանց միջև, որոնք օգնում էին հայերին ոչ միևնույն հայեցակետից, սակայն սրտանց և անկողմնակալ:

– Ինչպե՞ս եք, մայե Լատուր: Ինձ շատ են պատմել ձեր և հայերի համար ձեր կատարած աշխատանքի մասին: Ես նույնպես անում եմ այն, ինչ կարող եմ, թեև ավելի քիչ, քան կցանկանայի:

– Շատ ուրախ եմ ձեզ տեսնել, ինձ համար մեծ պատիվ է ձեզ, Անատոլ, մեր տանն ընդունելը: Դուք դժվարին հարցերի մեծ բանախոս եք: Մենք սիրում ենք Հայաստանը և նրա ժողովրդին: Ես չեմ կարող համեմատել իմ կատարած աշխատանքը ձեր կատարածի հետ: Սակայն ասենք, որ ամեն դեպքում, թիավարում ենք նույն նավով:

Այդ պահին Մարիցան եկավ ողջունելու հյուրերին և գրկեց ու համբուրեց Ֆրանսի երկու այտերը:

– Շնորհակալություն, մայե: Անչափ հուզված եմ ձեր ներկայությունից: Շնորհակալություն բոլոր հայերի անունից, երբեք չենք կարող վարձահատույց լինել ձեր բարության և անձնվիրության դիմաց:

– Զարժե, մադամ, այդ ես պետք է շնորհակալ լինեմ հայերին, այսքան մեծարված լինելու և իմ հանդեպ սիրո դրսևորումների համար, որոնց արժանի չեմ, քանի որ իմ կողմից ես դա անում եմ առանց որևէ ջանք գործադրելու, և բացի այդ, քանի որ հայերը վայելում են իմ ողջ համակրանքը, ինձ հաճույք է պատճառում նվաստացնել բռնակալներին կամ գոնե փորձել անել այդ: Տեսեք, ցանկացած բռնակալ անբարո է, որը չարունակ ձգտում է արդարացնել իր այլասերվածությունը: Երբ հանում է իր ոսկեթել ուսակապերը, իր համազգեստները կամ դիմակը, որն ամեն վայրկյան կրում է, քանի որ ցանկացած բռնակալ պետք է դիմակավորվի, փորձելու համար խաբել նրանց, ում վրա բռնանում է: Եվ վերջապես հայելու առաջ ինքն իրեն տեսնում է մերկ՝ մի մեծ ճիճվի կերպարանքով, որին չի կարող խաբել: Խորչում է ինքն իրենից և իր արտաքինից, բայց քանի որ անբարո է, չգիտե, թե ինչու է խորչում... և իմ բարեկամներ, Աբդուլ Համիդը անբարո արարած է, անբարոների և բռնակալների տիպար:

Բայց չուտով կտապալվի, քանի որ բռնակալները մի թերություն ունեն, որն իրենց հայտնի է, անկայուն են. սուր քննադատությունները նրանց տատանում են ճշմարտության կրկնողությունից՝ երերում, ժողովուրդը ի վերջո նրանց տապալում է և այդ ժամանակ ընկնելիս փոչու են վերածվում և նրանցից մնում է միայն մի թշվառ ճիճու, որը փորձում է թաքնվել ճեղքերից մեկում: Բայց, բարեկամներ իմ, հարկավոր է տրորել նրան: Ոչնչացնել: Եթե՝ ոչ, նորից կաճի,

կհամոզի այլ զզվելի ճիճուների, որ իրեն օգնեն իր կեղտոտ գործերին վերադառնալու: Ահ, բռնակալություն: Հիմա ես չատ բան գիտեմ պինգվինների մասին, բայց կարծում եմ, որ պետք է գրեմ ուրիշ կըղզու մասին՝ բռնակալների. սարսափելի, սառցակալած, որտեղ կենում են բռնակալները, քանի որ չար աստվածները նրանց թույլ չեն տալիս մեռնել:

Անատոլ Ֆրանսը մեզ զննում էր իր քննախույզ աչքերով: Էմիլ Զոլայի հետ մեկտեղ Դրեյֆուսի պաշտպանությունը նրան դարձրել էր անհույս դատավարությունների փաստաբան և նվաճել ողջ աշխարհի հիացմունքը: Նրա խորաթափանց միտքը և սուր մեկնաբանությունները դարձել էին ասացվածքներ:

Մալումյանը հպարտ էր այդ նշանավոր գրողի հետ ծանոթ լինելու և չատ ավելի՝ այն բանի համար, որ նա խորամուխ էր եղել Հայկական հարցում սեփական կամքով: Մալումյանը վտանգներով լի իր կյանքում պետք է որ քիչ երջանիկ պահեր ապրած լիներ, թերևս սա դրանցից մեկն էր:

– Այնուամենայնիվ, Անատոլ, մեր հարցում ճիճուն չարունակում է մնալ իր պատսպարանում՝ այլ վայրի գազանների պաշտպանությամբ: Ձեզ ասեմ, որ անգամ նրա թշնամիները, որոնք ուզում են նրան այդ բնից հանել տեղը զբաղեցնելու համար, մեզ համար ավելի լավը չեն լինի, իսկ դրանց գալը երևում է, անհանգստություն է առաջացնում իմ ժողովրդի ներսում: Իսկ ինչո՞ւ է բռնությունն այդքան կայուն: Կհասնե՞ն երբևէ կեղեքված ժողովուրդները ազատության և խաղաղության: Ա՛հ, խեղճ Հայաստան...

– Հանգստացեք, Մալումյան,– Անատոլ Ֆրանսը խոսում էր առանց իրեն հատուկ հեգնանքի,– բանն այն է, որ մարդու կյանքը չատ կարճ է, և երբեմն ընդունակ չենք ըմբռնել չատ բաների էությունը: Հնարավոր է, որ բռնակալները ընկերակցեն մարդուն մինչև դարերի վերջը: Ի վերջո նրանք մեր մեջ եղած դևերն են, սակայն ամեն բռնակալի դժնի իշխանության օրերն էլ հաշված են: Հայաստանի համար ներկայիս օրերն ամենամթին են, գուցե և դառնան անտանելի, գուցե և հայերը կարծեն, թե անգամ հույսն է նրանց համար վերջացել: Բայց այս բռնակալին չի հաջողվի հասնել իր նպատակին և ոչ էլ նրանց, ովքեր կհաջորդեն սրան: Սակայն ինձ թույլ տվեք մի մեկնաբանություն. բռնակալներն ի ծնե մի թուլություն ունեն, որի պատճառով նրանք ի վիճակի չեն ըմբռնել աշխարհը: Հոգու խորքում նրանք ապուշներ են, ինչը չի նշանակում, թե

նրանք իրենց գործողությունների համար պատասխանատու չեն: Բայց, թողնենք մի կողմ փիլիսոփայությունը, Մալումյան, չէ՞ որ բարեկամները մեզ չեն հրավիրել քարոզ լսելու:

– Ոչ, աղաչում եմ ձեզ, մսյե Ֆրանս, չարունակեք,– Մարիցան հախուռն ձևով ընդհատեց գրողի մենախոսությունը:

– Լավ, սիրելի տիկին: Բայց հետո չբողոքեք: Դուք ինձ հրահրում եք անցնել հռետորության, իսկ ես գուցե և օժտված եմ որևէ առաքինությամբ, որից իսկապես անտեղյակ եմ, սակայն ոչ լռող եմ, ոչ համեստ և ոչ էլ հեզաբարո:

Երբ Ժորեսը և Կլեմանսոն խնդրեցին իմ աջակցությունը հիմնելու «Pro Armenia» կազմակերպությունը, մի պահ անգամ չվարանեցի, չնայած որ երբեք հավատ չեմ ընծայել ո՛չ կոմիտեներին, ո՛չ ընկերություններին և ո՛չ էլ քաղաքական գործիչներին:

Սակայն այդ անգամ խոսքը ո՛չ ձայներ շահելու կամ էլ անհեթեթ նպատակների համար փող խնդրելու և ո՛չ էլ իշխանություններին խաբել փորձելու մասին էր, այլ բառիս բուն իմաստով՝ վիշապի դեմ պայքարելու մասին: Իսկ ինձ միշտ էլ հրապուրել են դժվարին արկածները, ինչպես ասպետական վեպերը: Մի կեղեքված ժողովուրդ, բռնակալ, որի մասին քիչ առաջ խոսում էինք և որը կենում է մի վիթխարի պալատում, մի երկիր՝ լի առեղծվածներով, անմատչելի սարեր և ամայի վայրեր, հրեշավոր չարագործներ, որոնք առևանգում են դեռատի աղջիկների և իրենց հարկերով խեղդում հլու հպատակներին... Ես չկարողացա ինձ զսպել: Բացի այդ, դուք մի չատ կարևոր բան ունեք՝ պատմական արդարացիություն: Ես չգիտեմ, թե ինչ տեղի կունենա մոտ ապագայում կամ ավելի ուշ, սակայն պատմության դատավճիռը անբեկանելի է և համոզված եմ, որ ի վերջո դուք եք լինելու հաղթողները: Գուցե մենք չենք տեսնի այդ, բայց գիտենք, հասկանո՞ւմ եք: Մի նշույլ կասկած չունենք այս երկարատև և հոգեմաշ պայքարի վերջաբանի հանդեպ..., և այս հարցի լավն այն է, որ նրանք նույնպես դա գիտեն: Կփորձեն ամեն կերպ փոխել պատմության ընթացքը, անգամ բնաջնջել ձեզ... Բայց ոչնչի չեն հասնի, թերևս միայն կերկարաձգեն այդ պրոցեսը: Ի վերջո պարտվելու են, իսկ դուք՝ հաղթելու: Ինչի՞ կհասնեն հաջորդ բռնակալները և նրանց չարանենգ ելուզակները. միայն անմեղ մարդկանց ահավոր տառապանքին, պյուռոսյան հաղթանակների, արհամարհանքի, որ հարուցում են անբարոները և դեռ ավելին: Դուք ինձ կառարկեք ասելով, որ ձեզ չի մխիթարում այն, որ պատմությունը ի վերջո յուրաքանչյուրին

իր տեղը կմատնանչի: Ես, որ ընդամենը մի արտոնություն ունեցող դիտող եմ, ուրախ եմ, որ գտնվում եմ արդարության կողմում: Անկեղծ ասած, ինձ երբեք դուր չեն եկել բռնակալները, ոչ էլ վիշապները ու ոչ էլ ճիճուները:

Այսպես մեզ հրաժեշտ տվեց Անատոլ Ֆրանսը այդ երեկո Ժնևում: Ինձ հիացնում էր նրա սուր միտքը՝ նրա հստակ դիրքորոշումը: Ես էլ էի նույն կարծիքին: Ի վերջո կգան հաղթողները, թեև երբեմն շատ երկար սպասումը և սարսափելի իրադարձությունները այդ ճամփան դարձնում են անտանելի:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

34. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԵՊԸՆԹԱՑՈՎ

Ժան Կառնոյից ստացա մի ուղերձ: Նա զբաղեցնում էր Ֆրանսիական կառավարության հետախուզական ծառայությունների պետի պաշտոնը: Իրար չէինք տեսել առնվազն հինգ տարի, բայց շարունակում էինք պահպանել մեր ջերմ բարեկամությունն ու ընկերությունը: Իր աշխատանքի համար նա եզակի օժտված մարդ էր և քաջատեղյակ Արևելքի հարցերին: Ուղերձում ինձ հանդիպում էր նշանակել նախարարության իր գրասենյակում, հաջորդ օրը:

Երկու շաբաթ առաջ էի վերադարձել Փարիզից: Բժիշկն ինձ վերջնականապես դուրս էր գրել, ես էլ որոշեցի անցնել սովորական կյանքիս:

Որդիս՝ Էդուարը մնացել էր վարժարանում, Ժնևում, Մարիցան նույնպես նախընտրեց դեռ որոշ ժամանակ մնալ Ժնևում՝ մեր իրերը հավաքելու համար:

Մտա նախարարություն այն ներքին զգացումով, որ այդ հանդիպումը կրկին բարդացնելու էր կյանքս, բայց դա ինձ չէր անհանգստացնում, ընդհակառակը, ուզում էի որևէ գործով զբաղվել:

Ժան Կառնոն ինձ դիմավորեց ամուր գրկախառնմամբ:

— Ինչպե՞ս ես: Ինձ պատմել են Սալոնիկում քեզ հետ տեղի ունեցածի մասին... Նախ ասեմ, որ կուզենայի կրկին քո այնտեղ գտնվելու հույսն ունենալ: Այո՛, Սալոնիկում: Ինչ ուրախալի է, որ դու հրաշալի տեսք ունես: Այն բանից հետո վախենում էի քեզ վհատված տեսնել... Ի դեպ, վատ լուր ունեմ: Մեկ ամիս առաջ Կոստանդնուպոլսում վախճանվեց Լուի դը Ֆյյորին: Գիտեմ, որ նրան բարձր էիր գնահատում, նա իմաստուն մարդ էր և յուրահատուկ, բոլորս էլ նրան կարոտով կհիշենք: Հավանաբար սայթաքել էր իր տան աստիճաններին, վերջերս դարձել էր մի քիչ չչմած և տեսողության խնդիր ուներ... Նրան, իր ցանկությամբ, թաղեցին այնտեղ. սիրում էր այդ քաղաքը, մի բան, որ դու և ես հասկանալ կարող ենք:

Ժան Կառնոյի գրասենյակը զբաղեցնում էր վիթխարի չենքից մի անկյուն: Իր պատուհանից երևում էր Սենան, իսկ ավելի խորքում՝

Լուվրի պալատը: Մի տեսարան, որը նրա մեջ արթնացնում էր հիշողություններ և մղում խորհրդածությունների: Սեղանին աշխարհի մեծ քարտեզն էր, իսկ մի մետր տրամագծով փայտե պատվանդանին՝ աշխարհի գլոբուսը: Այդտեղից Ֆրանսիան փորձում էր վերահսկել աշխարհը, որը համարյա անհնարին կլիներ, եթե չլիներ Հիսունին մոտ այդ տղամարդը, որն ինձ գննում էր ժպտալով: Ամենամեծ առավելությունն այն էր, որ երկուսս էլ միմյանց լիովին վստահում էինք:

Նա շատ լավ գիտեր իմ իրավիճակը: Ի պաշտոնե պետք է տեղեկացված լիներ և գիտեր, թե որոնք էին գործելու իմ շարժառիթները: Փողն ինձ չէր գրավում, ոչ ոք չէր կարող գնել իմ ծառայությունները, անգամ Ֆրանսիայի կառավարությունը: Եթե ընդունեի այդ առաքելությունը, որն անկասկած ինձ առաջարկելու էին, դա բխելու էր իմ սեփական համոզմունքներից:

– Նստիր, խնդրեմ: Այստեղ, ուր իշխում է Փարիզի այս հրաշալի տեսարանը, մեզ հաճելի կլինի: Ուզո՞ւմ ես որևէ բան խմել: Մի բաժակ խերե՞ս:

Ժանը շարժվում էր շատ ավելի երիտասարդ մարդու ճկունությամբ: Նա ինձանից մի քիչ մեծ էր, այնուամենայնիվ շատ ավելի երիտասարդ էր թվում: Նախանձեցի:

– Լավ: Կհարցնես թե ինչո՞ւ եմ քեզ կանչել: Մեզ պետք է մի մարդ, որին բացարձակապես վստահում ենք, որը խորապես ծանոթ լինի խնդրին, անձնական փորձ ունենա, պատրաստ լինի ամեն ինչի և ընդունակ՝ կարևոր վճիռներ ընդունելու: Այդպիսի մարդու, միայն մեկին գիտեմ, և այդ մեկը դու ես:

– Մինչև այստեղ համաձայն եմ,– պատասխանեցի մեծ հետաքրքրություն զգալով,– բայց ինձ վերջապես ասա՝ թե խոսքը ինչի՞ վերաբերյալ է: Ասես փչերի վրա նստած լինեմ:

Ժան Կառնոն մատուցում էր խերեսով լի բաժակները անչտապ՝ կարծես կամենալով ինձ խորհրդածելու հնարավորություն տալ:

– Լսիր, երբ Սալոնիկում էիր Սարգսյանի հետ, ծանոթացար ոմն Թալեաթ բեյի հետ, փոստային մի պաշտոնյայի՝ այդ քաղաքի փոստային ծառայության պետի: Ուզում ենք նրա մասին ավելին իմանալ, հիմնավոր պատճառներ ունենք կարծելու, որ նա է Իթթիհադի իսկական առաջնորդը տարածաշրջանում և որ այնտեղ են տեղի ունենալու գլխավոր իրադարձությունները: Գիտենք, որ քեզ հրավիրելու են մեկ այլ ժողովի՝ նույնպես Սալոնիկում, քանի որ այժմ նրանց ռազմավարությունը հայերին համոզելն է, որ երբ իշխանության գան,– անկասկած կգան,– հայերը այլևս խնդիր չեն ունենա:

Իթթիհադի կարևոր անդամներից մի քանիսը այստեղ են՝ Փարիզում: Ունեն թերթ, օրինական գրասենյակ, մի քանի համաժողովներ են անցկացրել: Նրանց գաղափարախոսությունը հիմնված է մերի վրա, ուզում են հետևել հանրապետության մեր օրինակին, իրենց երկրի արտաքին պարտքը յոթանասուն տոկոսով Ֆրանսիայի սեփականությունն է... Իսկ մենք չահագրգռված չենք, որ ընկնի Գերմանիայի ձեռքը, որը թե մի բան կա, որ անում է՝ նրանց խոստանում է այն, ինչ խնդրում են: Դա մեզ ձեռնտու չէ: Շատ լավ գիտես, որ գերմանական ազդեցությունը գնալով աճում է Թուրքիայում՝ մանավանդ վերջին տարիներին: Ի վերջո, մենք ուզում ենք իմանալ, թե կարո՞ղ ենք արդյոք վստահել այդ մարդուն: Մի վախեցիր քո հայամետ դիրքորոշումից, այս պահին դա շատ դրական է: Այնպես որ, նրանք չարունակ ժողովներ են գումարում ՀՀԴ-ի առաջնորդների հետ, որոնց մասնակցում է քո վաղեմի ընկերը՝ ոմն Գրիգոր Բրոչյան և, իհարկե, Քրիստափոր Միքայելյանը: Քեզ մի բան ասեմ, իմ անձնական կարծիքն այն է, որ փորձում են խաբել հայերին, բայց մյուս կողմից՝ այդ մարդիկ այնքան հուսահատ են, որ պատրաստ են հավատալ անգամ սատանայի խոստումներին:

Լսի՛ր, Անրի՛, կրակի հետ ենք խաղում: Շատ բաներ կփոխվեն, իսկ սուլթանին ո՛չ հաղթաքարտ է մնում, ո՛չ էլ ժամանակ: Կարո՞ղ ես տեր կանգնել այս հարցին:

Երեսուն վայրկյան խորհեցի: Հետո գլխով համաձայնության նշան արեցի: Իհարկե, ուզում էի հանձն առնել այն: Ես դրան սպասում էի ամբողջ անցյալ տարին: Հետո մենք իրարու ձեռք սեղմեցինք, ավելացնելու ոչինչ չկար: Ինքնին հասկանալի էր, որ ո՛չ որևէ փաստաթուղթ կտային և ո՛չ էլ մի ֆրանկ կվճարեին ողջ աշխատանքի դիմաց:

Դուրս եկա Կառնոյի գրասենյակից՝ խորհրդածելով այն թելերի մասին, որոնք շարժման մեջ էին դնում մարդ արարածների ճակատագիրը և անհանգստացած, թե ինչպես էի դա ասելու Մարիցային: Հեշտ չէր լինելու համոզել նրան:

Ընդամենը մեկ շաբաթ անց Մարիցան ժնևից վերադարձավ: Մենք միմյանց չափազանց լավ էինք ճանաչում, որ կարողանայինք որևէ բան թաքցնել: Այնպես որ, ես նրան այդ մասին ասացի արդեն հենց ավտոմեքենայում. մի «Դայմլեր» էի գնել վերջերս Բեռլինում: Դա ցնցող նորություն էր և բոլորին զարմացնում էր:

– Պետք է վերադառնամ Սալոնիկ: Կարևոր է:

Մարիցան դադարեց ժպտալ, թեև սկզբում չուզեց ինձ հավատալ: Խոսեց առանց վրաս նայելու:

– Զգիտեմ, մի՞թե քո ապրած սարսափելի միջադեպից հետո ընդունակ ես վերադառնալ այնտեղ: Ես սարսափում եմ մտածել, թե քեզ ինչ կպատահի: Բացի այդ, չատ լավ գիտես, որ թուրքերն ուզում են քեզ բռնել: Շատ եմ խնդրում, մի գնա: Ես դրան չեմ դիմանա... Ուղարկիր քո փոխարեն մեկ ուրիշին:

– Ոչ, Մարիցա: Ես պետք է գնամ: Բացի այդ, այն մարդը, որի հետ պետք է խոսեմ, նույն կողմից է, քանի որ երկուսս էլ պայքարում ենք բռնակալի դեմ, թեև դա չատ հարաբերական է: Արդեն լրիվ կազդուրվել եմ, և բժիշկն ինձ հավաստիացրել է, որ այդ էպիզոդը ուրիշ գործոնների արդյունք էր: Սիրտս լավ է... Բացի այդ, մնալու է այստեղ՝ քեզ հետ, այնպես որ լավ նայիր նրան... Պետք է կրկին գնամ այնտեղ, եթե ուզում եմ իսկապես ազատվել այդ ցավից, չեմ կարող թաքնվել իմ տանը, այստեղ՝ Փարիզում: Քեզ խընդրում եմ, որ փորձես հասկանալ ինձ:

Այլևս չխոսեցինք: Մարիցան համաձայնվեց, թեև մինչև «Արևելյան ճեպընթացով» մեկնելս ինձ հետ սառն էր վարվում:

Ես կայարանում էի, երբ տեսա ինձ մոտեցող մի թխադեմ ու բարձրահասակ մարդու՝ արծաթավուն քունքերով, լավ հագնված: Դեմքն ինձ ծանոթ էր, բայց անկարող էի հիշել անունը:

– Մսյե դը Լատուր: Հիշո՞ւմ եք ինձ: Իսկապես կհիշեք: Մի քանի տարի առաջ էր, Կոստանդնուպոլսում, Մեծ Բրիտանիայի դեսպանատանը: Իբրահիմ Ջեմոն եմ: Այն ժամանակ համազգեստով էի, հիմա ինչպես տեսնում եք՝ քաղաքացիականով: Սուլթանը որոշեց հրաժարվել իմ ծառայություններից, և ինձ բանակից հեռացրին: Դե ինչ, տուժողը ինքն է, և ինչպես տեսնում եք, ես չվերադարձա Ալբանիա, ես գնում եմ ավելի հեռուն, Սալոնիկ, որտեղ որոշ անելիքներ ունեմ: Հիմա ապրում եմ Բեռլինում, հրաչալի քաղաքում: Դուք գնում եք Վիեննա՞: Ես գնում եմ մի փոքր ավելի հեռուն... Սալոնիկ, այնտեղ որոշ հարցեր ունեմ:

Մի քանի վայրկյան կասկածեցի: Պե՞տք էր նրան ասել, որ ես էլ էի այնտեղ գնում, բայց այդ պահին որոշեցի լռել: Մենք խոսում էինք տարբեր անկարևոր բաներից, մինչև որ ուղեկցորդն ինձ առաջնորդեց իմ կուպեն: Հրաժեշտ տվեցինք միմյանց ձեռքսեղմումով, և ինձ առաջարկեց, որ ընթրենք միասին վագոն-ռեստորանում:

Մինչ գնացքը սլանում էր Ֆրանսիայի հյուսիս արևելքով՝ մի պահ հանգստացա կուպեի մահճակալին: Զէի դադարում մտածել այն մասին, որ Իբրահիմ Ջեմոյին նույն գնացքում հանդիպելը պատահականություն էր: Ինձ հասկացրե՞ց արդյոք, թե «երիտթուրքերի» անդամ էր: Ի՞նչ էր անելու Սալոնիկում՝ սուլթանի գաղտնի ոստիկանության կողմից հսկողության տակ գտնվող վայրում: Հիշեցի, որ երբ մենք ծանոթացանք՝ քսան տարի առաջ, ինձ վրա թողեց կիրթ և աչխարհիկ, բայց երկակի մարդու տպավորություն: Այդ ժամանակ նա լրտեսի նախատիպ էր, մի մարդ, որ միչտ հավակնում էր տեղեկատվություն հայթայթել բոլոր այն մարդկանցից, ում հետ որ խոսում էր: Հետո ես վերհիշեցի այն ժամանակ կատարված որոչ դեպքեր և գնացքի թիկթիկոցից ննջեցի:

Երբ արթնացա, ընթրիքի համար ուչ էր: Լվացվեցի, որ թարմանայի: Կարգի բերեցի հետճաչյա հանգստից մի փոքր ճմռթված կոստյումս, բայց այն փոխելու ժամանակ չունեի: Հետո ուղղվեցի դեպի վագոն ռեստորան և մի պահ կանգ առա դռան մոտ: Իբրահիմ Ջեմոն ընթրում էր մենակ՝ վագոնի խորքում տեղադրված սեղանին: Ինձ թիկունքով էր և չէր կարող տեսնել ինձ, այդ պատճառով էլ որոչեցի չմտնել: Նրան մի պատրվակ կգտնեի, երբ հանդիպեինք հաջորդ օրը բարում: Հենց այդ ժամանակ էլ նկատեցի Ֆյամիլ բեյին՝ գլխավոր չտաբի գնդապետին, որը նույնպես պատկանում էր «երիտթուրքերին»: Տեսա, թե ինչպես է վեր կենում մի սեղանից, որ տեղադրված էր վագոնի այն մասում, ուր ես էի գտնվում, ուղղվում դեպի Ջեմոն և իջեցնում գլուխը նրա հետ խոսելու համար:

Դա պատահականություն չէր: Արագ մտածեցի, որ ինչ-որ բան էին ուզում ինձ ասել՝ նախքան Սալոնիկ հասնելը: Առանց երկար մտածելու միջանցքով առաջ գնացի նրանց կողմը:

Ինձ տեսնելով այնտեղ՝ մնացին զարմացած: Այնքան ուչ էր արդեն, որ մտածել էին, թե ինձ չեն հանդիպի: Փորձեցի ինձ անբռնազբոսիկ պահել, չնայած երկուսն էլ ապչահար էին:

– Ինչ հաճելի անակնկալ: Ինչպե՞ս եք, Ֆյամիլ բեյ: Իրոք որ ժամանակը չատ արագ է անցնում:

– Գնդապետ Ջեմոն ինձ ասել է, որ դուք էլ եք այս գնացքում... Պարզ է, որ պետք է խոսենք: Բայց նստեք, մսյե դը Լատուր և լսեք, խնդրում եմ ձեզ:

Ֆյամիլ բեյը նստեց Իբրահիմ Ջեմոյի կողքին և որոչ ժամանակ ինձ էր զննում:

– Գիտենք, որ դուք գնում եք Սալոնիկ՝ «երիտթուրքերի» գլխավոր առաջնորդների ժողովին: Հիմա, քանի որ ձեր ուղևորության պատճառը պարզ է, թույլ տվեք, որ ձեզ հայտնեմ մերը: Զգիտեմ, հիշո՞ւմ եք արդյոք, որ Իբրահիմ Ջեմոն ամուսնացած է մի հայուհու հետ՝ Վանից: Նույնը իմ դեպքում, միայն թե ես ամուսնացած չեմ, որովհետև կինս չի ուզում հրաժարվել քրիստոնեությունից, ոչ էլ ես՝ իսլամից: Բայց նա, միևնույն է, կինս է: Ինչպես ասում են, բոլորս էլ մեղավոր ենք: Դա ինքնին երկուսիս կյանքն էլ բարդացնում է, բայց մենք մենակ չենք, շատ սպաներ կան, որոնք այս կամ այն պատճառով կապված են հայերին, իսկ բանակից դուրս շատ մարդիկ կան, որոնց կարծիքով քրիստոնյաները Թուրքիայի ազգաբնակչության շատ կարևոր մասն են և այս խնդրում չպետք է ընդունենք արմատական լուծումներ:

Գուցե հայերի հետ ազգակցական կապերը զգացմունքային առումով մեզ ավելի պատասխանատու են դարձնում, սակայն եթե միայն խոսքը դրա մասին լիներ՝ մեզ համար խնդիր չէր լինի, հասկանո՞ւմ եք: Ես ձեզ կհստակեցնեմ իրավիճակը, որպեսզի կարողանաք հասկանալ մեր դիրքորոշումը: Մենք կապված ենք հայերին, և այստեղ ոչ մի գործ չունեն ո՛չ քաղաքականությունը, ո՛չ որևէ շահ, ո՛չ էլ պատմությունը, հասկանո՞ւմ եք:

Գլխի շարժումով համաձայնեցի: Նույնը ինձ չէր վերաբերում, քանի որ ես քրիստոնյա էի, բայց ի վիճակի էի հասկանալ, թե ինչից էին խոսում, թեև այդ ամենը ինձ համար իսկապես անակնկալ էր: Երկուսն էլ սպասում էին, թե իրենց ասածներն ինչ տպավորություն են թողնում ինձ վրա: Այդ ընթացքում Իբրահիմ Ջեմոն վառեց սիգարը, ասես լրիվ թուլացած լիներ:

– Մենք ձեզ չենք լրտեսում, մայե,– Ֆյամիլ բեյը շարունակեց իր փաստարկումը,– թեև չենք կարող ժխտել, որ շատ բան գիտենք ձեր մասին: Իբրահիմ Ջեմոն երկար տարիներ աշխատել է սուլթանի հետախուզության ծառայություններում... Ինչ վերաբերում է ինձ, շարունակում եմ զբաղեցնել ներքին քաղաքականության վարչության պետի պաշտոնը: Երկուսս էլ պատկանում ենք «երիտթուրքերի» շարժմանը: Իհարկե, ես՝ սուլթանի իմացությամբ, և նա շատ գոհ է, որ ես «ներքաշվել եմ» այդ գործում:

Ձեզ խնդրում եմ, որ գնահատեք այն, ինչ ձեզ պատմում եմ, թեև Ֆրանսիայի հետախուզական ծառայությունները տեղյակ են իրադրությանը, ուզում եմ ապացուցել, որ վստահում ենք ձեզ: Կարևորն այն է, որ դուք ըմբռնեք դա, հակառակ դեպքում անիմաստ կլինի այն, ինչ ձեզ առաջարկելու ենք:

Գնացքը գնում էր մեծ արագությամբ և սկսում էր բարձրանալ դեպի Ալպերի լեռնաճյուղերը: Այդ ժամանակ ռեստորանում ուրիշ ոչ ոք չկար, միայն մի մատուցող, որը հավաքում էր վագոնի մյուս կողմի սեղանները: Թուրքիայի և հայերի հետ ունեցած իմ հարաբերությունները ինձ մտցրել էին բարդ և շատ անսովոր աշխարհ: Արևվելյան ճեպընթացում նրանց պես երկուսի հետ հանդիպելը ինձ ո՛չ զարմանք էր պատճառում և ո՛չ էլ անհանգստություն: Այդ միջոցին Ջեմոն ինձ մատուցում էր մի ըմպանակ կոնյակ:

– Մսյե դը Լատուր, քիչ ժամանակ է մնացել, որ պետական հեղաշրջումը տապալի սուլթանին: Դա անխուսափելի է, քանի որ բռնակալը ինքն է դրան հասցրել իր վարքագծով: Մեր պարտքը ոչ թե մի մարդու, այլ Թուրքիայի առաջ է: Շատ տերություններ են սպասում այդ պահին՝ համոզված, որ իրենց կհաջողվի իրար մեջ բաժանել կայսրությունը: Ես ձեզ ասեմ, որ թուրքերը երբեք դա թույլ չեն տա... Այնուամենայնիվ, փոքրամասնությունների հարցը պետք է լուծվի, իսկ մենք, որ այդ կազմակերպության անդամներն ենք, որն անտարակույս գալու է իշխանության, առաջարկող լուծմանը համաձայն չենք:

Այն, ինչ հիմա ձեզ կպատմեմ ընդամենը հիպոթեզ է, բայց ուզում ենք, որ դուք իմանաք: Տարիներ առաջ ներկա ենք գտնվել մի ժողովի հենց Սալոնիկում: Այնտեղ 3-րդ կորպուսի սպաներից շատերը այդ քաղաքում պատկանում էին հնավանդ մասոնությանը, որտեղ մեծաթիվ էին դյոնմեները, հրեաները, զինվորականներն ու մտավորականները՝ մի պայթուցիկ կոկտեյլ, որից ծնունդ առավ երիտթուրքերի շարժումը: Սկզբում նրանք տարված էին Ֆրանսիական հեղափոխությամբ, ոգևորված՝ ազատությամբ և առաջադիմությամբ, մեր երկիրը ժամանակակից դարձնելու գաղափարով: Իրոք որ, բոլորս էլ կուշտ էինք տանելուց այն, ինչ անտանելի էր: Ինչպես հասկանում եք, դժվար էր չտրվել այդ մտավորական հոսանքին: Ժամանակն անցել է. հիմա խոսում են այնպիսի կոնկրետ հարցերից, ինչպիսիք են. Ի՞նչ են անելու կայսրության քրիստոնյաների հետ: – Ֆյամիլ բեյը հոգոց հանեց, ասես խորհրդածում էր: – Ի՞նչ ենք անելու: Ձեզ անկեղծ ասեմ, որ առաջ դա ինձ համար շատ պարզ էր, կարծում եմ, որ Իբրահիմի համար նույնպես: Ինքներդ պատկերացրեք,– Ֆյամիլը նորից

լռեց, մինչ գնացքի թխկթխկոցի ձայնը փոխվեց երկար թունել մըտնելուց:

– Ալպերը,– քթի տակ ասաց Իբրահիմ Ջեմոն, մինչ երկար ներս էր քաշում իր սիգարը: Իրեն այնպես էր պահում, որ կարծես այդ ամենը իրեն չի վերաբերում:

– Հիմա ուրիշ է, շատ ուրիշ,– Ֆյամիլ բեյը նայում էր աչքերիս,– հիմա մենք և շատ շատերը Թուրքիայում այդ լուծմանը համամիտ չենք: Գիտե՞ք, թե ինչի մասին ենք խոսում: Ինչպես կարող եմ թույլ տալ դա, երբ իմ սիրած կինը քրիստոնյա է: Ինչպես է այդ բանը թույլ տալու Իբրահիմը: Չի կարող պատահել..., չի կարող:

Բավականին երկար ժամանակ միայն գնացքի միալար թխթխկոցն էր խզում լռությունը:

Իհարկե, հասկանում էի, թե ինչի մասին էր խոսում, և շատ թուրքեր էին այդ կարծիքի առանց ամոթի նշույլի: Սկզբում այդ մասին խոսում էին ասես ինչ-որ անհնարին բանի, համարյա անհեթեթ, այնուհետև ժամանակի հետ դա դարձավ հեռավոր, քիչ հավանական հնարավորություն: Վերջին տարիներին, որոշ օսման մտավորականներ բացեիբաց կոչ էին անում կայսրությունից վտարել բոլոր քրիստոնյաներին և բնաջնջել նրանց, ովքեր արտաքսվելուն դեմ լինեն:

– Իսկ ի՞նչ կարող ենք անել,– հարցրի ես: – Ավելի ճիշտ՝ ինչպե՞ս կարող եմ օգնել ձեզ: Ես իսկապես գնում եմ Սալոնիկ մասնակցելու ժողովի: Անցյալ տարի մասնակցեցի մեկ այլ ժողովի, բայց այն ժամանակ սուր նոպա ունեցա սաստիկ շոգի և հունական մի գինու պատճառով, որին դիմադրելն անհնար էր: Հիմա ինձ հարկավոր է ավելի շատ բան իմանալ ձեր կազմակերպության մասին, գուցե բոլորս միասին ընդունակ լինենք գտնել մի իսկական ելք:

– Տեսեք, մսյե դը Լատուր, Դուք հարգված մարդ եք և ձեզ կլսեն: Բոլորը գիտեն, որ դուք պաշտպանում եք հայերին և որ ձեր կինը հայ է և հիմա հարկավոր չէ դա թաքցնել անգամ Իթթիհադի անդամներից: Ընդհակառակը, դա մի դրոշ է ցույց տալու Եվրոպային, որ շատ մոտ ենք միմյանց հասկանալու համար: Մնացյալը կգա հետո և դա, այսպես ասած, մի բացահայտ գաղտնիք է կուսակցության անդամների միջև: Ուրեմն այսպես, եթե դուք նախազգուշացնեք լրջորեն այն հետևանքների մասին, որ կարող է ունենալ հարձակողական քաղաքականությունը քրիստոնյա փոքրամասնությունների դեմ, նրանց կոտիպի խորհրդածել: Այդքան էլ բթամիտ չեն, որ չհասկանան և ձեզ ավելին ասեմ, նրանց հանգիստ չեն տալիս կասկածանքները: Շատերը մեղանում այն կարծիքին են, որ պետք է հարգեն

քրիստոնյաներին, ինչպես օրինակ՝ մենք, և կան այնպիսիք, Աստված ոչ անի, որոնց կարծիքով ավելի լավ է բոլոր քրիստոնյաները ծառերից կախված լինեն: Դուք այնքան մեծ հեղինակություն ունեք, որ ձեր նախազգուշացումները կլինեն ծանրակշիռ: Չգիտենք, թե ինչ տեղի կունենա, բայց շատ թուրքեր, ձեզ պետք է ասեմ, որ մեծամասնությունը, հայերին, Փոքր Ասիայի հույներին, հրեաներին և այլոց համարում են մեր երկրի ապագային անհրաժեշտ քաղաքացիներ: Մենք միայն ուզում ենք, որ դուք նրանց զգուշացնեք, որ չեն կարողանալու չրջանցել նրանց: Ո՞ւր են նրանց արտաքսելու: Եվրոպա՞: Լրիվ անհեթեթ է:

Այսպիսով ավարտվեց խոսակցությունը: Մնացած օրերին՝ մինչև Սոֆիա հասնելը, այլևս այդ հարցին չանդրադարձանք և իրար քիչ տեսանք, քանի որ ինձ նախազգուշացրել էին, որ ճեպընթացում գաղտնի ոստիկանության անդամներ կան և որ նախընտրելի է զգուշավոր լինել: Վերջապես հասանք Սոֆիա: Թեև երեքիս համար էլ դա վերջին կայարանն էր, տեսա, թե ինչպես էր նրանցից յուրաքանչյուրը գնում իր սեփական կառքով: Ես տեղ զբաղեցրի Սալոնիկ գնացող մի հանրակառքում: Նրանք ինձ ասել էին, որ մի քանի օր մնալու են Սոֆիայում:

Կառքում վեց հոգի էինք: Երկուսն անկասկած հույներ էին, մեկն էլ սերբ էր՝ Բելգիայից, երկուսը թվում էին հրեաներ, և բոլորն էլ ինձ զգուշավոր զննում էին, երբ իմացան, որ ֆրանսիացի եմ:

Մթնոլորտը Եվրոպայում գնալով փոխվում էր, և շատ ժամանակ չէր անցնի հասկանալու համար, որ թուրքերի պարտադրած անկայուն հավասարակշռությունը չուտով ընդմիշտ փչուր-փչուր է լինելու:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

35. ՄԱՍՈՆԱԿԱՆ ՕԹՅԱԿԸ

Ինձ չզարմացրեց, որ Միղհատ Շյուքրուն, որի տանը անցյալ տարվա հուլիս ամսին տեղի էր ունեցել ժողովը, իրականում իմ երկրի հետախուզական ծառայության գործակալ էր և հավանաբար կրրկնակի գործակալ, քանի որ Ֆրանսիան չէր կարող դուրս մնալ այն ամենից, ինչ տեղի էր ունենում և հետևաբար պետք է ունենար հավաստի տեղեկատվություն, որի շնորհիվ հարկ եղած պահին կարողանար գործել:

Միղհատ Շյուքրուն ինձ դիմավորեց այնպես, կարծես մտերիմներ լինեինք՝ գրկելով ինձ հուզմունքից խոնավ աչքերով:

– Մսյե դը Լատուր, Անրի, ինչ ուրախություն: Հիմա որ ամեն ինչ հետևում է, կարող եմ խոստովանել: Ես համոզված չէի, որ ձեզ կհաջողվեր դուրս գալ այն նեղ վիճակից: Աստված մեծ է, և դեռ երկար եք ապրելու:

Ես կրկին գտնվում էի նրա տանը, նույն մովրաշուքի տակ, որտեղ տեղի էր ունեցել ճաշկերույթը: Եղանակը դեռ շոգ էր, բայց այնտեղ լավ էր այնքան, որ մինչ Շյուքրուն ինձ սառը թեյ էր մատուցում, ես թեթևակի նախանձ զգացի միջերկրացիների ապրելակերպի նկատմամբ: Այնտեղ ժամանակն անցնում էր այլ կերպ, և տպավորությունն այնպիսին էր, որ ամեն մեկն իր ժամանակի տերն էր:

– Եթե դեմ չեք, Անրի, կարող ենք ճաշել մի քանի բարեկամներով միասին: Այս երեկո ժողով ունենք օթյակում... Կարծում եմ, որ գիտեք թե ինչի մասին է խոսքս: Ըստ մեր տեղեկատվության՝ մի քանի տարի առաջ Փարիզում ձեզ արդեն ընդունել են և, հետևաբար, մենք ձեզ կարող ենք կոչել եղբայր: Ձեզ կբացատրեմ: Արևելքի նոր մեծ ուսուցիչը այստեղ՝ Սալոնիկում ձեզ ծանոթ մեկն է: Պարոն Մեհմեդ Թալեաթ բեյն է դա՝ երիտթուրքերի անդամ Իթթիհադ կազմակերպության առաջնորդներից մեկը (հիմա արդեն Իթթիհադ կուսակցության՝ մի քանի ամիս ի վեր): Միությունն և առաջադիմությունն կուսակցությունը ավելի ուժեղ է, քան մյուս թեը, այսինքն՝ Իթթիլիաֆը կամ համաձայնության կուսակցությունը, որն իմ կարծիքով առաջխաղացման քիչ շանսեր ունի:

Ինչ վերաբերում է Թալեաթ բեյին, փառասեր մարդ է և անգամ քիչ հնարավորության դեպքում՝ շատ առաջ կգնա: Նրան հաջողվում է մարդկանց իշխել, խարիզմատիկ է, ունի համոզելու ձիրք, հատուկ գաղափարներ... Զգիտեմ, արդյոք ձեզ հայտնի՞ է, որ Թալեաթը դյոնմեներից է, այսինքն՝ սերում է մի ընտանիքից, որը գաղտնի դավանել է հուդաիզմ՝ սակայն իսլամի ջերմեռանդ անդամների քողի ներքո, մինչև որ իսլամը նրանց դարձրեց իսկական մուսուլմաններ, այլ կերպ լինել չէր կարող:

Վերջին ամիսներին դիրքորոշումները սկսեցին պարզ դառնալ: Այժմ հիմնական գաղափարը հետևյալն է. հարգել կայսրության այն քրիստոնյաներին, որոնք կընդունեն օսմանացումը, ինչ մնում է մնացածներին, հարկ կլինի փնտրել նոր լուծում: Սակայն դա ձեզ կբացատրեն իրենք:

Շյուքրուին հաջողվում էր գոհացնել երկու կողմին: Իթթիհադ կուսակցության շատ անդամների հետ ծառայել էր բանակում հասնելով զինվորական բարձրագույն հրամանատարի աստիճանի: Այդ ընթացքում նա գործում էր որպես վստահելի անձ՝ կարգավորելով ժողովների անցկացումը՝ իրազեկելով թե՛ թուրքերին ու թե՛ ֆրանսիացիներին և ստանալով իր աշխատանքի դիմաց կարգին գումարներ՝ Սալոնիկում Ֆրանսիայի հյուպատոսից:

Ճաշից հետո տանտերն ինձ թույլ տվեց հանգստանալ իմ սենյակում: Հիշեցի, թե ինչ էր ինձ պատմել հենց այստեղ և խորհրդածեցի այն հին ասացվածքի շուրջ, որ մարդը միակ կենդանին է, որ երկու անգամ բախվում է նույն քարին: Այնտեղ էի կրկին տարօրինակ déjà vu զգացողությամբ: Ասես անցած ժամանակը կուլ գնացած լիներ հայր Քրոնոսի կողմից, և ես դեռ այնտեղ էի, գիտակցությունս կորցնելուց հետո ուշքի էի գալիս: Ինչ հարաբերական է ամեն ինչ:

Հետո, իրիկնադեմին, Միղհատ Շյուքրուն և ես ուղևորվեցինք իր կառքով այնտեղ, ուր տեղի էր ունենում օթյակի ժողովը:

Գուցե այստեղ հարկ կա, որ պարզաբանեմ, որ ինչպես իմ հայրը և իմ պապը, ես նույնպես, Ֆրանսիայի Մեծ Արևելքի անդամ էի, ավելի շուտ ելնելով ընտանեկան ավանդույթից, քան համոզմունքից, քանի որ անդամ լինելուց հրաժարվելը ինձ ավելի շատ խնդիրներ կպատճառեր, քան այդ ճանապարհով գնալը: Այդ պահին, ճակատագրի տարօրինակ դիպվածների շնորհիվ մասոնությանը պատկանելու փաստն ինձ համար շահեկան էր լինելու:

Հասանք մի փոքրիկ հրապարակ, տեղակայված այն թաղամասերից մեկում, որտեղ վերջանում էր քաղաքը: Բնակելի չէր թվում, քանի որ մեծ պատուհանների ծխնիները փակ էին, և այդ վայրը կարող էր լքված թվալ պարտեզի անխնամ լինելուց, որում մոլախոտերը բռնել էին ճանապարհից մինչև մուտքի դարպասը: Միդհատը զարմանքի ոչ մի նշան ցույց չտվեց, ընդհակառակը՝ հրամայեց կառապանին քշել դեպի կողքի ճանապարհը և շրջանցելով ժանգոտված դարպասը՝ հասանք հետին մասը: Այնտեղ տարբեր կառքեր էին սպասում, մինչ ձիերը պոկում ուտում էին բաղեղը և չորացած խոտը: Իջանք և քայլեցինք դեպի կողմնային դուռը, որ թաքնված էր քարերի ետևում: Երբ մենք մոտեցանք, դուռը բացվեց, և զինված մեկը մեզ ողջունեց.

– Ազատությո՛ւն

– Ո՛չ բռնակալին,– հանգիստ պատասխանեց իմ ուղեկիցը՝ ի պատասխան նշանաբանի:

Մտանք պարտեզ և ուղևորվեցինք դեպի հետնամասի մուտքը, որում ապակեպատ դռներից մեկը բաց էր և նրա միջով մտանք մի մեծ չինություն:

Օթյակը գտնվում էր առաջին հարկի մեծ սրահներից մեկում, մի հարյուր քառակուսի մետրանոց դահլիճ էր սպիտակ մարմարի մաշված հատակով պատերին դեռ պահպանվում էին հին հարթաքանդակներ: Մետաղական մի մեծ ջահ՝ առնվազն չորս դյուժին մոմերով, բավականաչափ լուսավորում էր, քանի որ հսկա պատուհանները ծածկված էին կարմիր թավշյա վարագույրներով՝ ժամանակից և մկների կրծելուց քրքրված: Ամեն դեպքում տեսարանը տպավորիչ էր և անսպասելի: Ես պատկերացնում էի ավելի հասարակ և ժամանակակից: Մասոնական խորհրդանիշներով խորանին տեղ էին զբաղեցնում չորս հսկա մոմեր: Հենց այդ պահին սկսեցին մտնել օթյակի մասնակիցները: Տեսա Ջեմալ Նուրիին, Սամի փաշային, դոկտոր Նազրմին, Բեհաէդդինին: Վերջինը մտավ Մեհմետ Թալեաթ բեյը: Բոլորի հագին կաչվե գոգնոց էր՝ համապատասխան խորհրդանիշներով: Օգնականներից մեկը մոտեցավ մեզ՝ բերելով երկու գոգնոց, և արարողությունը սկսվեց: Ծեսը չատ նման էր ինձ հայտնի հանդիսությանը, բայց ավելի պերճաշուք էր և կարելի է ասել՝ ավելի արևելյան:

Որոշակի պահին, մեծ վարպետը,– ոչ այլ ոք, քան ինքը՝ Թալեաթ բեյը,– հանդես եկավ խոսքով՝ թուրքերեն:

– Եղբայրներ, մեզ հետ է գտնվում Անրի դը Լատուրը, Ֆրանսիայի՝ Մեծ Արևելքի օթյակի անդամը: Ցանկանք նրան այստեղ երջանիկ

ժամանակ, անդորր նրա հոգուն, պայծառություն մտքին և ազատություն հոգուն: Բարի գալուստ, սիրելի՛ եղբայր: Մենք այստեղ ենք՝ անցկացնելու օթյակի մի ժողով, որին վաղուց էինք սպասում՝ ոչ միայն մեր շարքերում նոր աշակերտներ ընդգրկելու և միաբանության որոշումները ի կատար ածելու համար: Մենք հավաքվել ենք որպեսզի տեղեկանանք այն որոշումներին, որ կայացրել են օթյակի մեծ վարպետները Թուրքիայում, Հունաստանում, Մակեդոնիայում, Սերբիայում, Բուլղարիայում, Ալբանիայում, Բոսնիայում, Զեոնոգորիայում և Խորվաթիայում: Որոշումը հետևյալն է՝ սատարել Իթթիհադ կուսակցությանը, որը պատկանում է երիտթուրքերին: Ինչպես հասկանում ենք, միաբանության որոշումները պետք է իրականացվեն վերոհիշյալ երկրներում: Ազատություն, հավասարություն, եղբայրություն: Կորչի՛ բռնությունը, կեցցե՛ առաջադիմությունը և գիտությունը:

Բոլոր ներկաները խմբով կրկնեցին կարգախոսները, և Թալեաթ բեյը մեծ վարպետի դերում ավարտեց հանդիսության ծիսական մասը:

Այնուհետև անցավ երկրորդ մասին. իրենց շարքերը նոր անդամներին կամ աշակերտներին ընդունելուն և ապա՝ լուսավորչական ընթերցումներին՝ նախքան ժողովի ավարտը:

– Լավ, մայե,– դիմեց ինձ Թալեաթ բեյը՝ ջանալով լինել սրտագին, ինչը նրան հազիվ էր հաջողվում, քանի որ նրանում, անկախ ամեն ինչից, նկատելի էր ինքնաբավությունը, մեծամտությունը, հեռավորություն պահելու միտումը: – Դուք կարող եք հանգիստ վերադառնալ Ֆրանսիա, քանի որ չուտով ամեն բան փոխվելու է՝ ավելի վաղ, քան բռնակալն է կարծում, թեև ավելի ուշ, քան ինքներս ենք ցանկանում: Կարճ կապեմ. յոթանասունվեց թվականի սահմանադրությունը կրկին ուժի մեջ կդրվի, և այդ պահից սկսած օսմանյան բոլոր քաղաքացիները կունենան նույն իրավունքներն ու պարտականությունները: Բոլորը,– ընդգծեց Թալեաթը,– այդ խոստումը կարող եմ տալ Իթթիհադ կուսակցության անունից: Ձեզ հավաստիացնում եմ, պարոն, որ մենք թշնամի չենք քրիստոնյաներին:

Թալեաթ բեյը երկու ձեռքերով խոսքն ավարտելու նշան արեց և ավելացրեց.

– Թուրքիայում՝ ողջ կայսրության մեջ, պետք է վերջ դնենք այդ անիմաստ արյունահեղությանը, կույր բռնությանը, անհիմն դաժանությանը, իսկ ձեզ գոհացնելու համար կասեմ, որ մեր նմուշօրինակը Ֆրանսիան է: Եթե մենք այստեղ ենք գտնվում մեծարելով մեծ վար-

պետին, ուրեմն հավատում ենք հավասարությանը, ազատությանը և բոլոր մարդկանց միջև եղբայրությանը:

Անտարակույս Թալեաթն իր եռանդագին խոսքերով, որոնք արտասանում էր հատուկ չեշտելով, ուզում էր ինձ համոզել:

– Մսյե Լատուր, մի վախեցեք ձեր քրիստոնյաների համար, նրանց դեմ ոչինչ չունենք, գուցե և նախկինում սխալվել ենք, բայց արդեն ուղղվել ենք: Ամեն բանում մեղավորը բռնակալն է, և երբ նա ընկնի՝ ուրեմն ամեն ինչ կփոխվի, հավաստիացնում եմ Ձեզ: Վստահ եղեք, որ Եվրոպայում կդառնանք ժամանակակից ժողովուրդ՝ գիտենալով մեր պարտականություններն ու մեր հնարավորությունները: Վերադարձեք Փարիզ և ասացեք ձեր մարդկանց, որ երիտթուրքերի գաղափարախոսությունը, որն անց է կացնում «Առաջադիմություն և միասնություն» կուսակցությունը, դրական է: Մենք ձեզանից ոչինչ չենք թաքցնի և ուզում ենք ունենալ բոլոր փոքրամասնությունների աջակցությունը: Բոլորով կարող եք մեզ վստահել, քանի որ գործելու ենք վեհանձնորեն, հավատացեք ինձ:

Թալեաթ բեյը նայում էր վրաս: Հասկացա, որ այդ մարդիկ հրաշալի տեղեկացված էին և նրանց մի ելք էր մնում՝ ընդունել Եվրոպայի առարկությունը և անել այն, ինչին հավանություն էր տալիս Եվրոպան:

Գլխով համաձայնության նշան արեցի՝ չնայած այն կասկածներին, որ Թալեաթի ասածները հարուցում էին իմ մեջ: Կարող էի միայն մատներս խաչել և հավատալ, որ ամեն ինչ շտկվելու է:

Դա վերջին անգամն էր, որ պետական հեղաշրջումից առաջ տեսա Թալեաթ բեյին: Ինձ երբեք չներեցի այդքան դյուրահավատ լինելու, նրա խոսքերին հավատալու համար: Այն քաղաքական գործիչները, որոնք տապալեցին Աբդուլ Համիդին, օգտվեցին սուլթանի գործելակերպից՝ հերքել ակնհայտը, մեղքը գցել զոհերի վրա, ստել իրենց քաղաքականության մասին: Եվրոպան, որ այդքան կայուն էր իր տնտեսությունում, ընդունակ չեղավ ո՛չ կանխատեսել և ո՛չ էլ կանխել մոտալուտ աղետը:

Վերադարձա Փարիզ այն զգացողությամբ, որ Թալեաթը դառնում էր սուլթանի դեմ շարժման առաջնորդը, այն մարդկանցից, որոնք իրենց նպատակին հասնելու համար ոչ մի բանի առաջ կանգ չեն առնում: Բայց այդ պահին ընդամենը մի բան կարող էի անել՝ զեկուցել այն բանի մասին, ինչ Թալեաթը խոստացել էր:

Երբ Մարիցային պատմեցի տպավորություններս, նա երեսը խաչակնքեց:

– Տեղեկացրու այն մասին, ինչ դու հավաստի ես համարում, ոչ այն մասին, որ նա քեզ երդվել է: Ինձնից լավ գիտես, որ այդ մարդը ստում է... Վախենում եմ մտածել, թե ինչ է լինելու, դրա մասին էլ գրիր քո հաշվետությունում:

Սակայն իմ հաշվետվությունը սահմանափակվեց նրանով, ինչ Թալեաթն էր ինձ հավաստիացրել: Միմիայն Ժան Կառնոյին կարողացա պատմել իմ անկեղծ տպավորությունները, իմ համոզմունքը, որ այդ մարդը ստում էր:

Ժանը ինձ խնդրեց լինել հնարավորինս անաչառ՝ ասելով.

– Մենք չենք կարող քաղաքականություն վարել՝ հիմնվելով ներըմբռնման վրա: Գուցե կատարվի այն, ինչ մտածում ես, գուցե և ոչ: Շարադրիր հնարավորինս ճշգրիտ այն, ինչ նա քեզ ասաց և չատ եմ խնդրում, որ չընկնես անձնական եզրակացությունների մեջ:

Տուն վերադարձա այնպիսի հորդառատ անձրևի տակ, որ հովանոցս հազիվ էր դիմանում: Երևում էր, որ ձմեռը դաժան է լինելու և կարոտեցի Միջերկրական ծովը: Մայրս մի սքանչելի առանձնատուն ուներ Նիցցայում, որտեղ իմ մանուկ ժամանակ բոլորով անց էինք կացնում ամառը: Որոշեցի Մարիցայի հետ գնալ և ձմեռն այնտեղ անցկացնել: Ինձ անհրաժեշտ էր հեռանալ առաջին՝ թեք գծից և լրջորեն կենտրոնանալ՝ տեղի ունեցող երևույթները ապագայի տեսանկյունից դիտարկելու համար:

Շարադրեցի հաշվետվությունս և ստորագրեցի: Այնուհետև գրեցի մի նամակ արտգործնախարարին և կցեցի հաշվետվությանը:

Փարիզ, 27 հոկտեմբերի 1907 թ.

Մեծարգո նախարար,
Կից ուղարկում եմ Ձեզ իմ կոնֆիդենցիալ հաշվետվությունը Աբդուլ Համիդի դեմ շարժման հետևանքով ստեղծված իրավիճակի և այն առաջնորդների մասին, որոնք նախապատրաստում են նրա տապալումը:
Այնուամենայնիվ պետք է նախազգուշացնեմ Ձեզ իմ ներքին համոզմունքի մասին վերոհիշյալ անձանց իսկական դիրքորոշման շուրջ:
Համոզված եմ, որ նրանք ճշմարիտը չեն ասում և որ վտանգվում է քրիստոնյա փոքրամասնությունների դրությունը և, առհասարակ, բոլոր նրանց, ովքեր թուրք չեն կամ բռնի թուրքացվել են: Ես շատ շնորհակալ կլինեի, եթե ինձ տրվեր առանձին հանդիպում այդ ամենի մասին իմ կարծիքը հայտնելու համար:
Սրտագին ողջույններով
Անրի դը Լատուր

Ես զարմացա, որ ոչ մի պատասխան չստացա, մինչև որ ամիսներ անց հանդիպեցի նախարարին ընդունելություններից մեկում:

– Ահ, սիրելի Անրի: Ստացա քո հաշվետվությունը: Այն ինձ հրաշալի թվաց, և մեզ շատ օգնեց: Իրոք արտասովոր ձևով օգնեց:

– Բայց կարդացի՞ր կից նամակը, կուզենայի անձամբ խոսել... հանգամանալից արտահայտել իմ կարծիքը...

Սակայն նախարարն ինձ կենսուրախ ընդհատեց.

– Ահ, Անրի, մենք իրավունք չունենք խառնել քաղաքականությունը անձնական չափանիշների հետ: Հակառակ դեպքում՝ քաղաքականություն գոյություն չէր ունենա: Ների՛ր, հիմա կմոտենամ:

Բաժանվեց ինձնից՝ լայն ժպիտն ուղղած մի քանի տիկնանց, որոնք ցանկանում էին ողջունել նրան: Հենց այդ պահին էր, որ հասկացա իմ թույլ տված սարսափելի սխալը:

Հաշվետվությունը պետք է գրած լինեի հիմնվելով իմ համոզմունքների և ոչ թե Թալեաթի ասածների վրա՝ այնպես, ինչպես հուշում էր Մարիցայի ներըմբռնումը: Երբ նրան պատմեցի այն, ինչ տեղի էր ունեցել, հիշեցի, թե ինչպես խաչակնքեց երեսը: Այնուհետև անձրևի տակ վազեցի դեպի իմ կառքը՝ հավանաբար փորձելով փախչել ինքս ինձանից:

ՀՈՒԼԻՍԻ ՎԵՐՋԵՐ 1908

36. ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Հուլիսի երեսունին, ամռան մի չոգ օր, Փարիզում Գրիգոր Բրոչյանի մտերիմ բարեկամ Կրիկոր Նալպանտյանն առանց նախազգուշացնելու ներկայացավ Փարիզի իմ գրասենյակ: Իր ունեցած դիրքի չնորհիվ տեղյակ էր այն ամենին, ինչ տեղի էր ունենում ՀՀԴ-ի ներսում, թեև նրան հանկարծակի տեսնելով՝ կարծեցի, թե որևէ վատ բան է պատահել Բրոչյանին, ում, անկախ ամեն ինչից, շարունակում էի ինձ ընկեր համարել:

Նոր էր եկել Սալոնիկից և նկատեցի, որ նա խիստ գրգռված է: Երբ նրան հարցրի իրավիճակի մասին՝ խնդրեց ժողով գումարել Ֆրանսիայի համայնքը ներկայացնող հայերի հետ:

– Ինձ ուղարկել է Բրոչյանը ձեզ բոլորին հայտնելու, որ մեր ընտրած դիրքորոշումը ճիշտ էր: Պետք է որ դա բոլորին հայտնի լինի լուրերից, սակայն ՀՀԴ-ի հայերի կարծիքով եկել է ընդհանուր ճակատ ստեղծելու ժամանակը: Այս երեկո, եթե ձեզ հարմար է՝ այստեղ: Դա շատ կարևոր է:

Ես համաձայնվեցի, իրոք տեղյակ էի ստեղծված իրադրությանը, որն անչրջելի էր թվում: Բանակը. մասնավորապես՝ 3-րդ կորպուսը, ապստամբություն էր բարձրացրել Մակեդոնիայի տարբեր վայրերում:

Սկզբում, առաջին օրերին, տպավորությունն այն էր, որ սուլթանը ճնշելու է խռովությունը: Հուլիսի կեսերին երիտթուրքերը հավաքեցին հյուպատոսներին Մոնաստիրում՝ պաշտոնական հայտարարություն անելու համար:

Մինչև Նալպանտյանի գալը՝ մեզ միայն դա էր հայտնի, այդ իսկ պատճառով շատ կարևոր էին նրա բերած թարմ լուրերը հայերի համար:

Հետևաբար որոշեցի հայտնել բոլորին:

Երեք ժամ անց այդ մասին Փարիզի բոլոր հայերը գիտեին և սկսեցին հավաքվել գրասենյակի մոտերքում: Ես հասկացա, որ մենք նախատեսվածից շատ ավելին էինք լինելու և այդ մասին ասացի Հակոբ Սարգսյանին, որն անմիջապես հավաքը կազմակերպեց Վան-

դոմի հրապարակի հետևի մասում գնած իր նոր խանութում: Նա ստանձնեց աթոռներով ապահովելը, և նախատեսված ժամին ամեն ինչ պատրաստ էր:

Կրիկոր Նալպանտյանը հայտնվեց իր անբաժանելի ընկեր Արամ Ջելկայանի ընկերակցությամբ և բոլորն էլ, ովքեր գալիս էին, նրանց գրկում էին, ասես ներկայացնելով անառակ որդիների վերադարձը՝ սիրո և հիացմունքի խառը զգացումով և երկու ամենակարևոր խմբակցությունների կրկին միավորվելու ցանկությամբ:

Կես ժամ անց հավաքվեց մոտավորապես երկու հարյուր հոգի: Բոլորը բացի ինձանից հայեր էին, ես էլ անչուչտ հայ էի, սակայն պատվավոր տիտղոսով՝ սպասելով լսել մեզ բերած լուրերը: Իրոք որ հուզիչ էր տեսնել այդ բոլոր հայերին, նրանցից շատերը ֆրանսիական անձնագրերով էին նստած. անշարժ, բացարձակ լուռ, սպասելով, թե Նալպանտյանը և Ջելկայանը ինչեր էին իրենց պատմելու: Ես նրանցից շատերին էի ճանաչում, որոշ գործարարների, ներկրողների, հաջողակ առևտրականների, երաժիշտների, ինչպես նաև այլ՝ պարզապես հայերի, ոչ մեծահարուստ, որոնք պայքարում էին հաջողության հասնելու համար, բայց բոլորն էլ հայրենասեր, նախանձախնդիր իրենց լավագույն տիտղոսով՝ Հայաստանի զավակներ կոչմամբ, որը պատմության և աշխարհագրության մեջ մի կոնկրետ վայր է: Հայրենիքի նշանակությունը շատ ավելի է մեծանում, երբ գտնվում ես բռնի աքսորում, ինչը բոլորի համար էլ անընդունելի է՝ անկախ հարստությունից:

— Բարեկամներ, ավելի ճիշտ, եղբայրներ,— Նալպանտյանը ցանկանում էր հանգիստ խոսել, բայց նրան չէր հաջողվում. քանի որ ես նրան ավելի մոտ էի գտնվում, տեսնում էր նրա շողացող և հուզված աչքերը,— Ձեզ կարող եմ հավաստիացնել, որ բռնակալն ընկել է: Դեռ իր պալատում է, բայց ընդամենը որպես խամաճիկ: Աբդուլ Համիդը՝ մարդասպանը, Թուրքիայում այլևս վճռորոշ որոշումներ չի կայացնում: 1876 թ. Սահմանադրությունը վերականգնվել է և նրա հետ՝ փոքրամասնությունների իրավունքները: Թուրքիայի հայերը այլևս վախենալու ոչինչ չունեն, քանի որ բոլոր նրանք, ովքեր մեր դեմ դավեր էին նյութում, ընկել են, շատերը գտնվում են տնային կալանքում, այլք՝ ձերբակալված են անհայտ վայրերում և արդեն նշանակվել են ընտրությունները երկու պալատների համար: Ազատ են արձակել քաղաքական բանտարկյալներին: Այսօր մեզ հաղորդել են, որ նոր վարչապետ է նշանակվել Ֆյամիլ փաշան՝ լիբերալ հայացքների տեր մարդ, որն իր նախարարների կազմում ընդգրկելու է հայի:

Հիմա իշխանության գլուխ են անցել երիտթուրքերը, և Առաջադիմություն կուսակցությունը՝ Իթթիհադը, ուզում է իր կոչն ուղղել Թուրքիայի բոլոր աքսորված քաղաքացիներին: Բոլորդ էլ կարող եք վերադառնալ, հիմա գալու են հաշտեցման, ներման, ըմբռնման ժամանակները: Նրանց համար, ովքեր հիմա մեզ հետ չեն, գալիս են հիշատակի ժամանակներ: Գալիս են և ուրախության, եղբայրության, համախմբման, արդարության և ազատության ժամանակներ: Այս ուղերձը ուղիղ հասնում է սփյուռքի բոլոր հայերին՝ աշխարհի ցանկացած վայր:

Այս բարեփոխումների մասին մեզ ոչ ոք չի պատմել, մենք այն մեր կաշվի վրա ենք զգացել: Այդ պատճառով էլ մենք այստեղ ենք այն համոզմամբ, որ այլևս հետդարձի ճամփա չկա: Երիտթուրքերը երբեք չեն ցանկացել արյունալի հեղափոխություն: Նրանցից և ոչ մեկը չի ուզում, որ թեկուզ մի կաթիլ արյուն թափվի: Այդ պատճառով էլ նախընտրեցին առանց արյան հեղաշրջում... Ճիշտ է, որ Մակեդոնիայում զոհվեցին մի քանի սպաներ, սակայն բոլորի ազատության դիմաց դա նվազագույն զոհողությունն է:

Ձեզ կարող եմ ասել, որ Կոստանդնուպոլսում մուսուլմանները ընկերակցում են հայերին այն վայրերը, որոնցում կան եղբայրական գերեզմանափոսեր՝ պաղատագին ներողություն խնդրելով, մզկիթներում խոսում են քրիստոնյա նահատակների մասին, շարունակ ծավալում են համատեղ գործունեություն՝ ի օգուտ մեր ու նրանց միջև եղբայրության: Ողջ երկրում մաքրագործման գործընթաց է տեղի ունենում, որի ընթացքում մուսուլմանները լաց լինելով մտնում են իրենց քրիստոնյա հարևանների տները՝ խնդրելով ներողություն: Իմ բարեկամներ, եկել ենք արտահայտելու մեր ուրախությունը, քանի որ ի վերջո կարծես բախտը ժպտում է Հայաստանի զավակներին: Իշխանության հասած մարդիկ կիրթ են և արդարամիտ, մարդասեր, ոչ թե երկերեսանի քաղաքագետներ, որոնք մեզ կօգնեն Հայաստանի համար հասնել կատարյալ ինքնավարության: Այդ պատճառով էլ խնդրում ենք ձեր աջակցությունը ՀՀԴ-ին: Շուտով կփոխվի այդ անունը, որպեսզի բոլորը, մինչև իսկ վերջին հայը իրեն համարի անդամակցված: Կեցցե՛ Հայաստանը:

Դահլիճում որոտաց ջերմ ծափահարություն: Ես չկարողացա ծափահարել: Մոտիկից էի ճանաչում այդ գործող անձանց և նրանց չհավատալու իմ դրդապատճառներն ունեի: Ես նստած էի Հակոբ Սարգսյանի կողքին, որը սկսեց ծափահարել, մինչև որ նկատեց իմ անտարբերությունը:

– Ինչո՞ւ չես ծափահարում... Դու այստեղ գտնվողներից ամենահայն ես, և ինձ զարմացնում է այն, որ հենց էնպես նստած ես:

Հակոբն ինձ հետ վարվում էր այն անկեղծությամբ, որ նրան թույլ էր տալիս մեր բարեկամությունը:

– Ցավալի է քեզ ասել, որ չեմ հավատում երիտթուրքերին,– սառնորեն պատասխանեցի նրան,– և կսպասեմ, որ ծափահարեմ, երբ նրանց խոստումներն իրականանան: Երանի ես սխալվեմ:

Հենց այդ պահին վերջին շարքերում մեկը տեղից ելավ: Զարմացա՝ ճանաչելով Կոստանդնուպոլսի պատրիարքի անձնական քարտուղարին: Նա ի՞նչ էր անում Փարիզում: Տեսա, որ ձեռքը բարձրացնում է խոսք խնդրելու և նորից բացարձակ լռություն տիրեց, մինչ բոլորը զարմացած շրջվում էին նրա կողմը:

– Անուն-ազգանունս Վահագն Մաթոսյան է և դեռ մի քանի ամիս առաջ Կոստանդնուպոլսի պատրիարքի՝ Մատթեոս Իզմիրլյանի անձնական քարտուղարն էի: Հասել եմ այստեղ Սոֆիայից երեկ Արևելյան ճեպընթացով: Ասեմ ձեզ, որ ես իմ կասկածներն ունեմ այն ամենի շուրջ, ինչից այս գիշեր խոսում են այստեղ...

Այդ պահին Նալպանտյանը նրան ընդհատեց.

– Ուշադրություն մի դարձրեք նրա ասածներին: Այս մարդն իր պաշտոնից ազատվել է հենց իր՝ պատրիարքի կողմից: Մի պատմիր մեզ քո հին հեքիաթները: Մաթոսյան, ամոթ ունեցիր և հեռացիր:

Մաթոսյանը փորձում էր ինչ-որ բան ասել, բայց նրան սուլոցներով և աղմկելով լռեցրին, նա բարձրացրեց ձեռքերը և այնտեղից դուրս եկավ: Ես իհարկե կուզենայի իմանալ նրա փաստարկները:

Այդ ժողովն ավարտվեց: ՀՀԴ-ի համար հանգանակություն արեցին, և բոլորն էլ, որքան կարող էին, ներդրեցին:

Հակոբին կրկին ասացի, որ այդ հարցից գլուխ չեմ հանում և նախընտրում եմ օգնել իմ ձևով: Մի քիչ նեղացավ, բայց չհամարձակվեց առարկել: Նա գիտեր, որ խնդիրը փողը չէ, այնպես որ թոթվեց ուսերը, և հավաքվածները ցրվեցին:

Հրաժեշտ տվեցի Կրիկոր Նալպանտյանին և Արամ Ջելկայանին՝ խնդրելով փոխանցել Գրիգոր Բրոչյանին իմ ողջույնները և նրան հանդիպելու ցանկությունս:

– Հեշտ չէ նրան տեսնելը: Հայտնվում է և անհայտանում, որովհետև անկախ նոր իրադրությունից՝ գիտե, որ շատ թշնամիներ ունի: Առհասարակ ապրում է Սոֆիայում և այնտեղից էլ տեղափոխվում է այստեղ ու այնտեղ, այնպես որ հնարավոր է, որ մեկ էլ հայտնվի Փարիզում. չէ՞ որ ի վերջո այստեղ են վճռվում շատ հարցեր: Մսյե դը

Լատուր, խոսելիս զգացի ձեր սառնությունը: Ես հարգում եմ ձեր դիրքորոշումը, սակայն իմ կարծիքով դուք սխալվում եք: Բանն այն է, որ Գրիգորը միշտ ինձ ասում է, որ ցավում է ձեր բռնած դիրքի համար: Նա կրկին վերադարձավ Հայոց հարցին չնորհիվ ձեզ և միշտ կրկնում է դա, հետո՝ հանգամանքների բերումով, դուք իրարից հեռացաք: Ձե՞ք կարծում, որ եկել է պահը, որ դուք կրկին դառնաք նախկին ընկերներ: Ձեզ շատ եմ խնդրում որ ջանաք հասկանալ և հավատալ: Երբեմն շատ բաներ այնպիսին չեն, ինչպես մենք կուզենայինք տեսնել: Եվ ձեզ մի բան կասեմ. եթե Հայաստանը երբևէ պատեհություն՝ չանս ունենա, հիմա է լինելու:

Հետո քայլեցի դեպի իմ տուն: Մութն ընկել էր, և անչափ հրապուրիչ էր քայլել Փարիզի զբոսայգիներով: Հանկարծ զգացի, որ ինձ հետևում են: Շրջվեցի և տեսա, որ Վահագն Մաթոսյանն է, կանգ առա և սպասեցի, որ մոտենար:

– Մաթոսյան, տեսնում եմ, որ դուք ինչ-որ բան եք ուզում ինձ ասել... Ձեզ հրավիրում եմ մի բաժակ լիմոնադի, այստեղ, այս տեռասում: Նստեցեք: Կա՞ մի բան, որին պետք է տեղյակ լինեմ:

Մաթոսյանը հոնքերը կիտեց և փնչացրեց:

– Այո, մսյե դը Լատուր, կա մի բան, բայց այնքան տարօրինակ և անհեթեթ, որ թերևս չարժեր այդ մասին ժողովում... Դրանով ես միայն ավելի կբարդացնեի ամեն բան, կարծում եմ, որ միայն դուք կհասկանաք դա:

– Հավատացեք, հետաքրքրությունից այրվում եմ, խնայեք ինձ:

Մաթոսյանը մի կումով խմեց լիմոնադը, ասես բերանը չորացել էր: Հետո վառեց մի սիգար: Ինձ թվաց, որ նա կասկածում է՝ արդյոք պե՞տք է խոսել դրանից: Ի վերջո սկսեց իր պատմությունը:

– Նախ պետք է ձեզ ներկայացնեմ իրադրությունը: Տեսեք, պատրիարքարանում մենք չփվում էինք բոլորի հետ և պարտավոր էինք իմանալ, թե որտեղ ինչ է կատարվում... և իհարկե, թե ինչ կարող է կատարվել: – Թվում էր, թե Մաթոսյանը հպարտ էր նրանով, ինչ պատմում էր: – Այնտեղ ունեինք իրազեկիչներ, տարբեր մարդիկ, որոնք այս կամ այն առիթով գալիս են պատրիարքին ողջունելու, կամ էլ ուղարկում են գրություններ, կամ նրա վստահելի մարդկանցից մեկը գալիս է պատմելու մեզ իր վարկածը: Ի վերջո, պատրիարքն ինձ կանչում էր, և երկուսով կազմում էինք յուրատեսակ մի գլուխկոտրուկ,– և թեև ձեզ համար անհավատալի կթվա,– բոլոր բացթողումները լրացվում էին: Համոզված եմ, որ Իզմիրլյանի ընդհանուր հայեցակարգն ավելի ճիշտ էր՝ իրական և ամբողջական, քան մեծ վեզիրինը կամ թեկուզ սուլթանինը: Անկասկած:

Տեսա, թե ինչպես էր հոգոց հանում իմ բարեկամը, գուցե համոզված, որ լավ թե վատ, այդ ժամանակաշրջանն իր համար վերջացել է:

– Իսկ ամենահետաքրքրականը դեռ առջևում է: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ով է եղել մեր լավագույն իրազեկիչներից մեկը վերջին տարիների ընթացքում: Ոնց չէ, երբեք գլխի չեք ընկնի, և ձեզ պետք է խնդրեմ, որ լրիվ գաղտնի պահեք, քանի որ այդ մարդը միշտ էլ լավ է պահել իրեն մեզ հետ...,– Մաթոսյանը ձայնն իջեցրեց, կարծես թե որևէ մեկը կարող էր մեզ լսել,– Աբդուլ Հուդան՝... սուլթանի աստղագուշակը: Ի՞նչ կարծիքի եք: Բայց թույլ տվեք, որ շարունակեմ պատմել ձեզ այդ մասին:

Տարիներ առաջ պատրիարքություն ներկայացավ մի թուրք. հետո պարզվեց, որ պարսիկ է: Խոսելով, խոսելով՝ պարզվեց, որ ծնվել է Թեհրանում, հայուհի մորից: Վերջում խոստովանեց, որ Հուդայի խորթ եղբայրն է: Մի քանի շաբաթ անց ինձ հատուկ հրավիրեց Աբդուլ Հուդայի տուն: Հանդիպեցի մի շատ յուրօրինակ մարդու՝ մուգ կապույտ թափանցող աչքերով, չեկ մազերով՝ բայց արդեն տեղ-տեղ ճերմակած, մեծ քթով՝ նույնիսկ հայի կամ պարսիկի համար: Ինձ ընդունեց այնպես, կարծես ես շատ կարևոր անձ էի և ինձ տարավ իր աշխատասենյակը: Այնտեղ ես համոզվեցի, որ այդ մարդը աստղագետ է, աստղագուշակ ու մոգ: Այդ վայրը՝ իր սրբություն սրբոցը, յուրատեսակ գրադարան էր, աստղադիտարան և լաբորատորիա, որտեղ նա հավանաբար հերձում էր կենդանիների: Այնտեղ գրադարակների վրա կային աստղադիտակ, թալիսմաններ, հմայիլներ, հորոսկոպներ... Ինչ իմանամ, թե էլ ինչ կար այնտեղ: Եվ հետաքրքրությունս ինձ դրդեց նրան մի անհեթեթ հարց տալ:

«Դուք հավատո՞ւմ եք մոգությանը»: Հուդան մի խորաթափանց հայացք ձգեց վրաս և չոր տոնով ասաց. «Ոչ ավելի քան դուք», թեև անմիջապես կրկին դարձավ քաղաքավարի:

«Սիրելի բարեկամ, մենք չգիտենք, թե որտեղից ենք գալիս և ուր ենք գնում, թե ինչպես սկիզբ առավ ոչինչը՝ անգոն, և մանավանդ՝ թե այն ուր կգնա: Ոչ էլ գիտակից ենք նրա կարողությունների և սահմանների մասին: Միգուցե, այո՞... Ոգիները գոյություն ունեն... քրիստոնյաները դրանց անվանում են հոգիներ, հրեշտակներ և սատանաներ, իսլամում դրանց անվանում ենք ջիններ, բայց նաև կան սատանաներ: Թույլ կտա՞ք, որ ձեզ համար արտասանեմ Ղուրանի հարյուրտասներեքերորդ սուրահը.

Ասա. «Ես ապավինում եմ ցայգալույսի Աստծուն»:
Այն բոլոր չարիքներից, որ արարել է:
Եվ չարիքից այն չարագործի, երբ գիշերով ներխուժում է:
Եվ չարիքից նրանց, ովքեր հմայելով փչում են հանգույցներում
(և թուլացնում ամեն մի վճիռ):
Եվ ամեն մի նախանձողից, երբ նախանձում է[1]:

Իսկ հաջորդը, որ հենց Ղուրանի վերջինն է, վերնագիրը՝ «Մարդիկ», այսպես է հնչում.

Ասա. «Ապավինում եմ մարդկանց Արարչին»[2]:
Մարդկանց տիրոջն ու Տիրակալին
Աստծուն և մարդկանց պաշտելիին:
Գայթակղող, գաղտնագործ չարիքից (սատանայի):
Որ մարդկանց սրտերի մեջ գայթակղություն է անում:
Եվ միևնույն է, թող որ նա լինի ջիններից կամ մարդկանցից:

Դուք կարող եք ձեր կարծիքն ունենալ մոգության վերաբերյալ, օկուլտիզմի վերաբերյալ կամ ինչպես կուզեք կոչեք այն: Ես իմ սեփական կարծիքն ունեմ և ասեմ ձեզ, որ մարդկանց կարողություններն ինձ սարսափահար են անում: Լավ, սակայն ի վերջո դուք չեք եկել այստեղ, որ դրանից խոսենք:

Շատ երկար կստացվի իմ պատմությունը հայերի հետ ունեցած իմ առնչության մասին: Բանն այն է, որ ես նրանց հանդեպ պարտքի զգացում ունեմ և իմ զբաղեցրած դիրքի առումով, թերևս կարող էի գոնե մի քիչ օգնել նրանց: Նոր բան ասած չեմ լինի, եթե ձեզ հավաստիացնեմ, որ սուլթանը աչքով աչք չունի հայերին տեսնելու: Տեսեք, հրեաներին նախընտրում է հեռու պահել, հույները՝ ի վերջո կհեռանան, բայց հայերը... շարունակ կրճտացնում է, որ ամենալավ հայը նա է, ով հողի տակ է: Նա իսկապես ատում է նրանց, թեև վախենում է, որ իրեն աչքով կտան, որևէ կախարդություն կբանացնեն կամ ռումբ կգցեն, քանի որ, ինչպես երևում է, հայերն էլ սուլթանի հանդեպ ոչ մի հարգանք չունեն:

Իրոք որ, շատ հետաքրքրական է: Տեսեք, մենք խոսում ենք հավատացյալների խալիֆի մասին, ոչ ավել, ոչ պակաս մարգարեի հետնորդի մասին և, այնուամենայնիվ, ձեզ ասեմ, որ նա ավելի շատ հա-

[1] *«Սուրբ Ղուրան», էջ 1216, սուրահ «Ալ ֆալղ» թարգմանությունը Էդուարդ Հախվերդյանի, 2006 թ., Երևան:*
[2] *«Սուրբ Ղուրան», էջ 1216, սուրահ «Ալ-նաս»:*

վատում է իր աստղագուշակին, քան Հայտնությանը և այն ասեմ, որ սուլթան Աբդուլ Համիդը ոչ մի քայլ չի անում, մինչև որ ես չուսումնասիրեմ աստղերի ազդեցությունը իր ապագայի վրա: Քանի որ սուլթան Աբդուլ Համիդը սարսափի ու վախի, մշտական մղձավանջների մեջ է՝ համոզված, որ ցանկացած պահի նրան կարող են սպանել, իրեն չրջապատողներից և ոչ ոքի չի վստահում, իր կերակուրը թունավորելու վախից փորձել է տալիս, իր ապարանքից նա հեռանում է միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում... Ասեմ, որ նա դժբախտ մարդ է, չարակամ, դաժան, և իր ներսում՝ հոգում կրում է դժոխքը և նա գիտե այդ»:

Մաթոսյանը լցրեց իրեն ևս մի բաժակ լիմոնադ, որը հաճույքով խմեց նախքան իր հուզիչ պատմության շարունակությունը:

– Ներող կլինեք, եթե ես չափից ավելի եմ ծավալվում, բայց ինձ թվաց, թե կարևոր է, որ դուք իմանաք, թե ինչ ձևով էր աստղագուշակը՝ Աբդուլ Հուդան ազդում սուլթանի վրա և որն է այդ մարդու միտքը: Հուդան ինձ պատմեց, որ անցյալ տարվա վերջերին սուլթանը ընդունելություն էր տվել երիտթուրքերին: Դոլմաբաղչե էին եկել Ահմեդ Ռիզան, դոկտոր Նազրմը և Բեհաէդդին Շաքիրը, Հուդան նույնպես՝ սուլթանի հատուկ խնդրանքով, մեծ վեզիրը՝ Ֆերիդ փաշան և Քյամիլ փաշան, որ այն ժամանակ նախարար էր առանց պորտֆելի:

Հավաքվեցին մի առանձին սրահում՝ փոքրիկ դահլիճում, որի պատուհանները նայում են Բոսֆորին, վերին հարկում: Սուլթանը մտնում և դուրս էր գալիս իր հատուկ սենյակներից, դրանց մուտքը վերահսկում էին ներքինիները, որոնց նա լիովին վստահում էր: Միայն այնտեղ է նա իրեն ապահով զգում և դրանով չբավարարվելով ստիպում է լրտեսել իր այցելուներին, մինչ նրանց մի սենյակից մյուսն են տանում՝ լսելով ամենաչնչին իսկ մեկնաբանությունը, հետևելով նրանց պատերի և առաստաղի վրա բացված հատուկ աննշան ճեղքերից: Այս պալատը հազար աչք ունի, և սուլթանի աչքից ոչինչ չի վրիպում:

Սուլթանն առաջին անգամ էր հանդիպում երիտթուրքերի հետ դեմ առ դեմ: Բավականին երկար ժամանակ սպասեցին, մինչև որ դահլիճ մտավ Աբդուլ Համիդը: Երեքն էլ համբուրեցին նրա ձեռքը: Ի վերջո, կարծես համաձայնության եկան, որ սուլթանը մնալու է իր պալատում... այն պայմանով, որ գործադիր իշխանությունը իրականացներ Իթթիհադի կառավարությունը, որի նպատակը ցենտրալիզմն էր. օսման ազգի գերիշխանությունը և փոքրամասնությունների թուրքացումը:

Անցյալ տարվա կեսերին պալատական Յըլդըզ Քյոշք գվարդիայի սպաները չենթարկվեցին զինվորական ծառայությունը թողնելու հրամանին: Նավատորմիղի սպաները անմիջապես հետևեցին նրանց: Պալատում գնալով մեծանում էր անհանգստությունը, և դա էլ ստիպեց, որ սուլթանը կամենար իր թշնամիների հետ համաձայնության գալ: Պետք է համոզեր նրանց, խոստանար ինչ որ ուզենային, միայն թե չկորցներ իշխանությունը: Ժողովին շատ բաներից խոսեցին, բայց ես կասեմ այն, ինչ մեզ է վերաբերում, ճիշտ և ճիշտ սուլթանի բառերով:

«Երբ դուք խոսում եք քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ հարգանքից, դա վերաբերում է հայերի՞ն: Իմ կարծիքով հայերը մեզ միշտ դավաճանել են, նրանք են երկրի անկայունության իսկական մեղավորները: Ձեզ երբեք չի հաջողվի նրանց օրինավոր քաղաքացիներ դարձնել: Սխալվելու եք...»:

Այդտեղ խոսքով հանդես եկավ դոկտոր Նազրմը. «Ձերդ գերազանցություն, ո՛չ հայերը և ո՛չ էլ հույները մեր երկրի ապագայի հետ որևէ առնչություն չեն ունենա: Դրանով մենք կզբաղվենք, նրանց մենք համարում ենք ապստամբ և դավաճան, որոնք ամեն անգամ վազում են Եվրոպա իրենց հեքիաթները պատմելու: Իրենց խղճերը՝ կենդանի պահպանել մի անհեթեթ լեզու, իրենց ազգն ու իրենց պատմությունը, չեն համընկնում թուրք ժողովրդի ձգտումների հետ: Այստեղ կլինի մեկ ազգ՝ օսմանյանը և միակ լեզուն՝ թուրքերենը»:

Այդտեղ ավարտվեց ժողովը, և Իթթիհադի անդամները լքեցին պալատը՝ համոզված, որ սուլթանը նրանց դեմ ոչինչ չի կարող անել, քանի որ բանակի առավելագույն մասը պատկանում է երիտթուրքերին: Բայց մի բան բացարձակապես պարզ էր: Հայերը ոչ միայն երկրի ապագայի հետ կապ չունեն, այլև ընդհակառակը՝ նրանց մտադիր են ոչնչացնել կամ արտաքսել: Չկարողացա այս մասին խոսել ժողովի ընթացքում, սակայն գիտեմ, թե դուք ով եք և այս տեղեկությունը իմ կարծիքով համընկնում է ձեր մտածածի հետ: Կներեք ձեզ զբաղեցնելու համար: Մնաք բարով և չնորհակալություն ինձ լսելու համար:

Ժամանակ չունեցա անգամ նրան ասելու, որ իր պատմածն ինձ համար չատ կարևոր էր: Այդ փոքրամարմին մարդը արագ քայլերով անհետացավ Փարիզի գիշերվա մեջ: Նրան այլևս չտեսա, բայց միշտ նրան չնորհակալ կլինեմ իր վստահության համար: Մինչ տուն էի վերադառնում, խորհեցի այն բանի չուրջ, որ Իթթիհադի խարդախ ռազմավարությունն արդեն գործի էր դրվել և իրենց իսկ հայերի միջև միությունն այլևս անհնարին էր լինելու:

ՕԳՈՍՏՈՍ 1908 – ՓԵՏՐՎԱՐ 1909

37. ԿՐԿԻՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

Թուրքիայում տիրող իրավիճակը Ֆրանսիայում ընկալվում էր որպես հեռավոր մի բան, որը ոչ մի կերպ չէր կարող ազդել ֆրանսիացիների կյանքի վրա, Փարիզը շարունակում էր մնալ որպես աշխարհի մշակույթի փարոս, իսկ Ֆրանսիան՝ այն երկիրը, որը թելադրում էր նորաձևությունը, լինելով Արևելքի և մանավանդ Բարձր Դռան բանկիրը: Բանակցությունները, բնականաբար, տարվում էին Թուրքական կառավարության հետ, սակայն նաև հարաբերություններ էին պահպանում ընդդիմության ներկայացուցիչների՝ մանավանդ Իթթիհադ կուսակցության հետ, քանզի ակնհայտ էր, որ նրանք էին լինելու հերթական իշխողները:

Ինչ վերաբերում է ֆրանսիական հասարակական կարծիքին, շարունակ հետևում էի երկրի ներսում ծավալվող իրադարձություններին, գերմանացիների սին հոխորտանքներին, անգլիացիների ընչաքաղցությանը: Մարդիկ չլացած էին Միացյալ Նահանգներով, որը դարձել էր առաջադիմության և բարեկեցության երկիր՝ գայթակղելով ոչ միայն Եվրոպայի ու Ասիայի վտարանդիներին, այլ նաև բանկիրների, արվեստագետների, դասախոսների, որոնք նրանում տեսնում էին ընդարձակ, բնական վիթխարի հարստությունների տեր երկրի, որն ընդունակ էր օթևան տալ ողջ մարդկությանը, եթե դրա հարկը լիներ:

Մյուս կողմից՝ արդյունաբերականացումը, որ նոր էր սկսվել, թվում էր թե սահման չուներ: Ավիացիայի զարգացումը, ավտոմեքենաների սերիական արտադրությունը, որն սկսում էր ներխուժել քաղաքները, սուզանավերի ապշեցուցիչ տարողունակությունը սպասում էին վեցերորդ մայրցամաքի գաղութացմանը: Հաղորդակցության միջոցների առաջընթացն իր վերջին հրաշքով, որը կոչվում էր հեռախոս, վիթխարի նավերի կառուցումը, որն իր հերթին մեծ նավահանգիստների և ճանապարհների անհրաժեշտություն էր ծնում, կյանքի նոր՝ հարմարավետ կեցության գաղափարի ձևավորումը միջին խավի կողմից, այն ամենը, ինչ կոչվում էր տեխնիկական հեղափոխական առաջընթաց, փոխում էր պատմության ընթացքը, ամեն օր ձևափոխում էր աշխարհագրությունը՝ կյանքի կոչելով 1900 թ. համաշխարհային ցուցահանդեսին տրված խոստումները որպես իրական փաստեր՝ շարժելով եվրոպացիների զարմանքը:

Այդ ամենը ստեղծել էր կյանքը գործականորեն ընկալելու իմաստ: Ընդամենը քսանհինգ տարում՝ XIX դարի վերջին տասնհինգ տարիներին և XX դարի առաջին տասնամյակում, գետնի տակ էին անցնում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «մարդկային զգացմունքներ», «ալտրուիզմ», «այլախոհություն» և շատ ավելի խոր՝ ռոմանտիզմից և հերոսությունից մնացած հատկությունները:

Փարիզում վերջին տարիներին միայն խոսում էին ավտոմեքենաներից, սիրուհիներից, գործարքներից, փողից և պատերազմից: Այո՛, թեև ոչ ոք մատնացույց չէր անում Գերմանիային, այդուհանդերձ երբ խոսում էին Բալկաններում տիրող կոնֆլիկտներից, Արևելքի խնդրից, Ռուսական կայսրության անկայուն վիճակից, բոլորը հայացքն ուղղում էին դեպի Բեռլին:

Ինչ վերաբերում էր Եվրոպայի հիվանդ մարդուն, այսինքն՝ Թուրքիային, հասարակական կարծիքը տեսակետ չուներ: Սուլթանի հնարավոր անկումը ուրիշ շատ բաների հետ մեկտեղ դիտվում էր որպես անկայունության գործոն: Ի՞նչ կպատահեր Թուրքական կառավարությանը տրամադրված վիթխարի վարկերին. դրանց մեծ մասը երեսուն, քառասուն կամ հիսուն տարի ժամկետով էին: Ո՞վ ուներ առավել հնարավորություններ տիրանալու կայսրության մնացորդներին... Գերմանիան, Ռուսաստանը և Անգլիան թվում էին ավելի մրցունակ, քան Ֆրանսիան:

Արտգործնախարարը 1909 թ. փետրվարի սկզբներին ինձ հրավիրեց ժողովի՝ ստեղծված իրադրության շուրջ խոսելու: Այնտեղ հանդիպեցի Ժան Կառնոյին, որն ինչպես միշտ հրաչալի իրազեկված էր:

– Պետք է տեսնեիր սուլթան Աբդուլ Համիդի վերջին շաբաթների ընթացքում կերպարանափոխվելը: Հիմա միայն բարեփոխումներից է խոսում, դարձել է Սահմանադրության գլխավոր անձն ու կողմնակիցը, որը ձգտում է Թուրքիայի առաջընթացին:

Սրիկա, խարդախ: Մինչև հիմա ջարդում, թալանում և սպանում էր նրանց, ովքեր իրեն չէին քծնում և հանկարծ դառնում է մարդու իրավունքների պաշտպան, այրիացած կանանց բարերար, որբերի ու քրիստոնյա փոքրամասնությունների հայր... Այդ մարդն իմ տեսած ամենամեծ խարդախներից է: Այնուամենայնիվ, մեր կառավարությունը շարունակում է հավատալ նրա հնարավորություններին...

Կարծում եմ, որ նա այլևս ոչինչ չի կարող անել. շատ-շատ կարողանա իր կյանքը փրկել... Սակայն ես ընդամենը Ֆրանսիական Հանրապետության մի համեստ ծառայող եմ և պարտադրված իմ կառավարությանը: Քո վիճակն ավելի լավ է. ի վերջո, դու անկախ մարդ ես, քո տեսակետի տերը: Ինչպես հասկանում ես, սուլթանն ընդամենը մի խամաճիկ է:

Ինձ ասել են, որ լուծարել են գաղտնի ոստիկանությունը: Հիմա այդ ամենը կազմավորում է Իթթիհադը՝ իր վստահելի մարդկանցով: Ինչ վերաբերում է հայերին, նրանք կարծես թե հավատացել են երիտթուրքերի բարի կամեցողությանը, բայց մեր հետախուզական ծառայությունները մեզ ուրիշ բան են հավատացնում: Երանի սխալվենք: Ես գիտեմ, Անրի, թե դու ինչ ես մտածում և ասեմ քեզ, որ քեզ հետ համաձայն ենք, թեև հիմա գլխավոր խնդիրը գերմանացիներին զսպելն է: Եվ պետք է խոստովանեմ քեզ, որ խիստ անհանգստացած ենք, քանի որ ընդամենը երկու տարվա մեջ նրանք մեզ լավ նեղն են գցել: Տեղեկացված ենք Իթթիհադի առաջնորդների հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին, իսկապես, դոկտոր Նազըմը իր մի քանի համագործակցողների հետ գնացել էր Գերմանիա, թեև այդ մասին չուտով քեզ մանրամասն կտեղեկացնեմ, քանի որ մեր անձնակազմը չուտով ստանալու է մի ծածկագրված հաղորդագրություն: Դու գուցե և իմանաս դա. ամեն դեպքում չուտով տեղի կունենան շատ բաներ:

Ընդամենը տասնհինգ օր անց ստացա գաղտնի տեղեկատվության ծածկագրի պատճենը, որի մասին ինձ ասել էր Ժան Կառնոն: Ո՞վ էր մեզ ուղարկելու եթե ոչ Միդհատ Շյուքրուն, որը երկար ժամանակ էր, ինչ գնված էր մեր հետախուզական ծառայությունների կողմից:

ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
Բեռլին, 12 հոկտեմբերի 1908 թ.
Ռեյխստագ – դոկտոր Գյոպպերտի գրասենյակ

Իթթիհադ կուսակցության ներկայացուցիչներ.
Դոկտոր Նազըմ
Դոկտոր Բեհաէդդին Շաքիր
Սուլեյման Ֆեհմի
Իսմայիլ Ջանփոլադ
Միդհատ Շյուքրու

Գերմանական Կառավարության ներկայացուցիչներ.
Գեներալ Ֆրից Բրոնզարտ ֆոն Շելլենդորֆ, պրոֆեսոր Փաուլ Ռորբախ, Հանս Ֆրեյիեր ֆոն Վանգենհայմ
Արտաքին գործերի նախարարություն, գեներալ մայոր,
Հանս Հուման գերմանական դեսպանատան զինվորական խորհրդատու Թուրքիայում, դոկտոր Օտտո Գյոպպերտ՝ Արտգործնախարարություն, գերմանական դեսպանատան խորհրդական Թուրքիայում

Հիմնական ելույթները

Դոկտոր Գյոպպերտ – Ողջունում ենք սահմանադրական Թուրքիայի ներկայացուցիչներին: Բարի գալուստ ռեյխստագում: Ես ինձ թույլ եմ տալիս ասել, որ թուրք ժողովրդին համարում ենք որպես մեզ ամենամտերիմ և թանկագին բարեկամ: Խոսքը տալիս եմ գեներալ Բրոնզարտին.

Գեներալ Բրոնզարտ.– Համամիտ եմ դոկտոր Գյոպպերտի ասածներին: Կանցնեմ ուղղակի հարցի էությանը: Մենք պետք է խորացնենք հարաբերությունները Գերմանիայի և Օսմանական կայսրության միջև: Վերջին իրադարձությունները՝ Բուլղարիայի անկախության հռչակումը, Բոսնիայի և Հերցոգովինայի միակցումը Ավստրո-Հունգարիային, Կրետեն Հունաստանին, մեզ շատ են անհանգստացնում: Գերմանիան հանդես է գալիս հանուն ամբողջական Թուրքիայի, մենք չպետք է լինենք նրա մասնատման վկաները: Ըստ մեր տեղեկատվության հայերը հավակնում են մեծ ինքնավարության, որից անմիջապես հետո կպահանջեն անկախություն: Արաբները՝ քրիստոնյա մարոնիտները, դրուզները և այլ փոքրամասնություններ խոսում են մեծ և անկախ Սիրիայի մասին: Ալբանացիները ուր որ է ուզում են ապստամբել: Պետք է իմանաք, որ Գերմանիան թուրքերի նոր կառավարության հետ մեկտեղ կհամագործակցի՝ դրանից խույս տալու համար: Ձեր ձեռքերն ազատ են: Մենք չենք միջամտի և թույլ չենք տա, որ եվրոպական այլ տերություններ դա անեն: Դոկտոր ֆոն Վանգենհայմը կստանձնի այդ քաղաքականության պատասխանատվությունը:
Ինչ վերաբերում է Ռորբախին և Գյոպպերտին, նրանք հատուկ հրահանգավորում կստանան այդ հարցը լուծելու համար: Գերմանիան կապահովի զինվորական ուսուցումը, սպառազինումը, ռազմամթերքը, պարենամթերքը, նավերը և սուզանավերը: Կտրամադրի առնվազն երկու նոր հածանավ և երկու ռազմական սուզանավ տակտիկական խորհրդականներով: Կստանձնի ֆինանսավորումը, հետախուզական հատուկ ծառա-

յությունները, թուրքական պառլամենտի դեպուտատների համար քաղաքական գիտությունների դասընթացը, ռազմական նյութատեխնիկական բազայի ստեղծումը՝ համապատասխան խորհրդատուներով և արդյունավետ համագործակցումը, հասարակական կարծիքի վերահսկումը Թուրքիայում, Գերմանիայում, Ավստրիայում և Եվրոպայի այլ երկրներում:

Այդ մասին գրավոր որևէ փաստաթուղթ չենք տրամադրի: Կօգտվենք կոդավորված ծածկագրերից, որոնք անմիջապես պետք է ոչնչացվեն: Շնորհակալություն ուշադրության համար:

Դոկտոր Նազըմ.– Շնորհակալություն ձեր խոսքերի համար: Մենք համոզված էինք, որ Գերմանիան կըմբռնի մեր արդարացի որոշումները: Թուրքիան երբեք չի հիասթափեցնի այս օրինակելի ազգին: Մենք ամեն անհրաժեշտ բան կանենք, որպեսզի ունենանք համախմբված երկիր և վերջնականապես կազատվենք նրանցից, ովքեր փորձում են կործանել այն: Ձեր երկրի եղբայրական օգնությամբ մենք կհասնենք դրան: Հրահանգները, ուղերձները և կապերը կիրականացվեն այստեղ ներկա գըտնըվողներից որևէ մեկի միջոցով: Կրկին հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

Այստեղ ավարտվեց Շյուքրուի զեկուցումը: Այն բավականին հըստակ էր, որպեսզի ընկնեի դողէրոցքի մեջ և որոշեցի խոսել Ժան Կառնոյի հետ: Նա ուղարկել էր ինձ այդ զեկուցումը՝ այն մտադրությամբ, որ իմանա իմ կարծիքը: Ես այրեցի այդ փաստաթուղթը մոխրամանում, իսկ կայծերը հանգցրի մատիտով: Զեկուցումն ամբողջապես տպվեց իմ հիշողության մեջ: Երկու ամիս անց Ժան Կառնոյին ուղարկեցի մի գրություն, և ինչպես այլ անգամներ, հանդիպեցինք Գրանդ Օթել ռեստորանում: Ժանը դարձել էր իմ լավագույն բարեկամներից մեկը, և մենք բավականաչափ գիտեինք միմյանց, որպեսզի խոսեինք իրար հետ ամենայն վստահությամբ: Ինձ հարկավոր էր իմանալ, թե ինչ կարծիքի է Արտգործնախարարությունը որևէ քայլ ձեռնարկելուց առաջ:

Ժան Կառնոն հայտնվեց անակնկալով: Նրան ընկերակցում էր Անտուան Մոնժը, Կոստանդնուպոլիս կատարած առաջին այցելության իմ հին բարեկամներից մեկը: Աղմկալից զրկախառնումներից և իրար ողջունելուց հետո, քանի որ տարիներ ի վեր իրար չէինք տեսել, ինձ թվաց, թե պետք է խոսենք անցած գնացած ժամանակներից, բայց պարզվեց, որ Անտուանը նախարարության հետախուզական ծառայությունների նոր պետն է, ինչի շնորհիվ կարող էինք ազատ խոսել: Հրաչալի ընթրելուց հետո, քանի որ Գրանդ Օթելի չեֆ խոհարարը անկասկած Փարիզում լավագույնն էր այդ ժամանակաշրջանում, Ժանը իսկույն անցավ գործին.

– Անտուան, դու ինձանից լավ գիտես նախարարության՝ Անրիի հետ ունեցած բացառիկ հարաբերության մասին: Հիմա նա մեր հատուկ խորհրդականն է Մերձավոր Արևելքի գծով և Օսմանյան կայսրության լավագույն մասնագետներից մեկը, մի մարդ, որը խորապես գիտե Հայկական հարցը: Նրա ամուսնությունը Մարիցա Փիլիպոսյանի հետ նրան կապել է այդ հարցին և նա վայելում է հիմնական առաջնորդների վստահությունը, ուրեմն կարող ենք խոսել առանց վերապահումների, այնպես չէ՞:

– Համաձայն եմ:

Անտուան Մոնժը պահպանվել էր շատ ավելի լավ, քան երկուսս: Մազերը մուգ էին, բացառությամբ մի երկու ճերմակած մազերի, դեմքն արևահար, կարծես հենց նոր էր վերադարձել Միջերկրականից: Նրան այդ պաշտոնին նշանակել էին՝ ելնելով ոչ թե անձնական լայն կապերից, այլ իր մտավոր հզոր պոտենցիալից, որն անչուշտ ընձեռելու էր մեծ հաջողություններ Արտգործնախարարությանը: Հետևաբար խոսելու էինք լիովին անկեղծ, մանավանդ, որ նրանց ամենավստահելի մարդկանցից մեկն էի:

– Տեսեք: Երեքս էլ փորձառու ծեր չուն ենք: Իհարկե, ես սիրով եմ այդ ասում և հարկ չկա, որ ձեզ բացատրեմ, որ շատ բաներ երբեք այն չեն, ինչ թվում են, մանավանդ երբ դա վերաբերում է Օսմանյան կայսրության անկմանը: Խաղի մեջ դրված են այնքան շահեր, այնքան մասնակիցներ, այնքան երկրներ են իրար մեջ բաժանում այդ տորթը, այնքան ստեր ու կիսատ-պռատ ճշմարտություններ են շրջանառվում, որ ոչ ոք ի վիճակի չէ կանխատեսել իրադարձությունների հետագա ծավալումը: Հնարավոր է, որ երեքս այստեղ նստած,– որ միասին քսանհինգ տարի առաջ եկանք Կոստանդնուպոլիս և մեր ժամանակի մեծ մասը նվիրաբերեցինք այդ տարածաշրջանի ուսումնասիրմանը,– պատկանում ենք այն մարդկանց փոքրաթիվ խմբին, որոնք իսկապես հասկանում են այդ խնդիրը:

Այսպիսով ունենք մի կայսրություն, որը ցանկացած գնով նավաբեկությունից ուզում է փրկել իր մնացորդները: Քանի դեռ նրանց հաջողվում էր դաշույնը ձեռքներին արշավելով, քարշ տալով իրենց հնադարյան թնդանոթները, արյամբ և հրով նվաճել նոր երկրներ, ամեն ինչ լավ էր: Նրանք տիրապետում էին նվաճելու արվեստին, գործածելով հնագույն ռազմավարական մեթոդները. ահաբեկչու-

թյունը, բոնությունը, թալանը, սպառնալիքը: Ծախվող ադմինիստրացիայի սահմանած ծանրագույն հարկերով, բացարձակ արհամարհանքով բոլոր նրանց հանդեպ, որոնց արյունը օսմանյան չէ, անխտիր պատիժներով, շատ դեպքերում սպանդներ գործադրելով... արտոնյալ դասի հովանավորչությամբ, ի վերջո՝ մի կրոնի միջոցով, որն իր ստեղծման օրից հակամարտության մեջ է քրիստոնեության՝ մեր միասնության գլխավոր տարրի հետ ստեղծվել է անկայունություն: Այդ ամենը խանգարել է, որ նա ևս դառնա Եվրոպայի երկրներից մեկը, որտեղ ահով են հիշում «Թուրքին»: Համոզված եմ, որ եթե նրան չկանգնեցնեին Վիեննայում, հասած կլինեին Փարիզ, և գուցե այդ դեպքում մենք Էյֆելի աշտարակի փոխարեն կունենայինք երեք հարյուր մետրանոց մի մինարեթ:

Բայց այդ կայսրությունը հիմա քայքայվում է: Արաբիայում Թուրքերի կյանքը դարձրել են անհնարին, Միջագետքում անգլիացիները ուզում են նրանցից ազատվել, Սիրիայում մինչև կոկորդը կուշտ են, որ իրենց չեն թողնում ապրել միջերկրյա ազատ ոգով: Եգիպտոսում նրանցից միայն հին հուշեր են մնացել, Բալկաններում սկսվել է մի պատերազմ, որը բոլորիս գուցե իր հետևից տանի:

Ինչ վերաբերում է Հունաստանին, շատ է անհանգստացած Փոքր Ասիայում եղած իր հայրենակիցներով..., որը ոչ այլ ինչ է, եթե ոչ հելլենական աշխարհի սիրտը: Լավ, իսկ մենք՝ եվրոպացիներս, մենք որտե՞ղ ենք գտնվում, ի՞նչ ենք անում մենք այս փչոտ հարցի կապակցությամբ: Ձեզ կպատասխանեմ հակիրճ: Ոչինչ: Ուզում եմ ասել, ոչ մի դրական բան: Գերմանիան իր բոնած դիրքով մինչև վերջ չի հասկանում իր վիճակը, քանի որ իր գիտնականները, մտավորականները, զինվորականները, ֆինանսիստները մի բան են կրկնում. «մենք արտոնյալ ազգ ենք», «ամենալավն ենք»... և մեծ թերարժեքությամբ են տառապում՝ նայելով անգլիական կայսրությանը կամ էլ թեկուզ մեզ... Վերջերս մի գեներալ ասաց ինձ, թե հնարավո՞ր էր արդյոք, որ իսպանացիները կամ պորտուգալացիները ընդունակ լինեին ստեղծել պատմական նման ծավալի կայսրություններ: Ձեր կարողանում հասկանալ կամ էլ ի վիճակի չեր ըմբռնելու, թե արտաքնապես թույլ այդ մարդիկ՝ այդ ժամանակվա մշակույթից զուրկ, զինված մի երկու ժանգոտած ձողերով, ոնց էին կարողացել նվաճել աշխարհի մեծ մասը... Մինչդեռ մենք՝ կիրթ, ուսյալ, էլեգանտ և խելացի ֆրանսիացիներս, նայե՛ք, թե ուր ենք հասել: Դեռ մի լուրջ ֆինանսական խնդիր էլ՝ վրան ավելացրած: Ոչ ոք մեզանից ավելի ռիսկի չի դիմել, այլ կերպ ասած՝ Թուրքիայի արտաքին պարտքի կեսից ավելին Ֆրանսիայինն է:

Քառորդ դար առաջ մենք թուրքական մոդելի օգտին մեծ գումարներ դրեցինք, որը չիրականացավ, քանի որ առաջընթացը և արդիականացումը չեն կարող պարտադրվել քաղաքակրթության այնպիսի միջավայրում, որը ձևավորվել է դարերի ընթացքում ուծացման, աննշան փոփոխությունների, իշխանավորներին հնազանդվելու պայմաններում: Բայց ես սկսեցի չատախոսել, թույլ տվեք անցնել բուն նյութին:

Ի՞նչ է պատահելու երիտթուրքերի շարժմանը: Կլինե՞ն նրանք այս հեղափոխության յակոբինները, կլինի՞ Նազըմը Մարատ, իսկ այդ Թալեաթը, որի մասին այդքան խոսում են, Ռոբեսպիեր, ասեմ, որ ես վատատեսորեն եմ նայում այդ հեռանկարին: Մեր գաղտնի տեղեկության համաձայն՝ մեր առջև ծայրահեղ ազգայնամոլականներ են, որոնք ջանալու են ազատվել, հնարավորին չափ չուտ, քրիստոնյա փոքրամասնություններից: Իթթիհադը խաբում է հայերին, ընդ որում ինչպես ՀՀԴ-ին, այնպես էլ Հնչակյաններին... նաև մնացած բոլոր կուսակցություններին, ճյուղավորումներին, խմբավորումներին, միավորումներին և մնացած բոլորին:

Հայերի խնդիրն այն է, որ նրանցից յուրաքանչյուրը հավակնում է ունենալ իր սեփական տեսակետը. ի վիճակի չեն համախմբվել: Նման իրավիճակում անհնարին է օգնել նրանց, քանի որ որոշակի համաձայնության գալուց երկու թե երեք ամիս անց, հանդիպում ենք նոր առաջնորդների հետ, որոնք հերթական անգամ գալիս են նախկին խմբակցությունից անջատվելուց հետո: Անկեղծորեն ասեմ ձեզ, որ նրանք դառնորեն բողոքում են թուրքերից, բայց իրենք չատ քիչ բան են անում իրավիճակը փոխելու համար, քանի որ միշտ վիճում են, ձայնը գցում գլուխները, համաձայնության չգալով: Նրանց ուժը ճարտասանությունն է: Հեշտ չի լինի նրանց համոզել, որ յուրաքանչյուրը չի կարող թույլ տալ սեփական գաղափարները պնդելու չքեղությունը: Բայց գուցե դա իրենց ազգային բնավորության մասերից է՝ այն, որ նրանց ասիական ոգին թույլ չի տալիս գործել եվրոպացու պես: Մեզ թվում է, որ մոտակա ամիսներին չատ բաներ տեղի կունենան և մենք պետք է ուշադիր հետևենք այդ ամենին:

Անտուան Մոնժը նայեց Ժան Կառնոյին՝ ասելով.

— Դու արդեն նրան ասե՞լ ես... Դե լավ, լսիր, ուրեմն ուզում ենք, որ դու վերադառնաս Կոստանդնուպոլիս, որպես դեսպանատան խորհրդական, միայն մի քանի ամսով, քանզի չատ կարևոր է, որ դեսպանը տեղեկացված լինի գալիք իրադարձությունների մասին: Գիտենք, որ չատ լավ հարաբերությունների մեջ չէինք սուլ-

թանի կառավարության հետ, բայց հիմա շատ բաներ են փոխվել: Դու ամենից լավ ես տեղյակ ներկա իրավիճակին, և Իթթիհադի մարդիկ քեզ հարգում են..., թեև դա շատ հարաբերական է: Մյուս կողմից՝ չե՞ս ուզում գնալ որպես դեսպան, հիմա գուցե այլ կարծիքի ես: Քո կինը հաստատ բոլորիցս կուշտ է, բայց մենք կրկին քո կարիքն ունենք:

Երբ տուն վերադարձա և Մարիցային պատմեցի նախարարության նոր առաջարկի մասին, նա ինձ նայեց տխրությամբ ու բարկությամբ: Ինձ հարգում էր չափից ավելի, որպեսզի ինձ ասեր, թե ինչ պետք է անեի, թեև մյուս կողմից՝ նա նաև հասկանում էր իմ վիճակը: Ակնհայտ էր, որ ինձ ընկերակցել չէր կարող, և հավանաբար դա էր նրան ամենից շատ անհանգստացնում:

Իմ ուղևորությունը նախատեսված էր մարտի սկզբներին, և այդ շաբաթն անցավ աննկատ, նախապատրաստական աշխատանքներում, նախարարության ժողովներում՝ հրահանգները կոնկրետացնելով և առօրյա խնդիրներով: Զեմ Թաքցնի, որ նյարդայնացած և անհանգիստ էի, ոչ այնքան ինձ սպասվող բարդ իրադրությունից, որքան վերադառնալուց մի երկիր, որն իմ մեջ անջնջելի հետք էր թողել:

ՄԱՐՏ 1909 – ՕԳՈՍՏՈՍ 1910

38. ՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԱՎԱՐՏԸ

Ընդամենը չորս օրում Արևելյան ճեպընթացը Փարիզից ինձ տեղափոխեց Կոստանդնուպոլիս: Երբ գնացքից իջա, զգացի, թե ինչպես էր բարախում սիրտս: Ժամանակն անցնում էր խելակորույս արագությամբ, տասներեք տարի առաջ էի թողել այդ երկիրը: Շատ բաներ էին տեղի ունեցել, սակայն յուրահատուկ բույրը, որ ծովի հոտի խառնուրդ էր, հինավուրց քարերը, չուկաների համեմունքները իմ մեջ արթնացրին տխուր հիշողություններ: Կյանքն ընթանում էր արագ, և չուտով լրանալու էր կյանքիս կես դարը:

Նախարարության նոր նախագծի համաձայն՝ այս անգամ վերադառնում էի որպես պետական քարտուղար Միջին Արևելքի հարցերով: Իմ առաքելությունը կայանում էր նրանում, որ գնահատեի իրադրությունը հենց մրրիկի սրտում, փորձեի վերահսկել Ֆրանսիայի դիրքորոշումը փոփոխվող և անկանխատեսելի իրադարձությունների հանգամանքներում:

Սկզբում ինձ առաջարկել էին արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը Կոստանդնուպոլսում: Հետո, զրուցելով համաձայնվեցինք պետական քարտուղարի պաշտոնի վրա: Երբեք ինձ դուր չէր եկել պաշտոնավարել պետական ծառայություններում, ոչ էլ կախված լինել սահմանված նորմերից: Գուցե դա էր պատճառը, որ ես սիրում էի լրագրողի մասնագիտությունը: Բայց դա էլ էր մնացել հետևում, թեև կրկին ինձ հուզում էր այն բարդ առաքելությունը, որ պետք է իրագործեի:

Ինքը՝ նախարարը լավ գիտեր իմ դիրքորոշումը: Գիտեր, որ ես հայերի կողմից էի, ինչպես ուրիշ շատ մտավորականներ, ֆինանսիստներ և ֆրանսիական քաղաքացիական հասարակության հայտնի դեմքեր, ովքեր չէին կարող ընդունել Թուրքիայում ուրիշ ժողովուրդների նկատմամբ բռնությունը, ոչ էլ մշտական նվաստացումները՝ «մարդու իրավունքների» խախտումները. այնքան նուրբ և բարդ բան, որում Ֆրանսիան չէր կարող հրաժարվել իրավունքի և մշակույթի հարցերում առաջատար դերակատարությունից, որն իր վրա դրել էր պատմությունը:

Զուտ սրանք էին այն դրդապատճառները, որոնք ստիպեցին կրկին վերադառնալ Կոստանդնուպոլիս: Երբ կառքը ինձ տանում էր դեսպանատուն, թվում էր, թե այդ քաղաքը թողնելուց հետո, մի ակնթարթ էր անցել, ոչ թե տասնհինգ տարի: Արտաքուստ ամեն ինչ մնացել էր նույնը, թեև գիտեի, որ ամեն ինչ փոխվել է:

Հրաժարվեցի, որ ինձ դիմավորեին չքահանդեսով: Դա անախորժություն պատճառեց դեսպանին, բայց նա թերևս պետք է ընդուներ կյանքն ըմբռնելու իմ յուրահատուկ կերպը:

Դեսպանն ինձ տեղեկացրեց իրադրությանը: Իր կարծիքով սուլթանը խորամանկորեն մանևրել էր՝ փորձելով ժողովրդին թեքել իր կողմը: Թեև այդ պահին միայն մի բան էր աչքի զարնում՝ տնտեսական իրավիճակի հետևանքով անհանգստություն և դժգոհություն, որևէ հեռանկարի բացակայություն:

Մեկ ամսվա ընթացքում երկու կողմերից էլ ստացա հաղորդագրություններ: Իթթիհադի անդամները ցանկանում էին ապահովել իրենց համար Ֆրանսիայի օգնությունը՝ անկախ նրանից, որ համագործակցում էին Գերմանիայի հետ: Նրանք նաև մեր երկրի կարիքն ունեին, եթե ուզում էին հուսալի ապագա ունենալ: Մյուս կողմից՝ եկան սուլթանի պատվիրակները: Աբդուլ Համիդը դեռ հույս էր փայփայում կառավարման ղեկը իր ձեռքը վերցնելու, իսկ ինչ մնում էր հայերին, հասկացա, որ անհնարին է նրանց ամպերից ցած իջեցնել: Նրանք ընդունակ չէին կասկածի տակ առնել երիտթուրքերի տված խոստումները: Ասես տարված էին նույն այն մարդկանցով, որոնց մեր հետախուզական ծառայությունները մատնանշում էին որպես իրենց իսկական թշնամիների, ինչը և մենք կարող էինք հաստատել մեզ հասած գրավոր տեղեկություններով: Ի՞նչ էին ուզում ասել այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են. «ցուցաբերել համբերատար դիրքորոշում հայ կուսակցությունների նկատմամբ մինչև Իթթիհադի ամրապնդումը», կամ «անհրաժեշտ է կործանել նրանց ընտանեկան միասնության հիմքերը, որպեսզի մեզ հաջողվի վերացնել նրանց ազգային հաստատությունները»՝ արտասանված կամ գրված դոկտոր Նազըմի կամ Ահմեդ բեյ-Աղաևի կողմից:

Դա մեզ հաջողվեց հաստատել շատ արագ: Ապրիլի 13-ին գտնվում էի Միացյալ Նահանգների դեսպանատանը: Ողջունում էի նրանց դեսպանին՝ Հենրի Մորգենթաուին, երբ եկան հաղորդելու, որ Թաքսիմի կայազորի բանակի առաջին կորպուսը ընդվզել է կառավարության դեմ: Մարդիկ վազում էին փողոցներով, և այնպիսի խառնաշփոթ էր առաջացել, որ ոչ ոք չէր կարող իմանալ, թե իրականում ինչ է պատահել: Ասում էին, որ սպանել են Իթթիհադի մի քանի անդամների, ինչպես նաև մեծ թվով սպաների, որոնք հավատարիմ էին մնացել սահմանադրական կառավարությանը: Տեղեկությունները, որոնք հասնում էին դեսպանատուն, ցույց էին տալիս, որ այդ խռովության հետևում կանգնած է ինքը՝ սուլթանը, քանի որ խռովարարները պահանջում էին իր տիրապետության և իսլամական օրենքների վերադարձը:

Հաջորդ օրը Կոստանդնուպոլիսը արթնացավ սուլթանի և բոլոր հավատացյալների խալիֆի հետ, Աբդուլ Համիդը կրկին նստած էր Դոլմաբաղչեի իր գահին: Նրան սատար էին կանգնել սոֆթերը՝ թեոլոգիայի և իսլամական իրավունքի ուսանողները, թեև դոկտոր Նազըմից ստացա մի հաղորդագրություն, որում նա հայտնում է իր համոզմունքն այն մասին, որ շատ շուտով վերադառնալու է նախկին իրադրությունը և խնդրում էր այդ հարցում իմ աջակցությունը: «Օրերի հարց է, գուցե և ժամերի: Բանակը մեզ հետ է»:

Իսկապես այդպես էր: Մահմուդ Զևքեթը՝ կայազորի հրամանատարը Սալոնիկում, հասավ Կոստանդնուպոլիս մի մեծ բանակի գլուխն անցած և համարյա ոչ մի խոչընդոտի չհանդիպեց սահմանադրական իրավիճակը վերականգնելիս, բացառությամբ Թաքսիմի հրետանավորների զորանոցը գրավելուց, որը արյունոտ մի միջադեպ էր:

Սուլթանը վախենում էր պատասխան պատժամիջոցներից և անմիջապես հանձնվեց: Երեք օր անց, ապրիլի 27-ին ասամբլեան քվեարկությամբ նրան պաշտոնազրկեց, և այդ նույն գիշեր նրան ուղարկեցին Սալոնիկում գտնվող մի ոչ մեծ պալատ իր հարեմի կանանց հետ միասին: Բայց դեռ հանրապետություն հռչակելու ժամանակը չէր՝ մանավանդ այդ անկայուն իրավիճակում: Այդ իսկ պատճառով Ռեչադը՝ Աբդուլ Համիդի կրտսեր եղբայրը, սեփական կամքից զուրկ մի մարդ, որն իր ամբողջ կյանքն անց էր կացրել փակված, իրենց ազգականների հանդեպ սուլթանների հնուց եկած վախի պատճառով, թագադրվեց որպես նոր սուլթան՝ Մուհամեդ V, մի անկարող մարդ բոլոր առումներով:

Սակայն մինչ այդ մի զարհուրելի ողբերգություն էր սկսվում Ադանայում՝ Կիլիկիայի մայրաքաղաքում, որը Թուրքիայի կարևոր քաղաքներից էր: Խաչատուր Մալումյանը եկել էր դեսպանատուն ինձ տեսնելու՝ նախապես տեղեկացնելու կատարվածի մասին, նախքան լուրը կհասներ Կոստանդնուպոլիս: Ավելի ուշ, Ֆրանսիայի հյուպատոսի տեղակալից ստացած ծածկագրված հեռագրերը հաստատում էին այդ դեպքերը:

Մալումյանը չատ էր փոխվել, թողնում էր այն տպավորությունը, որ նրանում սպառվել է կենսական էներգիան. դադարել էր ժպտալ:

– Ինձ համար դժվար է չարունակել ապրել: Ասեմ ձեզ, որ ամեն առավոտ ահռելի ճիգ եմ գործադրում վեր կենալիս, ուզում եմ ինչ-որ տեղ հեռանալ: Դա նշանակում է, որ կյանքն ինձանից չնչահեղձ հեռանում է: Ձեմ ուզում ներկա գտնվել գալիք իրադարձություններին: Հիշո՞ւմ եք տասներեք տարի առաջ, երբ ձեզ ասացի, որ կանխագրում եմ ահավոր մի բան: Ձէ՞ որ վրա հասան 1894 և 1895 թթ. կոտորածները, բայց հիմա ինձ թվում է, որ լինելու է չատ ավելի սարսափելին, համեմատած այն ամենի հետ, ինչ մինչ այժմ տեղի է ունեցել... Մսյե դը Լատուր, այս մարդիկ, որ իշխանության գլուխ են անցել, մտադիր են ոչնչացնել իմ ժողովրդին: Տեսեք, Ադանայում երեք օր չարունակ սպանդ են իրագործում: Իմ զարմիկը պատմեց, որ սպանել են հազարավոր հայերի: Սա պլանավորված ոչնչացում է: Ձի թվում, թե վերահսկողությունից դուրս իրավիճակ է, զարհուրելի է: Թուրքերի խմբեր, անկանոններ, աֆղաններ, որոնք չատ են Ադանայում, փակում են որևէ թաղամաս... ոտքի տակ են տալիս փողոցներն անխտիր, մտնում են հայերի տները, բռնաբարում կանանց, անգամ աղջնակներին, գլխատում տղամարդկանց, անգամ փոքր տղաների: Հենց հիմա է դա կատարվում: Խիղճ չկա: Ինչո՞ւ միչտ մենք: Ինչո՞ւ ուրիշների պես չենք կարող խաղաղ ապրել: Ինչո՞ւ, մսյե: Ինչո՞ւ...,– Խաչատուր Մալումյանը չկարողացավ զսպել արցունքները և ամոթից ձեռքերով ծածկեց դեմքը, մինչ հեծկլտում էր:

Ես գիտեի, որ իմ առջև արտակարգ իմացությամբ օժտված մտավորականներից մեկն էր, բացառիկ խոհական անձնավորություն և այդ վիճակում նրան տեսնելն ինձ խորապես հուզեց:

– Դե լավ, Խաչատուր, կտեսնեք, որ դա միայն մի դեպք է, հավանաբար ամեն ինչ արդեն վերջացել է: Սուլթանն այլևս չի կարող ուղարկել այնտեղ իր լրտեսներին... և այն, ինչ կատարվում է Կոստանդնուպոլսում, այդ բռնակալի վերջին ջղաձգություններն են: Համոզված եմ, որ վատթարագույնը մնացել է հետևում և չուտով ասամբլեան, սահմանադրությունը և ժողովրդի ուժը ամեն բան կփոխեն: Այդքան հոռետես մի եղեք: Կտեսնեք, որ հայերը չատ չուտով կդառնան լիիրավ քաղաքացիներ:

Խաչատուր Մալումյանը բարձրացրեց գլուխը: Նրա սևեռուն, կարմրած աչքերն ինձ էին նայում:

– Ոչ, մսյե, դուք, ես և չատ ուրիշները գիտենք, որ երբեք չի լինի այդպես: Երբեք չենք լինի լիիրավ քաղաքացիներ մեր իսկ հողի վրա: Մեզ պահում են իրենց կրունկի տակ՝ ճնչելով, սպանելով, բռնանալով, սակայն իրենց հասանելիք պատիժը միչտ կկրեն իրենց ներսում: Կանցնի հարյուր սերունդ, և այն, ինչ կատարվում է Ադանայում, կպահանջի արդար դատաստան: Այդ աղջնակների սարսափելի ճիչերը, որոնց բռնաբարել են, հնչում են իմ ականջներում: Այդ պատանիները, որոնք ցանկանում էին փրկել իրենց քույրերին, մորթվեցին ոչխարների պես, նրանք երբեք չեն մեռնի և կապրեն հավիտյան բոլոր հայերի սրտերում: Ո՛չ, մսյե, նրանք հաստատում են Եվրոպայի քաղաքական գործիչների խայտառակությունը, ովքեր ձգում են հանգույցը, որ համոզվեն, թե դեռ որքա՞ն կդիմանա: Մի քանի տող ընդամենը կհայտնվի Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի որոչ թերթերում, բայց հնարավոր է, որ դա էլ չլինի:

«Ադանայում ճնչել են հայերի խռովությունը, կանոնավոր բանակին հաջողվել է ոչնչացնել որոչ հայ բանդիտների...»: Ահա թե ինչ կգրեն թերթերը, մինչ դոկտոր Նազըմը կհորդորի յուրայիններին մեկընդմիչտ վերջ տալ այդ իրադրությանը: Հայ ներկայացուցիչները կբողոքեն... բայց ոչ մի բողոք չի ընդունվի ասամբլեայի կողմից, նրանց ձայնը կմարի Իթթիհադի կուսակցության ոտքերի դոփյունից: Ոչ, մսյե, ավելի ճիչտ՝ կկատարվի հակառակ մի բան: Նրանք կոչընչացնեն Ադանայի ամբողջ հայ համայնքին, որոնք երեսունից քառասուն դարեր ի վեր ապրում են Կիլիկիայում: Կմեռնեն քսանից երեսուն հազար իմ ազգակիցներից... հիմա նաև ձերոնցից: Ձեր կինը ծնունդով Կիլիկիայից չէ՞... Պետք է որ իմանաք, որ ձեր կնոջ ազգականները սարսափահար վազում են՝ փորձելով թաքնվել, փրկել երեխաներին: Յաթաղաններով ու մսագործի դանակներով զինված այդ հրեշներին ծերերն ինքնակամ՝ որպես հեչտ զոհաբերվողներ, թողնում են, որ իրենց սրի քաչեն՝ զվարճանան, մինչ այդ ընթացքում երեխաներն անօգուտ փորձում են թաքնվել մի տեղ:

Մսյե դը Լատուր, Եվրոպան ոչինչ չի ուզում իմանալ, պարփակված ինքն իր մեջ՝ վայելում է, խրվելով մահացու յոթ մեղքերում: Ինչ փույթ, թե մեռնում են մի քանի ասիացի անծանոթներ: Իսկ դա քաջ հայտնի է Իթթիհադին և իրենց համախոհներին, քանի որ նրանց գործակալներն են, որ հրահրում են կոտորածները:

Խաչատուր Մալումյանը տեղից վեր կացավ և ինձ գրկեց: Նկատեցի, որ չատ էր նիհարել, ասես սմքել էր: Այդ բարի մարդուն սպանում էին իր ժողովրդի դժբախտությունները:

Քիչ օրեր անց Ֆրանսիայի ու Անգլիայի փոխհյուպատոսների և մի քանի ականատեսների, ինչպես օրինակ՝ ոմն Հելեն Դավենպորտի, պատմածներից տեղեկացանք Ադանայի սարսափելի սպանդի մասին: Զարմանալին այն էր, որ Կոստանդնուպոլսի հայերը իրենց այն-

պես էին պահում, կարծես անտեղյակ էին: Ես խոսեցի մի քանի հեղինակավոր մարդկանց հետ և ինձ համակեց այն զգացողությունը, որ նրանք չէին ուզում տեսնել իրականությունը, քանի որ դրան կարևորություն չէին տվել: Հազիվ երկու շաբաթ էր անցել, երբ այդ իրավիճակը տարածվեց ողջ Կիլիկիայով: Տարսոնում, Անտիոքում, Հարունում (Խառնի), Հալեպում, Զեյթունում և շատ այլ կարևոր քաղաքներում թուրքերը անխտիր հարձակվում էին հայկական թաղամասերի վրա՝ առանց նայելու տարիքին ու սեռին: Շատերի հավատը չէր գալիս, որ ազգային մաքրումից՝ կատարվածից ընդամենը ամիսներ անց, որի ընթացքում շատ թուրքեր իրենց հայ հարևաններին ուղեկցում էին գերեզմանոց կամ զանգվածային գերեզմանափոսերը, կրկին կսպանեին իրենց:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրագործվում էին Իթթիհադ կուսակցության հրահանգները, ինչն այդ հարցը ավելի էր անհավատալի դարձնում, քանի որ Իթթիհադի անդամները շարունակում էին պաշտոնապես հավաքվել դաշնակցական կուսակցության անդամների հետ, ասես կարևոր ոչինչ տեղի չէր ունեցել: Իրար ձեռք էին սեղմում, միասին ժպտադեմ լուսանկարվում էին ասամբլեայի դիմաց կամ կուսակցության նստավայրի մուտքի մոտ:

Ինքը՝ Աբդուլլան, «Աբդուլլա եղբայրներ» լուսանկարչատան, Կոստանդնուպոլսի լավագույն լուսանկարիչն ինձ թույլ տվեց տեսնել այդ օրերին իր արած բոլոր լուսանկարները: Ի՞նչ էր կատարվում: Զէի՞ն մահացել հազարավոր ու հազարավոր հայեր, նրանց թվում Հակոբ Պապիկյանը, թունավորված ասամբլեայի մի թուրք դեպուտատի կողմից, քանի որ չափազանց շատ բաներ գիտեր՝ կապված սպանդների հետ: Ես կարդացի նաև Պապիկյանի պատրաստած զեկուցումը, որի եզրահանգումները սահմռկեցուցիչ էին: Այդ կոտորածների հետևում կանգնած էր Իթթիհադը՝ Առաջադիմություն և միություն կուսակցությունը:

Խոսեցի Հովհաննես Օհանյանի՝ այն բժշկի հետ, որը մի քանի տարի եղել էր իմ հարևանը: Ինձ ասաց, որ մասնակցել էր ՀՀԴ-ի առաջնորդների հետ խորհրդակցությանը, որին ներկա էր եղել Անդրանիկը, որը տեղի է ունեցել Ադանայի դեպքերից մեկուկես ամիս առաջ: Ասաց, որ Զորավար Անդրանիկը նրանց զգուշացրել էր, թե չուտով ինչ է տեղի ունենալու և նրանց զգուշացրել էր Իթթիհադի առաջնորդների երկակի պահվածքի մասին:

— Նրան ոչ մի ուշադրություն չդարձրին, իսկ երբ ես փորձեցի խոսել, ինձ թույլ չտվեցին: Կարծես հիպնոսացած լինեին և ի վիճակի չեղան գլխի ընկնելու, որ խաբեություն էր: Հեռանալուց առաջ Անդրանիկն ինձ ասաց, որ Թալեաթը և այդ դոկտոր Նազիմը կոտորածների ուղեղն են: Ինչ հիմարն ենք եղել:

Օհանյանը բարկացած էր թե՛ սրանց և թե՛ նրանց վրա: Հայերի լուրջ խնդիրը տարբեր խմբավորումների բաժանվելն էր, ինչը խանգարում էր, որ համաձայնության գային, գործեին արդյունավետորեն:

Մտախոհ վերադարձա դեսպանատուն: Իմ հայ բարեկամները գլխի էին ընկել, որ գայլը հոտի հովվի տեղ էր ուզում անցնել և կանխազգում էին մոտալուտ աղետը:

Սեպտեմբերին Թալիբ բեյը, որի հետ անկախ ամեն ինչից լավ հարաբերություն էի պահպանում, ինձ հրավիրեց խորհրդակցության զինվորական ակադեմիա: Այդ նիստը բացառապես քաղաքական գործիչների, զինվորական վերնախավի և մտավորականների համար էր: Եկավ ինձ տանելու իր նոր ավտոմեքենայով՝ դայմլերով, շատ նման իմ ունեցածին և այնքան հպարտ էր իր մեքենայով և իր ունեցած հասարակական դիրքով: Երբ հասանք, տեսա մեծ թվով գերմանացի բարձրաստիճանավորների, նրանց մեջ էին ֆոն դեր Գոլցը, ֆոն Վանգենհայմը, մի բարձր պաշտոնյա արտգործնախարարությունից, մեծ թվով թուրք գեներալներ և անչուշտ Իթթիհադի հիմնական առաջնորդները: Այնտեղ էր Թալեաթ փաշան՝ նրանց բոլորի անվիճելի ղեկավարը, դոկտոր Նազիմը, կուսակցության գլխավոր քարտուղարը՝ Բեհաէդդին Շաքիրը, ինչու չէ, նաև Միդհատ Շյուքրուն, որն ինձ ողջունեց այնպես, ասես մտերիմ բարեկամներ էինք:

Խորհրդակցությունն անցկացրեց Յուսուֆ Ակչուրան, պանթուրքիզմի գաղափարախոսը, որը դարձել էր նոր արմատական ազգայնամոլության ջատագովը: «Երրորդ համակարգը,— վստահաբար ասում էր նա, և մերթ ընդ մերթ նրան ընդհատում էին հիացական աղաղակները,— մեզ թույլ կտա միաձուլել թուրքական նացիոնալիզմը և պանիսլամիզմը, մեզ կընձեռի նոր կյանք: Պանթուրքիզմը, այսինքն՝ բոլոր թուրք ժողովուրդների և ուրալաալթայական ռասաների միավորումը կդառնա Եվրոպային և Ռուսաստանին դիմակայելու բազան: Թուրքերը, թաթարները, ղազախները, ույգուրները, ուզբեկները, առհասարակ թուրքմենները կազմում են եղբայր ժողովուրդների միություն՝ թուրքական արյամբ, թուրքական լեզուներով, թուրքական ժառանգությամբ, որոնք ոչ հեռավոր ապագայում կկազմեն միավորված մեկ ազգ իսլամական կրոնով, միակ ռասան՝ ուժեղ, հպարտ, քաջակորով և մտավոր բարձր կարողությամբ, որոնք ընդունակ կլինեն փոխել աշխարհի ճակատագիրը:

Թուրք և գերմանացի ժողովուրդներին ի վերուստ տրված է կառավարել, ղեկավարել և հրամայել մնացածներին, իսկ մնացյալ ժո-

ղովուրդները, երբ վերստին կյանքի կոչվի Թուրանը՝ մի վիթխարի տարածություն անսահման հովիտներով և գարնանը կանաչ բլուրներով, պետք է իրենց հերթին ընդունեն իրերի այդ դրությունը: Բայց դրա համար մեզ առաջին հերթին հարկավոր է մաքրել Թուրքիան այն ռասաներից, որոնք աղտոտում են այն. ինչ գնով էլ որ լինի՝ դա մեզ չպետք է հետաքրքրի: Ամեն գնով, արյունը արյամբ է մաքրվում: Ավելի պարզորոշ չպետք է արտահայտվեմ...»:

Ես չծափահարող սակավաթիվ մարդկանցից էի, երբ Ակչուրան ավարտեց իր ելույթը: Գերմանացիների վրա մեծ ազդեցություն էր թողել այդ ճառը, թեև ներքուստ համոզված էի, որ նրանք իրար կօգտագործեին մինչև այն օրը, երբ այլևս մեկը մյուսի կարիքը չէր զգա:

Նիստից հետո Թալիբ բեյն ինձ հրավիրեց առանձին ընթրելու: Հրաժարվեցի, բայց նա ի վերջո ինձ համոզեց: Ոչ ոք չգիտե, թե ինչ աստիճանի համառ և համոզող կարող են լինել Թուրքերը, երբ ուզում են որևէ բանի հասնել:

Անցանք Գալատայի կամրջով իր դայմլերով, որը և առիթ հանդիսացավ, որ գերմանացիներին երկինք հաներ: Ընթրելու էինք մի ռեստորանում, որը գտնվում էր հին դղյակներից մեկում: Այն դարձրել էին Իթթիհադի քաղաքական այրերի և նրանց համախոհների սիրած վայրը: Այնտեղ կրկին հանդիպեցինք ֆոն Վանգենհայմին՝ Գերմանիայի դեսպանին, Փաուլ Ռորբախին՝ մտավորական, որը հանդես էր գալիս Թուրքիայում Գերմանիայի էքսպանսիայի օգտին, դոկտոր Նազրմին, դոկտոր Բեհաէդդին Շաքիրին, Հանս Հումանին՝ գերմանացի կապիտան ծնված Թուրքիայում և իրեն՝ զեկուցող Յուսուֆ Ակչուրային: Մինչ ողջունում էի մեկ սրան, մեկ նրան, մտածեցի, թե ես ինչ գործ ունեմ այնտեղ: Անչուշտ, ֆրանսիական կառավարության պետական քարտուղար լինելով՝ այն անձն էի, ում Թուրքերը պետք է համոզեին, որ Եվրոպան կարող է վստահել նրանց: Բայց նաև ակնհայտ էր, որ բոլորին հետաքրքրում էր հայերի հետ ունեցած իմ հարաբերությունների և նրանց նկատմամբ իմ տրամադրվածության մասին: Ինչ խոսք, որ Թուրքերը արտասովոր բանակցողներ են և կփորձեին հնարավոր ամեն բան անել, որ ես իմ տեսակետը փոխեի: Ամեն դեպքում, եթե համաձայնվել էի ներկա գտնվել այդ ընթրիքին, ի ծնե ունեցած իմ հետաքրքրասիրությունից էր, որ երբեք ինձ չէր լքում՝ սկսած «Լ'Օրոր»-ում աշխատած իմ ժամանակներից:

Ընթրիքն անցավ լավատեսական մթնոլորտում: Գերմանացիներն ու Թուրքերը համոզված էին, որ իրենց միությունը լինելու է անպարտելի բոլոր առումներով: Գերմանիան ձեռք կբերեր գաղութացման նոր տարածքներ՝ իր «կենսոլորտը», հումք, էժան աշխատուժ, ռազմավարական ուղիով ներթափանցում նավթի մեջ, որը թաքնված էր Միջագետքի բարկ ավազների տակ, ձեռք կբերեր երկաթուղի մինչև Պարսից ծոց և վերջապես, մի ամուր ճանապարհ դեպի Կենտրոնական Ասիա, Չինաստան, Ճապոնիա, Խաղաղ օվկիանոս... – Բիսմարկի իրականացվելիք երազանքը՝ գերմանացի մտավորականների և արվեստագետների տեսական հիմնավորմամբ:

Ինչ վերաբերում էր Թուրքերին, նրանք ոգևորության գագաթնակետին էին, քանի որ Գերմանիան նրանց սատարում էր: Լավագույն հովանավորը՝ Վիլհելմ II-ը, Թուրքիայի հարազատ պաշտպանն էր Անգլիայի ճնշումներից և Ֆրանսիայի սպառնալիքներից:

Զխոսեցին հայերի մասին: Ոչ մի խոսք: Ոչ էլ մնացած քրիստոնյա փոքրամասնություններից, ոչ էլ հրեաներից և նրանց նոր՝ սիոնիստական նկրտումներից, որ հողագնդի վրա ուզում են ունենալ իրենց տեղը Պաղեստինում՝ հրեաների հինավուրց հայրենիքում: Զխոսեցին անգամ արաբների մասին, որոնք այստեղ ու այնտեղ սկսել էին նեղել իրենց Թուրք կառավարիչներին:

Խոսում էին գործարքներից, երկաթուղիներից և էլի երկաթուղիներից, նավարկելի գետերից, վիթխարի գյուղատնտեսական ձեռնարկումներից, գերմանաօսմանյան անհաղթելի բանակից, անապատը գաղութաբնակներով չենացնելուց, ժողովրդին արդիականության բարդ կանոններով ուսուցանելուց... նավթից ու փողից: Հրսկայական փողերից՝ բոլոր այդ երազանքները իրականացնելու համար, որպեսզի կարողանան բարգավաճման հասնել մուսուլմանների՝ Թուրքերի և քրիստոնյա... գերմանացիների համար: Մնացածները հաշվից դուրս էին և բացի իմ վտանգավոր ներկայությունից, որը նրանց ստիպում էր լինել զուսպ, ակնհայտ էր, որ այդ ապագայում միայն իրենց էին տեսնում:

Դա ինձ մտածելու տեղիք տվեց, մինչ բաժակ էինք բարձրացնում հանուն խաղաղության և բարգավաճման, մշակույթների դաշնության, հանուն ապագայի: Հարկ չկար խոսել նրանց մասին, որոնք այդ ժամանակ այլևս չէին լինելու այնտեղ:

Նրանք ցանկանում էին թողնել դաստիարակված, հղկված, քաղաքակիրթ, երկխոսության ընդունակ ժողովուրդների տպավորություն, սակայն ես, լավ գիտենալով նրանցից յուրաքանչյուրի խակական էությունը և մտածելակերպը, նրանց ընկալում էի բոլորովին այլ կերպ:

Թալիբ բեյը խանդավառված տրամադրությամբ ինձ տանում էր տուն՝ Ֆրանսիայի դեսպանատան մոտի մի առանձնատուն, որը մեր կառավարությունն էր նոր ձեռք բերել և այդ կառույցի չորրորդ հարկում կահավորել՝ մի հրաշալի, Բոսֆորին նայող արտասովոր տեռասներով հարկաբաժին: Աշխարհն արդեն սկսել էր հասկանալ երիտթուրքերի գործելակերպը, իսկ աստվածուհի ճակատագիրը՝ իր ընտրյալներին: Ֆրանսիան պետք է ընդուներ, որ ամեն բան այնպես չէ, ինչպես նախկինում, երբ ոչ ոք իր հետ չէր քննարկում վարկի պայմանները կամ պարտքերի չուրջ նոր բանակցությունների հարցը: Սուլթան Մուհամեդը նման չէր եղբորը՝ Աբդուլ Համիդին, ամեն ինչ նույնն էր, սակայն այլ կերպ էր ընթանում: Արդյո՞ք դա արդիականության արդյունք էր: Թալիբ բեյը դրանում համոզված էր:

Անցան ամիսներ: Կոստանդնուպոլիսը եռում էր բոլոր առումներով. կնքվում էին հաջող գործարքներ, քաղաքն աճում էր շատ արագ և այն տպավորությունն էր ստեղծվում, որ իշխանափոխությունը շատ ավելի նշանակալից էր, քան քաղաքական որևէ փոփոխություն: Գերմանական մարկը գործածվում էր որպես կայուն տարադրամ, և ֆինանսիստները հաշվում էին իրենց շահույթները այդ տարադրամով, որն արագ տարածվում էր քաղաքով մեկ, մինչդեռ թուրքական լիրան օգտագործվում էր միայն առօրյա փոքր ծախսերում:

Գերմանացիներն իրենց կառավարության վարած weltpolitik-ի աջակցությամբ, որը վճռականապես մատնանշել էր բարգավաճման իր ուղին, իրենց շատ շռայլ էին դրսևորում: Նրանց բանկերը վարկեր էին տրամադրում այնպիսի պայմաններով, որոնք անհնարին էին ֆրանսիական կամ անգլիական ընկերությունների համար: Պետք է որ համոզված լինեին իրենց ձեռնարկներում և հավատային այդ երկրում իրենց սպասվող ապագային:

Հետախուզական ծառայությունները մեզ զգուշացրին, որ նախապատրաստվում էր Իթթիհադի գաղտնի համաժողովը: Ըստ մեզ հասած տեղեկատվության՝ այն տեղի էր ունենալու, անշուշտ, Սալոնիկում, սեպտեմբերի առաջին օրերին: Վստահ էինք, որ Միդհատ Շյուքրուն մեզ տեղյակ կպահեր: Հետո ես իմացա, որ նրա ծառայությունների դիմաց ֆրանսիական պետությունը երկու հարյուր հազար ֆրանկի հաշվեհամար էր բացել Ժնևում, թերևս նույնն էր՝ ինչ գնել էինք առաջին շարքի բաղկաթոռների տոմս մեծ ողբերգությունում, որը տեղի էր ունենալու Թուրքիայում:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910 – ՓԵՏՐՎԱՐԻ ՎԵՐՋԵՐ 1911

39. ԳԱՂՏՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ. ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Մեր իրազեկիչները ճիշտ դուրս եկան. Իթթիհադի համագումարը սկսվեց Սալոնիկում 1910 թ. սեպտեմբերի 31-ին և տևեց տասնհինգ օր: Մասնակցեցին կուսակցության գլխավոր անդամներն իրենց գորեղ առաջնորդ՝ մասոն և դավադիր, փոստային ծառայող, երիտթուրքերի շարժման ղեկավար Թալեաթ բեյի գլխավորությամբ: Ոչ ոք բացակա չէր, սակայն հայտնվել էին նոր դեմքեր, ինչպես օրինակ՝ հրամանատար Ահմեդ Էնվեր բեյը՝ երիտասարդ զինվորական, հազիվ երեսուն տարեկան, փառասեր և ըստ լուրերի՝ շատ պատրաստված, Ջեմալ բեյը՝ նույնպես բանակի սպա, որի մասին ասում էին, թե Թալեաթի աջ ձեռքն էր, որը նրան գնահատում էր որպես զինվորական հարցերով խորհրդականի, Ահմեդ Նեսիմին՝ ֆինանսական հարցերով մի տեսաբան, նոր նշանակված Շեյխ-ուլ-իսլամ՝ Հայրի բեյը, անշուշտ, իսկ որպես տեսաբաններ և գլխավոր դեկուցողներ՝ դոկտորներ Նազիմը և Բեհաէդդին Շաքիրը: Մի խոսքով Իթթիհադ կուսակցության ողջ կազմը:

Համագումարին մասնակցեցին Իթթիհադի հարյուրավոր անդամներ և շատ հրամանատարներ ու սպաներ: Նրանք գիտեին, որ առանց բանակի ապագա չունեն և տեղի ունենալիք իրադարձություններում զինվորականներն են կատարելու գլխավոր դերը:

Մեզ հաջողվեց, որ համագումար թափանցի մի հայ, որի հայրը թուրք էր՝ Սայիդ Ֆեհմի անունով, որի հավատարմությանը վստահ էինք: Ուզում էր գաղթել Ֆրանսիա, նրան խոստացել էին քաղաքացիություն՝ համագործակցելու պայմանով: Անկախ ամեն ինչից՝ մենք չարունակում էինք վստահել Միդհատ Շյուքրուին:

Սեպտեմբերի տասնվեցին հայտնվեց Սայիդ Ֆեհմին պայմանավորված վայրում՝ Հովհաննես Օհանյանի կաբինետում, ինչպես ցանկացած այլ հիվանդ: Որևէ պատրվակ անհրաժեշտ չէր, իրականում նա դեռ Սալոնիկում տառապում էր երիկամային սուր ցավերով, սա-

կայն որոշեց դիմանալ, քանզի չէր ուզում կորցնել իր փոխհատուցումը:

Այնտեղ մեզ հետ էին՝ դեսպանը և արտաքին հարաբերությունների նախարարության խորհրդականը: Սայիդ Ֆեհմիի դեմքին ժպիտ խաղաց, երբ տեսավ, որ իր անձնագիրը սեղանի վրա իրեն էր սպասում Գասպար Հալաջյան անուն-ազգանունով, ինքն էր ընտրել, քանի որ այդպես էին կոչում մոր կողմից իր պապին:

– Պարոնայք, կաշխատեմ հակիրճ լինել: Սալոնիկում համագումարն ունեցավ երկու տարբեր ժողովներ: Առաջինում ելույթներն արմատական էին, բայց ինչ ասվեց, ծանրակշիռ էր և կարող էր հրապարակվել: Երկրորդում, որին կարող էին մասնակցել միմիայն հատուկ հրավերով՝ հաստատված կուսակցության գործադիր կոմիտեի երկու անդամի կողմից, գաղտնի էր: Այսինքն՝ նրա բովանդակությունը չէր կարող հրապարակվել, սակայն այդուհանդերձ այնտեղ ասում էին այն, ինչ ճշմարիտ էր: Ես կկենտրոնանամ բացառապես վերջին օրվա, սեպտեմբերի տասնչորսի՝ երեկ չէ առաջին օրվա նիստին, այսինքն՝ կթվարկեմ եզրակացությունները: Այս փաստաթղթում, որ ձեզ եմ հանձնում՝ ամփոփված են այդ բոլոր եզրահանգումները:

Հստակեցնեմ, որ գլխավոր դերը ներկա պահին անկասկած կուսակցության առաջնորդ Մեհմեդ Թալեաթ բեյինն է, Էդիրնեի գնչուներից, հուդաիզմին հարող ընտանիքից. նրանք հրաժարվել էին հուդաիզմից՝ իսլամ ընդունելու համար: Զգիտեմ, արդյոք ձեզ հայտնի՞ է, որ նա եղել է Ադրիանուպոլսի փոստային ծառայող... Շատ սնապարծ մարդ է, որն իր քաղաքական կարիերան սկսել է Սալոնիկի մասոնական օթյակից: Օժտված է հատուկ ձգողականությամբ, անողոք բնավորությամբ և երկաթյա կամքով, որին հավատարմորեն հետևում են կուսակցության նրա փոխանորդներ դոկտորներ Նազըմը և Բեհաէդդին Շաքիրը: Համոզված եմ, որ այս երեք հոգին գլխավորում են մնացած բոլորին՝ առանց մի նչույլ անգամ չեղվելու իրենց բռնած ուղուց:

Թալեաթը փակեց համագումարը, մի փոքր ճառով, որում նշեց, որ անհնարին կլինի հավասարությունը քրիստոնյաների և մուսուլմանների միջև: Պնդեց, որ դա անիրական բան է և որ իրականում քրիստոնյաները իրենցից ներկայացնում են անհաղթահարելի պատնեշ: Նրանց իսկական օսմաններ դարձնելու փորձերը միշտ էլ ձախողվել են և պնդեց, որ հարկավոր է կայսրությունը «օսմանացնել»: Դրան

հասնելու հնարավոր միակ միջոցը քրիստոնյաներին բնաջնջելն է՝ զենքի ուժի գործադրման միջոցով:

Նա արտահայտեց դա այնքան կտրուկ, առանց այլևայլության, որ բոլոր ներկա գտնվողներն իրար նայեցին, սկզբում չփոթահար, մի քանի բոպե լռությունից հետո հնչեցին երկչոտ ծափեր, որոնք ի վերջո վերածվեցին որոտընդոստ ծափահարությունների:

Ոչ մի տարակույս այլևս չէր մնացել: Թալեաթը նշել էր ուղին, և բոլորը մի մարդու պես առանց կասկածի գնալու էին նրա հետևից: Ես չատ լավ եմ հիշում նրա բառերը, քանի որ դրանք սղագրել եմ, այնպես որ հիմա կկարդամ նրա ասածները, որպեսզի խույս տամ հիշողության վրիպումներից:

> *«Հեշտ չի լինելու, ստիպված ենք լինելու կոփել մեր զգացմունքները, մոռանալ հին հասկացությունները, մտածել միմիայն ապագայի մասին և թեև ձեզ ասեմ, որ դեռ չի հասել ժամը, այո՛, պարտավոր ենք պատրաստվել, պետք է աշխատենք աննկատ, շարունակենք ժպտալ, ասենք օտարերկրացիներին այն, ինչ իրենք են ուզում լսել, միտքը պահպանել հստակ այն համոզմունքով, որ եթե հասնենք մեր նպատակին, մեր երկրում ամեն բան ընդմիշտ կփոխվի: Սուլթան Աբդուլ Համիդը չի գործել մտահոգվելով այդ ապագայի մասին, այլ բավարարել է իր ատելությունը քրիստոնյաների հանդեպ: Նա ընդամենը հասավ մասնակի ոչնչացումների, որով և սերմանեց Եվրոպայի անվստահությունը, ստացավ «մարդասպանի» տիտղոսը և ուժեղացրեց հայերի դիրքը, որոնց համարեցին զոհեր և ժամանակ առ ժամանակ հարուցեց եվրոպական տերությունների միջամտությունը: Մի իսկական աղետ: Ես ձեզ կառաջարկեմ բոլորովին այլ բան: Երբ ժամանակը գա, կբնաջնջենք կայսրության բոլոր հայերին: Անհրաժեշտ է վերջնականապես վերացնել նրանց: Մենք հողին կհավասարեցնենք նրանց հուշարձանները, նրանց եկեղեցիները, կայրենք նրանց գրքերը, նրանց մշակույթի ցանկացած հետք, որքան էլ որ հնագույն կամ արժեքավոր թվա, մի քանի տարի անց մարդիկ կկասկածեն, թե նրանք արդյոք գոյություն ունեցե՞լ են... Հետո կմոռանան նրանց, և Օսմանյան կայսրությունը մեկընդմիշտ կմոռանա այդ անիծյալ ռասային, որը մեզ այդքան վնաս է պատճառել իր անընդմեջ դավաճանություններով և անհավատարմությամբ: Կստանանք այդ «կենսոլորտը», որի մասին այդքան մեզ պատմում են մեր իսկական բարեկամները՝ գերմանացիները, իսկ այս գործողության ծախսերը կստանձնեն հենց իրենք՝ հայերը: Նրանց հարստությունը, նրանց տները, ագարակները, ունեցվածքը կդառնան թուրքական պետության սեփականությունը: Այս խնդի-*

որը մեկընդմիշտ կանհետանա, և մենք կկարողանանք շարունակել մեր ուղին իրագործելու պանթուրքիզմի գաղափարները: Բայց սպասեք, եղեք համբերատար, ողջախոհ, խորամանկ, եթե ուզում եք համագործակցել հանուն այս վճռական գործողության հաջողության: Բոլոր մանրամասները կազմակերպելու համար նշանակվել է մի հանձնախումբ: Հանձնախումբը կղեկավարեմ ես, ցանկանում եմ կատարել այդ գործը, գնալ այդ ռիսկին, որն իր հերթին կնշանակի պատմության առաջ լինել պատասխանատու: Ասեմ ձեզ, որ այդ բեռն ինձ համար պատվաբեր կլինի: Գլխավոր քարտուղարը կլինի դոկտոր Նազըմ բեյը, որի վրա եմ դրել իմ ողջ վստահությունը: Հանձնախմբում նրա հետ կլինեն Ազիզ բեյը, դոկտոր Բեհաէդդին Շաքիրը, Միդհատ Շյուքրու բեյը, Ազարիֆ բեյը և Ջավադ բեյը: Հետագայում դուք էլ կարող եք միանալ և բոլոր նրանք, ովքեր օգտակար կլինեն այն վիթխարի աշխատանքի համար, որ մեզ է սպասում:

Վստահ եմ ձեր բացարձակ գաղտնապահությանը:

Կեցցե օսմանյան Թուրքիան»:

Այդտեղ իսկապես ավարտվեց նիստը և համագումարը: Բոլորը ոգևորված դուրս եկան իրենց առաջնորդի հետ: Թալեաթը վերջնականապես ամրապնդել էր իր դիրքը, և ոչ ոք չէր համարձակվում նրան հակառակվել: Ուզում եմ, որ իմանաք, որ հայերը գտնվում են լուրջ վտանգի մեջ: Արդեն սկսվել է հետադարձ հաշիվը. օրերի հարց է, և միայն հրաշքը կարող է կանգնեցնել այն: Ավելացնելու ուրիշ ոչինչ չունեմ:

Սայիդ Ֆեհմին վերցրեց իր նոր անձնագիրը: Երեք օր անց իր ընտանիքի հետ միասին նա նավարկեց Մարսել՝ արդեն Գասպար Հալաջյան անուն ազգանունով:

Ինչ վերաբերում է ինձ, մինչև 1911 թ. փետրվարը մնացի Կոստանդնուպոլսում: Քաղաքական իրավիճակը գնալով ավելի անկայուն էր դառնում, և պետք է վերադառնայի Փարիզ՝ համոզված, որ երևի այլևս չեմ տեսնի Կոստանդնուպոլսի իմ վաղեմի բարեկամներին: Բայց չէի կարող ուշացնել իմ վերադարձը, ոչ էլ հաշվետվությունը, որը նախարարությունն էր ինձ խնդրել:

Ճանապարհը մինչև Մարսել անցա նավով և օգտվեցի լավ եղանակից, հաշվետվությունս խմբագրելու համար: Նրանում շատ պարզ հայտնում էի, որ քրիստոնյա փոքրամասնություններին, մասնավորապես հայերին, սպառնում է ոչնչացման վտանգը: Գրելիս համակվեցի մեծ դառնությամբ, քանի որ ներքուստ համոզված էի, որ միայն

եվրոպական տերությունների վճռական գործողությունները կկարողանային փոխել նրանց ճակատագիրը:

Երբ հասա Փարիզ, ինձ սպասում էր մի սարսափելի հարված: Մարիցան հանկարծամահ էր եղել ուղեղի արյան զեղումից, մինչ ես Մարսելում իջնում էի նավից: Ես ինձ կորցրել էի՝ անկարող որևէ արձագանքի: Որդիս՝ Էդուարը, ինձ հանդիմանեց իր հայացքով, ի վիճակի չէր հասկանալ կատարվածը: Ճակատագիրը մատն ինձ վրա էր դրել, հայտնվեցի մի ողբերգական վիճակում: Ես որոշում ընդունեցի՝ նվիրվել որդուս և մոռանալ թե՛ քաղաքականությունը և թե՛ իմ գործերը:

Դա նշանավորեց մի նոր ժամանակաշրջան և մտերմություն Էդուարի հետ: Ավարտին էր մոտենում 1911 թ. դաժան և մռայլ ձմեռը:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ
(1911 – 1920)

ՄԱՐՏ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

40. ԷԴՈՒԱՐԻ ԿՈՉՈՒՄԸ

Մարիցայի ողբերգական և անսպասելի մահը փոխեց իմ կյանքը: Վերջին տարիներին միասին ապրել էինք ժամանակի մի հատված, որն ինձ չատ կարճ էր թվացել, սակայն որում Մարիցայի ազդեցությունն ինձ վրա վճռական եղավ: Իմ կյանքում իր կենդանության օրոք և իր հեռանալուց հետո նա թողեց կոկորդումս դառնություն և իր ժառանգին՝ մեր որդի Էդուարին, տխուր ու հաճելի հիշողություններ, որոնք մնալու էին ինձ հետ մինչև կյանքիս վերջը:

Ինչ վերաբերում էր Էդուարին՝ համարյա տասնչորս տարեկան և արթուն մտքով, ամենից չատ անկասկած, իմ կարիքն ուներ, որի պատճառով էլ որոշեցի վերջնականորեն հեռանալ իմ ձեռնարկած գործերից, որոնք չատ էին ընդլայնվել վերջին տարիներին, մանավանդ Միացյալ Նահանգներում: Այնտեղ գնալով մեր ներդրումները ավելի էին աճում: Ոչ էլ ուզում էի շարունակել քաղաքական գործունեությունս, որը կորզում էր ժամանակս և ուժերս, ուստի 1911 թվականի մնացած ժամանակում որոշեցի՝ ամրապնդել կապերս որդուս հետ և գրել Թուրքիայում անցկացրած իմ տարիների ու փորձառության մասին, առանց համաձայնվելու, գոնե առայժմ, պաշտոնական որևէ հանձնարարություն ստանձնել, անկախ այն ճնշումներից, որ գործադրում էին արտաքին գործերի նախարարությունից, որպեսզի շարունակեի իմ գործունեությունը Մերձավոր Արևելքի պետական քարտուղարի պաշտոնում:

Կրկին տեղափոխվեցի Ժնև Էդուարի հետ միասին: Այնտեղ Պողոս Կիրակոսյանի հովանավորությամբ նա ուսումնասիրելու էր այն ամենը, ինչ կապված էր իր մշակութային ժառանգության հետ, որը ես անտարբերության չէի մատնում՝ հանուն Մարիցայի հիշատակի և իր հայկական արյան:

Մեծ ցավ էի զգում ներքուստ, որ չէի կարողացել նրան հրաժեշտ տալ: Ես նրա հետ ծանոթացել էի մի ողբերգական պահի և գուցե անհեթեթ երկչոտության պատճառով՝ երբեք ընդունակ չեղա արտահայտել նրան իմ զգացմունքների խորությունը:

Մյուս կողմից՝ համոզված էի, որ նրա վաղաժամ մահը՝ անկախ անցած ժամանակից, այն դաժան ծեծի հետևանքն էր, որ նրան ենթարկել էին Կոստանդնուպոլսի ոստիկանությունում: Կասկածից դուրս էր, որ Մարիցան հայ ժողովրդի դեմ Թուրքերի խարդախ քաղաքականության հերթական զոհերից էր, իսկ դա ինձ ստիպեց հասկանալ, որ այդ երկարատև պայքարը չուտ չի ավարտվելու, որքան առաջարկներ էլ որ աներ Իթթիհադի կառավարությունը և որքան էլ որ նախիվ և ոչ բավարար իրատես գտնվեին որոշ հայ առաջնորդներ: Ընդհակառակը, ինձ համար ակնհայտ էր, որ վատթարագույնը դեռ առջևում է: Սպասվում էր պայքար հանուն գոյատևման ընդդեմ սնապարծության, այն մարդկանց սնապարծության, ովքեր տենչում ու հավակնում էին ստեղծել Թուրքիա բացառապես Թուրքերի համար:

Ես արագ սովորեցի հանգիստ ու միապաղաղ կյանքին: Ամիսը մի անգամ իմ զարմիկի՝ Ժորժ Լորանի հետ, որին լիովին վստահում էի, քննարկում էինք և վերանայում տարբեր գործարաններում տիրող իրավիճակը: Մենք ռիսկի դիմեցինք և ընդունեցինք մի խիզախ որոշում՝ հանել Գերմանիայից գումարային մեր ներդրումները և այդ միջոցներով դիրքավորվել Միացյալ Նահանգներում, ամենից առաջ հումքերում և նավթում:

Ինչ վերաբերում է Հայկական աշխարհի հետ ունեցած իմ հարաբերությանը, շարունակում էին ինձ այցելել նրա ղեկավարներից մի քանիսը, գրեթե միշտ Հակոբ Սարգսյանի ընկերակցությամբ, որը դարձել էր իմ լավագույն բարեկամներից մեկը և բացի այդ ինձ տեղյակ էր պահում Թուրքիայում տիրող իրավիճակից:

Նա տեղյակ էր, որ ես ցանկանում էի առաջին գծից հեռանալ, բայց անում էր անհնարինը, կրկնում էր, որ ես սերտ կապերի մեջ եմ հայերի հետ և որ գոնե Էդուարի պատճառով չպետք է հրաժարվեմ այդ պայքարից:

– Սիրելի՛ Անրի, դու չես կարող հեռանալ իրականությունից: Քեզ դուր է գալիս թե ոչ, արդեն հայ ես և հետևաբար ի վիճակի չես ամեն ինչ մոռացության տալ: Դու չափից ավելի ես ներքաշված այդ հարցում, որպեսզի խոսք գնա ընտրության մասին: Ի՞նչ ես պատմելու քո որդուն, երբ նա չափահաս դառնա: Նա չի ըմբռնի և ոչ էլ հայերը... Բացի այդ, գիտես, որ չի կարելի լինել կիսով չափ հայ: Զկան «թուլակամ» հայեր, ինչպես այս հարուստ առևտրականներն են, որոնք վախենում են չափից ավելի ներքաշվել այդ գործում: Լսիր, ես քեզ լավ եմ ճանաչում, թեև դու հիմա հոգնած ես ամեն ինչից, անգամ

ապրելուց, որովհետև Մարիցայի մահը քեզ վրա չատ ավելի է ազդել, քան ինքդ ես կարծում: Դա, անկախ ամեն ինչից, այնպիսի հիվանդություն է, որ ժամանակն է բուժում: Հանգստացիր որոշ ժամանակ, քանի որ հետո լարված ես աշխատելու. մոտենում է փոթորիկը և չկա մեկը, որ այն կանգնեցնի:

Հիմա Իտալիան պատերազմի մեջ է Թուքիայի հետ, ընդ որում դա ոչ Սիրենաիկայի և ոչ էլ Տրիպոլիտանիայի պատճառով է, այլ որովհետև Իտալիան զայրացած է... Իսկ դա չատ վտանգավոր է, բայց մեջդ մի նշույլ անգամ կասկած չմնա, որ վաղ թե ուշ Սերբիան, Հունաստանը, Բուլղարիան, գուցե նաև Զեռնոգորիան Թուրքիային պատերազմ կհայտարարեն: Մի բանի վրա վստահ չեմ, թե Հայաստանը նույնպե՞ս կլինի այդ ճակատում և գուցե մենք կորցնենք պատեհ առիթը: Բայց անհնարին է: Յուրաքանչյուր հայ ունի իր անձնական կարծիքը այդ հարցի վերաբերյալ, իսկ այսպես հնարավոր չի լինի ամուր ճակատ ստեղծել: Բացի այդ, հայերս միշտ տարվում ենք հոռետորությամբ... Այդ մեկն՝ այո: Փորձելով բարդացնել հասարակ բանը: Դե ինչ, քեզ հասկանում եմ, որովհետև ինքս էլ կուշտ եմ չաղակրատանքից և պատմություններից:

Ամեն անգամ, երբ Սարգսյանը գալիս էր ինձ տեսնելու, հեռանում էր բարկացած, ոչ թե ինձ, այլ հանգամանքների և իր մարդկանց վրա՝ տեսնելով, թե ինչպես կրկին ու կրկին ընդհանուր ճակատ ստեղծելու անկարողությունը նրանց թույլ չի տալիս հասնել իրենց նպատակին:

Բայց իրավացի էր, անտարակույս ինչ-որ բան էր հասունանում: Մի կողմից՝ քաղաքականությունն իր տեղը զիջել էր ռազմամոլությանը: Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, իհարկե, նաև Թուրքիան և նրա նախկին կայսրության երկրները ներգրավվել էին խելահեղ մրցավազքում՝ մինչև ատամները զինվելու մոլուցքով: Առաջատար ազգերը համոզված էին. ճառեր ասելը վերջացել էր, և գալիս էր այն պահը, որ պետք է խոսեին թնդանոթները: Դա նկատելի էր չրջապատում և նույնիսկ մարդկանց վարքագծում, որոնք ապրում էին մի օրով և իրենց ունեցած հնարավորությունները գերագնահատելով. կարծես թե նրանց համար կարևոր չէր, թե ինչ է տեղի ունենալու վաղը:

Հենց այդ ժամանակ էր, որ գլխի ընկա, որ Էդուարը հասունացել էր չափազանց վաղ: Այդ մասին խոսեցի իր դաստիարակի՝ Պողոս Կիրակոսյանի հետ, որն ինձ ասաց, որ Էդուարը, իսկապես, իր դատողություններում ոչ թե տասնչորս, այլ ասես տասնութ տարեկան լիներ:

– Մայլ դը Լատուր, ձեր որդու վրա շատ է ազդել իր մոր մահը: Նա մտերմիկ հարաբերությունների մեջ էր երեխայի հետ, որ ձեր դեպքում չեմ կարող, ցավոք սրտի, ասել: Նա ձեզ երբեք չի ասի դա, սակայն ներքուստ համոզված է, որ դուք իրեն չեք սիրում... Ներող կլինեք, որ ես մտնում եմ այնտեղ, ուր ինձ չի համապատասխանում, բայց դա է իմ կարծիքը: Էդուարը մեղադրում է Թուրքերին պատահածի համար... և դրանում իրավացի է: Սակայն ինձ վախեցնում է իր դիրքորոշումը: Դեռ շատ վաղ է և հետևաբար ի վիճակի չէ խորհրդածելու: Նա պետք է խաղար և աներ այն, ինչ անում են իր տարիքի երեխաները և, այնուամենայնիվ, միակ բանը, որ նրան հետաքրքրում է, այն է, որ ես իրեն պատմեմ Հայաստանի մասին և տեսեք, որպես ուսուցչի իմ երկարամյա կյանքում առաջին անգամն է, որ ինձ հետ նման բան է պատահում:

Նկատի առնելով ստեղծված իրավիճակը, որոշեցի Էդուարին հանել ինտերնատից և որոշ ժամանակ դադարեցնել հայ մշակույթի դասերը: Ես չէի հավակնում նրան ազգայնամոլ հայրենասեր դարձնել, այլ միայն, որ չմոռանար իր հայկական արյունը, բայց իր մոր մահվան պատճառած ցավը ամեն ինչ փոխել էր:

Խոսեցի նրա հետ, ցանկացա նրա ուշադրությունը շեղել որևէ բանի վրա, նրան առաջարկեցի դահուկային սպորտի դասեր առնել Ալպերում, միասին ուղևորվել Միացյալ Նահանգներ..., ցանկացած բան, որ օգներ նրան մոռանալ այն, ինչը նրա համար դարձել էր մի տեսակ սևեռուն միտք: Բայց հասկացա, որ չափազանց ուշ էր:

Ինձ մեղադրեցի դրանում: Անտարակույս Կիրակոսյանը գիտեր, թե ինչ է կատարվում և ժամանակին էր զգուշացրել: Ուրեմն, մի օր նստեցի Էդուարի դիմաց և նրան հանկարծակիի բերելով՝ հարցրի.

– Էդուար, դու քեզ համարում ես ֆրանսիացի՞, թե՞ հայ:

Որդիս ինձ հետ խոսեց առանց թաքցնելու իր զգացմունքները, երբ պատասխանեց.

– Մայրս հայ էր և ես նույնպես: Թեև սիրում եմ Ֆրանսիան, չեմ կարող մոռանալ, թե ով եմ: Բացի այդ, հայրիկ, բոլորն ինձ ասում են, որ քեզ հետ էլ նույնն է կատարվում, թեև դու հայի արյուն չունես: Երբ տարիքս հասնի, կգնամ մերոնց համար կռվելու:

Այդ օրը հասկացա, որ ցանկացած պատճառաբանություն ավելորդ է: Փորձեցի մտերմանալ նրա հետ: Իհարկե, հարկ է խոստովանել, որ դա ինձ այնքան էլ չէր հաջողվում: Թվում էր, թե նա ինձանից խուսափում է, համոզված, որ ես ցանկանում եմ նրա միտքը փոխել:

Հիշեցի իմ երիտասարդությունը, ես տասը տարով որդուցս մեծ էի, երբ առաջին անգամ ընդդիմացա մորս: Այդ իսկ պատճառով էլ գիտեի, որ որքան շատ ընդվզեի, այնքան շատ նրան կգրգռեի, որ ինձ կհակառակվեր: Այնպես որ փորձեցի ինքս հարմարվել՝ տագնապով մտածելով այն մասին, թե ինձ ինչ է սպասվում:

Ամիսները շատ արագ անցան: Ես ուսումնասիրում էի պատմություն, փորձելով ըմբռնել, թե որն է Եվրոպայում ստեղծված իրավիճակի պատճառը: Արդյոք հնարավոր էր, որ սերնդեսերունդ, թե՛ այս կողմից և թե՛ մյուս, ի վիճակի չլինեին հասկանալ իրենց թույլ տված սխալների և ձախողումների պատճառները, որպեսզի նրանց ոտքը կրկին քարին չդիպչեր:

Իրավիճակը ողջ մայրցամաքում անտանելի ձևով լարված էր: Ֆրանսիան ցույց էր տվել իր անվստահությունը Թուրքիային՝ տեղի ունեցող իրադարձությունների առթիվ՝ մերժելով կարևորագույն մի վարկ, որ Թուրքիան խնդրել էր հատկացնել իրեն և որն ի վերջո տրվեց գերմանացիների կողմից, քանի որ վերջիններս ամենայն հավանականությամբ ցանկանում էին վերահսկել Թուրքական կառավարությանը:

Ես լիովին տեղյակ էի իրավիճակին, և Անտուան Մոնժի միջոցով ինձ հասել էր, որ Թուրքական կառավարության ֆինանսների նախարար Ջարիդ բեյն առաջարկել է վերահսկել ֆրանսիացի պաշտոնյաներին՝ առավել ապահովության նպատակով: Ի վերջո, Թուրք նախարարը չընդունեց Ֆրանսիայի պահանջները, պատճառաբանելով, որ դրանցով Ֆրանսիան ցանկանում է միջամտել իր երկրի ներքին գործերին: Հետևաբար այնքան էլ հեշտ չէր նրանց հետ գործ ունենալ, մանավանդ երբ հայտնի էր, որ Թուրքիայի դաշինքը Գերմանիայի հետ, պատերազմական կոնֆլիկտի դեպքում, ցանկացած պահի ինչի կարող էր վերածվել:

Մոնժն ինձ բացատրեց, որ պատերազմը Իտալիայի և Թուրքիայի միջև ընդամենը նախուտեստ էր գալիք ճաշկերույթից առաջ՝ կիսելով ինձ հետ իր երկյուղը Օսմանյան կայսրությունում քրիստոնյա փոքրամասնություններին սպասվող սպառնալիքի կապակցությամբ:

Մի քանի շաբաթ անց ինձ այցելեց Մարիցայի եղբայրը՝ Օհաննեսը: Նա ինձ հայտնեց, որ վերադառնալու է Կոստանդնուպոլիս, փորձելու այնտեղից հանել իր խորթ քրոջը՝ Թերեզ Փիլիպոսյանին:

– Գիտես, Անրի, իմ փեսան՝ Պողոս Տարպիտյանը Թերեզի ամուսինը, մեկ ամսից ավելի է, որ անհետացել է: Բոլորը կարծում են, թե մահացել է, որովհետև վերջին անգամ նրան ուրիշ հայերի հետ բռնել

տարել էին Կենտրոնական ոստիկանություն: Հիմա պետք է փորձեմ Թերեզին հանել: Ձեմ կարող այստեղ մնալ և ուրիշ բանով զբաղվել, երբ հաստատ գիտեմ, որ ամեն վայրկյան քրոջս կարող են ձերբակալել: Դու լավ գիտես, թե թուրքերը ինչպես են գործում, իսկ ես չեմ կարողանա տանել, որ կրկնվի նույն պատմությունը:

Փորձեցի համոզել նրան, որ չդիմի այդ ռիսկին: Եթե նրան բռնեին՝ կորած էր, քանի որ թուրքերը, քաղաքական ինչ կողմնորոշում էլ ունենային, Օտտոման բանկի գրավման հետ կապված միջադեպը համարում էին նվաստացուցիչ: Բայց Օհաննեսը մնաց անհողդողդ և հրաժեշտ տալիս գրկեց ինձ:

– Մեր ճակատագիրն է: Կարծում եմ, որ ինձ հետ ոչինչ չի պատահի, բայց հակառակ դեպքում՝ քեզ երախտապարտ կլինեմ, եթե ընտանիքիս ձեռք մեկնես:

Օհաննեսը մեկնեց Հունաստան: Ինձ ասել էր, որ կփորձի որևէ հարմար կետից սահմանն անցնել: Ես լուր չունեցա ո՛չ նրանից և ո՛չ էլ Թերեզից և մտածեցի, որ երկուսն էլ սպանվել են: Ներքուստ համոզված էի, որ թուրքերը վրեժ են լուծում Օտտոման բանկի գրավման դիմաց:

1912

41. ԿՈՆՖԼԻԿՏԻ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ

Բոլոր բարեկամներս միշտ կրկնում էին, որ ժամանակը մեղմացնում է վիշտը, բայց կնոջս մահը երկար ժամանակ ինձ պահում էր չոկի մեջ: Ի վիճակի չէի հաշտվել կատարվածի հետ: Ինձ համար Մարիցան դարձել էր շատ կարևոր մարդ՝ բացելով իմ առաջ նոր աշխարհընկալում, սեփական տեսակետի և զգայուն մոտեցման առումով:

Նա էր, որ աչքերս բացեց, որ ըստ էության հասկանայի հայկական կոնֆլիկտը: Ջարմանալիորեն, անկախ տեղի ունեցածից, նա ատելությամբ համակված չէր թուրքերի հանդեպ: Ինձ պատմել էր, որ մանուկ ժամանակ նրան խնամել է մի թուրք կին, որին աշխատանքի էր հրավիրել հայրը, և որ այդ հարաբերությունը նրա առաջ բացահայտել էր թուրքերի անկեղծ և մարդկային կողմը:

– Ուրիշ բան չկարծես: Շատ նման են մեզ այդ մարդիկ՝ սովորելու մեծ ունակությամբ: Նրանց մեջ աչքի ընկնող շատ մարդիկ կան: Ուրիշ բան է, թե ինչ է կատարվում թուրք ներկայիս գործիչների հետ կամ էլ սուլթանի, որից ատելություն է հորդում, բայց թուրք ժողովուրդը առհասարակ խելացի է, մեծահոգի:

Այս խորհրդածություններն ինձ մղում էին մտածել, որ դեռ հույս կա: Հետագայում ժամանակն ինձ ցույց տվեց, որ շատ դժվար է, եթե ոչ անհնարին, կրկին չչի մեջ մտցնել ատելության և բռնության դեվերին:

Ու այսպես, բավականին երկար ժամանակ ես ինձ աշխարհից հեռու պահեցի, ասես Մարիցայի կյանքից հեռանալն ինձ գրկած լիներ ապրելու ցանկությունից..., թեև ես շատ ծանրակշիռ պատճառ ունեի ապրելու. իմ որդի Էդուարը՝ մի խելացի երիտասարդ, որն անկախ իր ֆրանսիական դաստիարակությունից՝ այնուամենայնիվ իրեն խորապես հայ էր զգում:

Հետո հանգամանքները կրկին ինձ մղեցին դեպի ակտիվ կյանք: Զգացվում էր, որ աշխարհը փոխվում է մեծ արագությամբ, ինչն էլ հենց ստիպեց, որ նորից գործարանների դեկը ձեռքս վերցնեի: Նավ-

թի աշխարհում իմ ներդրումները չարունակ ինձ ստիպում էին այստեղից այնտեղ գնալ:

1912 թ. փետրվարն էր: Հարկ եղավ, որ գնայի Լոնդոն, մի կարևոր ժողովի, որտեղ ծանոթացա Սարգիս Գալուստի Գյուլպենկյանին, Լևոն Ալեքսանդրի Մանթաշովին և Ուիլյամ Նոքս դ՚Արսիին, մի ավստրալիացի ինժեների, թերևս բոլորից ամենատեղեկացվածը՝ նավթի հետ կապված հարցերում:

Նորից հանդես եկավ Ժան Կառնոն: Ֆրանսիան իրավունք չուներ դուրս մնալ նոր էներգիայի աղբյուրների ձեռքբերման մրցավազքից, որն ամենայն հավանականությամբ առաջիկա տարիներին փոխելու էր աշխարհը: Ժանը եկավ Ժնև ինձ տեսնելու և այնքան պնդեց, որ մի պահ ես ստիպված տեղի տվեցի և խոստացա օգնել նրան: Այդ պատճառով էլ վերադարձա վերականգնելու հին կապերը և նախապատրաստել ժողով Լոնդոնում: Ես տնտեսական ոչ մի ձգտում չունեի այդ հարցի կապակցությամբ, չնայած համոզված էի, որ նավթի գործարքը XX դարում դառնալու է ամենաշահութաբեր գործերից մեկը: Ակնհայտ էր, որ գերտերությունները դրա կարիքն ունեին: Ֆրանսիայի ազդեցությունը Օսմանյան կայսրության ֆինանսական ոլորտում պահպանվում էր, սակայն Գերմանիան կարողացել էր շահել նոր կառավարության՝ երիտթուրքերի վստահությունը, իսկ դաշույնը, որ գործածում էին, գերմանական բանկն էր, որը քիչ խնդիրներ չէր հարուցում մեր երկրին:

Ես հանդիպեցի սըր Էռնեստ Քասսելի՝ բրիտանացի ազդեցիկ ֆինանսիստի հետ, ծնված, որքան էլ տարօրինակ հնչի, Գերմանիայում, որն առանց որևէ բան թաքցնելու պատմեց ինձ Թուրքիայում տիրող իրավիճակի մասին:

– Տեսեք, մայե դը Լատուր: Այս տորթը չափազանց մեծ է, և ով որ ուզի կուլ տալ այն, կոկորդին կանգնելու վտանգ կա: Եվ նույնիսկ այդ դեպքում անհնարին կլինի այն մարսել: Անգամ իրենք՝ գերմանացիներն են սկսում հասկանալ: Խելամիտ կլիներ կիսել այն, և բացի այդ, պետք է ընդունենք, որ Գյուլբենկյանը լավ է թխել այն: Հիմա խառնաչփոթ ժամանակներ են, և պետք է գլխներիս զոռ տանք: Այստեղ չկան ո՛չ դրոշներ, ո՛չ ազգեր և ո՛չ էլ նման մի բան: Միայն մի վիթխարի սև յուղի տհաճ հոտով չիթ, որը դուրս է գալիս հողի ընդերքից և կարող է մեզ հարստացնել: Պարզ է, որ պետք է պայմանավորվենք՝ անկախ այն բանից, որ վաղն առավոտյան պատերազմ կսկսվի մեր երկրների միջև: Դա կլինի ասպետական պայմանագիր բրիտանացիների, հայերի, ֆրանսիացիների... և գերմանացիների միջև: Ինչ մնում է Թուրքերին... Ի վերջո, դեռևս իրենց տիրապետության տարածքներում են գտնվում այդ հանքավայրերը: Նրանց թույլ կտանք, որ դրանք կոչեն իրենց անուններով և ոչինչ ավելի: Ո՞նց է հնչում «Թուրքական նավթային ընկերությունը»: Մեր մեջ մնա, ձեզ ասեմ, որ այդ անունը առաջարկել է Գյուլբենկյանը: Փայլուն մարդ է: Խոստովանեմ ձեզ, որ քիչ եմ հանդիպել այս հայերի պես խելացի մարդկանց, թեև եթե խոսքը Գյուլբենկյանի մասին է, նա ընդունակ է վճարել մի ողջ կարողություն իր քմահաճույքի դիմաց: Տեսեք, նա չէր ուզում ստորագրել Անգլիայի համար մի կարևոր կոնցեսիոն վաճառքի փաստաթուղթ: Գիտե՞ք, թե ինչպես հասանք դրան: Ուրեմն, մենք գտանք եգիպտական եզակի և չատ արժեքավոր հնությունների մի խմբաքանակ՝ ըստ Բրիտանական թանգարանի մասնագետների, և դա նվիրեցինք նրան: Անմիջապես ստորագրեց: Ձեզ մի բան ասեմ, գոնե լավ է, որ այդ հայերը ո՛չ պետություն ունեն, ո՛չ էլ տարածք, քանի որ այդ դեպքում Թուրքիայի նավթը իրենցը կլիներ և այդ դեպքում ոչինչ անել չէինք կարողանա:

Այնուհետև խոսեցին Բալկաններում հնարավոր կոնֆլիկտի մասին: Սըր Էռնեստ Քասսելն ինձ հավաստիացրեց, որ այդ վայրում պատերազմը ամիսների հարց է և որ, բացի այդ, նա կդառնա այն պայթուցիկը, որ երկինք կնետի Թուրքական կայսրությանը, գուցե և իրեն՝ Եվրոպային:

Վերադարձա Փարիզ այն համոզմամբ, որ եվրոպական տերությունների համար միակ կարևոր բանն այն է, որ իրար մեջ կիսեն ողջ կայսրությունը, հենց որ «հիվանդ մարդն» ընկնի հոգեվարքի մեջ: Երբ հանդիպեցի Ժան Կառնոյին համաձայնեց՝ ասելով.

– Համոզված եմ, որ այս աշխարհը այն ձևով, ինչ առաջ է գնում, ուր որ է կաթվածահար կլինի: Շատ քիչ ժամանակ է մնացել, բայց քեզ կասեմ հետևյալը՝ իմանալով հայերի հանդեպ քո չահագրգիռ լինելը: Ոչ ոք մատը մատին չի տա հանուն նրանց... Լավ, գուցե կեղծ մարդասիրություն հանդես բերեն, միայն այդքանը: Անցած օրը խոսում էի մի անգլիացի հայտնի քաղաքագետի հետ, և ինձ ասաց մի չատ սթափեցնող բան: Եթե հիվանդը չի ուզում մեռնել, ուրեմն պետք է սպանել նրան, հասկանո՞ւմ ես: Իսկ հիմա բացատրիր ինձ նավթի հետ կապված բանը, որովհետև հաստատ գիտեմ, որ վերջիվերջո նրա պատճառով բոլորս կռվելու ենք:

Մի քանի ամիս չարունակ «հիվանդ մարդը» դեռ հոգեվարքում էր: Ֆինանսական աշխարհը փորձում էր փրկել իր միջոցները, թեև Ֆրանսիայի բանկիրները գիտեին, որ անհնարին կլինի հետ ստանալ

վիթխարի գումարները Թուրքիայից: Վերջապես մի օր Ժան Կառնոն ինձ մի գրություն ուղարկեց, որ հանդիպեմ նրան: Դա 1912 թ. հոկտեմբերի տասնվեցն էր:

– Միայն ուզում եմ նախազգուշացնել քեզ: Վաղը, այսինքն՝ քսանչորս ժամ հետո, Սերբիան, Հունաստանը, Զեռնոգորիան և Բուլղարիան Թուրքիային պատերազմ են հայտարարելու: Գուցե սա հրաշալի առիթ կլինի հայերի համար, բայց վախենամ նրանք ո՛չ միավորված են, ո՛չ էլ նախապատրաստված: Մենք ձեզ հաճույքով կուղարկեինք Հայաստանի վերաբերյալ բանակցությունների..., բայց դա ինձ թվում է անհավանական:

Ավելի ուշ ես մտածեցի Ժանի ասածի շուրջ: Ակնհայտ էր, որ իրադարձությունները զարգանալու են սրընթաց ու ողբերգական ձևով և ի հայտ է գալու մի նոր աշխարհ՝ մեր ցանկություններից անկախ: Ժանը ճիշտ էր իր կանխագուշակումներում, ինչպես և ուրիշ դեպքերում:

Նոյեմբերի սկզբներին, մի մռայլ օր, երբ բարակ ու անվերջանալի անձրև էր մաղում, ինձ այցելեց Ռոբեր Կանվան՝ լեռնային ինժեները, որը հայերի սպանդի ականատեսն էր եղել: Նրա այցը Փարիզ կապված էր Սիրիայում նավթի որոնման աշխատանքների առնչությամբ պայմանագրի ստորագրության հետ: «Սիրիայի երկրաբանական հետախուզական ընկերության» համար Կանվան ոչ միայն արտասովոր ինժեներ էր և հեղինակավոր երկրաբան, մեծ ընկերությունների կողմից միշտ ցանկալի, այլ նաև Թուրքիայի ու Միջագետքի անապատների մեծ գիտակ: Եթե կար մեկը, որին հաջողվում էր գտնել այն, ինչ խորքում էր և անհնարին, նա էր: Բայց նրա այցն ուներ այլ դրդապատճառներ:

– Մսյե դը Լատուր, Թուրքիայում գործերը լավ չեն: Պատերազմի հայտարարությունը ավելի է վատթարացրել դրությունը, և հայերը գտնվում են կրիտիկական վիճակում: Ինձ թվում է, որ 1895 և 1896 թթ. կոտորածները մանկական խաղ են վերահաս աղետի համեմատ: Հայերն ավելորդ են նոր քաղաքականությունում: Նրանց են վերագրում կայսրության մասնատման գլխավոր պատճառը, իսկ թուրքերը, որ հիմա նեղն են ընկել, ամեն ինչի ընդունակ են: Քրդերը գործում են անպատժելիորեն՝ թուրքական իշխանության թողտվությամբ, իսկ դա առաջ է բերում ռուսների նկատմամբ հայերի համակրանքը... Իսկ այդ բանը, մսյե, նրանք հայերին չեն ների:

Տեսեք, մեկ ամիս առաջ, գուցե և մի քիչ ավելի, Տրապիզոնում էի, պատրաստվում էի բեռնել նավի վրա հետախուզական աշխատանքների իմ սարքավորումները: Ես դրանք պահել էի նավահանգստի պահեստներից մեկում և մինչ փաթեթավորում էի, հարևան պահեստին մոտեցան մի քանի սայլեր՝ բեռնված արկղերով: Լսեցի, թե ինչպես էին դրանք բեռնաթափվում և մի փոքր պատուհանից, որը երկու պահեստների միջև էր, տեսա և լսեցի, որ ամեն տեսակի զենքեր էին բաժանում թուրք քաղաքացիներին...,– ինչպես հասկանում էի,– քանի որ փորձ ունեմ: Իրոք փչաքաղվեցի: Բացի այդ՝ չարունակ թուրք փախստականներ էին տեղ հասնում Բալկաններից և Թրակիայից: Այդ մուհաջիրները, այդպես են նրանց կոչում, զավթում են այն տներն ու ագարակները, որոնք դեռ երեկ պատկանում էին հայերին: Գալիս է բանակը կամ ոստիկանությունը և քրիստոնյաներին տալիս է քսանչորս ժամ, որպեսզի ազատեն դրանք, իսկ այդտեղ բանի տեղ չեն անցնում ո՛չ բողոքը և ո՛չ էլ պահանջը: Ի վերջո, մտածեցի, որ դուք պետք է իմանայիք այդ մասին, թեև, ճշմարիտն ասած, չեմ կարծում, թե հնարավոր լինի մի բան անել: Ձեզ լավ հայտնի է, թե ինչպես են գործում այդ թուրք քաղաքագետները, և վերջում հակառակ տպավորությունն է ստեղծվում:

Կանվան ինձ թողեց այն դառը զգացողությամբ, որ հանուն Մարիցայի ժողովրդի ես ոչինչ չեմ անում: Որդիս՝ Էդուարը, դարձել էր մի կենդանի վկա, որն իր համր հանդիմանանքով ստիպում էր ինձ որևէ բան ձեռնարկել: Կրկին պետք է թողնեի իմ ինքնակամ առանձնացումը: Զուգեցի, որ տարիներ անց ինձ մեղադրեին, որ այդ խնդրի լուծման հարցում ես ոչինչ չեմ արել:

1913

42. ԷԼԼԻՍ ԿՂԶԻՆ

Որպես իր տասնվեցամյակի նվեր՝ Էդուարին հրավիրեցի ինձ հետ ուղևորվել Միացյալ Նահանգներ օգտվելով ֆինանսիստների միջազգային խորհրդակցությունից, որը փորձում էր պահպանել բանկերի միջոցները հորիզոնում ուրվագծվող կոնֆլիկտի սպառնալիքի նախօրեին:

Բալկաններում պատերազմը վեր հանեց Թուլությունը Թուրքական բանակի՝ ջախջախված Թրակիայում և Մակեդոնիայում՝ Բուլղարիայի, Սերբիայի, Զեռնոգորիայի և Հունաստանի կոալիցիայի կողմից: Նշված երկրների զինվորները կռվում էին այնպես, ասես ցանկանում էին վրեժ լուծել վերջին դարերի ընթացքում Թուրքերի հասցրած վիրավորանքների դիմաց:

Ուշադրություն դարձրի այն բանի վրա, որ որդիս ագահությամբ էր կարդում մամուլի Թղթակիցների հոդվածները կոնֆլիկտի վերաբերյալ և շարունակ ինձ հարցնում էր, Թե ինչու հայերը չեն կռվում այդ նույն ռազմաճակատում կոալիցիայի երկրների հետ: Նրան ասացի, որ հանգամանքները տարբեր էին այդ հարցում: Չնայած որ ես նրան բացատրում էի, միևնույն է՝ Էդուարը չէր հասկանում իրադրությունը:

Տեսա, որ քաղաքը չատ է փոխվել: Նյու Յորքը ոչ միայն սրընթաց արագությամբ էր աճում, այլ նաև ողողվել էր տեխնոլոգիայի նոր հրաչքով՝ ավտոմեքենաներով: Նա այն փոխակերպման նմուշն էր, որին կարող էին ընդօրինակել աշխարհի բոլոր մեծ քաղաքները և գոհունակությամբ նկատեցի, որ Էդուարը հիացած է այդ ամենով:

Այդ քաղաք կատարած իմ նախկին այցելությունից անցել էր մեկ քառորդ դար: Այն իրավամբ կարող էր կոչվել նոր աշխարհի մայրաքաղաք, չատ բաներ էին նրանում փոխվել: Սկսել էին կառուցել մեծ թվով բարձրահարկ շենքեր, որոնք անվանում էին երկնաքերներ, ինչպես Վուլվորթ Բիլդինգը: Ամեն օր այնտեղ էին հասնում հազարավոր ներգաղթողներ բոլոր մայրցամաքներից: Նրանք հարուցում էին մեծ պրոբլեմներ, ինչպես օրինակ՝ ստորին Հար Սայդը, որը դարձել էր աշխարհում ամենախիտ բնակեցված գոտին. իր ցեխոտ փողոցներով, լեփ-լեցուն, ասես մի բաբելոնյան բազմամշակութային աշտարակ, որում յուրաքանչյուր էթնիկական խումբ զբաղվում էր այն աշխատանքով, ինչ ամենից լավ գիտեր՝ կյանքում առաջ գնալու համար: Ես մտածեցի, որ եթե այդ քաղաքը ապագայի մայրաքաղաքի խորհրդանիշն է, բոլորս էլ պետք է մեծ ջանքեր գործադրենք նրան հարմարվելու համար:

Էդուարը, որին վաղուց չէի տեսել այդքան ոգևորված, կարծես Թե հիանում էր այդ ամենով: Վեր էր կենում չատ վաղ և ամբողջ օրը ոտքի տակ տալիս քաղաքը վերից վար, ասես մի քանի չաբաթում փորձում էր վարժվել այդ նոր աշխարհին:

Իր ծննդյան օրվա առթիվ նա խնդրեց ինձնից հատուկ նվեր: Մնացի զարմացած, երբ ինձ ասաց, որ ցանկանում է գնալ Էլլիս կղզի, որպեսզի համոզվի, Թե հազարավոր նոր տեղ հասած մարդկանց մեջ, որոնց մասին խոսում էր մամուլը, որևէ հայ կա՞ արդյոք: Չկարողացա մերժել նրա քմահաճույքը, Թեև ինձ անհանգստացնում էր նրա սևեռուն հետաքրքրությունը Հայաստանի հետ կապված ամեն ինչի նկատմամբ:

Այնտեղ մտնելու մեր Թույլտվությունը ձեռք բերեց Հենրի Մորգենթաուն՝ մի չատ ազդեցիկ ֆինանսիստ, որի հետ ծանոթացել էի իմ տեղ հասնելուց մի քանի օր անց, ընդունելություններից մեկում: Նա չատ առանձնահատուկ մարդ էր, կյանքի հանդեպ ալտրուիստական մոտեցմամբ: Զգիտեինք ում դիմել, և մեկն ինձ ասաց, որ այդ մարդը հատուկ հարաբերության մեջ է պրեզիդենտ Վիլսոնի հետ և ընդունակ՝ բացելու ցանկացած դուռ: Խոսքը մի չատ կարևոր հարցի չէր վերաբերում, բայց քանի որ նա այդքան ուշադիր էր գտնվել ու սրրտաբուխ, որոշեցի զանգահարել նրան: Ինձ անձամբ պատասխանեց չատ հարգալից, վստահեցնելով, որ ինձ չատ լավ է հիշում: Երբ նրան ասացի, որ ուզում ենք այցելել Էլլիս կղզի, այնքան ոգևորվեց, որ որոշեց ընկերանալ մեզ՝ ավելացնելով, որ ինքն ամեն ինչ կկարգավորի:

Երկու օր անց նստեցինք նավահանգստի քարշանավերից մեկը, որը մեզ հասցրեց Էլլիս կղզի: Այնտեղ տեսանք մի վիթխարի երեքհարկանի շենք, որն ընդունում էր ներգաղթողներին: Նրա տնօրենը՝ պարոն Բրեդլին նավամատույցում մեզ էր սպասում, որպեսզի տաներ Էքսկուրսիա՝ դիմանալով Հուդզոնի սառը քամուն:

Նկատեցի, որ Մորգենթաուի աչքից ոչինչ չէր վրիպում: Քայլում էր արագ, Էդուարն էլ նրա հետևից, որի հետ նրանք առաջին իսկ

պահից դարձան բարեկամներ: Էդուարը նույնպես ցանկանում էր խորանալ ամենափոքր մանրամասնում, որն իր տարիքի պատանու համար ինձ զարմանալի թվաց: Մենք ծայրեծայր այցելեցինք կըղզու չինությունները, ննջարանները, ճաշասրահները, խոհանոցները, պահեստները, նորեկների ընդունման մեծ սրահը, բուժարանները: Ամենուրեք շատ մարդիկ կային, մի քանիսն աշխատում էին, մյուսները հաստատակամորեն սպասում իրենց թույլտվությանը՝ մտնելու մի երկիր, որն անվանում էին ազատության թագավորություն:

Ի զարմանս ինձ, ինչպես որ կռահել էր Էդուարը, գտանք ծագումով Վանից մի հայ ընտանիքի. հայրը դպրոցի ուսուցիչ՝ Հակոբ Տարպիտյանը, Մարին՝ մայրը, հասարակ, բայց դաստիարակված մի կին, և երեք զավակները՝ Տիգրանը, Ներսեսը և Աշխենը: Մորգենթաուն մեծ հետաքրքրություն ցուցաբերեց նրանց հանդեպ, մանավանդ երբ այդ մարդը մեզ պատմեց, որ ստիպված էին եղել Վանից հեռանալ՝ համոզվելով, որ այնտեղ նրանց ոչ մի ապագա չի սպասվում:

– Տեսե՛ք,– Տարպիտյանը դանդաղ էր խոսում անգլերեն և պարզունակ, սակայն հասկանալի: – Վալին՝ թուրք կառավարիչ Ջևեդ բեյը չի ուզում, որ գործեն հայ դպրոցները, փաստարկելով, որ իբր սուլթանի մասին վատ են արտահայտվում, ինչը բացարձակ սուտ էր... մանավանդ դասասենյակներում: Հետո ինձ անձամբ սպառնաց և երբ տեսավ, որ նրա հրամաններին չեմ ենթարկվում, մեկին ուղարկեց, որ կնոջս ասի, որ երեխաներին կարող է որևէ բան պատահել... Իհարկե, ստիպված հեռացանք, թեև, ինչ խոսք, ցավալի է, քանի որ երեխաները չեն կարող վարժարան գնալ: Ոչ թուրքերն են նրանց ընդունում մեզրեսե, ոչ էլ մենք ենք նրանց այնտեղ ուղարկում: Հուսով եմ, որ Աստված ինձ ուժ կտա նրանց ոտքի կանգնեցնելու համար, թեև հիմա ունենք մի լուրջ խնդիր. այստեղի բժիշկը մերժել է որդուս՝ Տիգրանին... Ասում է, որ տուբերկուլյոզով հիվանդ է, բայց հիվանդ չէ: Ունի ասթմա, ինչպես իր պապը, որը մեռավ իննսուն տարեկանում: Բայց ինչպե՞ս կարող ենք թույլ տալ, որ մեն մենակ վերադառնա Թուրքիա: Այնպես որ, եթե հրաշք տեղի չունենա, ստիպված բոլորով կվերադառնանք այնտեղ:

Այդ ժամանակ Հենրի Մորգենթաուն հանդես եկավ որպես եռանդուն և վճռական մարդ: Քառորդ ժամ անց գլխավոր բժիշկը կրկին զննեց Տիգրանին, իսկ կես ժամ հետո, նոր եզրակացությունից երջանիկ՝ Տարպիտյանների ընտանիքը գրկախառնվում էր, քանի որ Հակոբը իրավացի էր: Երբ նրան պատմեցի, որ այդ այցելության դրդողը

եղել էր Էդուարը և հայտնեցի նրա, հայերի հետ ունեցած կապի մասին, երկուսի աչքերից էլ արցունքներ էին հոսում:

– Սա Աստծո ձեռքի գործն է: Մեզ պետք է այս գիշեր երկրից դուրս անեին,– ոգևորված գոչում էին և գրկում որդուս, որը շատ գոհ էր կատարվածից և իր կատարած դերից, որն անուղղակիորեն առընչվում էր այդ ամենին: Մորգենթաուն նույնպես արտահայտեց իր հիացմունքը Էդուարի որոշման առթիվ և նրան այսպես ասաց.

– Միշտ հետևիր քո ներքին ձայնին:

Էդուարը զարմացած նայեց ինձ՝ քրթմնջալով. «Մայրիկն էլ էր միշտ նույնն ասում»:

Այսպես ծագեց բարեկամությունը Հենրի Մորգենթաուի՝ խորապես բարոյական և ուժեղ մարդու հետ, որը նույնպես ներգաղթել էր, իհարկե այլ հանգամանքներում Մանհեյմից (Գերմանիա) Միացյալ Նահանգներ: Այն ժամանակ ես դեռ չգիտեի, թե որքան կարևոր է լինելու նրա միջամտությունը հայերի կոտորածի ամենաթեժ պահին:

Մի քանի շաբաթ անց վերադարձանք Ֆրանսիա: Հյուսիսային Ատլանտյան օվկիանոսն իրեն փոթորկալից էր պահում, և մուգ կապույտ ծովի մեջտեղում մի քանի այսբերգներ տեսանք: Դա ինձ հիշեցրեց շատ տարիներ առաջ իմ հանդիպումը Մարիցայի հետ: Էդուարը վերջնականապես հաշտվել էր ինձ հետ՝ ինձանից երկար ժամանակ խուսափելուց հետո, երբ ասես մեղադրում էր ինձ իր մոր մահվան հարցում:

Միասին որոշեցինք, որ նա վերադառնա Փարիզ իր ուսումը շարունակելու: Նա մեծ հակումներ ուներ սովորելու հանդեպ և հասկացա, որ ավելի մոտ պետք է գտնվեմ նրան: Ժամանակը թռնում էր, և ես ցանկանում էի հնարավորինս նրան հաղորդակից լինել, քանի որ ցանկություն էր հայտնել սովորել միջազգային իրավունք, որպեսզի ձեռք բերի դիվանագիտական կարիերա:

Այս ընթացքում Եվրոպայում իրավիճակը գնալով բարդանում էր: Ավստրիան դավեր էր նյութում՝ բուլղարներին սերբերի դեմ հրահրելով, մինչև որ հունիսի վերջերին Բուլղարիան վերջնագիր ներկայացրեց Սերբիային և Հունաստանին: Մի քանի շաբաթ հետո նրանք հայտնվեցին Սալոնիկի դարպասների մոտ, որը տեղիք տվեց Բալկանյան երկրորդ պատերազմին: Դրանից թուրքերն օգտվեցին՝ վերականգնելու համար նախորդ պատերազմի ժամանակ իրենց կորցրած տարածքները: Ամեն դեպքում դրանք ընդամենը թույլ ալեկոծություններ էին համեմատած նրան, ինչ սպառնում էր վրա հասնել:

Անկախ իմ ներկայացրած հրաժարականին՝ նախարարությունում ինձ պահում էին որպես Մերձավոր Արևելքի պետական քարտուղար և ինչպես Անտուան Մոնժը, այնպես էլ Ժան Կառնոն ճշտապահորեն ինձ տեղյակ էին պահում տեղի ունեցող բոլոր իրադարձություններին:

Հետո արագ անցան 1913 թ. գարունն ու ամառը: Փարիզում տիրում էր ոգևորություն, մի տեսակ փախուստ դեպի առաջ, կարծես բոլորը համոզված էին, որ ամենաճիշտը տվյալ օրով ապրելն էր:

Մի անգամ երեկոյան ամակայից լսեցի Էդուարին խոսելիս: Սկզբում չհասկացա, հետո գլխի ընկա, որ հայերեն է խոսում: Դա ինձ բերեց այն մտքին, որ ես նրան ավելի ուշադիր պետք է հետևեի:

Սեպտեմբերի վերջերին, երկարատև ամառից հետո,– ջերմաստիճանը սովորականից ավելի բարձր էր Փարիզում,– Անտուան Մոնժը ինձ հրավիրեց նախարարություն ճաշի:

– Ուզում էի քեզ տեղեկացնել Ենիքյոյում տեղի ունեցածի մասին, այդ սքանչելի վայրում՝ Բոսֆորի վրա, որտեղ ամռանը հարուստներն են հանգստանում: Տես, անցած հունիսի վերջերին այնտեղ տեղի ունեցավ մի միջազգային խորհրդակցություն: Կրկին թուրք քաղաքագետները հանեցին իրենց լավագույն զենքերը՝ կեղծիքը և խորամանկ հնարները՝ փորձելով ժամանակ շահել և վիժեցնել հայերի պահանջները: Դրանք անհավատալի մարդիկ են, ընդունակ են միաժամանակ կռվել տարբեր պատերազմական ճակատներում, ամեն վայրկյան անել հակառակը, ինչ ասում են... կամ ավելի ճիշտ հավաստել հակառակը, ինչ անում են: Բանն այն է, որ բարեփոխումների նախագիծը, որի մասին թուրքերն այդքան խոսում են, տեղից չի շարժվել: Դու գիտես, որ այդ նախագիծը մշակել է Մանդելշտամը՝ ռուս դիվանագետը, ի մի բերելով Հայոց պատրիարքի տեսակետները և որոշ տերությունների գաղափարները՝ ներառյալ մերը: Գերմանիան սկզբից ևեթ պահանջեց, որ հարգեն կայսրության տարածքային ամբողջականությունը, այլ կերպ ասած՝ նրանք ուզում են, որ ամեն ինչ իրենցը լինի: Ինչ մնում է անգլիացիներին, ոչինչ չեն ցանկանում իմանալ հայերի պահանջատիրությունների մասին: Նրանց համար ամենակարևորը իրենց շահերն են, բայց եթե այդ դեպքում տուժեն քրիստոնյա փոքրամասնությունները, նրանք կասեն, որ իբր շատ են ցավում, բայց ոչ մի կոպեկ չեն տա:

Անտուանը խոր շունչ քաշեց՝ նախքան շարունակելը:

– Ինչ վերաբերում է մեր կառավարությանը, խորապես անհանգստացած է թուրքիայի ֆինանսական դրությամբ, քանի որ թուրքական պարտքի ծավալը Ֆրանսիային այնքան մեծ է, որ կարող է խախտել մեր բյուջեն: Մյուս կողմից՝ մեզ պետք են Սիրիան և Լիբանանը, որպեսզի ամրապնդվենք Միջերկրականի արևելյան եզերքում: Դրանից երբեք չենք հրաժարվի:

Տես, Անրի, եթե ռուսները ներխուժեն հայկական վիլայեթներ, կվնասեն մեր շահերին, բայց կարծում եմ, որ դժվար կլինի նրանց կանգնեցնել: Այդ իսկ պատճառով ընդունում ենք բարեփոխումների նախագիծը, թեև համոզված ենք, որ դրանից ոչ մի օգուտ չկա: Իրականում խոսքը շատ ավելի լուրջ բանի մասին է՝... կյանքի կամ մահվան: Վախենում ենք, որ հնարավոր կոնֆլիկտի դեպքում, եթե Թուրքիան կանգնի Գերմանիայի կողքին, թուրքերը օգտվելով առիթից հայերին կհասցնեն մահացու հարված: Այդ չչուկն արդեն անկասելի է, և շատերն են փախչում Ռուսաստան՝ լքելով ամբողջ ունեցվածքը, մյուսները հասնում են Սև ծովի նավահանգիստները, կամ էլ փախչում են Սիրիայի միջով, վտանգելով իրենց կյանքը՝ անգամ փոքրիկ առագաստանավերով, սակայն երեք միլիոնից ավելի հայեր կան, իսկ շատերն անտեղյակ՝ ապրում են հեռավոր գյուղերում, մյուսներն էլ պարզապես չեն հավատում չչուկներին, ոմանք էլ լավատես են, և ի վերջո կա հայերի մի չնչին մաս, որոնք ի վիճակի կլինեն դիմադրել..., իսկապես: Մեծ Բրիտանիան հենց նոր է ստորագրել մի համաձայնագիր թուրքիայի հետ, որպեսզի իր սպաներին ուղարկի համագործակցելու թուրքական իշխանությունների հետ, բայց Ռուսաստանը ամեն կերպ ընդդիմանում է դրան: Չի ուզում տեսնել անգլիացիներին իր սահմանների մոտ:

Մենք համաձայն չենք ո՛չ կատարված վարչական բաժանմանը, ո՛չ էլ այն բանին, որ մոռացված լինեն Ադանան և Զեյթունը, ինչը, սակայն, մեզ կասկածելի է թվում և շատ ավելի կասկածելի, քանի որ հավաստի աղբյուրից մեզ տեղեկացրել են, որ գոյություն ունի հայերից ազատվելու մի գաղտնի պլան: Այդ պլանը մշակել է Թալեաթը, դոկտորներ Նազիմի և Բեհաէդդին Շաքիրի աջակցությամբ... Մնացածը ծխածածկոց է:

Շնորհակալություն հայտնեցի Անտուան Մոնժին իմ հանդեպ ունեցած իր վստահության համար: Ցանկանում էր զգուշացնել ինձ, թե ինչ էր սպասվում մոտ ապագայում: Իրավիճակը ճնշող էր, քանի որ Եվրոպան նայում էր այլ կողմ, կարծես չէր ուզում տեսնել ակնհայտը: Շուտով համոզվելու էինք, որ Հայաստանը լոկ պատրվակ էր անգղների համար, որոնք պտտվում էին մի տարուբերվող կենդանու վրա, որն ուր որ է տապալվելու էր՝ ճզմելով շատերին:

ՀՈՒՆԻՍ – ՍԵՊՏԵՄԲԵՐ 1914

43. ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԱԵՎՈՅՈՒՄ

1914 թ. ամռան սկզբներին իրավիճակն այնքան լարված էր Եվրոպական մայրաքաղաքներում, որ իրենց ապրելակերպում մարդիկ դարձան բավականին ցինիկ և որոշեցին, որ ամենահիշտը մեկ օրով ապրելն էր, առանց սպասելու անհավանական վաղվան, քանի որ, եթե մի բան փոխվեր, հաստատ ամեն ինչ վատթարանալու էր:

Դա իր հետքը թողեց ոչ միայն մարդկանց վարքագծի, այլ նաև վարչական համակարգի կայունության վրա: Ո՞ւմ պետքն էր, որ անհանգստանար ինչ-որ անչարժ գույքի գրավադրմամբ. ո՞վ էր ներդրումներ կատարելու անչարժ գույքում կամ ստեղծելու գործարաններ: Թուրքիայի հետ պատերազմում Բալկանյան կոալիցիայի հաղթանակը հստակորեն ցույց տվեց, որ Օսմանյան կայսրությունը անկարող կլինի պաշտպանվել որևէ անկանխատեսելի հարձակումից: Մյուս կողմից՝ Սերբիան հավատ չէր ընծայում ռուսական աջակցությանը, քանի որ մի բան էին Ռուսաստանի պանսլավոնական նկրտումները և այլ բան՝ նրա իրական կարողությունը, դիմակայելու Գերմանիայի, Ավստրիայի և Հունգարիայի կողմից կազմված կոալիցիային:

Այնուամենայնիվ, իսկական ճգնաժամը սկսվեց այն ժամանակ, երբ գերմանացի գեներալ Լիման ֆոն Զանդերսը նշանակվեց Թուրքական բանակի հրամանատար: Դա փոխում էր ստատուս քվոն, թեև անգլիացի ծովակալ Լիմփուսը թուրքական նավատորմիղի գործուն հրամանատարն էր: Ռուսները որոշեցին տեղակայել մի մեծ նավատորմիղ Սև ծովում, Բոսֆորի դիմաց, հայտարարել զորակոչ և վերջապես պատրաստվել անկասելի մի բանի՝ Գերմանիայի հետ պատերազմի, հետևելով Ֆրանսիայի գործողություններին սահմանակից տարածաշրջանում՝ Էլզաս-Լոթարինգիայում: Գերմանացի գեներալ Ֆրիդրիխ ֆոն Բեռնարդին կարող էր բավարարված լինել, քանի որ իր «Գերմանիան և մոտալուտ պատերազմը» գրքի հաջողությունն այդ լարվածությունը հասցրել էր իսկապես անտանելի սահմանի: Ֆրանսիան շարունակում էր բանակցելու միջոցով ելք որոնել..., մինչդեռ Գերմանիան զբաղված էր միայն պատերազմին պատրաստվելով:

1914 թ. հունիսի 28-ին ես պատահմամբ Բեռլինում էի, երբ Սարաևոյում տեղի ունեցած մահափորձի ժամանակ սպանվեցին արքիդուքս Ֆրանց Ֆերդինանդը և հերցոգուհի Սոֆյան: Սպանության հեղինակը բոսնիացի սերբ էր, ոմն Գավրիլո Պրինց, թեև ավստրո-հունգարահպատակ և պատկանում էր սերբական «Սև ձեռք» գաղտնի միությանը, որը գործում էր սերբական բանակի լրտեսական ծառայությունների ղեկավարությամբ, վերջինս էլ իր հերթին ծառայում էր Ռուսաստանին: Արքիդուքսը եղել էր ֆեդերալիզմի կողմնակից, դրույթ, որը սպառնում էր մեծ Հարավսլավիայի ստեղծման հնարավորություն:

Բեռլին կատարած իմ այցը կապված էր Կայսերական առևտրական ընկերության գլխավոր խորհրդի նոր նիստի հետ: Այնտեղ էին գտնվում Ալֆրեդ Բալինը, բարոն Օփրնհայմը, Ալֆրեդ Կրուպը և շատ ուրիշ գերմանացի աչքի ընկնող ֆինանսիստներ և գործարարներ:

Իմ դիրքորոշումը հստակ էր, և ոչ ոք այն կասկածի տակ դնել չէր կարող, քանի որ Գերմանիայում իմ շահույթներն ինձ հասնում էին ժառանգաբար, բացի նրանից, որ իմ անձնական հարաբերությունը, որ նրանցից շատերի հետ էի պահպանում, հասնում էր բարեկամության: Անկախ իմ քաղաքացիությունից և պաշտոնական դիրքից՝ որպես Ֆրանսիայի պետական քարտուղար, ոչ ոք չէր համարձակվի ինձ կասկածի տակ առնել: Անշուշտ, Ժան Կառնոն և Անտուան Մոնժը ինձ «հարկադրել» էին մասնակցել, չարաշահելով ինձ հետ ունեցած բարեկամական հարաբերությունը, քանի որ տեղյակ էին ամեն ինչից: Նաև կարող էի հավաստիացնել, որ գերմանացիները բարյացակամորեն էին վերաբերվում այն բանին, որ ես ուղիղ կապ պահպանեի Գերմանիայի և Ֆրանսիայի միջև՝ դրանով իսկ ցույց տալով, որ մի բան է քաղաքականությունը և մի այլ բան՝ երկու երկրների միջև հարաբերությունները: Բալինը, որ շատ խորաթափանց մարդ էր, ինձ ակնարկեց դա՝ ասելով, որ երբեք չի կարելի այրել բոլոր կամուրջները:

Նստաշրջանը մոտենում էր ավարտին, երբ ստացվեց գահաժառանգի և հերցոգուհու սպանված լինելու անհավատալի լուրը: Բոլոր ներկաներս բավականաչափ իրազեկված էինք, որպեսզի չտրվեինք կեղծիքին և վստահ լինեինք, որ այդ ողբերգական սպանությունը այն կատալիզատորն է, որին հետևելու է անխուսափելին՝ ավերիչ պատերազմը հողագնդի ամենաքաղաքակիրթ և ամենաառաջավոր երկրների միջև:

Ալֆրեդ Բալինը, որն այդ ժամանակ իմ կողքին էր, ինձ իր կարծիքը հայտնեց իրավիճակի այսուհետ ծավալման չուրջ:

– Տեսե՛ք, դը Լատուր: Գերմանացիները չեն ցանկանում ընդհարվել Ֆրանսիայի հետ... Համենայն դեպս, ոչ քաղաքացիական հասարակությունը: Եթե մենք խելացի գտնվեինք, այդ հարցը այլ կերպ կփորձեինք լուծել. ձեր երկիրը կպահպաներ չեզոքություն, մինչ մենք մեր հարցերը կլուծեինք ռուսական արջի հետ, որը մեզ թիկունքից է ուզում մահացու հարված տալ: Մնացած ամեն բան կլուծվեր մեր մակարդակով, ուզում եմ ասել՝ ֆինանսապես: Ի վերջո ինչո՞ւ պետք է իրար հետ կռվենք թուրքական կայսրության մնացորդներին տիրանալու համար: Ինձ թվում է անհեթեթ..., քանի որ բոլորս էլ գիտենք, թե ինչ է ուզածներս՝ սկսած այդ խորամանկ անգլիացիներից, որ մինչև հիմա ձայն չեն հանում: Բոլորը խոսում են գերմանական միլիտարիզմի մասին, բայց ձեզ հավաստիացնում եմ, որ մենք ընդամենը փորձում ենք պաշտպանվել, թեև ընդունում եմ, որ մեր ունեցած համբավի համար մեղավոր լինելը դեռ քիչ է:

Պետք է խոստովանեմ, որ ներկա գտնվողները ինձ հետ շատ լավ վարվեցին, ըմբռնումով և բարեկամաբար, պնդելով, որ այդ ամենը սոսկ ամռան փոթորիկ էր,– ըստ բարոն Օփընհայմի,– և որ չուտով վերսկսվելու էին բանակցությունները:

Մինչ գիշերային ճեպընթացով սրընթաց վերադառնում էի Փարիզ, հասկանում էի, որ անկայուն հավասարակշռությունը խախտվել է և գերմանական գլխավոր շտաբը թույլ չի տա, որ հարցը բանակցելու ուղիով լուծվի: Հինգ միլիոնանոց բանակը, այդ թվում՝ պահեստային զինծառայողները և զինամթերքը, որ նախատեսված էին կործանելու ցանկացած թշնամու, գերմանացիներին վեր էին դասում բարու և չարի հասկացություններից:

Նրանց երկաթուղիները գծագրվել և կառուցվել էին որպես իրենց ռազմավարության բաղկացուցիչ մաս: Գեներալները խոսում էին «կայծակնային պատերազմ» հասկացությունից, քանի որ գուցե գիտեին, որ Գերմանիան ի վիճակի չէր լինի դիմանալու այլ տիպի պատերազմի:

Ինձ թվում էր, որ լավ գիտեմ մեր իսկական իրավիճակը: Ֆրանսիան պետք է փոխհատուցեր այդ ամբողջ ռազմական ուժերի ծավալումը՝ Մարսելյեզով և հայրենասիրական կրքով: Անկախ ամեն ինչից՝ կասկածի նշույլ չկար, որ վերջնական հաղթանակը լինելու է կոալիցիայինը՝ Ֆրանսիայինը, Մեծ Բրիտանիայինը, Ռուսաստանինը և իրենց դաշնակիցներինը: Այլ կերպ լինել չէր կարող, եթե մեր սիրած

Եվրոպան ուզում էր գոյատևել: Եթե պատերազմը չարունակվեր, Գերմանիան և Ավստրո-Հունգարիան չէին կարողանա դիմադրել: Նրանց գեներալները ամեն ինչ հաշվարկել էին այնպես, որ պատերազմը վեց ամսից ավելի պետք է տևեր:

Ավելի ուշ, Փարիզում, ես որոշեցի Էդուարին ուղարկել Նյու Յորք: Այնտեղ, այդ զարմանահրաշ քաղաքում նա կապրեր անվտանգ և ի վերջո կձևավորվեր որպես ապագայի մարդ: Ի զարմանս ինձ, առանց առարկելու նա նավ նստեց Հավրում դեպի այն երկիր, որ նրան հրապուրել էր մեր նախորդ այցելությունում: Երկու օր անց Գերմանիան պատերազմ հայտարարեց Ֆրանսիային, և սկսվեց մի սարսափելի արհավիրք, որը շատ բան էր փոխելու մի աշխարհում, որը վերջին չնչում էր:

Այդ ընթացքում Սարգսյանն ինձ տեղյակ էր պահում Կոստանդնուպոլսում տիրող իրավիճակից: Այնտեղ, Արևելքի նախամուտքում ամեն ինչ ավելի հստակ էր, քան Կե դ՚ Օրսում (Ֆրանսիայի արտգործնախարարությունում): Գերմանացիները լավ էին հող նախապատրաստել, և այլևս կասկած չէր մնացել, թե ո՛ր կողմում է դիրքավորվելու Թուրքիան: Ըստ մեր հավաստի տեղեկության՝ Իթթիհադի աչքի ընկնող առաջնորդները, հետևաբար նաև թուրքական կառավարությունը, Բեռլինում՝ գերմանական բանկերում ունեին իրենց հաշիվները, ուր գերմանական արտաքին գործերի նախարարությունը նրանց փոխանցում էր խոշոր գումարներ, որպեսզի ապահովեր դրանց օրինավոր լինելը: Տարբեր մեկնաբանությունները բացառվում էին, քանի որ Գերմանիան այնքան մեծ գումար էր խաղի մեջ դրել, որ ցանկացած միջոց նրանց համար շահավետ էր: Այնպես որ, Թալեաթը, Էնվերը, Ջեմալ բեյը՝ այս եռյակը և նաև իրենց կողմնակիցները՝ դոկտոր Նազրմը և դոկտոր Բեհաէդդին բեյը, իրենց կարող էին միլիոնատեր համարել, դրան գումարած այն լրացուցիչ երաշխիքը, որ նրանց Գերմանիայում սպասում էր ոսկեզօծ հանգիստ՝ գործունեության ավարտին: Անշուշտ, այս ամենը արվում էր մեծ զգուշությամբ, քանի որ թուրք սպաների համար տարօրինակ կլիներ. չէ՞ որ նրանց չէին վճարում պարտք մնացած աշխատավարձը:

Հետևաբար ամեն ինչ պարզ էր. չնայած իր երկակի խոստումներին՝ Թուրքիան պատերազմում վերջնականապես կլիներ Գերմանիայի կողքին, քանի որ, այլ հարցերից բացի, չէին կարող խույս տալ փոխադարձ պարտավորություններից: Բացի այդ, գերմանական հետախուզական ծառայությունները շատ բան գիտեին Իթթիհադի և նրա առաջնորդների մասին, ինչը նրանց մեծ իշխանություն էր տալիս Թուրքերին կառավարելու համար:

Մի քանի օր անց Ժան Կառնոյից իմացա, թե ինչ է պատահել գերմանական երկու՝ «Գյոբեն» և «Բրեզլաու» զրահանավերին, որոնք հասել էին Կոստանդնուպոլիս, թեև Թուրքերն անվերջ չեզոքության հայտարարություններ էին անում, ինչին արդեն ոչ ոք չէր հավատում: Այդ հարցում Ժանը բավականին հոռետեսորեն էր տրամադրված և ինձ այսպես ասաց.

— Կարծում եմ, որ անգլիացիները նրանց թողեցին անարգել ճողոպրել. բոչերին կարգել են որպես պահակներ, որպեսզի խանգարեն ռուսներին, որ մտքներով չանցնի մտնել Նեղուցները: Բանն այն է, որ այդ նավերը հիմա կանգնած են այնտեղ և բեռնվում են մթերքով ու վառելիքով, իսկ Թուրքիան հայտարարում է, որ ինքն է ձեռք բերել այդ նավերը, բայց եթե նրանց զննենք հեռադիտակով, տախտակամածի վրա կերևան Թուրք ծովայինները գլխներին ֆես, թեև իրականում դրանք կերպարանափոխված գերմանացիներ են: Կարծում եմ, որ նրանց համար միևնույն է՝ իմանանք թե ոչ: Բոլոր դեպքերում Թուրքիան միշտ կասի, որ ինքը չեզոք է, քանի որ այդ Թուրք քաղաքական գործիչները երկիմաստության վարպետ են, միշտ անում են իրենց ասածի հակառակը... Թեև, ընդունենք, որ մեր անգլիացի բարեկամները հետ չեն մնում: Բայց ինձ անհանգստացնում է այն, որ նրանք փակել են Նեղուցներն այն պատրվակով, որ իբր ուզում են մաքրել արկերից... Սա նշանակում է, որ իրականում այնտեղ արկեր են դնում: Բացի այդ, ինձ հասած տեղեկությունների համաձայն՝ ուզում են վերացնել կապիտուլյացիաների ռեժիմը, իսկ դա նշանակում է, մտցվելու է Թուրքական ռեժիմ՝ համոզված, որ Եվրոպան չի կարողանա վերահսկել իրենց: Փոքր Ասիայի խեղճ հույներ և խեղճ հայեր: Կե դ՛ Օրսեում բոլորս էլ համոզված ենք, որ երիտթուրքերի կառավարությունը այնպես կսեղմի պնդօղակները, որ անգամ չնչել չկարողանան: Նայիր, կարդա քո վաղեմի ընկերոջ հաղորդագրությունը: Հիշո՞ւմ ես Թալիբ բեյին... գործարար մարդուն: Նրան բռնել ենք, ուզում էր բոլորիս խաբել և ներդնել իրեն չպատկանող միջոցները՝ ֆրանսիական բանկերի կողմից տրված վարկերը, բորսային օպերացիաներում:

Հիմա նա մեր ձեռքում է և երբեմն մեզ տեղեկություններ է հաղորդում: Թեև բնականաբար ստուգում ենք այն ամենը, ինչ մեզ ասում է: Կարդա սա. բավականին պատկերավոր է՝ այնտեղ տիրող մթնոլորտի մասին:

Մի քիչ զարմացած՝ վերցրի փաստաթուղթը, որ ինձ մեկնում էր Ժանը հետաքրքրությամբ և կարդացի մեքենագրված, անվերնագիր մի տեքստ:

Կապիտուլյացիաների ռեժիմը վերացնելու որոշումը բնակչության կողմից ընդունվել է որպես երկրի հաղթանակ:

Ամենակարևոր քաղաքները այդ առթիվ ցնծում են համարելով այն մեծ տոն: Այստեղ՝ Կոստանդնուպոլսում կառավարության նախագահին Թալեաթ փաշային շնորհավորում են մամուլի օրգանները և բոլոր քաղաքական ուժերը:

Հավաստի աղբյուրներից տեղեկացել եմ կառավարության պալատում տեղի ունեցած մի կարևոր ժողովի մասին, որում ընդունվել են հետևյալ որոշումները.

ա) արգելել Նեղուցներով առևտրական նավերի անցումը (բացառությամբ դաշնակիցների),

բ) նախապատրաստել նավատորմիղը ռուսական էսկադրոնի և ռուսական բազաների վրա հարձակման համար,

գ) թուրքական բանակը գրոհելու է ռուսական բանակի վրա Անդրկովկասում,

դ) անմիջապես անգլիական ծովակալին փոխարինել ծովակալ ֆոն Սուշոնով,

ե) ականապատել բոլոր նեղուցները սկսած Հելլես հրվանդանից:

Այս որոշումները գաղտնի են և չեն հաղորդվել ո՛չ ռազմածովային նախարարին և ո՛չ էլ այն ծառայողներին, որոնք չեն պատկանում Իթթիհադի կառավարական խորհրդին:

Կոստանդնուպոլիս, 15 սեպտեմբերի 1914 թ.

Բնականաբար փաստաթղթերը որևէ ստորագրություն չէին կրում, բայց նրանց բովանդակությունը անչափ մեծ հետաքրքրություն էր ներկայացնում:

Թալիբ բեյ, լրտես դարձած սնապարծ էպիկուրական: Իրոք որ կյանքը չարունակ տարբեր կողմերով է շրջվում:

Նախարարությունից դուրս եկա այն համոզմամբ, որ Թուրքական կառավարությունն իր արմատական համոզմունքները գերադասում է իր երկրի ընդհանուր շահերից: Մյուս կողմից՝ Ժան Կառնոյի մեկնաբանությունները ցույց էին տալիս, որ Փոքր Ասիայի հույների և հայերի տառապանքը նոր է սկսվում:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1914

44. ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տուն վերադառնալիս զարմացա տեսնելով Գասպար Բաբիկյանին մուտքում: Ինձ համար նա դաշնակահար էր և հրաչալի կոմպոզիտոր, բայց նրա հետ մեր հարաբերությունները Մարիցայի մահվանից հետո ջերմ չէին: Թեև որոշ ժամանակ նա եղել էր որդուս տնային դաստիարակը, հիմա էդուարը գտնվում էր Միացյալ Նահանգներում և հետևաբար առիթ չկար նրա այստեղ գտնվելու համար:

Ինձ ջերմորեն ողջունեց, ինչպես որ սովորաբար անում են հայերն իրենց բարեկամների հետ և ինձ հարցրեց, թե կարո՞ղ եմ արդյոք նրան մի քանի րոպե տրամադրել: Սիրով համաձայնեցի, և բարձրացանք տուն՝ Սենային նայող իմ բնակարանը, շատ մոտ նոր կամրջին, որտեղ փոխադրվել էի Թերևս ազատվելու ինձ հետապնդող հիշողություններից:

Բաբիկյանը նստեց իմ դիմաց: Նրա զգոն աչքերը մի պահ նայեցին ինձ՝ փորձելով զննել ինձ ներքուստ:

— Գիտեք ինչ, մսյե դը Լատուր: Դժբախտաբար պետք է ասեմ, որ ոմն Սուլեյման Ասկերի բեյի ազգականն եմ: Նրան ազգական անվանելը շատ հարաբերական է, սակայն նրա զավակներն իմ զարմիկներն են, քանի որ կնության է առել խորթ քրոջս: Շատ խճճված պատմություն, բայց ավելի հաճախադեպ, քան թվում է կողքից: Ի վերջո անցնեմ բուն նյութին, ներեցեք խեղճ ծերուկիս երկարաբանության համար:

Ասկերի բեյը զինվորական է՝ մեկն այն կապիտաններից, որոնք մտնելով երիտթուրքերի շարքերը, ընկել են դրախտ: Որպես զինվորական ունի մի մեծ թերություն. չի կարողանում լեզուն ատամների տակ սեղմել: Այդ կարգի մարդիկ, որ միջից դատարկ են և փուչ. շարունակ պետք է ցույց տան, որ ինչ-որ բան արժեն: Մի երկերեսանի և սեռամոլ տիպ: Մի խոսքով, քանզի նմանն իր նմանին է գտնում, մտերմացել է Աթիֆ բեյի հետ՝ շատ վատ մարդ, որի նմանը չկա: Հայտնի դոկտոր Նազըմի աջ ձեռքն է, որը այստեղ Սորբոնում մի դասընթացի է մասնակցել, իսկը՝ չան որդի: Ասկերի բեյը հիմա մի հայուհու հետ է ապրում..., բայց զինվորական է և... պետք է ծածուկ պահի:

Կարծում եմ, որ ձեզ նկարագրեցի նրա կերպարը, այսպիսով, կապիտան Սուլեյման Ասկերի բեյը Թեշքիլաթ Մահսուսեի ժամանակավոր հրամանատարն է..., ասեմ ձեզ: Անցած հունիսին Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ մի ժողով, որին մասնակցեցին Թալեաթը՝ որպես ներքին գործերի նախարար և կուսակցության իսկական առաջնորդ, դոկտոր Նազըմը, դոկտոր Բեհաէդդին Շաքիրը, կրթության նախարար Ահմեդ Շյուքրուն, Աթիֆ բեյը, Ազիզ բեյը, Իսմայիլ Ջանփոլադը և գնդապետ Սեյֆին..., որը կոորդինացնում է ռազմական գերատեսչության քաղաքական բաժինը, կամ, որ նույնն է՝ բանակից վռնդում է նրանց, ովքեր ռեժիմին կողմնակից չեն:

Տեսեք, թե որքան ինքնավստահ են ու գոհ, այնքան, որ Ազիզ բեյը տարել է այդ ժողովին, որը համարվում էր գաղտնի, Աբդուլլային՝ հայտնի լուսանկարչին, որպեսզի անմահացնի այդ խմբին: Ես, որ ճանաչում եմ շատ թուրքերի, կասեմ, որ նրանք արժանի չեն այդպիսի ղեկավարների, այստեղ ամենուրեք կան լավ մարդիկ, բայց ապրում են վախով... Դե, ի՞նչ: Հատուկ պատրաստությունը՝ զինված ստորաբաժանում է, որն ընտրում է թուրքական բանտերից վատթարագույն հանցագործներին՝ մարդասպաններին, բռնաբարողներին, արվամոլներին, ճանապարհների ավազակներին և դրանց ղեկավար նշանակել են Սուլեյման Ասկերիին: Նրանց հավակնությունն այնքան վայրագ է, այնքան խարդախ, որ թվում է անհեթեթ: Խոսքն այն մասին է, որ պատրաստեն դահիճներ: Այսինքն՝ նրանք պետք է կատարեն կեղտոտ աշխատանքը, օրինակ՝ սպանեն կանանց և երեխաներին... Այո՛, այո՛, հեշտ չէ հավատալ նրան, ինչ ձեզ պատմում եմ: Փոխարենը դահիճներին՝ այդ հանցագործներին խոստանում են ազատություն, բացարձակ անպատժելիություն և այն, ինչ իրենց հետ կարող են տանել..., գտած փողը, թանկարժեք զարդեր... և շատ դեպքերում՝ կուսությունը կամ անմեղությունը:

Բաբիկյանը հառաչեց: Ակնհայտ էր, որ հսկա ճիգեր էր գործադրում իրեն հանգիստ պահելու համար, մինչդեռ իմ մեջ սկսվում էր փոթորկող մի ընդվզում: Ես լավ ծանոթ էի այդ կերպարներից շատերին, և կասկածելն ավելորդ էր:

Այդ կազմակերպությունն արդեն պատրաստ է: Կարծում եմ, որ այդ գաղափարի մտահղացումը դոկտոր Նազըմինն է, մի ոճրագործի, որն ատում է քրիստոնյաներին, մանավանդ հայերին: Ուզում են բնաջնջել մեր ազգը, և հանգամանքները դրան նպաստում են: Այս ամենը

խելահեղություն է Ֆրանսիայի կամ Անգլիայի պես երկրում, այդուհանդերձ ձեզ կասեմ, որ այն բանից հետո, երբ տեսա գերմանացիների գործելակերպը, հաստատ գիտեմ, որ նրանք չեն խանգարի, ինչ էլ որ լինի: Նրանք համոզված են, որ աշխարհում ամենակարևորը Դոյչլանդն է և արիացի մարդու հետ կապված բոլոր պատմությունները: Մնացածներս պարզապես ստորին ռասաներ ենք: Շատ եմ ցավում, որ Վագների պես մեծ կոմպոզիտորը նրանց խելքին է ընկել:

Ինչ վերաբերում է չեթեներին՝ հատուկ պատրաստության հրոսակներին, սոված գայլերի պես սպասում են իրենց որջում՝ լիզելով շրթունքները, մտածելով միայն իրենց սպասելիքների մասին: Պետք է, որ դաժան լինի Ասկերի բեյի զզվելի աշխատանքը: Պետք է վերահսկի և զսպի վատթարագույն մարդասպանների վատթարագույն տեսակին... Դուք համաձայն կլինեք, որ դրանք մարդ կոչվելու արժանի չեն:

Որքանով ինձ հայտնի է՝ նրանք կազմակերպում են մոտավորապես քսանից երեսուն հոգիանոց էսկադրոններ, որոնք անհրաժեշտ պահին կտեղափոխվեն համապատասխան վայրեր, այսինքն՝ Հայաստան, որպեսզի կատարեն իրենց արգահատելի ոճրագործությունները: Ոչնչացնել բոլոր հայերին, ովքեր կկանգնեն նրանց ճանապարհին:

Տեսեք, մայե, այս ամբողջը կառուցված է վայրագ տրամաբանության հիման վրա: Ասենք սովորական զինվորների համար, որոնք խիղճ ունեն, հրամաններ կան, որոնց անհնարին կլինի ենթարկվել. կան սահմաններ, որ մարդ արարածը ընդունակ չէր լինի խախտել: Ո՞վ կկարողանար սպանել հղի կնոջը, ով կարող էր բռնաբարել դըպրոցահասակ աղջնակների, չեթենե՛րը: Ահա թե որքան անասնական և որքան դիվային է այս ձեռնարկումը: Եվ մենք խոսում ենք ոչ թե արտասովոր խենթերի, մտագարների, հոգեկան հիվանդների մասին: Խոսում ենք այս մոլորակի ամենակարևոր երկրներից մեկի՝ Օսմանյան կայսրության ներկայացուցիչների մասին, որ մի քանի տարի առաջ հրճվում էին իրենց արդիականությամբ՝ Մերձավոր Արևելքում Ֆրանսիական հեղափոխության ամենաառաջադեմ գաղափարների ժառանգորդները լինելու առումով... Ինչ ցինիզմ: Ահա նրանք, ձեր առջև կանգնած, իշխանությամբ արբեցած, առանց մի բանից գաղափար ունենալու, քաղաքականության մեջ իսկական անասուններ, անասնական՝ պանթուրքիզմի ապուշ գաղափարներով բթացած, խաբելով իրենց սեփական ժողովրդին՝ բարձրագույն մարդկանց ազգ ստեղծելու գաղափարով,– իսկ դրանում մեծ է գերմանացի կեղծ

գիտնականների մեղքը,– այն իդեալականացված Թուրանում, որտեղ իբր թե հավաքվելու են բոլոր թյուրքալեզու և թյուրքացեղ ժողովուրդները: Մինչդեռ իրականում այսօր, եթե մի բան կա անելու, դա այն է, որ պետք է փորձեն վերացնել այս երկրի թշվառությունը, որտեղ մեռնում են երեխաների կեսից ավելին, շատ ծերեր մեռնում են սովից: Ես եղել եմ օսմանյան հպատակ և վշտանում ու սարսափելի ամոթ եմ զգում կատարվող այս ամենի համար:

Մայե դը Լատուր, ես շատ վշտացած եմ և խոստովանեմ ձեզ, որ եղավ մի պահ, երբ ինձ էլ խաբեցին... Այո՛, հավատացի նրանց, որ ամեն ինչ կարող էր շտկվել Թուրքերի և հայերի միջև: Երբ իշխանությունից հեռացրին մարդասպան սուլթանին, որոշ ժամանակ համոզված էի, որ այդ չար ոգուն գահընկեց անելուց հետո՝ ոչինչ չի խանգարի մեր միատեղ ապագա ստեղծելուն և ինչպես ես, հազարավոր հայեր հավատացին այդ մաքրմանը: Հիմա հաստատ գիտեմ, որ սկզբից ևեթ էինք եղել խաբված:

Գասպար Բաբիկյանը փոխեց խոսելաձևը, երբ ոտքի կանգնեց:

– Ոչ, չեն կարող բնաջնջել մեզ, երբեք, կանցնեն տարիներ, և իրենց արարքների խայտառակությունը կընկնի իրենց վրա: Հիմա պետք է գնամ, մայե: Ներեցեք ինձ ձեր ժամանակը չարաչահելու համար:

Միայն ձեզ ուզեցի հայտնել թե ինչ կարգի թշնամիներ ունենք մենք՝ հայերս: Իսկապես, որտե՞ղ է Էդուարը: Վաղուց նրան չեմ տեսել: Ճի՞շտ է, որ գտնվում է Նյու Յորքում: Երբ ինձ ասացին այդ, ուրախացա: Այնտեղ ապահով կլինի... Այդ տղան իսկական գանձ է, և ես ուրախ եմ, որ նա տանից դուրս է, Հայաստանում նրա նման շատերը կմեռնեն:

Եվ այդտեղ Գասպար Բաբիկյանն այլևս չկարողացավ զսպել արցունքները:

– Ահ, մայե, ինչ դժբախտություն, ինչ սարսափելի աղետ է այս ժամանակներում հայ լինելը: Երբ մտածում եմ, թե ինչ կարող է պատահել, Աստծուն խնդրում եմ, որ ինձ չթողնի այստեղ, որ դա տեսնեմ:

Երբ Բաբիկյանը գնաց, մտածմունքի մեջ ընկա: Ես էլ էի ունեցել այդ մղձավանջը. Էդուարը գտնվում էր Թուրքերի ձեռքում, որոնք նրան տանջում էին: Խոր շունչ քաշեցի՝ փորձելով ինձանից վանել այդ անհեթեթ մտածմունքները: Գոնե լավ էր, որ որդիս այդ օրերին գտնվում էր հողագնդի ամենաապահով վայրում:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1914 – ՄԱՐՏ 1915

45. ՆԱՄԱԿԸ

Ես չկարողացա խույս տալ պաշտոնական առաջարկից, որն իրականում հրաման էր, մտնել ազգային հետախուզության կոնսուլտացիոն խորհուրդ, որը ենթարկվում էր պաշտպանության և արտաքին հարաբերությունների նախարարություններին: Դա ինձ համար հարուցեց որոշակի խնդիրներ, շատ աշխատանք և բացառիկ տեղեկատվություն ստանալու հնարավորություն:

Տասներկու հոգուց էինք բաղկացած, մի քանիսը, ինչպես Ժան Կառնոն, զբաղեցնում էին պետական պաշտոններ, ուրիշները՝ ինչպես ես, նախկինում էինք ունեցել նման պաշտոններ, սակայն Ֆրանսիան կարիք ուներ մարդկանց և գաղափարների:

Ազգային հետախուզության կոնսուլտացիոն խորհուրդը. այս էր այդ օրգանի կիսապաշտոնական անհաջող անունը, որը պաշտոնապես փոխվեց այլ՝ ավելի համապատասխան անվամբ, պետք է խորհրդատվությամբ ապահովեր կառավարությանը և զորքերի գլխավոր շտաբներին այն հարցերի կապակցությամբ, որոնք առաջնահերթ էին:

Զարմանալի էր իմանալ, թե ինչ քանակությամբ մարդիկ էին լրտեսությամբ զբաղվում հօգուտ Ֆրանսիայի՝ կոնֆլիկտից տուժած տարբեր երկրներում և նաև իմացա, որ մերոնց մեջ կային բազմաթիվ դավաճաններ և երկկողմանի գործակալներ:

Առաջին հաղորդագրություններից մեկը, որ դրվեց սեղանին՝ Սև ծովի ռուսական նավահանգիստների ռմբակոծումն էր Թուրքական նավատորմիղի կողմից, որն այն ժամանակ բաղկացած էր գերմանացիների տված երկու զրահանավերից:

Գոբենը և Բրեզլաուն վերանվանվել էին «Յավուզ սուլթան Սելիմ» և «Միդիլլի», փորձելով կերպարանափոխվել ժամանակակից սարքավորումներով հագեցած իբր Թուրքական նավատորմիղի նավերին, երբ բոլորս էլ համոզված էինք, որ դրանք կառավարվում են գերմանական սպաների կողմից, ինչպես նաև, որ ենթասպաների և ծովայինների մեծ մասը ազգությամբ գերմանացի են: Անհնարին կլիներ վարել այդ նավերը առանց հատուկ պատրաստվածության և սպասարկման, որից զուրկ էին Թուրք ծովայինները:

Բայց ամենամեծ անակնկալը, գոնե ինձ համար, եղավ այն, որ իմացա «Սուլթան Սելիմ» նավի վրայից մեզ լրտեսող մարդու անունը՝ Իոախիմ ֆոն Շյոնեբերգ, որը նավատորմիղի երրորդ վիրաբույժն էր՝ երրորդ կարգի կապիտանի կոչումով: Աշխարհն իրոք որ նեղ է:

Ֆոն Շյոնեբերգի հաշվետվությունից պարզ երևում էր, որ 1914 թ. հոկտեմբերի 29-ի հարձակումը տեղի էր ունեցել ոչ թե թուրքական ծովային նավատորմիղի նախարարության հրամանով, այլ պաշտպանության նախարարության՝ Էնվեր փաշայի ղեկավարությամբ և հաստատված ներքին գործերի նախարարության՝ Թալեաթ փաշայի կողմից, որոնք ուզում էին, որ իրենց երկիրը՝ Թուրքիան, հրաժարվի չեզոք դիրքից Բեռլինի հրամանով: Հարձակումը եղել էր ջախջախիչ՝ փորձելով ստեղծել մի մեծ խուճապ, մեծ վնասներ հասցնելով նավատորմիղին և նավամատույցներին, նաև նավթի մատակարարմանը Բաթումում, Օդեսայում, Սևաստոպոլում, Յալթայում, Նովոռոսիյսկում և Թեոդոսիայում:

Մի քանի օր անց, նոյեմբերի սկզբներին, Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային:

Նույն ամսվա հինգին Ֆրանսիան և Անգլիան նույնպես հայտարարեցին պատերազմ Թուրքիային: Հաստատ գիտեի, որ Թուրքիայում ապրող հայ ժողովրդի համար դա նշանակում էր մահվան դատապարտում:

Այդպես էլ եղավ: Արամ Ջելկայանը շարունակում էր լինել ՀՀԴ-ի (որին պատկանում էր Գրիգոր Բրոչյանը) կապավորը և տեղեկացրել էր Հովհաննես Օհանյանին Վանի նահանգում տեղի ունեցածի մասին: Օհանյանն ինձ գրեց մի շատ տխուր նամակ, որով անձամբ վկայում էր կատարվածը:

> *Սիրելի՛ բարեկամ,*
> *Անկախ այն բանից, որ ինձ համարում եմ իսկական հավատացյալ, երբեմն ունենում եմ այն սարսափելի զգացողությունը, որ Աստված մոռացության է մատնել հայերին: Ամեն ինչ մի կողմ, մարդ կարող է շարունակել հավատալ, սակայն փորձություններն այնքան դաժան են, որ հոգեպես ամբողջովին ինձ սպառում են:*
> *Կառավարության վերջին պահանջը եղել է տասնութից հիսուն տարեկան տղամարդկանց պարտադիր զորակոչը Վանի նահանգում: Այդ մարդիկ*

իրենց հետ պարտավոր էին տանել լծկան անասուններ և մթերացու, ինչպես նաև այլ ունեցվածք՝ ռազմական կարիքների նպատակով, թեև հայերից ոչ ոք չգիտեր, թե որն է նրանց իսկական նպատակը:

Ողջ նահանգով մեկ պատիժը, չարաշահումները, նվաստացնող արարքները, սպանությունները, կախաղանը և երեխաների բռնաբարումը տեղի են ունենում շարունակ ու առանց որևէ պատճառի, և հեղինակները դեպքերի մեծամասնությունում հրճվում են իրենց գործադրած վայրագություններով:

Նահանգապետ Զևեդ բեյը՝ զինվորական (էնվեր փաշայի աներորդին), որը բացի այդ, զինված ուժերի հրամանատարն է նահանգում կարծես պատրաստ է անել ամեն բան, որպեսզի անընդհատ լլկվելով ու կեղեքվելով՝ հայերը խռովություն բարձրացնեն:

Մյուս կողմից, ռուսական զորքերը հեռանում են սահմանից և վախենում ենք, որ այլևս ոչինչ չի կարող զսպել թուրքերի մոլեգնությունը:

Մենք տեղեկություն ունենք այն մասին, որ տեղի են ունենում անխտիր կոտորածներ, ավերում և հրդեհում են գյուղեր, հողին հավասարեցնում հայկական դպրոցներ, կենդանի հողին են հանձնում հայ գյուղացիների և խաչում քահանաների: Իրականությունն այն աստիճանի է, որ հայերը զարհուրած խուճապահար ապաստանում են ռուսական տարածքում:

Գիտենք, որ այս ամենով թուրքական կառավարությունը ցույց է տալիս, թե մինչև ուր կարող է հասնել հայերին բնաջնջելու համար: Վախենում ենք, որ եթե այս կոնֆլիկտը շարունակվի, թուրքերը իրավիճակից օգտվելով արմատախիլ կանեն հայ ազգը: Ցավում եմ, որ ոչ մի լավ բան չեմ կարող ձեզ հայտնել, ընդունեք հարգանքիս հավաստիքը:

Յովհաննես Օհանյան

Հ. Գ. Ձերմ ողջույններ իմ կնոջից և զավակներից:

Նամակը նկարագրում էր մի զարհուրելի մթնոլորտ և ցույց տալիս հայերի հոռետեսությունը: Դա էր Թալեաթի և նրա համախոհների ստեղծած սահմռկեցուցիչ իրադրությունը Թուրքիայում:

Տարա այդ նամակը Ժան Կառնոյին, որն ինձ խոստացավ այն պատճենահանել և հանձնել արտաքին գործերի նախարարին, թեև այդ ժամանակ հավատս քաղաքական գործիչների նկատմամբ շատ էր նվազել, որոնք ամեն կերպ ջանում էին Գերմանիայի, այլ կենտրոնական տերությունների ու Թուրքիայի դեմ պատերազմում պարտություն չկրել: Հակամարտության վայրիվերումները ցույց էին տալիս, որ մասնակիցներից ոչ ոք չի պատրաստվում զիջել, և հետևաբար պատերազմը երկարատև է լինելու. դժբախտաբար այդպես էլ եղավ:

Տեղեկացա, որ ՀՀԴ-ն շարունակում է ցույց տալ, որ այդ ամենը չի տեսնում: Նրա ստվերային առաջնորդներից մեկը, որ Գրիգոր Բրոչյանն էր, կուրորեն այն կարծիքին էր, որ դրանք մասնավոր դեպքեր էին և չէին կարող խզել հարաբերությունները Իթթիհադի հետ, քանի որ հայերի դեմ ամեն բան ծայրահեղորեն կվատանար: Թուրքերի ասեղն էին թելում, փորձելով ապացուցել, որ զինված պայքարը արդարացված չէ՝ հայերի պատասխան գործողությունների առումով:

Մյուս կողմից, հետախուզական ծառայությունների միջոցով մեզ տեղեկացրել էին, որ ՀՀԴ-ն սիրահոժար շարունակում է թուրքական կառավարությանը հաղորդել տվյալներ: Շարժման առաջնորդներին զգուշացրին, որ դրանով կարող էին սարսափելի սխալ գործել, բայց նրանք չընդունեցին մեր տեսակետը:

Այսպես անցան օրեր ու ամիսներ, մինչև որ համարյա չզգացի, թե ինչպես վրա հասավ 1915 թ. գարունը: Շատ հեռու էի այն մտքից, թե ինչպես է կյանքս փոխվելու:

ԳԱՐՈՒՆ 1915

46. ՆԻԿՈԼ ԿԱԴԻՖՅԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նիկոլ Կադիֆյանը քսան տարուց ավելի զբաղեցնում էր այսպես կոչված դրագոմանի կամ Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանատան պաշտոնական թարգմանչի պաշտոնը: Մի քանի ամիս էր, ինչ մեր նստավայրը՝ դեսպանատունը փակ էր պատերազմի պատճառով, և Կադիֆյանը մեզ հետ կապի մեջ էր Թուրքական մայրաքաղաքում Իսպանիայի դեսպանատան միջոցով՝ կանոնավոր կերպով ուղարկելով հաղորդագրություններ, որոնք մեզ շատ պիտանի էին:

Այնուամենայնիվ, Ժան Կառնոն անհանգստանում էր Կադիֆյանի կյանքի համար: Գիտեինք, որ շատ մարդիկ, ներառյալ որոշ Թուրքեր, որոնցից մի քանիսը գործում էին անկողմնակալ ձևով, ձերբակալված էին, խոշտանգված: Նրանց նշանակալի մասն անհայտանում էր:

Կադիֆյանը կիրթ և պատրաստված մարդ էր՝ օժտված վառ ողջամտությամբ և մեծ կենսափորձով: Վերջին տարիներին նրան տարբեր հարցերով էինք խորհրդի կարգով դիմում, և նա միշտ դրսևորում էր մեծ ներըմբռնում: Այդ պատճառով էլ նրա հաղորդագրությունները գնահատվում էին ըստ արժանվույն:

Ժանն ինձ ամեն ինչին իրազեկ էր պահում, մանավանդ այն ժամանակից ի վեր, երբ երկուսով աշխատակցում էինք խորհրդի կազմում: Այդ իսկ պատճառով ինձ տվեց վերջին նամակ-հաղորդագրության պատճենը, որը հասավ Փարիզ 1915 թ. մայիսի 12-ին և այնքան կարևոր էր, որ այն վերլուծեցին խորհրդում, քանի որ ներառում էր ապրիլի 21-ին և ապրիլի 25-ին տեղի ունեցած իրադարձությունները:

Հարկ է նշել, որ Կադիֆյանն ուներ տեղեկատվության իր սեփական աղբյուրները, ինչը ցույց էր տալիս, որ բոլոր Թուրքերը չէ, որ համաձայն էին իրենց կառավարության հետ, և շատ բաներ, որոնց մասին պատմում էր Թուրքական կառավարությունը, սուտ էր:

Սեղմ հաղորդագրություն այն մասին, թե ինչ էր կատարվել Կոստանդնուպոլսում 1915 թ. ապրիլի 19-ից մինչև 25-ը՝ շաբաթվա ընթացքում:

1915 թ. ապրիլի 19-ին Կոստանդնուպոլսի ոստիկանության մի բարձրաստիճան պաշտոնյայից ստացած հաղորդագրությունների միջոցով տեղեկացա, որ պատրաստվում էին ձերբակալել այդ քաղաքի հայ համայնքի աչքի ընկնող անդամներին:

Նախատեսված օրը ապրիլի 24-ի գիշերն էր: Նախատեսել էին ձերբակալել մոտավորապես հազար մարդու, և ցուցակը անձամբ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի կողմից հանձնվել էր ոստիկանության պրեֆեկտին՝ Բեդրի բեյին: Այդ պատճառով էլ իրազեկիչը չէր կարող առայժմ տալ անուններ, քանի որ հիշյալ ցուցակը գտնվում էր պրեֆեկտի չհրկիզվող պահարանում:

Անմիջապես այդ մասին տեղեկացրի ազգային ասամբլեայի պատգամավոր դոկտոր Գրիգոր Զոհրապին, որն ինձ ընդունեց իր սեփական տանը, Հովհաննես (Վարդգես) Սերենգուլյանի՝ Էրզրումի պատգամավորի ներկայությամբ:

Պետք է ասեմ, որ երբ նրանց հաղորդեցի տեղեկությունը, երկուսն էլ ընդունեցին կասկածամտորեն: Դոկտոր Զոհրապն ինձ պատասխանեց, որ ամեն ամիս նա ստանում է համանման տեղեկություններ և հարկ չկա ավելացնել հայ համայնքի տագնապը: Ասեմ, որ ինձ ճանապարհ դրեցին հավաստիացնելով, որ կստուգեն այդ տեղեկությունը, քանի որ երկուսն էլ հրավիրված էին ներքին գործերի նախարարի կողմից, քսաներեքի առավոտյան, այնպես որ կփորձեն պարզել, թե ինչ է կատարվում այդ առթիվ: Ճիշտ է, որ Կոստանդնուպոլիսը բամբասանքների մայրաքաղաքն է, և չի կարելի հավատ ընծայել քաղաքով մեկ տարածվող բոլոր ասեկոսեներին, մանավանդ երբ շատ դեպքերում դրանք տարածում է կառավարությունը նախապես, օգտվելով ստացած արձագանքից, որպեսզի հաստատի իր կողմից կիրառվող միջոցի նպատակահարմար լինելը: Մյուս կողմից՝ մայրաքաղաք էին հասնում ճշմարիտ կամ կեղծ լուրեր հարձակումների, սպանությունների, թալանի, գողության մասին, որոնք տեղի էին ունենում մեծ քաղաքներում, որտեղ ապրում էր հայ բնակչություն: Դժբախտաբար, ասեմ, որ այնքան հաճախակի են վերջին ամիսներին նման լուրերը, որ այլևս ոչ ոք չէր հուզվում դրանք լսելիս:

Այնպես էր, որ ասես հայերս ընդունել էինք, որ իրերի դրությունն այդ էր, սակայն մյուս կողմից՝ կարծես սպասում էինք հրաշքի, որը մեկընդմիշտ մեզ ազատելու էր: Այդ պատճառով էլ ինձ տարօրինակ չթվաց երկու հայ քաղաքական գործիչների արձագանքը, թեև իրականում բոլորս էլ ներքուստ զգում էինք, որ ամեն վայրկյան կարող էր կատարվել շատ ծանր մի բան:

Չնայած դրան՝ շարունակեցի այդ հարցով ինքս զբաղվել: Կառավարության բարձր ոլորտներում ունեի թուրք բարեկամներ, նաև Գերմանիայի դեսպանատանը, որի պատճառով էլ ուղղվեցի այնտեղ դրագոմաններից մեկի՝ մի հայի (Խ. Ա.) հետ խոսելու նպատակով: Նա ասաց, որ ինձ այնտեղ չի կարող ընդունել, բայց պետք է մի շատ կարևոր բան ասի ինձ, ինչի պատճառով էլ երեկոյան ես գնացի նրա տուն:

Խ. Ա.-ն ինձ տվեց պատճենը մի փաստաթղթի, որը նախորդ օրը նա թարգմանել էր դեսպանի խնդրանքով և զգուշացվելով, որ գաղտնի է, որը նրան ուղարկել էին դեսպանատան հետախուզական ծառայությունները:

Փաստաթղթի ամսաթիվը դրված էր երեք ամիս առաջ. ամենայն հավանականությամբ Իթթիհադի կոմիտեի որոշումն էր, որն ամբողջությամբ ներկայացնում եմ ստորև[1]:

1. Միություն և առաջադիմություն կոմիտեի 3 և 4 հոդվածների հիման վրա լուծարել հայկական բոլոր միությունները, ձերբակալել հայերին, որոնք երբևէ աշխատել են կառավարության դեմ, ուղարկել նրանց այնպիսի նահանգներ, ինչպիսիք են Բաղդադն ու Մոսուլը և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ տեղ հասնելիս:
2. Բռնագրավել զենքերը:
3. Գրգռել մուսուլմանական հասարակական կարծիքը հատուկ և համապատասխան մեթոդներով Վանի, Էրզրումի և Ադանայի նահանգներում, որտեղ իբրևթե հայերը արթնացրել են մուսուլմանների ատելությունը և հրահրել կազմակերպված սպանդներ, ինչպես ռուսներն արեցին Բաքվում:
4. Այդ իրականացնելու համար հենվել Էրզրումի, Վանի, Մամուրեթ-ուլ Ազիզի և Բիթլիսի բնակչության աջակցության վրա և չօգտագործել կանոնավոր զինված ուժերը (ինչպես ժանդարմերիան), այլ ձևացնել, թե կանգնեցնում եք սպանդը: Ընդհակառակը, այդ ուժերի միջամտությունն օգտագործել ակտիվորեն օգնելու մուսուլմաններին այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Ադանան, Սըվազը, Բուրսան, Իզմիդը և Զմյուռնիան:
5. Միջոցներ ձեռք առնել ոչնչացնելու 50 տարեկանից ցածր տղամարդկանց, քահանաներին և գիտնականներին, թույլ տալ իսլամ ընդունել կանանց և երեխաներին:
6. Արտաքսել այն մարդկանց ընտանիքներին, որոնց հաջողվել է փախչել և այնպես գործել, որպեսզի ոչ մի կապ չունենան հարազատ քաղաքի հետ:

[1] **Պ. Կ. Օհանյան,** *Հայկական հարցը, 3-րդ հատոր (իսպաներեն):*

7. Նկատի առնելով այն, որ հայ պաշտոնյաները կարող են լրտես լինել, նրանց բացարձակապես հանել կարևոր ծառայությունից պետական և կառավարման բոլոր պաշտոններից:
8. Ավելի համապատասխան ձևով ոչնչացնել բանակում գտնվող բոլոր հայերին, ինչը հանձնարարել զինվորականներին:
9. Ծավալել այս գործողությունները բոլոր վայրերում միաժամանակ, որպեսզի չհասցնեն ձեռնարկել ինքնապաշտպանական միջոցներ:
10. Խստիվ պահպանել այս հրահանգների հույժ գաղտնիությունը, որոնք կարող են հայտնի լինել երկու կամ երեք հոգու, ոչ ավելի:

Կարդալով և հաշվի առնելով, այդ ամենի ողջ կարևորությունն ու լրջությունը, հասկացա, որ հիշյալ փաստաթուղթը պետք է հանձնեմ Ֆրանսիայի դեսպանատան հետախուզական ծառայություններին:

Եկավ ապրիլի 24-ը, մթնոլորտը սովորականի պես լարված էր, քանի որ լուրեր էին գալիս երկրի շատ ծայրերից: Ակնհայտ էր, որ կառավարությունից ոչ մի լավ բան չէինք կարող սպասել, թեև բոլոր համաժողովներում, հավաքույթներում և առանձին խոսակցություններում չէինք ուզում հավատալ, որ հենց կառավարությունից կարող էր ի հայտ գալ մի դեկրետ, որում հանգամանորեն նշված լինեին մեզ ոչնչացնելու եղանակներն ու պայմանները: Պարզապես թվում էր անհրաժեշտ: Մի բան էին սպանությունները, գազազած ամբոխների կողմից սպանդները և մնացած բաները, բայց որ նախարարների խորհուրդը մի այնպիսի երկրի, որն ունենալով Սահմանադրություն, դեպուտատների ասամբլեա,– նրանցից մի քանիսը քրիստոնյաներ,– ընդուներ որոշում բնաջնջելու բնակչության մի մասին սպանության, դավադրության և անհայտ ուղղությամբ արտաքսելու միջոցով, որևէ բանականությունից և չափից դուրս էր:

Ներքին գործերի նախարարության մի բարձրաստիճան պաշտոնյայից, ում հետ պահպանում էի երկար բարեկամական հարաբերություններ, իմացա, որ ոստիկանության գլխավոր վարչությունը պահանջել էր բոլոր հայերի նորացված ցուցակը՝ մտավորականների, քաղաքական գործիչների, ֆինանսիստների, արվեստագետների, գիտնականների և այլոց:

Հենց այդ պահին էր, որ ըմբռնեցի մեզ վրա հասնող ողբերգության անկարագրելի մեծությունը: Այլևս կասկածի կամ երկմտանքի տեղ չկար: Կառավարությունը ուզում էր գլխատել հայ հասարակությանը ջանալով, որ բողոքը չկենտրոնանար Կոստանդնուպոլսում, փաստորեն միակ վայրը, որը հաղորդակցվելու էր Եվրոպայի հետ՝ կոնֆլիկտից հետո ընկած ժամանակաշրջանում: Այսպիսով ստեղծվում էին երաշխիքներ, որ հայկական աղբյուրներից լուրերը չէին հասնի եվրոպական մամուլին:

Այդ ամենի տպավորության տակ՝ հնարավորին չափ արագ հասա Գրիգոր Զոհրապի տուն, բայց նրան չգտա այնտեղ: Արդեն համարյա կեսօր էր, վազելով գնացի «Ազատամարտ» օրաթերթի խմբագրություն: Այնտեղ միայն մի պահակ կար, և նա հաստատեց այն, ինչ ես արդեն գիտեի: Թերթը փակված էր կառավարության հրամանով մարտի կեսերից: Այդ ժամանակ, երեկոյան ժամը 3-ին մոտ վազեցի պատրիարքարան, բայց չկարողացա ներս մտնել, քանի որ այնտեղ մի գծի վրա շարված զինվորները արգելում էին մուտքը: Բանակի կապիտանը, որը գլխավորում էր շրջափակումը, ոչ մի բացատրություն չուզեց տալ, հարցուփորձ արի հարևանությանը, և մի թուրք ինձ պատմեց, որ պատրիարքը բռնության զոհ կարող է դառնալ:

Համոզված, որ շատ ծանր բան է մեր գլխին գալու, վազեցի Դանիել Վարուժանի՝ պոետի տուն: Չհասցրի նրա հետ խոսել, որովհետև ինձ ասացին, որ նրան նոր են ձերբակալել:

Արդեն ուրիշ բան չէի կարող անել, եթե ոչ փորձելու հայտնել նրանց, ովքեր ցուցակում կարող էին լինել: Նրանց մեջ գուցե և իմ անունն էլ կար, ուստի ես պետք է գործեի զգուշորեն:

Այդ գիշեր ձերբակալեցին Կոստանդնուպոլսի երկու հարյուրից ոչ պակաս ամենանշանավոր հայերի: Համենայնդեպս ո՛չ Գրիգոր Զոհրապը և ո՛չ էլ Վարդգեսը չձերբակալվեցին: Գուցե նրանց պաշտպանում էր կառավարության բարձրաստիճան անդամների հետ ունեցած բարեկամական սերտ հարաբերությունը կամ էլ այն, որ նրանք ամենաաչքի ընկնող հայ քաղաքական գործիչներն էին:

Երկուսին էլ գտա Զոհրապի տանը: Նրանք զայրացած էին և վախեցած, թե ինչ է կատարվելու ձերբակալված մարդկանց հետ, նաև ճնշված իրենց սպասող ապագայի հանդեպ, քանի որ համոզված էին, որ ցանկացած պահի կարող էին գալ իրենց հետևից: Ձերբակալությունների մտադրությունն ակնհայտ էր՝ կործանել հայ համայնքը՝ սկսած իրենց առաջնորդներից:

Գիտենք, որ Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն անմիջականորեն դիմել էր ներքին գործերի նախարարին՝ Թալեաթ փաշային, առանց որևէ բանի հասնելու: Նա բողոքում էր հայ առաջնորդների ձերբակալման դեմ, որոնցից մի քանիսն իր մտերիմ ընկերներն էին, իր իսկ հայտարարությամբ, ինչպես Լևոն Չիրինգունյանը (որն ուներ ամերիկյան անձնագիր) կամ էլ Պողոս Հակոբյանը, որին նա նոր էր հրավիրել այցի Միացյալ Նահանգներ: Նաև բանաստեղծներ Դանիել Վարուժանի ու Ատոմ Յարճանյանի և շատ ուրիշների ձերբակալման դեմ, ովքեր ամուր կապերի մեջ էին նշված դեսպանատան հետ:

Մեզ տեղեկացրին կամայական ձերբակալությունների և արտաքսումների մասին Էրզրումում, Սըվազում, Դիարբեքիրում, Ուրֆայում, Մարաշում և այլ վայրերում: Բոլոր դեպքերում չկա այլ տեղեկություն այդ ամենի մասին, քանի որ հիմնական մայրուղիները վերահսկվում են արգելելով երթևեկությունը, ինչպես նաև նամակագրությունն է ենթարկվում գրաքննության:

Ահա այն, ինչ ձեզ հաղորդում եմ Կոստանդնուպոլսում 1915 թ. ապրիլի քսանչորսին:

Աստված մեզ օգնական:

Նամակը կարդալուց վհատված՝ զանգահարեցի հեռախոսով Ժան Կառնոյին: Թուրքերը որոշել էին օգտվել պատերազմից և հետևաբար Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի հետ հարաբերությունները խզելով՝ իրականացնել իրենց զարհուրելի նպատակը՝ վերացնել Թուրքիայի հայերին: Այժմ արդեն թաքցնելու կամ տարակուսելու հարկ չկար: Թուրքերը բնաջնջում էին մի ամբողջ ժողովրդի, այնպես, որ Եվրոպան չկարողանար որևէ կերպ արձագանքել:

Մտածեցի Ռիտա Հակոբյանի մասին: Տեղեկությանը կից ցուցակում նրա ամուսինը ձերբակալվածներից էր, պետք է մի բան անեի հանուն Ռիտայի և միակ հնարավորությունը իմ վաղեմի բարեկամի միջոցով էր՝ դեսպան Հենրի Մորգենթաուի:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1915

47. ՌԻՏԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՏԱԿԸ

1915 թ. ամառը ճնշող էր ոչ միայն սարսափելի շոգից, այլ նաև իրար հետևից եկող վատ լուրերից: Ֆրանսիան պաշտպանվում էր բոլոր ճակատներում, և թեև վստահ էինք, որ վերջնական հաղթանակը մերն է լինելու, մարդկային կյանքի սարսափելի կորուստը, մանավանդ խրամատներում տարվող արյունալի մարտերում, երկիրն ընկղմում էր տխրության և հոռետեսության մեջ:

Իմ միակ մխիթարությունն այն էր, որ Էդուարը երբեք որևէ ռիսկի չէր ենթարկվի և որ շուտով սկսելու էր իր ուսումնառությունը Հալեում: Առայժմ չէի կարող գնալ այնտեղ, քանի որ ֆրանսիական առևտրական նավերը սահմանափակել էին իրենց ուղևորությունները գերմանական սուզանավերի պատճառով, որոնք նրանց ծանր վնաս էին հասցնում իրենց տորպեդներով: Ես վստահ էի, որ հակամարտությունն ավելի շուտ կվերջանար, քան կանխագուշակում էին փորձագետները, քանի որ տնտեսական կորուստները սպառնում էին կործանել հակամարտության մեջ ներքաշված բոլոր երկրներին՝ անկախ այն բանից, թե նրանց հաջողվելու էր հաղթել թե ոչ:

Մյուս կողմից, Թուրքիայից եկող լուրերը գնալով վատթարանում էին: Մեր տեղեկությունների համաձայն, որ առաջին ձեռքից էին, մեծ եղեռնագործություններ էին իրականացվում ամբողջ երկրում, բացառությամբ Կոստանդնուպոլսի, որը նույնպես անմասն չէր, քանի որ բացի կամայական ձերբակալումներից՝ սկսած ապրիլի 24-ից, հայերը փողոցներում ենթարկվում էին անսպասելի հարձակման. առանց պատճառի գրոհում ու հրդեհում էին նրանց տները, և նրանցից շատերը առանց որևէ պատճառի անհետանում էին:

Համենայնդեպս, մտքովս չէր անցնում, թե կպատահեր մի բան, որն ինձ անձամբ վնասեր:

Դա մի տարօրինակ ներզգացողություն էր. պատերազմը վաղ թե ուշ ավարտվելու էր և գիտեի, որ չէի սնանկանա, քանի որ իմ գործարքների բազմազան լինելը և նոր նախաձեռնությունների հնարավորությունը Միացյալ Նահանգներում՝ ինձ դա երաշխավորում էին:

Հարկավոր էր համբերատար սպասել, մինչև որ գային ավելի լավ ժամանակներ: Ի՞նչը կարող էր խաթարել իմ կյանքը:

Հենց այդ ժամանակ էր, սեպտեմբերի սկզբներին, երբ ստացա մի ծանուցում Ժան Պրևենի նոտարական գրասենյակից, Ժնևից: Կարծեցի, թե կապված է մինորիտար բաժնետերերի հետ, կամ նման մի բան է: Երբեք չէի կարող ենթադրել, թե ինչ է ինձ սպասում:

Ժնև, 15 սեպտեմբերի 1915 թ.

Ժան Պրևեն – փաստաբան և Ժնևի նոտարիուսների
հռչակավոր կոլեգիայի նոտարիուս
ի ուշադրություն պրն. Անրի դը Լատուրի
Ավենյու դը LOպերա, 72–1^{O} Փարիզ, Ֆրանսիա

Մեծարգո պարոն, այս նոտարական գրասենյակում մեր տրամադրության տակ ունենք զմուռսով կնքված մի նամակ, որը հանդիսանում է մադամ Ռիտա Հակոբյանի կտակի բաղկացուցիչ մասը, ուղարկված մեզ Սոֆիա քաղաքի, Բուլղարիա, պրն. Պետեր Մաքսիմովի նոտարական գրասենյակի միջնորդությամբ:
Նշված նամակը՝ զմուռսով կնքված, կարող է հանձնվել միայն Ձեզ, անձամբ Ձեր ձեռքը, նշված կտակի պայմանների համաձայն, կազմված մադամ Ռիտա Հակոբյանի կողմից 1915 թ. օգոստոսի 28-ին, Սոֆիայի զինվորական հիվանդանոցում, նոտարիուսի տեղակալի՝ պրն. Լեոն Վասիլևի ներկայությամբ:
Շնորհակալություն Ձեր ուշադրության համար և սպասում ենք Ձեր լուրերին: Իմ հարգանքի հավաստիքը Ձեզ՝
Ժան Պրևեն.

Մինչ ապշահար կարդում էի անսպասելի ուղերձը, ասես կրկին տեսա Ռիտա Հակոբյանի սև աչքերն իմ դիմաց, չնայած անցել էր քսան տարի: Շատ անգամներ էի նրա մասին մտածել, բայց երբեք չէի կարծել, թե նրանից որևէ լուր կունենայի:

Անչափ հուզվեցի, երբ հասկացա, որ հավանաբար Ռիտան մահացել է և այլևս նրան չէի տեսնելու: Որքան ինձ հայտնի էր նրա ամուսինը՝ Պողոս Հակոբյանը Կոստանդնուպոլսում ձերբակալվել էր ոստիկանության կողմից, ապրիլի 24-ի գիշերը, բայց չգիտեի, թե նրան ինչ է պատահել: Մի քանի մարդասպանի խելահեղությունը, որոնց չէր կարելի անվանել քաղաքագետներ, հրահրում էին մարդ-

կության դեմ սարսափելի աղետ, որում քրիստոնյա փոքրամասնությունները առաջին զոհերն էին:

Այդ պահից սկսած միայն մտածում էի այն մասին, թե ի՞նչ էր Ռիտա Հակոբյանն ուզում, որ ես իմանայի: Մեր հարաբերությունն այնքան վաղանցուկ էր եղել, որ որքան էլ խորունկ լինեին մեր զգացմունքները, շատ քիչ բան կար մեզ կապող: Մի քանի թաքուն հայացք, անդիմադրելի ցանկություններ, հպանցիկ հանդիպումներ, պատահականություն, որ համարյա միշտ թելադրել էր իր կանոնները, մի երկյուղալի ուղևորություն, փոթորիկ, որը մեզ գցեց իրար գիրկ, մի քանի ժամ նավախցիկում միասին և... մանուշակի բույր, որ ինձանից միշտ անբաժան է... Մի անհնարին սեր, որ հնարավոր է ողբերգությամբ ավարտվեր, եթե հետևեինք մեր սրտի թելադրանքին:

Հետո ժամանակը հանձն առավ թուլացնել զգացմունքները, իմ կյանքում հայտնվեց Մարիցան: Ռիտան ուներ իր ընտանիքը, ամուսին, որը նրան սիրում էր, զավակներ, որոնք նրա եռանդը սպառում էին: Աստիճանաբար այդ ամենը դարձավ մի չքնաղ հուշ, միայն այդքանը: Կամ գուցե ես էի այդպես կարծում, երբ հանկարծ իրողությունը կրկին իրեն պարտադրեց բաց դեղին երկարավուն ծրարով՝ մեքենագրված, որում մի ժնևցի նոտար ինձ հայտնում էր, որ այս ամենն այն չէր, ինչ ես կարծում էի: Եվ Ռիտա Հակոբյանն ինձ կրկին իր մոտ էր կանչում:

Որոշեցի հնարավորին չափ չուտ ուղևորվել Ժնև: Պատերազմը գտնվում էր իր գագաթնակետին, իսկ իմ պարտականությունները խորհրդում գնալով մեծանում էին, որովհետև գերմանացիները չունչ քաշելու ժամանակ չէին տալիս: Դրա ապացույցը այն զարհուրելի սպանդն էր, որը վերածվել էր խրամատներում տարվող պատերազմի: Հարյուրավոր զինվորների դագաղներ էին տեղ հասնում, և թեև գիտեինք, որ զոհաբերվում էին հանուն Ֆրանսիայի և ազատության, իրականում դա մի սարսափելի տուրք էր պատերազմի իսկական աստվածներին՝ տգիտությանը, անպատասխանատվությանը, վայրագությանը և ընչաքաղցությանը: Նաև քաղաքական գործիչների անկարողությանը և՛ այս, և՛ այն կողմի, ովքեր ընդունակ չէին եղել կարգավորել իրենց անհամաձայնությունները բանակցությունների սեղանի շուրջ:

Վերջապես մի ազատ պահ գտա միայն սեպտեմբերի վերջին՝ ինձ վրա դրված պարտականությունների արանքում, քանի որ այն տպավորությունն էր ստեղծվել, որ արևմտյան ճակատում բացարձակ դադար է տիրում, թեև Ժան Կառնոն ինձ խնդրեց, որ երկար չբացակայեմ:

Ուղևորվեցի իմ սեփական ավտոմեքենայով: Չնայած Շվեյցարիայի չեզոքությանը՝ գերմանացի զինվորական վերնախավի հուսալքվածության հետևանքով երկաթուղիներում անվտանգությունը պատշաճ մակարդակի վրա չէր: Ժնևում տեղավորվեցի այն նույն բնակարանում, որը վարձել էինք, երբ Մարիցան կենդանի էր և հանգամանքների բերումով այն դարձրել էի սեփականություն: Ինձ հիացմունք էր պատճառում այդ քաղաքը, որում և մտադիր էի ապրել երբևէ հանգստի գնալուց հետո:

Խոսեցի նոտարի հետ, որն ինձ հանդիպում նշանակեց հաջորդ օրն առավոտյան: Պետք է խոստովանեմ, որ այնքան մեծ էր հետաքրքրությունս, որ գիշերն անցկացրի առանց աչք կպցնելու՝ վերստին հիշելով իմ ունեցած հարաբերությունը Ռիտա Հակոբյանի հետ:

Ուժեղ անձրև էր տեղում, երբ իջա ավտոմեքենայից, ստիպված վազեցի մինչև մուտք: Բարձրացա աստիճաններով ցանկանալով համոզել ինձ, որ ինչի որ սպասում էի, կապված էր լինելու զգացմունքային հուշի հետ, ուրիշ ոչինչ: Գուցե ուզում էր ինձ հրաժեշտ տալ, որն ինձ հուզում էր այդքան ժամանակ անց:

Նոտար Պրևենն ինձ ընդունեց սառն քաղաքավարությամբ: Կլիներ մոտ վաթսուն տարեկան, այն մարդկանց կարգին էր պատկանում, ովքեր նախընտրում են մեռնել ոտքի վրա, ինչպես վայել է աշխատող մարդուն, միմիայն իր փաստաթղթերից ու գրություններից հետո: Նրա կարճատես աչքերը գննում էին ինձ հետաքրքրասիրությամբ՝ ոսկեզօծ ակնոցի հետևից: Մտածեցի, որ այնպիսի գործեր, ինչպիսին է Բուլղարիայից եկած այս նամակը, խզում էին իր գրասենյակի միապաղաղությունը և գուցե նրան հետաքրքրում էր, թե ով եմ ես և այդ ամենում ո՞րն է իմ դերը: Նրան հանձնեցի անձնագիրս, տվյալները գրանցեց, և միայն այդ ժամանակ հանձնեց զմուռսով կնքած մի նամակ իր սեղանի դարակներից մեկից: Հետո գլուխը թեթևակի խոնարհեց և դուրս եկավ սրահից:

Մի պահ վարանում էի բացել նամակն ու կարդալ՝ այստեղ թե՞ տանը: Հետո վերցրի մկրատը և կտրեցի զմուռսը, ներսում գտա մեկ ուրիշ դեղնավուն ծրար՝ ուղղված ինձ, գրված ֆրանսերեն, հաստատ կնոջ ձեռքով:

Անհամբեր և փոքր-ինչ չվարած, մատներով պատռեցի նամակը և ապշահար կարդացի հետևյալը.

Սոֆիա – Բուլղարիա, 24 օգոստոսի, 1915

պրն. Անրի դը Լատուր

Սիրելի՛ Անրի. համարձակվում եմ քեզ այսպես դիմել, քանի որ հիմա արդեն ոչինչ կարևոր չէ: Ուզում եմ, որ իմանաս, թե ինձ համար որքան կարևոր եղավ մեր միջև տեղի ունեցածը: Միայն հիմա, երբ նա, ով իմ ամուսինն էր այսքան տարի, սպանվել է Թալեաթի ստահակ կամակատարների կողմից, հանգիստ կարող եմ պատմել քեզ այդ մասին: Ինչ վերաբերում է ինձ, բժիշկներն ինձ համարում են անհուսալի և համոզված եմ, որ ինձ վիճակված չէ անձամբ քեզ դա ասել:

Ես և դու ունեցել ենք մի դուստր՝ Սոֆյային: Ներիր ինձ, որ անկարող եմ գտնվել քեզ նախապես ասել: Հիմա, երբ շուտով մեռնելու եմ, մտածեցի, որ պետք է իմանաս: Աղջիկս այդ մասին դեռ ոչինչ չգիտի և երբևէ կիմանա՞ արդյոք: Ապրիլի 24-ի գիշերը Կոստանդնուպոլսում հարձակվեցին մեր տան վրա, և մի քանի օր հետո ստիպված փախանք: Մեզ բռնեցին և մտցրին արտաքսվողների շարքերից մեկում: Հետո աղջիկս անհայտացավ... Բայց համոզված եմ, որ նա կենդանի է: Իմ ու նրա միջև միշտ եղել է կենդանի թել, և գիտեմ, որ Սոֆյան ինչ-որ տեղ է՝ և փորձում է կապի մեջ մտնել ինձ հետ:

Հիմա, որ պետք է անհետանամ, ես խնդրում եմ քեզ, որ անես անհնարինը և գտնես նրան, չլքես նրան: Դու ես նրան ծնունդ տվողը, մի դույզն անգամ չկասկածես, քեզ ասեմ նաև, եթե կուրախացնի քեզ, որ նրա աչքերը քո աչքերի պես են:

Օ, ի՜նչ դաժան է կյանքը և հաճախ ի՜նչ սարսափելի, որքան կուզենայի անցկացնել այն քեզ հետ: Բայց հնարավոր չեղավ, հանգամանքները մեզ թույլ տվեցին միասին լինել մի քանի կարճ պահեր: Բայց ուզում եմ իմանաս, որ միշտ սիրել եմ քեզ: Ամեն անգամ, երբ տեսնում էի Սոֆյային, հիշում էի քեզ:

Չգիտեմ, թե իրականում ինչպիսին ես, թեև շատ անգամներ եմ լսել Անրի դը Լատուրի մասին՝ որպես հայերի կողմից շատ սիրված մարդու: Հետո ուզեցի քո մասին ավելին իմանալ: Լսեցի մի հայուհու հետ քո ամուսնության մասին: Այնքան նախանձեցի: Հետո մի զավակ էլ ունեցա իմ ամուսնուց՝ Լևոնին, մի ուշադիր ու սիրառատ պատանի, անցած ապրիլին դարձավ տասնյոթ տարեկան:

Նրա մասին ոչինչ չգիտեմ, և ինձ սարսափեցնում է անգամ մտածելը, թե ինչ կարող է նրան պատահած լինել, բայց ապավինում եմ Աստծուն և վստահ եմ, որ կպահպանի նրան:

Այս սարսափելի պահերին ուզում եմ ուժեղ լինել, բայց գիտակցում եմ, որ քայքայվում եմ այն աշխարհի հետ միասին, որում ապրել եմ:

Չնայած այս ամենին համոզված եմ, որ Հայաստանը կդիմանա ճակատագրի կողմից նրան տրված փորձություններին:

Անրի, քեզ խնդրում եմ, որ ամեն ինչ, ինչ կարող ես, անես, որ երկուսին էլ գտնես, և ես միայն այդ հույսով հանգիստ կլինեմ:

Համբուրում եմ քեզ՝ վերջին անգամ մնաս բարովով:

Ռիտա Հ.»

Նամակն ընթերցելուց հետո՝ սրբեցի արցունքներս: Անչափ շատ հույզեր էին միասին խառնվել, փորձեցի խաղաղվել, բայց անօգուտ:

Հսկայական Թուրքիայի ինչ-որ անծանոթ վայրում գտնվում էին իմ դուստրը և նրա խորթ եղբայրը: Ես գիտակցում էի, որ ժամանակը սուղ էր և պետք է հնարավորին չափ շուտ գտնեի նրանց:

Հետո, ճարահատյալ և հուսաբեկ սկսեցի լաց լինել, մինչ մանուշակի հեռավոր մի բույր էր տարածվում պրն. Պրևենի՝ Ժնևի նոտարի գրասենյակում:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1915

48. ՎԱՏ ԼՈՒՐԵՐ

Ուժեղ հուզմունքից չչմած և անկարող ընդունելու որևէ վճիռ՝ անմիջապես վերադարձա Փարիզ և հանդիպեցի Անտուան Մոնժին և Ժան Կառնոյին: Երկուսն էլ բնականաբար վերջին տարիներին դարձել էին իմ լավագույն բարեկամները: Թերևս երեքս էլ Թուրքիայի հիմնական գիտակներն էինք, և անկախ պատերազմից՝ մեր կապերն այդ երկրի հետ բավականին հաստատուն էին: Ուրիշ ելք չունեի, նրանց պատմեցի եղելությունը ամենասկզբից: Մենք միմյանց չափազանց լավ էինք ճանաչում, որ դիմեինք վերապահումների: Այսպիսով նրանք ինձ ուշադիր և որոշ կասկածանքով լսեցին, հետո Անտուան Մոնժն ինձ ասաց իր կարծիքը.

– Անրի, թաքցնելու բան չունեմ, իրադրությունը սարսափելի է: Ներիր ինձ, եթե քեզ հետ լինեմ անողոք ու անկեղծ, բայց քո պատմածից ելնելով հնարավոր է, որ ինչպես քո դուստրը, այնպես էլ տղան, սպանված լինեն: Հույսեր մի փայփայիր, գիտենք, որ հարյուր հազարավոր հայեր են մահացել, բայց Կոստանդնուպոլիսը մնացել է միակ հուսալի վայրը ապրիլի վերջերին տեղի ունեցածից հետո: Այնտեղ ամեն ինչ ավելի խաղաղ է: Նկատի առնելով այդ՝ մենք կմոբիլիզացնենք մեր բոլոր կապերը որևէ բան իմանալու համար և նրանցից մեկը, որ կարող է տեղեկություն հայթայթել, Թալիբ բեյն է, որը լայն կապերի մեջ է և թույլ չի տա մեզ խաբել, քանի որ դրա համար պատասխան կտա:

– Կարծում եմ, որ Անտուանը փորձում է քեզ ասել, որ դու ուղղակիորեն դրանով չզբաղվես,– Ժանը չէր թաքցնում իր անհանգստությունը: – Մտքովդ չանցնի ուղևորվել Թուրքիա: Ըստ մեր տեղեկության՝ այնտեղ կատարվում է իրոք աննկարագրելի մի բան: Այդ աստիճանի ոճիր երբևէ գոյություն չի ունեցել, պատմության մեջ նմանօրինակ ոչինչ չկա: Հիմա թուրքերը վճռել են բնաջնջել բոլոր հայերին՝ օգտվելով իրավիճակից: Նրանց զգուշացրել են, որ երբ պատերազմն ավարտվի, արածների համար հաշիվ են տալու, բայց նրանք չեն ուզում անսալ բանականության ձայնին: Ըստ նախնական տվյալների՝ մոտավորապես մեկ ու կես միլիոն սպանված և անհայտ կորածներ կան: Քաղաքները և տարածաշրջանները, ուր հայկական համայնքներ կային,– այսինքն՝ Թուրքիայի բոլոր նահանգներում,– ենթարկվում են նույն պրոցեսին՝ էթնիկ զտման: Ուրֆան, Զեյթունը, Տրապիզոնը, Վանը, Սասունը, Մուշը, Բիթլիսը, Շապին Գարահիսարը, Շատախը, Էրզրումը, Սըվազը, Դիարբեքիրը, Մարաշը... կարող եմ թվարկել Օսմանյան կայսրության բոլոր նահանգները: Կոստանդնուպոլսում ձերբակալել են մոտ հազար մարդու՝ բանաստեղծների, դասախոսների, քաղաքական գործիչների և պառլամենտականների, լրագրողների, ֆինանսիստների, արվեստագետների, կոմպոզիտորների: Հետո դադարեցրին, քանի որ վերջ ի վերջո այս մայրաքաղաքում կան դեսպանատներ, հավատարմագրված լրագրողներ, մարդիկ, որոնք կապ ունեն Եվրոպայի հետ, իսկ թուրքերին ձեռնտու չէ աղմուկ բարձրացնելը: Ձերբակալվածներից շատերի գտնվելու վայրն անհայտ է, ինչպես պատգամավոր Զոհրապի, Էրզրումի պատգամավոր Սերենգուլյանի... Դու ինքդ տեսել ես վերջին տեղեկատվությունը: Միակ դեսպանը, որը փորձել է կանխել արտաքսումները, դեսպան Մորգենթաուն է: Մեր դեսպանատունը փակ է, ինչպես որ բրիտանացիներինը, ռուսներինը և իտալացիներինը: Իսպանիայի դեսպանատունը նույնպես ձեռնարկել է որոշ քայլեր, բայց ոչ մի օգուտ չունեցավ, ոչ մի հիմնավորում չեն ցանկանում տալ:

Լսիր, Անրի, հավանականությունը, որ մնացած լինեն ողջ և առողջ՝ մեկը միլիոնի է, փաստորեն անհնարին... Բայց հասկանում ենք, որ դու չես կարող հանձնվել, ոչ էլ մենք դա կանենք: Քեզ խոստանում եմ մեր հետախուզական ծառայությունների ողջ աջակցությունը, այնպես որ առանց մեզ հետ խորհրդակցելու ոչինչ չձեռնարկես և իհարկե մտքովդ չանցնի գնալ Թուրքիա. այս պայմաններում դա կլինի կյանքիդ գնով: Լավ, անցնենք գործի: Խաղաղվիր և փորձիր վերադառնալ սովորական կյանքին, գիտեմ, որ քեզ դժվար կլինի, բայց դու ուրիշ ելք չունես:

Այստեղ ավարտվեց խոսակցությունը: Տուն վերադարձա, գլուխս պայթում էր անդադար մտածելուց: Վաղ առավոտ զանգահարեցի Սարգսյանին: Գիտեի, որ նա շատ հայերի է օգնում, որպեսզի կարողանային Թուրքիայից փախչել՝ լիներ ծովով թե Ռուսաստանով, Բուլղարիայով, Հունաստանով թե Պաղեստինով: Նրանց փող էին տալիս, տոմսեր, փաստաթղթեր, որոնք կեղծում կամ ձեռք էին բե-

ռում սև չուկայում: Նա ասում էր, որ իրենց արածը ընդամենը ծովում մի կաթիլ է. միևնույն է, անում էր իր ամբողջ սրտով:

Սարգսյանն ինձ ընդունեց առավոտյան հինգն անց կեսին, գիշերանոցի վրայից խալաթը հագին: Ինձ չափից ավելի էր հարգում, որ նախատեր իրեն այդքան շուտ անկողնուց հանելու համար և զինվեց համբերությամբ լսելու ինձ:

Քար կտրեց, երբ նրան պատմեցի կատարվածը: Ես նրան երբեք չէի պատմել Ռիտա Հակոբյանի հետ ունեցած իմ կապից, և պատմելու ընթացքում նրա հետաքրքրությունն ավելի խորացավ Ռիտայի հանդեպ, ասաց, որ ճանաչում էր Ռիտա Հակոբյանին, երբ այն դեպքը կատարվեց:

– Իհարկե, ես ճանաչում էի նրան: Ամեն ինչ մանրամասն եմ հիշում: Նրա ամուսինը՝ Պողոսը, ծանր պատահարի էր ենթարկվել, իսկ այդ ժամանակ ես պատվավոր հյուպատոսի դեր էի կատարում Փարիզ եկող հայերի համար: Իհարկե, հիշում եմ նրան, շատ գեղեցիկ կին էր, զտարյուն: Հասկանում եմ, հնարավոր էր, ինչ խոսք, որ նրան սիրահարվեիր:

Այդ ժամանակ Սարգսյանն ինձ պատմեց թե ինչ էր կատարվում, քանի որ տեղեկացել էր անմիջապես ականատեսից:

– Հիմա ցանկացած միջոցով շատ հայեր են փախչում: Այստեղ՝ տանը, հյուրերի սենյակում ամուսիններ են, որ երեկ երեկոյան հասան: Այնքան ուժասպառ էին, որ ոչինչ չհասցրին պատմել, բայց Կոստանդնուպոլսից են, այնպես որ քիչ հետո, երբ վեր կենան, նրանց կխնդրենք, որ մեզ տեղեկացնեն: Խոսքը Արշակ Գևորգյանի և իր կնոջ՝ Աստղիկի մասին է: Նա լեզուների դասախոս էր, իսկ կինը՝ դաշնակահարուհի... Խեղճ մարդիկ: Իրենք էլ են կորցրել իրենց որդուն՝ Տիգրանին և ողջ ունեցվածքը, մանավանդ Արշակը այնպիսի հոգեկան վիճակում է, որ ինձ մտահոգվելու տեղիք է տալիս:

Սպասեցինք համարյա երեք ժամ, մինչև որ Գևորգյանները կենդանության նշաններ ցույց տվեցին: Ինձ հարգալից ողջունեցին: Խնդրեցինք նրանց պատմել, թե ինչ էր այնտեղ կատարվում: Այդ մարդիկ հենց նոր էին տեղ հասել, և նրանց ողբերգական պատմությունը ուրիշ հազարավորների պես նույնն էր:

Արշակ Գևորգյանը կլիներ վաթսուն տարեկան, սակայն տարիքը նրան դեռ չէր կորացրել. մարմնով նիհար, կարճատես, երկար ձեռքերով ու ոտքերով: Նրանից հորդում էր իր ժողովրդին բնորոշ ուժ և վճռականություն: Իսկ նրա կինը՝ Աստղիկը, ասես աշխարհից հեռացած, խոսում էր օտարոտի, անտարբեր: Հազիվ էինք նախաճաշել, երբ Սարգսյանը Արշակին խնդրեց պատմել մեզ Կոստանդնուպոլսում տիրող իրավիճակը: Այդ մարդը չուզեց, որ ավելորդ անգամ խնդրեին իրեն, մի պահ նայեց կնոջն ու սկսեց իր սահմռկեցուցիչ պատմությունը:

– Ապրիլի 24-ի գիշերն էր, երբ սկսվեց փոթորիկը: Մենք ապրում էինք Կարակյոյում, կամրջի մոտ և ականատեսն էինք, թե ինչպես էր ոստիկանությունը խաժամուժի ուղեկցությամբ կանգնեցնում կամուրջն անցնող ցանկացած հայի: Մեր որդին բանաստեղծ էր և համարվում էր Ատոմ Յարճանյանի (Սիամանթո) աշակերտը: Հիմա մեռած է, սպանված՝ մեր տան դիմաց՝ հայ մտավորական լինելու պատճառով: Այնքան հպարտ էինք նրանով: Այդ նույն գիշեր ինձ արտասանեց Սիամանթոյից մի բանաստեղծություն՝ «Հայր իմ, ես այն ճյուղն եմ զորավոր...»: Ներեցեք ինձ, դեռ ի վիճակի չենք հավատալ, թե ինչ է մեզ հետ կատարվում: Կինս դեռ ուշքի չի եկել, այնպես որ կարող ենք նրա ներկայությամբ խոսել, նրան ոչինչ չի հուզում, խեղճ Աստղիկ: Եթե նրան ճանաչած լինեիք ավելի առաջ... Օ, ինչ դաժան է կյանքը:

Փախանք ինչպես կարողացանք, մտածելով, որ Տիգրանը կհետևի մեզ, քանի որ մի գրություն էինք թողել այն տետրի էջերում, որում ինքը գրում էր և ճանապարհվեցինք Իզմիթ: Կինս ծնունդով այնտեղից էր, և պահպանում էինք նրա հայրական տունը՝ շատ մոտ Արմաչի վանքին:

Շատ մեծ տուն էր, խնձորի այգիով, ավազանով: Հասանք այնտեղ կյանքի գնով, որովհետև ճանապարհին տեսանք այրված սայլեր, ծառերից կախված մի քանի դիակներ: Համոզված էի, որ ցանկացած պահի մեզ կարող էին սպանել: Ես շատ էի անհանգստանում կնոջս համար, որովհետև չէի դիմանա, եթե նրան բան պատահեր:

Հասանք տուն իր եղբայրների ու նրանց ընտանիքների հետ միաժամանակ, կարծես պայմանավորված լինեինք, համոզված, որ այդ վայրը հուսալի ապաստան էր:

Բոլորս էլ ներքուստ համոզված էինք, որ այնտեղ մեզ համար անվտանգ կլիներ:

Երբ մթնեց, տունը լի էր մարդկանցով: Այնտեղ էին ընտանիքին մտերիմ մարդիկ, Իզմիթի հորեղբոր տղաները, անգամ հեռավոր ազգականներ, որոնց հետ քիչ էինք շփվում: Կանայք աղոթում էին, իսկ տղամարդկանցով, տեսնելով նրանց վախեցած, մտածում էինք, թե

մենք ի՞նչ էինք անելու, եթե մեր հետևից գային, հայհոյելով, որ ընդամենը մի հին հրացան ունեինք փամփուշտներով: Մինասը՝ կնոջս մեծ եղբայրը, այն գնել էր մի Թուրքից տարիներ առաջ, երբ հրապուրված էր որսորդությամբ:

Երեք օր անցկացրինք, ոչ ոք չէր երևում այդ կողմերում: Հարցը այդքան մարդկանց կերակրելն էր, քսանյոթ հոգի, բայց մենք յոլա էինք գնում հավանոցի հավերով, ինչ որ գտնում էինք խոհանոցում կամ նկուղներում, ինչ որ բերում էին մոտիկ հարևանները և իհարկե, վանքի միջոցով, ովքեր իմանալով, թե ինչ է կատարվում, մեզ մի կաթսա արգանակ կամ ապուր էին ուղարկում եկեղեցական նորընծաների համար եփվող կերակուրից:

Ամսի 28-ին առավոտյան ձի հեծած մի քանի զինվորականների տեսանք: Բանակի կապիտան էր երկու սպաների ուղեկցությամբ, բիրտ ձևով հարցրեց, թե ինչ ենք անում այնտեղ: Նրան բացատրեցինք, որ մեր գերդաստանն է, բայց մեզ չհավատաց և ուզեց անուն ազգանունով ցուցակ: Հետո բարձրաձայն կարդում էր մեր անունները, համոզվելու, որ տվյալները համապատասխանում են: Կեսօրին Թողեցին գնացին, ու մենք մտածեցինք, որ մեզ հանգիստ են թողել: Հենց այդ նույն երեկո, հազիվ էր մթնել, երբ լսեցինք ձայների ժխոր, որ գնալով մոտենում էր: Մարդկանց մեծ խումբ էր, որոնք բղավում էին սպառնալով մեզ, ձեռքներին կպրաջահեր՝ շուրջը լուսավորելու համար: Կանայք սկսեցին վախենալ, երբ զգացին, թե ինչ է տեղի ունենալու:

Անմիջապես հրդեհեցին նկուղները, հետո մենք գլխի ընկանք, որ ուզում էին տեղից հանել հիմնական դուռը: Փախչելու տեղ չունեինք: Այդ ժամանակ ես կանանց հրամայեցի իջնել ներքնահարկ՝ մառանը, իսկ մենք դատարկ արկղերով փակեցինք մուտքը:

Այդ պահին մեզ վրա հարձակվողներից մի քանիսը արդեն խոհանոցի միջով տուն էին մտել: Ջեմ ուզում նկարագրել ձեզ, թե ինչ տեղի ունեցավ, ահավոր բան էր: Ինձ համարեցին մեռած, իսկ մնացածներին սպանեցին:

Իմ աներորդիներին ծառերից կախեցին: Տունը չհրդեհեցին, որովհետև սրիկաներից մեկը աչքը տնկել էր վրան և ասաց, որ իրենն է լինելու, չայրեցին:

Երբ գիտակցությունս տեղը եկավ, չնայած շատ արյուն էի կորցրել, ի վիճակի եղա իջնել մառան: Ես չէի ուզում, որ կանայք տեսնեին կատարվածը, բայց անխուսափելի էր: Կինս կորցրեց գիտակցությունը... Ջեզ չեմ ուզում հոգնեցնել թե ինչ անցկացրինք, բայց երկար տառապանքից հետո այստեղ ենք, թեև ավելի լավ կլիներ, որ այդ նույն գիշեր մեռած լինեինք: Հետո եկավ Տիգրանի մահվան լուրը, կինս դա չտարավ, այդ պահից ի վեր այս վիճակում է: Ինչ ինձ է վերաբերում, ես այդ մտքի հետ չեմ հաշտվում..., համոզված եմ, եթե երբևէ վերադառնանք այնտեղ, կրկին նրան կհանդիպենք մեր տան դռանը: Ես ամեն օր կնոջս կրկնում եմ դա և հասա նրան, որ նա ինձ հավատացել է... Դատարկության ի՜նչ ահավոր զգացողություն: Աստված լքել է հայերին: – Արշակը խոր հառաչեց նախքան շարունակելը,– սա է Թուրքիայում հայերի իսկական վիճակը: Իթթիհադի կառավարությունը վերջնականապես դեն է գցել իր դիմակը և մեր ժողովրդին ահավոր դաժանությամբ տանում է բնաջնջման, այսինքն՝ մենք պետք է թանկ հատուցենք մեր ավանդույթները, մեր քրիստոնեությունը և մշակույթը պահպանելու դիմաց: Երբեք չէի հավատա, թե Թուրքերն այդքան խոր ատելությամբ են լցված եղել մեր նկատմամբ:

Մարդը երկար լուռ մնաց, մինչև որ ես չկարողացա խույս տալ ու հարցրի, թե գիտի՞ արդյոք, դեպի ուր էին տանում հայերին, որոնց արտաքսում էին:

– Տեսե՛ք, մայե դը Լատուր: Ճիշտն ասած, Կոստանդնուպոլիսը հիմա հանգիստ է թվում: Տարան համարյա հազար հոգու՝ ամենաազդեցիկներին: Շատ հարձակումներ եղան, բռնաբարություններ ու սպանություններ: Հետո կառավարությունը հրաման տվեց դադարեցնել: Այսօր հայերն աշխատում են աննկատ լինել, թեև մեծամասնությունը փախել է քաղաքից որևէ միջոցով՝ համոզված, թե ինչ է նրանց սպասում:

Ինչ մնում է արտաքսվածներին՝ նրանց տանում են Միջագետքի այնպիսի հեռավոր վայրեր, ինչպես օրինակ՝ Տեր-Զորի կամ Ռաս-ուլ-Այնի անապատները, թեև ասում են, որ շատ քչերն են հասնում այնտեղ: Անհնարին է քայլել արևի տակ, առանց հանգստանալու, քնել բաց երկնքի տակ. սովահար, ջուր են խմում, երբ երբեմն հանդիպում են լճաջրափոսերի, խոշտանգված ու հետապնդված: Ով կդիմանա այդպիսի բանի: Բոլոր դեպքերում այն սակավաթիվ մարդիկ, որ հասնում են մինչև այնտեղ, ոչնչացվում են առանց վկաների: Թուրքերն այդպես են կարծում, նրանք չգիտեն, որ անգամ քարերն աչք ունեն:

Մրրիկի մեջ, խավարում, երբ ծովն ալեբախվում էր մոլեգին, և թվում էր, թե մեր շուրջ ողջ աշխարհն էր կործանվում, գիշերվա մեջ

լույսի ցոլքերը հեռավոր մեր հավատն էին պահպանում: Ֆրանսիան եղավ մեզ համար ազատության մի փարոս:

Հրաժեշտ տվեցի Գևորգյանին՝ համոզված, որ ուշացել եմ, այն դառը կսկիծով, որ այլևս չեմ ճանաչելու դստերս՝ Սոֆյային: Փարիզում սկսել էր ցրտել, ասես ձմեռն առաջ էր ընկել, և ես ամբողջովին հուսահատ քայլեցի՝ չիմանալով ինչ անել:

Մուտքի մոտ դռնապանն ինձ հանձնեց մի նամակ Միացյալ Նահանգներից: Էդուարից էր, բացեցի այն վերելակում: Անհամբեր էի, թե ինչ լավ լուր էր ինձ տալու:

Սիրելի հայրիկ: Քեզ աղաչում եմ, որ ինձ ներես: Գիտեմ, որ այն, ինչ պատրաստվում եմ ասել, քեզ մեծ անախորժություն կպատճառի: Ցավում եմ, ուզում եմ, որ ինձ հասկանաս և ներես, բայց որոշել եմ գնալ Թուրքիա: Ես կապի մեջ եմ դիմադրության մի հայկական կազմակերպության հետ, որը ցանկանում է օգնել այն հայերին, որոնց արտաքսում են և ոչնչացնում:

Իմ որոշումն անբեկանելի է: Չեմ կարող, չեմ ուզում մնալ այստեղ որպես արտոնյալ մեկը, ամեն ինչից հեռու: Գուցե պետք է Եվրոպայի խրամատներում լինեի, գերմանացիների դեմ կռվեի ինձ պես շատ ֆրանսիացի երիտասարդների հետ միասին, բայց քանի որ ինձ չթողեցիր լինել ֆրանսիացի, որոշեցի հայ լինել: Այնտեղ՝ Հայաստանում կռվող ծեռքի կարիք ունեն թուրքերի դեմ, որոնք իրենց նենգ գործելակերպով ձգտում են բնաջնջել իմ յուրայիններին:

Շատ եմ ցավում, որ այս որոշումը քեզ մեծ անախորժություն կպատճառի: Բայց ես երկար եմ խորհրդածել, վաղը չէի կարողանա նայել որևէ հայի կամ որևէ այլ մարդու աչքերին, եթե այսօր խուսափեի իմ պարտքից:

Այդքան էլ հիմար չեմ, որ ինքս իմ մասին չհոգամ: Ուզում եմ ամեն ինչ անել այնպես, որ կարողանամ վերադառնալ ողջ և առողջ, այնպես որ գուցե շուտով կարողանանք միասին լինել, երբ այս հիմար և ամոթալի իրավիճակը հետևում մնա:

Քեզ սիրող և հարգող որդի՝

Էդուար

Նստեցի սանդուղքի աստիճաններին՝ նախքան բանալին փականի մեջ մտցնելը: Աչխարհը գլխիս փուլ էր գալիս, և հանկարծ զգացի այն սարսափելի սխալը, որ թույլ էի տվել, ջանալով փրկել որդուս՝ իր կամքին հակառակվելով:

Գլխապտույտ զգացի և չփոթահար ուղղվեցի ննջարան ու փլվեցի մահճակալին: Թվում էր, թե գլորվում էի անհատակ փոսի մեջ: Հիշեցի տարիներ առաջ Սալոնիկում տեղի ունեցածը: Ժամանակը արագ էր թռչում և այն ժամանակից ի վեր, ինչ առաջին անգամ նավից իջա Կոստանդնուպոլսում, անցած տարիները Թվացին անդունդ և դրանից սիրտս նվաղում էր:

Որդիս ընտրել էր իր ճանապարհը, որի համար նրան չէի կարող մեղադրել: Էդուարն ընդամենը արել էր այն, ինչի նրան մղել էր պատվախնդրության իր զգացումը: Զգում էի, որ հենց իմ կողքին թևածում էր Մարիցայի հոգին, նա համաձայն էր մեր որդու ընդունած որոշմանը: Դարեր ի վեր այդ էր հայերի ճակատագիրը, և Էդուարը միայն հետևել էր իր արյան կանչին:

ՆՈՅԵՄԲԵՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 1915

49. ԿՐԿԻՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

Մի քանի օր անցավ, մինչև հասկացա Էդուարի նամակի բովանդակությունը: Ճակատագրի ինչ-որ քմահաճույի բերումով, երկու զավակներս էլ հայկական արյամբ, գտնվում էին գայլի երախում: Զէր թվում, թե եվրոպական կոնֆլիկտը լուծվելու է կարճ ժամանակամիջոցում, ընդհակառակը, խրամատների պատերազմը այնքան կչարունակեր այդ հակամարտությունը, մինչև որ կողմերից մեկն այլևս ի վիճակի չլիներ դիմանալ: Հնարավոր չէր, որ ես մնայի Փարիզում իմ տանը նստած և սպասեի, մինչև որ ամեն ինչ լուծվեր:

Այդ ժամանակ էլ վճռեցի գնալ Թուրքիա, թեև գիտեի, որ վտանգավոր էր: Ժան Կառնոյի և Անտուան Մոնժի աջակցությամբ հետախուզական ծառայությունների միջոցով կապի մեջ մտա Թալիբ բեյի հետ: Ես գիտակցում էի, որ վտանգում էի կյանքս ու խաղի մեջ մեծ գումարներ դնում, բայց այլընտրանք չունեի: Որպես Ֆրանսիայի քաղաքացի ոչ մի հնարավորություն չունեի: Հիշեցի այդ ժամանակ, որ մայրական տատս ծնունդով Նյուրենբերգից էր, իսկ ես գերմաներեն գիտեի, ուրեմն կարող էի անցնել Ցյուրիխում բնակվող չվեյցարացի քաղաքացու տեղ: Երկար համոզելուց հետո, Ժան Կառնոն ինձ հանձնեց Հանս Հոլչթայնի անունով անձնագիր: Ինձ համար այդ անունով հաշիվ բացեցի և փոխանցեցի բավականին մեծ գումար:

Թալիբ բեյը դրեց իր պայմանները, առաջինը՝ հիսուն հազար չվեյցարական ֆրանկ՝ մի ահռելի գումար, որը փոխանցեցի Ցյուրիխի իր հաշվի վրա՝ այն նույնի, ինչի վրա կատարում էր Ժան Կառնոն իր վճարումները՝ Թալիբ բեյի մատուցած ծառայությունների դիմաց:

Հետո ես նստեցի Սոֆիա տանող ճեպընթացը, որը թեև անհավատալի էր՝ բայց գործում էր Ցյուրիխից Սոֆիա: Երբ տեղ հասնեի, կփորձեի սահմանն անցնել մաքսանենգությամբ զբաղվող մարդկանց պես, որոնք պատերազմի հաշվին իրենց համար ոսկի են դիզում:

Տեղ հասա առանց որևէ խնդրի: Չնայած սահմանի վրա ոստիկանության մանրազնին ստուգումներին՝ երկու օր անց Սոֆիայում էի:

Այնտեղ հասնելուն պես գտա Դիմիտրովին՝ Թալիբ բեյի կապավորին, որն ինձ պետք է տաներ մինչև նրա տուն:

Պետք է ասեմ, որ սափրել էի գլուխս: Կոստյումը, որ կրում էի, Բեռլինում ընդունված նորաձևությամբ էր: Խեցյա ակնոցը, որ Ցյուրիխում էի ձեռք բերել, ինձ լրիվ նոր կերպարանք էր տվել: Այդ ամենը խելահեղություն էր, սակայն պատերազմը, զավակներիս դրությունը, այն, ինչ ինձ հետ էր կատարվում, պակաս խելահեղություն չէր: Բացի այդ, տարօրինակ անվտանգության զգացում էր ինձ համակել, որ ինձ ոչ մի վատ բան չի պատահի: Միակ բանը, որ ցանկանում էի, Կոստանդնուպոլիս հասնելն էր, որ փորձեի ձեռնարկել անհնարինը:

Դիմիտրովը եղավ իր խոսքի տերը, ստացավ իր փողը՝ գլուխը խոնարհելով և ինձ նստեցրեց մի բեռնատար մեքենա, որը գնում էր մինչև սահման: Այնտեղ ինձ տեղավորեցին մի նավի վրա և Մարմարա գետով, որն ինձ թվաց ճակատագրի բախտավոր նշան, մտա Թուրքիա: Չնայած տիրող դրությանը՝ պատերազմին, ճանապարհների հսկողությանը, տեղ հասա առանց ցնցումների:

Երբ հաջորդ օրն առավոտյան հասա մեր պայմանավորված վայրը, ինձ սպասում էին մի քանի թուրքեր:

Ի զարմանս ինձ՝ նրանցից մեկը հենց ինքը՝ Թալիբ բեյն էր, որն ինձ գրկեց վաղեմի բարեկամի պես:

– Որքան ուրախ եմ, որ դուք այստեղ եք, ողջ և առողջ, մսյե դը Լատուր: Ալլահը մեծ է: Դուք քաջարի մարդ եք և արժանի չեք այն անախորժություններին, որ կյանքը ձեզ պատճառում է վերջին ժամանակներում: Հիմա գնում ենք Կոստանդնուպոլիս, որտեղ ձեզ համար մի փոքր անակնկալ եմ պատրաստել: Ինձ հաջողվել է վարձել այն նույն տունը, որում դուք ապրել եք, երբ առաջին անգամ ոտք եք դրել Կոստանդնուպոլիս: Անհավատալի է, բայց ձեր գնալուց հետո այնտեղ ոչ ոք չի ապրել... Այնպես որ, կլինեք ինչպես ձեր տանը, թեև այլևս չկան հայ հարևաններ, բոլորը հեռացել են: Ոչ էլ որևէ խնդիր կա, որ ձեզ որևէ մեկը կարող է ճանաչել, թեև իրոք դուք շատ եք փոխված...

Ինչ վերաբերում է ձեր որդուն՝ Էդուարին, ըստ ձեր նամակի, որ ստացա երեկ, հեշտ չէ իմանալ, թե որտեղ կարող է լինել, եթե հասել է Թուրքիա: Այդ տղան, իմ հարգանքով հանդերձ, խենթ է: Գալ այստեղ հայերին օգնելու... Ցույց է տալիս, որ լրիվ անտեղյակ է եղել այս երկրից: Մի շաբաթ էլ չի եղել երևի նրա այստեղ մնալը, այնպես որ հնարավորին չափ հարկավոր է շուտ գտնել նրան, որի համար ես գործի եմ դրել իմ բոլոր կապերը նավամատույցներում, նույնիսկ ծո-

վափնյա քաղաքներում: Եթե պատահաբար գտնեն նրան, կտեղափոխեն ապահով մի վայր: Բախտներս կբերեր, քանի որ չիկահեր և կապուտաչյա հայերը քիչ են... Դա նրան ավելի օգտավետ կլինի, քան դուք եք կարծում, քանի որ նրան երբեք չեն չփոթի որևէ հայի հետ, սակայն մյուս կողմից՝ տղան աննկատ մնալու քիչ հնարավորություն կունենա:

Եթե հանի Կոստանդնուպոլիս, կգտնենք նրան: Եթե մտնի Կիլիկիայով կամ Սիրիայով, ավելի դժվար կլինի, բայց այնտեղ էլ են տեղեկացված: Ցավում եմ ձեզ այս իրավիճակում տեսնելով, հավատացած եղեք, որ հանուն փողի չէ, որ ձեզ ուզում եմ օգնել, չնայած այն մեզ անհրաժեշտ է, որպեսզի այդքան մարդու հուսալիորեն գործի դնենք... Չէ՞ որ գիտեք իրերի դրությունը: Ինչ վերաբերում է ձեզ, գործեք զգուշորեն: Ես կլինեմ ձեր աչքերն ու ձեր ձեռքերը, աշխատեք հնարավորինս մնալ տանը, իսկ եթե որոշեք, որ ձեզ հարկավոր է քաղաքից դուրս գալ, տեղեկացրեք ինձ նախապես, քանի որ իրոք ամեն ինչ վատ է, շատ վատ, հայերի համար, թուրքերի, բոլորի համար:

Կարդացել եմ ձեր նամակում, որ ուզում եք գտնել Պողոս Հակոբյանի դստերը: Խեղճ մարդ: Նրան սպանել է անկառավարելի խաժամուժը:

Կարծում եմ, որ շատերս համաձայն չենք կառավարության բռնած դիրքի հետ: Մեծ սխալ են թույլ տալիս, բայց ձեզ թող կասկած չմնա, որ դրա դիմաց թանկ են վճարելու: Վատն այն է, թե մեր երկրին ինչ է սպասում, քանի որ այս ամենից հետո Եվրոպան չի մնա ձեռքերը ծալած: Իսկական աղետ է, և դա ձեզ ասում եմ ես, ով հայասեր չէ:

Վերադառնալով մեր գործերին՝ Հակոբյանների ընտանիքը շատ ճանաչված էր... Թերևս չափազանց, քանի որ Պողոս Հակոբյանին շատ էր դուր գալիս աչքի ընկնել՝ մեծ առանձնատներ, շքեղ կառքեր, ձիեր, ծառաներ, ճանապարհորդություններ, ցուցամոլություն, իսկ այդ ամենի դիմաց թանկ են վճարում: Չէ՞ որ դուք գիտեք, մեր օրերում նախանձը ոնց է տարածվում, ավելի զուսպ է հարկավոր լինել: Նրանց հետևից գնացել էին, և ինձ հասած տեղեկության համաձայն՝ Հակոբյանի կինը կարողացել է փախչել երկրից, բայց նրա երեխաների մասին գաղափար չունեմ՝ դեռ Թուրքիայո՞ւմ են, թե՞ ոչ, սակայն եթե դուք ջանում եք գտնել դստերը՝ Սոֆյային, ես կանեմ անհնարինը, թեև դա բոլորովին հեշտ չի լինի:

Անտարակույս Թալիբ բեյն ուզում էր ինձ օգնել, գիտեր, թե ես ով եմ և այդուհանդերձ չէր ուզում այրել բոլոր կամուրջները: Գերմանիան պատերազմում էջ հաղթի այնքան հեշտ, որքան խոստացել էր Վիլհելմ II-ն իր ենթականերին, իսկ Թալիբը չափից մեծ շահույթներ ուներ Ֆրանսիայում, որպեսզի թույլ տար այնպիսի հիմարություններ, բացի նրանից, ինչ ինձ էր պատմել նրա մասին Ժան Կառնոն: Անկասկած նա էր ամենահարմար մարդը. լայն կապերով. ազգակցական, կառավարության մարդկանց հետ, բարեկամական կապերով՝ երիտթուրքերի կառավարության և գաղտնի հարաբերությամբ՝ Ֆրանսիայի հետախուզական ծառայությունների հետ: Եթե նրան չհաջողվեր գտնել երեխաներին, ուրեմն վերջնականորեն կորած էին:

Երեկոյան մթնշաղին հասանք Կոստանդնուպոլիս: Հազիվ հինգն անց կես կլիներ, մայրամուտի արևը արձակում էր իր վերջին ճառագայթները: Կրկին այնտեղ գտնվելն ինձ համակեց տարօրինակ զգացումով, այդտեղ անցել էին կյանքիս որոշ լավագույն տարիներ:

Հետո, երբ մտա բնակարանը, որն ինչ-որ մեկը հատուկ մաքրել ու կարգի բերել էր տվել, ինձ պարուրեց անցած ժամանակի կարոտը: Ամեն ինչ նույնն էր, ինչ ես տարիներ առաջ թողել էի, կամ գոնե ինձ այդպես թվաց այդ պահին:

Նախկինում այստեղ ապրած Յուլիուս ֆոն Ռիթերը, մեծ ջանքեր էր թափել համագործակցելով Գերմանիայի դեսպանատան հետ, բեղմնավոր կապեր ստեղծելու նպատակով իր երկրի և Թուրքիայի միջև, նախքան իմ այստեղ գալու տարիները: Պետք է, որ շատ նրբակիրթ մարդ եղած լիներ: Բնակարանը առաջվա պես վայելուչ էր ու հարմարավետ: Մտա գրադարան և տեսա, որ բուխարին վառվում է: Իրոք որ, Թալիբ բեյը ոչ մի գործ կիսատ չէր անում:

Ես ուժասպառվել էի ճանապարհորդությունից և հույզերից, փորձեցի ննջել, սակայն չկարողացա, մտածելով Էդուարի և Սոֆյայի մասին, մինչ Ռիտան և Մարիցան ինչ-որ տեղից խնդրում էին, որ նրանց գտնեմ հնարավորին չափ շուտ:

ՀՈՒՆՎԱՐ – ՓԵՏՐՎԱՐ 1916

50. ԳԱԼԼԻՊՈԼԻ՝ ԹԱՔՍՏՈՅԸ

1916 թ. հունվարի առաջին օրերին էր, երբ Գալլիպոլիում անգլիացիների և ֆրանսիացիների դեմ հաղթանակի լուրը ալիքի պես տարածվեց Կոստանդնուպոլսով մեկ:

Թալիբ բեյը եկավ իմ բնակարան պատմելու այդ մասին, և հասկացա, որ դրանով ուզում է ինձ ցույց տալ, որ դեռ շատ բաներ կարող են տեղի ունենալ մինչև հակամարտության ավարտը:

– Մենք խորտակել ենք անգլիական նավատորմը Միջերկրականում, նաև ֆրանսիական նավեր, հիմա մենք՝ Թուրքերս ունենք մի նոր հերոս, իհարկե առանց նսեմացնելու Լիման ֆոն Զանդերսի արժանիքները..., նրան կոչում են Մուստաֆա Քեմալ, 19-րդ դիվիզիայի հրամանատարը... Գալլիպոլիում հրետանավոր կապիտաններից մեկն է ինձ պատմել: Հարյուր հազարավոր անգլիացի և ֆրանսիացի զինվորներ են զոհվել... Ցավում եմ, մայե, նրանք փորձում էին ներխուժել Թուրքիա, գրավել Կոստանդնուպոլիսը, բայց նրանց չհաջողվեց: Տեսեք մամուլը, Զանաքկալե Սավուչի, բոլորը գրում են, որ Դարդանելի ճակատամարտը կանցնի պատմության գիրկը, քանի որ տարիներ ի վեր անգլիացիներն իրենց համարում էին Միջերկրականի տերերը: Իսկ հիմա՝ ո՛չ:

Թալիբ բեյի ոգևորությունը գրեթե ագրեսիվ էր, բայց մտածեցի, որ նրան կարելի է հասկանալ, քանզի երկար ժամանակ էր անցել, ինչ Թուրքերն առաջին անգամ հաղթել էին այդքան կարևոր ճակատամարտում: Նրան թողեցի, որ խոսեր, մինչև որ հանգստացավ: Այդ ժամանակ էլ հարցրի, թե նորություն ունե՞ր:

– Ոչ, մայե, դեռ ոչ, բայց հաստատ գիտեմ, որ ի վերջո աղջկա հետքին դուրս կգանք: Մի բան կա, բայց դեռ վաղ է հետևություններ անել: Հեծելազորի հրամանատարներից մեկը խոսել է ոմն Սուլեյման Հյուսրևի՝ այն ճամբարի պետի հետ, որը գտնվում է Հալեպից ոչ հեռու: Գիտենք, որ շատ երիտասարդ կանանց քշում են այնտեղ, դա այնքան էլ հեշտ չի լինի:

Պայմանավորվեցի Թալիբ բեյի հետ, որ հնարավորինս քիչ դուրս կգամ բնակարանից: Ըստ իր ասածի՝ Կոստանդնուպոլսում հաճախ էին կազմակերպում չուրջկալներ լրտեսության պատճառով, քանի որ Թուրքերը համոզված էին, որ Ֆրանսիան և Անգլիան այնպիսի տեղեկատվություն ունեին, որ կարող է դուրս գալ միմիայն այնտեղից՝ Կոստանդնուպոլսից: Այնուամենայնիվ, ես վճռել էի ամեն ինչ ձեռնարկել. ես ի վիճակի չէի փակված մնալ, մինչև որ Թալիբը ինձ մասմաս լուրեր հասցներ:

Երկու օր անց ունեցա անսպասելի մի այցելություն: Երբ զանգը հնչեց, տեղիցս չչարժվեցի, բայց հետո կրկին հնչեց և այնքան համառ, մինչև որ դուռը բացեցի: Դեմ դիմաց հանդիպեցի Գրիգոր Բրոչյանին, որը մի պահ սևեռուն նայեց ինձ, ասես ինձ չէր ճանաչում: Հանկարծ ինձ ամուր գրկեց, կամենալով կարծես, որ վերադառնային Նյու Յորքում միմյանց ծանոթանալու օրվան:

– Ողջույն, Անրի: Գիտեմ, որ շատ բաներ են տեղի ունեցել, որ մեզ բաժանել են, բայց չեմ կարող մոռանալ, որ քո շնորհիվ վերադարձա այստեղ: Մինչև վերջերս համագործակցում էինք Իթթիհադի հետ..., հիմա գիտեմ, որ սխալվել ենք: Թուրքերը կրկին խաբեցին մեզ, իսկ մենք ի վիճակի չեղանք գլխի ընկնել: Այդ ամենում կրում եմ իմ պատասխանատվությունը:

Ինձ մի հարցրու, թե ինչպես եմ իմացել, որ դու գտնվում ես այստեղ: Բանն այն է, որ Թուրքական հետախուզական ծառայությունները նույնպես գիտեն այդ մասին և այնքան ժամանակ չունենք, որ քեզ հասցնենք Կոստանդնուպոլսից հանել: Ինչպե՞ս ես կարողացել այդքան նաիվ լինել, որ մտել ես գայլի երախը: Քեզ հսկում են, որովհետև ուզում են իմանալ, թե քեզ ով է գալիս տեսնելու... Ինչ վերաբերում է Թալիբ բեյին, երեկ նրան ձերբակալեցին և պետք է դատեն, հենց որ նրանից հաջողվի խոստովանություն կորզել, ժամերի հարց է: Ես մտել եմ հարկերից մեկով, որը հաղորդակցվում է հետևի փողոցին նայող մի շենքի հետ: Պետք է որ իմանաս, այս թաղամասում շատ հայեր էին ապրում, բայց հիմա անմիջապես պետք է հեռանանք, վերցրու քեզ համար ամենաանհրաժեշտ բաները և գնանք:

Չկարողացա նրան հակաճառել, գիտեի, որ չի ստում, որոշեցի հետևել նրան: Չէի կարող ոիսկի գնալ և վտանգել ինձ, դա կնշանակեր դժվար կացություն ինձ և Ֆրանսիայի համար, քանի որ անկախ դաժան պատերազմից՝ երկու երկրների միջև դեռևս գոյություն ունեին հաղորդակցման եզրեր ընդհանուր վիթխարի տնտեսական շահերով և,– պատերազմով, թե առանց նրա,– փողը չէր դադարում գործելուց:

Հետևեցի Գրիգոր Բրոչյանին: Աստիճաններով բարձրացանք երկու հարկ, դուրս եկանք ձեղնահարկ, ցատկեցինք շենքերի միջև եղած

բաժանման պատնեշի վրայով, մտանք հարակից շենքը, աստիճաններով իջանք: Բնակարաններից մեկի դուռը բաց էր, մտանք: Թվում էր, թե ոչ ոք չկար, հասանք մինչև ննջասենյակներից մեկը: Գրիգորը բացեց պահարանի դուռը և ի զարմանս ինձ մտավ մեջը: Հետևեցի նրան, և դուրս եկանք կողքի բնակարան մեկ այլ պահարանի միջով: Դրանք այն խճճված լաբիրինթոսներն էին, որտեղից ՀՀԴ-ի անդամներին հաջողվում էր փախչել Թուրքական ոստիկանությունից: Այնուհետև նորից իջանք աստիճաններով և դուրս եկանք փողոց՝ փորձելով հանգիստ երևալ: Այնտեղ մեզ սպասում էր մի ավտոմեքենա՝ շարժիչը գործի գցած:

Մտածեցի, որ գործերս գնալով բարդանում են: Թալիբ բեյը նրանց կպատմեր, ինչ էլ որ նրան հարցնեին, թեկուզև ինձանից, ոչ ոք չէր կարող դիմադրել Թուրքական բանտերում գործադրվող տանջանքներին:

Գրիգորն ինձ առաջնորդեց իր թաքստավայրերից մեկը: Ասաց, որ այդ տեղը շատ անգամներ է օգտագործել: Մի հին լքված պահեստանման շինություն էր Բոսֆորի նավահանգիստներից մեկում, ներսում մի փոշոտ գրասենյակ իր զուգարանով: Ինձ բացատրեց, որ պետք է մնամ այնտեղ մինչև հաջորդ օրվա լուսաբացը: Հետո ինձ հարցրեց, թե ինչ եմ անում հիմա Կոստանդնուպոլսում:

Երբ նրան պատմեցի իրավիճակը, ինձ նայեց կասկածանքով: Նրանից ոչինչ չուզեցի թաքցնել, ավարտում էի իմ պատմությունը, իսկ նա դեռ մնում էր լուռ:

– Օֆ, իսկապես որ ընկել ես մեծ գլխացավանքի մեջ: Իսկ զավակներդ՝ ավելի անտանելի: Որքան հասկացա տղաղ իդեալիստ է, իսկ աղջիկդ՝ Սոֆյա՞, գտնվում է աներևակայելի վատ դրության մեջ, իհարկե, եթե դեռ կենդանի է, մի բան, որ կասկածում եմ: Դու չգիտես, թե ինչ է կատարվում այստեղ... Ես կարծում էի, թե ամեն ինչ տեսել էի, բայց հիմա... Տե՛ս, Անրի, այս օրերում Թուրքիայում հայի համար ոչ մի ապահով վայր չկա: Բանտերից արձակել են ամենաստոր մարդասպաններին՝ չեթեներին, որպեսզի նրանց համար կատարեն ամենակեղտոտ աշխատանքը, և հաստատ գիտեմ, նրանք սպանել են հայ բնակչության կեսից ավելիին, այնպես որ քեզ չեմ կարող որևէ հույս տալ: Միայն երջանիկ պատահականությունը կարող է նրանց մահից փրկել:

Ինչ վերաբերում է ինձ, քեզ անկեղծորեն կասեմ, չեմ ուզում այս ամենից հետո շարունակել ապրել, ես մեղքի իմ մասն ունեմ: Ես երկար ժամանակ կարծում էի, թե Թուրքերի ու հայերի միջև հնարավոր

կլինի քաղաքական հաշտեցման հասնել... Եվ տես, թե ինչ է կատարվում: Կարծես թե բացել են դժոխքի դռները: Ի՞նչ ենք արել հայերս նման պատժի արժանանալու համար: Հիմա իմ միակ անհանգստությունը արտաքսվածներից մի քանիսին փրկելն է, բայց չափազանց ուշ է: Մի երկու շաբաթ առաջ հարձակվեցինք պահակախմբերից մեկի վրա, ինչը պարծենալու մի բան չէ, քանի որ մի քանի պահակներ են հսկողները, վատ զինված, երբեմն թմրանյութի ազդեցությամբ կամ խմած, բայց միշտ այո՛, դաժան, որոնք ուղեկցում են արտաքսվածներին դեպի հարավ-արևելք, որևէ թաքուն տեղ անապատում, որտեղ լքում են կենդանի մնացածներին, որպեսզի նրանք մեռնեն: Կեսից ավելին մնում են ճանապարհին, մնացածներից մի քանի փոքրահասակ աղջիկների կամ տղաների վաճառում են գյուղերում ամենաթանկ վճարողին, կամ պարզապես նրանց առևանգում են լեռնական ցեղերի մարդիկ:

Զարհուրելի բան է այն, ինչ վերջին տարիներին կատարվում է՝ ծրագրված ԻԹԹիհադի անդամների կողմից: Փաստեր կան, որ կառավարությունն էլ է ներքաշված այդ հարցում: Հանգամանքները չեն, ոչ էլ պատերազմը, հիմա շատ ավելի վատ է, այս երկրի ղեկավարներն են, որոնք հավաքվում են որոշելու, թե ինչպես ոչնչացնեն պետության բնակչության մի մասին՝ քրիստոնյաներին. հայերին, հույներին կամ սիրիացիներին: Նրանք իրականացնում են էթնիկական զտում. այս բառերով սահմանեց մի գերմանացի միսիոներ մի քանի շաբաթ առաջ: Նպատակն է ոչնչացնել բոլոր նրանց, ովքեր Թուրքեր կամ մուսուլմաններ չեն և նրանց, ովքեր բողոքի ձայն կբարձրացնեն այս կոտորածների վերաբերյալ: Ինձ պատմեցին, որ մի հայ ընտանիք, ներառյալ երեխաները, կանգնած էր իր այրվող տան դիմաց Էրզրումում: Մի Թուրք հարևան հուսահատ փորձում էր պաշտպանել նրանց, մինչև որ եկավ գայմագամը, որն առանց ձիուց իջնելու հրամայեց Թուրքին, որ նրանց գլխատի, հակառակ դեպքում ինքը նույն բանը կանի Թուրքի ընտանիքի հետ: Կարո՞ղ ես պատկերացնել, թե ինչ տեղի ունեցավ... Ստեղծվել է մատնիչների մի ցանց, որոնք ցույց են տալիս նրանց, որոնց կոչում են «հայերի բարեկամներ»: Վերջինները սպանվում են, և իրենց տներն էլ այրվում են ընտանիքները ներսում: Դրանից հետո ոչ ոք չի պաշտպանում քրիստոնյաներին: Հիմա միայն մարդասպաններն ու բռնաբարողներն են մտնում հայկական թաղամասերը, ինչպես սոված շները գիշերվա մեջ: Քչերին է հաջողվում փախչել: Մի քանիսը թաքնվում են սարերում, որտեղ ի վերջո նրանց սպանում են քաղցը և ցուրտը: Անկախ

այս ամենից՝ սակավաթիվ Թուրքեր թաքցնում են հայերին խղճահարությունից կամ հետևելով Ղուրանին, բայց քեզ արդեն ասացի, թե ինչ ռիսկի գնով:

Մտքովս երբեք չէր անցնի, թե քեզ այսպիսի սարսափելի վիճակում կգտնեի: Քո երկու զավակնե՛րը: Կանենք ամեն բան նրանց գրտնելու համար: Ընայած ստեղծված իրավիճակին՝ հաղորդակցության ցանցերը գործում են, թեև անկեղծորեն ասած քեզ շատ բան չեն տա, քանի որ հիմա մեր թիվը փոքր է, բայց քիչն էլ մի բան է:

Հիմա այստեղից չչարժվես, որևէ մեկը քեզ ուտելիք կբերի: Քեզ դուրս կբերենք Բոսֆորով, հավանաբար վաղը գիշերը, բայց քանի որ ամեն ինչ բարդացել է, գուցե իմ փոխարեն ուրիշ մեկը գա: Որպեսզի իմանաս, որ խաբեություն չէ, քեզ կասի այս նշանաբանը. «Hic est enim calix sanguinis mei (Սա իմ արյամբ լի սկահակն է)»: Մի քիչ խրթին է, բայց Թուրքերը լատիներեն չգիտեն: Հիմա վստահիր ինձ և առայժմ:

Գրիգոր Բրոչյանը դուրս եկավ հետևի դռնից՝ թողնելով ինձ մենակ: Հենց այդ ժամանակ հասկացա, որ իմ անհամբերությունն ու իմ հուսահատությունն ինձ գցել են ծուղակը: Չէի ուզում այդ մասին մտածել, բայց հավանական էր, որ ինչպես Սոֆյան, այնպես էլ Էդուարը մեռած լինեին, և ինձ էլ կարող էր նման բան պատահել, այդ դեպքում կմնային այնտեղ իմ հույսերն ու երազանքները, որպես հայկական արյան ևս մի կաթիլ՝ թափված հանուն մի հարցի, որը նախապես համարում էի կորած: Ինձ մեղադրում էի Էդուարին՝ իր հայկական ժառանգության հանդեպ ներշնչած լինելու համար, երբ փոխարենը նրան պետք է դաստիարակած լինեի որպես եվրոպական ժամանակակից երիտասարդի, ոչ այդքան խոր ապրումներով և անիրական գաղափարներով... Այդ դեպքում գուցե նա կենդանի կմընար, կօգտվեր իր դիրքից և հարստությունից, փոխանակ գտնվեր հեռավոր մի երկրում՝ պայքարելով իսկական վիշապների դեմ, որոնք պտտվում էին մեր խռովահույզ հոգում: Մի քանի մարդ արարածների ատելությունն իրենց տեսակի այլոց հանդեպ, ընչաքաղցությունը, նախանձը, կեղծիքը, ըմբռնելու անկարողությունը, որ մի քանի չար ոգիներ թափել էին Թուրքիայի և Թուրք ժողովրդի գլխին՝ արթնացնելով թաքնված դևերին, որոնք ննջում էին մարդկանց հոգիների ամենախորքում:

Հուսահատությունից մազերս էի փետտում, տարակույս չկար, որ երազանքներիցս և ոչ մեկը չէր կատարվի: Էդուարին չէի տեսնելու որպես իմ հետնորդ ձևավորվելիս, չէի տեսնելու Սոֆյայի մորից ժառանգած ժպիտը, երբեք չէի տեսնի հայ ժողովրդին Թուրքերի հետ խաղաղ և ներդաշնակ ապրելիս: Անկարողության, հոգնածության և երկյուղի արցունքներ էին: Ամեն բոպե որևէ մեկը ինձ կարող էր տալ այն ահավոր լուրը, որ իմ տեսած մղձավանջները իրական էին դարձել:

Ես փլվեցի ապակեպատ սենյակի փոչոտ ներքնակի վրա: Բոսֆորից փչող քամին ինձ չէր թողնում ննջել, մինչև որ ինչ-որ պահ ինձ հաղթեց իմ ահավոր հոգնածությունը և ինձ պարուրեց բացարձակ մթություն:

Տեսա երկար մի ճանապարհ: Ռիտա Հակոբյանն ինձ պարզում էր իր ձեռքերը, մինչ հեռվում Մարիցան նայում էր ինձ քաղցրությամբ, ասես հասկանում էր իմ զգացմունքները: Այդ ժամանակ տեսա տղամարդկանց, երեխաների և կանանց մի շատ երկար շարք, որոնք դանդաղ քայլերով գալիս էին դեպի ինձ՝ ասես օդում սահելով: Այդ շարքը թվում էր անվերջանալի, անցնում էին իմ դիմացով բացարձակ լռությամբ, որը հանկարծ խզվում էր հայկական սրինգի՝ դուդուկի հեծեծանքով, լցնելով սարերն իր խոր և մելամաղձոտ ձայնով:

Ես չէի ուզում նայել անցնող մարդկանց դեմքերին, վախենում էի տեսնել Էդուարին, իմ վաղեմի հայ բարեկամներին, որոնց **միակ մեղքը եղել էր սիրել իրենց երկիրը, որը դարեդար բռնությամբ նվաճել, կեղեքել և լլկել էին զավթիչների սերունդները:**

Արթնացա տենդի մեջ, քրտնքի մեջ կորած, լսելով գլխիս վերևում կանգնած ինչ-որ մեկին: Կարծեցի, թե Գրիգոր Բրոչյանն էր և հետո հիշեցի իմ վաղեմի բարեկամ Հովհաննես Օհանյանի անկրկնելի ձայնը:

– Գոնե լավ է, որ հաղթահարեցիր թոքաբորբը: Երեք օր շարունակ զառանցում էիր և իրոք, կարծում էինք, թե չես լավանա: Ստիպված քեզ փաթաթեցինք ծածկոցով և տեղափոխեցինք այստեղ, ազատված բնակարաններից մեկը: Բժիշկը կարծում է, որ դու դուրս կգաս այս վիճակից: Դու անկապ բաներ էիր ասում, բայց ի վերջո, կարծես թե չուտով կկազդուրվես: Հիմա մի քանի օր կհանգստանաս, հետո կփորձենք տանել քեզ Հունաստան կամ Բուլղարիա: Եթե մնաս այստեղ, քեզ կսպանեն, ո՛չ ես, ո՛չ էլ բժիշկը քեզ թույլ չենք տա մնալ:

Իսկապես, ես քեզ մի բան կասեմ հիմա, բայց դու պետք է դրան նայես որպես մի լուրի: Մի ինչ-որ Իբրահիմ Ջեմո, որն աշխատում է բրիտանացիների համար որպես իրազեկիչ, մերոնցից մեկին ասել է, որ Երզնկայի մոտերքում համիդիեները բռնել են ֆրանսիացի մի

տղայի: Այնտեղ է գտնվում բանակի IV ստորաբաժանումը, իսկ ես գիտեմ նրանց վաղուցվա հրահանգիչ անգլիացուն՝ Թոմաս Ուոքերին, որն իրեն ձևացնում է քուրդ հրամանատարի տեղակալ: Ջեմ կարծում, թե այդ ֆրանսիացի երիտասարդի կյանքին վտանգ է սպառնում, գուցե և նրա համար դժվար է, բայց նրան չեն սպանի: Նրանց պետք են պատանդներ, որպեսզի կարողանան հարկ եղած դեպքում սակարկել, գուցե և այնտեղ ավելի ապահով լինի՝ քան Թիկունքում, եթե իրոք այդ տղայի մասին է խոսքը... Բայց ֆրանսիացի մի պատանի: Կարծում եմ, որ մենք ճիշտ ճանապարհի վրա ենք: Բայց աղջկա մասին դեռ ոչ մի լուր չունենք:

Ի դեպ այդ Իբրահիմ Ջեմոն ուզում է քեզ տեսնել, ասում է, որ վաղեմի բարեկամներ եք: Բերե՞մ նրան: Այստեղ է, Կոստանդնուպոլսում, թեև չգիտեմ՝ երբ է գնալու:

Համաձայնեցի: Ինձ հարկավոր էր, որ ով էդուարից կամ այդ ֆրանսիացի տղայից լուր ուներ, ինձ անձամբ պատմեր: Ես հասկանում էի, որ առայժմ ի վիճակի չէի շարժվել: Թոքաբորբն ինձ ուժասպառել էր, անգամ չէի կարող անկողնուց վեր կենալ, բայց հուսով էի, որ բարեկամիս՝ Օհանյանի խնամքի շնորհիվ մի քանի օր անց ոտքի կկանգնեմ:

Մի շաբաթ հետո, ինձ խնամող միանձնուհին, որն իտալական հիվանդանոցից էր, տարիքն առած բուժքույր, ինձ ասաց, որ Գրիգոր Բրոչյանի կողմից մի մարդ է եկել ինձ տեսնելու: Անկասկած Իբրահիմ Ջեմոն էր, որը ժպտալով մոտեցավ, գուցե փորձելով աչխուժացնել ինձ, թեև ես շատ ավելի լավ էի:

– Մսյե դը Լատուր, ինչ ուրախ եմ ձեզ տեսնել: Որքա՜ն ժամանակ է անցել: Ինձ պատմել էին, որ դուք այստեղ եք, բայց ես չէի հավատացել: Մտածեցի, թե ինչպես կարող էր նման սխալ թույլ տալ Ֆրանսիայի ամենախելացի մարդկանցից մեկը: Հետո ինձ ասացին, որ խոսքը ձեր զավակների մասին է... Այդ ժամանակ ես հասկացա:

Բրոչյանը ձեզ պատմած կլինի, որ մենք ընկել ենք մի ֆրանսիացի տղայի հետքի վրա, բայց խնդրում եմ՝ շատ հույսեր չփայփայեք: Տեսեք, մսյե, այդ Թոմաս Ուոքերը՝ համիդիեների՝ անկանոնների ստորաբաժանման, վաղեմի հրահանգիչը՝ հիմա հաջողացրել է մտնել հատուկ կազմակերպություն... Ասեմ ձեզ, որ դրան հասել է իմ կապերի շնորհիվ: Հիմա կազմակերպության ղեկավարները երեքն են, Հալիլ փաշան Բիթլիսում, մի անգութ մարդ, հանուն փողի ընդունակ ցանկացած լկանքի, հայտնի է նրանով, որ շատ հայերի է սպանել իր ձեռքով: Հետո Տրապիզոնում Ենիբահչելի Նայլը՝ վայրագ և սառնարյուն մեկը, որը դեռ կուրսանտ՝ աչքի էր ընկել որպես սուլթանի լրտես, պատրաստ անգամ իր ընկերներին կախաղան հանել, իշխանատենչ և փառասեր մեկը, որը կստանա այն, ինչի արժանի է: Եվ այդ Ֆիլիբելի Հիլմին էրզրումում, կադրային զինվորական, բարեկամ Էնվեր բեյի՝ Իթթիհադի կառավարությունում հիմիկվա պաշտպանության նախարարի և դոկտոր Նազըմի՝ այդ հրեշավոր մարդու ընկերն է: Այդ Հիլմին մի արատ ունի, նրան դուր են գալիս երիտասարդ ու փոքրահասակ տղաները: Բոլորն այդ մասին գիտեն և կազմակերպության ենթակաները նրան հաճույք պատճառելու համար մի քանիսին հրամցնում են: Ահա թե մենք ինչ դաժան և հրեշավոր իրականությունում ենք ապրում: Բայց ձեզ ասեմ, որ Աստված արդարամիտ է և ամեն մեկին կտա արժանի պատիժը, այս երկրի վերջն էլ կախաղանն է լինելու:

Բարի, Ուոքերը չուտով մեզ կասի, թե ինչ է ֆրանսիացի տղայի անուն ազգանունը: Ալլահը մեծ է, և գուցե մեր բախտը բերի: Ինչպես գիտեք, ես այստեղ եմ գտնվում, որպեսզի ձեզ փորձեմ դուրս բերել Թուրքիայից: Դուք վերջերս եք եկել այստեղ, բայց իմացեք, որ մեծ սխալ եք թույլ տվել: Ես կօգնեմ ձեզ, առայժմ ոչինչ հարկավոր չէ: Բայց եթե ինձ հաջողվի հանձնել ձեզ ձեր որդուն, դուք ինձ կօգնեք ստանալ ֆրանսիական քաղաքացիություն: Համաձա՞յն եք: Ինչպես տեսնում եք, քիչ բան եմ խնդրում:

Բավականին հոգնած՝ համաձայնեցի: Ինչ էլ որ խնդրած լիներ, կասեի այո՛: Ֆրանսիական անձնագիրը լավ պարգևատրում էր, իսկ նա վստահ էր, որ կարող էի օգնել նրան այդ հարցում: Իրարու ձեռք սեղմեցինք:

– Մի շաբաթ հետո, եթե լավ լինեք, կգնանք Վառնա, Բուլղարիա, այնտեղից էլ Սոֆիա: Հենց որ հասնենք այնտեղ, կհանգստանաք ինձ ծանոթ մի լավ առողջարանում և երբ ապաքինված լինեք, այն ժամանակ կորոշենք: Այստեղ վտանգավոր է, եթե ձեզ բռնեն, նրանց համար մեծ ավար կդառնաք, մենք այդ հաճույքը նրանց չենք պատճառի: Համաձա՞յն եք: Այդ դեպքում ես ձեզ թողնում եմ: Մի քանի օրից կգամ ձեր հետևից և տա Աստված, որ կարողանամ ձեզ բերել որևէ լավ լուր:

Երբ Իբրահիմ Ջեմոն դուրս եկավ, մնացի մտահոգ ու ճնշված: Իմ հոգեկան և ֆիզիկական վիճակները փոխկապակցված էին: Չէի հավատում, թե որևէ բան կփոխվի, քանի դեռ ամեն օր շուրջս հազարավոր մարդիկ էին մահանում, զուտ այն պատճառով, որ հայեր էին:

ՄԱՐՏ 1916

51. ԼԻԶԱ ՋԱՄԲԱԶՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ

Մի քանի օր անց Գրիգոր Բրոչյանը եկավ ինձ տեսության: Ինձ թվաց, որ ինչ-որ բան է փոխվել և նրան հարցրի, թե ինչ է տեղի ունենում:

– Մեր պայմանավորվածության համաձայն՝ պետք է Բուլղարիա գնայիր Իբրահիմ Ջեմոյի հետ: Հիմա որոշ բաներ փոխվել են, լսիր: Հիշում ես Մուհամեդ Զիային: Հին գորգերի վաճառականը քեզ պատմելու բան ունի, կարծում եմ, որ քիչ հետո այստեղ կլինի: Մեկին ուղարկել եմ, որ նրան բերի այստեղ:

Ըստ իր պատմածի՝ դուք իրար հետ ծանոթացել եք ավելի քան երեսուն տարի առաջ, և հավաստիացնում է, որ մի առիթով դու փրկել ես նրա կյանքը: Ասում է, որ հիմա իր հերթն է պարտքը վճարելու: Մի տես, թե դա հիմա ինչ կարող է նշանակել..., ի վերջո տեսնենք, թե ինչի վերաբերյալ է:

Մի երկու ժամ հետո իսկապես հայտնվեց Զիան: Նայեց ինձ ուշադիր, իսկ այտերն ի վար գլորվում էին արցունքները:

– Ալլահը մեծ է: Զէ՞ որ այստեղ է գտնվում իմ բարեկամ դը Լատուրը: Մի՞թե անցել է երեսուն տարի: – Նա ուզում էր ձեռքերս համբուրել հուզմունքից քարացած,– Ալլահը մեծ է:

Երբ մի քիչ խաղաղվեց, նստեց կողքիս:

– Մսյե, ոչ ոք չի կարող վերահսկել իր ճակատագիրը, բայց իսկապես գոյություն ունի մի բան, որ վերահսկում է մեզ: Տեսեք..., ես ծանոթ էի Թալիբ բեյին՝ այդ ազդեցիկ Թուրքին, որը քանի տարի ձեր բարեկամը պետք է որ եղած լինի: Նա իմ լավագույն հաճախորդներից էր: Նրան այն ժամանակ դուր էին գալիս մեծ առանձնատները, հնությունները և ամենաթանկ գորգերը, նաև գեղեցիկ կանայք, զարդերը, փողը, մանավանդ փողը և չքեղ կյանքը: Ինձ միշտ ասում էր. «Մուհամմեդ, ժամանակն ավելի արագ է անցնում, քան մեր ցանկությունները, և իսկական ժամացույցը մեր կրծքում է խրփում իր թիկ-թակը»: Այսինքն՝ ինձ պատվիրում էր Պարսկաստանի լավագույն գորգերից լավագույնը: Իրոք, նա մեծ գիտակ էր, և մեկ անգամ չէ, որ նրան տեսել եմ լաց լինելիս, երբ չոյում էր Սպահանից բերված մի գորգ՝ երկու դարից էլ շատ առաջ հյուսված մի հայ ընտանիքի կողմից, որն ապրում էր Թագավորական մզկիթի՝ էլ Մասխիդ-ի-Շահ-ի մոտ: Ինչ հրաշքներ էին արարում այդ մարդիկ իրենց ձեռքերով, բայց պետք է ինձ ներող լինեք, քանի որ ընդամենը մի համեստ գորգավաճառ եմ և չեմ կարող լռել նրանց մասին:

Վերջերս Թալիբ բեյը մի նամակ է գրել ինձ, որում ինձ պատմել է ձեր ու ձեր երեխաների մասին, որոնք լուրջ խնդիրներ ունեն, և լսեք, կարծում եմ, որ գտել եմ ձեր դստեր՝ Սոֆյայի հետքը: Բայց հանգիստ, մսյե, թույլ տվեք, որ ձեզ բացատրեմ:

Զիան լավ էր հասկանում իմ նյարդային վիճակը և ցանկանում էր հանգստացնել ինձ: Դա էր նրա երկար մենախոսության պատճառը, որ հատուկ պատրաստել էր:

– Տեսեք, մսյե: Առաջին հերթին արտաքսվածները գնացքով դեպի Հալեպ գնացին: Այնտեղ նրանց պահեցին հատուկ գերիների ճամբարներում, թեև Թուրքերը այդ որակմանը դեմ են: Սակայն, բնականաբար, հայերին բաժանեցին տարբեր խմբերի: Մեծամասնությունը պետք է որ ոչնչացված լինի մի քանի ամսում, բայց կային ուրիշ՝ ավելի արժեքավոր խմբեր, որոնց անջատել են և կերակրել, ինչպես հարուստ ընտանիքների որոշ կանանց, որոնք թեև կրել են նվաստացումներ և անպատվություններ, բայց մնացել են ողջ..., պարզապես որովհետև մեծ գումար արժեն: Ես որոշ պատճառներ ունեմ կարծելու, որ Սոֆյա Հակոբյանը նրանցից մեկն է... Թեև չգիտեմ, թե նա դեռ այնտեղ է:

Ինձ այստեղ ուղեկցել է մի կին, որը բռնագաղթվածներից ողջ մնացածներից է: Նրա անունը Լիզա Ջամբազյան է, ըստ նրա՝ աղջկա մորաքույրն է և նրան ուղեկցել է ճանապարհի մեծ մասը մինչև ճամբարը: Այստեղ է, դրսում և կուզենայի, որ նա պատմեր եղելությունը: Հիմա նրան ներս կբերեմ, և նա կխոսի ձեզ հետ: Համաձա՞յն եք:

Համաձայնեցի: Այն, ինչ կատարվում էր, անհավատալի էր՝ ասես անվերջ մի մղձավանջ, բայց ցանկանում էի մինչև վերջ հասնել:

Զիան կրկին մտավ՝ ուղեկցելով մի ծեր կնոջ, գոնե այդպես էր թվում: Նրա դիմագծերը հայկական էին, բայց բաց գույնի աչքերից թվում էր, թե տեղացի չէր:

Կինը մոտեցավ ինձ ու գրկեց:

– Ինձ ասել են, որ դուք ուզում եք գտնել Սոֆյա Հակոբյանին: Ասում են, մսյե, որ դուք միշտ օգնել եք հայերին: Թող Աստված ձեզ օրհնի:

– Այո... դե լավ,– հուզված մրմնջացի,– ես նրա՝ Ռիտա Հակոբյանի, վաղեմի բարեկամն եմ և ուզում եմ փորձել մի բան անել Սոֆյայի համար,– մտածեցի, թե այդ կինը ոչինչ չգիտե Սոֆյայի հետ իմ առնչության մասին:

– Եթե չեք առարկում,– շարունակեց կինը,– ձեզ կպատմեմ այն մասին, թե ինչ տեղի ունեցավ: Բայց խնդրում եմ, որ թույլ տաք ինձ իմ ձևով պատմել: Ոչինչ չեմ թաքցնի, դուք այդպես կհասկանաք տեղի ունեցածը:

Ես գլխով համաձայնության նշան արեցի, որ նրան չեմ ընդհատի: Լիզա Ջամբազյանը տեղավորվեց իմ կողքին, խոր հառաչեց: Հետո սկսեց իր պատմությունը:

– Ես չգիտեմ, դուք տեղյա՞կ եք, որ ապրիլի 25-ին Անդրեաս Ստամբուլյանը պատրաստվում էր խնդրել Սոֆյայի ձեռքը: Երկու ընտանիքների համար էլ դա շահեկան ամուսնություն էր, ուրախության և գոհունակության առիթ: Բնականաբար, նախօրեին՝ 24-ին Կոստանդնուպոլսի երևելի ընտանիքները ուղարկեցին թանկարժեք նվերներ: Որքանով որ հիշում եմ, այդ օրը Սոֆյայի հայրը՝ Պողոս Հակոբյանը գնացել էր բանկ ինչ-որ ձևակերպումներ անելու: Հավանաբար տուն վերադառնալիս հանդիպել էր խաժամուժի, որը փորձել էր գրոհել բանկը և հենց այնտեղ էլ նրան սպանել էին: Համենայն դեպս, մեզ այդպես պատմեցին հետո: Ես գտնվում էի Ռիտա Հակոբյանի տանը՝ օգնելով նրանց նշանադրության պատրաստություններում: Կարո՞ղ եք պատկերացնել այդ օրը, դերձակները վերջին հարդարանքներն էին անում տիկնանց զգեստներին, ամեն վայրկյան հնչում էր դռան զանգը, հսկա խոհանոցը լի էր վարձած խոհարարներով, որոնք օգնում էին հյուրասիրելու, ծառաները վերև-ներքև էին անում:

Այս իրարանցման մեջ Ռիտան շատ նյարդայնացած էր՝ այնքան, որ մի պահ պառկեց իր ննջարանում ահավոր գլխացավով, և ես հանձն առա կազմակերպել ամբողջը, քանի որ նա միշտ էլ վստահում էր ինձ:

Այդ առավոտ ոչ մի արտառոց բան չէի նկատել: Քաղաքը սովորականի պես էր, թեև պատերազմը շատ բաներ էր փոփոխել:

Համարյա կեսօրին էր, երբ փողոցում լսվեցին ճիչեր: Տունը մեծ այգի ուներ, որը փողոցի կողմից պաչտպանված էր թույլ բարձր ճաղերի պարիսպով: Պատուհանից դուրս նայեցի և տեղում քարացա: Համարյա քսան հոգուց կազմված մի խումբ՝ զինված մահակներով և յաթաղաններով, հասցրել էին ավերել պարսպի մի մասը և ցատկում էին նրա վրայով՝ դիվահարների պես գոռալով: Հասկանալի է, որ ոտքերս ծալվեցին, բայց ես վազեցի դեպի Ռիտայի ննջարանը, մինչ լսվում էին հիմնական դռնից եկող ուժեղ հարվածները: Երբ մտա, Ռիտան վախից վեր էր կացել ու երկուսով վազեցինք դեպի Սոֆյայի ննջարանը: Նա իր ընկերուհիների և դարմուհիների հետ էր. բոլորն էլ սարսափահար էին տեղի ունեցածից:

Բայց հարվածները սաստկանում էին, և գլխի ընկանք, որ ուր որ է՝ այդ ճիվաղները մի քանի րոպեից դուռը չուռ են տալու: Ժամանակ չկար, մենք ուղղվեցինք դեպի պտուտակաձև աստիճանները, որը գրադարանի ներսում էր: Ռիտայի պապը դա պատրաստել էր տվել 20 տարի առաջ՝ 1895 թ. Աբդուլ Համիդի կողմից հայերի դեմ հրահրած կոտորածների և անկարգությունների դառը փորձից ելնելով:

Աստիկ պապը այդ օրը որոշեց, որ այլևս անգեն չի լինի և ստիպված չի լինի փախչել: Սոֆյան և իր ընկերուհիները չատ անգամներ էին խաղալիս իջել այդ աստիճաններով և բոլորս չտապեցինք դեպի սանդուղքը ահաբեկված օրիորդների և դերձակուհիների հետ: Վերջինը ես իջա և չկորցնելով ինձ՝ կրկին գրադարակները դրեցի իրենց տեղում, որպեսզի թաքցնեի ելքը:

Վազեցինք նկուղով դեպի հետևի մասը, որտեղ գտնվում էին ձիանոցը և պահվում էին ավտոմեքենաները, որոնք Գրիգոր Հակոբյանի պատվերով բերվել էին Անգլիայից և Գերմանիայից: Մենք ծառայողական մուտքով դուրս եկանք և նրբանցքով վազեցինք մինչև քրոջս՝ Թերեզի տուն:

Այնտեղ մեզ սպասում էր նոր ողբերգություն: Իմ փեսային՝ Արփիարին, Ռիտայի հորեղբոր տղային, մահակներով ծեծել էին ու այդպես ոտքերն արյունվա՝ առևանգել:

Թերեզը հուսահատությունից նյարդային նոպայի մեջ էր, իսկ տունն՝ ավերված: Ամբողջ ապակեղենը փշրված, կահույքը կտոր-կտոր արված, պահարանների ապակեպատ դարակները կողոպտված: Կարծես դժոխային ավերիչ ալիք էր անցել քաղաքի ամենաճանաչված հայերի ընտանիքների վրայով: Պատկերացրի, թե երկրի մնացած մասում ինչ պատահած կլիներ:

Այդ պահին Ռիտան ուշաթափվեց: Դժվար էր դիմանալ այդ ամենին: Թեև փորձեցինք չթողնել, բայց աղջիկները փախան իրենց տները, դերձակուհիները և տան ծառայողները նույնպես: Այնպես որ քիչ հետո մնացինք միայն ես ու Ռիտան, որ կամաց-կամաց ուշքի էր գա-

լիս: Թերեզը դեռ նյարդայնացած էր, Սոֆյան զարմանալիորեն չէր կորցնում ինքնատիրապետումը, իսկ ես, որ չգիտեի ինչ անել, կամեցա ցույց տալ, որ չեմ ընկճվում:

Այդ պահին եկավ Ներսեսը, Արփիարի և Թերեզի դեռահաս որդին՝ տասնհինգ տարեկան տղա, աչխույժ և հնարամիտ: Նա մեզ բացատրեց, որ հիմնականում գրոհում են Գալատայի թաղամասում և շրջակայքում: Այնուամենայնիվ տեսել էր, որ որոչ հայերի ոստիկանությունը ձերբակալել է ու տանում է որպես բանտարկյալների: Կարծես թե խաժամուժը ցրվում էր:

Հետո սկսեցին գալ ընտանիքի անդամները: Այդ ժամանակ էլ իմացանք, թե ինչ է պատահել Պողոս Հակոբյանին բանկից դուրս գալիս: Ռիտան չէր ուզում հավատալ և սկսեց բղավել հիստերիկայի մեջ: Իմ զարմիկ Ժորժը, որ վիրաբույժ էր, որոչեց, որ ամենաճիչտը նրան որևէ հանգստացուցիչ ներարկելն է, որ գոնե մի քանի ժամ կարողանա հանգստանալ:

Հետո իմացանք, որ այդ գիչեր կրկնվել էին ոչ կանոնավոր, հանկարծակի հարձակումները նույն վայրագությամբ, թեև ստեղծվել էր այն տպավորությունը, որ առայժմ կանանց էին միայն ուզում վախեցնել: Հարձակվողները, անչուչտ, պրոֆեսիոնալ ոճրագործներ էին բանտերից հատուկ դուրս բերվածներ, որոնք դարձել էին քաղաքի փողոցների տերը: Ինչ վերաբերում էր ոստիկանությանը, նրանցից ոչ ոք չէր երևում, կարծես անհետացած լինեին:

Վաղ առավոտ մեր բարեկամներից մեկը բերեց չատ վատ լուր: Ձերբակալում էին քաղաքի հայ համայնքի բոլոր առաջատար մարդկանց: Մի քանիսը, ինչպես Պողոսը, սպանվել էին: Բայց մեծամասնությանը ձերբակալել էին և տարել անհայտ վայրեր, գուցե քաղաքին մոտ գտնվող մոտակա զինվորական բանտերը, ինչպես քաղաքական գործիչներին՝ Զիլինգարյանին, Յարճանյանին, Ռուբեն Զարդարյանին, Վարուժանին և չատ ուրիչների, ընտանիքի բարեկամների, երկրի քաղաքականության վրա մինչև ժամեր առաջ մեծ ազդեցություն ունեցող գործիչների: Նույն ճակատագրին էին արժանացել գործարար մարդիկ, գրականագետներ, լրագրողներ, նույնիսկ հոգևորականներ: Ակնհայտ էր, որ ցանկանում էին գլխատել հայ համայնքը:

Մի քանի ժամ հետո հազիվ էր Ռիտան ուչքի եկել, որոչեցինք լքել քաղաքը: Նրան պատել էր այն սարսափը, թե ինչ կարող էր պատահել Սոֆյային ու Լևոնին՝ հազիվ տասնվեց տարեկան: Դեմքին

կամքի և սոսկումի հեգնաժպիտ՝ խնդրեց Ժորժին, որ իրեն այլևս ոչ մի հանգստացնող միջոց չտար: Միայն ծորակից ջուր էր խմում և ոչ մի օգնություն մեր կողմից չէր ընդունում: Անընդհատ կրկնում էր, որ ամեն վայրկյան կարող էին գալ և քանի որ իրոք անպաչտպան էինք, որոչեցինք նախապատրաստվել և փախչել Յալովա, որտեղ ամառանոց ունեինք: Մի քանի թրքուհի ծառայողներ ասացին, որ վատթարն արդեն հետևում էր: Քահանաներից մեկը՝ ընտանիքի անձնական բարեկամ, մեզ հայտնեց, որ Կոստանդնուպոլսի ամենանչանավոր մարդկանց տարել են անհայտ ուղղությամբ:

Ուղեկցեցի Սոֆյային իրեն տուն, որ հավաքեինք ամենաանհրաժեչտը: Ռիտան հրաժարվեց, որովհետև վախենում էր տեսնել տունը ավերված վիճակում: Իսկապես, Հակոբյանների առանձնատունը քաղաքի ամենաչքեղ դղյակներից մեկը, կահավորված պերճաչուք՝ սերնդեսերունդ, քարուքանդ էր: Ամենաթանկարժեք կահկարասին անհետացել էր, վարագույրներից մնացել էր կախված կտորտանք, մարմարյա աստիճանները սանդուղքների հետ՝ տեղահան արված և արժեքավոր բոլոր իրերը՝ գորգերը, ջահերը, արձանները կողոպտել էին:

Սոֆյան հեծկլտում էր տեսնելով, թե ինչի էր վերածվել իր օջախը, նաև փորձում էր չարտահայտել հուզմունքը: Նրան հաջողվեց իրեն զսպել: Մի չհիրկիզվող պահարան, որը գտնվում էր պտուտակաձև սանդուղքի խորչում, որում պահված էին ամենաթանկարժեք զարդերը և կանխիկ փողը, բացեցինք: Այդ ամենը դրեցինք մի պայուսակում, իսկ վրան ծածկեցինք պատառոտված սավաններով: Մեր միակ հույսն էր, որ ապահովենք մեր փախուստը և վերադարձանք այն համոզմամբ, որ քանի դեռ հնարավոր է, պետք է փորձենք:

Սոֆյան չպատմեց մորն իր տեսածը, ոչ էլ Ռիտան նրան հարցրեց: Նա չափազանց զգայուն էր, որպեսզի չպատկերացներ կատարվածը, բայց չէր ցանկանում իմանալ: Միայն ուզում էր այնտեղից հեռանալ՝ իր գեղեցիկ, ներդաչնակ օջախի պատկերը հոգում: Համոզված եմ, եթե նա մտած լիներ այնտեղ, որը եղել էր իր թագավորությունը..., հավանաբար կնախընտրեր տեղում մեռնել: Երջանիկ ժամանակաշրջանը ընդմիչտ վերջացել էր:

Սոֆյայի երկու զարմիկների՝ քսանչորս և քսանվեց տարեկան երիտասարդների, անհայտանալը բաժակը լցնող կաթիլն էր: Երբ իմացանք, Ռիտան հուսահատությունից չրթունքներն էր կծոտում՝ տեսնելով, որ նախկին վիճակին վերադառնալու ոչ մի հնար չկա: Համոզված էինք, որ եկել է աչխարհի վերջը և ոչինչ հնարավոր չի անել դրանից խույս տալու համար:

Բայց Ռիտան վերափոխվել էր ներքուստ՝ ցույց տալով Ջամբազյանների հնուց եկող կամքի ուժը, որը պատմության ընթացքում շատ անգամներ էր ապացուցել, որ անհնարին է նրանց ծնկի բերել:

Մեզ միացան երեք զարմուհիները, համարյա երեխաներ, Ամալյան, Ալիսը և Լիզան, գերդաստանի ամենաերիտասարդները: Նրանց հայրը՝ իմ եղբայր Ժորժ Ջամբազյանը, նույնպես ձերբակալված էր եղել Կենտրոնական ոստիկանությունում, երբ գնացել էր այնտեղ հայտնելու ստեղծված անտանելի վիճակի՝ անընդմեջ բռնությունների, կոտորածների, հարձակումների և առևանգումների մասին, որոնց ենթարկվում էր իր գերդաստանը: Այն պահից, ինչ ինքը մտել էր այդ չենքը, ոչ ոք այլևս նրան չէր տեսել: Նրա կառապանին, որը մտել էր տեղեկանալու, թե ինչ է տեղի ունեցել, գազանաբար ծեծել էին:

Մյուս կողմից՝ թուրք հարևանները շատ արագ փոխվեցին: Զէին ուզում կամ գուցե չէին կարող շարունակել պահպանել անգամ ամենաթույլ կապ հայ ընտանիքների հետ: Շատ դեպքերում մատնում էին հարևանները, որոնց հայերս համարել էինք մտերիմ ու սիրալիր:

Շուտով իմացանք ճշմարտությունը: Հենց ինքը՝ ներքին գործերի նախարարն էր տվել ոճրագործներին ու ամեն տեսակի հանցագործներին բանտերից արձակելու հրամանը, որն իհարկե հայերին չէր վերաբերում: Այդ խաժամուժին կոչել էին հատուկ կազմակերպություն, որի նպատակը կեղտոտ աշխատանքն իրականացնելն էր՝ կառավարության խարդախ հրահանգների հանձնարարությամբ: Հանձնարարություն, որը նրանց հաղորդել էին այդ իսկ կառավարության պատվիրակները: Ինչ սրիկայություն:

Ռիտան որոշեց վստահել Ալի Օսմանին՝ կառապանին, որպեսզի մեզ տաներ Բեշիկթաշ՝ փոքրիկ նավահանգիստ Դոլմաբահչեից ոչ հեռու: Նա չէր սխալվել: Ալին օրինավոր ձևով կատարեց իր պարտականությունը, թեև գիտեր, որ մեր ողջ ունեցվածքը մեզ հետ էինք տանում:

Բայց չէ՛ որ նա մեր աղջիկներին գիտեր ծնված օրվանից: Դա հույսի մի շող մեզ պարգևեց, ցույց տալով, որ շատ թուրքեր համաձայն չէին երկրում կատարվող իրադարձություններին և եթե մերոնց չէին օգնում, պատճառն այն էր, որ իրենց կյանքի ու ավելի վատ՝ իրենց ընտանիքի կյանքի գնով պետք է հատուցեին:

Տեսա, թե Ռիտան ինչպես էր չորացնում արցունքները, կարծես ներքուստ զգում էր, որ այսուհետև իր կյանքը ուրիշ կերպ էր լինելու: Արդեն համակերպվել էր այն մտքի հետ, որ Պողոսն այլևս չէր

վերադարնալու և ինձ ասաց, որ իրեն չատ միայնակ է զգում և անպաշտպան, բացի այդ պատասխանատու էր, պետք է ջանար փրկել աղջիկներին նման ագրեսիվ երկրում, որն իր համար նորություն էր, քանի որ մինչ այդ նա ապրել էր հարմարավետ ու չքեղ կյանքով: Գիտեի, թե նրա համար որքան դժվար է դիմանալ այդ սարսափելի իրավիճակին, երբ ստիպված պետք է գաղտնի փախչեինք Թրքուհի գյուղացիների պես հագնված՝ ամեն րոպե ձերբակալված լինելու ահը սրտներումս:

Պետք է ասեմ, որ այդ ընթացքում հատուկենտ թուրքեր, որոնց հետ գործ ունեցանք, գիտենալով, որ եթե մատնեին, կնշանակեր մեզ մահվան դատապարտել, ցույց էին տալիս, թե իբր մեզ չեն տեսնում: Եղան այնպիսիները, որ անգամ հարցրին, թե ինչով կարող են մեզ օգնել:

Հենց որ հասանք Բեշիկթաշ «Դուդուկ»-ով՝ Հակոբյանների նավով, ուղղություն վերցրինք դեպի Յալովա, որը վարում էր Սելիմ Գազին՝ մի ծեր ծովային, որն ամբողջ կյանքում աշխատել էր ծառայելով մեր ընտանիքին և մենք նրան լիովին վստահում էինք: Նրան օգնում էին երկու նավաստիներ, մի ոմն Ահմեդ և մյուսն ավելի երիտասարդ, Մուստաֆա, որոնց մենք սկզբից ևեթ հավատ չընծայեցինք:

Հիշում եմ, որ գիշերը խաղաղ էր, մեղմ քամի էր փչում, և մեր առագաստանավը արագ լողալով հեռացավ ափից: Լուսինը թույլ լույս էր արձակում և բավարար տեսանելիություն. մենք տեսնում էինք մեր կողքով անցնող նավերը:

Աղջիկները լուռ էին, տրտում, հոգնած տեղի ունեցածից, անընդունակ հասկանալու հայերի դեմ մոլեգնող ատելությունը: Հիմա ձեզ Սոֆյայի մասին պատմեմ: Նա երեքից ամենամեծն էր և իր պարտքն էր համարում սատարել իր զարմուհիներին: Դա խոսում էր նրա արիության մասին, քանի որ մթին ծովը սարսուռ էր առաջացնում, նաև՝ լռությունը, որ խզվում էր միայն կայմապարանի թիկթիկոցից:

Մենք հեռու չէինք ափից, մոտենում էինք Յալովայի նավահանգստին, երբ լսեցինք մի խուլ հարված: Անմիջապես առաջ եկավ նավաստիներից մեկը և սպառնալի շարժում արեց: Այդ ժամանակ գլխի ընկանք, թե ինչ է պատահել: Նավաստիները հենց նոր սպանել էին կապիտանին՝ մեզ պատանդ վերցնելու և, հնարավոր էր՝ մեր դիմաց փրկագին պահանջելու համար:

Բայց նրանք հաշվի չէին առել Ռիտայի ատրճանակը՝ Պողոսի՝ իր ամուսնու վաղուցվա նվերը, որը որոշել էր հետը վերցնել: Ստեղծ-

ված հանգամանքներում խելամիտը դա էր: Կարծում եմ, որ Ռիտան միայն ուզում էր վախեցնել նրան, բայց նյարդերը նրան մղեցին կրակել ուղիղ հոնքերի արանքին: Նա չհասցրեց անգամ ձայն հանել: Մյուս նավաստին բարձրացավ տախտակամած: Հավանաբար նա այնքան էլ փորձառու չէր իր արհեստում, որովհետև առանց նավավարի առագաստանավը պտտվեց տեղում, և կայմասյունը խփեց ուղիղ նավաստու դեմքին:

Մինչև հիմա հուզվում եմ, երբ հիշում եմ, թե ինչ կատարվեց: «Դուդուկը», որ իսկապես արվեստի գործ էր, և շարժել էր բոլորի նախանձը, ովքեր այն տեսել էին նավարկելիս, բախվեց ափի խութերին ու մի քանի րոպեում վերածվեց տաշեղների: Անկախ ամեն ինչից՝ հրաշք կատարվեց, քանի որ մենք ողջ մնացինք: Լողացինք մինչև մի փոքրիկ խճաքարոտ ծովափ: Երբ Ռիտան, որ վերջինն էր, ջրից դուրս եկավ և տեսանք, որ նա էլ է փրկվել, լաց լինելով գրկեցինք իրար:

Սակայն մեր ուրախությունը երկար չտևեց: Մի քանի րոպե անց մեզ շրջապատեցին: Բախտներս չէր բերել, հասել էինք մի ծովափ, որի մոտ գտնվում էր զինվորների՝ գիշերն անցկացնելու ճամբարը: Հաշվի չառնելով Ռիտայի հուսահատությունն ու իմ ողբը՝ մեզ անմիջապես տարան աքսորյալների ճամբարը, որոնց նոր էին բերել Կ. Պոլսի մերձակայքից, երկու օր առաջ: Սարսափելի բան էր: Մեզ հանձնեցին հազար հոգիանոց խմբի պահակներին, բոլորը կանայք, ուժասպառ և հուսահատ, մի քանիսը մեկնված, մյուսները նստած կիսախավարում: Երբ հասանք, չէինք հասկանում, թե ինչ էր կատարվում: Ասես մղձավանջ էր՝ իրականության վերածված, ոչ էլ կարող էինք այնտեղից փախչել: Այնտեղ մեզ բաժանեցին..., գուցե և կյանքիս ամենածանր պահն էր, քանզի երբեք չէի մտածել, որ մարդիկ՝ մի քանիսը մյուսների հանդեպ այդ աստիճանի վայրագ կարող էին լինել:

Տարան Սոֆյային և աղջիկներին, որոնք անհույս բղավում էին՝ ծայրաստիճան ահաբեկված: Մենք էլ էինք անասելի հուսահատ: Մեզ շարունակ ծեծում էին, մինչև որ Ռիտան ուշակորույս ընկավ գետնին, ինձ շարունակեցին քացիներով խփել, մինչև որ գիտակցությունս կորցրի:

Ռիտան ու ես պետք է դիմակայեինք ստեղծված իրավիճակին: Երբ Ռիտան ուշքի եկավ, ասաց, որ ուզում է տեղում մեռնել: Ես նրան պատասխանեցի, որ քանի դեռ շնչում ենք, պետք է հույս ունենանք, որ... փորձելու ենք փախչել, որովհետև պետք է փրկենք աղջիկներին:

Այդ ժամանակ Ռիտան վեր կացավ: Իսկ պահակները անգթորեն ծեծում էին նրանց, ովքեր ի վիճակի չէին տեղից շարժվել:

Բանն այն է, որ շատ կարճ ժամանակամիջոցում ամեն ինչ այնքան էր փոխվել, որ ի վիճակի չէինք հասկանալ. թե ինչ է կատարվում: Այնտեղ էինք ամեն խավի և տարիքի հայ հարյուրավոր կանանց հետ՝ բացառությամբ երիտասարդ ու փոքրահասակ աղջիկների, որոնցից ուրիշ խումբ էին կազմել, որը հավանաբար առջևից էր գնում: Դա մի տեսակ խթան էր, որ շարունակենք գնալ, որովհետև մեզանից ոչ ոք չէր ուզում բաժանվել իր դստերից և թոռնուհիներից: Զնայած դրան, մի քանիսը մնացին գետնին փռված, անհույս և անուժ, մահամերձ, մյուսներն էլ խելագարված անմիտ բառեր քրթմնջալով քայլում էին... Պատահում էր, որ որևէ մեկն ընկնում էր՝ նախընտրելով մեռնել: Բոլորին էլ ուժի զոռով պոկել էին իրենց ընտանիքներից, նրանց ամուսիններին և ութից կամ տասը տարեկանից բարձր տղա զավակներին անկասկած արդեն սպանել էին: Ի՞նչ հույսի կարող էին ապավինել:

Հենց այդ ժամանակ էր, որ մի խումբ հայ տղամարդիկ մինչև ատամները զինված, ճանապարհի եզրի ժայռերի արանքից դուրս եկան: Պահակներն ու մի քանի չեթեներ ուզեցին փախչել, բայց հայ գրոհայինները նրանցից ոչ մեկին թույլ չտվեցին ճողոպրել և առանց խղճմտանքի նրանց սպանեցին ոնց որ շների: Հետո մեզ տարան մի առանձնացած վայր, որտեղ մեզ խմելու ջուր տվեցին ու կերակուր:

Մենք այնքան ուժասպառ էինք, որ չկարողացանք ճամփա ընկնել մինչև հաջորդ օրը, երբ բաժանվեցինք տարբեր խմբերի՝ փորձելով կրկին հասնել մինչև ծով, ինչը գուցե խելահեղություն էր, բայց դա էր նաև միակ հնարավորությունը:

Այդ գիշերներից մեկի ընթացքում Ռիտան, առանց ինձ զգուշացնելու, անհայտացավ: Ես չէի կռահել, թե որևէ բան է տեղի ունենալու: Ոչինչ չէի կարող անել նրա համար, պարզապես չկար: Մտածեցի, որ տեղի ունեցածից խենթացած՝ ցանկացել է գնալ հասնել մեզանից առաջ գնացող աղջիկների խմբին. մի բան, որ անհնարին էր:

Բայց Աստծո կամոք ինձ վիճակված չէր, որ դուրս պրծնեի այդ իրավիճակից: Երկու օր անց թուրքերը կրկին մեզ բռնեցին, և հակառակը կատարվեց, նրանք սպանեցին մեզ ուղեկցող հայերին:

Ես ձեզ չեմ պատմի, թե ինչ վայրագությամբ մեզ հետ վարվեցին: Մի ամիս անց, անվերջանալի տառապանքներից հետո հասանք Հալեպին մոտակա մի ճամբար: Այդ ժամանակ մենք դարձել էինք մարդկային կերպարանքով ուրվաններ: Ինձ համար կարևոր չէր, կմեռ-

նեի թե ոչ, արդեն ամեն ինչ անիմաստ էր: Եկան մի քանի թուրքեր՝ հավանաբար սանիտարական բաժանմունքից: Ընտրեցին նրանց, ովքեր դեռ ի վիճակի էին քայլել: Ես նրանց թվում էի. ուժեղ եմ և բացի այդ միշտ հիշում էի Աստիկ պապի բառերը՝ «Երբեք չհանձնվես» և հասկացա, որ այնտեղ մնացածները դատապարտված էին տեղում մահանալ առանց ջրի և որևէ կերակուրի:

Մի քանի ժամ քայլեցինք ձիերին նստած պահակների հսկողությամբ, որոնք խպառ զուրկ էին որևէ խղճմտանքից՝ ըստ իրենց ղեկավարության: Եթե որևէ կին ուժասպառ ընկնում էր, մտրակով ծեծում էին, որ նորից քայլեր... Եթե ի վիճակի չէր՝ նրան գնդակահարում էին:

Մթնշաղին հասանք ինչ-որ հին ավերակների, այնտեղ ես տեսա շատ աղջիկների և երիտասարդ կանանց:

Անհավատալի էր, բայց Ամալյան, Ալիսը և Լիզան այնտեղ էին: Աղջիկները վատ պայմաններում էին, նրանց հագի շորերը վերածվել էին քուրջերի, շատ կեղտոտ, վարակիչ վերքերով և ոջիլներով պատված, բայց կենդանի էին: Նրանց հարցրի Սոֆյայի մասին: Ինձ ասացին, որ Կոնիայի ոստիկանապետը ընտրել էր մի քանի հայ աղջիկների, նրանց թվում Սոֆյային, ու բեռնատար մեքենայով տարել:

Ինձ ասացին, որ Կարմիր Խաչը մոտակայքում հիվանդանոց ունի և հենց որ կարողանում էին, նրանց կերակուր էին փոխանցում, թեև պահակները փորձում էին խանգարել: Սակայն Կարմիր Խաչի աշխատողները նրանց փող էին տալիս, որ չտեսնելու տային: Զնայած դրան՝ ամեն գիշեր մի քանի կին էր մահանում և որոշ կանայք՝ անհետանում:

Ես սպասեցի, մինչև որ մեկնումեկը գար Կարմիր Խաչից: Երբ պահակները թողեցին, որ մտնեին երկու սայլակներով ուտելիք բերողները, կանայք, որ դեռ ի վիճակի էին, ուրվականների պես տեղից բարձրացան: Ես օգտվեցի առիթից և բժիշկներից մեկին հանձնեցի իմ անձնագիրը, որ ներսի գրպաններից մեկում էի պահել:

Ես ձեզ դեռ չեմ ասել, որ ես կրկնակի քաղաքացիություն ունեմ: Նաև ֆրանսիացի եմ, քանի որ իմ առաջին ամուսինը Լիոնից էր և նա էր ինձ համար ձևակերպել ֆրանսահպատակ լինելը, որից ես երբեք չեմ հրաժարվել:

Հենց դա էլ մեզ փրկեց: Մի քանի ժամ հետո ներկայացավ Վիլյամ Դոդդը՝ բժիշկ, որը ղեկավարում էր Կոնիայի Հյուսիսամերիկյան հոսպիտալը, այդ երկրի հյուպատոսի հետ: Նրանք պահանջեցին, որ իրենց հանձնեին ֆրանսիացի կանանց: Ճամբարի պետը փորձեց ընդդիմանալ, բայց ի վերջո տեղի տվեց: Ես հավաստիացրի, որ աղջիկները իմ դուստրերն են, ինչպես նաև իրենց քույր Սոֆյան, որին ինչպես ինձ հայտնի էր, առևանգել էր Կոնիայի ոստիկանապետը:

Հոգուս խորքում շատ էի ափսոսում, որ ուրիշ ոչ ոքի չկարողացա հետս տանել: Բժիշկ Վիլյամ Դոդդը ուժեղ ընդհարման գնով հասավ նրան, որ աղջիկներն ինձ հետ գան, բայց ավելին նրան չհաջողվեց: Եթե վիճաբանությունն ավելի սաստկանար, նրան կսպանեին:

Նա մեզ տարավ Հյուսիսամերիկյան հոսպիտալ: Այնտեղ մենք լվացվեցինք, ոջիլներից մաքրվեցինք, մեր վերքերը բուժեցին, հագանք մաքուր շորեր, քնեցինք մահճակալին, սնվեցինք և վերադարձանք մարդ արարածների արժանապատվությունը:

Բժիշկն անմիջապես հարցում արեց: Սոֆյային հանձնել էին մի գերմանացի հրամանատարի: Սկզբում դա ինչ-որ չափով ինձ հանգստացրեց: Այնուհետև նա ինձ հաղորդեց, որ հրամանատարը գնացել էր դեպի Տեր-Զոր՝ մի փոքրիկ բնակավայր անապատի մեջտեղում, որտեղ կենտրոնացնում էին ողջ մնացած հայերին, որպեսզի այնտեղից տանեին իրենց վերջնական բնակավայրերը, այսինքն՝ դեպի ունայնություն, քանի որ լուր էր տարածվել, որ իրականում նրանց այնտեղ լքում էին կամ սպանում, կորցնելով խորխորատներում, որտեղ նրանց աճյունը վայրի գազանների ու անգղների համար կեր էր դառնում:

Ֆրանսիայի հյուպատոսը խոր անհանգստություն ցուցաբերեց Սոֆյայի անհետացման առթիվ և Հալեպում Գերմանիայի հյուպատոսից պահանջեց, որ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկեն Սոֆյային գտնելու համար:

Բժիշկ Վիլյամ Դոդդը անխոնջ ու վճռական մարդ էր: Նա մտերմացել էր Հալեպում գերմանական տեխնիկական դպրոցի մի շարք դասախոսների, մանավանդ տնօրենի՝ դոկտոր Հուբերի հետ, որն ըստ Դոդդի անհարմար էր զգում գերմանացի զինվորականների և առհասարակ իր երկրի պահվածքից:

Այդտեղից սկսած՝ այլևս ոչինչ չիմացա, թերևս միայն այն, որ փորձում էին ինձ տանել Ֆրանսիա: Ես հասա նրան, որ աղջիկներին ֆրանսիական մի չոգենավ նստեցնեն: Բայց ես որոշեցի մնալ, անշուշտ իմ ֆրանսիական անձնագրով, որն ամեն բան հեշտացնում է: Այստեղից ես չեմ գնա, մինչև Սոֆյային ու Ռիտային չգտնեմ: Համոզված եմ, որ նրանք ողջ են և միակ բանը, որ կարող եմ ասել, ուրախ եմ, որ ձեզ նման մարդիկ որոշել են նույնը:

Մսյե դը Լատուր... Նրանց կգտնե՞նք:

Լիզա Ջամբազյանը սեղմեց ձեռքս, որ մինչ այդ բռնել էր: Այդ ժամանակ ես նրան պատմեցի Ռիտա Հակոբյանի նամակի, նրա կտակի մասին, այն մասին, որ անցյալ տարվա օգոստոսի վերջին Ռիտան գտնվում էր Բուլղարիայում, Սոֆիայում: Լիզան հեծկլտում էր ինձ լսելիս և սեղմում բռունցքները լուրերից ոգևորված:

– Գիտեի, գիտեի, որ Ռիտային հաջողվել է փախչել: Եվ մի բան կասեմ ձեզ, գուցե և կենդանի է՝ անկախ ամեն ինչից... Ահ, պետք է փորձենք: Սիրտս վկայում է:

Հանկարծ հասկացա, որ գուցե և նա ճիշտ էր: Ռիտան կտակ էր թողել, բայց ո՛չ նոտարի և ո՛չ էլ որևէ մեկի միջոցով չէի իմացել, թե նա մահացել է:

Տեղիցս վեր կացա, զգացի, որ հաղթահարել եմ հիվանդությունս և պատրաստ եմ ամեն ինչի:

– Կգնամ Բուլղարիա, Սոֆիա: Եթե Ռիտան մահացել է, պետք է իմանանք... Գուցե և հիվանդանոցում է գտնվում:

Լիզա Ջամբազյանը գրկեց ինձ լաց լինելով ու ասելով.

– Երբեք չպետք է հավատը կորցնել: Երբեք չպետք է հանձնվել:

Ձեռքերով ծածկեցի աչքերս, որ ինձ չտեսնեին լաց լինելիս: Այդ մարդիկ հենց նոր աննկուն կամքի ու արժանապատվության անզուգական դաս տվեցին ինձ, որը երբեք չեմ մոռանա:

ԱՊՐԻԼ 1916

52. ՄԻ ԱՆՀԱՎԱՏԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լիզա Ջամբազյանը որոշեց մնալ Կոստանդնուպոլսում, թեև ինքն էլ էր շատ ուզում ճամփա ընկնել, սակայն ուժերն իրեն լքում էին և բացի այդ մտածում էր, որ իրեն հարկավոր է մնալ Թուրքիայում, քանի որ ամեն բոպե կարող էր լուր ստանալ Սոֆյա Հակոբյանից: Նրա կարծիքով դա ժամանակի խնդիր էր, քանի որ իր զարմուհին, համոզված էր՝ կենդանի էր:

Մուհամմեդ Զիան կատարեց իր խոստումը: Մի առագաստանավով, որը վարում էր մի թուրք, Բոսֆորով մեզ տարավ մինչև Բուրգաս, քանի որ ո՛չ ստեղծված իրավիճակը և ո՛չ էլ պատերազմը չէին կարող խանգարել, որ մաքսանենգներն իրենց թանկարժեք ապրանքներով հասնեին որևէ տեղ: Շատ ժամանակ էր, որ մենք իրար չէինք տեսել, բայց նա շարունակում էր համարել, որ կյանքով ինձ էր պարտական: Նրա կարծիքով ինքն ընդամենը հանուն բարեկամության իր պարտքն էր վճարում: Զիան որոշեց մնալ Բուրգասում, սպասելով մեզ, քանի որ չէր վստահում նավի տիրոջը, այնպես որ այնտեղից սկսած՝ ոմն Իգոր Ռաչչենկոյի ուղեկցությամբ, ով ծագումով ռուս էր և ամուսնացած էր բուլղարուհու հետ, գյուղամիջյան ճանապարհներով, բանակից գողացված ջորիներին հեծած՝ մի կերպ հասանք Սոֆիա:

Ինչ վերաբերում է ինձ, բոլոր հիվանդություններս մնացին հետևում: Լիզայի պատմածը, նրա հավատը, կյանքն ընկալելու նրա արտասովոր կերպն ինձ ստիպեցին փոխել մտածելակերպս: Հիմա միայն մտածում էի, որ հրաշքները անհնարին չեն:

Այնպես որ, ուղղվեցի դեպի Պետեր Մաքսիմովի նոտարական գրասենյակը, որը գտնվում էր, ինչպես մեզ ասացին, Ալեքսանդր Նևսկու եկեղեցու մոտ: Մեզ վատ լուր հայտնեցին, նոտարը մի երկու ամիս առաջ մահացել էր: Պատերազմի պատճառով նրա արձանագրությունները գրադարակների վրա ծածկվել էին փոշիով: Դռնապանը մեզ ասաց, որ դեռ հայտնի չէ, թե նոտարին փոխարինողը երբ

կանցնի աշխատանքի: Լավ լուրն այն էր, որ նա ինձ սիրահոժար ուղեկցեց նոտարական գրասենյակի ծառայողի՝ Էդուարդ Վասիլևի տուն, որը մոտ էր ապրում: Նա առանց առարկության լսեց իմ խնդրանքն ու ինձ հետ վերադարձավ հին նոտարական գրասենյակ: Այնտեղ ստիպված բացեց պատչգամբներից մեկի պատուհանը, որ լույս թափանցեր:

– Ահա՛ այստեղ է, մայե, մադամ Ռիտա Հակոբյանի թղթածրարը: Ինչպես տեսնում եք անդորրագրից, հաշիվը վճարված է կանխիկ դրամով: Զինվորական հոսպիտալում է այն իրականացվել, գուցե պետք է այնտեղ գնանք...

Երկու հարյուր ֆրանկը, որ վճարեցի Վասիլևին, մեծ արժեք ուներ, և միասին քայլեցինք զբոսայգու ծառուղիով դեպի զինվորական հոսպիտալ:

Այնտեղ մթնոլորտը բոլորովին այլ էր: Շտապ օգնության կառքերը չարունակ մտնում ու դուրս էին գալիս լծված ձիերով կամ ջորիներով, այգում վրաններ կային, իրար վրա դարսված դագաղներ: Ժամապահը մեզ կանգնեցրեց դռան մոտ, մինչև որ եկավ հերթապահ սպան: Վասիլևը սովոր էր չփվել ամեն տիպի մարդկանց հետ, իսկ բուլղարները թեև համառ՝ բայց չատ հասկացող են: Քանի որ չէինք կարող մտնել այնտեղ, մեզ ուղեկցեց դեպի ծառայողական մուտք և միայն խնդրեց, որ երբ դուրս գանք չենքից՝ նույն տեղով անցնենք: Ուղղվեցինք դեպի տնօրինություն: Հերթապահ սերժանտը այնքան էլ լավ տրամադրության մեջ չէր: Վասիլևը նրան իրար վրա ծալծլված թղթադրամներ տվեց և ինձ ցածրաձայն ասաց, որ քսան ֆրանկի համարժեք էին: Սերժանտը կակղեց անմիջապես և սկսեց ուշադիր լսել մեր խնդրանքը:

– Մադամ Հակոբյան..., տեսնենք այստեղ... Դուք ասում եք, որ անցյալ տարվա օգոստոսի 28-ին... Հակոբյան... այդպես, այդպես... Բայց այստեղ ոչ մի մահվան դեպք գրանցված չէ: Ոչ, այստեղ չի վախճանվել, գուցե իր ցանկությամբ է թողել հիվանդանոցը: Երբեմն անհույս հիվանդները չեն ուզում այստեղ կյանքից հեռանալ: Բայց եթե ուզում եք, կարող ենք իրեն բուժող բժշկին հարցնել: Այստեղ կա նրա ստորագրությունը, բժիշկ Ստանևը... մի տեսե՛ք, աչխատանքից ազատված է... Բախտներս չի բերում... Բայց սպասեք, ես գիտեմ, թե Ստանևը որտեղ է ապրում, Ազգային թատրոնի անմիջապես հետևի նրբանցքում: Երկու ժամից ավարտում եմ հերթապահությունը և կարող եմ ձեզ նրա տուն տանել... Նա մի քիչ բոի մարդ է, բայց եթե հետներս երկու չիչ օղի վերցնենք... Համաձա՞յն եք:

Վասիլևը վրաս բազմանչանակ նայեց, և ես համաձայնեցի: Հանեցի ևս հարյուր ֆրանկ ու տվեցի սերժանտին: Դա օգնեց, որ նրա հերթապահությունը ավելի սահուն դառնա, և քառորդ ժամ անց դուրս եկանք հիվանդանոցից: Հետաքրքրությունից այրվում էի: Ի՞նչ պատահած կլիներ Ռիտա Հակոբյանին: Գոնե այնտեղ նա մահացած չլիներ:

Կես ժամ հետո մենք այն չենքի անկյունում էինք, որտեղ պետք է որ ապրելիս լիներ բժիշկ Պետյա Ստանևը՝ բուլղարական փառապանծ բանակի վիրաբույժը: Բարձրացանք այդ գրեթե ավերված չենքի հինգերորդ հարկ փայտե բարձր սանդուղքով, որի ցեցը կերած աստիճանները ամեն ոտք դնելիս ճռռում էին:

Բժիշկ Ստանևը մի փոքր ուչացումով դուռը բաց արեց: Նրա վարանոտ փոքր աչքերը բոցավառվեցին միայն այն ժամանակ, երբ տեսավ երկու չիչ օղին, որ նոր էինք ճարել մոտակա գինու խանութում: Հետո մի պահ նայեց մեզ.

– Սերժանտ, ովքե՞ր են այս մարդիկ: Ինչո՞ւ եք եկել իմ տուն: Ես բացատրություն եմ պահանջում:

Սերժանտը չվախեցավ նրա խոսելու եղանակից: Թվում էր, որ նրան լավ է ճանաչում:

– Հարգելի մայոր, այս մայեն չատ է ուզում իմանալ, թե ինչ է պատահել ձեր հիվանդներից մեկին... մադամ Հակոբյանին: Նայել եմ արձանագրությունների գրքում, այնտեղ չի գրանցված որպես մահացած և մտածեցի, որ դուք եք նրան քննել, կկարողանաք որևէ բան հիչել:

Բժիշկ Ստանևը անհասկանալի ինչ-որ բան քրթմնջաց, բայց գոնե մեզ թողեց մտնել իր կացարանը՝ թափթփված, ավերված և վատ հոտով, ինչպես ամբողջ չենքը: Բայց մի տեղ գտավ, որտեղ կարողացանք նստել: Ես կասկածում էի, որ նրա նման մեկը ունենար այդքան կանոնավոր միտք, սակայն իրականությունն ինձ կրկին զարմացրեց:

– Մադամ Հակոբյան, իհարկե նրան հիչում եմ... անկախ իր իրավիճակից՝ նա իսկական տիկին էր, աչքերը չատ գեղեցիկ էին, թերևս ամենագեղեցիկ հայուհին, որ երբևիցե տեսել եմ իմ ողջ կյանքում: Մայե, խնդրում եմ, որ ներող լինեք տանս մեջ տիրող անկարգության համար: Ես բոլորովին այլ մարդ էի մինչև վերջերս, նախքան երկու որդիներիս զոհվելը ռազմաճակատում. կռվում էին սերբերի դեմ: Հիմա ինձ համար լրիվ միևնույն է... Բայց վերադառնանք նրան, ինչը ձեզ բերել է այստեղ:

Մադամ Հակոբյան... Սկզբում, երբ առաջին անգամ նրան տեսա, կարծեցի, թե թոքախտով հիվանդ է: Մշտապես ջերմում էր, այնքան նիհար էր, որ թվում էր, թե այլևս չի ապաքինվի: Հետո նա հիվանդացավ թոքերի երկկողմանի բորբոքումով: Այդ ժամանակ իսկապես մտածեցի, որ մեռնելու է: Նա եկել էր այստեղ ցար Ֆերդինանդի համհարզներից մեկի երաշխավորությամբ: Հետևաբար, խոսքը չէր կարող վերաբերել որևէ աննշան մարդու, բացի այդ, թեև թուրքերի հետ մեր ունեցած ապուշ դաշնությանը, մենք հայերի հետ թշնամի չենք և չատերն են եկել ապաստանելու: Երբեմն թուրքերը պահանջում են, որ մենք հայերին նրանց վերադարձնենք, բայց մենք երբեք դա չենք, անում, քանի որ գիտենք, որ նրանց մահվան կդատապարտեն:

Այս արտառոց դաշնությունը գերտերություններին և Բուլղարիային աղետի կբերի: Մադամ Հակոբյանը ազնվազարմ տիկին էր, նույնիսկ իր այդ վիճակում էր դա զգացվում: Քանի որ մենք բավարար քանակությամբ մահճակալներ չունեինք և ինքն էլ անհույս վիճակում էր, ստիպված եղանք նրան ասել, որ նրան այլևս մեզ մոտ չենք կարող պահել: Մի օր նա անհայտացավ... Թեև հիշում եմ, որ ինչ-որ մեկն ինձ ասաց, որ նրան տարել են մի տեղ, որ կարողանա հանգիստ մահանալ... Մենք պատերազմի մեջ ենք, և ամեն օր մահանում են հարյուրավոր բուլղարացիներ: Ինձ էլ մի բան է մնում անել՝ նշանակել մորֆի, որովհետև չատերն այն աստիճանի ծանր են, որ մարդկային չէր լինի, որ նրանք ավելի երկար տանջվեին... Ինչ վերաբերում է մադամ Հակոբյանին, չատ եմ ցավում նրա համար, բայց նա հազիվ թե էլ որևէ խնդիր ունենա: Ոչինչ ավելին չգիտեմ:

Մենք իջնում էինք աստիճաններով, երբ լսեցինք մայորի խոպոտ ձայնը, որ դռնից էր գալիս:

– Հարցրեք Բորիս Խավարովին: Այդ անպիտանը ամեն ինչ գիտի:

Սերժանտը պատմեց, որ Խավարովը գերեզմանափորերից մեկն է: Եթե Ռիտա Հակոբյանը մեռած լիներ հիվանդանոցում, նա կիմանար, և սերժանտի կարծիքով նա Սոֆիայի ամենատեղեկացված մարդկանցից էր:

Ինչ արած, հետ եկանք կրկին զինվորական հիվանդանոց: Քանի որ սերժանտն ինձ ուղեկցում էր, որևէ խնդիր չունեցանք ներս մտնելիս:

Այդ ոմն Խավարովին գտանք նկուղում: Տեսարանը իրոք չատ վրչտալի էր, երեք տասնյակից ավելի դիակներ չարված էին հատակին, նրանցից մի քանիսը մերկ, արյան բծերով կամ առանց ծայրանդամի: Խավարովը բարձրահասակ մարդ էր՝ նիհար, գզգզված մորուքով: Նրան օգնում էր կիսով չափ հարբած բուժակը դիակները դնելու դագաղների մեջ, որոնք փայտե արկղեր էին ծուռումուռ կտրված ու վատ մեխված:

Սերժանտ Կոստովը դիմեց նրան առանց չատ մոտենալու՝ ասես զգուչանալով նրա արձագանքից.

– Խավարով, ուզո՞ւմ ես փող աշխատել, այո՞... Դե լավ, ասա, հիշո՞ւմ ես այն հայ կնոջը... Ի՞նչ եղավ նրան, մահացա՞վ... Մայոր Ստանևը լավ է հիշում: Կարծում է, որ նա ուղղակի գնացել է հիվանդանոցից... բայց ո՞ւր: Նա ինչպե՞ս կարող էր գնալ, եթե մահամերձ էր:

– Նրան տարան: Ես տեսա, թե ինչպես նրան տարան: Նրան դուրս հանեցին պատգարակի վրա ու դրեցին երկու ձիով լծված սայլին, բայց մեռած չէր: Զգիտեմ՝ թե ով, ոչ էլ՝ թե ուր, բայց տարան... Սայլը Բորիս Պենևինն էր, գիտեմ, որովհետև նա հաճախ էր դագաղներ տանում եկեղեցիներ, բայց սա այդ դեպքը չէր: Հայ կինն այստեղից ողջ է դուրս եկել: Նրա անկողինը դեռ տաք էր, երբ հաջորդ հիվանդին պառկեցրին, նա ինձ ասաց,– Խավարովը մատնացույց արեց իր օգնականին:

– Փաստորեն հայ կինը դուրս է եկել Պանևի սայլերից մեկով... Այդ ծեր սրիկան այսօր այստեղ եկե՞լ է: Գիտե՞ս, թե որտեղ է ապրում:

– Նա գիտե: Պետերը գիտե, որովհետև երբեմն բերում է նրնջեցյալների կոչիկները, որոնց տանում է... Ափսոս չէ՞ բարիքը փչացնել...

Այդ Պետերը, պարզվեց, խուլ էր: Բայց Խավարովը կարողանում էր նրա հետ հաղորդակցվել: Մի քիչ ժեստով խոսելուց հետո՝ մարդը համաձայնեց:

– Ասում է, որ ապրում է Օբելիայում, Բանսկո գետի կամուրջի մոտ: Մոտ չէ, բայց հեռու էլ չէ: Գուցե երկու ժամվա արագ քայլելու ճանապարհ... Այնտեղ է ապրում էդ սատանայի ծնունդ Բորիսը:

Սերժանտ Կոստովը նայեց Վասիլևին: Երկու ժամվա քայլելո՞ւ: Դա հեռու չէր, այդ իսկ պատճառով կրկին դուրս եկանք հիվանդանոցից Բորիս Պենևին փնտրելու: Ես հոգնել էի, ծանր էի շնչում, քանի որ դեռ լրիվ չէի ապաքինվել, բայց ուզում էի իմանալ, թե ինչ է պատահել Ռիտա Հակոբյանին, թեև հաստատ գիտեի, որ մահացել է: Մենք բավականին արագ քայլում էինք զբոսայգիներով, որոնցում իրենց գլխիկներն էին պարզում առաջին ծաղիկները: Խորհրդածում

էի իմ չուրջը կատարվող ամեն ինչի մասին: Մեն մենակ գնալով ես ավելի էի խորացել լաբիրինթոսում՝ ողջ կյանքիս ընթացքում, որում թերևս սխալվել էի իմ նպատակների առումով: Հայկական հարցը վաղուց, տարիներ ի վեր ինձ համար անձնական հարց էր դարձել: Ես ամբողջովին ներգրավվել էի նրանում, և հանգամանքներն էլ իրենց հերթին էին ինձ ավելի ու ավելի ընկղմում այդ հարցի մեջ՝ խանգարելով ինձ դուրս գալ, ազատվել մի իրավիճակից, որն ինձ այնքան ցնցում էր:

Սերժանտը և Վասիլևը շատ ավելի արագ էին գնում, քան ես: Ի վիճակի չէի և երեք անգամ ստիպված խնդրեցի նրանց, որ կանգ առնեն, որ չունչ քաշեմ:

– Ձեզ ի՞նչ է պատահել, մայե, մի՞թե Սոֆիայի օդը ձեզ բարերար չէ:

Գլխով ժխտեցի, փորձելով բացատրել նրանց, որ վերջերս թոքաբորը եմ տարել, որ չուտ եմ հոգնում, որ դա ամենևին էլ կարևոր չէ:

– Գնանք, գնանք, միայն ձեզ խնդրում եմ, որ այդքան արագ չքայլեք: Ո՛չ ձեր եռանդն ունեմ, ո՛չ էլ ձեր երիտասարդությունը:

Լավ եղանակ էր. հրաշալի, տաք՝ զբոսնելու համար: Բայց ինչ Կոստանդնուպոլսից դուրս էի եկել, այս ու այն գործերի մեջ՝ երբեք չէի հանգստացել: Չէի դադարում մտածել Էդուարի, Սոֆյայի, Ռիտայի մասին, այն մասին թե ինչ է կատարվում Թուրքիայում: Իմ դեպքում սա ընդամենը մի թեթև զբոսանք էր, սակայն հարյուր հազարավոր հայերի՝ ծերերի, կանանց, երեխաների համար,– քանի որ տղամարդկանց ճամփաներով քշել էին ու սպանել, նախքան այդ,– իսկ երկար, մինչև վերջին չունչը քայլելը մահ էր. ով չէր կարողանում, մահակով ծեծում էին կամ սպանում: Ի վիճակի չէի հասկանալ այն զարհուրելի իրականությունը, որ թուրքական կառավարությունը փորձում էր թաքցնել Եվրոպայից: Գերմանացիները նույնպես դարձել էին այս ահռելի ոճիրի մեղսակիցները, սակայն համոզված էի, որ Գերմանիայի ժողովուրդը անտեղյակ է այդ հարցից:

– Հասել ենք: Սա է Բանսկո գետը, իսկ սա էլ Բորիս քեռու դուքանն է, նրան այսպես գիտեն բոլորը: Տեսնենք բախտերս կբերի՞, որ նրան գտնենք, որովհետև տեղը տիտիկ չի անում, օձաձկնից սոթլիկ է:

Ի՞նչ գետափ, և հարկ չեղավ նրան երկար փնտրել: Այնտեղ էր քեռի Բորիսը, մեզ էր նայում կասկածանքով՝ համոզված, որ նրան դիմելիս մենք նրան գլխացավանք ենք պատճառելու:

– Ի՞նչ են ուզում ինձանից ձերդ մեծությունները: Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել: Ուզում եք ինչ-որ բա՞ն տեղափոխել:

– Լսեք, քեռի Բորիս, մի բան ենք ուզում միայն հարցնել: Այս պարոնին հետաքրքրում է, թե ի՞նչ պատահեց այն հայ կնոջը, որին կիսամեռ տարար զինվորական հիվանդանոցից:

Բորիս քեռին ինձ զննեց փոքր-ինչ կասկածանքով:

– Ա՜հ, իհարկե: Հայ կինը... ճիշտն ասած չգիտեմ՝ մեռած կլինի թե ոչ, թեև կարող եմ երդվել, որ նա հիմա ընկերակցում է Սուրբ Պետրոսին: Գիտեք ինչ, ես նրան միայն հանել եմ այնտեղից, որովհետև ինձ խնդրել էին: Նրա հետ ոչ մի կապ չունեմ: Ոչինչ չգիտեմ և ոչ էլ հիշում եմ, թե ուր տարա նրան:

– Դե լավ, քեռի Բորիս: Ձկ՞ որ բոլորս գիտենք, թե ինչ հիշողության տեր ես: Նույնիսկ հիշում ես այն օրը, երբ մայրդ քեզ լույս աշխարհ բերեց: Դե, ասա այս պարոնին, թե կնոջը այստեղ ես թողել: Գուցե մի քիչ փող վաստակես դրա դիմաց:

Բորիս Պենևի դեմքը պայծառացավ լսելով այդ:

– Լավ, գուցե և մի բան մտաբերեմ: Թեև ճիշտն ասած՝ գնալով գլուխս ավելի է վատանում...

Այդ պահին հանեցի գրպանիցս մի քանի թղթադրամ, և մարդն անմիջապես վերականգնեց իր հիշողությունը:

– Հայուհի՞ն: Գիտե՞ք՝ ամենահետաքրքրականը որն էր: Նրան ուղեկցում էր մի թուրք կին, գուցե և իր սպասուհին էր, բայց նրան ոչ մի վայրկյան մենակ չթողեց: Ինչ արած, ստիպված նրան հոսպիտալից տարա, քանի որ ինչ-որ մեկն ասաց, որ վարակիչ հիվանդ է... և որ չի կարող մնալ այստեղ: Սուտ էր՝ իսկապես նա շատ հիվանդ էր, մեռնում էր, բայց ոչ ոքի չի վարակել: Ես նրան տարա այստեղից ոչ հեռու մի տեղ՝ թրքուհու հետ միասին, որովհետև հիվանդանոցում նրան այլևս չէին ուզում թողնել, ի՞նչ պետք է աներ մի կին տղամարդկանց հիվանդանոցում: Եթե ուզում եք ձեզ կուղեկցեմ, բայց այլևս նրանց մասին ոչինչ չեմ լսել: Գնա՞նք:

Մեզ տարավ իր ծածկված սայլերից մեկով, անդադար խոսելով, ամեն խոսքի գլխին հայհոյելով թուրքերեն և սերբերեն: Նրա կարծիքով միակ լավ մարդիկ ռուսներն ու ֆրանսիացիներն էին, ինչպես որ ընդունված էր Բուլղարիայում:

Չգիտեի, թե ինչ պետք է մտածեմ, լրիվ հուսախաբ էի, առանց իմանալու՝ ո՞ր ճանապարհով գնալ, և ինչպես Վասիլևը, այնպես էլ սերժանտն ինձ այնպես էին նայում, կարծես ես գժվել էի:

Երեկոյան կողմ հասանք ծայրամասի թաղամասերից մեկը, որտեղ անմշակ դաշտերում վերջին տները իրարից հեռու էին, քանի որ հողագործի խիստ պակաս կար: Ցածր ամպերը խառնվում էին մշուշին,

որը դուրս էր գալիս դարչնագույն բլուրներից, և տեսարանն այնքան ճնշող էր, որ մի պահ մտածեցի շրջվել և ուղղվել դեպի կայարան: Եվ թող լիներ՝ ինչ Աստված կամենար: Ես ասես լրիվ ուժասպառ էի եղել:

Այդ ժամանակ, վերջին տնից հանկարծ մի կին հայտնվեց: Զէր թվում, թե նա պատրաստվում է ինչ-որ տեղ գնալ և մեզ այնտեղ տեսնելով զարմացավ: Թրքուհի էր, դա երևում էր իր կրած հագուստից ու տեսքից: Կռահեցի նրա հուսահատ լինելը, և նա էլ ինձ նայեց սևեռուն: Այդ ժամանակ Վասիլևը նրա հետ թուրքերեն խոսեց, և նրա բառերը ամայության մեջ բարձր հնչեցին, քանի որ ոչինչ չէր կարող լռեցնել նրանց:

– Այ կին, ճանաչո՞ւմ ես մի հայ կնոջ, տիկին Հակոբյանին, քեզ մի բան ասո՞ւմ է այդ անունը:

Այդ ժամանակ կինը ծածկեց դեմքը ձեռքերով և սկսեց հուսահատ լաց լինել: Մենք լուռ, մի քանի րոպե չկարողացանք արձագանքել, մինչև որ սայլից իջա նրան մոտենալու համար: Թրքուհին առանց մի բառ ասելու նորից մտավ տուն՝ աղքատիկ կահավորված երկու հասարակ սենյակ:

Այնտեղ, ամենախորքում, մի անհարմար մահճակալի վրա, ամբողջ մարմինը սավանով ծածկված, բացի դեմքից, մի հասուն կնոջ դիակ էր հանգչում: Անկասկած Ռիտա Հակոբյանինը:

Հուզմունքից ինձ կորցրած՝ ծնկաչոք ընկա մարմնի մոտ: Հասել էի մինչև այնտեղ՝ հետևելով իմ ներքին ձայնին, բայց ուշացել էի: Գուցե ժամեր առաջ կարողանայի ասել նրան, որ չարունակում եմ սիրել իրեն, որ համոզված լիներ, գտնելու եմ Սոֆյային: Աչքերս մշուշվեցին արցունքներից, անզորությունից ու զգացմունքներից, որովհետև այդ կինը միշտ եղել էր անհասանելի մի երազ, և անգամ ճակատագիրը մեզ թույլ չտվեց վերջին անգամ հանդիպել:

Երկար ժամանակ մնացի այդ ցուրտ սենյակում, դողէրոցքի մեջ: Զգում էի, թե ինչպես էր ինձ համակում տենդը՝ ցանկանալով մեկընդմիշտ վերջ տալ հանգամանքների բերումով ունայնացած կյանքիս:

Հետո փորձեցի գտնել որևէ հայկական եկեղեցի: Սոֆիայում դրանք մի քանիսն էին, և գտանք մեկը այդտեղից ոչ հեռու: Քահանան ըմբռնեց իմ դժվարին կացությունը, իսկ առատաձեռն նվիրատվությանս շնորհիվ լուծեցի մնացած հարցերը: Այդ գիշեր, ըստ հայկական սովորույթի, արթուն նստեցինք ննջեցյալի կողքին: Ինձ հանգիստ չէր տալիս այն միտքը, որ ամեն ինչ կարող էր այլ կերպ լինել:

Մենք նրան թաղեցինք առանց տապանաքարի, չկար մեկը, որ

հանձն առներ անել դա: Բայց քահանան ինձ խոստացավ, որ առաջին իսկ հնարավորության դեպքում կզբաղվի այդ հարցով: Երբ դուրս եկանք եկեղեցուց, թրքուհին դրսում ինձ էր սպասում լացակումած աչքերով ու տխուր հայացքով: Հարցրի նրան, թե որևէ բան կարո՞ղ եմ նրա համար անել: Նա գլխով մերժելու նշան արեց, այնուհետև հանեց մի ծալված նամակ, հողի բծերով և ինձ հանձնեց: Ավելացրեց, որ դա գրել է իր տիրուհին մի քանի օր առաջ, երբ դեռ ուժերը ներում էին: Ես նամակը դրեցի գրպանս, որովհետև ուզում էի կարդալ այն, երբ առանձին լինեի:

Հետո մենք ոտքով անձրևի տակ քայլեցինք դեպի կայարան: Վասիլևը և Կոստովն ինձ ընկերակցում էին լռելյայն: Պատերազմը բոլորիս դարձրել էր ավելի մարդկային, և մենք միմյանց հրաժեշտ տվեցինք իրար ձեռք սեղմելով:

Ես պետք է մեկնեի Վառնա և այնտեղից վերադառնայի Բուռնա, որտեղ ինձ սպասում էր Մուհամմեդ Զիան: Դա էր իմ ճակատագիրը, որից խույս տալ չէի կարող:

Սուր հնչեց կայարանապետի սուլոցը, և Սև ծովի ճեպընթացը դանդաղ սկսեց առաջ շարժվել: Հետևում Սոֆիայի հայկական ծխական փոքրիկ գերեզմանոցում, Բուլղարիայի սև ու խոնավ հողի տակ թաղված մնացին երազանքներս:

ՄԱՅԻՍ 1916

53. ՌԻՏԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Բախտս բերել էր, որ ինձ հաջողվել էր գնել ճեպընթացի միակ վագոն ննջարանի վերջին կուպեի տոմսը: Այնքան ուժասպառ էի, որ փովեցի մահճակալին առանց հագուստս հանելու:

Ահավոր մղձավանջի մեջ էի, որում արդեն որերորդ անգամ Էդուարին տեսնում էի մեռած և ուրիշ, անծանոթ Սոֆյայի, որը գնում էր հեռուն՝ թիկունքն ինձ դարձրած: Ոչինչ չէի կարող անել հանուն նրանց: Մեզ հետապնդում էր անողոք հորդան, իսկ ես անկարող էի ազատվել այդ չարանենգ ու վայրագ արարածներից, որոնք միայն մեր մահն էին տենչում:

Հետո հավանաբար խաղաղվեցի, և երազս փոխվեց: Կրկին այն պահն էր, երբ մի չքնաղ կին էր դեպի ինձ գալիս նավի խցիկից և ինձ անձնատուր լինում: Այդ պահին արթնացա, երբ գնացքն անսպասելի արգելակեց երթուղու ոչ գլխավոր կայարաններից մեկը մտնելիս:

Այդ ժամանակ միտքս եկավ այն նամակը, որն ինձ հանձնել էր նրա սպասուհին: Հանեցի գրպանիցս և խնամքով բացեցի այն:

Սոֆիա: Բուլղարիա, ապրիլ 1916

Սիրելի՛ Անրի

Չգիտեմ, երբևէ կհասնի՞ քեզ այս նամակս: Ուզում եմ հավատալ, որ այդպես կլինի, քանի որ զգում եմ, որ ինձ շատ մոտ ես, թեև ֆիզիկապես՝ շատ հեռվում:

Ուզում եմ քեզ պատմել տեղի ունեցածը: Ստիպված փախանք Կոստանդնուպոլսից, բայց ճակատագիրը մեր գլխին դաժան խաղ խաղաց, քանի որ Սոֆյան մեր դուստրը և ես ընկանք թուրքերի ձեռքը: Նաև մեզ հետ էին իմ զարմուհի Լիզա Ջամբազյանը և քրոջս ու եղբորս դուստրերը: Հետո թուրքերը մեզ բաժանեցին: Կարծեցի, թե վշտից կմեռնեմ, որովհետև գիտեի նրանց գլխին գալիքը: Ինձ հաջողվեց փախչել և հեռանալ Կոստանդնուպոլսից հավատարիմ սպասուհուս՝ Միկասի շնորհիվ: Նա թուրք կին է, որն ամբողջ կյանքում մեր տանն է աշխատել: Վտանգեց իրեն հանուն ինձ, հանեց ինձ արտաքսվածների ճամբարից: Ամեն հարցում օգնեց. թաքնվեցի նրա ազգականների տանը: Բոլոր թուրքերը չէ, որ մտածում են իրենց սրիկա կառավարության պես: Բայց իմ ողջ մտածմունքը Սոֆյան է, չեմ կարողանում հաշտվել նրան կորցնելու մտքի հետ: Ներքուստ մի ձայն ինձ ասում է, որ նա ողջ է: Գերմանական դեսպանատան ներսում ես լավ կապ ունեի և ինձ հաջողվեց անձամբ տեսնել դեսպանին՝ ֆոն Վանգենհայմին: Ամուսինս ֆինանսական մեծ շահույթներ ուներ Գերմանիայում, որոնք նաև մեր ընտանիքինն էին:

Դեսպանն իրեն շատ սառն ու անտարբեր պահեց, մարդկային ոչ մի մոտեցում չցուցաբերեց, սակայն այդուհանդերձ ինձ խոստացավ հետաքրքրվել: Վերջին տեղեկությունը Սոֆյայի մասին այն էր, որ մի գերմանացի սպա նրան հանել է արտաքսվածների ճամբարից: Դա ինձ հուսադրեց, որ կենդանի է և ինչ-որ ժամանակ նրան կգտնենք: Գերմանական հետախուզական ծառայությունները տեղեկացրին ֆոն Վանգենհայմին, որ սպային, որի մասին հիշատակվում էր, ոմն էրիխ ֆոն Շյոբներին նշանակել էին ծառայության բուլղարա-գերմանական գլխավոր շտաբում՝ նստավայրը Սոֆիայում: Այդ ժամանակամիջոցում թոքերիս հիվանդությունը շատ էր խորացել: Մի հայ բժիշկ ինձ ասաց, որ ինձ մնում է ապրել վեց ամիս: Բացի այդ, չէի կարող մնալ Կոստանդնուպոլսում, քանի որ թուրքերն իմացել էին, որ ես քաղաքում եմ և ուզում էին ինձ կենդանի բռնել: Նրանց հարկավոր էր իմ թույլտվությունը, որպեսզի տիրանային Փարիզում և Բեռլինում մեր ներդրած դրամագլխին ու բաժնետոմսերին:

Ստիպված նորից փախա Միկասի ընկերակցությամբ: Շատ դժվարությունների և անթիվ վտանգների գնով մի կերպ հասանք Սոֆիա: Այդ ժամանակ հազիվ էի կանգնում ոտքի վրա և ունեցա հիվանդության սաստիկ սրացում: Բուլղարացի մի զինվորական խղճահարվեց իմ վիճակից և ինձ տարավ զինվորական հիվանդանոց: Հիվանդանոցի պետը՝ գնդապետը, համաձայնեց, որ մի քանի օր մնամ այնտեղ... Մի քանի օր ես հազիվ էլ դիմանայի: Խնդրեցի հայ քահանա և մի նոտար: Հաստատ պետք է իմանայի, որ քեզ հասնելու է նամակս, որում քեզ հայտնում էի, որ Սոֆյան մեր դուստրն է: Ես ոչ մի կասկած դրանում չունեմ:

Կարծում էի, թե նոտարական գրասենյակի միջոցով նամակս կհասնի քեզ: Իմ միակ հույսն էր: Հետո վիճակս նորից վատացավ: Միկասն ինձ պատմեց, որ չորս օր տենդի մեջ զառանցել եմ: Երբ սրացումն անցավ, հազիվ էի շնչում, և զինվորական բժիշկները կարծեցին՝ ինձ մնացել է մի քանի ժամ: Կարգադրեցին, որ ինձ հիվանդանոցից հանեն: Չէին ու-

զում, որ այնտեղ մեռնեմ, որպեսզի ինձ հետ կապված խնդիր չունենային: Հայ քահանան ինձ համար մի տուն գտավ ծայրամասային թաղերից մեկում: Միկասը նրան բացատրեց, որ թուրքերն ընկել են իմ հետքին, և այդ բարի մարդն ինձ թաքցրեց:

Մի քանի ամիս շարունակ պայքարեցի իմ հիվանդության դեմ: Հիմա գիտեմ, որ այն վերջնականապես ինձ հաղթել է և ինձ մի երկու օր է մնացել: Այս նամակը քեզ համար եմ գրել: Դու իմ միակ հույսն ես, որ Սոֆյան կարողանա ազատություն ստանալ: Արա դա հանուն մեզ: Մենք երջանիկ եղանք մի քանի ժամ. դու ինձ տվեցիր քո սերը, իսկ ես այն ընդունեցի, քանզի քեզ ճանաչելիս իմացա, թե ով էիր և ինչեր էիր անում հանուն հայերի: Հիմա չարիքը տիրացել է աշխարհին ու Հայաստանի չքնաղ հովիտները ավաղ կրկին չեն ծաղկի: Սիրտս նվաղում է այն մտքից, որ դուդուկը լուռ կմնա իմ այնքան սիրած երկրում: Բայց ես ներքուստ զգում եմ, որ շատ ժամանակ անց ամեն բան կլինի ինչպես նախկինում: Այդ ժամանակ ես և դու կրկին միասին կլինենք:

Իմ ամբողջ սիրով՝ Ռիտա

ՄԱՅԻՍ – ՍԵՊՏԵՄԲԵՐ 1916

54. ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Այն, ինչ տեղի ունեցավ Սոֆիայում, ինձ գցեց խոր մելամաղձության մեջ: Ես անզոր էի ճակատագրի դեմ, որն արգելեց ինձ ու Ռիտային վերստին տեսնվել: Գուցե քիչ կամք էի գործադրել. ընդամենը մի քանի ժամ չուտ հասնելու դեպքում նրան կենդանի կտեսնեի և գոնե կկարողանայի հրաժեշտ տալ:

Մինչ վերադառնում էինք նավարկելով դեպի Բոսֆորի ծովաբերանը, այդ մտքերն ինձ դադար չէին տալիս: Ինձ համար ամեն ինչ միևնույն էր, թեկուզ այնտեղ իսկ մեռնելը, որովհետև չէի ուզում ապրել, որ ստանայի զավակներիս մահվան լուրը:

Եղանակը մեր օգտին չէր, արևելյան քամին ստիպեց ինձ մնալ տախտակամածի ներքո, մինչև որ մտանք Բոսֆոր: Այնուհետև ինձ տարան մինչև Սարհերե, իսկ Զիան գտավ մի վստահելի թուրքի, որն ինձ տանելու էր Կոստանդնուպոլիս: Ամեն ինչ ընթացավ ոնց որ երազում, անկարող միջամտելու՝ ես ինձ թողել էի նրանց կամքին: Իմ ուղին կարծես նախապես նշված էր, ու հաջորդ քայլերից չէի կարող խույս տալ: Չէի կարողանում մոռանալ Ռիտայի անչունչ մարմինը, և ցավից սիրտս սեղմվում էր:

Կոստանդնուպոլիսը առաջին անգամվա տեսածս կենսուրախ քաղաքը չէր: Մարդիկ փողոցով գնում էին լուռ, առանց իրար ողջունելու, նայում կողքով անցնողին առանց նրան տեսնելու, չցանկանալով որևէ մեկի հետ գործ ունենալ: Ես հիշում էի ուրիշ ժամանակներ, երբ ամեն ինչ շողում էր և միջավայրն այնպիսին էր, որ կլսում էիր մնացածների ուրախությունն ու տխրությունը: Սակայն այդ ժամանակը մնացել էր հետևում, և շատ տարիներ պետք է անցնեին, որ այդ ամենը կրկին հետ վերադառնար:

Գնացի տեսնելու Հովհաննես Օհանյանին, նա ինձ դիմավորեց որպես իր որդու: Զգացի, որ տխուր է: Ինձ պատմեց, որ կինը վախճանվել է ամիսներ առաջ:

– Նրան տխրությունը տարավ, մայե դը Լատուր, չէր ուզում ապրել

որ այս ամենը չտեսներ: Օհանյանն ապրում էր իր դստեր՝ Կարոլինայի հետ, որն արդեն երեսուն տարեկան էր և որպես բուժքույր աշխատում էր Իտալական հիվանդանոցում: Երբ նրան ասացի, որ պետք է օգնի ինձ՝ ապրելու տեղ գտնելու, համարյա բարկացավ: Զհամաձայնվեց, որ որևէ տեղ գնամ և այդպիսով նրանց տանը մնացի: Պետք է խոստովանեմ, որ դա ինձ մեծապես օգնեց, քանի որ ես լրիվ չէի ապաքինվել, իսկ Օհանյանը արտասովոր բժիշկ էր: Ինձ տեղավորեցին իրենց որդու՝ Էդուարդի սենյակում, որին հաջողվել էր փախչել Հունաստան, որովհետև ոստիկանությունը նրան հետևում էր ՀՀԴ-ի անդամ լինելու պատճառով:

Վտանգավոր էր փողոց դուրս գալը, քանի որ ամեն օր ձերբակալում էին ոչ միայն հայերի: Որոշ օտարերկրացիների մեղադրում էին Ֆրանսիայի, Ռուսաստանի կամ Անգլիայի օգտին լրտեսության մեջ: Հետևաբար վիճակս այնքան էլ լավատեսական չէր և երբ որևէ տեղ էի գնում , միշտ վախենում էի ձերբակալվելուց: Այդ դեպքում՝ և՛ անկախ այն մարդկանցից, որոնց ճանաչում էի, և՛ անկախ այն ազդեցիկ կապերից, որ ունեի, չգիտեի, թե ինչ կարող էր պատահել:

Սակայն բացի ռիսկի դիմելուց՝ ուրիշ ելք չունեի, մանավանդ երբ մտածում էի, թե ինչ է կատարվում հայերի հետ ողջ երկրով մեկ: Տղամարդիկ սպանված, կանայք արտաքսված, բռնաբարված, երեխաները ծնողներից հեռացված, վաճառված, շատ անգամներ անհետացած՝ հանցագործների կողմից կատարված ստորության անթիվ կսկծալի պատմություններ:

Կ. Պոլսում ամեն բան փոքր-ինչ այլ կերպ էր, Իթթիհադի կառավարությունը չէր կարող գործել անպատժելիորեն մի այնպիսի քաղաքում, որտեղ այդքան օտարերկրացիներ էին ապրում և կային այդքան դեսպանատներ, որոնք չէին հանդուրժի այդ վայրագ մեթոդների գործադրումը քրիստոնյա բնակչության նկատմամբ: Թերևս բացառություն էր կազմում Գերմանիայի դեսպանատունը, քանի որ չնայած ֆոն Վանգենհայմը մահացել էր ուղեղի արյան գեղումից, ո՛չ կոմս Բեռնշտոֆֆը, ո՛չ էլ որևէ այլ նոր դեսպան չէին կարող փոխել հայերի կոտորածներում գերմանացիների բռնած դիրքի մասին բոլորի կարծիքը:

Ես ապրեցի ևս մի դառն հուսախաբություն: Ֆրանսիացի այն տղան, որի մասին ինձ ասել էին, և որ կարծել էի, թե Էդուարի մասին էր, պարզվեց՝ ուրիշն էր: Ֆիլիպ Սեն Ժակը ֆրանսիացի միսիոների որդի էր: Նրան վերադարձրին Միացյալ Նահանգների դեսպանատան միջոցով, և ես շատ ուրախացա նրա համար: Ներքուստ

դժոխային վիճակի մեջ էի: Սոֆյայից ոչ մի լուր չկար, կարծես հողը նրան կուլ էր տվել: Այդ ֆոն Շյորներ կոչվածը, ում մասին նշում էր Ռիտան իր վերջին նամակում, Թուրքիայից դուրս գալուց առաջ մահացել էր զինվորական ավտոմեքենայի վթարից: Նրա մահվան հաղորդագրության մեջ ոչ մի ուղեկցողուհու անուն չէր նշվում, այնպես որ աղջիկը նույնպես դուրս չէր եկել երկրից:

Օհանյանի միջոցով սկսեցի մասնակցել մի քանի գաղտնի ժողովների, որոնք անց էին կացնում հայերը Կոստանդնուպոլսում: Լուրերը, որոնք հասնում էին Թուրքիայի ցանկացած վայրից, սահմռկեցուցիչ էին, անհավատալի՝ դաժանության և նենգության առումով: Իմ հայ բարեկամներից շատերը, որոնց համար սովորական էր դարձել ավելի վատթարը լսելը, կարծես թե անկարող էին ըմբռնել այդ պատմությունները, որոնք ցույց էին տալիս իրենց յուրայինների բնաջնջումը: «Երբ անհետանում են հարյուր հազարավոր անմեղ մարդիկ, ի՞նչ բանականություն, ինքնատիրապետում կամ հույս կարող է լինել. պարզապես աշխարհը փլվում է քո շուրջ»: Դա ինձ ասում էր արցունքները կուլ տալով այդ ժողովների մասնակիցներից մի հայ:

Նրանց գլխում չէր տեղավորվում, որ կարող էին կատարվել նմանօրինակ բաներ. Քարտեզից ջնջված ժողովուրդներ, հայ զինվորների վաշտեր՝ գնդակահարված բաց երկնքի տակ, հազարավոր կանայք՝ առանց հանգստի ստիպված քայլող, շատերը բռնաբարված կամ պարտադրված նայելու իրենց դուստրերին նույն վիճակում:

– Որտե՞ղ է Աստված, որտե՞ղ: Ինչո՞ւ է լքել հայերին: – Օհանյանը բղավում էր կատաղությամբ ու սարսափելի վշտով:

Սակայն նաև լուրեր էին հասնում Փոքր Ասիայի հույների վերաբերյալ՝ Զմյուռնիայում, Կուսադասիում, Սյոկեում, Կիլիկիայում իրականացվող հրեշավոր ոճիրներից, որ Թուրքերը թույլ էին տալիս իրենց հույն հայրենակիցների հանդեպ, միայն այն պատճառով, որ քրիստոնյաներ էին: Շատերը չէին հասկանում, չէ՞ որ իրենց Թուրք հարևանները միշտ բարի ու մեծահոգի էին եղել, ի՞նչն էր նրանց փոխել, այդ ի՞նչ տարօրինակ հիվանդություն էր Թուրքերի հոգին ու զգացմունքները վարակել: Ոչ ոք չէր կարող բացատրել, և ոչ էլ հույս կար: Ի՞նչ էին ասելու, ի՞նչ պատրվակ կարող էին քրթմնջալ: Այնքան ահռելի ոճիր էր, այնքան մանրակրկիտ նախապատրաստված, որ չէր կարող ներվել, բացառված էր ներումը:

Հայ համայնքում տիրում էր հուսահատությունը, ահաբեկվածությունը, խռովքը, ծնողներն իրենց զավակներին ուզում էին հեռացնել Թուրքիայից՝ համոզված, որ այլ կերպ՝ կմեռնեին: Շատերը փախչում

էին՝ ինչ գնով էլ որ լիներ, և անհետացածների, ձերբակալվածների, սպանվածների և փախուստի դիմած մարդկանց բացակայությամբ՝ բնակչությունը աչքի առաջ գնալով նվազում էր:

Մի երեկո անակնկալի եկա հանդիպելով Ժան Կառնոյին Հայերի փրկության կոմիտեի ժողովին: Նա գրկեց ինձ՝ ականջիս չշնջալով, որ ես գժվել եմ: Գլխով ասացի՝ ոչ, քանի որ խոսքը խենթության մասին չէր, այլ հրամայական, անհետաձգելի մղումի՝ գտնել ու փրկել զավակներիս ամեն ինչից վեր գնով: Ճիշտ է, որ ամեն ինչ ինձ համար հարաբերական էր և ես հաճույքով կյանքս կտայի, միայն թե փրկեի Էդուարին ու Սոֆյային: Ես կորցնում էի ռիսկի զգացումը՝ այն բնազդը, որը մեզ մղում է պահպանել մեր կյանքը: Ինձ համար ամեն ինչ միևնույն էր, քանի որ այն զգացողությունն էր ինձ համակել, որ ողջ աշխարհն էր անհետանալու... Առնվազն իմ ճանաչած աշխարհը:

Ժանն ինձ պատմեց Ֆրանսիայի և Անգլիայի միջև կնքված վերջին համաձայնությունների մասին: Մենք դրա հետ շատ հույսեր էինք կապում՝ համոզված, որ գոնե հույսի մի շող է նշմարվում, սակայն շուտով հիասթափվեցինք. այդ համաձայնություններում չէր հիշատակվում Հայաստան անունը:

Նա քաջատեղյակ էր, քանի որ տարիներ շարունակ բարեկամական հարաբերություններ էր պահպանում Ֆրանսուա Ժորժ Պիկոյի հետ, որը մինչև այդ պահը Ֆրանսիայի գլխավոր հյուպատոսն էր Բեյրութում և որպես փորձագետ մասնակցել էր Լոնդոնում տեղի ունեցած բանակցություններին: Այնտեղ սրը Մարք Սայքսը կարող էր համարել իրեն հաղթող այդ գաղտնի համաձայնություններում, որոնք հետագայում կոչվելու էին «Սայքս-Պիկո համաձայնագրեր»:

Ժանը հեգնորեն ավելացրեց, որ կարծում է, որ արաբները լսել անգամ չեն ուզենա այդ համաձայնագրերի մասին, քանի որ իրենց խաբված կզգան: Ինչ մնում էր Թուրքերին, հենց որ այդ մասին լսեցին, նրանց աղաղակը երկինք էր հասնում, քանի որ իրականում խոսքը Օսմանյան կայսրության մնացորդների բաժանման մասին էր՝ բրիտանացիների և ֆրանսիացիների միջև:

Ժանը կրկին պնդեց, որ իր հետ պետք է վերադառնամ Ֆրանսիա: Վախենում էր, որ կարող էր ինձ որևէ բան պատահել, բացի այդ, վիճակս էլ այն չէր, թեև այդ մասին լռեց:

Ես հրաժարվեցի: Այդ հանգամանքներում չէի կարող մեկնել, թեև գիտեի, որ ինձ մեծ վտանգ է սպառնում: Նա ըմբռնեց դա, և քանի որ նման իրավիճակների քաջ գիտակ էր, ինձ նայեց հիացմունքով:

Դրանից մի քանի օր անց ինձ ձերբակալեցին: Պետք է ասեմ, որ

իմ կողմից ես թույլ տվեցի մեծ անզգուշություն, որովհետև որոշեցի ոտքով գնալ Էմիլ Բագրատյանի խանութը: Ինձ ասել էին, որ նա շատ հիվանդ է ու ես ուզում էի տեսնել նրան, քանի որ իր նվիրվածությամբ և անչահախնդրությամբ նա եզակի մարդկանցից էր:

Մի ավտոմեքենա կանգնեց ինձ մոտ, որից երկու հոգի դուրս եկան ու առանց խոսք ասելու ինձ մտցրին մեքենայի մեջ: Անկասկած դա կառավարության քաղաքական ոստիկանության գործն էր, և թերևս գիտեին, թե ով եմ ես, քանի որ աշխատում էին կոպիտ չլինել: Հաստատ նրանց հրամայել էին ինձ տանել ողջ և առողջ՝ հատուկ մի վայր:

Չէի սխալվել: Ինձ տարան մի շենք, որը Մեծ Բազարի հետևում էր, Կոնստանտինի Սյան մոտ: Ինձ իջեցրին ավտոմեքենայից և արագ մտցրին մուտքը: Առաջին հարկում բնակարաններից մեկի դուռը բաց էր, կարծես թե մեկը մեզ սպասելիս լիներ:

Բնակարանն ամայի էր: Միայն մի սեղան կար ու երկու աթոռ: Պատուհանների հետևի ճաղերը համարյա փակ էին, և բնակարանը պահում էին կիսախավարում: Լուսամփոփը լուսավորեց դեմքս՝ խանգարելով, որ տեսնեմ, թե ով է կանգնած իմ հետևում: Մի անհամբեր ձայն ինձ հարցաքննեց, մինչ ձեռքերս կապում էին աթոռին:

— Դուք մսյե Անրի դը Լատո՞ւրն եք:

Գլխով հաստատեցի: Հարկ չկար ժխտել ակնհայտը: Գիտեին, թե ով եմ ես և հավանաբար վաղուց էին ինձ իրենց հսկողության տակ պահում:

— Մսյե դը Լատուր, դուք ֆրանսիացի եք, և որքանով մեզ հայտնի է՝ պատկանում եք դիվանագիտական անձնակազմին: Բայց հիմա դա ոչ մի նշանակություն չունի, քանի որ Թուրքիան պատերազմում է Ֆրանսիայի հետ... Այդ իսկ պատճառով մենք ձեզ կարող ենք մեղադրել լրտեսության մեջ: Ինչո՞վ եք դուք այստեղ զբաղվում, մսյե դը Լատուր:

— Դուք շատ լավ գիտեք, թե ինչու եմ գտնվում այստեղ: Որդիս գտնվում է Թուրքիայում, ես եկել եմ նրան տանելու: Նա Ֆրանսիայի քաղաքացի է և անկախ պատերազմական վիճակից՝ նա գտնվում է միջազգային իրավունքների պաշտպանության ներքո, իսկ ես՝ որպես դիվանագետ, ինձ ընձեռվող իրավունքների ներքո: Իրավունք չունեք ինձ ձերբակալել:

— Լսեք, մսյե..., դուք այստեղ չեք գտնվում որպես Ֆրանսիայի ներկայացուցիչ, այլ ձեր անձնական բնույթի պատճառներով, եթե հավատանք ձեր վարկածին: Իհարկե, իրավունք ունենք ձեզ ձերբա-

կալել և այնքան ժամանակով, որքան կամենանք: Այնպես որ ձեզ հետ կարող ենք վարվել մեր ուզածի պես, ինչպես և ձեր որդու հետ, եթե նա այնքան անխոհեմ է, որքան իր հայրը: Ոչ ոք չգիտե, որ դուք այստեղ եք..., իսկ գուցե ձեզ առևանգել են հայ ահաբեկիչները փրկագին պահանջելու համար, կամ էլ ռուսները...

Հենց այդ պահին ասես միտքս պայծառացավ, և հասկացա, թե ում հետ գործ ունեմ: Որոշ բառերում նրա ս հնչյունի թեթև ղ-ի պես արտասանելն էր, ձայնի հնչերանգը մի փոքր սուր... Հիշեցի, թե երբ էի նրան լսել: Սալոնիկում, Միդհատ Շյուքրուի ամառային տանը, 1906 թ. սկզբներին: Տասը տարի առաջ էր: Կարող էի երդվել՝ դոկտոր Նազըմն էր, որքան ինձ հայտնի էր, կոտորածների ամենադաժան սադրիչներից մեկը:

– Ցանկացած մեկը կարող էր առևանգել,– շարունակեց նա հեգնորեն,– և ցանկացած մեկը կարող էր ձեզ հետ վարվել ինչպես ուզենար, օրինակի համար ձեզ խոսեցնել՝ գործադրելով ավելի համոզիչ մեթոդներ...

– Ի՞նչ կարգի մեթոդներ: Պայտերով խոշտանգո՞ւմը: Երկաթե մահակներով ոտքերի թաթերին խփե՞լը: Գուցե եղունգները տեղից պոկել հանե՞լը...: Ձեզ մի բան կասեմ: Գիտեմ, թե դուք ով եք և թե որոնք են հայերի պես անմեղ մարդկանց սպանելու ձեր մեթոդները:

Նա ինձ չհավատաց, բայց զգացի, որ նրան կասկածելու տեղիք էի տվել:

– Իրո՞ք: Այսինքն դուք գիտե՞ք, թե ես ո՞վ եմ... Ընդհակառակը, այդ ես գիտեմ, թե դուք ով եք՝ հայերի մի զզվելի բարեկամ, լրտես Ֆրանսիայի օգտին, մի երկրի դավաճան, որը ձեզ այսքան ժամանակ ապաստանել է... և Թուրքիայի հրապարակավ թշնամի: Ձեզ նման մարդկանց հետ հարկավոր է վարվել, ինչպես որ նրանք արժանի են... Իսկ հիմա կարող եք շարունակել ձեր հեքիաթը:

– Ոչ մի հեքիաթ էլ չկա, դոկտոր Նազըմ,– տեսա, որ նա իրեն կորցրեց, քանի որ անմիջապես արձանի պես քար կտրեց:

– Այո՛, գիտեմ թե դուք ով եք, և ուրախ եմ ձեզ այս առիթով հայտնել, որ ձեր գործունեությունների վերաբերյալ մենք ընդարձակ դոսյե ունենք: Շատ բան գիտենք ձեր ոճրագործությունների առընչությամբ... Եվ դա պետք կգա ձեզ դատապարտելու, երբ ավարտվի այս պատերազմը և մանավանդ, որպեսզի պատմությանը պարզ լինի, թե ինչ տեսակ մարդ եք եղել...

– Լռե՛ք, լռե՛ք, հայերի անիծյալ բարեկամ, թողեք որ ձեզ մի բան

ասեմ, որ ձեր փուքսը նստի: Ձեր որդին՝ Էդուարը մեռած է: Մեռա՛ծ:

Զուգեցի հավատալ այդ դաժան հարձակմանը: Համոզված էի, որ ճիշտ չէր, և նա միայն փորձում էր ինձ խեղճացնել:

– Սո՛ւտ է,– բղավեցի ափերից դուրս եկած – սո՛ւտ:

Դոկտոր Նազըմը քրքջաց:

– Ոչ, դը Լատուր, ճիշտ է... Մեռավ մի չարաթ առաջ, մի խումբ հայերի հետ ինքնասպան գրոհի ժամանակ: Մենք դա երբեք չէինք էլ իմանա, եթե այդ ստորաբաժանման պատասխանատու լեյտենանտը հատուկ զննության ենթարկած չլիներ նրա դին: Գիտե՞ք, դը Լատուր, քիչ չիկահեր հայեր կան կապույտ աչքերով. նա կրում էր ֆրանսիական անձնագիր՝ Էդուար դը Լատուր անուն ազգանունով, Նյու Յորքի համալսարանի ուսանողական տոմս:

– Անիծյալ, անիծյալ լինես, Նազըմ,– անզոր էի տանել այդ ցավը... – անիծյա՛լ:

– Այդ տղան եկել էր Թուրքիա մեզ վրա հարձակվելու միտումով և ոչ ոք մեզ չի կարող մեղադրել թշնամուն վերացնելու համար..., մայե դը Լատուր..., ինքն էր այդ մահը փնտրել և դուք նույնպես:

Զգացի, որ ուժ չունեմ՝ նրա հետ շարունակելու վիճել: Այդ մարդասպանը գոհ էր ևս մի հայ ոչնչացրած լինելուց: Զգացի, որ չնչահեղձ եմ լինում, հանկարծ սուր ցավ զգացի և ուշաթափվեցի:

Երբ գիտակցությունս տեղը եկավ, Նազըմը չկար: Հասկացա, որ մահճակալի վրա էի, ուրիշ հիվանդների հետ մի սրահում: Հիշեցի այն մարդու ասածները, և աչքերս խոնավացան: Ներքուստ ինձ պատել էր մի ահավոր հուսահատություն, և թեև չէի ուզում ընդունել, տվյալները, որ ինձ ասել էր, ստիպում էին հավատալ, որ ճիշտ էր: Խեղճ Էդուար: Սերը հանուն Հայաստանի, որ ինչպես իր մայրը, այնպես էլ ես ներարկել էինք նրա մեջ, բերեց այս սարսափելի վախճանին: Նրան անվտանգ պահելու իմ ջանքերը ավելի թեժացրին իր ցանկությունները: Շատ վատ էի, չփոթահար և գլխապտույտով: Կուրծքս չարունակ ցավում էր, ու թեև ողջ էի, մի նշույլ ցանկություն իսկ չունեի ապրելու:

Շատ օրեր անցկացրի այդ վիճակում: Մի թուրք բուժակ ինձ օգնում էր մի փոքր վեր կենալ և համարյա զոռով խմեցնում էր մի քանի գդալ ապուր՝ անհամ և ճարպոտ, հիվանդության և մահվան մթնոլորտում: Երեք հիվանդ մահացան, և նրանց այնտեղից հանեցին պատգարակով: Հետո բերում էին ուրիշ ծանր հիվանդների և դնում նույն մահճակալներին՝ առանց սպիտակեղենը փոխելու: Ինձ համար միևնույն էր: Զգիտեի, ես գտնվում էի զինվորական հիվանդանոցո՞ւմ

թե՞ գժանոցում կամ էլ հենց դժոխքո՞ւմ: Նաղըմը հրամայել էր, որ փորձեին փրկել կյանքս, որովհետև կասկած չկար, որ սրտի նոպա էի ունեցել: Կարծում էր, թե մեռնելու եմ և ինձ ուղարկել էր հոսպիտալ, որպեսզի կարողանար, հարկ եղած դեպքում, արդարացնել իմ մահը:

Երբեք չէի մտածել, որ կյանքս այսպես էր ավարտվելու, այդպիսի մի վայրում, ատելությամբ ու հուսահատությամբ լի, որտեղ անցած կյանքս ընդամենը մի թույլ ու հեռավոր հուշ էր և հազիվ էի հիշում, թե ունեցած լինեի երջանիկ մի պահ: Միայն ուշադրությունս մի քանի պահ կենտրոնացնում էի, երբ գալիս էր բուժակը: Հետո ամեն ինչ մշուշ էր ու չփոթ:

Կոտրված ու փոշոտ ապակիների միջոցով հասկանում էի, որ ցերեկ էր: Հետո կրկին մութ էր, բայց հստակ չգիտեի, թե ինձ պատողը մղձավա՞նջ էր թե՞ իրականություն, թեև գիտակցում էի, կամ ինձ էր այդպես թվում, որ գնալով խամրում էի, քանի որ ինձ ամենևին չէր հուզում, թե ինչ տեղի կունենա հետս: Ավելի ճիշտ՝ հակառակը. չէի ուզում ապրել:

Մի օր եկավ ուրիշ բուժակ: Սկզբում վրաս ոչ մի ուշադրություն չդարձրեց, ոչ էլ ես նրան, այնքանով միայն, որ նա նույնը չէր: Հետո այդ մարդը մոտեցավ ինձ, զարկերակս բռնեց և սևեռուն նայեց: Մի քանի օր այդպես էր, մինչև որ հակվեց ականջիս ու չչնջաց ինձ.

– Մայե՞, մայե՞.

Աչքերս փակեցի ու բացեցի՝ փորձելով հասկացնել, որ՝ այո:

– Ես ձեզ ճանաչում եմ, մայե, կառապան Մանասյանի օգնականն էի... Մուհամմադ Կարոդլուն եմ, դեսպանատանը... Դուք մայեն եք: Ի՞նչ եք անում այստեղ, մայե, դեսպանատունը հիմա փակ է, ես կասեմ բժիշկ Մորդտմանին, որ գա ձեզ տեսնելու: Ո՞վ է ձեզ բերել այստեղ:

Ես հասկանում էի այն, ինչ այդ մարդն ինձ ասում էր, բայց անզոր էի արտասանել որևէ բառ: Գիտակցում էի, որ ուժերս խպառ հատել են: Ավելի ուշ այդ մարդը եկավ մի բժշկի հետ՝ երկար խալաթի մեջ փաթաթված: Նա կռացավ դեմքս տեսնելու, մինչ տարուբերում էր գլուխը:

– Կարոդլուն ինձ ասում է, որ դուք ֆրանսիացի դիվանագետ եք: Կարո՞ղ եք ինձ լսել: Ո՞վ եք դուք: Ինչպե՞ս եք հասել այստեղ: Գուցե ձեզ բռնե՞լ են:

Դանդաղ գլխի շարժումով ասացի՝ այո:

– Ֆրանսիացի՞ եք: Ոչ մի փաստաթուղթ չունե՞ք: Լավ, կփորձենք

տեղեկանալ:

Բժիշկը կրկին ուղղվեց դեպի ինձ:

– Զգիտեմ, դուք կարո՞ղ եք ինձ հասկանալ, իմ անունը բժիշկ Մորդտման է, Մ-ո-ր-դ-տ-մ-ա-ն:

Այդ ժամանակ կարծես մեջս լուսավորվեց: Այդ մարդը առնչվել էր Յուլիոս ֆոն Ռիթերի՝ այն բնակարանի նախկին սեփականատիրոջ հետ, որտեղ ես ապրել էի: Ամեն ինչ ոնց որ երազում լիներ, որում իրար էին խառնվել իրականությունը, հուշերն ու երազանքները:

– Իմ կարծիքով այն, ինչ կատարվում է այս մարդու հետ, թմրանյութի ազդեցության տակ է, թույլ տվեք նայել այս բաժակը: Ո՞վ է նրան ջուր բերում: Դո՞ւք: Ջրի մեջ ի՞նչ եք ավելացնում: Այս հաբե՞րը: Բայց չէ՞ որ սա ափիոն է, ո՞վ է այդ հրամանը տվել... Մենք այս մարդուն սպանո՛ւմ ենք... Այս պահից հանեք այդ նշանակումը:

Իրոք որ, դա էր ինձ պահում քնած վիճակում: Հաջորդ օրը թեև թույլ, գլուխս սկսել էր աշխատել, և հիշում էի շատ ավելի հաջորդականորեն: Այդ ժամանակ բժիշկ Մորդտմանը կրկին եկավ ինձ տեսնելու:

– Ո՞վ եք դուք: Ինչո՞ւ եք այստեղ գտնվում:

– Անունս Անրի դը Լատուր է,– չչնջացի հավաքելով ուժերս: – Ես դիվանագետ եմ, և դոկտոր Նաղըմն է հրաման տվողը: Կարծում եմ, որ սրտի նոպա եմ ունեցել և նա ինձ ուղարկեց այստեղ հավանաբար կարծելով, որ դուրս չեմ գա: Ես շատ թույլ եմ, կարծես այլևս տեղիցս չեմ կարողանա վեր կենալ... Դուք բժիշկ Մորդտմանն եք... Ես շատ տարիներ եմ ապրել Յուլիոս ֆոն Ռիթերի բնակարանում... Ուզում եմ այստեղից դուրս գալ, սա հիվանդանոց չէ:

– Իհարկե, ո՛չ... Սա բանակի հոգեբուժարանն է: Մի անհանգըստացեք, ձեզ կհանեմ, բայց պետք է բուժվեք իսկական հիվանդանոցում: Դուք շատ վատ վիճակում եք, ձեզ կտանեմ Իտալական հիվանդանոց: Ձեր վիճակում դա ամենահարմար վայրն է, տնօրենն էլ բարեկամս է:

Այդպես էլ եղավ, սպասեցի մինչև հաջորդ օրը, Կարոդլուն և իր ընկերը ինձ տեղափոխեցին: Իտալական հիվանդանոցն ուրիշ անվանում չուներ, այդպես էին այն կոչում գերմանացի և թուրք սպաները: Այնտեղ սկսեցին ինձ կերակրել, և թեև դեռ շատ թույլ էի, զգում էի, թե ինչպես է լավանում վիճակս: Չէի հասկանում, թե ինչո՞ւ էր բժիշկ Մորդտմանը ինձ հանել այդտեղից, քանի որ ինչպես ինձ հայտնի էր, այդ մարդը համագործակցում էր թուրքերի հետ ամեն ձևով.

իսկ դոկտոր Նազրմն էլ համարվում էր հիմնական լիդերներից մեկը:

Այդուհանդերձ, Հենրի Մորգենթաուն էր, որին հաջողվեց ինձ հանել Թուրքիայից, Միացյալ Նահանգների դեսպանը: Ինչ-որ մեկը նրան հավանաբար հայտնել էր վիճակիս մասին, և մի քանի օրում ինձ տեղափոխեցին հյուսիսամերիկյան նավով, Կարմիր Խաչի դրոշով, որը երկրից դուրս էր տանում միսիոներների, դասախոսների, բժիշկների, որոնք պետք է լքեին երկիրը: Ես հասկանում էի, որ Թուրքերը նախընտրել էին հարցերը չբարդացնել, ու իմ լռելյայն հեռանալը բոլորի համար էլ ձեռնտու կլիներ:

Մարսելում նավից իջա: Այնտեղ ինձ սպասում էին Անտուան Մոնժը և չտապ օգնության մեքենան: Ես դանդաղ էի ապաքինվում և հազիվ էի կանգնում ոտքի վրա: Այն ժամանակ շատ նիհար էի և երբ ինձ տեսնում էի փոքր հայելու մեջ, արտացոլվող այն վաղաժամ ծերուկը ես էի: Անտարակույս Էդուարի մահը ինձ էլ էր սպառնում:

Վերադարձա Փարիզ չտապ օգնության մեքենայով: Սալպետրիերում ինձ ախտորոշեցին սրտի սուր անբավարարություն: Ներքուստ ես զգում էի, որ ինձ լքել է ապրելու ցանկությունը: Բայց ճակատագիրը դեռ անակնկալ ուներ ինձ մատուցելու:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1916 – ՆՈՅԵՄԲԵՐ 1918

55. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1916 թվականի վերջերին դարձյալ Փարիզում էի, մի մասնավոր կլինիկայում, որտեղ վերականգնողական երկար բուժում ստացա: Բժիշկն ինձ զգուշացրեց, որ եթե ես իմ կողմից ջանքեր չգործադրեմ, նա չի կարող հրաշքներ գործել:

Աստիճանաբար սկսեցի հաշտվել Էդուարի մահացած լինելու հետ, արթնանում էի գիշերվա կեսին անձկությամբ լի, ինձ ճնշում էին մղձավանջները և թույլ չէին տալիս հանգստանալ:

Ժան Կառնոն ուշադիր հետևում էր իմ ապաքինմանը: Ինձ ծանոթացրեց մի շատ նշանավոր նյարդաբանի՝ Շարկոյի և Ալֆրեդ Բինեի աշակերտին, որն ախտորոշեց հիվանդությունս որպես խոր դեպրեսիա: Ինձ հստակորեն բացատրեց, որ սիրտս շատ ավելի լավ վիճակում է, քան ուրախությունս: Նրա կարծիքով ինձ միայն հրաշքը կարող էր բուժել, եթե վերադարձներ ապրելու ցանկությունը, որը ես թողել էի Կոստանդնուպոլսի հոգեբուժարանում:

Զնայած այդ ամենին՝ ես գնալով առաջադիմում էի: Շատ դանդաղ, ինձ բուժող բժիշկների մեծ ջանքերով, նաև բարեկամներիս չնորհիվ, ներառյալ բազմաթիվ հայերի, որոնք այցելում էին ինձ, հետս զրուցում: Նրանք չէին կարող լավ լուրեր բերել: Ընդհակառակը, այն տպավորությունն էր ստեղծվել, որ թուրքերը հասել էին հայերին իսպառ բնաջնջելու նպատակին:

Բնականաբար, ինձ այդ հարցը չէր մտահոգում միայն հայ բարեկամներ ունենալու առումով: Ես հայերին նայում էի որպես իմ ժողովրդի. նրանք իմ աշխարհի կարևոր մասն էին:

Հակոբ Սարգսյանի հետ միասին ստեղծեցինք տնտեսական օգնության համակարգ այն մարդկանց համար, որոնց հաջողվում էր Թուրքիայից հասնել այստեղ: Նրանց մատների վրա կարելի էր հաշվել, եթե համեմատենք այն հայերի թվի հետ, որոնք բնաջնջման զոհ էին դառնում: Ֆրանսիան այդ ընթացքում պայքարում էր գերտե-

ությունների դեմ: Ամեն առավոտ Փարիզ էին հասնում ֆրանսիացի զոհված զինվորների դիակներով լեփ լեցուն չտապ օգնության կառքերի շարանները. մի անհեթեթ և անիմաստ տուրք այնպիսի քաղաքական գործիչների սնապարծությանն ու չարակամությանը, ինչպիսիք էին կայզերն ու երիտթուրքերի կառավարության անդամները:

Կարծում եմ, որ ինձ օգնեց ապրել իմ ընդվզումը: Ամեն օր, ինչպես Էդուարը, հազարավոր երիտասարդներ էին մահանում. ֆրանսիացիներ, անգլիացիներ, սերբեր, հայեր, ռուսներ, նաև գերմանացիներ, բուլղարներ ու թուրքեր: Մի օր որոշեցի, որ պետք է ապրեմ, որպեսզի գեթ մի բան կարողանամ անել այդ արյունահեղության դեմ: Անկախ Եվրոպայի ֆինանսական վիճակից՝ ես դեռ ավելի քան բավարար միջոցներ ունեի շատ մարդկանց օգնելու համար: Բայց ոչ ուզում էի որևէ հրապարակայնություն, ոչ էլ դերակատարություն, այնպես որ Սարգսյանի և այլ ազդեցիկ գործարար մարդկանց հետ որոշեցինք հիմնել մի ֆոնդ հանուն խաղաղության: Ես դա անում էի Էդուարի, Մարիցայի, Ռիտա Հակոբյանի և Սոֆյայի, նաև շատ ու շատ այլ երիտասարդների անունից, որոնք զոհվում էին մի անհեթեթ պատերազմում, որից թերևս կարելի կլիներ խույս տալ:

Ամիսներ անցան: Հոռմի խորհրդակցությունը օգնեց, որ փոխվեր հակամարտության ընթացքը: Բրիտանացիները փորձում էին իրենց ձևով պատերազմել՝ և Հեյգ Դուգլասը ջանում էր անհնարինն անել՝ ցույց տալով իր ռազմավարությունը, մինչ Ռոբեր Նիվելը պատասխանում էր նույն հնարքներով:

Սակայն այն, ինչ ձեռք էին բերում ցամաքում, կորցնում էին ծովում՝ գերմանացիների սուզանավերի հետ մարտերում: Դաշնակիցների նավատորմի կորուստները ահռելի չափերի էին հասնում, մինչև որ Լլոյդ Ջորջը գործի դրեց նավերի հսկողության համակարգը զինված պահապանների միջոցով, ինչը բավականին նվազեցրեց կորուստների թիվը: Հետո ի հայտ եկավ Իպրեսի ճահիճների խնդիրը, կորցրած արժանապատվության վերականգնումը Փաշենդեյլում, Կապորետտոյում իտալացիների պարտությունը, այնպես որ 1917 թ. հոկտեմբերին դեռ պատերազմը շարունակվում էր, բայց դաշնակիցները կորցրել էին Իտալիան և Ռուսաստանը, որը մխրճված էր հեղափոխության մեջ՝ Լենինի և Տրոցկու գլխավորությամբ:

Օսմանյան կայսրությունը կորցրեց Երուսաղեմը, որը դեկտեմբերի 9-ին գրավեցին անգլիացիները Էդմունդ Ալենբիի գլխավորությամբ: Դա խորհրդանշական այն պահն էր, որը ցույց էր տալիս, որ պատերազմը կարող էր և պետք է հաղթող դուրս գար:

Բայց Կոստանդնուպոլսից եկող հաղորդագրություններն ինձ ստիպում էին հասկանալ, որ մեծ պատերազմի ամենամեծ պարտվողները լինելու էին հայերը, որպես զոհաբերված գառներ թուրքերի կողմից, ովքեր հավակնում էին ոչնչացնել բոլոր քրիստոնյաներին Փոքր Ասիայում, Անատոլիայում և Կովկասում: Ոչ մի խղճմտանք չկար հայերի հանդեպ, և ամեն նոր վկայություն շատ ավելի դաժան էր, քան նախորդը, ասես քաղաքական բոլոր թուրք գործիչները գահավիժում էին ոճիրի ու ստորության սահարլուրով:

Տանս ընդունեցի Մորգենթաուին, որը գործի բերումով Փարիզում էր և ուզում էր ինձ ողջունել: Նա սարսափահար էր այն ամենից, ինչ կատարվում էր:

– Լսիր, Անրի, թուրքերի մեղսակիցները գերմանացիներն են: Երբեք մտքովս չէր անցնի, որ նման քաղաքակիրթ և ուսյալ ժողովուրդ այդքան կցածրանար: Նրանց հետ համագործակցում են շատ վայրերում: Չնայած դուքս Վոլֆ Մեթերնիխը շատ ավելի մարդկային էր թվում, քան իր նախորդները, սակայն նրանց հերթն էլ կգա, պատմության այնպիսի մեծագույն ոճրագործության մեղսակիցներն են, որպիսին մի անմեղ ազգի խպառ բնաջնջումն է:

1918 թվականին Փարիզը չնչեց Նոր տարին: Տոնելու ոչինչ չկար: Կլեմանսոն՝ կառավարության նոր նախագահը, նշեց պատերազմի ավարտի ժամկետը: Գերմանացիները պարտվում էին բոլոր ռազմաճակատներում, բայց Ֆրանսիան նույնպես լրիվ ուժասպառ էր եղել: Ֆրանսիական և անգլիական զորքերի միջև կոորդինացիայի պակասը այնքան ակներև էր, որ Պետենը հանդիմանեց Հեյգին հետագայում հայտնի դարձած մի նախադասությամբ. «Դուք հեռացնում եք ձեր ձեռքը այն չափով, ինչ չափով ես ձեզ մեկնում եմ իմը», իսկ գերմանացի գեներալ Լուդենդորֆը հասավ մի չարք հաղթանակների... իր բանակի խպառ կորստյան գնով:

Այդ ժամանակ էլ հասան ամերիկացիները, այն կտրուկ պահին, երբ Եվրոպան այլևս ո՛չ ռեզերվներ ուներ, ո՛չ ուժ, ո՛չ էլ զորակոչիկներ: Հիվանդանոցները լեփ-լեցուն էին պատերազմի վիրավորներով, վերականգնվելու սուղ հնարավորություններով: Կույրեր և հաշմանդամներ թունավոր գազերից, տասնյակ հազարավոր զինվորներ թողել էին իրենց խորտակված կյանքերը խրամատներում:

Բայց ահա, գալիս էր գեներալ Փերշինգը հյուսիսամերիկյան զորքերի գլուխ անցած, որպեսզի վերջնականապես փոխի պատերազմի ընթացքը: Հուլիսի կեսերին ֆրանսիական տարածքում կային քսան-

մեկ հյուսիսամերիկյան դիվիզիաներ:

Հետո ամեն ինչ շատ արագ զարգացավ: Մառնի մոտ երկրորդ ճակատամարտը ձախողվեց, բայց օգնեց հասկանալ, թե ո՞րն էր լինելու համապատասխան ռազմավարությունը:

Մեզ հասնում էին լուրեր այն մասին, որ Թուրքիան կործանվում է: Գերմանացի գեներալ Լիման ֆոն Զանդերսը չէր կարող դիմակայել Ալենբիի ռազմավարությանը, որին օգնում էին արաբները, որոնք խիզախորեն պայքարում էին իրենց տարածքներում վերջ դնելու օսմանյան տիրապետությանը: 1918 թ. հոկտեմբերի 31-ին Թուրքիան Դամասկոսի և Հալեպի անկումից հետո ենթարկվեց կապիտուլյացիայի: Փարիզի հայերը չամպայնով նշեցին դա, թեև իրենց համար դա Պյուռոսյան հաղթանակ էր:

Ստիպված եղանք սպասել մինչև նոյեմբերի 11-ը, որպեսզի Գերմանիան զենքերը վայր դնի: Մեծ պատերազմն ավարտվել էր, որի արդյունքում եղան միլիոնավոր զոհվածներ, ամբողջական ավերված հարյուրավոր քաղաքներ ու հազարավոր գյուղեր Եվրոպայում, մեկ ու կես միլիոն բնաջնջված հայեր Թուրքերի կողմից՝ գերմանացիների աջակցությամբ և հովանավորությամբ:

ԳԱՐՈՒՆ 1920

56. ԱՊՐԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիայում ամեն ինչ ընկնում էր հունի մեջ, և Վերսալի հաշտության պայմանագիրը, ստորագրված Հայելապատ սրահում, հաստատեց այդ: Չէ որ հենց այնտեղ էր Գերմանիան հռչակել իր կայսրությունը քառասունութ տարի առաջ:

Սակայն իրականում եթե մեկը տուժել էր, Հայաստանն էր: Թեև պայմանագրի համաձայն Հայաստանը դարձել էր անկախ պետություն, հայ ժողովրդի կեսից ավելին ընդմիշտ մնացել էր ճանապարհներին, նրանց թվում՝ Ռիտան, իմ որդի Էդուարը, դուստրս՝ Սոֆյան և Մարիցան, քանի որ նրա վաղաժամ մահը Թուրքական ոստիկանությունում դաժանորեն ծեծի ենթարկվելու հետևանք էր:

Ներքուստ ես շատ էի փոխվել: Իմ աշխարհընկալումը արդեն այլ էր: Հավատում էի մարդկանց բարի նաև չար լինելուն: Բայց փորձն ինձ թերահավատ էր դարձրել քաղաքական գործիչների նկրտումների հանդեպ, արգահատանքով լցրել դեպի նրանք, որոնց կարծիքով բռնությունը քաղաքականություն վարելու կանոն էր: Ատելություն ունեի բոլոր նրանց հանդեպ, ովքեր սկզբնապես մարդկանց դասակարգում էին ըստ նրանց գույնի, հավատամքի և աշխարհզգացողության:

Մեկ ու կես միլիոն հայեր այլևս չէին տեսնի արևի երես, չէին տեսնելու յուրայիններին ու չէին ունենալու կյանքի երջանիկ պահեր... Նրանց քշել տարել էին չարիքի, ատելության, նախանձի, ընչաքաղցության, տգիտության քամիները, և աշխարհն հիմա ավելի վատն էր, ավելի թշվառ ու ավելի մութ:

Իմը նույնպես: Արթնանում էի վաղ: Երբ հազիվ կարողանում էի աչք կպցնել, այլ ժամանակների ուրվականներ էին գալիս՝ ձեռքները պարզելով դեպի ինձ, ապարդյուն փորձելով ինչ-որ բան ասել, ինչը ինձ ընկղմում էր խոր հուսահատության մեջ և ինձ վերստին ստիպում տեսնել ինքս ինձ՝ անձուկ ու տխուր:

Դաժան ճակատագիրը կործանել էր բոլոր երազանքներս, և ինձ

ոչինչ չէր հետաքրքրում: Իմ զարմիկ Ժորժը մեծ հաջողությամբ շարունակում էր ղեկավարել իմ գործարանները և ամեն ամիս ինձ տեղեկացնում էր նրանցից յուրաքանչյուրի գործունեության մասին: Ես ցույց էի տալիս, որ լսում եմ նրան, փորձում էի հետաքրքրություն ցուցաբերել, թեև իրականում ինձ համար միևնույն էր: Գիտեի, որ այդ ամենը ոչինչ էր, որ ես վերագտնեի ապրելու իմ երբեմնի ուրախությունը... Նա շատ զգայուն մարդ էր և թերևս գլխի էր ընկնում, որ ես լրիվ անտարբեր եմ, սակայն կատարում էր իր պարտականությունը և կարծում եմ՝ հասկանում էր իմ վիճակը:

Փարիզով մենակ ման էի գալիս, առանց մասնակից լինելու ուրախությանը, որ խաղաղություն էր հաստատվել, լուռ նայում էի երեխաների խաղալուն և երիտասարդներին, որոնք իրար պատմում էին իրենց երազանքների մասին, նաև այն մարդկանց, ովքեր իրենց այս ու այն կողմ էին գցում՝ միայն օրվա հոգսերով տարված:

Հետո գնում էի ճաշելու որևէ ռեստորանում, երբեմն ինձ ընկերակցում էր Սարգսյանը, որն ինձ հետ թուրքերեն էր խոսում, քանի որ իմ հայերենը բավարար չէր խոսակցություն վարելու համար: Հիշում էինք անցած գնացած ժամանակները: Նա ինձ իր յուրայիններից էր համարում, ասես մենք մանկութ իրար գիտեինք, և երկուսս էլ վերհիշում էինք այնպես, կարծես թե մի օր ամեն ինչ առաջվա պես էր լինելու: Սարգսյանը մի օր ինձ անգամ ծիծաղեցրեց. նա հումորի հրաշալի զգացում ուներ: Իր կյանքի ընթացքում նա այնքան բաներ էր տարել, որ դրանց մասին գիրք կարելի կլիներ գրել:

Թուրքիայում սկսել էին մանկակի արդարադատությամբ զբաղվել: Նվազագույն չափով, սակայն ի վերջո դատապարտեցին, և ոճրագործներից մի քանիսը կախաղան հանվեցին: Հայերը դատավարություններին ներկա չէին գտնվում, և թուրքերը դատավճիռն ընդունում էին իրենց հայեցողությամբ:

Մուստաֆա Քեմալը, որին Թուրքիայում սկսել էին կոչել Աթաթուրք, այսինքն՝ թուրքերի հայր, դարձել էր ուժեղ և իշխող մարդ, որը թույլ չէր տա երկրի ողջ մասնատումը, մինչդեռ հայերը փորձում էին համախմբվել, որպեսզի ուժի մեջ դրվեին իրենց երկրի համար Վերսայյան պայմանագրով հաստատված իրավունքները:

Այսպես, անցնում էին օրերը և միակ բանը, որն ինձ մխիթարում էր, այն պահերն էին, երբ գրում էի հիշողություններս, որոնք ինձ երբեմն հետ էին բերում գրեթե մոռացված դրվագներ:

1920 թվականի մայիսի վերջին մի հեռախոսազանգ հնչեց: Երբ հեռախոսափողը վերցրի, ինձ թվաց, թե ճանաչեցի ինձ հետ թուրքերեն խոսողի ձայնը: Ասաց, որ Թալիբ բեյն է, և թեև հավատս չէր գալիս, որ ինքն է,— ես նրան մեռած էի կարծում,— ինձ ասաց, որ հենց նոր Մարսել է հասել: Ուզում էր ինձ տեսնել: Ես նրան ասացի, որ նրան հաճույքով կընդունեմ իր՝ Փարիզ հասնելուն պես:

Հաջորդ օրը, երբ դռան զանգը հնչեց, իմ սպասավորն ինձ հայտնեց, որ օտարերկրացի մի պարոն է ինձ սպասում ընդունարանում:

Իսկապես Թալիբ բեյն էր՝ շատ ավելի ծեր, սպիտակ մորուքով և ալեհեր մազերով: Բայց ինքն էր և ինձ ուժգնորեն գրկեց:

— Ահ, մայե դը Լատուր: Որքան փորձանք ու ձախորդություն այս ընթացքում: Մեծ ուրախություն է ինձ համար ձեզ տեսնելը և մեծ ամոթ՝ կատարվածի համար: Մենք թուրքերս տեղի ունեցած այս ամենում այլևս երեսատեղ չունենք: Մեր առաջնորդները վատ ճանապարհով մեզ տարան: Ձե՞ որ դուք բոլորդ էլ այդ կարծիքին եք: Օսմանցի հայերի հետ կատարվածը շատ թուրքերի է ցավ պատճառել, ունեինք բարեկամներ, ծանոթներ ու համերկրացիներ նրանց մեջ: Թուրքիան էլ է շատ տուժել այս պատերազմից և իր փառավոր անցյալից մեծ մասը թողել նրանում: Մեծ ամոթ եմ զգում և մեծ վիշտ... Այնուամենայնիվ ներքուստ մի ձայն ասում էր, որ պետք է մի բան անեի, որ փոխհատուցեի ձեր բարության դիմաց: Դուք շատ տառապեցիք հայերի համար..., թուրքերի համար նույնպես:

Թալիբ բեյը որոշ ժամանակ լուռ մնաց:

— Տեսե՛ք, մայե, մենք՝ թուրքերս շատ բաներում ենք սխալներ թույլ տվել և այն, ինչ պատճառել ենք հայերին, ներում չունի... Բայց բոլոր թուրքերը չէ, որ այդպիսին են, և ես անձամբ եկել եմ ձեզ ապացուցելու այդ: Ձեր սիրտը լա՞վ վիճակում է: Այո՞... կարծում եմ, որ ուրախությունը երբեք ոչ ոքի չի վնասել... — Լսե՛ք, մայե: Ներքևում, մուտքի մոտ մի անձնավորություն կա, որ ուզում է ձեզ հետ ծանոթանալ: Նրան կոչում են Սոֆյա Հակոբյան:

Այդ պահին ձեռքերով ծածկեցի դեմքս, որովհետև արցունքներն աչքերիցս ինձանից անկախ հորդացին:

— Սոֆյա՛, Սոֆյա՛:

Թալիբ բեյն ինձ ուշադիր գննում էր:

— Այո՛, մայե: Երբեմն կյանքը մեզ ուրախություն է պարգևում: Բայց թույլ տվեք, որ գնամ նրան բերելու: Նա այնքան է ուզում ծանոթանալ ձեզ հետ... Սոֆյա Հակոբյան..., ճիշտ և ճիշտ իր մայրն է, ում անձամբ ճանաչում էի... Բայց մի բան ձեզ ասեմ, աչքերը ձերն են, և նա նույնքան համառն է, որքան դուք, մայե:

ՎԵՐՋԱԲԱՆ

Սոֆյայի հայտնվելը արմատապես փոխեց կյանքս: Ամեն ինչ ընթացավ այլ կերպ: Երկու ամիս անց ես ապաքինված էի, թեև ծերացած, առանց մոռանալու իմ սիրելի մարդկանց ողբերգական մահը, սակայն իմ դստերը գտնելու չնորհիվ լույս նշմարեցի թունելի խորքում:

Նա երբեք չուզեց պատմել իր հետ կատարվածի մասին: Երբեք: Ոչ էլ ես փորձեցի, որ աղջիկս աներ դա՝ հակառակ իր կամքի: Անկախ ամեն ինչից՝ նա ցույց էր տալիս, որ շատ ուրախ է, որ գտել է ինձ և որ Փարիզում է, ինձ հետ:

Լիզա Ջամբաղյանը Սոֆյային տվել էր իր մոր օրագիրը: Կարդալով այն՝ շատ բաներ հասկացավ աղջիկս: Հիշում էր իր հորը մեծ սիրով ու հարգանքով, իսկ ինձ վերաբերվում էր որպես իր իսկական ծնողի, որպես իրեն մտերիմ ու սիրելի մարդու:

Ժամանակն անցնում էր, և բաց վերքերը սպիացան: Հայերին չհաջողվեց ձեռք բերել Վերսալյան պայմանագրով իրենց տրված հայրենիքը, իսկ Սևրում նրանց հույսերը ոտնատակ արվեցին հանգամանքների և միջազգային լիդերների անգթության ու անտարբերության հետևանքով:

1924 թ. Սոֆյան ու ես տեղափոխվեցինք ապրելու Նյու Յորքում: Բայց ո՛չ նա, ո՛չ էլ ես չէինք կարողանում մոռանալ այն հեռավոր, տարաշխարհիկ, դառը և արտասովոր քաղաքը, որը սիրում էինք, գմբեթների ու մինարեթների հանգստավետ գեղեցկությունը, որը հիմա Քեմալ Աթաթուրքի կամքով դարձել էր Ստամբուլ՝ Մեհմետ II-ի զորքերի մարտակոչի չնորհիվ, որոնք աղաղակել էին նվաճելու ցանկությամբ՝ Is tam bul... «Դեպի քաղա՛քը, դեպի քաղա՛քը», գիտենալով, որ նրանում գտնելու էին դրախտը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Նախաբան 9

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ (1885–1906)

1. Ապրիլ 1885. *Թղթակից Թուրքիայում* 13
2. Մայիս – Նոյեմբեր 1885. *Կոստանդնուպոլիս* 33
3. Նոյեմբեր 1885. *Անտուան Մոնժ* 45
4. Ապրիլ 1886. *Նախագգուշացումը* 50
5. Հուլիս 1886. *Պատմության գործնական մի դաս* 61
6. Օգոստոս 1886. *Դաժան իրականությունը* 68
7. Օգոստոսի վերջեր 1886. *Դավիթ Մուրադյան* 79
8. Սեպտեմբեր 1886. *Անկարող ականատես* 91
9. Սեպտեմբեր 1886 – ապրիլ 1887. *Դիրքորոշում* 98
10. Հոկտեմբեր 1887. *Վերադարձ դեպի Փարիզ* 105
11. 1884–1894. *Փարիզ – Նյու Յորք* 113
12. Ապրիլ 1894. *Սայիդ Ջեմալ ալ-Դին ալ-Աֆղանի* 131
13. Մայիս 1894. *Վերադարձ Կոստանդնուպոլիս* 140
14. Օգոստոս 1894. *Հայկական հարցը* 146
15. Օգոստոսի վերջեր 1894. *Խաչատուր Մալումյան* 158
16. Նոյեմբեր 1894. *Ռիտա Հակոբյան* 165
17. Հունվար 1895. *Ռոբեր Կանվայի պատմածը* 172
18. Օգոստոսի վերջեր 1895. *Սայիդ փաշա* 181
19. Սեպտեմբեր 1895. *Քրիստափոր Միքայելյան* 188
20. Սեպտեմբեր 26–27, 1895.
Հայ հեղափոխական դաշնակցությունը 195
21. Սեպտեմբերի վերջեր 1895.
Կոստանդնուպոլսի կոտորածը 200

22. Նոյեմբեր 1895. *Գրիգոր Բրոչյանի փորձությունը* 205
23. Դեկտեմբերի սկիզբ 1895. *Մեկ ուրիշ աշխարհ* 215
24. Դեկտեմբերի վերջեր 1895. *Բարոն մարշալ ֆոն Բիբերշթայն* 220
25. Գարուն 1896. *Մարիցա Փիլիպոսյան* 233
26. Օգոստոսի վերջեր 1896. *Բանկ Օտտոմանի գրավումը* 245
27. 1896–1902. *Փարիզ՝ պատվավոր հյուպատոս* 258
28. 1903. *Բեոլին՝ ամպրոպի նշաններ* 270
29. 1904. *Պատմական պառակտում* 280
30. Հունիս 1905. *Անդրանիկ Օզանյան* 288
31. Հուլիս 1906. *Ժողով Սալոնիկում* 298

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ (1907–1911)

32. Մարտ 1907. *Դաշնակահար Բաբիկյանը* 309
33. Հունիս 1907. *Անատոլ Ֆրանս* 315
34. Հոկտեմբեր 1907. *Ուղևորություն Արևելյան ճեպընթացով* 321
35. Հոկտեմբեր 1907. *Մասոնական օթյակը* 330
36. Հուլիսի վերջեր 1908. *Պետական հեղաշրջումը* 337
37. Օգոստոս 1908 – փետրվար 1909. *Կրկին Կոստանդնուպոլսում* 346
38. Մարտ 1909 – օգոստոս 1910.
Մի ժամանակահատվածի ավարտը 355
39. Սեպտեմբեր 1910 – փետրվարի վերջեր 1911.
Գաղտնի համագումարը, ողբերգական իրավիճակ 365

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ (1911–1920)

40. Մարտ – դեկտեմբեր 1911. *Էդուարի կոչումը* 373
41. 1912. *Կոնֆլիկտի նախանշանները* 379
42. 1913. *Էլլիս կղզին* 384
43. Հունիս – սեպտեմբեր 1914. *Սպանությունը Սարաևոյում* 390
44. Սեպտեմբեր 1914. *Հատուկ պատրաստականություն* 396
45. Հոկտեմբեր 1914 – մարտ 1915. *Նամակը* 400
46. Գարուն 1915. *Նիկոլ Կաղիֆյանի հաղորդագրությունը* 404
47. Սեպտեմբեր 1915. *Ռիտա Հակոբյանի կտակը* 410
48. Հոկտեմբեր 1915. *Վատ լուրեր* 416

49. Նոյեմբեր – դեկտեմբեր 1915.
Կրկին Կոստանդնուպոլսում 424
50. Հունվար – փետրվար 1916. *Գալլիպոլի՝ թաքստոցը* 428
51. Մարտ 1916. *Լիզա Ջամբազյանի պատմածը* 436
52. Ապրիլ 1916. *Մի անհավատալի պատմություն* 449
53. Մայիս 1916. *Ռիտա Հակոբյանի վերջին նամակը* 458
54. Մայիս – սեպտեմբեր 1916. *Հուսահատությունը* 461
55. Հոկտեմբեր 1916 – նոյեմբեր 1918. *Խորհրդածություններ* 471
56. Գարուն 1920. *Ապրելու ցանկությունը* 475

Վերջաբան 478

ԳՈՆՍԱԼՈ ԳՈՒԱՐՁ

ՀԱՅՈՑ ԿՏԱԿ

Կազմի ձևավորումը՝ **Պալոմա Հեռնանդես Վիսիանայի**
Ֆորզացի ձևավորումը՝ **Գ. Վ. Մարիկյանի**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Զ. Բղոյան**

Համակարգչային շարվածքը
և ձևավորումը՝ **Թ. Շ. Վարդանյանի**

Ստորագրված է տպագրության 23.02.2011 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Հրատ. 27,8 մամուլ, տպագր. 30,25 մամուլ = 28,1 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 300: Պատվեր 73:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52